ISSN 2518-9697

Հայկազեան Հայագիտական Հանդես

هايكازيان
مجلّة الدّراسات الأرمنيّة

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

HAIGAZIAN UNIVERSITY PRESS
Beirut, 2025

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

هايكازيان
مجلّة الدّراسات الأرمنيّة

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

Volume 45/1

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Առաքելութիւն եւ Տեսլական

Հրատարակել հայութեան անցեալի ժառանգի, այժմու կենսագործունէութեան եւ ապագայի տեսլականին վերաբերող գիտական հիմքերով, կարծիքի ազատութեան վրայ կառուցուած բազմաուսմունքային եւ բազմալեզու աշխատութիւններ:

Այժմէականացնել հայագիտութեան վաղեմի աւանդը. գիտական նորագոյն իրագործումներով ամրապնդել հայագիտութեան տեղն ու դերը համաշխարհային հասարակագիտութեան քարտէսին վրայ:

Կարեւորել եւ զարգացնել հայագիտութեան ռազմավարական նշանակութիւնը, քանի որ ան կը նպաստէ ազգային ինքնաճանաչողութեան եւ հաւաքական յանձնառութեան բարձրացման: Համագործակցական ամբիոն դառնալ՝ Միջին Արեւելքէն, եւ սատարել երիտասարդ ուժերու, ինչպէս նաեւ՝ գիտական հայերէնի, մանաւանդ արեւմտահայերէնի զարգացման:

*Հայկազեան հայագիտական հանդէս*ի հատորներուն թուայնացած տարբերակը կարելի է ունենալ հետեւեալ կայքէջերէն.-

https://www.haigazian.edu.lb/research/publications/armenological-review/
https://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html
https://www.flib.sci.am/journal/haigazian/Frame.html
https://arar.sci.am/dlibra/publication/308657#structure .

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
Mission Statement

To publish research articles related to the heritage, current output and future prospects of the Armenian nation. These multidisciplinary papers should be based on freedom of thought and can be written in diverse languages.

To revisit past accomplishments of the Armenian Studies; to consolidate the place and role of Armenian Studies on the map of world social sciences through modern technological means.

To drive forward the importance of Armenian Studies and develop its strategic role, as it contributes to national identity and the promotion of collective commitment.

To be a forum of cooperation in the Middle East; to support young scholars and to stimulate the development of Western Armenian scientific language in particular.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:
https://www.haigazian.edu.lb/research/publications/armenological-review/
https://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html
https://www.flib.sci.am/journal/haigazian/Frame.html
https://arar.sci.am/dlibra/publication/308657#structure .

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գաղտնիք չէ, որ հայ իրականութիւնը թէ՛ հայրենիքի, թէ՛ Սփիւռքի մէջ կը դիմակալէ գոյութենական մարտահրաւէրներ, որոնց դիմագրաւումը յանձնառութիւնն է պետական, եկեղեցական, քաղաքական, գիտական եւ այլ մարմիններու:

Յիրաւի, մեր առջեւ ծառացած են պետականակերտման, ինքնութենական, ժողովրդագրական, լեզուական, մշակութաբանական, կրթական եւ այլ հիմնախնդիրներ, հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան, արցախեան հարցի եւ այլ օրակարգեր, որոնց յաղթահարումին կրնայ սատարել հայագիտութիւնը, իր ուսումնասիրական տարաբնոյթ հարթակներով:

Այս ելակէտէն մեկնելով, առաւել կը շեշտաւորուի հայագիտութեան կիրառական դերակատարութիւնը՝ համահայկական հիմնախնդիրներու եւ տեղայնական հարցերու հանգուցալուծման գործընթացին մէջ: Արդ, դրական փոփոխութիւններու միտող ռազմավարական ծրագրումի նպատակով՝ ճգնաժամային հիմնահարցեր վերլուծելու, հասկնալու եւ բացայայտելու հիմք կը ծառայէ կիրառական հայագիտութիւնը:

Հետեւաբար, պէտք է հայագիտական ուսումնասիրութիւնները աւելիով ուղղորդել կիրառելիութեան հարթակ, զարկ տալով յաւելեալ լայնածաւալ բազմուսմունք դաշտային հետազօտութիւններու (հետաքննութիւններ, դիտարկումներ, հարցախոյզներ, տուեալներու հաւաքում, ամբարում եւ մշակում, պարագաներու սերտողութիւն (case studies), որոնք յաւելեալ լոյս պիտի սփռեն հիմնախնդիրներու էութեան վրայ:

Սոյն աշխատանքներով հաւաքուած փաստացի նիւթերու գիտական, համակողմանի, համեմատական եւ թափանցիկ վերլուծումը առիթ պիտի ընձեռէ ներկայ վիճակը իրողապէս գնահատելու, ինչպէս նաեւ բանաձեւելու յաւելեալ առարկայական ռազմավարութիւններ, ազգային քաղաքականութիւն մշակող մարմիններուն յուշելու համապատասխան լու-

ծումներ՝ հաւաստի տուեալներու հիմամբ: Դաշտային այս ուսումնասիրութիւնները պարտին ըլլալ շարունակական եւ մնայուն գիտական դիտարկումի ու արժեւորումի ենթարկեն վերոյիշեալ ռազմավարութիւններու եւ համապատասխան լուծումներու իրագործումին ու գործադրութեան յառաջընթացը:

Հայութեան դիմագրաւած մարտահրաւէրներուն յաղթահարումը կը պահանջէ շղթայաձեւ, ներդաշնակ եւ միահամուռ համագործակցութեան: Հարկ է, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի պատկան ու որոշումնառու մարմիններ նոյնպէս զարկ տան եւ սատարեն կիրառական հայագիտութեան, առնուին նաեւ գործադրելի եւ իրատեսական որոշումներ, որոնք դառնան պետական թէ սփիւռքեան հաստատութիւններու քաղաքականութիւն՝ ուղեգիծի վերանայման ու բարեփոխման սկզբունքով:

Այս մօտեցումով, հայագիտութիւնը կը վերածուի նաեւ ազգային կեանքի վերանորոգման գործօնի՝ իր դերը ունենալով հայութեան գոյութենական մարտահրաւէրներու դիմագրաւումին մէջ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Անդրանիկ Տագէսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արմէն Իւրնէշլեան, Սիլվա Փափազեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան, Նանօր Գարակէօզեան, Երուանդ Երկանեան, Արտա Էքմէքճի, Հրանուշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Չիլինկիր-եան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գրասենեակ

APPLIED ARMENOLOGY

It is not a secret that the Armenians both in the fatherland and in the Diaspora are facing existential challenges. It is the undertaking/task of state, church, political, scientific and other Armenian authorities and bodies to address these challenges.

Indeed, we face outstanding issues of state building and identity in addition to demographic, linguistic, cultural, educational and other concerns, as well as the agendas of the Armenian Genocide and Artsakh matters. Armenology with its diverse study disciplines may contribute in overcoming these challenges.

In this regard the role of applied Armenology is further underpinned in the process of resolving outstanding pan-Armenian and local issues.

As a matter of fact, in order to generate a strategic plan, applied Armenology may become the base in analysing, understanding and highlighting the current critical issues.

This is why Armenian studies should further orient field studies with an eye to their applicability. This can be achieved through further supporting and promoting extensive field studies (investigations, observations, surveys, the collection, preservation and cultivation of data, case studies, etc.). These will shed further light on the nature of the above-mentioned basic issues.

The scientific, multifaceted, comparative and transparent study and analysis of the material produced by field studies will enable those responsible to assess the current actual situation in real terms and to formulate and shape further objective strategies to suggest to national decision making bodies that can then offer relevant solutions based on valid data.

These field studies should be continuous, which infers that the above-mentioned strategies and the progress of their application and their corresponding resolution should be permenantly under scientific observation and assessment.

To overcome the current challenges of the Armenian space an interconnected, unified and harmonic collaboration is a must. Likewise, relevant decision-making authorities and bodies of both the Armenian State and the Diaspora ought to promote applied Armenology, take realistic and applicable decisions as the basis for policies, and modify and revise them whenever need be.

With such an approach, Armenology also becomes a renovating factor of Armenian national life and plays its role in addressing the existential challenges of the nation.

EDITOR-IN-CHIEF
Antranik Dakessian

EDITORIAL BOARD
Silva Papazian, Armen Urneshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian, Megerditch H. Bouldoukian, Seta Dadoyan, Arda Ekmekji, Murad Hasratian, Nanor Karageozian, Hranush Kharatian, Susan Pattie, Hratch Tchilingirian, Yervand Yerkanian

***HAR* REPRESENTATIVE IN ARMENIA**
AMAA Yerevan Office

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Scrutiny

ARMENIAN MUSEUMS IN THE UNITED STATES AND NOTABLE ARMENIAN SCULPTORS

ROBERT MEGERDICHIAN
rma@cadcafmservices.com

PREFACE

When the *Haigazian Armenological Review* asked me to write an article about the life of my late father, Abraham, and the machined metal art he created,[1] I was honored. I was then delighted when the *HAR* asked me to submit an article on Armenian museums in the United States.[2] Now I consider it a distinct privilege to be asked by the same journal to pen yet another article, about Armenian sculptors. Before proceeding I must make a confession to the readers of this esteemed publication. I did receive my Master of Science degree in Nonprofit Management from Worcester State University in Massachusetts, United States at an advanced age in 2022. The subject of my thesis was the future of museums. Throughout my studies I had been exposed to the works of scores of artists worldwide. Therefore, my qualifications to write this article come from a combination of the academic and the practical with hands-on

---

[1] R. Megerdichian, "Abraham Megerdichian, Eemin Shinadz Panerus (The Things I've Made)", *Haigazian Armenological Review*, 43/1:2023, pp. 23-48.

[2] I thank Dr. Antranik Dakessian for his invitation to write this article, after the publication of my earlier article, "Abraham Megerdichian, Eemin Shinadz Panerus (the Things I've Made)". Not being a professional researcher, I appreciate his suggestions that have raised my article to a level closer to those of my distinguished fellow authors for this journal.

I appreciate the time Messrs. Jason Sohigian and Berj Chekijian, Directors of the Armenian American Museum in Watertown, Massachusetts afforded me in an interview at the Museum in May 2024. Special thanks go to my longtime friends, Adrienne Der Marderosian, artist, and Gassia Armenian, Curatorial and Research Associate at the Fowler Museum at University of California at Los Angeles. Without their suggestions for sculptors and observations about Armenian museums in the United States this article would likely not have been written. A sincere thank you goes to the administrators, librarians and assistants, and specifically to Daniel Allie, Reference Librarian at the Nevins Memorial Library in Methuen, Massachusetts, for their technical assistance and perpetual willingness to locate the arcane and obscure, and sometimes plain ordinary, materials I continually request.

experience. I have made my living in engineering. Accept this combined article as an overview from the perspective of one interested Armenian observer in the U.S.

We Armenians in the United States walk a fine line between being part of the society at large while simultaneously displaying our treasured history on our sleeves as we promote our culture to the non-Armenian public as much and often as possible. Some of us feel comfortable in both realms, being a part of and wanting to distinguish ourselves within American life and society. Some may feel there is the need to be an expert representing one side or the other. As a result of positioning myself directly atop the fence, with different perspectives on my right and left, and having the life experience I have regarding the subjects at hand, I may be the optimal candidate to write this article. Now, onto the main course.

ARMENIAN MUSEUMS IN THE UNITED STATES

Here is a question. Can you name one or more Armenian museums or exhibition halls in the United States? The answer ought not to be too difficult, but there are, in fact, very few, at least as found on the internet. Even among the few, some can only be loosely defined as museums, for they are either the housed collections of individuals, or not open to the public with regular hours. Hereinafter, the term "Armenian museums" refers only to those within this study.

As of this writing I have found the following (east to west):

1. The Armenian Museum of America (formerly Armenian Library and Museum of America) in Watertown, (Boston area) Massachusetts;
2. The Anthropology Museum of the People of New York at Queens College, New York (now essentially closed);
3. The Alex and Marie Manoogian Museum in Southfield, (Detroit area) Michigan;
4. The Armenian Museum of Fresno, California;
5. The William Saroyan House Museum in Fresno, California;
6. The Ararat-Eskijian Museum in Mission Hills, (Los Angeles area) California;
7. The Armenian American Museum in Glendale, California (under construction).

If there are others, one may be hard pressed to find them. Expand the parameters of the search and you may find more if you are willing to view 1 million unrelated entries on Google.

The more interesting question is why there are as few museums as there are, notwithstanding the outstanding legacy of Ottoman and Armenian Diaspora art. The purpose of this paper is to explore the answer. Considerations are numerous. Are there actually too few museums, given Armenian demographics

in the United States? Seven museums for an estimated Armenian population of 1.5 million in the U.S. (my estimate) equates to one museum per 215,000 people. For comparative purposes I conducted a Google study of "Greek/Hellenic museums in the US" and "Greek population in the US." I did the same for the Jewish, Russian and Turkish/Turkic museums and populations in the United States.

Greek/Hellenic: 7 Greek museums and 1,211,346 Greeks in the U.S.,[3] coincidentally nearly equal with the Armenian numbers above. The museums are (in alphabetical order): 1. The Greek Museum/Center for Greek American Heritage, New York, NY; 2. Hellenic Heritage Museum and Archives of Maryland (Baltimore); 3. Hellenic Museum of Michigan (Detroit); 4. Hellenic-American Cultural Center & Museum of Portland and SW Washington; 5. National Hellenic Museum (a.k.a. Hellenic Museum and Cultural Center), Chicago; 6. Onassis Cultural Center, New York, NY; 7. The Parthenon, Nashville, TN (a replica of the Parthenon which serves as the art museum of Nashville.[4]

Jewish: 34 Jewish museums[5] and Jewish population of 7.5 million in the U.S.,[6] equaling one museum per 221,000 people.

Russian: 7 Russian museums for a population of 3.1 million ethnic Russians in the U.S.,[7] or one museum per 443,000 people. The museums are (in alphabetical order): 1. MORA Museum of International Art, Jersey City, NJ, 2. Museum of Modern Renaissance, Somerville, Massachusetts (outside Boston); 3. Museum of Russian Art, Minneapolis, Minnesota; 4. Museum of Russian Icons, Clinton, Massachusetts (central Massachusetts); 5. Russian American Cultural Center, New York, New York; 6. Russian American Museum of Art, Naples, Florida; 7. Russian History Museum, Jordanville, New York (near Albany).

---

[3] *Greek Population by State 2025*, https://worldpopulationreview.com/state-rankings/greek-population-by-state (accessed on March 18, 2025).

[4] *The Parthenon*, https://www.nashville.gov/departments/parks/parthenon (accessed on March 18, 2025).

[5] *Jewish Museums in the United States,* Wikipedia, https://en.wikipedia.org/wiki/Category:Jewish_museums_in_the_United_States (accessed on March 4, 2025).

[6] *Size of the U.S. Jewish Population.* https://www.pewresearch.org/religion/2021/05/11/the-size-of-the-u-s-jewish-population/ (accessed on March 4, 2025).

[7] *Russian Diaspora,* Wikipedia https://en.wikipedia.org/wiki/Russian_diaspora (accessed on March 4, 2025).

Turkish/Turkic: According to the Turkish Coalition of America,[8] there are an estimated 850 thousand Turkish and Turkic people in the United States. I have heard estimates of 1-3 million, yet I found no Turkish or Turkic museums in the U.S.

So now one wonders, is the number of Armenian museums too small given that Armenians are keeping pace proportionately with Jews in America regarding their museums? Do we need to keep pace? For some the obvious answer may be that both groups are trailing. Or, with existing museums in major Armenian demographic hubs in the U.S. - namely Boston/Watertown, New York, Detroit, Fresno and Glendale/Los Angeles - what other Armenian hub in the U.S. could sustain another museum? If attendance numbers are a gauge of museum size, such numbers are not available for any of the Armenian museums in the U.S. At present it is safe to assume that the oldest of the Armenian museums – the Armenian Museum of America in Watertown, Massachusetts, dating from 1971 - is the largest of the lot with a collection of 20,000-25,000 objects and my estimate of several thousand visitors per year.[9]

An obvious major consideration for any museum is the staggering cost to open, maintain and sustain it. The Armenian American Museum in Glendale, under construction, has an estimated $35 million cost for the first phase alone. The Lucas Museum of Narrative Art in Los Angeles is expected, with cost overruns, to approach $1 billion when it is completed. In 2012 the Turkish author and Nobel laureate, Orhan Pamuk, established the Museum of Innocence in Istanbul, named after his novel of the same name - price unknown. With a range of $35 million to $1 billion it is difficult to place even a guess at the cost of constructing a new museum. When the founders of the Armenian Museum of America purchased the bank building that would house their museum, they reportedly spent $1 million in 1971, the equivalent of at least $7.5 million or more today. Their quest followed a challenge by a large donor. The museum has no mortgage. Even at a paltry $7.5 million, Armenian museums are not exactly popping up everywhere in the United States.

Politics and community dynamics are a significant consideration. With the exception perhaps of a house museum or a museum dedicated to one inventor or artist, most museums and other cultural facilities are a community effort. In 2002 the City of Cambridge, Massachusetts embarked on an expansion project of its main library, founded in the late 1800s. The Design Advisory Committee

---

[8] *Turkish American Community*, https://www.tc-america.org/community/the-turkish-americancommunity-463.htm (accessed on March 4, 2025).

[9] Meeting, Armenian Museum of America, Robert Megerdichian with Directors Jason Sohigian and Berj Chekijian, May 11, 2023; *Armenian Museum of America*, https://www.armenianmuseum.org/ (accessed on February 24, 2025).

alone consisted of 18 members. Consecutive architectural schemes were lettered beginning with "A" and reached at least "J." After hundreds of community meetings in the diverse city the project was completed in 2010 at a cost of $75 million. A jaded old Armenian political joke comes to mind. Two Armenians are marooned on an island. Among the first things they do is to build an Armenian church. Sometime later, another ship sinks, stranding another pair of Armenians on the same isle. The original two invite the newcomers to come to their church. The newcomers decline and prefer to build their own church. After all, it is determined they are from the "other side."

Curious how Armenian museums stood with respect to non-Armenian museums, I spent time at the very same Cambridge Library mentioned above, going through academic papers I found in a database (*JStor*) from the Boston Public Library. The following are some of my findings from various sources:

- The mission of the Bob Bullock Texas State History Museum is to "unify the various events – and peoples – of Texas into one overarching narrative."[10] A lofty ambition, but not a likely one that any Armenian museum in the U.S. has the audacity to pull off within its own context.[11]
- The National Museum of the American Indian embarked on a "scholarly examination of the many and complex issues surrounding the founding and development"[12] of the Museum. It has taken decades to have the scant number of Armenian museums in the U.S. that we have. It is doubtful Armenians in the U.S. have the time or patience to wait for such a "scholarly examination" into our own complex issues, with the hope that a new Armenian museum will arise as a result.[13]
- Ethnic museums in Hawaii are criticized for having exhibits that are of a too static format, with or without written labels. Are Armenian museums any different? Dynamic exhibits are static ones raised to a new dimension, including

---

[10] A. Reejhsinghani, "Museums in Austin and San Antonio, Texas, of Interest to Ethnic Historians" [Review of *Bob Bullock Texas State History Museum; Blanton Museum of Art; George Washington Carver Museum and Cultural Center; Mexic-Arte Museum; Witte Museum; San Antonio Museum of Art; Museo Alameda; Institute of Texan Cultures*], *Journal of American Ethnic History*, *28*(3):2009, pp. 74–88; http://www.jstor.org/stable/40543430. p. 75.

[11] *Bob Bullock,* "Texas State History Museum," https://www.thestoryoftexas.com/ (accessed on February 24, 2025).

[12] A. Krupat, "Scholarship and Native American Studies: A Response to Daniel Littlefield, Jr.", *American Studies*, *34*(2):1993, pp. 81–100; http://www.jstor.org/stable/40643668. p. 87.

[13] *National Museum of the American Indian* https://americanindian.si.edu (accessed on February 24, 2025).

interaction, which may be beyond the reach of the Armenian museums presently.[14]

- Regarding memory and ethnicity, "Israel has the highest number of museums per capita in the world, with a total of 200, and millions of visitors annually."[15] Like Armenian museums, these Israeli museums face the questions of "What is at the heart of the message conveyed?"[16] and "What is the role of ethnic museums … in presenting different versions of memory?"[17] Further questions about Israeli museums that can be directly asked of current or prospective Armenian museums are:

"Do the museums' founders and the communities that support them represent the homeland and the heritage they left behind, or do they, through exhibitions, collections, and public programs, represent the heritage that has emerged and by which they are identified in Israel?"[18]

"Are these museums about the past, or are they also venues in which the reality of the present is addressed?" "What is the role of Jewish museums in the Diaspora?"[19] Answering these questions may be as futile as trying to understand the Armenian joke above.

- The Japanese American National Museum seeks common ground through projects that emphasize shared experiences through cross-cultural collaborations. How much are Armenian museums in the United States collaborating cross-culturally?[20]
- In Chicago:

The Hellenic Museum and Cultural Center's roots lie with the 350,000 Greeks who came to Chicago in 1890-1920. With gentrification in the 1950s and 60s Greeks began to move from Greektown to the suburbs, but the museum, founded in 1983, stayed in the area, later securing a grant from the

---

[14] E. H. Tamura, "Ethnic Museums in Hawai'i: Exhibits, Interpreters, and Reenactments" [Review of *Bishop Museum; Mission Houses Museum; Hawaii's Plantation Village; Kona Coffee Living History Farm*], *Journal of American Ethnic History*, *28*(3):2009, pp. 66-73; http://www.jstor.org/stable/40543429 .

[15] A. B. Fromm, [Review of *Memory and Ethnicity: Ethnic Museums in Israel and the Diaspora*, by Emanuela Trevisan Semi, Dario Miccoli, and Tudor Parfitt], *The Journal of American Folklore*, *129*(511):2016, pp. 105-7. https://doi.org/10.5406/jamerfolk.129.511.0105. p. 105.

[16] Ibid.

[17] Ibid., p. 107.

[18] Ibid.

[19] Ibid.

[20] A. Kikumura-Yano, L. R. Hirabayashi & J. A. Hirabayashi (eds.), *Common Ground: The Japanese American National Museum and the Culture of Collaborations*, 2005, University Press of Colorado. http://www.jstor.org/stable/j.ctt46nts9 ; *Japanese American National Museum*, (1998-2025) https://www.janm.org (accessed on February 24, 2025).

city to purchase land for a new and larger home two blocks uptown. The museum collaborates and partners in educational programs which draw over 10,000 children annually.[21]

The National Museum of Mexican Art is called "one of the most successful ethnic museums in the United States" with a "national and international reputation" for it "honors its roots in the immigrant experience in Chicago."[22] This museum deserves further study for comparison.

The National Italian American Sports Hall of Fame is "truly a national institution (which) has awarded over six million dollars in scholarships to students from all backgrounds."[23] The Museum portrays the "immigrant as both victim and hero."[24] If granting scholarships to students of all backgrounds is a criterion to break out of the bonds of victimization, then $6 million sounds like a drop in the bucket.

Researcher Karen Coody Cooper asks, "Have you been to an ethnic-specific museum?" She continues, "Because of ethnic-specific museums, a whole new first generation of museum-goers has been developed. In the past, with feelings of being 'alienated' from mainstream institutions, minorities and their children consistently avoided museums. However, minority groups have become, or are becoming, adults with a new understanding of their redefined museums as part of their cultural heritage and of their own personal development. This is the power of the ethnic-specific museums. They can benefit all museums by attracting a wider and widening museum going public."[25] Where do Armenians stand vis-à-vis museum-going? Would new Armenian museums in the U.S. draw Armenians? Perhaps new museums would bring in more non-Armenians out of curiosity.

Author Cooper continues: "Many inexperienced small museum workers do view fundraising as 'begging' while experienced fund raisers view their work as providing 'opportunities' to funders."[26] "Relevancy is the crux of minority-

---

[21] D. A. Pacyga, "Chicago: City of the Big 'Little' Museums" [Review of The Hellenic Museum and Cultural Center; Chinese-American Museum of Chicago; National Museum of Mexican Art; National Italian American Sports Hall of Fame; Swedish Museum Center/Children's Museum of Immigration], *Journal of American Ethnic History*, 28(3):2009, pp. 55–65; http://www.jstor.org/stable/40543428. pp. 55-57.

[22] Ibid., p. 59; *National Museum of Mexican Art* https://nationalmuseumofmexicanart.org/ (accessed on February 24, 2025).

[23] Ibid., p. 60; *National Italian American Sports Hall of Fame* https://niashf.org (accessed on February 24, 2025).

[24] Ibid., p. 64.

[25] K. C. Cooper, "Have you been to an Ethnic-Specific Museum?" *History News*, 55(4):2000, pp. 12-16. http://www.jstor.org/stable/42653764 , p. 13.

[26] Ibid., p. 14.

specific museums."[27] Years ago I posed a hypothetical question relevant to "begging" for donations to a museum executive director when the museum was looking for a director of development. I wondered if the museum would consider hiring an individual on commission at some going percentage rate or one with a very high incentive, say one half of the money the person brought in. The executive director simply said, "that won't happen."

Cooper has more. "Standard collections care information might advise museums to steer clear of allowing individuals from a community to use the museum as a storage facility for privately owned material culture." "Some museum authorities regard the proliferation of ethnic-specific museums as engendering too much complexity in the museum world and creating too many 'unnecessary' museums. [Translation: too many rivals for funding and visitors.]"[28] Researchers Anastasia Loukaitou-Sideris and Carl Grodach have written, "26% of the new museums scheduled to open between 1998 and 2000 were museums on specialized topics such as ethnic or cultural themes."[29] "Whereas opponents [of ethnic museums] have lamented the threat of cultural balkanization and fragmentation across racial, ethnic, or class lines, advocates [of ethnic museums] have seen the ethnic museum as a mediator between the ethnic community and the larger public."[30]

According to the authors, ethnic museums:

- Advocate for a particular culture
- Act as interpreters of the culture
- Act as a zone of contact between cultures
- Maintain ethnic traditions
- Are the sites of contest, i.e. discussion.[31]

I pondered my findings and created a tentative questionnaire to forward to the seven Armenian museums in the U.S. Before sending out the questionnaires, I asked several individuals about and Googled each of the Armenian museums I referenced at the outset. Frankly, I was disappointed in what I found. The following are my findings and impressions of the museums and their websites in the same order (east to west):

---

[27] Ibid., p. 15.

[28] Ibid., p. 16.

[29] A. Loukaitou-Sideris, & C. Grodach, "Displaying and Celebrating the 'Other': A Study of the Mission, Scope, and Roles of Ethnic Museums in Los Angeles," *The Public Historian*, 26(4):2004, pp. 49-71; https://doi.org/10.1525/tph.2004.26.4.49. p. 53.

[30] Ibid.

[31] Ibid., p. 19.

1. The Armenian Museum of America (AMA)

Members reside in 2/3 of the 50 United States. The museum has an active following in the Boston area supporting the museum with its extensive and highly curated exhibits, frequent programs and offerings. The audience is not specifically Armenian but balanced between Armenians and non-Armenians. Each week visitors come from, among other places, Los Angeles. Are these California visitors looking beyond what is currently available to them locally or are they anxiously awaiting the opening of the Armenian American Museum in Glendale, California? The Armenian Museum of America frequently hosts student visitors, numbering up to 120 at one time, visiting every week.

The museum has a marketing committee and is in the process of upgrading and expanding genocide education, for which it has received grant money. Whereas the museum's initial focus was amassing, preserving and exhibiting, the current thinking is to share the collection. Collaborative efforts are underway with 16 museums worldwide. In the past 2½ years, the AMA's collection has grown significantly through donations of personal items, but not artifacts. Several major collectors are in negotiations with the AMA regarding the ultimate repository of their collections. At present the AMA has over 20,000 objects.

Regrettably there has been the combination of too many directors, with several not staying long, and periods with no director. The museum could take some lessons on maintaining senior staff and doing more community outreach. The museum has an outstanding permanent collection of portrait photographs by the late Armenian Canadian Yousuf Karsh. Being located on the first of the several floors of the museum, Karsh's photos are a draw. But because of conditions regarding the exhibit, the museum disallows other or temporary exhibits to replace them in the same space the photos occupy. Boston has a lively photography scene and nearby schools of photography, yet the museum makes little or no effort to reach out to that community.

Perhaps it is personal bias, but this museum has one of the better websites among those I reviewed. Unfortunately, the website can be inconsistent in case of use. I have referenced it and found it straightforward as I expected, and referred to it again and not found the title tabs. To its credit, the website has a timeline of the museum's history.

2. The Anthropology Museum of the People of New York at Queens College, New York[32]

Calling this museum an Armenian museum is a bit of a stretch. The website has sparse Armenian information and, given the death in 2020 of the founder and driving force, the museum may not even be open to the public.

3. The Alex and Marie Manoogian Museum[33]

The first sentence on the website says, "The Museum Is Open to Visitors by Appointment Only." The Events/Calendar tab lists no events and the latest News item is dated 2019, pre-COVID pandemic. In the Resources tab, links are provided to other Armenian museums but to no other museums. This museum follows the example cited above in that the offerings are essentially the art collection of the hosting family. To the museum's credit there is a hardcover catalogue of the collection. I received a tepid response when I offered to loan the Megerdichian collection of metal art for an exhibit. At least I was not denied on the grounds that the museum only concerns itself with the issue of the Genocide, as I was told by another Armenian organization when I again offered to loan the Megerdichian collection.

4. The Armenian Museum of Fresno, California[34]

What first caught my attention in the museum's website was the strategically positioned but ubiquitous solicitations for donations on each of the 10 subject tabs. There is outside criticism that the museum acts more like a for-profit gallery than a nonprofit museum, which the museum clearly states it is. Less attention seems to be paid to keeping the website up-to-date.

---

[32] *Anthropology Museum of the People of New York* https://www.nyc-arts.org/organizations/anthropology-museum-of-the-people-of-new-york/#:~:text=In%201977%20Margaret%20Mead%20and,archaeology%2C%20linguistics%20and%20culture%20studies (accessed on February 24, 2025); "NY Anthropology Museum Looks for New Home to Represent Diversity," *The Armenian Mirror-Spectator*, January 4, 2019 https://mirrorspectator.com/2019/01/04/ny-anthropology-museum-looks-for-new-home-to-represent-diversity/ (accessed on February 24, 2025).

[33] *Alex and Marie Manoogian Museum* https://www.manoogianmuseum.com (accessed on February 24, 2025); *Alex and Marie Manoogian Museum* https://armenia.travel/destination/treasury-house-museum/ (accessed on February 24, 2025).

[34] *Armenian Museum of Fresno, California* https://www.armof.org (accessed on February 24, 2025).

5. The William Saroyan House Museum in Fresno, California[35]

The museum is a small house in a residential Fresno neighborhood, apparently open to the public by reservation only. There is an extensive historical narrative in the website, along with evidence that the museum is supported by a foundation based in Armenia. I ask, Would the said foundation consider funding a new museum or sister organization in the U.S.?

6. The Ararat-Eskijian Museum in Mission Hills, (Los Angeles area) California[36]

The museum is the outgrowth of the founder's personal collection of Armenian artifacts. Numerous scholars are highlighted as involved with the museum. The museum is situated on a campus that houses the Ararat Home of Los Angeles (acclaimed elderly housing) and the Sheen Memorial Chapel, both of which, it could be argued, are unintended distractions from the mission of the museum. The museum states that it is "proud to be the only Armenian museum on the west coast." Given the subject of this paper, it might be more effective for the museum to assert that it is a participant among many museums sharing, in their words, "the rich history, culture and heritage of the Armenian people through preservation and education."

7. The Armenian American Museum in Glendale, California (under construction)[37]

At a proposed 50,000 square feet, this museum promises to be or exceed its nearly word-for-word namesake on the east coast, namely the Armenian Museum of America in Watertown, Massachusetts. The museum will have a large, and hopefully ample, amount of space to hold public activities. There will be a spacious kitchen to be used for cooking shows and one permanent exhibit about Armenian history. One criticism being bantered about is that the museum will be more of a community gathering place than an actual museum or forum for the exchange of ideas. Time will tell. As of this writing, attempts to interview

---

[35] *William Saroyan House Museum* https://saroyanhouse.com (accessed on February 24, 2025).

[36] *Ararat-Eskijian Museum* https://www.ararat-eskijian-museum.com (accessed on February 24, 2025); *Ararat Home of Los Angeles, Inc.* https://ararathome.org/campus-facilities (accessed on February 24, 2025).

[37] "Armenian American Museum," *Wikipedia* https://en.wikipedia.org/wiki/Armenian_Library_and_Museum_of_America (accessed on March 1, 2025); *Armenian American Museum* https://www.armenianamericanmuseum.org (accessed on February 24, 2025; *Armenian American Museum. Wikipedia* https://en.wikipedia.org/wiki/Armenian_American_Museum (accessed on March 1, 2025).

the museum for this paper have not resulted in an interview. The website, like that of the Armenian Museum of America, has a historical timeline. To its credit, the museum is the only one of those reviewed that offers financial statements.

INITIAL CONCLUSION

If the person on the street were to ask me where the significant Armenian museums are in the United States, after doing my initial research, I would answer in the Boston and Los Angeles areas (currently and soon, respectively). It is simply unsatisfactory that there are only seven so-called Armenian museums, a number which gets whittled down to essentially a couple. Two museums for an Armenian population of 1.5 million make a poor statement to Armenians and non-Armenians alike about Armenian progress. Interested museum goers have to travel to the east or west coast. Assume Armenians in the United States could unite and agree to erect a new museum with a mutually agreed upon theme, mission and "overarching narrative" as mentioned above. Assume also they could finalize a location and raise the funds. Finally, assume they could clear all the other myriad of issues to be resolved to establish the museum. What and where would the museum be? A national presence in Washington would make sense. Efforts were made in the early 2000s to establish the Armenian Genocide Museum of America in Washington, DC, but they have faltered. Nearly $20 million was raised and a location near the White House was chosen.[38] Egos and then litigation among donors got in the way. Perhaps too narrow a focus contributed to the museum's demise. Can we pick up from where those efforts failed? If, and it is a big IF, each of the 1,500,000 Armenians in the United States donated on average $100 toward the establishment of a new Armenian museum, there would be $150,000,000 as seed money. In addition, double that amount through grants and private/government sources and there would be a total of $450 million, nearly half the estimate for the Lucas Museum of Narrative Art, scheduled to open in 2026 in Los Angeles.[39] Imagine patrons waiting in lines at the commissary of a new, $450 million Armenian museum for a skewer of kebab and rice pilaf, once, of course, it were determined whose outstanding recipe would be used. William Saroyan would be proud. Maybe his "small tribe of unimportant people" would not be so small after all. It does not hurt to dream.

---

[38] *Armenian Genocide Museum of America,* Wikipedia, https://en.wikipedia.org/wiki/Armenian_Genocide_Museum_of_America#:~:text=The%20Armenian%20Genocide%20Museum%20will,addition%20to%20four%20adjacent%20properties%2C (accessed on March 1, 2025).

[39] *Lucas Museum of Narrative Art*, https://www.lucasmuseum.org (accessed on March 1, 2025).

PREFACE TO NOTABLE ARMENIAN SCULPTORS

As I mentioned at the outset of this paper, I earned a Bachelor of Fine Art History degree. I had spent four years in engineering school and upon graduation found myself without a career position. I returned to my alma mater and in one year of intense work, obtained my second degree in the arts. As I recall, of all the artists whose works I studied, I do not believe any were Armenian, with perhaps the exceptions being Arshile Gorky,[40] who died before I was born, and Reuben Nakian, who died a decade after my graduation. I was fortunate to have had some exposure to Armenian Church architecture. In other words, it was not the best time if one were pursuing Armenian art as an avocation or career.

Now, decades later, while writing this article, I was hopeful I would more easily find Armenian artists than I had back when I was an arts student. At first, I did not really know how to start and asked an Armenian artist friend of mine if she could provide me with names of sculptors. Soon thereafter she supplied me a list of five names, not as many as I had hoped. With some preliminary research I expanded the list of 5 up to 15, which I call Section 1. Thankfully, in researching the 15 names, I came across Art and Artists Files in the Smithsonian Libraries Collections. I combed its 63,000 names and found 67 individuals with Armenian names. (See Appendix for the list.) The initial list of 15 + 67 names in the Smithsonian database gives a total of 82 artists, of which I will focus on 21 as sculptors. I accept that my analysis is narrowly focused on those who can, even loosely, be called sculptors. For the sake of this article, I have defined as sculptors those among the 21 doing sculptural or 3-dimensional work. Of course, there are many other Armenians doing artistic work, but I am working with the limited number I have at hand. For more information on those other artists, I defer to my colleagues in art criticism, etc. for their input. Some may view 21 sculptors, or 82 artists for that matter, as a woefully small number, uncharacteristic of the much-proclaimed artistic inclination of us, Armenian people. Viewed in another light, 82 artists out of 63,000 plus yields about .1%. I leave it to the viewer to judge if that number is adequate for this study.

NOTABLE ARMENIAN SCULPTORS

The following are notable Armenian sculptors. In Section 1, are those who have been referred to me or with whom I have had some direct involvement. In Section 2 are those listed in the Art and Artists Files in the Smithsonian. I

---

[40] H. Herrera, *Arshile Gorky: His Life and Work*, Farrar, Straus and Giroux, New York, 2003; D. Waldman, *Arshile Gorky, 1904-1948: A Retrospective*, Harry N. Abrams, Inc., New York, 1981.

offer a short summary of information about each sculptor, presented alphabetically:

SECTION 1

Michael Aram is an award-winning designer who has capitalized on making distinctive metal home goods in shiny chrome- with gold-like decorations based on nature. Aram sells his goods through a flagship gallery in New York and through retailers around the world. His major monumental work is a 13' bronze statue of hundreds of birds entitled "Migration," permanently installed on the plaza of St. Vartan Armenian Cathedral in New York.[41]

Gagik Aroutiunian is a mixed media and multidisciplinary artist and arts educator. His assembled metal sculptures provoke the memory of the Genocide or those lost more recently in Artsakh. He incorporates old, family photos into his art pieces, examples of which are "Traveler and His Road" and "Kiss the Ground." His 10' high monumental sculpture, "The Scales of Justice," is on the campus of Xavier University in Cincinnati, Ohio, where he taught. Aroutiunian was born in Armenia in 1952.[42]

Anna Boghiguian was trained in political science and creates sculptural installations that poke fun at historical events and people that shaped the world. Her works are colorful and whimsical, like "Time of Change" and "The Chess Game" displayed at the Power Plant Art Gallery in Toronto in 2022-23. Prior

[41] "A New Sculpture at St. Vartan Cathedral," October 22, 2015, *Armenian Weekly*. https://armenianweekly.com/2015/10/22/a-new-sculpture/ (accessed on February 24, 2025); "Michael Aram," https://michaelaram.com/pages/the-world-of-michael-aram?srsltid=AfmBOoqnFUNvsmhv3m-hJV5IHEMn_Xe7hocl-k4KIH0_5_4N8Gtz0HCW (accessed on February 24, 2025); "About Michael Aram," https://michaelaram.com/pages/about (accessed on February 24, 2025).

[42] DePaul, "Gagik Aroutiunian," https://las.depaul.edu/academics/art-media-and-design/faculty/Pages/gagik-aroutiunian.aspx (accessed on February 24, 2025); "Gagik Aroutiunian," https://www.ratemyprofessors.com/professor/383305 (accessed on February 24, 2025); "Gagik Aroutiunian," Galeria Miejska BWA W Bydgoszczy, https://www.galeriabwa.bydgoszcz.pl/en/wystawa/gagik-aroutiunian-dom-wspomnien/ (accessed on February 24, 2025); "Gagik Aroutiunian," Cambridge School of Weston, https://www.csw.org/news-detail?pk=926422 (accessed on February 24, 2025); DePaul, "Gagik Aroutiunian," https://via.library.depaul.edu/libart/37/ (accessed on February 24, 2025); "Gagik Aroutiunian," Smithsonian Institution https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=Gagik+Aroutiunian (accessed on February 24, 2025).

to that she exhibited her "The Loom of History" in New York in 2018. Boghiguian was born in 1946 and works in Egypt.[43]

Jean Boghossian is the son of a fourth-generation Armenian jeweler. Familiarized at a young age with gems and jewelry-making techniques, Boghossian uses a blowtorch to strategically char his sculptural paper and metal pieces. The result is vivid colorations and burn marks. His large, abstract sculpture, "La Fiamma Inestinguibile," was on display at the 57th Venice Biennale, representing Armenia. Boghossian was born in Aleppo, Syria in 1949.[44]

Arto Chakmakjian (Tchakmakchian) sculpted in clay as a child. His adult work bears the weight of genocide and Soviet persecution. His monumental statue of a robed Gomidas Vartabed is located near the Renaissance Center in Detroit, Michigan. Other works are in Armenia. Upon his passing in 2019 the president of Armenia issued an executive condolence letter. Chakmakjian was born in Egypt and resided in Canada.[45]

Khoren Der Harootian came to the United States in 1921 from Armenia and by 1945 had a one-man show in New York. In the 1960s he was commissioned to do a 22' tall bronze sculpture called "Young Meher" for the Philadelphia Museum of Art. Born in 1909, he died in a car accident in 1991, but not before donating many of his pieces to the Armenian people.[46]

---

[43] "Anna Boghiguian," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/Anna_Boghiguian (accessed on February 24, 2025); "Anna Boghiguian," The Power Plant Contemporary Art Gallery Toronto, https://www.thepowerplant.org/whats-on/archive/anna-boghiguian (accessed on February 24, 2025); "Anna Boghiguian," The Power Plant Contemporary Art Gallery Toronto, https://www.thepowerplant.org/learn-and-explore/features/politics-history-strategy-playing-chess-with-anna-boghiguian (accessed on February 24, 2025).

[44] "Jean Boghossian," https://www.jeanboghossian.com (accessed on February 24, 2025); "Jean Boghossian," Wikipedia, https://en.wikipedia.org/wiki/Jean_Boghossian (accessed on February 24, 2025).

[45] "Arto Chakmakjian," The Russian Educational Centre, https://russianedcentre.blogspot.com/2012/05/arto-tchakmaktchian-project.html (accessed on February 24, 2025); "President sent a letter of condolences on the demise of the sculptor Arto Chakmakjian," https://www.president.am/en/condolence/item/2019/10/01/President-Armen-Sarkissian-sent-a-condolence-letter/ (accessed on March 28, 2025); "Arto Chakmakjian," Worthpoint, https://www.worthpoint.com/worthopedia/arto-chakmakjian-tchakmakchian-1933-3225818770 (accessed on February 24, 2025).

[46] "Khoren Der Harootian," https://www.derharootian.com (accessed on February 24, 2025); "Khoren Der Harootian," https://armenianprelacy.org/2021/03/31/birth-of-khoren-der-harootian-april-2-1909/?srsltid=AfmBOoraHWAvsffHsd-4zQehLXYV7VGnN-g4CGj3y9_RdazNui4v_eCa (accessed on February 24, 2025).

Yervant Gojabashian sculpts the struggles of his Armenian ancestors. Comfortable working in wood, marble, basalt and the black tufa of Armenia, he has done bas-relief work at Etchmiadzin and exhibited at Fresno State University in California, where he lives. Sculpture is his calling. Gojabashian was born in Aleppo, Syria in 1939 and lived in Soviet Armenia.[47]

Ara Harutyunyan (Arutyunyan) was a sculptor of some of the largest monumental art in Armenia. His "Mother Armenia" is an immense structure in Victory Park, Yerevan, over 150' tall including the base and weighing 22 tons. The hammered copper statue is in rigid Soviet style and replaces the original one of Joseph Stalin. Harutyunyan collaborated with architect Rafayel Israyelian and sculptors Arsham Shahinyan and Samvel Manasyan to create the Sardarapat Memorial. Two, red tufa, winged oxen flank a 75' bell tower. Harutyunyan was born and died in Yerevan, 1928-1999.[48]

Daniel Varoujan Hejinian is a designer who earned notoriety in Lowell, Massachusetts in 2014 when he got installed at the City Hall Plaza his "A Mother's Hands" Genocide Memorial, the first *khatchkar* placed before a public building in the United States. The *khatchkar* combines bronze and granite and a piece of Armenian lacework created by Hejinian's mother. Hejinian is President and Founder of Peace of Art Organization and was born in Aleppo, Syria to Armenian Genocide survivors.[49]

Michael J. Keropian is an Armenian American commercial sculptor who works in New York State in a realistic style with human and animal subjects. His art has a plastic look, like theater props. He is a Fellow of the National Sculpture Society.[50]

Nina Khemchyan engraves her spherical sculptures with her unique perceptions of earth and being. As of this writing, her "Seven Deadly Sins"

---

[47] B. Kirk, "Works of Armenian Sculptor Yervant Gojabashian Come to Fresno State," Fresno State, https://fresnostatecah.com/2023/04/04/works-of-armenian-sculptor-yervant-gojabashian-come-to-fresno-state/ (accessed on February 24, 2025); H. Paloutzian, "Gojabashian: Blessed Hands of the Armenian Heritage" *Hye Sharzhoom*, https://hyesharzhoom.com/gojabashian-blessed-hands-of-the-armenian-heritage-art-exhibition/ (accessed on February 24, 2025).

[48] "Ara Harutyunyan," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/Ara_Harutyunyan (February 24, 2025); "Ara Harutyunyan," http://araharutyunyan.com/eng/ (accessed on February 24, 2025).

[49] H. Gevorgyan, "Daniel Varoujan Hejinian Awarded Two Medals," *Armenian Weekly*, https://anca.org/daniel-varoujan-hejinian-awarded-two-medals/ ; "A Mothers Hands", July 7, 2017, *Genocide Memorial*#Lowell - There's a Lot to Like https://www.likelowell.com/public-art-walk/mothers-hand (accessed on February 24, 2025).

[50] "Michael J. Keropian," https://www.keropiansculpture.com/ (accessed on February 24, 2025).

150' frieze winds through the Venice Biennale. Khemchyan was born in Yerevan in 1964 and since 1993 has resided in Paris.[51]

Abraham Megerdichian was my father. He was a machinist who made aircraft engine parts. In his free time, Megerdichian re-machined scrap metal into his recognizable interpretations of everyday objects, which he gave away to family and friends. Since his death in 1983 Megerdichian's work has been displayed at dozens of industrial, children's, science and art museums and public libraries. He left behind over 400 artworks.[52]

Charles Najarian came from a generational line of wood carvers. He immigrated to the United States in 1911 from Armenia. After working for a desk manufacturer, he started his own business making custom dining room tables and desks. Upon the assassination of President John Kennedy, Najarian donated to the Kennedy family a Chippendale style, high top secretary desk he had crafted for the President. He is said to have also created the "Resolute Desk," made famous by photographer Stanley Tretick, in which President John Kennedy is working and under which his son, John Jr., is playing in "the secret door." Najarian made oaken altars and other specialty furniture for Armenian churches in the Boston area, including at my own parish, St. Stephen's Armenian Apostolic Church in Watertown, Massachusetts.[53]

Haig Patigian was born in Van (now Turkey) in 1876 but by 1891 had emigrated to Fresno, California. Self-taught in sculpture, by 1920 he had sculptural work on display in San Francisco, and in 1929 he created the exterior terra-cotta angelic figures atop the (Atlantic) Richfield Tower (Oil Building) in Los Angeles. The building was razed in 1968, but Patigian had died in 1950.[54]

---

[51] B. Childs, "Nina Khemchyan: Echo. Meditations on Sin and Repentance, from Venice to Paris," https://www.parisupdate.com/nina-khemchyan-echo/ (accessed on February 24, 2025); "Nina Khemchyan. Armenian Pavilion at the Venice Biennale," https://www.e-flux.com/announcements/597452/nina-khemchyanecho/ (accessed on February 24, 2025).

[52] "Abraham Megerdichian," https://abesartwork.wordpress.com (accessed on February 24, 2025).

[53] R. Bacon, "John Kennedy Called Him "Charley," *Yankee*, pp. 108-93; T. McDevitt, "Sotheby's Auctions 'Property from the Kennedy Family Homes,'" February 22, 2005, *The Epoch Times;* "Obituary Charles Najarian, Cabinetmaker," April 27, 1981, *Boston Globe*.

[54] "Haig Patigian," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/Haig_Patigian (accessed on March 1, 2025); "Haig Patigian," *Aurora*, https://auroraprize.com/en/haig-patigian-san-franciscan-sculptor (accessed on March 1, 2025); "Haig Patigian," https://hunterkerhart.com/2018/05/25/richfield-oil-building/ (accessed on March 1, 2025); "Haig Patigian," Smithsonian Institution, https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&f

Dr. Megerditch Tarakdjian may be the sculptor in this article to have had his art most recently installed as a public monument. His bust of ethnomusicologist Gomidas (Komitas) Vartabed (Soghomon Soghomonian) was unveiled at the Armenian Cultural and Educational Center in Watertown, Massachusetts in November 2024. Tarakdjian, for whom sculpting is a second and later career, resides in Montreal, where he has had another bust of Gomidas installed. Other monuments of his are of Armenian Canadian photographer Yousuf Karsh in Ottawa and Armenian politician and diplomat Armen Garo at the Armenian Embassy in Washington, D.C.[55]

SECTION 2

Varujan Boghosian was born in New Britain, Connecticut in 1926, served in the United States Navy, and got educated on the G.I. Bill (Servicemen's Readjustment Act of 1944) afterward. His interest in collecting everyday objects and manipulating formations of them became his oeuvre. His work is surreal in nature, wry in tone and often focused on Greek muses. He was the recipient of a Fulbright grant and Guggenheim Fellowship. Boghosian died in 2020.[56]

Yenovk Der Hagopian immigrated to the United States from Armenia and like many others, including Arshile Gorky, was employed in the U.S. at the Hood Rubber plant in Watertown, Massachusetts. His artistic work has been exhibited at the Armenian Museum of America, not far from the former Hood site. He specializes in carving *khatchkars,* and his major opus is one entitled "In Memory to the Countless Armenian Martyrs of 1915." Der Hagopian was born in Armenia in 1900 and died in 1966.[57]

---

q=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=haig+patigian (accessed on March 1, 2023).

[55] "Dr. Megerditch Tarakdjian," https://www.tarakdjian.com (accessed on March 1, 2025); "Dr. Megerditch Tarakdjian," November 16, 2024, *The Armenian Mirror-Spectator*, https://mirrorspectator.com/2024/11/16/gomidas-bust-unveiled-in-watertown/ .

[56] "Varujan Boghosian," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/Varujan_Boghosian (accessed on February 24, 2025); "Varujan Boghosian," https://varujanboghosian.com (accessed on February 24, 2025); "Varujan Boghosian," https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=varujan+boghosian ; R. M. Doty, *Varujan Boghosian – A Retrospective*. Hood Museum of Art/The Currier Gallery of Art, Hanover, NH, 1989.

[57] "Yenovk Der Hagopian," *Wikipedia*, https://en.wikipedia.org/wiki/Yenovk_Der_Hagopian (accessed on February 24, 2025); "Armenian Museum Hosts Exhibit of Works by Yenovk Der Hagopian," *The Armenian Mirror-Spectator*, February 17, 2016

Reuben Nakian may have the most recognizable name among those sculptors in Sections 1 and 2, and was the only one mentioned in any of the art classes I took in high school or college. His artist friends included Arshile Gorky and William de Kooning. Nakian's work was figurative and highly textured. There are recurring themes of Greek and Roman mythology. His works are in the collections of the Fogg Art Museum at Harvard University and the Alex and Marie Manoogian Museum in Detroit, Michigan, and elsewhere. Nakian lived and died in the United States, 1897-1986.[58]

Varaz Samuelian was trained in art and served in the army in Armenia, after which he settled in Fresno, California, where he started as a sign painter. His prolific painting and sculpting career – claiming to have created over one thousand pieces - culminated in his bronze bust of his friend, William Saroyan, at the Fresno Convention Center and his monumental statue of David of Sassoon at the Fresno County Courthouse. Samuelian was born in 1917 and died in 1995. [59]

Kegham Tazian is an artist and educator living and working in Michigan. His monumental "Pyramid Earth" was installed in 2013 at Linden Park in Birmingham, Michigan. He was honored in 2021 by Governor Gretchen

---

(https://mirrorspectator.com/2016/02/17/armenian-museum-hosts-exhibit-of-works-by-yenovk-der-hagopian/ [accessed on February 24, 2025]; "Yenovk Der Hagopian," Smithsonian Institution, https://collections.si.edu/search/results.htm?q=2.%09Yenovk+Der+Hagopian&tag.cstype=all&fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22 (accessed on February 24, 2025).

[58] "Reuben Nakian," Wikipedia, https://en.wikipedia.org/wiki/Reuben_Nakian (accessed on February 24, 2025); "Reuben Nakian," https://americanart.si.edu/artist/reuben-nakian-3486 (accessed on February 24, 2025); "Reuben Nakian," https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=reuben+nakian (accessed on February 24, 2025).

[59] "Death of Varaz Samuelian (November 7, 1995)," https://armenianprelacy.org/2021/11/03/death-of-varaz-samuelian-november-7-1995/?srsltid=AfmBOorh1qy-Qp3Y8KzrMTauV2uyO3EM825_rA5ITjk4R2DcfHxEEqSe (accessed on February 24, 2025); "Varaz Samuelian," *Wikipedia* https://en.wikipedia.org/wiki/Varaz_Samuelian (accessed on February 24, 2025); "Varaz Samuelian," https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=varaz+samuelian (accessed on February 24, 2025).

Whitmer for his Lifetime Achievement in Arts and Education. Tazian was born in Musa Dagh, Sanjak of Alexandretta (now in Turkey) in 1938.[60]

Zadik Zadikian escaped from Armenia at age 19 and got himself to San Francisco, California, where he became an assistant to sculptor Beniamino Bufano and a friend of Constantin Brancusi. He later moved to New York and befriended abstract sculptor Richard Serra. Zadikian left his difficult background behind to develop a style that mixes the extravagant with the simplest of forms. He uses gold in his art. His "Gold Is Timeless" is an example. Zadikian was born in 1948 in Yerevan.[61]

CONCLUSION

I conclude where I began, writing my first article for the *Haigazian Armenological Review* about the metal art of my father, Abraham Megerdichian. In promoting his work, I have been on radio, broadcast and local television, exhibited at museums and libraries and given talks and PowerPoint presentations to various interest groups. Currently I am co-teaching a 4th grade art class a watercolor/collage technique I have developed using my father's art as the subject matter. Later this year I am scheduled to work with students in a technical high school to machine their interpretations of my father's metal art. It is my deepest wish to find among those students and in the various venues I visit a few who will become sculptors. If they were to be Armenian, that would be the cherry on the top of this delicious ice cream sundae. With so few Armenians in the sculptural arts, there is plenty of room for some more.

---

[60] "Kegham Tazian," https://www.keghamtazian.com (accessed on February 24, 2025); M. Genson, "Special Lifetime Achievement Award Goes to Artist Kegham Tazian," October 24, 2023, *Birmingham-Bloomfield Eagle*. https://www.candgnews.com/news/special-lifetime-achievement-award-goes-to-artist-kegham-tazian-3773#:~:text=Tazian%20recently%20received%20the%20Special,older%20brothers%20to%20do%20assignments (accessed on February 4, 2025); "Kegham Tazian," Smithsonian Institution https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=Kegham+Tazian (accessed on February 24, 2025).

[61] "Zadik Zadikian," https://www.zadikzadikian.com (accessed on February 24, 2025); "Zadik Zadikian," Smithsonian Institution, https://collections.si.edu/search/results.htm?fq=object_type%3A%22Artist+files%22&fq=data_source%3A%22Smithsonian+Libraries%22&fq=topic%3A%22Artists%22&q=Zadik+Zadikian (accessed on February 24, 2025).

ARMENIAN ARTISTS PER "ART & ARTISTS FILES IN THE SMITHSONIAN"					
ARTIST LAST NAME	**ARTIST FIRST NAME**	**GENRE**	**BORN/ DIED**	**NOTES**	**CONTACT**
ARSLANIAN	VAHAKN	Glassart	1975-		
BAROOSHIAN	MARTIN	Painting, print making	-2022	Surrealism	
BARSUMIAN	LISA	Painting, print making			LISABARSUMIANART@GMAIL.COM
BEDAYAN	TORCOM	Photography, drawing	1917-1986		
BERBERIAN	OVANES	Painting	1951-		
CHAVOOSHIAN	NORA	Sculpture, production design, set decoration	1953-		
COSTIKIAN	THELMA MAKASIAN	Painting	1905-1999	Co-founder Torpedo Factory Art Center, Alexandria, VA	
DER HAGOPIAN	YENOVK	Sculpture, Khatchkars	1900-1966		
DER HAROOTIAN	KHOREN	Sculpture	1909-		INFO@DERHAROOTIAN.COM
DER HOVANNESIAN	GARABED	Painting	1908-1992		
DERIAN	HARRY	Uncertain			
GARABEDIAN	CHARLES	Painting	1923-2016	Greek and Chinese symbolism	
GARSOIAN	INNA	Painting, illustration, set design	1896-1984		
GASPARIAN	ARMEN	Painting	1966-		GASPARIAN1966@MAIL.RU
GORKY	ARSHILE	Painting	1904-1948		
GORKY	MARO	Painting	1943-	Daughter of Arshille Gorky	
HOVNANIAN	JOHN HAIG	Painting	1921-2013		
HOVNANIAN	MARY	Uncertain	1924-2021		
HOVNANIAN	RACHEL LEE	Multidisciplinary art			tudio520@rachelleehovnanian.com
HOVSEPIAN	LEON	Painting, engraving	1915-2010		
JANJIGIAN	ANAHID	Painting			

KACHADOORIAN	ZUBEL	Painting	1924-2002		
KALAYJIAN	VASKEN	Painting	1956-		
KALENDERIAN	RAFFI	Painting	1981-		@RAFFI42
KALPAKJIAN	CRAIG	Computer generated photo realism	1961-		
KARAKASHIAN	ALEXANDRA	Painting, mixed media	1988-		@ALEXANDRA.KARAKASHIAN
KARSH	YOUSUF	Photography	1908-2002		
KATCHADOURIAN	NINA	Interdisciplinary art, photo/sculpture	1968-		
KATCHADOURIAN	SARKIS	Painting	1886-1947		
KAZANJIAN	MILANO	Painting, performance art	1943-2019		
KAZARIAN	JACKIE	Painting, video & installation art			INFO@JACKIEKAZARIAN.COM
KAZIGIAN	GLADYS ANNE	Painting	1923-2020		
KELEKIAN	DIKRAN KHAN	Art dealer	1867-1951		
KEROPIAN	MICHAEL J.	Sculpture			MICHAELKEROPIAN@GMAIL.COM
KESHISHIAN	MARGARET	Painting	1899-1982		
KHATCHIKIAN	VAHAN	Uncertain	1947-1971		
KRIKORIAN	LEON	Painting	1922-2005		
MANOOKIAN	ARMAN TATEOS	Painting	1904-1931	Hawaiian subjects	
MAVIAN	SALPI	Painting	1908?		
MINASSIAN	H.	Painting			
MUGAR	MARTIN	Painting, figurative and tonal	1949		
NALBANDIAN	KARNIG	Painting, etching	1916-1989		
NALTCHAYAN	HARRY	Photography	1926-1994		
PASHGIAN	HELEN	Visual art, light & space movement	1934		
SACKLARIAN	STEPHEN	Painting	1899-1983		
SAHAGIAN	ARTHUR HARRY	Painting	-2008		
SARKIS KHACHATURIAN	VAVA	Painting	1895-1984	Actual name, Vava Sarkis Khachaturian	
SARKISIAN	PAUL	Photorealistic painting	1928-2019		
SARKISIAN	PETER	New media, video projection & sculptur	1965-		

SARKISIAN	SARKIS	Painting	1909-1977		
SERAILIAN	MIHRAN	Painting	1867-1957		
SIMONIAN	JUDITH	Painting, installation art	1945-		JUDYSIMONIAN@GMAIL.COM
TACORIAN	PAUL	Design			
TAVSHANJIAN	ARTEMIS	Painting	1904-1990		
TAZIAN	KEGHAM	Sculpture, painting, public art	1938-		TAZIAN@SBCGLOBAL.NET
TCHAKALIAN	SAM	Painting	1929-2004		
TCHOLAKIAN	ARTHUR	Photography	1928? -1970S		
TOLEGIAN	MANUEL J.	Painting	1911-1983		
TOROSIAN	MICHAEL	Photography	1952-	Canadian	
TOURIGIAN	MARTIN	Painting	1930-2021		
VARTANIAN	HASMIG	Paper, mixed media constructions	1946-		HASMIGV@GMAIL.COM
YAGHJIAN	EDMUND	Painting	1905-1997		
ZADIKIAN	ZADIK	Sculpture			ZADIKZADIKIAN@GMAIL.COM
ZORTHIAN	JIRAYR	Painting	1911-2004		
ZORTHIAN	SEYBURN	Painting			SZ@SEYBURNZORTHIAN.COM

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՇԱՆԱՒՈՐ ՀԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐ ՈՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐ (ԱՄՓՈՓՈՒՄ)

ՐՈՊԵՐԹ ՄԿՐՏԻՉԵԱՆ
rma@cadcafmservices.com

Յօդուածը լուսարձակի տակ կ'առնէ Միացեալ Նահանգներու հայկական թանգարանները, համառօտակի կը քննարկէ անոնց բնոյթը, հանրային աշխուժութիւնը, առաքելութիւնը, այցելուներու ինքնութիւնը, նոր թանգարաններ հիմնելու կաարելիութիւնը, համացանցի եւ ընկերային հարթակներու վրայ անոնց ներկայութիւնն ու շփումը հանրութեան հետ եւ կը կատարէ անմիջական ու հեռանկարային առաջարկներ: Ուսումնասիրութեան երկրորդ մասով հեղինակը կը ներկայացնէ նշանաւոր Սմիթսոնեան թանգարանի արուեստացանկին մէջ տեղ գտած հայ քանդակագործներ, հուսկ՝ աղիւսակի մէջ կ'ամփոփէ վերոյիշեալ ցանկին մէջ տեղ գտած հայ գեղանկարիչները եւս:

ԺԻՐԱՅՐ ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ ԵՒ ՄԱՄԻԿՈՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ. ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԵՐԳԵՐՈՒ ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺՇՏԱՀԱՆՆԵՐ

ԶԱՔԱՐ ՔԵՇԻՇԵԱՆ
kamilazakar@yahoo.com

Հայ մանկապատանեկան խմբերգային հարուստ ժառանգութիւնը, ըստեղծուած աւանդներու, կազմակերպուած երգչախմբային մրցունակ կեանքի, ժամանակակից հաղորդակցութեան միջոցներու եւ արհեստագիտութեան լայն հնարաւորութիւնները երաշխիք են նոր երաժշտահաններու՝ բացուելու ստեղծարար նոր հորիզոններու առջեւ:

Կոմիտասեան ժամանակաշրջանը կը համարուի հիմնադրական ու հիմնարար աշխատանքի շրջանը դեռ նոր ձեւաւորուող հայ երգչախմբային կեանքին: Խորհրդային առաջին սերունդի երաժշտահաններն ու երգչախումբերը համերգային ազատ կեանքի տնօրինումի այնքան անհրաժեշտ գործօն հանդիսացող խմբերգերու թեմաներու ընտրութեան, լիարժէքօրէն ստեղծագործելու ու մեկնաբանելու առնչութեամբ դէմ յանդիման գտնուեցան գաղափարական կաղապարումի ու սահմանափակումի լուրջ արգելքի: Անդին, սակայն, Խորհրդային Հայաստանի երկրորդ սերունդի երաժշտահանները, սահմանափակուած ըլլալով հանդերձ, առաւելաբար Խորհրդային Միութեան տասնչորս հանրապետութիւններուն հետ մշակութային շփումով ու փորձառութեան փոխանակումով ձեռք բերին երգչախմբային արուեստի արհեստավարժութեան նկատառելի նուաճումներ: Հուսկ, անոնք օգտուեցան կենցաղային թէ քաղաքագաղափարական կորպաչովեան ձնհալին շնորհիւ յառաջացած ազատութենէն: Իսկ Հայաստանի երրորդ Հանրապետութեան հռչակումով հայ նորահաս երաժշտահանները:

Այս բոլորին յաջորդող սերունդը առաւելաբար պատմականօրէն անկախ Հայաստանի ժամանակաշրջանին սկսաւ ու կը շարունակէ արարել՝ օժտուած ըլլալով կատարողական բարդ հմտութիւններ ու արհեստավարժ մակարդակ ունեցող երգչախմբային կեանքի, մշակոյթի եւ աւանդներու տէր Հայաստանով:

Եւ ահա, անցեալի կենսափորձով զինուած, անկաշկանդ ու նոր շունչով տոգորուած երաժշտահաններու նոր սերունդի մը առջեւ լայնօրէն բաց է ճանապարհը, մանաւանդ, որ օտար լեզուներու իմացութիւնն ու արդի արհեստագիտութեան անոնց հմտութիւնները մեծապէս կը նպաստեն, որ անոնք օգտուին մանկապատանեկան խմբերգագրութեան համաշխարհային կենսափորձէն ու բաց ըլլան ստեղծագործական նորարարութիւններու դիմաց:

Սակաւ չէ թիւը այն երիտասարդ երաժշտահաններուն, որոնք արդէն իսկ կայացած ու ինքնահաստատուած են: Սակայն, սակաւ է թիւը անոնց, որոնք կարեւոր նկատելով մանկապատանեկան խմբերգային ժանրը, որակական ու քանակական արդէն իսկ նկատառելի վաստակի տէր են: Գրեթէ սերնդակից երաժշտահաններ Դաւիթ Բալասանեան (ծն. 1983) («Գարուն», խօսք՝ Դաւիթ Բալասանեանի) եւ Յասմիկ Արշակեան («Կատու, կատու, տեղեկատու», խօսք՝ Եդուարդ Մելիտոնեանի), արդէն իսկ քանի մը արժանաւոր խմբերգերու հեղինակներ են: Այդուհանդերձ, սակայն, նպատակամղուած կերպով տասնեակէ մը աւելի խմբերգերու տէր երիտասարդ երաժշտահաններ իբրեւ, ցարդ կ'առանձնանան երկուքը՝ Ժիրայր Շահրիմանեան եւ խմբավար Մամիկոն Անդրէասեան:

Ստորեւ կը ներկայացնենք երկու երիտասարդ այս երաժշտահանները, որոնք ի շարս իրենց մեծ կտաւի ստեղծագործութիւններուն նուիրուած են նաեւ մանկապատանեկան խմբերգագրութեան:

ԺԻՐԱՅՐ ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ

Մանկապատանեկան երգչախմբային արուեստին նկատմամբ հոգածու երիտասարդ սերունդի քանի մը երաժշտահաններէն մէկն է Ժիրայր Շահրիմանեան: Ան ծնած է 5 Փետրուար 1988ին, Երեւան: 1995-2002՝ յաճախած է Աւետ Գաբրիէլեանի անուան թիւ 12 երաժշտական դպրոցը, իբրեւ դաշնամուրի եւ ստեղծագործութեան աշակերտ: 2003-4՝ երաժշտական

տեսութեան եւ ստեղծագործութեան դասերու հետեւած է երաժշտահան Մարտուն Իսրայէլեանի մօտ: 2004-10՝ ուսանած է Երեւանի Կոմիտասի անուան Պետական Բարձրագոյն Երաժշտանոցին մէջ (կոնսերվատորիա) վկայուելով իբրեւ երաժշտահան (փրոֆ. Մ. Իսրայէլեանի դասարան): Արժանացած է բազմաթիւ միջազգային եւ հանրապետական մրցանակներու, որոնց շարքին՝ Արամ Խաչատրեանի անուան միջազգային մրցոյթ (2011), Cro Patria միջազգային երգչախմբային փառատօն (Խրուաթիա), Slide Factory մրցոյթ (Հոլանտա՝ ընդգրկում լաւագոյն հնգեակի մէջ) եւն.:

Հեղինակ է բազմաթիւ սիմֆոնիկ, սենեկային, խմբերգային եւ երգեցողական ստեղծագործութիւններու, որոնք կատարուած են Մ. Նահանգներու, Քանատայի, Ֆրանսայի, Պելճիքայի, Հոլանտայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Խրուաթիոյ, Ռուսաստանի, Իրանի, Հայաստանի եւ այլ երկիրներու մէջ:

Շահրիմանեան մանկապատենական երգչախմբային ժանրի պարտէզին մէջ ներկայութիւն դարձաւ Շուշիի «Վարանդա» եւ Պէյրութի «Կարկաչ» երգչախումբերուն համար յօրինելով 13 խմբերգեր («Կակաչ», «Ձնծաղիկ», «Փոքրիկ հովիւը», «Ծիլի բոմ», «Լուսադէմին», «Domine Deus», «Վոկալիզ», «Ժամացոյց», «Ձմեռն եկաւ», «Փիսօն», «Տատիկն ու թոռնիկը», «Ձմռան փաթիլ, գարնան ծաղիկ», «Սարեակի տունը» եւ «Արցախ»): «Զոյգ երգչախումբերու հիմնադիր գեղարուեստական ղեկավար ու խմբավար Զաքար Քեշիշեանի խրախուսանքով, 2010ի աշնան, առաջին խմբերգը «Կակաչ»ն եղաւ, Եուրի Սահակեանի համանուն բանաստեղծութեամբ: Շուշիի «Վարանդա» երգչախումբը հայ ժամանակակից հեղինակներու ամենաահետեւողական կատարողն է մեր օրերում»[1]:

«Կակաչ» երգը Շահրիմանեանի մանկապատանեկան ժանրի անդրանիկ խմբերգն է, ուր տպաւորութիւնն այն է, որ դաշնամուրի նուագակցութիւնն ու երգչախումբի իւրաքանչիւր նախադասութիւնը կը շարունակեն-կ'ամբողջացնեն ու կը բացայայտեն զիրար: Երկձայն խմբերգի քնարաշունչ մեղեդիին ընկերակցող դաշնամուրային նուագակցութիւնը թափանցիկ ու շղարշային է եւ զերծ՝ ծաղկային քնքշանքը ճնշող գերյագեցած եռահնչիւններէ: Խմբերգագրութեան այս ոճը պատշաճօրէն կ'արտացոլացնէ բանաստեղծական խօսքին մէջ առկայ «Հովը շնկշնկայ». «Հեզիկ», «Նազիկ», «Ժպտում», «Մեղմ հովի հետ», «Սրտիկ», «Թեւիկ» եւ նոյնաբնոյթ փաղաքշական տրամադրութիւնները:

Նոյնաբնոյթ «Ձնծաղիկ» խմբերգը նոյնպէս քնարական ու քնքուշ մեղեդի ունի իբրեւ մեկնակէտ: Անոր մուտքը կը նախապատրաստուի տրամադրող ու նոյնպէս շղարշային ոճի դաշնամուրային նուագակցութեան նախերգով: Նախերգի աջ ձեռքով նուագուող մեղեդիին կ'ընկերանայ ձախ ձեռքի *արփեջ*ային կերպարը, որ ինքնին կը յամենայ ամբողջ խմբերգի ընթացքին: Ուշագրաւ է, որ միօրինակութենէ խուսափելու համար, երկրոդ կըրկներգի երկրորդ ձայնին համար յօրինուած է ամբողջովին նոր մեղեդային գիծ, որ առաւել հարստացնող է ու շահեկան: Բանաստեղծական խօսքի բառերն ու արտայայտութիւնները՝ «Ծաղիկ է ծլում», «Թերը քնքուշ», «Աչիկները», «Զարմանք», «Ձիւն ու ծաղիկ»՝ լաւագոյնս կ'արտացոլան մեղեդիին եւ նուրբ նուագակցութեան մէջ:

Շահրիմանեանի քնարաշունչ հոգիի այլ զեղում մըն է «Փոքրիկ հովիւը» խմբերգը (խօսք՝ Հոբոս Աբէրի), որ մատչելի է մանկական սկսնակ երգչախումբերու համար: Գողտրիկ մեղեդին պարզ է ու փոքրերուն համար հեշտօրէն յիշելի: Սկիզբը միաձայն է եւ ապա, իր խմբերգագրումի ոճին համահունչ, մեղեդին կը բաժնուի երկու ձայնի: Խմբերգի թեթեւ ու հպանցիկ նուագակցութիւնը, որուն ձախ ձեռքի բամբային հատուածը ոտնակի (փետալ)

[1] Անձնական հարցազրոյց՝ Ժիրայր Շահրիմանեանի հետ, Երեւանի մէջ, Յունիս 2022ին:

օգտագործումով կը շաղախէ ամբողջութիւնը, նոյնպէս թելադրուած է խըմբերգին բանաստեղծական կառոյցին բառերն ու արտայայտութիւնները՝ «Գարուն», «Անուշ», «Շողում», «Զեփիւռ», «Քնքուշ», «Ծաղկի հետ խօսում», «Ծիլ ու ծաղիկ», «Նազում», «Մարմանդ», «Սիրուն» բառային տրամադրութիւններէն:

«Ծիլի բոմ»ին մէջ (խօսք՝ Հայրապետ Հայրապետեանի) 4/4 չափով ըսկսող աշխուժ ու կատակային բնոյթով մեղեդին, որ ժիր ու բարձրաձայն մուտք ունի, կ'երկձայնուի եւ պատմողական միջին մասին մէջ սոփրանօն ու ալտը, մեղմանալով, զիրար կը հալածեն խմբերգի երկրորդ բաժնին մէջ: Հոն՝ 4/4 չափն ալ անակնկալօրէն կը վերածուի 3/4ի: Այս խմբերգի պարագային ալ թափանցիկ ու հեզ նուագակցութիւնը ունի յենակէտային նշանակութիւն երկրորդ բաժնին մէջ: Իսկ առաջին բաժնին մէջ կը կրէ կշռութաւոր ներդաշնակութեան (հարմոնիկ) նշանակութեան բնոյթ:

«Լուսադէմին»ը (խօսք՝ Աթաբէկ Խնկոյեանի) զուարթ տրամադրութիւն ստեղծող, արագաթռիչք կատակային երգ մըն է, ուր կրկներգի մեղեդին նուագակցական մուտքն է միաժամանակ: Թեթեւ ու թռչկոտուն՝ ինչպէս դարձեալ կը թելադրուի բանաստեղծութեան բառային համապատասխան զեղումներէն՝ «Անուշ հովեր են փչում», «Ոսկի հասկեր կը ծփան», «Մանր ուլունք շաղ տալով», «Բարակ առուն կարկաչուն», «Անուշ բուրմունք տարածում» եւն.: Կրկին միաձայն մեղեդիով սկսող խմբերգը հարց ու պատասխանի սկզբունքով կ'երկձայնուի: Իւրաքանչիւր նախադասութեան աւարտին պահուած ձայնի վրայ, միւս ձայնը կը շարունակէ մեղեդիի ընթացքը, ստեղծելով հաճելի խաղ՝ սոփրանոյի եւ ալտի ձայնամասերուն համար:

«Domine Deus» Շահրիմանեանի միակ խմբերգն է, որ առանց նուագակցութեան է, հիմք ընդունելով պատարագի դասական գրոյթը: Հոգեւոր պակուցմամբ յօրինուած եռաձայն խմբերգը իր խորունկ խորհրդաւորութեամբ, ներդաշնակ զարգացմամբ, կը սկսի ներքեւի բամբ ու թաւ ձայներէն եւ հետզհետէ կը բարձրանայ վերեւի զիլ ձայները: Մեղեդիին ընկերակցող միւս ձայներու պարզած բազմաձայնութեան եռահնչիւնները ամբողջ խմբերգին մէջ գրեթէ չեն կրկնուիր: Այս առումով, այս խմբերգը, իր տեսակով, բովանդակութեամբ, կառոյցով, խորութեամբ ու կատարողական բարդութեամբ կ'առանձնանայ հայ մանկապատանեկան խմբերգային գրականութեան մէջ:

«Վոկալիզ» խմբերգը հայ իրականութեան խմբերգային առաջին առանց խօսքի ստեղծագործութիւններէն մէկն է: Այս առումով ան նորարարութիւն կը համարուի եւ հետեւաբար ունի նաեւ փորձարարական նշանակութիւն: Խմբերգը ամբողջութեամբ դուրս կու գայ թոնայնական համակարգէ ու լադային յենքի վրայ կառուցուած է: Երկու տարբեր երաժշտական անկախ գիծեր, որոնք երբեք չեն կրկնուիր, զուգահեռ կ'ընթանան դաշնամուրային նոյնքան անկախ նուագակցութեամբ: Տեղ մը միայն, դաշնամուրը կը կրկնէ

մեղեդային երկրորդ գիծը: Դաշնամուրի նուագակցութեան մէջ գերակայ ներկայութիւն է ոտնակը:

«Ժամացոյց»ը (խօսք՝ Յակոբ Աղաբաբի) Շահրիմանեանի զուարթուն խմբերգերէն մէկն է, ուր *ակորդային* նուագակցութեան հետ, իրարահալած մեղեդիները կը կազմեն բազմաձայն գեղեցիկ պատկեր մը: Մանկապատանեկան 4րդ խմբերգն է այս, ուր ժամացուցային «թիկ-թակ»երու հարց ու պատասխանի ոճը կ'երեւայ: Դաշնամուրային նուագակցութեան *աքորտային* ընթացքը կը ձեւաւորուի իբրեւ առանձին թեմա, երբ երգչախմբային մասը կը կատարէ բացականչական *հարմոնիք* «թիկ-թակ»եր:

Տեղացող ձիւնի փաթիլները նկարագրող նուագակցութիւնը հիմքն է «Ձմեռն եկաւ» (խօսք՝ Մկրտիչ Կորիւնի) խմերգի նկարագրին, որ ձմեռնային հեքիաթային գեղեցկութիւն մը կը պարզէ իր երկու մեղեդիներու համահունչ ու հաւասարարժէք երկձայնութեամբ: Այսինքն, երկրորդ ձայնը սոսկ ընկերակցութիւն մը չէ, որ կը բխի ներդաշնակութեան պատեհ ձայնանիշերէն, այլ ունի ինքնուրոյն մեղեդային գիծ եւ նշանակութիւն: Այստեղ խմբերգի երկու ձայներուն մէջ չկան մէկը միւսին վրայ առաւելութիւն թելադրող կամ ընդգծուող մասեր:

«Փիսօն» (խօսք՝ Յովհաննէս Թումանեանի) ճազային բնոյթի կատակային խմբերգ մը կը պարզէ ունկնդրին համար: Բանաստեղծական խօսքի գողտրիկ երաժշտաւորումի վառ օրինակ մըն է ան, որ իր բնոյթով ու նկարագրով առաւելաբար նպատակայարմար է փոքրերու կազմի համար: Նոյն մեկնակէտէն թելադրուած՝ երկձայնութիւնը հիմնուած է *տերցիայի* (tierce) կառոյցին վրայ:

«Տատիկն ու թոռնիկը» (խօսք՝ Սուրէն Մուրատեանի) *ճազ*ային է: Հարուստ է կշռութային փոփոխականութեամբ: Ասիկա յատկանիշ մըն է, որ առաւել հետաքրքրական կը դարձնէ անոր կատարումը: Իւրայատուկ է խմբերգին միտք բանին. փոխանակ տատիկը խորհուրդ տայ թոռնիկին՝ թոռնիկն է խորհուրդ տուողը: Այս խմբերգն ալ կատարման պահու բեմականացման հնարաւորութիւն ունի:

«Արցախ» խմբերգը յօրինուած է արցախեան 44օրեայ պատերազմին նահատակուած Վաչագան Մանուկեանի բանաստեղծ հօր՝ Խաչիկ Մանուկեանի խօսքերով: Որդեկորոյս բանաստեղծին տուայտանքը արտայայտող թախիծ մը կայ միաձայն սկսող մեղեդիին մէջ, սակայն, բանաստեղծութեան բովանդակութեան լաւատեսական ու մխիթարական իմաստային զարգացման հետ, մեղեդին կը բազմաձայնուի եւ կը դառնայ լուսաւոր ու խրոխտ՝ իր կրկներգի բաժնով: Բանաստեղծին - հետեւաբար նաեւ երաժշտահանին - ապրումները անձնաւորուած չեն սոսկ Վաչագանի կերպարին ու նահատակութեան փաստին վրայ, այլեւ, առանց անձնաւորելու բանաստեղծին որդւոյն կերպարը, խմբերգին ներգործութիւնը կը տարածուի բոլոր նահատակ տղոց եւ առհասարակ, արցախեան ժամանակակից

տխուր վիճակին վրայ: Խաղաղաշունչ տրամադրութեան առաջնորդող բառամեղեդիական կերտուածք ունի այս խմբերգը:

Այս բոլորին վրայ եթէ աւելցնենք Ռազմիկ Դաւոյեանի խօսքերով «Ձըմռան փաթիլ, գարնան ծաղիկ» քնարական խմբերգը, որ ականաւոր խմբավար Յարութիւն Թոփիկեանի (1951-2020) կատարմամբ ձայնագրուած է համանուն ֆիլմին համար, ինչպէս նաեւ թռչկոտուն ներածական նուագակցութեամբ բանաստեղծ Հայրապետ Հայրապետեանի կատակերգը, ապա ամբողջապէս երեւելի կը դառնայ Շահրիմանեանի ցարդ ունեցած հարուստ վաստակը հայ մանկապատանեկան խմբերգագրութեան մէջ:

«*Այն խոր հաւատքը, որ ինչպէս երաժշտական բոլոր սեռերուն մէջ, այնպէս ալ մանկական երաժշտութեան պարագային, միշտ նոր, թարմ երգացանկ է պէտք մատուցել դեռահաս նոր սերունդին, որպէսզի պահպանուի արուեստի շարունակականութիւնն ու կենսունակութիւնը, մղիչ ու ոգեւորիչ ուժն է մանկապատանեկան խմբերգերու իր արարումներուն*»[2]:

Ժիրայր Շահրիմանեանի մանկապատանեկան խմբերգագրութեան լեզուն պարզ է ու իր բնութեամբ՝ *լադա*յին, երբեմն, աւելի լայն ընդգրկումով, դասական մեծալար-փոքրալար (մաժոր-մինորային) մտածողութեան սահմաններուն մէջ կը կատարէ հետաքրքրական անցումներ: Պարզ, գեղեցիկ ու մատչելի մեղեդիներով հարուստ խմբերգեր են անոնք, որոնք միաժամանակ կրնան երգուիլ դպրոցական թէ արհեստավարժ մանկապատանեկան երգչախումբերու կողմէ:

ՄԱՄԻԿՈՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

«Ճշմարիտ մտաւորականը, արուեստագէտը, մշակութային գործիչը միշտ պէտք է լինի ժողովրդի կողքին, ժողովրդի համար պէտք է լինել մի քիչ նման՝ միմեանց հասկանալու, բայց մի քիչ տարբեր՝ միմեանց ընկալելու եւ գնահատելու համար: Այս գաղափարախօսութեամբ ներշնչուելով՝ ցանկութիւնս էր ունենալ փոքր եւ համեստ ներդրում այս մաքրամաքուր աշխարհում, որը կոչւում է մանկապատանեկան խմբերգային հեքիաթ, որն

[2] Անձնական հարցազրոյց՝ Ժիրայր Շահրիմանեանի հետ, Երեւանի մէջ, Յունիս 2022ին:

էլ կարծում եմ ազդում է մատաղ սերնդի աշխարհընկալման եւ գեղագիտական դաստիարակութեան վրայ»[3]:

Այս մեկնակէտով է, որ խմբավար Մամիկոն Անդրէասեան ցարդ ստեղծագործած է գողտրիկ խմբերգերու շարք մը: Շարքը արդէն իսկ հրատարակութեան արժանացած է՝ *Խմբերգեր Եուրի Սահակեանի խօսքերով* (2013) եւ *Իմ հեքիաթ, մանկապատանեկան երգեր եւ խմբերգեր* (2019):

Անդրէասեան ծնած է 26 Նոյեմբեր 1984ին: Երաժշտական նախնական կրթութիւնը ստացած է Անուշաւան Տէր Ղեւոնդեանի անուան երաժշտական դպրոցին մէջ իբրեւ դաշնակահար: Այնուհետեւ ուսումը շարունակած է Առնօ Բաբաջանեանի անուան պետական երաժշտամանկավարժական ուսումնարանի խմբավարութեան բաժանմունքին մէջ: 2011ին աւարտած Երեւանի Կոմիտասի անուան Պետական Բարձրագոյն Երաժշտանոցը իբրեւ խմբավար:

Այժմ կը դասաւանդէ Երեւանի շարք մը երաժշտական դպրոցներու մէջ, դասախօս է Առնօ Բաբաջանեան անուան պետական երաժշտամանկավարժական ուսումնարանին ու տնօրէնն է Ստեփան Ջրբաշեան երաժշտական դպրոցին: Հայաստանի մէջ թէ այլուր մասնակցած է տարբեր միջազգային մրցոյթներու՝ արժանանալով առաջին կարգի մրցանակներու, ոսկէ մետալի, պետական պատուոգիրերու եւ շնորհակալագիրերու:

Հրապարակած է ձայնասկաւառակ մը եւ կատարած շարք մը ձայնագրութիւններ, որոնք տեղ են գտած են Հայաստանի հանրային ձայնասփիւռի եւ Պոստոնի հայկական մշակոյթի թանգարանի «Ոսկէ ֆոնտ»երուն մէջ:

Անդրէասեան ուսանողական տարիներէն իսկ կատարած է բազմաթիւ երգչախմբային մշակումներ եւ փոխադրումներ: Ապա՝ իբրեւ խմբավար, իր աւարտական քննութեան համար հնչեցուցած է քառաձայն խառն երգչախումբի համար Առնօ Բաբաջանեանի «Վոկալիզ-արիա»ի իր կատարած փոխադրումը: Այսպիսով, ան լրջօրէն ու հետեւողական կերպով մուտք գործած է խմբերգային ստեղծագործական աշխարհ: Ապա ան ղեկավարած է Հայաստանի քանի մը մանկապատանեկան երգչախումբեր, ըլլալով խմբավարութեան դասախօս ու մանկավարժ, կենդանի կապ ունենալով մանկապատանեկան աշխարհին ու յատկապէս մանկապատանեկան երգչախումբերու հետ, մղում ունեցած է նաեւ անձնապէս խմբերագագրել:

Մամիկոն Անդրէասեան, մանկական քանի մը մեներգերու կողքին, հեղինակած է 13 խմբերգեր («Թակ-թակ», «Ջազը մեր սրտում», «Նկարիչ արեւը», «Ճանճիկը», «Առուակի երգը», «Իմ հեքիաթ», «Ճնճղուկն ու ես», «Փղի լոգանքը», «Շատակեր Շարան», «Օ, հայրենի խրոխտ լեռներ», «Մի հաւք եկաւ հեռուներից», «Առուակի երգը», «Հայրենիքից սիրուն երկիր»):

[3] Անձնական հարցազրոյց՝ Մամիկոն Անդրէասեանի հետ, Երեւանի մէջ, Յունիս 2022ին:

Իր հեղինակած a capella խմբերգերու շարքին կը պատկանի «Շատակեր Շարան» (խօսք՝ Եուրի Սահակեանի) քառաձայն խմբերգը: Շուտասելուկային բնոյթի բանաստեղծութեան՝ նոյնաոճ երաժշտական ու ասերգային գեղեցիկ շարադրանք մըն է «Շատակեր Շարան»ի առաջին մասը, ուր սոփրանոներու ոչ շատ արագ, բայց շարժուն բնութագիրը կ'ընդգծուի ալթօներու պահուող ձայնանիշերուն (pedal) շնորհիւ: Խմբերգի սկզբնական չափի փոփոխութեան հետ խմբերգը հետզհետէ կը սկսի ունենալ դանդաղեցումներ, ուր չորս ձայները արձագանգային կերպով կ'ընդգծեն խմբերգրի հերոսին՝ Շարայի անունը, մինչ խմբերգի կշռոյթը ամբողջութեամբ դանդաղելով, բառերուն հետ, հեղինակին կողմէ հմուտ կիրառումով, հետզհետէ կը վերագտնեն իրենց սկզբնական կշռոյթը՝ բանաստեղծութեան իմաստը առաւել պատկերաւոր, ընդգծելի ու զգայական դարձնելու նպատակով:

«Մի հաւք եկաւ հեռուներից» (խօսք՝ Եուրի Սահակեանի) եռաձայն a capella խմբերգին համար Անդրէասեան շատ ուշագրաւ ու դիպուկ կշռութային պատկեր ստեղծած է. երեք յաջորդական քառորդական (chroche) եւ մէկ երկու քառորդական (blanche) անընդհատ յաջորդեցնելով իրար, կը պարզէ թռչնակի թեւի ալեբախումներն ու յաջորդող պահու մը անթեւաշարժ թռիչքը: Երկրորդ սոփրանոյի եւ ալթի դերակատարութիւնը այստեղ սոսկ ներդաշնակութեան կազմութեան ծառայեցուած է: Հաւքի թռիչքի դանդաղ սահանքը պատկերող մեղեդին ու անոր նուագակից ձայնային կառոյցը ունին չափաւոր ընթացք, որ նոյնպէս շահեկան է խմբերգի բանաստեղծութեան իմաստին ու նշանակութեան բացայայտման տեսակէտէն եւ լաւագոյնս կը նկարագրէ թռչնակի թռիչքին հեզասահ ու նուրբ ընթացքը:

Նոյն կազմի համար գրուած Եուրի Սահակեանի «Առուակի երգը» խըմբերգը նոյնպէս զուլալ ակունքէ բխող մեղեդի ու ներդաշնակում ունի, նոյն սկզբունքով ու երաժշտամտածողութեամբ ստեղծուած: A capella այս խըմբերգին մէջ եւս, որ կը կրէ չափի փոփոխութիւն՝ իր մեղեդային ու կշռութաւոր ընդգրկմամբ, բնորոշ կերպով օգտագործուած է ռիթմի եւ կշռոյթի հնչիւններու կարճլիկ հնչողութեան համադրութիւնը, առաւել պատկերաւոր դարձնելով առուակի հոսքի շարժունակութիւնն ու ընդհանուր պատկերաւոր նկարագիրը:

Անդրէասեանի տասնեակ մը երգերը յօրինուած են դաշնամուրի նուագակցութեամբ: Անդրադառնանք հայրենասիրական բնոյթի երկու խմբերգերու.-

Ա) «Օ, հայրենի խրոխտ լեռներ» (խօսք՝ Եուրի Սահակեանի): Այս մէկը հայրենասիրական բնոյթի քայլերգային խմբերգ է, որուն ոգեւորիչ մեղեդիին կ'ընդելուզուի առոյգ ու կշռութաւոր նուագակցութիւն, որ ամբողջ երգի ընթացքին հոմոֆոն-հարմոնիք կերպով կ'ընթանայ խմբերգի եռաձայն երգչական մասի համակշիռ ընթացքին, ի բացառութիւն հեղինակի գրեթէ բոլոր այլ ստեղծագործութիւններուն, գլխաւոր մեղեդային գիծը պահելով իր մէջ: Պահուած ձայնանիշերու վրայ նուագակցութեան trioletները յաւելեալ

լարուածութիւն ու ձգողականութիւն կը հաղորդեն խմբերգին: Նոյն *թրիոլէթ*-*թ*ային նուագակցութիւնը, վերածուելով մեծալար (Major) տոնայնութեան, յաղթական ու լաւատեսական երանգ կը հաղորդէ խմբերգին:

Բ) Անդրէասեանի հայրենասիրական բնոյթի երկրորդ խմբերգն է՝ «Հայրենիքից սիրուն երկիր»ը (խօսք՝ Եուրի Սահակեանի): Ուշագրաւ է, որ Անդրէասեան իր հայրենասիրական խմբերգերը ստեղծելու համար չէ դիմած ամբոխավարական բանաստեղծութեանց, այլ օգտագործած է բարձրարուեստ ու նուրբ ապրումներ արտայատող բանաստեղծութիւններ: Տուեալ խմբերգը օժտուած է իւրօրինակ ձեւակառոյցով: Ռոպերթ Պետրոսեան, զոյգ դաշնակահարներու՝ չորս ձեռքի նուագակցութեամբ յօրինած է երկու խմբերգեր, («Սօս շատախօս», «Ինքնահաւանը») նուագակցութեան մէջ բերելով նորարարութիւն: Իսկ Անդրէասեան դաշնամուրի նուագակցութեան մէջ նորարար է, տրուած ըլլալով, որ հայ մանկապատանեկան խմբերգագրութեան մէջ միակն է, որ օգտագործած է զոյգ դաշնամուր: Ծաւալուն այս խմբերգի նուագակցութեան համար օգտագործուած է նուագարանի ամբողջ ձայնածաւալը: Բուն մայր մեղեդին, շարունակաբար զոյգ դաշնամուրներուն փոխանցուելով կը հնչէ երկու դաշնամուրներու նուագակցութիւններուն մէջ: Եռաձայն խմբերգի ձայնային բաժնի ձայնատարութիւնը նաեւ ըստեղծագործուած է այնպէս, որ մինչ եռաձայն ընթացքը նախադասութեան աւարտին կանգ կ'առնէ պահուած ձայնի վրայ, ալթօները կը շարունակեն իրենց բաժինը մեկնակէտ դառնալով նոր նախադասութեան մը սկիզբին: Երկու դաշնամուրներու ներգրաւումը իբրեւ նուագակցութիւն, իր կազմութեամբ՝ *աքորտ*ային, մեղեդային, ռիթմիկ պատկերայնութեամբ հարստացնող դերակատարութիւն ունի: Կ'արժէ նշել, որ նուագակցութիւնը ինքն իր մէջ հարուստ ու բազմերանգ ըլլալով ու երգի մեղեդային մասը ներառած ըլլալով, նոյնիսկ կարելի է նուագել իբրեւ առանձին դաշնամուրային ստեղծագործութիւն:

«Փղի լոգանքը» խմբերգը (խօսք՝ Եուրի Սահակեանի) կատակային աշխուժ ստեղծագործութիւն մըն է, յատկապէս մանկական սկսնակ երգչախումբի կատարման յարմար: Առաջին իսկ պահէն աշխուժ եւ ուրախ տրամադրութիւն կը ստեղծէ երգի մայր մեղեդին ներառող դաշնամուրային նուագակցութիւնը, որ այնուհետեւ կը շարունակէ հնչել իբրեւ երեք քառեակներ իրարու կամրջող մաս:

A capella «Առուակի երգը» (խօսք՝ Եուրի Սահակեանի) խմբերգը ունի նաեւ դաշնամուրային նուագակցութեան տարբերակ, որ բոլորովին այլ հնչողութիւն ունի ու այլ տպաւորութիւն կը թողու ունկնդրին վրայ: Մինչ եռաձայն a capella տարբերակը նուրբ ու քնքուշ խմբերգ մըն է, նոյն մեղեդին, վարպետօրէն վերածուելով վալսի, Արեգ Լուսինեանի, Ռոպերթ Պետրոսեանի եւ Գեղունի Չթչեանի հանրայայտ մանկապատանեկան վալս-խմբերգերուն հետ, ժանրի լաւագոյն նմուշներէն կը համարուի իր մեղեդիով ու դաշնամուրային պատշաճ նուագակցութեան նուագագրումով: Խմբերգի

առաւելաբար *փերցիա*յին ձայնատարութիւնը կը նպաստէ նուրբ ու խիտ ինչականութեան, լաւագոյնս արտայայտելով «սարալանջով հոսող, խոխոջուն, անուշ կանչով, սառնորակ պուճուր ջուր»ի տրամադրութիւնը:

Կատակային, աշխուժ եւ ուրախ տրամադրութիւն պարգեւող այլ խմբերգ մըն է «Ճանճիկը» (խօսք՝ Եուրի Սահակեանի), որ կը նկարագրէ խոհանոցին մէջ տուայտող ու ապա ճողոպրող ճանճի մը պատումը: Ստեղծագործական ուշագրաւ մտայղացմամբ կատարուած է ոչ միայն խմբերգի պատմողական մեղեդին, այլեւ, նուագակցութիւնը: Նախանուագի արփեջային մուտքը կը նկարագրէ ճանճիկին թռիչքը, որ զարգանալով կը հասնի *դիսոնանս աքորդ*ի, որ կարծէք կը խորհրդանշէ անոր լուսամուտէն ահասարսափ դուրս գալու պահը: Կատակային «տագնապ»ի տպաւորութիւն կը ըստեղծեն նաեւ յաջորդական մուտքերով իրար վրայ կուտակուող երգչախմբային ձայները, որոնց կազմած պահուող *աքորդ*ներուն զուգահեռ, դաշնամուրային նուագակցութիւնը շարժունակ կը դառնայ *ֆորշլակ*ներու (grace note) առատ կիրառումով՝ հարստացնելով ձայնային կերպարայնութիւնը: Խմբերգին նոր երանգ կը հաղորդէ տոնայնութեան զարգացումը, սակայն անոր մեղեդին ու նուագակցութիւնը ըստ էութեան կազմուած է նոյն հնչիւնադասութենէն:

Պատմողական-նկարագրական բնոյթի խմբերգ է «Նկարիչ արեւը», (խօսք՝ Արմէն Մարտիրոսեանի), որ ութերորդականներու հեզասահ ընթացքով մը կը մեկնէ ոտանաւորը՝ պարզ ու թափանցիկ նուագագրութեամբ: Խմբերգի միատարր մեղեդին կը վերածուի բացականչական մեղեդիի: Կրկներգին՝ երկձայն մեղեդին կը քառաձայնուի, ուր, մինչ սոփրանօները կը վերագտնեն իրենց ութերորդական ռիթմի պատկերը, ալթօները *աքորդ*ային դերակատարութեամբ քառորդականներու կը վերածուին, որոնք շաղախուելով դաշնամուրային արփեջիոյատիպ նուագակցութեան, կը ստեղծեն խմբերգի երգային սահուն ու կատակային մատչելի ոճը:

Հայ մանկապատանեկան խմբերգագրութեան մէջ քանի մը ճազային ոճի խմբերգեր կան, որոնց մէջ ցայտուն ներկայացուցիչ է Անդրէասեանի «Ջազը մեր սրտում» խմբերգը: Երեք մենակատարներու, քառաձայն երգչախումբի եւ դաշնամուրային նուագակցութեան համար յօրինուած այս խմբերգին համար իբրեւ բառային կառոյց օգտագործուած են վանկարկումներ, որոնք կը փոխուին ըստ երաժշտութեան բնոյթին: Ճազային արուեստը, չունենալով հայկական ազգային երաժշտական նկարագիր, այս խմբերգը կարծէք թէ չէ օժտած հայերէն բանաստեղծութեամբ: Խըմբերգը հարուստ ու բազմերանգ է ե՛ւ դաշնամուրային նուագակցութեամբ, ե՛ւ հնչիւնադասութեամբ, ե՛ւ կշռութային փոփոխութիւններով (Moderato, rubato, allegro, ապա կրկին՝ moderato, rubato):

«Իմ հեքիաթ»ը եւ «Թակ-թակ»ը երկու հանդարտ, քնարային ու երգային խմբերգեր են - որոնցմէ առաջինը, որ կը կրէ նաեւ հեղինակին երկրորդ ժողովածուին խորագիրը - քառաձայն է եւ իր բովանդակութեամբ՝ հեղինա-

կին համար մեկնակէտային է: Լաւատեսութիւն ու բարութիւն սփռող Մամիկոն Անդրէասեանի մանկապատանեկան երգերն ու խմբերգերը, այս խըմբերգին պատկերած մթնոլորտով ու յոյզերով, «սրտի գաղտնիք» բացայայտող պատգամ մըն են ուղղուած աշխարհին: Իսկ «Թակ-թակ» երկձայն խմբերգի ութերորդականներով ընթացող մեղեդին, իր կրկներգի բաժնի ձայնատարութեան մէջ կը վերածուի սոփրանոյի ու ալթոյի գեղեցիկ փոխասացութեան՝ ութերորդականներուն ուղեկցուող պահուող ձայնանիշերու ընկերակցութեամբ: Խմբերգը կ'աւարտի գեղեցիկ ու լայն երկձայն վոկալիզով:

Մամիկոն Անդրէասեան վերստեղծողն է խորհրդային առաջին շրջանի «խմբավար-երաժշտահան» երեւոյթին եւ, իբրեւ արհեստավարժ խմբավար, հմտօրէն ու գերազանցապէս կը տիրապետէ մանկապատանեկան երգչախումբերու հնչողութեան ու անոր նոթագրման կերպերուն: Անոր խմբերգերէն շատերը կրնան երգուիլ գրեթէ բոլոր մանկապատանեկան երգչախումբերու կողմէ, մինչ քանի մը հատը վերապահուած են առաւել յաւակնոտ ու արհեստավարժ երգչախումբերու:

Մինչ Հայաստանն ու Սփիւռքը շարունակաբար կ'օժտուին նորանուն երգչախումբերով, սակաւ են այն երիտասարդ երաժշտահանները, որոնք յատուկ մղումով ու գիտակցութեամբ կը նուիրուին նաեւ ստեղծագործական այս ասպարէզին: Ժիրայր Շահրիմանեան եւ Մամիկոն Անդրէասեան այն երաժշտահաններն են, որոնք յատուկ կարեւորութիւն կ'ընծայեն հայ մանկապատանեկան արդի խմբերգային երաժշտութեան ստեղծման ու տարածման անյետաձգելի առաքելութեան:

JIRAYR SHAHRIMANIAN AND MAMIGON ANTREASSIAN: TWO YOUNG ARMENIAN COMPOSERS OF CHILDREN'S CHOIR SONGS
(SUMMARY)

ZAKAR KESHISHIAN
kamilazakar@yahoo.com

Over seven hundred Armenian songs have been composed during the last 140 years for Armenian children's choirs, the first being composed in 1885. These have been composed by more than 150 professional composers.

Notwithstanding the dynamic life prevailing in the sphere of Armenian children's choirs and in contrast to its legacy, the number of professional composers in this field is currently relatively small.

The article highlights two young Armenian composers, Jirayr Shahrimanian and Mamigon Antreasian, who have composed a significant number of children's choir songs. The author examines these songs and highlights their innovative aspects and musical value.

REFLECTION OF THE 2020 ARTSAKH WAR IN CERTAIN MANIFESTATIONS OF INTERNET FOLKLORE[1]

NVARD VARDANYAN (vardanyan.nvard@ysu.am)
ANAHIT KHECHOYAN (khechoyan.anahit@mail.ru)

INTRODUCTION

Throughout all eras, folklore has responded to the decisive events occurring in a nation's life. War and battles of national self-defense constitute the main leitmotif of Armenian epic folklore, beginning with the mythical narrative of Hayk Nahapet. People respond swiftly and directly to war in their oral art, creating various accounts and epic, heroic songs about the warriors who have risen to defend their homeland. In the case of traditional folklore, these works would, over time, transform into expansive epic compositions—epics.

During the last 2-3 decades, when traditional folklore has altered its mode of existence and some of its other features—when the people's spoken word and stories have, in some manner, shifted into the virtual, internet domain and social media sphere—the immediate responses to reality often find their place precisely there. The 44-day Artsakh War and the subsequent harsh period of blockade and forced displacement and uprooting also were manifested in multifaceted folkloric expressions among Armenian users of the internet. The anxiety and will for unity of the people, their faith in victory and the agony of loss were expressed directly. In both the traditional and non-traditional genres of internet folklore, the emotions and experiences of the Armenian individual, as well as their efforts to cope with a brutal reality, are reflected. These are offered through lively humor and satire that assess the inhumane situation, and, in a broader sense, encompass everything that defines the essence of folklore.

This study outlines how wartime reality is reflected in internet folklore, by examining the folklore created among Armenian Facebook users during the 44-day war. But as this domain is still barely researched in Armenian studies, we will first broadly touch upon the phenomenon referred to as ***internet folklore***. Furthermore, after a briefing on the seven topics highlighted on the internet this paper focuses on only one of these categories.

INTERNET FOLKLORE AND THE REFLECTION OF REALITY WITHIN IT

Internet folklore, as a separate and independent phenomenon, emerged and developed as of the last decade of the 20th century. It serves as a means of

[1] This work was made possible by a research grant from Yervand Terzian of the Armenian National Sciences and Education Fund (ANSEF) based in New York, USA.

preserving and reviving traditional folklore within the online domain, brings new folklore genres to life, and presents traditional genres with new interpretations. The 'weaving' of popular speech into the network environment leads to numerous transformations of its content, style, and genres. According to the most widely accepted definition, internet folklore is a hybrid of oral folk art that relies on new communication capabilities offered by network technologies. In this regard, priority is given to the medium of dissemination (the internet), which becomes the generator of folkloric communication forms, genres, and types. In his study of internet folklore, Russian researcher D. Radchenko notes that "once written speech appears on the internet, it lives there according to the laws of 'mouth-to-mouth' transmission."[2] Philosophy, anthropology, sociology, and cultural studies researchers study and examine internet folklore, which they call by different names, like "internet folklore",[3] "network folklore",[4] "virtual folklore",[5] "electronic folklore", etc[6].

There have been no references to the phenomenon within the circle of Armenian folklore researchers, with the exception of a very recently published article.[7]

Classical folkloric creations have changed, evolved, and been enriched through transmissions by numerous anonymous authors, which is why these works often exist in multiple variations. Currently modern technologies serve as the primary means of creation and dissemination of folklore. People create, modify, and share content, while digital platforms facilitate this process, allowing folklore to spread rapidly.

The internet not only instantly facilitates the transmission of such texts—making them accessible to vast numbers of people in all corners of the world—but also shapes a particular style and form of folklore. As in traditional folklore, certain genres within online folklore preserve variant forms, while in some

---

[2] D.A. Radchenko, "Modern Cinematic Anecdotes in the Context of Network Communication," *Humanities*, 157(4):2006, p. 307.

[3] A.S. Kargin, A.V. Kostina, "Scientific Understanding of Internet Folklore: Current Issues and Research Experience," *Internet and Folklore*, 2009, pp. 5-18.

[4] V.M. Rozin, "The Phenomenon of Network Folklore," *Traditional Culture*, 8 (3):2007, pp. 5-22.

[5] O.V. Lutovinova, "The Anecdote in Virtual Folklore," *Russian Language Abroad*, 2(213):2009, pp. 77-82.

[6] V. Krawczyk-Wasilewska, "E-Folklore in the Age of Globalization," *Fabula,* 47(3-4):2006, pp. 248-54.

[7] N. Vardanyan, "Traditional Approaches and Modern Challenges in Armenian Folkloristics: The Need for Studying Internet Folklore", *Perspectives on Armenian Philology, Current Issues of Research and Instruction*, Los-Angeles-Yerevan, Western Diocese of the Armenian Church of America, 2025, pp. 172-86.

instances, users merely transmit them intact without any modifications, without altering anything. The internet has transformed into a vast archive—seemingly becoming ***the warehouse of folklore***—thereby opening new avenues to easy access and study this genre, provided it is not blocked or closed or banned by the relevant administration. ***A defining characteristic of internet folklore is the hybridization of oral, written, visual, and auditory forms of communication (multimedia) within the space of computer-mediated communication.*** At the same time, oral-written hybrids are being studied quite actively (primarily within the framework of computer-mediated communication), whereas pictographic and kinetic texts (multimedia) remain among the most crucial areas of internet folklore research that require further study.

The renowned American folklorist and philologist Alan Dundes, who believed that folklore has always existed and will, in all likelihood, continue to exist as long as people communicate and use traditional forms of communication in that process, wrote, "Technology does not threaten folklore; it becomes a vital factor in the dissemination of folklore and a source of inspiration for the creation of folkloric works".[8] The internet has transformed folklore into a dynamic and evolving unit, giving it the ability to adapt to the digital era. It provides new tools and platforms for creating, disseminating, and preserving new forms of folklore, ensuring that these narratives continue to evolve in the contemporary online domain. As the means of distributing folklore, the internet becomes a generator of folkloric communication forms, genres, and types. One of the greatest advantages of the internet is the multicultural nature of user interactions, as well as the timeliness of themes and issues in the folkloric texts disseminated through the network. Precisely this latter feature of internet folklore allows real-life events to enter its domain instantaneously, turning online folklore into a unique mirror, where even the smallest, seemingly insignificant everyday incidents of social life, as well as broader historical and political events and realities, are directly reflected. These make their way onto the internet through impressions users derive from reality—expressed via everyday-life narratives or other means—and, as they pass from one person to another, they acquire a mass character.

Thanks to this very quality, Armenian Facebook immediately reacted to the Artsakh War, becoming a virtual "battlefield" that expressed the people's opinions and served as a podium to stress relief through humor and offer ways for mutual encouragement and strengthening.

---

[8] A. Dundes, "The Devolutionary Premise in Folklore Theory," *Journal of the Folklore Institute*, 6(1):1969, p. 13.

THE 44-DAY WAR AND ARMENIAN FACEBOOK: THE VENUES OF SOCIETY'S INVOLVEMENT IN THE "NETWORK WAR"

The 44-day Artsakh War of 2020 had a significant impact and left a deep imprint on the social, political, economic, and public relations of not only Artsakh, but also on all Armenians in both Armenia and the Diaspora. Internet folklore actively responded to the developments taking place during the war. In this regard, the war, the subsequent blockade, and the forced evacuation/desertion found a place in the online sphere. A new information environment emerged, in which information was transmitted, processed, and disseminated instantaneously.

It should be noted that the use of the internet to disseminate war news or war comments exerts an informational-psychological influence on human society. In the Armenian reality, one can single out certain chat forums or Facebook groups, where one can see how the online sphere becomes a communal environment where discussions are wide-ranging—from everyday issues to commentary on political actions. As a result, a broad audience is generated through which folklore tries to preserve its vitality by combining old and new forms. It is interesting to observe how the "digital experience," nourished by tradition, took on a contemporary manifestation, combating the fears that confronted the person during wartime—aiming to overcome them and reclaim what was lost.

As is commonly noted today, 21st-century wars take place not only on the battlefield but also in the information space, particularly on social networks. The war that took place in Nagorno-Karabakh from September to November 2020 was not only accompanied by military clashes but also, significantly, involved a "virtual war" that unfolded on social media platforms. In the Armenian reality, during the 44-day war, Facebook users were actively involved in this "network information war," where folklore also occupied its own unique place.

In broad outline, this "virtual war" had the following manifestations in the field of Armenian Internet users:

1. A part of society responded quickly to messages circulating under the #հաղթելու-ենք ("we will win") hashtag, creating new messages in a similar vein, thereby boosting military spirit, instilling faith in one's own power and strength, and preventing the destructive war—which abruptly intruded on a once peaceful life—from causing despair, panic, or fear.
2. Society tried to actively participate in the war through social networks. Numerous online petitions emerged, which mainly aimed at ending the hostilities, delivering humanitarian aid, and securing international recognition of Artsakh. Such messages were posted on platforms like Change.org .

3. Media attack Facebook groups were formed, where FB users actively fought against fake news spread by the enemy and appealed to foreign well-known cultural figures—those enjoying public respect—to help restore peace.
4. The most immediate response was in the form of stories of heroism from the battlefield. Mourning,[9] praise, and paying tribute to fallen soldiers were the most commonplace. On social media platforms such as Facebook, Instagram, and Twitter, many stories were shared about the heroism of the fallen. These were accompanied by photos and videos that validated their lives and heroism. Hashtags such as #ArtsakhStrong and #KarabakhHeroes became widespread.
5. In the videos circulating from the battlefield, stirring war songs and war dances, as well as songs performed by soldiers, often appeared. These recordings, uploaded to the internet directly from the battlefield, conveyed a rather rich impression of the contemporary genre manifestations of martial songs and the specifics of their performance.[10]
6. In popular public chat forums, one could encounter various folkloric genres—curses aimed at the enemy, prayers, and humorous banter. The latter, in particular, created under the immediate impact of events, were born from the people's healthy, self-defensive reaction to stress. Alongside the photos of thousands of young victims appeared both heroic and satirical anecdotal accounts brimming with biting sarcasm directed at the enemy. Through them, people sought to preserve the spirit and determination to protect their homeland, maintain faith in victory, and consciously avoid going insane amid a terrifying reality.
7. War-themed political and satirical memes became widespread on the internet, conveying political messages, satirical commentary, and often themes of loss and longing. These memes spread rapidly among people as a means of expressing criticism, and at times they carried a message of unity and solidarity.

Of the last four manifestations mentioned, each contains an abundance of unique folkloric material, where one can find multiple expressions of both

[9] Mourning, death notices, and condolence messages have become increasingly common in the Facebook space in recent years, even beyond the context of war (S. Hakobyan, "Death on Armenian Facebook: Traditional, Modern, or Postmodern Mourning?" *Works of the Institute of Archaeology and Ethnography*, 5:2023, Yerevan, pp. 109-21.

[10] N. Vardanyan, L. Hayriyan, "The Song of the Frontline in 2020 in the 44-day Artsakh War: From Traditional to Modern Manifestations," International Komitas Conference 2024, *The Legacy of Komitas from Historical and Contemporary Research Perspectives, Program and Abstracts,* University for Music and Performing Arts Vienna, Vienna, 2024, p. 30.

traditional and contemporary genres. Each of them is certainly worthy of a separate study. In this case, however, we will dwell on one particular manifestation: the memes created on the basis of the well-known sculpture of the Grandpa and Grandma from Artsakh. In the internet age, as people perceive information more effectively through sight and sound, new visual forms of information constantly emerge online. One of these forms is the internet meme, which comprises a combination of text and image.

THE INTERNET MEME: CHARACTERISTICS OF THE GENRE

An internet meme is perhaps one of the most common types of online folklore today. There is already a wealth of scholarly literature on the subject. Composed by combining text and image, transmitted rapidly, and gaining variations, this genre, arguably, is the most flexible when it comes to responding immediately to reality. It is no coincidence that among the modern genre types of internet folklore, this particular one displayed the most noteworthy expressions in war-themed online folklore.

The term "meme" is derived from the Greek word "mimesis" (translated as "that which is imitated"). It first appears in 1967 in a work by the English biologist Richard Dawkins. Dawkins interprets this concept as a "unit of cultural information" and argues that "just as biological information is made up of genes, cultural information is made up of memes."[11] Dawkins believes that these cultural units are transmitted from person to person through copying or imitation. Drawing a comparison with Charles Darwin's theories, the researcher argues that Darwinism is transformed into a universal method that makes it possible to uncover the mechanisms of cultural evolution. As a result, the meme should be considered a "cultural replicator" responsible for cultural transmission. Thus, the patterns of thinking in any nation, elements of folklore, religious characteristics, and everything else that defines a given nation—and everything synthesized within its culture—are passed down from generation to generation and "imitated."

Linda Börzsei, in a broad sense, defines the internet meme as a unit of information freely circulating on the internet.[12] Linguist S. Kanashina synthesizes the aforementioned viewpoints and concludes: "The stereotypical, established understanding of internet memes by society assumes such online units that combine text and image in a square frame".[13] This definition, of

---

[11] A. E. McGrath, *Dawkins' God: Genes, Memes, and the Meaning of Life*, Malden, MA, Blackwell, 2005, p. 122,

[12] L. K. Börzsei, "Makes A Meme Instead: A Concise History of Internet Memes," *New Media Studies Magazine*, 7:2013, p. 1-18.

[13] S.V. Kanashina, "What Is an Internet Meme?", *Humanities*, 28(277):2017, pp. 84–90.

course, is very narrow and does not capture the complete picture of the phenomenon, but on the other hand, it allows us to conclude that an internet meme can still be regarded as a text.

There is still no unequivocal, comprehensive approach to describing and understanding the phenomenon of internet memes. Nevertheless, following the analogy of the "cultural gene," one must accept that the main characteristic of this phenomenon is its "viral and replicable" nature, connected to internet memes being derived from an original source. The textual information in internet memes is concise and easy to grasp, reproduce, and subsequently spread, thus creating new, similar internet memes. Meanwhile, their visual component is appealing and instantly perceived by the recipient, allowing for a swift and clear "reading" of the essence and information encoded therein.

Russian researcher and media scholar S. Shomova proposes a different media term for internet memes—"a bar code for the subconscious"—calling it "an excellent metaphor for the particular functional qualities of the meme, which allow us to view this phenomenon not only within a cultural context, but also in the context of the unconscious."[14] The message containing memetic content is classified at a subconscious level: the person does not fully understand what exactly in a particular meme makes them laugh, get angry, become nervous, or feel admiration, until they consciously perceive the "message" transmitted by the meme or decode its content. Russian linguist M. Krongauz[15] divides the internet meme, as a communicative unit, into the following stages: creation and initial state of memes, the dissemination of memes, the use of memes, and the forgetting of memes or a change in their status. If the meme becomes interesting to other users, it quickly gains popularity and spreads. Krongauz calls this phase the "creative zone," because the meme evolves, attempting to expand its communicative space and gain contextual relevance. Next is the stability phase, when through repeated use in communication, society begins employing it in every possible way. However, no internet meme is immune to being forgotten, as society continually dictates new rules. Users can easily lose interest, and thus, after a certain period, memes may become incomprehensible to the internet audience, which is itself constantly changing and renewing. In the final phase, the internet meme is either forgotten or changes its status, becoming a linguistic unit: in speech, it is used not as a meme, but as an element of communicative discourse.

---

[14] S.A. Shomova, *Memes as They Are*, Aspect Press, 2018, p. 12.

[15] M. Krongauz, "Memes on the Internet: An Experience of Deconstruction," *Science and Life*, 11:2012, p. 90.

MEMES ABOUT THE ARTSAKH "WE ARE OUR MOUNTAINS" ("GRANDPA AND GRANDMA") MONUMENT IN THE FACEBOOK SPACE DURING THE WAR AND POST-WAR PERIOD

There is no strict requirement for a meme to be satirical, although, given its principles of imitation and mockery, memes most frequently acquire a satirical-critical character. Thus, from the very start of the Artsakh War, memes —composed of image and text—mocking the president of Azerbaijan began to appear on Armenian Facebook, where the enemy president was portrayed as a losing, cowardly, and weak figure. The principle of ridiculing the enemy and depicting them with such traits is characteristic of folk heroic epics, with the best example being the epic poem of *Daredevils of Sassoun*. Conversely, the president of Artsakh and even Artsrun Hovhannisyan (who was the official war spokesperson reporting military updates) were attributed with a power, omnipotence, and invincibility typical of the epic mindset.



Fig. 1: Graffiti in the Arabkir district of Yerevan (photo by N. Vardanyan)

Among the most widely disseminated and variable manifestations during the war and post-war period were the memes created based on the famous monument "We Are Our Mountains," commonly known in colloquial speech as "Grandpa and Grandma" (Dedo-Babo). In the images and posts actively circulating online, the Artsakh grandmother and grandfather from this iconic monument appear in various portrayals, often accompanied by a range of verbal formulations. From the very first days of the war, images of the monument bearing the inscriptions "Free Artsakh," "Strong Artsakh," or "Artsakh is Armenia" began to appear on the internet. These often included

the flag of Artsakh waving high. Notably, these pictures, accompanied by textual captions, rapidly moved from the internet into everyday reality as graffiti on buildings in Yerevan (fig. 1).[16] Similar graffiti depicting Artsakh's Grandpa and Grandma were widely disseminated during the blockade of Artsakh as well (figs. 2, 3).[17]

Figs. 2 & 3: A group of artists creates graffiti depicting the symbol of Artsakh, calling on the global cultural community to speak out, https://www.aravot.am/2022/12/21/1312902/ (available as of 06.12.2024)

The abundance of images of the monument is undoubtedly due first and foremost to its symbolic value as it identifies Artsakh. Created in 1967 by the sculptor Sargis Baghdasaryan and installed in the heart of Stepanakert, on a hill, it became a symbol for the people of Artsakh. In 2020, this perception of the monument was further enriched thanks to the Dillyakyan brothers, the creators of the animated film "Found Dream", who, during the 44-day Artsakh War, launched a series of images that brought the monument to life. According to these images, the Artsakh Grandpa heads off to war, the Grandma sees him off, waits for him, and so on.[18] Loved by many, the Dillyakyan brothers' images spread widely on the internet. They gained significant popularity, and many people shared them with their own commentaries—even without knowing the artists' names. Presented with various verbal formulations and interpretations,

[16] The fact that such graffiti originate from the internet is evidenced by hashtags, which are characteristic of computer language.

[17] «A group of artists creates graffiti depicting the symbol of Artsakh, calling on the global cultural community to speak out," https://www.aravot.am/2022/12/21/1312902/ :

[18] "It's impossible to confuse Grandpa and Grandma's features, and that's exactly why they were so photogenic in the pictures. Dillyakyan brothers", https://bravo.am/gallery/74989?img=8; https://bravo.am/news/74989?fbclid=IwAR3uJY3KgxY-_rfRSp_2fHhjnwz9un2R1RGOdmULolyCJNkA-PbyR1956IU :

these images turned into unique memes, prompting the creation of new ones. In different everyday situations, with varied attire and themes, these memes featuring the Artsakh Grandpa and Grandma respond directly to current events. Thus, from the beginning of the war, images showing Grandpa heading to the front and Grandma seeing him off, or Grandpa and Grandma leaving together for war, began circulating (figs. 4, 5). During the blockade, images mocking hunger appeared featuring Grandpa and Grandma (fig. 6), as well.



Fig. 4: *December 21, 2022. "It's impossible to confuse Grandpa and Grandma's features, and that's exactly why they were so photogenic in the pictures." Dillyakyan Brothers, Ellen Aghajanyan,*

https://bravo.am/news/74989?fbclid=IwAR3uJY3KgxY-_rfRSp_2fHhjnwz9un2R1RGOdmULolyCJNkA-PbyR1956IU (available as of 06.12.2024)

Fig. 5 *– 28.20.2020. From the personal Facebook page of user Ray Asatryan. The image is accompanied by the following post: "Did you know how Artsakh got its name? Hayk Nahapet receives news that the land in these parts cannot stand up to being sown; even a slight rainfall peels off the upper layers, turning the mature fields into muddy swamps. Hayk Nahapet sends his son Aramanyak to this region and instructs him to plant trees and bushes; only then will the land become resilient and not slip away. Aramanyak cuts 'tsakh' (branches) from various parts of the land of Hayk and brings and plants them on these lands. From that comes the name 'Aramanyaki tsakh,' which over time was shortened to 'Artsakh,' and the region was called Artsakh World",*

https://www.facebook.com/ray.asatryan/posts/pfbid0aqxRAJExXFSihd1tFL323iveKWfvTa5GzDXySR6tGhbXx4xK83NdAv87WELzZntMl (available as of 06.12.2024)

During the 44-day war and in the period that followed, an image showing the feet of Grandpa and Grandma deeply embedded in the earth was periodically shared on the internet and accompanied by numerous patriotic commentaries. This image was supplemented by a legend about how the enemies mocked the statue, saying that Grandpa and Grandma had no feet, while the people of Artsakh replied that their feet were buried deep into the soil. Together, the image and the legend symbolize the profound roots Artsakh's people have in their land (fig. 7).

Fig. 6: *31.12.2022, "Artsakhi Barbar" I Facebook (available as of 06.12.2024)*

After the September 2023 war and the forced displacement of the indigenous population of Artsakh, the well-known Grandpa and Grandma memes took on an even deeper significance. Many replaced their Facebook profile pictures with these images; in the homes of Artsakh refugees and in public places where Artsakh refugees gather, one can see pictures of the monument and small souvenir versions, which also frequently appear online with various accompanying posts. A distinctive symbol of Grandpa and Grandma, of the homeland's soil, and of identity is found in the following image, where a clod of earth brought from the homeland, a house key, and depictions of Grandpa and Grandma are completed by the Artsakh flag (fig. 8).

The tragically perceived reality is conveyed in a particularly moving way by the depiction of the tormented, aged Grandpa and Grandma in the following image, where Grandpa's mouth is bound and Grandma's eyes are covered (fig. 9).

It is noteworthy that in some of the examples provided, there are no verbal elements, whereas others are accompanied by a certain legend or a note in which words and images complement one another. The image, which is often eloquent in itself, becomes more meaningful through the accompanied text posted by whoever shared the meme, as can be seen in figure 2, where the sharer's captions and the comments beneath the image complete it as a meme.

Thus, in recent years, the well-known Grandpa and Grandma memes have become a unique documentation of Artsakh's history within the domain of online folklore,

conveying the deeply emotional experiences endured by the people throughout their difficult and heroic path.

Figs. 7 (left) : 06.10.2020, Facebook post by user Lilia Davtyan:
"We all know that the Dedo-Babo monument does not have a pedestal. They say that during the opening, one of those present—who was one of our unfortunate neighbors—asked mockingly whether the statue had no feet and immediately received an silencing reply:
'Only the heads of the people of Artsakh are on this land; their bodies, their feet, are rooted very deep in these mountains, and NO ONE will ever be able to uproot or tear them away from this soil.'
#Հաղթելունենք *(#WeWillWin)"*
https://www.facebook.com/lilia.davtyan.5/posts/pfbid0Gsu9QhMwsR2oxGLvhW4qgom1Gyxj3JxMUH3zUX9wnpZcSAWfvkfJMvvmsmW7X3kcl?_rdr (available as of 06.12.2024)
Fig. 8 (right): 25.06.2024
https://www.facebook.com/photo/?fbid=391423810518773&set=p.391423810518773 (available as of 19.06.2024)

CONCLUSION

Internet folklore—which at first glance may appear to be an enormous field emerging and spreading spontaneously, with no apparent patterns—does nonetheless have certain rules of formation and, when studied, gives rise to noteworthy findings. The results of such research can reveal much about the direct expressions of popular thought and worldview, which often speak more powerfully than dry reports or history told in the language of facts.

This paper examined only a small manifestation, in an attempt to understand how the people respond to reality, how reality becomes online folklore, and how the online

realm reacts to the inhumane phenomenon called war, which comes to shatter the peace of a tranquil nation, to undermine the joy of a creative life, and to sow death and destruction.

One can generalize to underline that today it is no longer possible to ignore the vast field known as internet folklore, which still awaits its researchers. And why not, as in the case of traditional folklore, this field can be used to analyze and understand the contemporary humans' reflections, emotions, and experiences—particularly the destructive impact of war or any catastrophe in any part of the world and the ways people resist it—through oral tradition and its present-day manifestations.

2020ի ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ

(ԱՄՓՈՓՈՒՄ)

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆԵԱՆ (vardanyan.nvard@ysu.am)

ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՅԵԱՆ (khechoyan.anahit@mail.ru)

Համացանցն այսօր, աւելի քան երբեւէ, աստիճանաբար մեծացնում է իր դերը՝ որպէս բանահիւսութեան պահպանման եւ կենցաղավարման մի նոր տիրոյթ, ուր բազմաթիւ աւանդական բանահիւսական ժանրերի կողքին ստեղծւում են նաեւ նորերը, ուր մարդիկ ակամայ կամ գիտակցաբար կուտակում եւ շտեմարանաւորում են իրենց նախնիներից փոխանցուած բանաւոր աւանդոյթը, ստեղծում նորերը: Համացանցային բանահիւսութիւնը տարբեր երկրների բանագէտների աշխատութիւններում վաղուց արդէն ուսումնասիրման է ենթարկւում, մինչ հայ բանագիտութեան մէջ այն դեռեւս մնում է չուսումնասիրուած:

Որպէս բանաւոր շփմանը փոխարինած մի նոր միջոց՝ համացանցային բանահիւսութիւնը շատ արագ է արձագանգում հասարակական կեանքում տեղի ունեցող փոփոխութիւններին: Իր այս դերը հայկական ցանցային բանահիւսութիւնը կատարեց նաեւ արցախեան 44օրեայ պատերազմի եւ յետպատերազմական շրջափակման եւ բռնագաղթի ժամանակահատուածում: Յօդուածում քննւում են որոշ նման դրսեւորումներ: Առանձնակի քննութեան է ենթարկւում համացանցային միմ կոչուող նոր ժանրածեւը, նրա հիմնական յատկանիշերը, ինչպէս նաեւ արցախեան «Մենք ենք, մեր սարերը» յայտնի յուշարձանի հիմքով ստեղծուած միմերի քննութեամբ փորձ է արւում ցոյց տալ ժողովրդի արձագանգը պատերազմական եւ յետպատերազմական իրականութեանը:



***Fig. 9**: 30.06.2024, post in the "Artsakhashener" Facebook group (in dialect): "When I saw this picture, my heart stung. It was as if a needle pierced my heart; agh, I cried out inside, and tears fell like a flood. After crying a bit, a lot changed in my soul. I realized they cannot break or humiliate us. We find a remedy for any impossibility; they can test us all they want, but the Artsakh person remains an Artsakh person in spirit. Our group is an example for you. I have a lot to say in the comments on the picture, go ahead and share your thoughts." https://www.facebook.com/groups/1001934904442136/posts/1126514595317499/?_rdr (available as of 06.12.2024)*

Քննարկում

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՄՈՒՇԵՂ ՏՈՆՈՅԵԱՆ
mushotonoyan0440@gmail.com

ՄՈՒՏՔ

20րդ դարի սկզբին, երբ գիտնականները ջանք չէին խնայում ստեղծել հեռուստատեսութիւնը եւ հեռուստացոյցը, գուցէ չէին էլ պատկերացնում, որ իրենց յեղափոխական եւ մարդկութեան պատմութեան ամենակարեւոր գիւտերից մէկը ծառայելու է ոչ միայն աշխարհի հեռաւոր կէտերում տեղի ունեցող իրադարձութիւնը ցուցադրելու, այլ նաեւ դառնալու է քարոզի եւ հասարակութեան վրայ հոգեբանական միջոցներով ներազդող գործիք[1]:

Հեռուստացոյցի միջոցով հեռուստատեսային արտադրանքը սկսեց յայտնուել մարդկանց տներում, ընտանիքներում, սկսեց հասանելի դառնալ հասարակութեան տարբեր շերտերի համար, եւ իհարկէ հեռուստացոյցի հետ միասին ընտանիքներ մուտք գործեցին նաեւ դրանց պարունակած արժէքները, որոնք, քանի որ աշխարհի տարբեր եւ հեռաւոր տեղերից էին, բնականաբար յաճախ նաեւ խորթ էին ակնդիրների համար:

Հայաստանում առաջին պետական հեռուստատեսութիւնը հիմնադրուել է ԽՍՀՄ գերագոյն խորհրդի որոշմամբ 1955 Սեպտեմբերի 5ին, իսկ առաջին հեռասփռումը՝ 1956 Նոյեմբերի 29ին: Հաղորդումները կանոնաւոր հեռարձակւում էին շաբաթական չորս անգամ՝ Երեքշաբթի, Հինգշաբթի, Շաբաթ եւ Կիրակի օրերին՝ երկուական ժամով: 1957 Նոյեմբերի 7ին կատարուել է արտասենեկային անդրանիկ հեռարձակումը:

Ինչպէս հաստատում են ֆրանսացի տեսաբանները, 12 տարեկանից բարձր իւրաքանչիւր մարդ օրական միջինը երեքուկէս ժամ անցկացնում է հեռուստացոյցի առաջ[2]: Ըստ հաշուարկների, ստացւում է, որ մէկ տար-

[1] Հեռուստացոյցի ստեղծումը կապուած է միքանի գիտնականների աշխատանքի հետ, բայց առաջին ամբողջութեամբ էլեկտրոնային հեռուստացոյցը ստեղծել է Ֆիլօ Ֆարնսուորթը 1927ին ԱՄՆում: Նա կարողացաւ մշակել համակարգ, որը պատկերները փոխանցում էր էլեկտրոնային եղանակով՝ առանց մեքենական մասերի: Հեռուստատեսային առաջին հեռարձակումը տեղի ունեցաւ 1936ին Մեծ Բրիտանիայում, երբ BBCն սկսեց կանոնաւոր հեռարձակումներ: ԱՄՆում հեռուստատեսային առաջին հաղորդումը հեռարձակուեց 1939ին RCA ընկերութեան կողմից:

[2] Ա. Մենեմշեան, Զ. Սարգսեան, Վ. Ստեփանեան, *Հայ թերահասի արժէհամակարգի փոփոխակերպումները էլեկտրոնային լրատուամիջոցների ազդեցութեամբ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2014, էջ 9 (http://publishing.ysu.am/files/Derahasneri_arjehamakargi_popokhumnery.pdf, մատչում՝ 04.05.2025):

ուայ ընթացքում 12 տարեկանից բարձր իւրաքանչիւր մարդ ուղիղ երկու ամիս անցկացնում է նայելով հեռախօսի կամ հեռուստացոյցի պաստառին: Անշուշտ, սա այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում այդ տարիքի անձի վրայ հնարաւոր է ունենալ հոգեբանական ազդեցութիւն, որը իհարկէ, արտայայտուելու է վարքային տարբեր դրսեւորումներով՝ հասարակութեան մէջ, ընտանիքում, դպրոցում, ապագայ աշխատավայրում եւ այլ տեղերում, որտեղ նա ինքնադրսեւորուելու հնարաւորութիւն է ունենալու: Ըստ հոգեբանների, երեխայի՝ մինչեւ համացանցային եւ պաստառային մեդիայի հետ առնչուելն ստացած դաստիարակութիւնն ու ձեւաւորուած արժէհամակարգը որեւէ կերպ չեն հանդիսանում վահան՝ այն արժէքների համար, որոնք կարող են թերահասի համար նոր արժէհամակարգ ստեղծել՝ հեռախօսների, հեռուստացոյցի միջոցով նրա կենցաղ մտնելով[3]:

Յստակ որեւէ ցուցանիշ չկայ, թէ հեռուստատեսային ո՛ր ժանրերն են ժամանակային առումով ամէնից շատ տեղ զբաղեցնում եթերում, սակայն հեռուստասերիալը հանդիսանում է այսօրուայ հեռուստատեսութեան ամենասպառուող ժանրերից մէկը, որն էլ հենց ամէնից շատն է իր մէջ պարունակում քարոզ եւ կրում տարբեր արժէքներ ու դիտողների համար սահմանում նոր արժէհամակարգ, կամ էլ՝ աւելի՛ ամրացնում արդէն ձեւաւորուած արժէհամակարգը: Ի սզբանէ սերիալները, որոնք յայտնի են նաեւ օճառային օպերա անուանմամբ, եթեր են հեռարձակուել գովազդի նպատակով եւ նոյնիսկ աւելի վաղ, քան հեռուստատեսութեան գիւտն է. դրանք հեռարձակուել են ռադիոների միջոցով:

ՍԵՐԻԱԼ ՀԱՍԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Սերիալը հեռուստատեսութեան կինոարտադրութեան ժանր է, որը սովորաբար ներկայացնում է երկարատեւ, զգացմունքային եւ դրամատիկ պատմութիւններ, որոնք հիմնականում ձեւաւորուած են ընտանիքներում, սիրային յարաբերութիւններում կամ հասարակական այլ տիրոյթներում տեղի ունեցող իրադարձութիւնների շուրջ: Դրանք բաղկացած են դրուագներից՝ էպիզոդներից, սովորաբար շարունակելի աւարտներով:

Այսինքն՝ պատմութիւնները շարունակ չեն հանգուցալուծւում, ինչը նշանակում է, որ իւրաքանչիւր դրուագ աւարտւում է չլուծուած հարցով, որը պէտք է լուծուի յաջորդ դրուագում: «Սերիալ» եզրոյթը ստեղծուել է ամերիկեան մամուլում 1930ականներին: Այդպէս անուանւում էր սերիալային հայրենական ռադիոդրամաների արտասովոր տարածուած ժանրը, որը մինչեւ 1940 զբաղեցնում էր առեւտրային կազմակերպութիւններից հովանաւորուող ցերեկային հեռարձակման ժամերի մօտ 90%ը: Սերիալներն այդ ժամանակ կոչւում էին նաեւ «օճառային օպերաներ», որտեղ «օճառն» ակնարկում էր կենցաղային մաքրող միջոցներ արտադրողների կողմից

[3] Նոյն:

սերիալների հովանաւորութիւնը, իսկ «օպերան» ենթադրում էր հեգնական անհամապատասխանութիւն ցերեկային սերիալի ներքին պատմողական մտահոգութիւնների եւ դրամատիկական ամենաբարձր ոճերի միջեւ: 1920-30ականներին այդ ժանրը փորձարկւում էր առեւտրային ռադիոալիքների եթերում՝ համատեղելով գովազդատուների կարիքները եւ լսարանի սպառողական պահանջները: Գովազդելով կենցաղային մաքրման միջոցներ, արդուզարդ եւ սննդամթերք՝ կարելի է ենթադրել որ սկզբնական շրջանում հիմնական թիրախային լսարանը կանայք էին[4]:

Սերիալները ներկայումս տարբերւում են այն ժամանակի օճառային օպերաներից, երբ դեռ նոր էր այդ ժանրն օգտագործւում հեռասփռման ժամանակ: Ժանրի զարգացմանը գլխաւորապէս նպաստեց հեռուստատեսութեան ստեղծումը, որը հնարաւորութիւն տուեց ոչ միայն լսողական ուղերձներ յղել լսարանին այլ նաեւ՝ տեսողական: Սա լսարանի վրայ աւելի մեծ եւ արագ ազդեցութիւն թողնելու միջոց դարձաւ:

Ներկայիս սերիալներում լսարանին աւելի պատկերաւոր ներկայանալու մեթոդներ են մշակուած:

Սերիալի ընթացքում զարգանում են բազմաթիւ պատմութիւններ, որոնցից ոմանք շուտ են աւարտւում, ոմանք էլ տեւում են աւելի երկար: Դրանք կապուած են միմեանց հետ. որտեղ աւարտւում է մէկը, սկսւում է միւսը: Վերջնական հանգուցալուծումը մշտապէս յետաձգւում է, իսկ դիտողներին հրամցնելով նրանց ժամանակակից ամէնօրեայ իրադարձութիւններով սիւժէներ, ստիպում են նոյնացնել սերիալը իրականութեան հետ[5]: Սերիալների արտադրութեան եւ ցուցադրութեան այս սկզբունքը ազդում է հեռուստադիտողի վրայ՝ պահպանելով լարուածութիւն, սերիալի ապագան կռահելու ցանկութիւն, ենթադրութիւններ եւն.: Սա հեռուստադիտողի համար հետաքրքրութիւն ձեւաւորելու եւ յաջորդ սերիայի նկատմամբ սպասում յառաջացնելու ինչպէս նաեւ դիտելիութիւն ապահովելու հիմնական մեթոդն է: Այս մեթոդների կիրառումը, սերիալների հանրամատչելի լինելը եւ իրականութեան տարրեր պարունակելը կարող են հոգեբանական ազդեցութիւններ թողնել լսարանի վրայ: Հեռուստադիտողը, ինչպէս ներկայում, այնպէս էլ վաղ շրջանում կարող էր ենթարկուել այդ ազդեցութիւններին՝ յաճախ նոյնիսկ առանց գլխի ընկնելու:

Այդ իսկ պատճառով 20րդ դարի երկրորդ կէսից յետոյ կատարուեցին հետազօտութիւններ օճառային օպերաների կամ սերիալների վերաբերեալ: Իսկ 1930ականներին կատարուած հետազօտութիւնները հիմնակա-

---

4 https://webcitation.org/6Df98L5c7?url=http://www.museum.tv/eotvsection.php?entrycode=soapopera :

5 Луиза Саффхил, *Массовая культура: современные западные исследования* (Լ. Սաֆֆհիլ, Զանգուածային մշակոյթ, ժամանակակից արեւմտեան հետազօտութիւններ), Մոսկուա, 2005:

նում ուսումնասիրում էին սերիալների սպառողական լսարանը: 1950-70ականներին եւս բաւարար ուսումնասիրութիւններ չէին կատարւում: Յետոյ իրավիճակը փոխուեց, եւ հետազօտութիւնների միջոցով սկսեցին նաեւ ներկայացուել սերիալների պարունակած մշակութային եւ ընկերային ուղերձները, որոնք լսարանի համար անհետեւանք լինել չէին կարող:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԹԵՐԱՀԱՍՆԵՐԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՎՐԱՅ

Ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութիւնում հեռուստատեսային եթերի մեծ մասը յատկացւում է հեռուստասերիալներին, իսկ հայ թերահասի համար հեռուստակայանների ցուցադրած ամենասպառուող արտադրանքը հենց հեռուստասերիալն է (75%), դրանց յաջորդում են *սիթքոմ*ները եւ ժամանցային հաղորդումները:

Ըստ հայ թերահասների շրջանում անցկացուած հարցումների՝ ՀՀում թերահասների կողմից ամենաշատ դիտուող ալիքը «Շանթ» հեռուստաալիքն է (35%), որին յաջորդում են «Արմենիա»ն (30%), «Հայաստանի հանրային հեռուստաընկերութիւն»ը (ՀՀՀ) (25%)[6]: Միւս հեռուստաալիքները նախընտրող թերահասների թիւն այդքան էլ մեծ չէ:

Սերիալները մասնակցում են թերահասների եւ երիտասարդների արժէհամակարգի ստեղծմանը եւ շատ մեծ ազդեցութիւն կարող են թողնել ցածր տարիքի լսարանի վրայ:

Այս իրողութիւնը մտահոգիչ է եւ առաջացնում է շատ հարցեր: Այդ հարցերից ամենակարեւորներից են՝ արդեօք ո՛ր ժանրերն են ապահովում աւելի շատ սպառում, ի՛նչ մեթոդներ են կիրառւում լսարանի ուշադրութիւնը գրաւելու համար եւ արդեօ՞ք այդ մեթոդներն ազնիւ են հեռուստադիտողի, յատկապէս թերահասների եւ հայ մշակոյթի, սովորութիւնների ու ժողովրդի կենսակերպի նկատմամբ:

Սերիալների հանրային ամենալընդգրկուն կարծիքներից մէկն այն է, որ լսարան հաւաքելու համար՝ սերիալների արտադրութիւնը սկսել է հիմնուել ոչ թէ հասարակական խնդիրների նուազեցման, անհատի հոգեբանական վարքի վրայ դրականօրէն ազդելու համար կատարուող աշխատանքի վրայ, այլ հասարակութեան ունեցած պահանջարկի վրայ: Հասարակութիւն, որը տեղ-տեղ նաեւ հանդիսանում է խնդիրներ ստեղծող եւ արատաւոր երեւոյթներ ընդունող ու կրող միաւոր:

Գլխաւոր հարցն այն է թէ արդեօք հեռուստատեսութիւնը պէտք է կրթի-դաստիարակի՞ հեռուստադիտողին (որի մի մասը թերահասներ եւ երիտասարդներ են), թէ՞ յարմարուի նրանց պահանջներին, դաստիարակութեանն ու նախընտրութիւններին՝ յանուն սպառուած լինելու:

[6] Մենեմշեան-Սարգսեան-Ստեփանեան, էջ 9:

Այս հետազօտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայկական սերիալները եւ գտնել վերոնշեալ մտահոգութիւնների եւ հարցերի պատասխանները: Կը խօսենք որոշ («Էլէնի օրագիրը»՝ 2017, «Բանակում»՝ 2009, «Որբեր»՝ 2010, «Յատուկ դասարան»՝ 2018, «Հրեշտակների դպրոցը»՝ 2011) հայկական սերիալների մասին, որոնք մրցանիշային քանակի դիտումներ են ունեցել, ինչպէս նաեւ արժանացել են հանրային քննարկումների եւ քննադատութիւնների[7]: Հասարակութեան պահանջների փոփոխութիւնը ի ցոյց դնելու համար կը փորձենք նաեւ համեմատել իրարանման բովանդակութեամբ երկու սերիալներ, որոնք նկարահանուել են գրեթէ 12 տարի ընդմիջումով: Այս ամէնին կ'օգնեն նաեւ անցկացուած հարցումները, որոնց մասնակցել են 100 երիտասարդներ ու պատանիներ տարբեր մարզերից եւ Երեւանից:

ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանեան իրականութեան մէջ ոչ-տեղական արտադրութեան հեռուստասերիալներ սկսել են ցուցադրուել 1990ականներից: Ցուցադրւում էին բրազիլական, արգենտինական, վենեսուելական սերիալներ («Գաւիոտա», «Կասանդրա», «Սանտա Բարբարա», «Ստրկուհի Իզաուրան», «Վայրի հրեշտակ»), որոնց կրկնօրինակումները կատարւում էին հայերէնով, իսկ յետոյ, քանի որ այդ սերիալները մտան մարդկանց կեանցաղ՝ դառնալով ամէնօրեայ քննարկման թեմա, կարիք զգացուեց նաեւ հայկական տեղական սերիալների ստեղծման եւ ցուցադրման:

Առաջին քայլերը սկսուեցին կատարուել 2003ին, երբ կինոռեժիսոր Միքայէլ Դովլաթեանը որոշեց նկարահանել առաջին հայական սերիալը, որը պէտք է բաղկացած լինէր 40 դրուագից: Ըստ Դովլաթեանի՝ սերիալն այնպիսի բեմագիր ունէր, որն անընդհատ յետոն իմանալու ցանկութիւն էր առաջացնում, եւ հետեւաբար կարող էր գրաւուած պահել հեռուստադիտողի ուշադրութիւնը: Դովլաթեանը ի սկզբանէ չի ցանկացել պատմել սերիալի սիւժէն, որպէսզի հետաքրքրութիւն պահպանուի, սակայն որպէսզի պատկերացում ստեղծուի, թէ ինչ գաղափար է իր մէջ կրել սերիալը, կարելի է մէջբերել Դովլաթեանի հետեւեալ խօսքերը. «*Կարող եմ ասել միայն, որ վերջում յաղթում է այն ուժը, որը կարող է յաղթահարել ե՛ւ դաւաճանութիւնն ու սրիկայութիւնը, ե՛ւ ափելութիւնն ու անհաւատարմութիւնը: Այդ ուժը մի անուն ունի՝ սէր*»: Բայց սերիալը միայն սիրոյ մասին լինելու խնդիր չի ունեցել, քանի որ, ըստ Դովլաթեանի՝ այն նաեւ կրել է իր մէջ երեւանեան օրերի արտացոլանքը: Սերիալում նաեւ շօշափուել են երեւան-

[7] Սերիալների ընտրութեան համար հիմք են հանդիսացել հեռուստաընկերութիւնների պաշտօնական YouTube ալիքներում դրանց գրանցած դիտումները, ինչպէս նաեւ այն սերիալները, որոնք արժանացել են հանրային քննադատութիւնների՝ յօդուածների եւ վերլուծութիւնների տեսքով:

եան ոճրայինը, փողոցը, նաեւ՝ երիտասարդութեանը բախուող այլ խնդիրներ: Ռեժիսորի կարծիքով, հայերը որքան շուտ սկսեն սերիալ նկարել, այնքան լաւ կը լինի, քանի որ թէեւ դա գաղափարական կամ քաղաքական ինչ-որ հարցեր չի լուծում, բայց այնտեղ կայ սէր, սէր՝ հայրենիքի հանդէպ, եւ ուսուցողական բաներ էլ կան, բացի այդ՝ կայ նաեւ բիզնէս[8]:

Որպէսզի պատկերացում լինի, թէ ի՛նչ միջոցներ էին անհրաժեշտ նման սերիալ արտադրելու համար, կարելի է ռեժիսորի ներկայացրած գնացուցակը համեմատել ռուսական սերիալների համար ներդրուող գումարի հետ: Ըստ կինոռեժիսորի, հայաստանեան պայմաններում մէկ սերիայի համար նուազագոյնը 2500 դոլարից մինչեւ 3 հազար դոլար է պէտք: Իսկ Մոսկուայում այդ ժամանակ 200 սերիա ունեցող ֆիլմի մէկ սերիայի համար ծախսւում էր 4000 դոլար, որը նուազագոյն գինն էր: Միջին դերասանը նկարահանման մէկ օրուայ համար ստանում է 100-150 դոլար:

Հայկական իրականութեան մէջ այդ չափի գումարներ գտնելն այդքան էլ հեշտ գործ չէր, ինչն էլ հենց դարձաւ այդ սերիալի այդպէս էլ չնկարահանուելու պատճառը:

Այսպիսով, հեռուստասերիալները հայաստանեան իրականութեան մէջ այնքան էլ երկար պատմութիւն չունեն, սակայն վերջին 10-15 տարիներին, Հայաստանեան սերիալների արտադրութիւնը շատ յագեցուած է, որն էլ ապահովում է ...բազմազանութիւն եւ իհարկէ՝ նոր հարցեր ու խնդիրներ:

ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ՝ ԹԵՐԱՀԱՍԻ ԿԵԱՆՔ

Ըստ գերմանացի անուանի կինոռեժիսոր եւ տեսաբան Վեռնէր Հերցոգի՝ լասարանին սերիալի հետ կապում է յուզական լիցքաթափումը, երեւակայութեան բաւարարումը եւ խորհրդի ու տեղեկութեան ծարաւը[9]: Ուստի, պահանջները բաւարարելու համար սերիալներում շատ բազմազան մեթոդներ են մշակում: Նշուած երեք պահանջների բաւարարումը ուղղակիօրէն կապուած է սերիալի բեմագրի, երաժշտական ձեւաւորման, ռեժիսորական լուծումների, ընկերային դերերի ներկայացման եւ այն ամէնի հետ ինչը կատարւում է սերիալի ստեղծման ընթացքում:

Բեմագիրը, սիւժէն եւ ընկերային դերերի ներկայացումը ամենակարեւոր բաղադրիչներն են լսարանի անձի կերտման գործում, **քանի որ դրանք եւ դրանց վարքն է օրինակ ծառայում երիտասարդ ակնդիրի համար**: Դերասանը, մտնելով որոշակի սիւժէի եւ բեմագրի մէջ, ներկայացնում է որոշակի կերպար (ընկերային դեր): Այսինքն՝ ընկերային դերը ներկայացւում է սիւժէի ու բեմագրի միջոցով: Ընկերային դերի ճիշտ կամ

---

[8] Լ. Բարսեղեան, «Հայկականն ընդդէմ բրազիլականի», *Հայկական ժամանակ,* 4 Դեկտեմբեր 2003 (https://www.armtimes.com/hy/article/98684 , մատչում՝ 4 Մայիս 2025):

[9] Մենեմշեան-Սարգսեան-Ստեփանեան, էջ 9:

սխալ ներկայացումը սերիալներում ապահովում է իրական կեանքում այդ ընկերային դերի կրողի հանդէպ առաջացած որոշակի ընկալում: Օրինակ՝ սերիալի մէջ տեսնելով ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւնները, հեռուստադիտող թերահասը կարող է պատկերացում կազմել, թէ ինչպիսին պիտի լինի - կամ պիտի չլինի - իր վերաբերմունքը ուսուցչի նկատմամբ:

ԲԵՄԱԳԻՐԸ, ՆԻՒԹԸ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԴԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ընկերային դերի ներկայացումը

Սերիալների բեմագրային գրոյթները անմիջական արտացոլումներն են ինչպէս ընկերային իրականութեան, այնպէս էլ հետեւաբար այդ իրականութեան մէջ բաշխուած կերպարների յատկանիշերի: Ընկերային դերը հասարակութեան անդամների յարաբերութիւններում ամենակարեւոր բաղկացուցիչներից է, քանի որ այն խօսում է մարդու՝ հասարակութեան անդամների նկատմամբ ունեցած դիրքի (ծնող, զաւակ, ընկեր, ուսուցիչ, տնօրէն, գործընկեր եւն.) եւ այդ դերով պայմանաւորուած՝ վարքային դրսեւորումների եւ փոխադարձ սպասելիքների մասին: Ինչպէս ասում է կինոռեժիսոր Արթուր Բերգէրը՝ «*Ընկերային դեր հասկացութիւնը գալիս է ընկերային հոգեբանութիւնից. այն մարդու առօրէական վարքագիծն է, որը ակնկալւում է մարդկանցից՝ պայմանաւորուած հասարակական խմբերում կամ կազմակերպութիւններում նրանց ունեցած դիրքով*»[10]: Ինչպէս ասում է արուեստի գիտութիւնների պրոֆեսոր Ռոբըրտ Էլընը՝ «*սերիալների բեմագրային գրոյթները անմիջական արտացոլումներն են ինչպէս ընկերային իրականութեան, այնպէս էլ հետեւաբար այդ իրականութեան մէջ բաշխուած կերպարների յատկանիշերի*»[11]: Էլընի այս տեսակէտը լրացնում է Բերգէրի այն միտքը, թէ՝ «*մենք կեանքը տեսնում ենք որպէս պիէս, որտեղ բոլորը դերեր են խաղում*»[12]: Պիէսի փոխարէն այստեղ նոյն յաջողութեամբ կարող ենք ասել նաեւ սերիալ, քանի որ տուեալ տեսանկիւնից նայելիս ե՛ւ պիէսը ե՛ւ սերիալը ընկերային դերերի ներկայացումներն են պարունակում, որոնք էլ իրենց հերթին որպէս օրինակ են հանդիսանում հեռուստադիտողի համար՝ յատկապէս երիտասարդ կամ փոքր տարիքում:

Հայկական սերիալների ամենախոցելի տեղերն ըստ հարցումների մասնակիցների՝ սիւժէն եւ բեմագիրն են: Գրեթէ բոլոր սերիալներում ներ-

---

[10] A. Berger, *Media Research Techniques*, Sage Publications, 1998, էջ 45, https://acrobat.adobe.com/id/urn:aaid:sc:EU:9a3b57c9-f636-41fa-b4e7-41825746c25a , մատչում՝ 04.05.2025:

[11] R. Allen, Speaking of Soap Operas, https://webcitation.org/6Df98L5c7?url=http://www.museum.tv/eotvsection.php?entrycode=soapopera , մատչում՝ 4 Մայիս 2025:

[12] Arthur Asa Berger, *Media Research Techniques*, Sage Publications, էջ 45, 1998, (https://acrobat.adobe.com/id/urn:aaid:sc:EU:9a3b57c9-f636-41fa-b4e7-41825746c25a , մատչում՝ 4 Մայիս 2025):

կայացուած են միանման դրութեամբ եւ ճակատագրերով կերպարներ: Սրա պատճառով ստեղծւում է պատկերացում, որ այդպիսի կերպարները շատ են մեր հասարակութեան մէջ, եւ եթէ միանման, բայց դրական կերպարների շատ հանդիպելը մարդկանց կողմից բնական է ընկալւում, ապա բացասական կերպարների այսքան շատ խաղարկումը հասարակութեան վրայ այնպիսի հետքեր է թողնում, որ մարդիկ սկսում են տարբեր կարծրատիպեր ձեւաւորել իրենց գիտակցութեան մէջ: Փոխւում է նաեւ նրանց վարքագիծը հասարակութեան մէջ: Օրինակ՝ դաւաճան ընկերների եւ ընկերուհիների կերպարները, որոնք կան գրեթէ բոլոր դրամա ժանրի սերիալներում, մարդկանց դարձնում է աւելի փակ եւ կասկածամիտ, **քանի որ ինչպէս արդէն նշուել է, սերիալները պարունակում են մեթոդներ, որոնք ստեղծում են իրականութեան գգացողութիւն, եւ դիտողը, տեսնելով սերիալի բեմագրային զարգացումները, չի բացառում նաեւ, որ իր հետ իրական կեանքում կարող է նման բան պատահել:** Եւ պատահական չէ որ ժողովրդի մէջ ծնուել է «Սերիալի տակ մնալ» (այսինքն՝ սերիալից ***ազդուած*** լինել) պատկերաւոր արտայայտութիւնը, որը յաճախ մարդիկ ասում են իրենց զրուցակցին, երբ վերջինս ինչ-որ անհեթեթ եւ իրականութեան հետ աղերս չունեցող մտքեր, մտավախութիւններ եւ կասկածներ է ունենում[13]:

«Ամէն տարի գարնանը» եւ «Անծանօթը» սերիալներում ներկայացւում է իրավիճակ, որում ընկերը ընկերոջը կամ եղբայրը իր եղբօրը դաւաճանել է, կազմակերպել նրա մահը կամ բանտարկութիւնը եւ դրա շնորհիւ մեծ գումարներ վաստակել: Այսինքն, ներկայացւում են յանուն նիւթական բարեկեցութեան ամենաստոր քայլերին ընդունակ կերպարներ, որոնք մեր հասարակութեան մէջ անհամեմատ նուազ են քան՝ ըստ սերիալների ստեղծած պատկերացումների, եւ որ ամենավնասատուն է, այդ կերպարները սերիալների մէջ հիմականում ներկայացւում են որպէս լաւ եւ բարեկեցիկ կեանքով ապրող մարդիկ, որոնք չեն էլ պատժւում:

Մէկ այլ համընդհանուր խնդիր է հարուստների եւ աւելի շատ հարուստ մարդկանց զաւակների ներկայացումը սերիալներում: «Հրեշտակների դպրոցը», «Նռան հատիկ» (2017) եւ «Հրէշների գայլը» սերիալներում ներկայացուող այն կերպարները, որոնց ծնողները հարուստ են, ունեն շատ վատ վարք, խօսում են տհաճ բառապաշարով եւ ապրում ամենաթողութեամբ, կատարում են յանցանքներ եւ չեն պատժւում, քանի որ փող ունեն. մի՞թէ սա ուղղակիօրէն չի կարող ազդել պատանու կամ երիտասարդի վրայ այն գաղափարով, որ փող շատ ունեցող մարդիկ կարող են անել

[13] Հարցումը ուղղուած է օնլայն ձեւով, Յունուար 2025ին: Մասնակցել են 14-50 եւ 50 եւ աւելի տարիքի շուրջ 100 մարդիկ, Երեւանից եւ մարզերից: Հարցադրման մէջ առաջադրուել է չորս պատասխան՝ 1. երաժշտական ձեւաւորումը, 2. նիւթը, 3. բեմագիրը, 4. դերասանների վարպետութիւնը:

ա՛յն ինչ ցանկանում են՝ թէկուզ, այլ մարդկանց իրաւունքները խախտելու գնով: Այսինքն նախորդ եւ այս օրինակներում երկուստեք գործող երեւոյթը դառնում է փողը:

Այսպիսի օրինակները շատ են հայկական սերիալներում: Շատ են նաեւ ապօրինի, կամ մէկ այլ կնոջ հետ ընտանիք կազմած զաւակների («Նռան հատիկ», «Վերջին ուսուցիչ»՝ 2019), առանց ամուսնութեան յղիացած կանանց («Էլէնի օրագիրը») չարագործ պաշտօնատարների («Նռան հատիկ», «Հարազատ թշնամի»՝ 2014) թմրամոլների («Կախուածութիւն»՝ 2023), ոճրային մշակոյթի կրող եւ սակայն իր հեղինակութիւնը ամենաթողութեան միջոց դարձրած կերպարների («Որոգայթ» 2008) օրինակները: Իսկ բռնութեան տեսարաններն այնքան շատ են եւ սովորական դարձած, որ դրանց շարքը անվերջանալի է թւում: Սրանք այնպիսի օրինակներ են, որոնք ուղղակիօրէն ազդում են անհատի եւ հասարակութեան եւ այդ երկուսի փոխկապակցուածութեան վրայ:

Նման կերպարների ընդգրկումը, որպէս կանոն, արդարացնում են այն գաղափարով, որ կերպարները վերցուած են իրականութիւնից: Սակայն չի կարելի մոռանալ, որ այս կերպարները նաեւ օրինակ են երիտասարդների համար, եւ շատ վտանգաւոր՝ յատկապէս, երբ կերպարները մարմնաւորում են գեղեցկադէմ աղջիկ/տղաք, որոնք լաւ կեանք ունեն, վարում են լաւ մեքենայ, հանգստանում են թանկարժէք հիւրանոցներում, ժամանակ են անցկացնում լաւագոյն սրճարաններում, կարողանում են լիովին վայելել կեանքը եւ նոյնիսկ դերից դուրս՝ իրական կեանքում շատ սիրուած են եւ ունեն մեծ լսարան, այսինքն՝ անուղղակի հետեւորդներ:

ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ԴԻՏԵԼԻՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԵՐՕՐԵԱՅ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ո՞վ իր առողջութիւնը բժշկի փոխարէն կը վստահի կօշկակարին

Հայկական սերիալների դիտելիութիւնը ապահովելու համար արտադրողները դիմում են տարբեր միջոցների, դրանցից ամենայայտնին մեծ լսարան/հետեւորդ ու ժողովրդականութիւն ունեցող մարդկանց ներառումն է նկարահանումներում իբրեւ դերասան: Մեծ լսարան ունեցողների շարքին են դասւում յայտնի *բլոգըր*ները, *տիկտոկըր*ները, *մոդէլ*ները: Դրանով հայկական սերիալներում փոքրանում է կրթութիւն ունեցող դերասանների տեղը, քանի որ նրանց փոխարէն արտադրողները նախընտրում են դերը վստահել, գեղեցիկ մարմնով գրաւիչ *մոդէլ*ների, որոնք կ'ապահովեն այդ սերիալի առաւել դիտելիութիւնը: Սակայն հարցման[14] մասնակիցների 70%ը դէմ է այդ երեւոյթին եւ նրանցից մէկը մի հետաքրքիր արտայայտութեամբ բացատրել է դա. «*Կարո՞ղ էք ձեր հիւանդ ատամը հե-*

[14] Հարցումը ուղղուած է օնլայն ձեւով, Յունուար 2025ին: Մասնակցել են 14-50 եւ 50 եւ աւելի տարիքի շուրջ 100 մարդիկ, Երեւանից եւ մարզերից:

ռացնելու համար գնալ կօշկակարի մօտ... ո՞չ, այդ դէպքում ինչու՞ դիտել կինօ, որտեղ դերը կատարողը դերասան չէ»:

Իրադարձութիւնները՝ որպէս իրականութեան արտացոլման միջոց

Դիտելիութեան ապահովման մէկ այլ ճանապարհ է սերիալում տուեալ ժամանակաշրջանում կատարուած իրադարձութիւնների վառ արտացոլումը: Դա ստեղծում է դիտող-սերիալ մեծ եւ ամուր կապ, որը սակայն արտայայտւում է ամենավտանգաւոր երեւոյթներից մէկով՝ ***ապրումակցում***ով: Իհարկէ, սերիալը չպիտի լինի ժամանակավրէպ. այն պէտք է նաեւ լինի մեր օրերի նկարագիրը, բայց պէտք է նաեւ հաշուի առնել, որ կան իրադարձութիւններ, որոնց հետքը ցաւոտ եւ խորն է հասարակութեան սրտում: Խօսքը հմնականում հայ-ադրբեջանական պատերազմից յետոյ նկարահանուած այն սերիալների մասին է, որտեղ արտացոլւում է յետպատերազմական կեանքը, եւ որքան էլ այն նկարահանուած լինի սփոփելու, գօտեպնդելու նպատակով, միեւնոյն է, կարող է յուզել մեր հասարակութեան մի մեծ զանգուածի, որն անձամբ բախուեց պատերազմին ու դառը կորուստներին: Այդպիսին է, օրինակ, «Ծաղիկներ ձեան տակ» հեռուստասերիալը, որի բեմագիրը գրուել է 44օրեայ պատերազմից յետոյ: Ըստ սերիալի մասին հնչած կարծիքների այն թեմատիկ առումով առնչւում է պատերազմի հետ եւ պատմում է գերութիւնից վերադարձած զինուորի մասին: Զինուորը գերի է ընկել 1994ին՝ արցախեան առաջին պատերազմի ժամանակ, եւ հիմա վերադառնալով յայտնւում է իր համար անծանօթ իրականութիւնում: Նա պէտք է սկսի ապրել այն մարդկանց հետ, որոնք տարիներ ապրել են առանց նրա: Սերիալն ունի սիւժէտային դրուագներ, որոնք վերցուած են իրականութիւնից: Իհարկէ, գուցէ արտադրողը պարզապէս փորձել է օգնել մարդկանց, որպէսզի նրանք յաղթահարեն իրենց հանդիպած դժուարութիւնները եւ նպատակ չի ունեցել "ճիշտ" ժամանակին ցուցադրել իր սերիալը՝ օգտուելով ժողովրդի ու հասարակութեան մէջ տիրող տրամադրութիւնների ալիքից, սակայն փաստ է այն, որ սերիալը կը ցնցի այն մարդկանց ներաշխարհը, ովքեր ապրել են այդ ամէնը եւ ովքեր մինչ օրս սպասում են պատերազմում անհետ կորած իրենց հարազատներին:

Թերահասներին վերաբերող սերիալներից մէկը՝ «Որբեր» սերիալը ժամանակին եղել է ամենաքննադատուած սերիալներից մէկը[15]: Այն պատմում է որբ երեխաների խնդիրների մասին: Մանկատան երեխան պէտք է զգայ, որ ինքը մանկատնից յետոյ կարող է կազմել ընտանիք, ունենալ երեխաներ եւ ապրել բարեկեցիկ կեանքով, սակայն, ըստ ժամա-

[15] Տե՛ս՝ https://www.panorama.am/am/news/2009/02/09/vorber/1270015 :

նակին արուած հարցումների[16]՝ մանկատան շատ երեխաներ աւելի էին յուսահատւում եւ նրանց թւում էր, թէ մանկատնից դուրս գալուց յետոյ եւս իրենց կեանքը շարունակելու է ընթանալ բարդ ու դաժան ճանապարհով: Այսինքն սերիալում ներկայացւում են մարդկային ճակատագրեր, որոնք համընկնում են լսարանի անդամների կեանքին: Այս երեւոյթը կառավարել գրեթէ անհնար է, քանի որ ի՛նչ էլ նկարուի, կը լինեն մարդիկ, որոնք ապրումակցելու են, սակայն կարելի է աւելի նուրբ եւ աւելի մեղմ մատուցել այդ կերպարներին, եւ ոչ թէ, օրինակ մի կերպարի հետ այնքան դժբախտութիւններ կապել, որ ապրումակցողը յայտնուի վատ հոգեվիճակում: Խնդիրն այն չէ, որ սերիալում կարող են ներառուել կերպարներ, որոնք կը ստիպեն մարդկանց ապրումակցել: Այլ՝ թէ արդեօ՞ք ճիշտ են ներկայացուած այդ կերպարները, արդեօ՞ք վտանգաւոր չեն դիտողի համար:

Մէկ վտանգաւոր ապրումակցման օրինակ է, երբ դիտողը սերիալում տեսնում է ճակատագրով, ընկերային խնդիրներով իրեն նման մարդ, որը իվերջոյ ինքնասպանութեան փորձ կամ ինքնասպանութիւն է գործում:

Այս երեւոյթն աւելի յայտնի է որպէս Վերթէրի Էֆեկտ[17]: Դա այն է, երբ լրատուական նիւթերում, սերիալներում կամ գրքերում կատարուած ինքնավնասման մասին այնքան մանրամասն են ներկայացնում, որ ընթերցողը, զուգահեռներ տանելով եւ այդ կերպարի հետ նմանութիւններ գտնելով ինք եւս կարող է դիմել այդ քայլին, մտածելով, որ դա լուծում է:

«Յատուկ դասարան». յատուկ կառոյցների ներքաշումը սերիալների արտադրութիւն (դպրոց, բանակ)

Իհարկէ, թերահասների համար աւելի գրաւիչ են դպրոցի, դասարանի, համադասարանցիների շուրջ զարգացող սիւժէով սերիալները, որտեղ դպրոցականները կարող են իրենք իրենց գտնել, սակայն այսպիսի դէպքերում պատասխանատուութիւնն աւելի մեծ է եւ պէտք է աւելի շատ ուշադրութիւն դարձնել կերպարաստեղծմանը: Այսիպիսի սերիալներում յաճախ ենք հանդիպում անպարկեշտ վարք ցուցաբերող, սակայն ընկերների ու դասընկերների կողմից յարգուած կերպարների: **Ընկերային հարթակներում** ամէնից շատ քննարկուող հեռուստասերիալը «Յատուկ դասարան»ն է, որի սիւժէն արդէն քննարկուող եւ քննադատուող է: Սովորական մի դպրոցում բացուել է «Յատուկ դասարան»՝ "խնդրայարոյց" թերահասների համար, որպէսզի նրանց երկրորդ հնարաւորութիւն տրուի: Այնտեղ իւրաքանչիւրն ունի իր անձնական խնդիրը, դրամատիկ գիծը, ընկերային խնդիրները, եւ այս ամէնի հետ մէկտեղ նրանք բախւում են նաեւ

[16] Հարցմանը մասնակցել են մանկատներում ապրող կամ ապրած, 20+ տարիքի 20 հոգի: Հարցումը կատարուել է դէմ յանդիման, Յունուար 2025ին:

[17] Տե՛ս՝ https://www. alliancevita.org/en/2022/09/the-werther-effect-or-copycat-suicides/ :

դպրոցի ներսում խտրականութեան, ենթարկւում ճնշումների: «Յատուկ դասարան»ում գլխաւոր կերպարներից մէկը անուսայլակի օգնութեամբ է տեղաշարժւում, որի պատճառը դասարանցու կողմից ֆիզիկական բռնութեան ենթարկուելն է: Այս սերիալի քննադատելի կողմն այն է, որ հենց գլխաւոր եւ դրական համարուող կերպարներն են յաճախ դատապարտելի արարքների հեղինակները, ոչ-օրինակելի բառապաշար օգտագործողները: Այսինքն՝ սիրելի կերպարները, որոնք հիմնականում սերիալներում պէտք է լինեն օրինակելի, այստեղ - մեղմ ասած - այդքան էլ օրինակելի չեն, թէեւ շատ ընկերասէր են եւ արդարամիտ:

Դպրոցականների մասին սերիալը՝ «Հրեշտակների դպրոցը», իր ժամանակին եւս մեծ քննարկումների պատճառ էր հանդիսացել[18]: Նախ եւ առաջ այն մեծաքանակ լսարան ունեցաւ, որտեղ շատ մեծ թիւ էին կազմում հենց դպրոցականները, սակայն դպրոցը այստեղ եւս սիւժէի եւ կերպարաստեղծման զոհ դարձաւ: Ներկայացւում էր սովորական դպրոց, որտեղ կերպարները բազմազան էին: Տնօրէնը՝ խստապահանջ, բայց նաեւ վատ բնաւորութեան տէր կին էր, որին օգնում էր իր քծնող փոխտնօրէնը, իսկ աշակերտները չէին յարգում տնօրէնին, յաճախ էլ՝ ուսուցիչներին: Աշակերտների թւում էին մեծահարուստի որդին, որը որպէս կանոն աչքի էր ընկնում իր տգեղ պահուածքով, դասընկերուհին, ով սիրում էր ամուսնացած տղամարդու, գլխաւոր հերոսը, ով մարզիկ էր եւ յաճախ էր ընկնում վիճաբանութիւնների ու ծեծկռտուքների մէջ:

Թւում է, թէ վերը նշուած խնդիրները պիտի լինէին ամենաքննադատուածը: Եւ ահա, սակայն, եթեր է տրւում մի հեռուստասերիալ, որը ըստ արտադրողի՝ կոչուած է թմրամոլութեան դէմ պայքարին: Այս սերիալի հերոսներից իւրաքանչիւրն ունի կախուածութիւն, վախեր, նպատակներ, երազանքներ ու պատմութիւն, որի շուրջ էլ կառուցւում է հեռուստանախագիծը, որը կոչւում է «Կախուածութիւն»: Այստեղ գլխաւոր կերպարները երիտասարդներ են, ովքեր տարբեր ճանապարհներով յայտնւում են այնպիսի վիճակում, որտեղից դուրս գալ քչերին է յաջողւում: Առաջին հայեացքից թւում է թէ սա դաստիարակչական է, եւ ցոյց է տալիս թմրանիւթի սարսափելի ազդեցութիւնը մարդու կեանքում, սակայն կայ մի նրբութիւն. երեխաների եւ պատանիների կողմից սիրուած դերասանները եւ դերասանուհիները, որոնց նմանուել ցանկացողները քիչ չեն հասարակութեան մէջ, այժմ տանում են թմրամոլի կամ դրա վաճառքը իրականացնողի դերեր: Այդ մարդիկ հասարակութեան շատ անդամների համար կրկնօրինակման մոդէլներ են: Վերջիններս թերահաս անհատի՝ ընկերային դերերի եւ այդ դերը ստանձնողի վարքի ձեւերի, կենսակերպի կամ յատկանիշերի մասին պատկերացումներ կազմելու միջոց են հանդիսանում:

---

[18] Սիրանուշ Եղիազարեան «Հայկական սերիալների “փառքն” ու թշուառութիւնը», “Մեդիամաքս”, 16.02.2012 https://mediamax.am/am/news/society/4118/ :

Սա թերեւս ամենամեծ խնդիրն է սերիալ նկարահանողների համար, որովհետեւ հարց է առաջանում, ինչպէ՞ս խուսափել քարոզի հակառակ ազդեցութիւնից, ինչպէ՞ս անել, որ դիտողը վերցնի բացարձակապէս լաւը: Չէ՞ որ մի բանը դատապարտելիս, երբ խօսում ես դրա մասին կամ ցոյց ես տալիս՝ եւս պրոպագանդա է: Հարցումներին մասնակցածների 46%ը կարծում է, որ այս սերիալը բացասական ազդեցութիւն ունի եւ շատ աւելի ճիշտ կը լինէր, եթէ սերիալը ուղղուած չլինէր յատուկ թեմայի, այսինքն արծարծէր երիտասարդութեան խնդիրները, որոնցից մէկն էլ լինէր թմրանիւթերի մեծ քանակով շրջանառութիւնը: Հարցման մասնակիցների եւս խոշոր մաս (15%) ո՛չ դրական է համարում սերիալը, ո՛չ էլ բացասական, իսկ 39%ը կարծում է, որ սերիալը կ'օգնի հայ երիտասարդութեան եւ թերահասութեան մէջ արատաւոր երեւոյթների նուազեցմանը[19]:

Էլէնի օրագիրը

Թերեւս դպրոցներում նկարահանուող սերիալներից ամենաարդարացուածը հասարակութեան մէջ, նաեւ հարցման մասնակիցների շրջանակում «Էլէնի օրագիր»ն է, որը ըստ հարցման մասնակիցների 65%ի՝ դրական ազդեցութիւն է թողնում երիտասարդութեան վրայ, քանի որ սիւժէի, իրադարձութիւնների, կերպարների միջոցով քարոզւում է ընկերասիրութիւն, բարձրացւում սիրոյ դերը եւ կարեւորութիւնը, լաւ սովորելու համար ծաղրուող աղջիկը յետագայում դառնում է յաջողակ եւ արժանանում սերիալի ամենալաւ, պարկեշտ կերպարներից մէկի սիրուն: Պէտք է ասել թէեւ, որ այստեղ էլ կան հայկական սերիալներին բնորոշ կերպարներ, որոնք այնքան շատ չեն, որ ազդեն անհատի եւ անհատ-հասարակութիւն կապի վրայ:

Հայկական բանակ

Սերիալները մուտք գործեցին նաեւ պետական միւս լուրջ կառոյց՝ Բանակ: Նկարահանուեց բոլոր ժամանակների ամենասիրուած սերիալներից մէկը՝ «Բանակում»ը: Այն ուշադրութեան արժանի է ոչ միայն նրա համար, որ ամէնից շատ դիտելիութիւնը ունի թերահասների շրջանում եւ բանակի մասին է, այլ նաեւ այն պատճառով, որ տղաները բանակ են զօրակոչւում հենց թերահասութեան աւարտին, 18 տարեկանում[20]:

Սերիալը ներկայացնում է զինուորական կեանքը՝ ընդգրկելով Հայաստանի բանակի առօրեան, մարտական պատրաստութիւնը եւ զինուորների առօրեայ խնդիրները: Այն չափազանց սիրուած է Հայաստանում եւ Սփիւռքում, եւ այն դիտում են տարբեր տարիքային խ.մբերի մարդիկ: Սերիալի հիմնական պատմութիւնը հիմնուած է նորակոչիկների կեանքի,

[19] Տե՛ս՝ ծնթ. 14:

[20] Մենեմշեան-Սարգսեան-Ստեփանեան, էջ 13:

նրանց յարմարուելու դժուարութիւնների, ընկերութիւն ձեռք բերելու, ինչպէս նաեւ նրանց ծառայութեան ընթացքում առաջացած մարտահրաւէրների վրայ: Բացի այդ, սերիալը յաճախ անդրադառնում է զինուորական միջավայրում առկայ կատակներին, հումորին եւ նուրբ փոխյարաբերութիւններին, ինչը այն դարձնում է ոչ միայն դինամիկ, այլեւ զուարճալի: Իսկ մեր երիտասարդութեանը շատ հարկաւոր է, որ բանակը ներկայացուի ոչ միայն որպէս փորձութիւնների եւ վտանգների տեղ, այլեւ ուրախութեամբ, ընկերասիրութեամբ, հումորներով եւ կատակներով լի մի միջավայր, եւ այս ամէնի մասին փաստում է մեր անցկացրած հարցումը, ըստ որի՝ հարցուածների 88%ը դրական է համարում «Բանակում» սերիալի ազդեցութիւնը երիտասարդների վրայ: Արդիւնքը երեւում է նաեւ զինուորական ծառայութիւն անցած եւ անցնել պատրաստուող տղաների շրջանում կատարուած հարցումներին մասնակցող ակնդիրների կարծիքներով, որոնցից ամենաուշագրաւը սա էր. «*Բանակում կեանքն այնպիսին չէ, ինչպէս մեր սիրելի սերիալում, եւ շատ հազուադէպ են լինում համընկնումներ, սակայն «Բանակում» սերիալը փոխում է բանակի մասին պատկերացումները եւ հաղորդում է ծառայութեանը դրական տրամադրութիւն, լաւատեսութիւն. իհարկէ, տարբեր էպիզոդներում նաեւ դառնում է ուսուցման եւ դաստիարակչական հիանալի միջոց*»[21]:

Սերիալում ընդգրկուած են յայտնի եւ ոչ-յայտնի դերասաններ, որոնք իրենց կերպարներով արտայայտում են բանակային կեանքին բնորոշ տարբեր տեսակէտերը: Սերիալը ունեցել է եւ ունի բազմաթիւ եթերաշրջաններ եւ մեծ թուով դիտողներ, ինչը վկայում է նրա յաջողութեան եւ հանրաճանաչութեան մասին: Հարցման մասնակիցների 60%ը նաեւ սիրով դիտում են սերիալը մեր օրերում՝ կրկնութիւնների ժամանակ:

«Բանակում» սերիալը հիանալի օրինակ է այն բանի, թէ ինչպէս համարձակութիւն ունենալ սերիալ նկարահանել պետական ամենակարեւոր կառոյցի մասին եւ յաջողել, սիրուել ու բարձր գնահատուել: Ամենադրական կողմերից մէկն այն է, որ այս սերիալում եւս կան վատ կերպարներ, բայց այնքան շատ չեն, որ պատկերացում ստեղծուի, թէ միջավայրն է այդպիսին, եւ աւելին՝ այդ կերպարները հենց հանդիսանում են նաեւ ուսուցողական դրուագների հիմնական մասնակիցները: Ամենավառ օրինակն էլ հենց այն է, թէ ինչպէս վարուել վատ սպաներին հանդիպելու դէպքում, ինչպէս վերաբերուել խելագարի նման իրենց պահող ծառայակիցներին, ինչպէս վերաբերուել ուրիշի իրաւունքները խախտելով իր ծառայութիւնը յարմարաւէտ դարձնողներին, ինչպէս ճիշտ պատժել զինուորին, որ չնսեմացուի նրա անձը... Նման խնդիրների առաջ բանակում, ցաւօք սրտի, կարող է կանգնել իւրաքանչիւր մարդ, եւ հենց սա է պատճառը,

[21] Տե՛ս՝ ծնթ. 14:

որ թէեւ «Բանակում»ը եւս արժանացել է քննադատությունների[22], սակայն այսքան սիրուած է եւ գնահատուած, եւ որ ամենակարեւորն է՝ չի կորցրել իր այժմէականութիւնը նաեւ մեր օրերում եւ ի տարբերութիւն դպրոցի կամ համալսարանի մասին նկարահանուած սերիալների, բանակի մասին այս սերիալից յետոյ չեն էլ փորձում նկարահանել նմանատիպ մի սերիալ, գուցէ այն մտավախութեամբ որ աւելի լաւը չլինի...:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրելով հայկական սերիալների արտադրութիւնը եւ լսարան-սերիալ կապը, այստեղ բարձրաձայնեցինք միքանի խնդիրներ: Դրանց առաւել աչալուջ, համապատասխան, ընկերային արժեչափերի համապատասխան հայեցակարգային չափորոշիչներով լուծումը կ'օգնի աւելի լաւ սերիալներ արտադրել եւ լսարանի ապահովումը կատարել թերահաս, երիտասարդ եւ տարեց հեռուստադիտողի հանդէպ արդար եղանակներով:

Խնդիրներից առաջինն այն էր, որ յաճախ ենք բախւում մարդու դժբախտութեան 'ճոխացմանը', բացասական եւ ստոր կերպարների քանակի պատճառով որոշակի ընկերային տիրոյթի մասին վատ կարծիք ստեղծելուն: Միւս խնդիրն այն էր, որ այդքան էլ օրինակելի չեն յաճախ այն հերոսները, որոնք ունեն նիւթական ապահովուածութեան այնպիսի մակարդակ, որը ձգտելի է դիտողներից շատերի համար: Մեծ խնդիր է նաեւ, որ սերիալները որքան էլ տարբեր են, միեւնոյն է՝ նման են իրենց ստեղծած կարծրատիպերը... շատ սերիալներում աղքատը կա՛մ խեղճ է կա՛մ ստոր, հարուստը կա՛մ ագահ է կա՛մ անարդարօրէն հարստացած, հարուստի որդին հիմնականում նիւթապաշտ է եւ ցածր արժէհամակարգով ու ամենաթողութիւնը վայելող, լաւ սովորողը՝ ծաղրուած, միայնակ...:

Լաւ կը լինի նաեւ, որ սերիալ արտադրողներն աշխատեն դերասանական կազմում ընգրկել դերասանների եւ ոչ թէ յայտնի մարդկանց:

Եւ վերջում առաջանում է մէկ հարց. ի՞նչ կը լինէր, եթէ սերիալի բացասական եւ դատապարտման արժանի կերպարները լինէին նիւթապէս անապահով, չվարէին լաւ մեքենայ, չյարգուէին շրջապատում եւ հակառակը՝ պարկեշտ կերպարներն ունենային վերը նշուած յատկանիշերը ու նիւթական առաւելութիւնը, արդեօ՞ք դա մեր հասարակութեան համար չէր լինի դրականօրէն յեղափոխական:

Արդիւնքում հասկանում ենք, որ սերիալներն ունեն ոչ միայն ժամանցային, այլեւ մշակութային ու ընկերաբանական ազդեցութիւն, եւ կարող են ձեւաւորել հասարակական արժէքներ, կարծրատիպեր եւ վերաբերմունքներ, իսկ սերիալում կառուցուած կերպարները նպաստում են հասարակութեան վարքային նորմերի պահպանմանն ու վերարտադրութեանը,

[22] Եղիազարեան:

միաժամանակ մասնակցելով հեռուստադիտողի ինքնութեան ձեւաւորմանը:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Պէտք է ասել, որ Հայաստանում կայ ՀՀ օրէնքով սահմանուած մարմին՝ Հեռուստատեսութեան եւ ռադիոյի յանձնաժողովը, որը կարգաւորում է եթերը, ամրագրում եթերային հեռարձակողների ազատ գործելու, քաղաքացու հաւաստի եւ ամբողջական տեղեկատուութիւն ստանալու իրաւունքները, օրէնսդրօրէն սահմանափակում է սեռային բնոյթի, սարսափ եւ ակնյայտ բռնութիւն պարունակող տեսա- եւ ձայնային նիւթերի, անչափահասների առողջութեան, մտաւոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակութեան վրայ հնարաւոր բացասական ազդեցութիւն ունեցող տեսալսողական բովանդակութիւնը (օրինակ՝ եթերում արգելւում է բռնութեան, սպանութեան կամ ծխելու տեսարաններ ցուցադրելը, խաղամոլութեան, թմրամոլութեան քարոզը), սահմանում է արտօնագրման կարգերը, պաշտպանում է հեղինակային իրաւունքը եւն.: Սակայն այդ օրէնքները վերաբերում են ընդհանուր եթերային քաղաքականութեանը, իսկ մասնաւորապէս սերիալների սիւժէները եւ դրանց պարունակած ուղերձները կարգաւորող մարմիններ՝ չկան:

Սերիալների ոլորտը կարգաւորելու հիանալի մեթոդ կը լինէր գեղարուեստական մարմնի/խորհրդի ստեղծումը, որը բարձր չափորոշիչներ կը սահմանէր սերիալների եւ հեռուստաեթերային արտադրանքների ստեղծման համար: Դա մեծապէս կը նպաստէր բարոյագիտական, դաստիարակչական առումով որակեալ, չկարծրատիպացուած արտադրանք ստանալուն եւ հասարակութեանը աւելի բարձրարժէքային ուղերձներ յղելուն:

THE IMPACT OF ARMENIAN SOAP OPERAS ON THE YOUNG (SUMMARY)

MUSHEGH TONOYAN
mushotonoyan0440@gmail.com

The author argues that TV serials do not constitute merely a means of entertainment but rather are a strong tool for the formation of cultural indebtedness and the building of social norms. He bases his arguments on a survey of 100 young respondents from Yerevan and the regions, between the ages of 14 and 22.

The paper highlights a number of Armenian serials of the last two decades and analyses their impact on the young TV watchers. It focuses on the scenario and its structure, the social status of the heroes, the responsibility of the media and how all this is perceived by the young TV watchers.

The author notes that the serials are having a solid impact on the formation of the value system of the young watchers, their world perception and eventually their attitude and behavior in life. The author examines the role played by gender stereotypes and their enduring impact.

Interestingly, the author notes that the serials generate a set of public debates and discussions with opposite views, thus establishing a podium for the formation of opinions and views. As a positive example the author notes that the serial *Banakum* (In the Army), which features diverse aspects of the daily life of conscripts in the army, has been the favorite serial among the respondents.

The author concludes that, notwithstanding the existing laws which precondition an ethical frame for the content of the serials, these laws need modifications and a framework which better serves the formation of civic citizenship among the young generation.

ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ԵՐԿՓԵՂԿՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Անդրադարձ Նանէի - Նելլի Նազարեանի – չափածոյին)

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Բանաստեղծութիւնը գրականութեան ամենանուրբ ճիւղն է, բանաստեղծները՝ ամենազգացմունքայիններն ու տպաւորուողները: Բանաստեղծութիւնն է յատկապէս, որ արտայայտում է գրողի հոգու յոյզը, զգացողութիւնների ամենաանձնական շերտերը: Իւրաքանչիւր բանաստեղծ իր գրով երեւան է հանում ոչ միայն սեփական կեանքի, այլեւ իր ժամանակի պատկերը: Եթէ նա ստեղծագործում է խաղաղ, յարաբերականօրէն անցնցում ժամանակներում, ապա բանաստեղծական քնարը նիւթ է քաղում բնութեան, հայրենիքի, սիրոյ ակունքներից, իսկ եթէ կեանքը պարտադրում է բիրտ պարագաներ, բանաստեղծի քնարը դառնում է այդ պարագաների ցաւոտ շեշտադրումների, տառապանքի արտայայտիչը:

Հայոց հողը պատուհասած 2020ի 44օրեայ պատերազմը երկփեղկեց հայ ժամանակակից բանաստեղծութիւնը, ինչպէս եւ արձակը: Կարդում ես Նանէի, Խաչիկ Մանուկեանի, Գոհար Գալստեանի, Գեղեցիկ Մարգարեանի, Հերմինէ Աւագեանի, Արմէն Աւոյի, Բորիկ Բաղդասարեանի եւ ժամանակակից այլ բանաստեղծների ու արձակագիրների՝ միքանի տարի

առաջ գրուած ստեղծագործութիւնն ու պատերազմի, յետպատերազմեան շրջանինը եւ տեսնում ասուածի խօսուն վկայութիւնը:

Որոշակիացնելու համար մեր դիտարկումը, այստեղ քննութեան ենք առել գրող, հրապարակախօս Նանէի գեղարուեստական չափածոյ ստեղծագործութիւնները: Նանէն նախեւառաջ առանձնայատուկ է նրանով, որ ստեղծագործում է գրական բոլոր սեռերում: Նա, լինելով հարուստ ներաշխարհի տէր գրող, իր երկերում ի յայտ է բերում նաեւ քաղաքացու, բժշկի, գեղանկարչի որակներ: Նրա բանաստեղծութիւնը եւ արձակը հրապարակախօսական դիպուկ շեշտադրումներով անդրադառնում են հայրենիքի պատմական ճակատագրին եւ առօրէական հոգսերին, որոշ գրքեր ուղղակի բժշկագիտական արժէքաւոր նիւթ են մատուցում: Եւ որ ամենահետաքրքրականն է՝ Նանէն ինքն է ձեւաւորում իր գրքերը սեփական գեղանկարչական ստեղծագործութիւններով:

Նանէն ծնուել է 1958 Սեպտեմբերի 7ին Արտաշատում: Սովորել է Արտաշատի Յովհաննէս Թումանեանի անուան դպրոցում: Աւարտել է Երեւանի պետական բժշկական համալսարանի մանկաբուժության ֆակուլտէտը: Միքանի տարի աշխատել է որպէս մանկաբուժ, ապա վերապատրաստուել եւ շարունակել է աշխատել որպէս մանկական նեարդաբան: Եղել է *Մշակ*[1] թերթի խմբագիրը, միքանի տարի խմբագրել եւ հրատարակել է *Լապտերիկ*[2] մանկական հանդէսը: Գեղանկարներով մասնակցել է տարբեր նկարչական ցուցահանդէսների: 1989ից ապրում է Երեւանում: Նրա ստեղծագործութիւններն ընդգրկուած են տարբեր ժողովածուներում եւ ծաղկաքաղներում, գեղարուեստական գործերով եւ հրապարակագրութեամբ հանդէս է եկել հայկական եւ օտարալեզու հանդէսներում, մանկական ամսագրերում, մամուլում: Ստեղծագործութիւնները թարգմանուել են անգլերէն, լեհերէն, գերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն, պարսկերէն:

Ցարդ, Նանէն հրատարակել է 14 գիրք[3]:

---

[1] *Մշակ* թերթ, գործել է 2008ից 2009, ունեցել է մշակութային ուղղուածութիւն:

[2] *Լապտերիկ* ամսագիր, 2011-2015 թթ., մանկական պարբերական:

[3] 1) *Ես՝ դժուար ցեղի դժուար զաւակը (քնարերգութիւն)*, «Ապագայ» ՍՊԸի տպարան, Երեւան, 1998: 2) *Անզօր մոլեգնութիւն (քնարերգութիւն)*, հեղինակային հրատ., Երեւան, 1999: 3) *Ինքնադիտում (քնարերգութիւն)*, հեղինակային հրատ., Երեւան, 2000: 4) *Լուսնկան ի վեր… առանց բառերի (քնարերգութիւն)*, «Զանգակ-37» հրատ., Երեւան, 2002: 5) *Պոէմ մարդկային կամ ադամամութ*, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2004: 6) *Ամուրներից հալածեալ (քնարերգութիւն)*, ՀԳՄ հրատ., Երեւան, 2004: 7) *Դադարի պահ* (քնարերգութիւն), ՀԳՄ հրատ., Երեւան, 2012: 8) *Տաճար առողջութեան (աւանդական բժշկութիւն)*, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երեւան, 2012: 9) *Աւա՞րտ, թէ՞ շարունակութիւն (խոհագրութիւն)*, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երեւան, 2013: 10) *Ջրհոսի դարաշրջանի դաւադրութիւնը (էսսէներ եւ հրապարակագրութիւններ)*, ՀԳՄ հրատ., Երեւան,

Առերեւոյթ փխրուն, բանաստեղծութեան չափ աննիւթական թուացող կերպարի տակ Նանէն ուժեղ, կամային, համարձակօրէն հեռատես անհատականութիւն է, որը շատ արագ է նկատում եւ ահազանգում իր ազգին, հայրենիքին, աշխարհին, մարդկութեանն սպառնացող վտանգի մասին: Նրա վերջին տասնամեակների հրապարակախօսութիւնն այնպիսի շեշտադրումներ է երեւան հանում, որ դաւադրապաշտական ուսմունքի հեղինակներին անգամ կարող է զարմացնել, թէ որքա՜ն իմաստուն ու զգօն է մանկամարդ, երազող, բանաստեղծական էութեամբ այս հայուհին: Ահա թէ ինչ է գրում Նանէն *Ջրհոսի դարաշրջանի դաւադրութիւնը* հրապարակախօսական յօդուածների ժողովածուի «Նոր դարի պատուիրանները» հրապարակագրութիւնում.

«Բարուց ու չարից անդին» նիցշէական գաղափարախօսութիւնն ասես մի մեծ «բեռ» վերցրեց մարդկութեան ուսերից՝ նրան ազատելով բարի լինելու պատասխանատուութիւնից: Այն շատերի սրտով էր, որովհետեւ մեծամասնութիւնը պարտադրանքից ելնելով միայն չի խախտում Աստծոյ եւ մարդկայինի պատուիրանները, եթէ իհարկէ՝ չի խախտում:

...Այդ է պատճառը, որ աշխարհի ու մարդկութեան համար ամենակարեւոր, բախտորոշ պահերին անհրաժեշտ տեղում չարի սպասաւորներն են ճարպիկ ձեռքերով իրենց կամեցած կողմը թեքում իրադարձութիւնների ղեկը: Եւ ոչ միայն անհրաժեշտ տեղում. աւելի ճիշտ կը լինի ասել՝ ամէնուր...»[4]:

Այսքան խորագէտ մարդու համար չափազանց դժուար պիտի լինէր բանաստեղծելը, որովհետեւ իր ու մեր ապրած ժամանակը հեռու է եւ օրաւուր աւելի է հեռանում բանաստեղծութիւնից: Բայց Նանէն, ինչպէս երեւում է, կարողանում է իր անձնական տարածութիւնը սահմանազատել վայրի, դիւային համընդհանրութիւնից ու այդ տարածութեան մէջ մնալ բանաստեղծութեան հետ մէնակ:

Հասկանալի է, որ տրամադրութիւնները թելադրւում են կեանքից, եւ դրանք միշտ չէ, որ քնարական են, ներանձնական: Բայց ինչի մասին էլ որ գրում է Նանէն, մնում է ինքն իրեն, իր ներշնչանքին հաւատարիմ:

Մենք այս յօդուածով կ'անդրադառնանք Նանէի չափածոյ երկերին: Առաջին հատուածում քննութեան կ'առնենք նրա՝ մինչեւ 2020ի պատերազմը գրած եւ հրատարակած բանաստեղծական գրքերը, երկրորդում՝

2015: 11) *Վերջին երանին (պատմուածքներ, էսսէներ, հրապարակագրութիւն)*, «Էդիտ Պրինտ» հրատ., Երեւան, 2019: 12) *Լաւագոյն փղերքը մենք ենք (յուշագրութիւն)*, «Էդիտ Պրինտ» հրատ., Երեւան, 2023: 13) *Անցում կեանքով (քնարերգութիւն)*, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երեւան, 2023: 14) Թեւթեւիկը (հեքիաթներ), «Վան Արեան» հրատ., Երեւան, 2024:

[4] Նանէ, *Ջրհոսի դարաշրջանի դաւադրութիւնը*, էջ 3:

պատերազմից յետոյ լոյս տեսած *Անցում կեանքով* բանաստեղծութիւնների ժողովածուն, որը թէեւ պարունակում է մինչեւ 44օրեայ պատերազմը գրուած գործեր եւս, բայց հիմնականում այստեղ պատերազմի օրերին եւ դրանից յետոյ գրուած չափածոներ են:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Նանէն ստեղծագործական կեանքի առաջին տարիներին ընթերցողին ներկայացել է իբրեւ բանաստեղծուհի: Առաջին ժողովածուն՝ *Ես - դժուար ցեղի դժուար զաւակս*, լոյս է տեսել 1998ին: Այն բացւում է գրող, հրապարակախօս Հրաչեայ Մաթեւոսեանի խօսքով, որը յուշում է ընթերցողին այս գրքի եւ նրա հեղինակի իւրօրինակ ներկայութեան փաստը հայ գրականութեան մէջ. «*…Այս գիրքը կոչ է մարդ մնալու, հողը պաշտելու, փարուելու հայրենիքի զինուորին*»[5]: Գրքում ընդգրկուած են սիրային, խոհական, հայրենասիրական բանաստեղծութիւններ, որոնցից շատերը իրենց ծաւալով եւ առանձնայատկութիւններով աւելի շատ պոէմ են յիշեցնում: Ասես այս ժողովածուն նախապատրաստական քայլ է՝ *Պոէմ մարդկային կամ ադամամութ* ստուարածաւալ պոէմը գրելուց առաջ:

Նանէն հենց առաջին բանաստեղծութեամբ երկխօսութիւն է սկսում ընթերցողի հետ.

Խոհերս կրակ,
մի հրդեհ անտես.
Եւ դու, որ իմ այս
էջերն ես թերթում –
Մատներդ չայրե՞ս… (էջ 5)

Նանէի անձնական ապրումները, բնութեան երեւոյթները, ազգային խնդիրները ասես միահիւսուած լինեն մէկ առանցքի մէջ այս ժողովածուում: Երբ կարդում ես նրա տողերը, միանգամից ընկալումներդ դառնում են բազմաշերտ, տրամադրութիւններդ փոխանցւում են մի դաշտից միւսը.

Արեւ չկայ.
Իսկ դու այնպէս զարմանում ես,
որ մրսում եմ… (էջ 46)

«Հայաստանիս» ընդարձակ բանաստեղծութիւնը ձօն է հայրենիքին: Հայաստանի եւ բանաստեղծի միածոյլ էութիւնն է տրուած այստեղ: Հայրենիքի ունեցած մաքառումները, դժուարութիւնները ցաւեցնում են բանաստեղծի հոգին, բայց սէրն ու հաւատը հայրենիքի ապագայի հանդէպ անկոտրում է.

Դու յարատեւ ես ու անմահ ես դու՝

[5] Նանէ, *Ես – դժուար ցեղի դժուար զաւակս*, էջ 1: Այսուհետեւ նոյն գրքից կատարուած մէջբերումների էջաթուերը կը դնենք փակագծերի մէջ:

քո լեռան նման
ու աստուածների… (էջ 67)

Մէկ տարի անց Նանէն տպագրել է բանաստեղծութիւնների երկրորդ՝ *Անզօր մոլեգնութիւն* ժողովածուն, որում տեսնում ենք առաջինի թեմաների եւ տրամադրութիւնների շարունակութիւնը՝ արտայայտուած աւելի մեծ ծաւալի չափածոներում: Դարձեալ բանաստեղծի կերպարն է յառնում Նանէի տողերից, եւ կերպարը դարձեալ միահիւսուած է հայրենիքի, ժամանակի շնչառութեանը: «Ողբերգութիւն երկու արարով» պոէմը ներկայացնում է խորհրդային ժամանակների կաղապարների ճնշող պատկերը: Բանաստեղծը համոզում է, որ դրա դէմ ընդվզումի, այդ կաղապարներից ազատագրումի հրամայականը վաղուց էր հասունացել: Բայց դրանց տապալումը, աւաղ, չի բերում փրկութիւն մարդկութեանը, քանի որ հինը փլուզուելուց յետոյ տեղում չի յայտնւում նորն ու դրականը, այլ գոյանում է դատարկութիւն.

Ընդամէնը միայն վատն էր
գահընկեցուել,
սուտն էր ջնջուել,
Բաբելոնը՝ աւերակուել –
Սակայն տեղում …. ոչինչ չկար ….
Ստից յետոյ, ախր, ճիշտը –
դեռ չէր եկել…[6]

Նանէն իր քնարերգութեամբ խորամուխ է լինում ոչ միայն իր երկրի, այլեւ հանուր մարդկութեան կեցութեան, ճակատագրի տարուբերումների մէջ: Յատկանշական է, որ այս ժողովածուում արդէն հատուած է տպագրուած «Պոէմ մարդկային կամ ադամամութ» երկից: Տագնապների, յուսահատութեան, դժուարութիւնների բաւիղներից ելքը բանաստեղծը տեսնում է Աստծոյ մէջ, ուստի եւ գիրքը եզրափակում «Աղերս օրհնութեան» բանաստեղծութեամբ, որն աղօթք է, խոնարհ խնդրանք՝ ուղղուած Աստծուն.

Ողորմած Աստուած,
Տէ՛ր կանգնիր երկրիս…
Այս խաւարամած, խառնակ օրերին… (էջ 185)

Վերը նշուած թեմաները շարունակւում են *Ինքնադիտում, Լուսնակն ի վեր… առանց բառերի, Ամուրներից հալածեալ, Դադարի պահ* բանաստեղծական ժողովածուներում: Նանէն ինքնազննումի մէջ է, փորձում է հասկանալ բանաստեղծների էութիւնը.

Պոէտները սիրահարուա՛ծ են ծնւում…
…
Պոէտները գինովցա՛ծ են ծնւում…
…

[6] Նանէ, *Անզօր մոլեգնութիւն*, էջ 149:

Պոէտները վիրաւորուած են ծնւում…[7]

Բանաստեղծը տարբեր է սովորական մահկանացուներից. նա այլ աշխարհից է, այլ մոլորակից: Այսպէս է բնութագրում ինքն իրեն բանաստեղծ Նանէն «Այլմոլորակային թղթակից» չափածոյում.

Դուք ինձ ուզում էք ճանաչե՞լ, բարի՛.
ձեզանից չեմ ես –
Ես թղթակից եմ մէկ այլ աշխարհից…[8]

Բանաստեղծը մարդկանցից, աշխարհից ունեցած օտարութեան, խորթութեան բացատրութիւններն է փնտռում եւ յանգում դառը մտքերի.

Վախս մանրից է լոկ, փոքրութիւնից.
Ձերոյական ցցուն առանցքին կից այն որակից
ստուար,
Որ ոչ այս է, ոչ՝ այն,
Ոչ մի Ոչ է կարգին,
Ոչ հաստատում ինչ-որ լուրջ գոյութեան… (էջ 83)

Մանրութեան, չնչինութեան դէմ բանաստեղծը ոչ միայն բողոքում է, այլեւ կարծես փորձում այդ յատկանիշերը կրողների մէջ արթնացնել ինքնամաքրման մղումը.

Խիղճ ունեցէք գէթ ձեզ համար.
Ստի ոտքը կարճ է միշտ էլ
Ու… դարանոտ չարի ճամփան…[9]

Ինքնասիրահարուածութեան մէջ չես մեղադրի այս բանաստեղծութիւնների քնարական հերոսին, որ ինքը բանաստեղծն է, ինքը՝ Նանէն: Նա ինքնաճաղկումով է նաեւ ներկայանում իր գործերում.

Մեր արածի ճիշտը մէկ էր,
Սխալները… հազար ու մի…[10]

Այս տրամադրութիւնները յատկապէս սրւում են հայրենիքի ճակատագրին վերաբերող մտահոգութիւններում.

Ես ի՞նչ տուեցի քեզ, հայրենիքս,
Միայն ցանկացայ ու երազեցի… (էջ 44)

Նանէի քնարը ստեղծում է բնապատկերներ, որոնք ինքնին խօսուն, կախարդիչ լինելուց զատ, նաեւ դառնում են թարգմանը հեղինակի ապրումների եւ նրա շուրջ ծաւալուող կեանքի.

Այս ձեան փաթիլէ շորոր վարսերին
Ուզում եմ հիւսել երգիս մեղեդին,

---

[7] Նանէ, *Ինքնադիտում*, էջ 3-4:
[8] Նանէ, *Ամուրներից հալածեալ*, էջ 22:
[9] Նանէ, *Լուսնակն ի վեր… առանց բառերի*, էջ 120:
[10] Նանէ, *Դադարի պահ*, էջ 67:

Յետոյ ճօճ հինել նրանց դաշինքից
Եւ ինքնամոռաց օրօրումի մէջ –
Բաց թողնել թէլը խեւ ժամանակի[11]:

Խեւ ժամանակի մէջ տարուբերուող խոհերում թէ՛ կարեկցանքն է զրկուածի, խեղճի նկատմամբ, թէ՛ հասարակութեան կենսակերպին յատուկ կնճռոտ խնդիրները, թէ՛ բանականութեան ովկիանոսի անսահմանութեան մէջ դեգերումի ծանրութիւնը, թէ՛ յոգնութիւնն ու ուժասպառութիւնը անհաւասար կռիւների մէջ, թէ՛ այդ ամէնը յաղթահարելու եւ կեանքը նոր այգաբացով դիմաւորելու երազանքը: Եւ, այո՛, Նանէի քնարը, ի հեճուկս ոչ դիւրին խոչընդոտների, կարողանում է գտնել լաւատեսութեան հիմքեր, կարողանում է դուրս պրծնել յուսահատութեան ճիրաններից.

Յոյսն այսօր ինչ-որ չարթնացաւ ինձ հետ –
Թողեցի այդպէս՝ երազների մէջ.
Ու… մէնակ ելայ կեանքին ընդառաջ.
Մէնակ քայլեցի, մէնակ ցած ընկայ
Ու մէնակ էլ հենց բարձրացայ նորից…[12]

Նանէի բանաստեղծութեան կարեւոր բաղկացուցիչն է սիրային քնարը: Մենք տեսնում ենք նուրբ, զգայուն, խոցելի, բայց եւ հպարտ, արժանապատիւ, ցաւին դիմակայող կնոջ՝ այս գործերում:

Անամպ ու խաղաղ չէ սիրոյ երկինքը, բայց եւ այնպէս Նանէի երգը նմանւում է հոգու ճախրանքի, կարծես ամուրները թեւածում են բանաստեղծուհու տողերում եւ ենթատողերում.

Ի՞նչ է, իմ ամու՞րն է այլ այգիներ թռչում,
Չկան սրտիս համար նետե՞ր կապարճներում,
Թէ՞ այդ դու ես միայն՝ միակ մեղաւորդ –
Հեռւում ուշացումդ աններելի ձգում[13]…

Նանէի հերոսուհին հոգսաշատ է, խռովուած, քանի որ կեանքն ունի իր օրէնքներն ու պարտադրանքները, որոնց հետ պիտի հաշուի նստել այսպէս թէ այնպէս.

Դու ընդմիշտ արդէն կը լինես հեռւում
ու քեզ չեմ տեսնի.
Արդեօք շատ չէ՞ այդ
«ընդմիշտը», սէր իմ,
Ես սարսափում եմ…[14]

---

[11] Նանէ, *Լուսնակն ի վեր… առանց բառերի*, էջ 52:
[12] Նանէ, *Դադարի պահ*, էջ 23:
[13] Նանէ, *Ամուրներից հալածեալ*, էջ 16:
[14] Նանէ, *Ես - դժուար ցեղի դժուար զաւակս*, էջ 145:

Ահա մենք տեսնում ենք Նանէի վիրաւորուած, ճնշուած, յուսաբեկ հերոսուհուն.

Ամուրներ են չուել –
Սիրոյ ձմե՛ռ... ձմե՛ռ
Ամէն կարօտ ու տենչ՝ հեռու՛, օտա՛ր...
Սիրտս՝ մրրիկներում
եղեամապատ մի քար,
Յոյզերի չոր խաշամ՝ ձիւների տակ...[15]

Սակայն ինչպէս նշեցինք նախորդիւ, արժանապատուութիւնն ու լաւատեսութիւնն այս բանաստեղծուհու սիրելի եւ անքննելի յատկանիշերն են, եւ նրա հերոսուհին, իվերջոյ, յաղթահարում է իր մերժուած սիրոյ դառնութիւնը, կարօտի, կորստի ցաւը, հպարտօրէն ու վստահ յայտարարում իր վերապրումի մասին.

Մէկ է՝ մի օր դարձեալ –
Կը ծեքծեքան շուրջս շողերն արփիական՝
սիրոյ գարնան...
Մի օր... հեռուներից –
Սիրտս թիրախ արած իրենց խոցումներին –
Ամուրները... կը գան... (էջ 163)

Պոէմ մարդկային կամ ադամամութ երկը նորօրեայ մարդուն ուղղուած պատգամ է, ինքնամաքրումի, սեփական պատմութեան ու հոգեւոր նկարագրի հանդէպ պատասխանատուութեան, սիրոյ, կատարելագործուելու կոչ: Գրականագէտ Ֆելիքս Բախչինեանի՝ պոէմին տուած գնահատականն այսպիսին է. «*Խոհական, իմաստասիրական, հաւատաւոր ու գեղեցիկ այս ստեղծագործութիւնը, որ նուիրուած է Հայաստանում քրիստոնէութեան ընդունման 1700 եւ Գրիգոր Նարեկացու Մատեան ողբերգութեան 1000ամեակներին, հրաւէր է՝ գրկաբաց ընդունելու "իսկական մարդուն", որպէսզի հնարաւոր լինի նրա ուղեկցութեամբ դուրս գալ ադամամութից*»[16]:

Պոէմի բաժինները վերնագրուած են աստուածաշնչեան թեմաներին համահունչ՝ «Նախերգ», «Ադամ եւ Եւա», «Կայէն եւ Աբէլ», «Նոյ», «Բաբելոն. Սոդոմ եւ Գոմոր», «Յոբի գիրքը», «Երգ երգոց», «Առակաց», «Ժողովողի գիրք», «Ի սկզբանէ էր բանն», «Յայտնութիւն»: Երկի բոլոր հատուածներն ունեն բնաբաններ՝ վերցուած *Աստուածաշնչ*ից, Նարեկացու *Մատեան ողբերգութեան* պոէմից եւ տաղերից:

---

[15] Նանէ, *Ինքնադիտում*, էջ 162:

[16] Ֆելիքս Բախչինեան, «Նանէ. պոէմ մարդկային կամ ադամամութ», *Գրական թերթ*, 12 Մայիս 2019:

Պոէմը մեկնարկում է հարցով, որը նախանշում է հեղինակի մտադրութիւնը. «Մարդ, ո՞վ ես արդեօք…»[17]:

Այս հարցադրումին հետեւում է գրողի որոնումը՝ մարդու, նրա կոչման, նրա մեղքի, մեղքի գիտակցման, Աստծուն ապաւինելու ողջամտութեան, ինքնամաքրման, փրկութեան ուղու վրայ կանգնելու յետագծով:

Ադամի եւ Կայէնի մեղքը, աշխարհի ապականութիւնը, Նոյեան տապանով մաքրագործուելու աստուածային շնորհը չեն կանգնեցնում մարդուն: Յետջրհեղեղեան շրջանում սկսւում է մեղսալից վարքի նոր փուլը՝ հասնելով մինչեւ Սոդոմ Գոմորի դատաստանապատում.

Եւ օրեր եկան, երբ երկրի վրայ
Մարդը շատացաւ.
Ծնուեցին մէկը մէկից կատարեալ.
Սակայն լոկ տեսքով –
Իսկ հոգիներում՝ մի անտակ խաւար… (էջ 82)

Անտակ խաւարի յաղթահարումը դարձեալ աստուածաշնչեան ուղեգծով է ցոյց տալիս Նանէն, փորձում յուսադրել, դարձի բերել մարդկութեանը.

Քո մոլորումը քեզ ուր էլ տանի,
Մեղքերիդ մութը՝ որտեղ էլ հասնի –
Երբեք գերի չես անդառնալիի.
Վերադարձ միշտ կայ… (էջ 127)

Դարձի ուղին որոշակիանում է *Պոէմ մարդկութեան կամ ադամամութի* յետագայ հատուածներում: Այն ճայր է առնում Յոբ երանելու վարքից.

Յոբ երանելի…
Ծով էր տանջանքն իր,
Ծով էր համբերանքն,
Ծով՝ հաւատն անբիծ
Եւ սէրն առ Աստուած.
Ու դրա համար –
Անբաւ կորուստից աւելի՝
Գտաւ… (էջ 177)

«Ժողովող»ին անդրադարձները պոէմում նորօրեայ հաւաստիացումներն են «ունայնութիւն ունայնութեանց» աստուածաշնչեան իմաստնութեան:

Իմաստ եմ փնտռում
Անիմաստութեան անեզրութեան մէջ,
Լոկ անյայտներով պարուրուածը այս՝
աշխատում լուծել,

[17] Նանէ, *Պոէմ մարդկային կամ ադամամութ*, էջ 8:

Եւ դեգերելով խաւարների մէջ –
Առանց փարոսի ափ փորձում գտնել ...(էջ 330)

«Ի սկզբանէ էր բանն» բաժինը «Հայր մեր»ի մեկնութիւն-թաքնազերծումն է: «Յայտնութիւն» եզրափակիչ բաժնում Նանէն Աստծու զայրոյթի բացատրութիւնն է տալիս, զայրոյթ, որ հասունացած է, պատճառաբանուած: Սահմռկեցուցիչ պատկերներ են յառնում մեր առջեւ այս հատուածում, սակայն Նանէն չի սպանում փրկուելու յոյսը: «Պոէմ մարդկութեան կամ ադամամութ» երկարաշունչ այս երկը նա աւարտում է այդ յոյսի հաւաստիացումով.

Եւ եթէ ճիշտ բռնենք ուղին փնտռումի՝
Անգամ՝ ալեկոծ այն թոհուբոհում՝
սուգ ու վախճանի -
Այն... կը գտնուի՛...(էջ 366)

Յուսադրումի այս միտումն առկայ է նաեւ Նանէի այլ երկերում:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ. *44ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈՅ*

Այս բաժնում կը ներկայացնենք Նանէի *Անցում կեանքով* բանաստեղծութիւնների ժողովածուն՝ տպագրուած 2020ի 44օրեայ պատերազմից յետոյ:

Անցում կեանքով ժողովածուն տեսանելի է դարձնում Նանէի բանաստեղծութեան երկփեղկուածութիւնը՝ պայմանաւորուած 44օրեայ պատերազմով, ուստի մենք բոլոր քաղուածքների վերջում կը նշենք տուեալ բանաստեղծութեան գրութեան տարեթիւը:

Ու ես... նորից-նոր՝
Ասես գտած իմ կորցրած հունը –
Ամէն Աստծոյ օր ու ամէն գիշեր
Վերադառնում եմ,
Վերադառնում եմ...[18] (2017):

Բանաստեղծութիւնը խորհրդանշում է Նանէի վերադարձը **Էրգիր**, որում կորցրածի ցաւն է տրոփում՝ մեծ ու նոր կորստից առաջ, որ յետոյ պիտի գար. վերադարձը չի առարկայանում, բայց գրողի ուղերձը յստակ է, լի հաւատաւորի վստահութեամբ, որովհետեւ գրողը մարգարէ է:

Ցած սահեց
Երկնափէշը կապոյտ,
Ու բիլ մշուշ է օրօրւում
Լեռների պարին միահիւս.
Անջատեմ հեռախօսս,
Համացանցային

[18] Նանէ, *Անցում կեանքով*, էջ 10:

կապերը բոլոր,
Բաց չթողնեմ
պահն այս այգաբացի՝
Անբիծ ու երկնաշունչ[19] (2019):

Բնապատկերը Նանէի մօտ ներքին խոհը բացելու բանալի է, ոչ թէ սոսկ բանաստեղծական պատկեր: Ու հեղինակը մերժում է այդ խոհի խաթարումին սպառնացող առօրեայ խառնաղմուկը: Նա բնութեան հետ միահիւսուելու, թէկուզեւ նրա քմայքներին հակադրուելու պահանջն ունի: Եւ անգամ մարտահրաւէր է նետում բնութեանը՝ բանաստեղծի ինքնաբաւութեան դիրքերից.

Ձիւնում է՝ ձիւնի –
Ճերմակ մելամաղձ բերած անհունից…
Ես անթեղել եմ ամառուայ հուրը
Ու տանս ներսում
Ե՛ս եմ իմ հիւրը…[20] (2017):

Տրամադրութեան, պատկերի արտայայտչամիջոցների ընտրութեան մէջ Նանէն դիպուկ է, նրբաճաշակ, հնարամիտ: Նրա յօրինած կամ մոռացումից փրկած բառ-եզրոյթները ներդաշնակ համադրութեան մէջ են՝ նրբաթոյր, ծաղկածուփ, կանաչահեղձ, երկնաշունչ…

«Կապոյտ հեռուներ» շարքը, յատկապէս 2010-13ին գրուած գործերը, կնոջ անձնական ապրումի, սիրոյ խոստովանութեան, սիրային բախումների տրամադրութեան արտայայտութիւններ են հիմնականում: Եւ որքա՜ն ցաւալի է, որ կեանքը Նանէին զրկել է անմնացորդ դրանց տրուելու, իր միջի կնոջ, բացառապէ՛ս կնոջ բարդ ու դիւրին սեթեւեթումները բանաստեղծելու բարեբախտութիւնից:

Դէպի քեզ չգալու համար
Քեզ տանող բոլոր ճանապարհները
Ջնջեցի քարտէզից սիրոյ…[21] (2011)

Նանէի քնարական հերոսուհու ընթացքը փախուստ է սիրուց, սիրելիից, սիրոյ վերյուշից: Նա ջանում է ջնջել սիրոյ մասին յիշեցումի բոլոր նշանները, սակայն անհնար է փախչել ինքդ քեզնից. այն, ինչ քո ներսում է, քեզ չի լքի երբեք:

Քեզ կորցնելու համար
Փորձեցի ամէն բան.
Եւ ցած իջայ՝ ընդերքի խորքերը դէպի
Եւ երկնային ուղիների

[19] Նոյն, էջ 14:
[20] Նոյն, էջ 18:
[21] Նոյն, էջ 124:

Հետքերով գնացի…
Յետոյ հասկացա՛յ,
Ես քեզ իմ մէջ էի կրում.
Եւ տանում թափառումների
Բոլոր ճանապարհներին…[22] (2011):

Սիրոյ թափառող յուշը հանգիստ չի տալիս Նանէի հերոսուհուն. այդ թափառումն անվերջ է ու ոչ երբեք՝ ժամանակավրէպ: Մոռացումի շունչը կարող է տարածուել ամէնի, ամէնքի վրայ, բայց ոչ՝ սիրոյ ապրումի, թէկուզ եւ այդ ապրումը զերծ չի եղել վիրաւորանքներից, հոգին ծուատած աւերումներից, վրէժի ցանկութիւնից:

Սէրը՝ ամէն բան ծածկած ստուերում,
Դեռ տեւելո՞ւ է…
Մինչ մենք՝ գերիներ չար յամառութեան,
Վիրաւորանքի փոքրը մեծ արած –
Մարել ենք փորձում յոյզերի հուրը.
Սէրը թեւում է մեր շուրջ ու մեր մէջ.
Նա ամէնու՞ր է…[23] (2010):

Թէեւ Նանէի հերոսուհին խոստովանում է սէրը կորցնելում ունեցած իր բաժին մեղքը, թէեւ կորստից յետոյ գիտակցում է կորցրածը ետ բերելու անհնարինութիւնը, այդուհանդերձ նա մեծահոգի է, ներող, երկխօսելու, հասկանալու եւ հասկացուելու պատրաստ.

Ամէն բան դրեցի ափերիդ մէջ՝
Աշխարհն իմ՝ բոլորից թաքուն,
Հաւատներն ու երազներն իմ
Ոսկեթելիկ ու կապտատենչ…
Հիմա ոչինչ չունեմ այլեւս՝
Ո՛չ տենչեր բարձրաթռիչ,
Ո՛չ աշխարհն իմ երկնածուփ…
Ստիպուած եմ նորն արարել.
Իսկ դու ի՞նչ արեցիր այն մէկի հետ…[24] (2016):

Մինչեւ 44օրեայ պատերազմը գրուած բանաստեղծութիւններում Նանէի մօտ շեշտադրուած է բնապատկերային քնարը, նա բնութեան երգիչն է ու ինքն էլ մի մասնիկն է այդ բնութեան.

Ծաղկած հիրիկը տարուբերեց
Նրբաթոյր ծաղկաթերթերն իր՝
Ի պատասխան իմ ողջոյնի…

[22] Նոյն, էջ 124:
[23] Նոյն, էջ 143:
[24] Նոյն, էջ 171:

Ի՜նչ շքեղ է դաշտը՝
Ծաղկանց ու սէզերի բոյրերով օծուն…[25] (2014):

Բնութեան հմայքը Նանէի մօտ միաձուլուած է Բարձրեալի երկրպագութեան թեմային.

Օրը՝ բացուած ծաղկի նման լո՜յս է բուրում…
Լոյսն՝ ամէնուր
Ու կաթում էր անգամ ծաղկանց
Աչուկներից…
Յետոյ ողջ փունջ իմ բացատի հմայքներից
Տուն բերեցի,
Լոյս բերեցի ու աղօթքը առ Կատարեալ…[26] (2013):

Հայրենիքին նուիրուած բանաստեղծութիւնները անափ սիրոյ, արժանապատիւ մարդու տրամաբանութեամբ են հիւսուած, հայի ու Հայաստանի բացարձակութեան, բացառիկութեան հանդէպ անվերապահ հաւատով.

Ամէն երկրում՝
Մոլորակի որ հեռու ծայրում էլ լինի –
Մի փոքրիկ Հայաստան կայ՝
Քիչ կամ շատ հայերի
Հայավարի թպրտուն ու տաք սրտերով…[27] (2016):

Հային վերապահուած մեծ առաքելութեան գիտակցումով է գրում Նանէն իր հայրենասիրական երգերը: Նա պարզ հայրենասիրութեան սահմաններից դուրս է բերում իր քնարերգութեան տարածութիւններն ու ինքնավստահօրէն ազդարարում հայի աշխարհափրկիչ առաքելութեան մասին.

Շրջեց հայը աշխարհով մէկ,
Ապրեց աշխարհի ամէն մի անկիւնում
Ու սփռեց հունդերը իր լուսէ՝ հողում օտար,
Իր արարման խորհրդով անթեղեց դրանք
Նրա խորքերում…
Ու վերջն աշխարհի մի քիչ էլ երկարաձգուեց՝
Աւելացնելով ժամանակն ապաշխարութեան
Ու… կեանքի…[28] (2018):

Իր ու մեր ժամանակի պատկերները Նանէն գծագրում է հրապարակախօսական շնչով: Նա այդ ժամանակը համարում է չապրելու ժամա-

[25] Նոյն, էջ 5:
[26] Նոյն, էջ 7:
[27] Նոյն, էջ 19:
[28] Նոյն, էջ 64:

նակ, որում տեղ չկայ սիրոյ, Ամուրների համար, բայցեւայնպէս հաւաստում է, որ ինք ու մենք ապրել, ապրում ենք՝ ի հեճուկս չապրելու ու չսիրելու «նենգ», «դեղին աչքերով» ժամանակի.

Բայց եկել էինք ու… ապրեցինք,
Եւ բռունցքներ էինք ճօճում՝
Արդարութեանը զօրավիգ –
Ամէն յարմար պահի՝
Ջրցան մեքենաների պաղ շիթերի տակ
Ու մազապուրծ՝ մահակներից ոստիկանների…
Բայց եկել էինք ու… ստեղծեցինք,
Արարեցինք թռիչքը մեր երազի…
Եւ միայն մենք հիացանք ժամին՝ ադամամութ,
Երբ մէնակ էինք ու հեռու
Աչքերից ապակեայ…
Բայց եկել էինք… ու առանց Ամուրների՝
Մեզ ու մեզ սէր յօրինեցինք,
Ոչինչ, որ մի քիչ այն չեղաւ…
Ժամանակը ժամանակ չէր բոլորովին…
Բայց մերն էր ու… միակը նաեւ…[29] (2018):

Բանաստեղծը դիմադրում է կեանքի հարուածներին՝ այդ հարուածներին դիմակայելիս առաւել ամրանալով, ինքն իր մէջ մինչ այդ անծանօթ ուժ յայտնաբերելով.

Վարպետաց դաս է արդէն շատ վաղուց
Ապտակը կեանքի,
Ու ջարդելու տեղ պողպատ է ձուլում
Մինչ այդ՝ թոյլ կաւից…
Լեցուն է գաւը
Ու այս բիլ ծաղկի հմայքը՝ անծիր,
Որ պրկուած թէլը պարան դարձած՝
Այս մի վիհից էլ ինձ ափ կը հանի…
Դէ, կենացը ձեր՝
Ինձ փշրելու տեղ
Կոփողներ անմիտ…[30] (2018):

Հայի ճակատագիրն անցնցում չի եղել երբեք: Հետեւաբար, հայրենիքի ցաւին անդրադարձները Նանէի մօտ նաեւ մինչեւ 44օրեան են: Հայոց Ցեղասպանութեան 100ամեայ տարելիցն այսպէս է բանաստեղծել Նանէն՝ «2015» վերնագրուած երկում.

---

[29] Նոյն, էջ 20:
[30] Նոյն, էջ 25:

Երամներ ելան ճերմակ ծխի պէս՝
Հրեշտակների հետքերով իվեր,
Երամներ ելան…
Սրբացած ոգիք՝ ի պահ երկնքին,
Աճիւններն անթաղ՝
Շիկամոյն փոշուն շիրմադաշտերի…
Գնամ ու ծնկեմ
Հանդէպ իր լայնք ու երկայնքով ամբողջ
Սրբացած հողին,
Գնամ խնկարկեմ՝
Անապատներում
Ցրուած, մասունքուած նահատակներին…[31] (2015):

Դառնագին խոհեր են պատում բանաստեղծուհուն նաեւ արցախեան առաջին պատերազմի զոհերին յիշելիս, բայց այդ տրամադրութիւնները յաղթանակի ուրախութեան շնչով են առլեցուն: Գերութիւնից ազատագրուել էին Արցախը, թշնամու վայրագութիւնների յենակէտ դարձած Շուշին: Եւ լացը այս դէպքում լուսաւոր թախիծ է բուրում Նանէի ստեղծագործութիւններում.

Մեր գերուած Շուշին, դշխուն, գեղուհի՛ն,
Որ աւերակուած մի բուռ էր դարձել –
Իր գանգուրները ցնցեց լեռն ի վար,
ձգուեց ի հասակ,
Որ զաւակներին գիրկը իր բացի…
Յաղթութեան պահը՝ գինուց առաւել,
Արբանք էր հոգու ու խենթութիւն էր…
Մէկը ծնկաչոք վանքի անկիւնում
հեկեկում էր լուռ,
Բայց արցունքներում ցնծութեան հուր էր…[32] (2013):

Նանէի ու բոլորիս սիրտը ծուատած 44օրեայ պատերազմը, որ դեռ չի աւարտուել, դարձել է օրագրութիւն: «21.10.20» թուագրուած, «Օր 25րդ դէպի յաղթութիւն» ենթավերնագրուած բանաստեղծութեան մէջ գրողի միամիտ, բայց լուսաւոր հաւատն է.

Յաղթութեան գինին հասել է, տղեեեեե՛րք,
Ձե՛զ է սպասում…[33] (2020):

2020ից առաջ եւ յետոյ գրուած Նանէի երկերը ներհիւսուած են, փոխլրացնող, որքան էլ որ տարբեր են հոգեվիճակները:

---

[31] Նոյն, էջ 105:
[32] Նոյն, էջ 110:
[33] Նոյն, էջ 35:

Յետպատերազմեան շրջանի (թէեւ ասացինք՝ պատերազմը դեռ չի աւարտուել) բանաստեղծութիւնները ինքնակեղեքումի շեշտով, փակուղին բացող բանալի-բանաձեւերի փնտռտուքով են շնչում: Եւ Նանէն նոր օրերին համահունչ վերաձեւակերպում է թումանեանական «Ապրէ՛ք, երեխէք, բայց մեզ պէս չապրէք» իմաստաբանութիւնը.

«Լաո՛, զարթնի՛ր»,
Բայց ոչ երբեք մեզ պէս անմիտ –
Յոյսդ՝ «հայի խելքին վերջին»…[34] (2021):

Յիրաւի, 44օրեայ պատերազմի ընթացքում եւ յետպատերազմական տարիներին գրուած գործերը բացում են բանաստեղծական մի նոր երակ Նանէի քնարում: Եւ տրամադրութիւնն ու թեմաներն էլ ճշգրիտ արտացոլանքն են բանաստեղծի հոգեվիճակի, սպասումների, որոնք տարբեր էին պատերազմի առաջին եւ վերջին օրերին, առաւել եւս՝ դառը պարտութեան ու դրան յաջորդած համազգային գողգողթայի ժամանակներում:

Երբ դեռ նոր էր պայթել արիւնռուշտ թշնամու պատերազմական երթը, Նանէն շատերիս նման վստահ էր յաղթանակի հարցում, ուստի նրա քնարը այդ վստահութեամբ էր արարում: «Ու լեռների վրայ» վերնագրով, «06.10.20, Պատերազմի 10րդ օր» ենթավերնագրուած բանաստեղծութիւնն այդ տրամադրութիւններից է հիւսուած.

Ու լեռների վրայ
Աշունը կանգ առաւ,
Աշունը շունչ պահեց
Ու յամրացաւ,
Ու կտաւը նրա՝
Դեռ նոր գոյներ առած,
Ծուէն-ծուէն, պատռած
Քշուեց քամու բերան…
Ու լեռների վրայ
Սեւ բողբոջներ ելան,
Ու բացուեցին հատ-հատ
Թերթերով սեւ,
Ու լեռների վրայ
Մահահոտը նրանց
Աջ ու ահեակ անզուսպ
Իր թեւերը փռեց…
Ու լեռների ծոցից,
Զաւակների նրա՝
Կրակ ժայթքեց ի վեր,

[34] Տե՛ս՝ ծանօթ. 29, էջ 41:

Եռաց որպէս քուրայ,
Որ կէզ բոցերի մէջ
Յաղթանակը կռուի,
Ու… մանուկը ծնուի
Խաղաղութեան… (էջ 33)

Ինչպէս նկատում ենք, Նանէն անգամ դժոխային մահերթի պարագայում միաձոյլ է բնութեանը, եւ նրա բաղձանքը ոչ թէ յաղթական նուաճումներն են, այլ խաղաղութիւնը: Ուստի, նա դարձեալ աղօթք է բարձրացնում Երկինք, որ յաղթութեան իր ու մեր տենչը հասնի Բարձրեալին, ու որ մեղքերից դարձի գալու երանութիւնը լինի: Այսպէս, պատերազմի 13րդ օրը՝ 2020ի Հոկտեմբերի 9ին, Նանէն գրում է.

Մոմերը վառ են
Վանքի դարաւոր պատերի ներսում,
Խունկն ու բուրվառը,
Մրմունջ ու խոկում –
Յաղթութեան տենչն են
Մեր… Երկինք տանում…
Սահմանի վրայ՝
Դեռ երազներից կեանքի համ չառած
Այրեր են ջահել.
Ու Հայրենին է շատերին արդէն
Առաջին աղօթք ու… առաջին սէր…
Մոմերը վառ են՝
Բոլորի համար հատ-հատ
Ու մէկտեղ,
Եւ մեղմ, թրթռուն լոյսերով իրենց
Դարձի աղերս են առաքում
Առ Տէր… (էջ 39)

Ծանր խոհն ու վիշտն են պատում բանաստեղծուհուն յետպատերազմական շրջանի գործերում, քանի որ չեն իրականանում յաղթութեան, խաղաղութեան սպասելիքները: Ի Տէր յղուած աղօթք-բաղձանքը ցաւալիօրէն տարրալուծւում է, մնում աննիւթեղէնի տիրոյթում: Բայց քանի որ դառնագին կորստից ու անկումից յետոյ մարդ արարածն առաւել շատ է զգում Աստծուն մերձենալու ու նրանից փրկութիւն ակնկալելու անհրաժեշտութիւնը, ուստի Նանէն իր բանաստեղծութեան համար ընտրում է հենց այդ ճանապարհը.

Խնկարկեմ բոլոր կորուստները մեր,
Խնկարկեմ ի Տէր…
Ու մոմեր վառեմ՝
Յոյսերի լոյսով գալարուն ի վեր,

Մեր դարձի համար դէպի հին ու նոր
Կորուսեալ հողեր,
Տենչամ ուշացող այգը լուսահեր,
Ղազանչեցոցում հարսանիք կրկին,
Մկրտութեան ծէս,
Աւետիս միայն յաղթութիւնների,
Ու… կեանքի հանդէս…
Խնկարկեմ լուսէ երազները մեր,
Խնկարկեմ ի Տէր…[35] (01.01.2021):

Ինչպէս նկատում ենք, սա պարտութիւնից յետոյ առաջին Ամանորի առաջին օրն ապրող հայ բանաստեղծի հոգեվիճակն է, որը, բնականաբար, հեռու է տօնականութիւնից, ու միակ մխիթարութիւնը դարձեալ Բարձրեալն է, նրանից ակնկալուող փրկչական հրաշքը:

Բնութիւնն իր բնականոն ընթացքի մէջ է, եւ մահաբեր պատերազմից յետոյ, այնուամենայնիւ, գալիս է գարունը: Սակայն ինչպէս Ամանորի դէպքում, գարունը եւս ուրախութիւն չի բերում բնութեան հմայքներով մշտապէս ուրախացող, այդ հմայքները բանաստեղծացնող Նանէին: Նա իր ժողովրդի ցաւի հետ է, կորուստների բեռան տակ կքած.

Գարունը ձեզ էր որոնում, տղե՛րք,
Մայթից մայթ լարուած թափառումներով,
Տնից տուն հեւքոտ երթերով անվերջ…
Բայց գտաւ միայն սգուոր մայրերի,
Հարս ու օրիորդաց
Աչքերում խոնաւ ու… սրտերի մէջ…
Գարունը ձեզ էր որոնում, տղե՛րք…[36] (25.06.2021):

Նոյն օրը Նանէն գրել է մէկ այլ բանաստեղծութիւն՝ մնալով բանաստեղծական ասելիքի միեւնոյն ուղեծրում: Օրուայ ցաւը բանաստեղծուհուն մղում է դէպի անցեալի ցաւերի վերյուշը: Նոյն ոսոխն է, վայրագութիւնների նոյն ձեռագիրը, որ ծառացել է հայ ազգի դէմ ու նիւթում է իր դաւը, շարունակում նախկինում սկսած իր սեւ գործը, ասել է թէ՝ կրկնւում է անցեալը, որ դարձել է ներկայ.

Նորից հայ շուրթին «Ողբ» է, «Անտունի»,
Նոյն ոսոխի դէմ նոյն կռիւը հին՝
Հաւատի յանուն, կեանք ու տեւումի…
…Ներկան անցեալ է, անցեալը՝ ներկայ,
Ու ժամանակը՝ շղթայ պարոյրի…[37] (25.06.2021):

---

[35] Նոյն, էջ 40:
[36] Նոյն, էջ 37:
[37] Նոյն, էջ 42:

Բանաստեղծի հայեացքը դարձեալ Երկնքին է: Նա հայոց աստղազարդ ամառային երկնքում որոնում է հայրենիքի համար նահատակուած քաջերի հետքը ու համոզւում եւ համոզում, որ նրանք դարձել են երկնաբնակ ասուպներ.

Աստղերի հատ-հատ առկայծումների
Շքերթ է ու դող.
Քանի՛սը ընկան ասուպներ որպէս
Ու… կեանքեր մարող…
Երկնքում ասես աստղակաթ լաց է,
Ու անձրեւում է գիշերը անամպ
Կեանք-ասուպներով…[38] (26.06.2021):

Ժամանակը սահում է յետպատերազմի հունով, եւ ազգին պատուհասած դժբախտութիւնը նրա բանաստեղծին մղում է կատարուածը վերազգային, համամարդկային տիրոյթներում քննել-վերլուծելուն: Խորաթափանց բանաստեղծը իրաւացիօրէն գիտակցում եւ ընթերցողին է փոխանցում այն ճշմարտութիւնը, որ վայրագութիւնն աշխարհում ամէնուր է, որ միայն հայն ու Հայաստանը չեն վտանգուած, որ մարդկութեան փրկութեան ահազանգը պէտք է հնչեցնել ու կասեցնել հակամարդու՝ համատարած դարձած գազանային ոճիրը.

Աշխարհը վայրագ խենթութեան մէջ է,
Հողմերի մէջ է ու կործանումի.
Հեգ մոլորակն է ամէն անկումից՝
Մի կերպ դեռ յենուած իր կոնդ առանցքին,
Ճռնչիւնով խուլ հազիւ դուրս գալիս[39]: (03.12.2022):

Ժամանակն իր բնականոն ընթացքից դուրս է ընկել, ամէն բան խառնիխուռն է ու գլխիվայր, եւ ոչինչ չկայ օրինաչափ, սովորական:

Բան մնացե՞լ է իր սովոր տեղում –
Իրարից արդէն տարբերել չկայ
Երես ու աստառ, ոտքեր ու գլուխ…
Յետինները, որ առաջին դարձան՝
Գարշահոտեցին յետինի կաշւում
Առաջին տեղը թափուր էլ մնաց…
Երթ է անգլուխ՝ անդունդից անդունդ
Քայլքը իր բռնած…[40] (03.12.2022):

Սակայն բանաստեղծը չի ընկճւում: Նա դրա իրաւունքը չունի, քանի որ իր քաջալերող խօսքը պիտի յղի ազգին: Կեանքի, բնութեան ներդաշնա-

[38] Նոյն, էջ 36:
[39] Նոյն, էջ 117:
[40] Նոյն, էջ 117:

կութիւնը խաթարողները ոչ միայն չեն խեղճացնում նրան, այլեւ նրա հեգնախառն արհամարհանքին են արժանանում.

Մի փոքր կամաց, խնդրում եմ,
Պարոնայք փողկապաւորներ,
Եւ պաշտօնեաներ՝
Ինքնաբաւ ու յոխորտուն.
Ցածրացրէք ձեր ձայները
Ամբիոնների մօտ եւ նրանց մերձ,
Ձեր ճառերը սին ու դատարկով զրնգուն…
Մի փոքր կամաց, խնդրու՛մ եմ,
Դուք խանգարում էք ինձ լսել
Ե՛րգը աշնանացած օրուայ…[41] (2022):

Պատահական չէ, որ Նանէի *Անցում կեանքով*ը աղօթքով ու Տիրոջ Լոյսին ապաւինելու ձգտումով է ամփոփւում.

Ինձ յանձնում եմ Քո
Փրկարար Լոյսին.
Մաքրիր ինձ, իմ Տէ՛ր,
Մաքրիր ինձ ի վե՛րջ…[42] (2023):

Այս տողերը գրքի վերջին բանաստեղծութիւնից են՝ գրուած 2023ի Յուլիս ամսին: Այսպիսին է բանաստեղծի հաւատն ու վստահութիւնն առ Երկնաւորը: Նանէն այս հաւատի ու վստահութեան մէջ անմրցելի է, որքան էլ բիրտ իրականութիւնը հակադրւում է իր աստուածախոյս ծամածռութեամբ: Ասուածի մի վկայութիւն էլ տարիներ առաջ Նանէի հետ իմ արած հարցազրոյցի վերնագիր դարձած տողն է. «Վերջին խօսքը Բարձրեալինն է»[43]: Չհամաձայնել չես կարող:

Իհարկէ, շա՛տ ցանկալի է, որ Նանէի յաջորդ բոլոր գրքերը ծնուեն ցաւի բացառումի, թանկ վերագտնումների, յաղթութեան գինու արբեցումի դողով, բայց երազող լինելուց առաջ, յետոյ եւ մշտապէս հարկաւոր է իրատես լինել: Իսկ իրատեսութիւնը, ցաւօք, դեռ մեծ յոյսեր չի ներշնչում:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ
ԹԵՒԹԵՒԿԸ՝ ԻԲՐԵՒ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻ

Որքան էլ իրականութեան պատկերն աղէտալի է, համամարդկային տագնապները՝ ակնյայտ, դիմակայել դրանց ու յաղթահարել դրանք կա-

[41] Նոյն, էջ 98:

[42] Նոյն, էջ 195:

[43] Հարցազրոյցը հրապարակուել է Ardi.am մշակութային կայքում 22.01.2020ին, ապա լոյս է տեսել Կարինէ Ռաֆայէլեան, *Փոխատեղումներ* ծողովածուում («Նուռ» հրատ., Երեւան, 2023, էջ 262):

րելի է: Այդ մասին Նանէն գրում է հետեւեալը. «*Մնում է, որ մենք էլ, յուսահատուած ու անզօրութեան խեղդող թմբիրը մի կողմ դրած, սկզբի համար գոնէ միայն կամենանք .... չկործանուե՛լ... Դժուարը առաջին քայլն է...*»[44]: Եւ հենց ինքն էլ արել է այդ առաջին քայլը, իսկապէս յաղթական քայլ՝ հեքիաթի սեռում: Նանէն լոյս է ընծայել *Թեւթեւիկը* հեքիաթների ժողովածուն:

Գրքում ընդգրկուած 14 հեքիաթները զարմանահրաշ մի աշխարհ են բացում ընթերցողի առաջ, որի բարի, իմաստուն, դաստիարակչական բովանդակութեանը գումարւում են հեղինակի վառվռուն նկարազարդումները՝ արուած հեքիաթների բովանդակութեանը համահունչ, գեղանկարչական նուրբ ճաշակով ու վարպետութեամբ:

Հեքիաթներում, ինչպէս եւ բնորոշ է գեղարուեստական երկերին, հեքիաթներին՝ մասնաւորապէս, հիւսւում է պատում, որի կառուցուածքի հիմքում ընկած է խնդիր, բախում եւ որն ունի հանգուցալուծման անհրաժեշտութիւն: Սովորաբար այդ խնդիրը սրւում է, հասնում իր գագաթնակէտին, ապա դժուարին, բարդ անցումներով հանգուցալուծւում: Նանէն իր հեքիաթներում շրջանցել է բախումի սուր անկիւնները, փշերից, ցաւոտ կսմիթներից ասես ապահովագրել իր հերոսներին ու ընթերցողներին: Նրա հեքիաթները ոչ թէ սոսկ բարութեան, ներումի, հաւատի, սիրոյ քարոզ են հնչեցնում, այլ ենթատողերի, խորհրդանիշերի, գաղափարաբանական խրատների, որոշակի գործողութիւնների, գեղարուեստական պատումի սահուն անցումների միջոցով յանգեցնում այդ արժէքների նիւթականացմանը հեքիաթներում:

«Արեւքուրիկն ու մանուշակը» հեքիաթում արեւքուրիկին նախանձող մանուշակն իր մաշկի վրայ է զգում նախանձի դառնութիւնն ու յօժարակամ հրաժարւում այդ կործանարար մաղձից: «Աքաղաղը» հեքիաթի հերոսներ շունն ու կատուն գիտակցում են աքաղաղի հանդէպ տածած թշնամանքի անհեթեթութիւնն ու վերականգնում իրենց բարեկամութիւնը, քանի որ կեանքն ապացուցում է այդ երկու կռուազաններին, որ ամէն բան բնութեան մէջ հաշուարկուած է ճիշտ ու անթերի, եւ եթէ դէմ ես գնում իրերի, երեւոյթների բնականոն ընթացքին, նախ եւ առաջ տուժում ես ինքդ: Նանէն յուշում է, որ առանց մեծ առճակատման էլ կարելի է լուծել խնդիրները, որ դրանք իրենց լուծումը կարող են գտնել ինքնըստինքեան՝ պարագաների ճիշտ դասաւորութեան թելադրանքով:

«Ծիրանենին» հեքիաթը յանուն սիրելիների անձնազոհութեան գնալու մասին իմաստուն պատմութիւն է, որի խորհուրդը բարի լուր բերող արագիլների տունդարձն է շեշտադրում: Ամէն բան պէտք է անել, որ արագիլները, ասել է թէ՝ բարի լուրերը գտնեն տուն բերող ճամփան, որ աշխարհի

[44] Նանէ, *Վերջին երանին*, էջ 162:

տարբեր ծագերից եկող լուրերը հասնեն տեղ ու չմնան կէս ճանապարհին: Եւ «Կախարդական փայտիկը» հեքիաթը յուշում է, որ ամէն մէկիս ձեռամբ կարող են գործուել հրաշքներ, ու որ առանց կախարդական փայտիկի էլ կարելի է բարի, գեղեցիկ դարձնել աշխարհը: Այս երեւոյթի մէկ այլ հաւաստիացում է «Թեւաթափիկը» հեքիաթը, որի հերոսները հնարամտօրէն կարողանում են շրջանցել օրինաչափութիւններն ու հեքիաթը դարձնել իրականութիւն: Նրանք գտնում են անհնարինի բացասումը, եւ այդ բացասման արդիւնքում թիթեռներին օժտում երկարակեցութեամբ:

Նանէն ոչ միայն բովանդակութեան, նկարների մակարդակում է հրապուրում իր ընթերցողին, այլեւ պատկերաւոր գեղարուեստական գրով. «*Յոյսը յուսահատութեան մէջ էր՝ նրա ճոխ երկնաթոյր հագուստի փոթ-փոթ փէշերը պատառոտուած ծուէն-ծուէն կախ էին ընկել: Նա՝ արցունքն աչքերին ու շուրթը խռով կախ ընկած, գնաց հեռում ապրող ծանօթ դերձակի մօտ*»[45]՝ կարդում ենք «Յոյսի վերադարձը» հեքիաթում:

«Դէպի տուն» հեքիաթը այլաբանութիւն է, որը մեզ կանգնեցնում է անհերքելի ճշմարտութիւնը գիտակցելու ճանապարհին: Ինչպէս «Ծիրանենին» հեքիաթում, այստեղ եւս հեքիաթագրի խրատը յուշում է ինքնագտնումի, տունդարձի ճանապարհից չշեղուելու անհրաժեշտութեան մասին: Այդ ուղին հարթեցնող միջոցներից մէկը՝ ամենակարեւորը, կրթութիւնն է, հայրենի գրին ու ինքնութեանը ամուր կառչելու հանգամանքը. «*...երբեք չկորցնես Տառերը, թէ չէ տրանդ ճանապարհն էլ կը կորցնես եւ՝ ընդմիշտ*» (էջ 33)՝ պատգամում է հեքիաթի հերոսին նրա հզօր նախնին՝ Մեսրոպ Մաշտոցը, որի անունն է կրում ինքը. բնականաբար, հեղինակը ոչ պատահականօրէն է իր փոքրիկ հերոսին կոչել հայոց գրերի գիւտարարի անունով:

Նանէն իր հեքիաթներում հիւսում է այնպիսի պատումներ, որոնք ընթերցողներին յուշում են աչալուրջ լինել սեփական վարքագծի, սովորոյթների, նպատակների հարցում: «Թէ ինչպէս ծաղկեցին կակտուսները», «Արեւի օգնականները», «Անանուն ձնեմարդը», «Ուրախ անտառը» հաքիաթներում մենք գործ ունենք այնպիսի հերոսների, իրադարձութիւնների այնպիսի շրջադարձերի հետ, որոնք հաւաստիացնում են, որ աշխարհը կարող ես վերափոխել հենց քո ձեռքով: Որ գեղեցկութեան ուժը վարակիչ է՝ վկայում է «Թէ ինչպէս ծաղկեցին կակտուսները» հեքիաթը. «*Այդպէս քիչ առ քիչ թագաւորութեան կակտուսները ծաղկեցին: Այլեւս վէճ ու կռիւ չկար այնտեղ, կակտուսները մեղմացել էին, աւելի զբաղուած էին իրենց բողբոջները հաշուելով եւ իրենց ու միւսների ծաղիկների գեղեցկութիւնը վայելելով: Նրանք այլեւս մէկմէկու չէին բոթբոթում, ծակում փշերով*» (էջ 37-38): Թերեւս, այս եւ համանաման մտքեր պարունակող այլ

[45] Նանէ, *Թեւաթափիկը*, էջ 25:

հեքիաթներում Նանէն հաշտեցումի, փոխըմբռնումի այլաբանական կոչ է ինչեցնում հայ հասարակության մասնատված շերտերին եւ հուշում, որ ներկայումս ստեղծուած ծանր իրավիճակից ելք գտնելու ամենաիմաստուն ճանապարհը հենց դա է:

Ուրախութեամբ, բարութեամբ, լոյսով միմեանց հետ կիսուելու խրատ է հնչում «Ուրախ անտառը» հեքիաթում. «*…մենք չենք գիտակցում, բայց բոլորս այստեղ կապուած ենք իրար, եթէ մէկը փխուր է՝ անտառը երջանիկ լինել չի կարող*» (էջ 52):

Հեքիաթներից որոշները առասպելի ոճով են հիւսուած: Այս բնորոշումը մասնաւորապէս տարածւում է «Արեւի օգնականները», «Թիթեռ ծաղիկը» հեքիաթների վրայ:

Հեղինակը հետեւողականօրէն հնչեցնում է հայրենի բնօրրանին, ազգային ինքնութեանը, մայր հողին կառչելու, դրանց հաւատարիմ մնալու հրամայականը: Ասուածի վկայութիւններն են «Ծիրանենին», «Դէպի տուն», «Թիթեռ ծաղիկը», «Փոքրիկ փերու նուէրը» հեքիաթները:

«Փոքրիկ փերու նուէրը» հեքիաթում իրապատումն ու հեքիաթը միաձուլուած են: Հեքիաթի պայմանականութիւնը կառուցւում է Արցախ աշխարհի կարօտի յենքով, եւ մենք տեսնում ենք, թէ որքան այժմէական հնչեղութիւն կարող է ունենալ հեքիաթը: Այստեղ իրականութեան եւ երազանքի բախում կայ: Նանէն փորձում է մեղմել նուիրական երազանքի իրականացմանը հասնելու անհնարինութեան փաստը: Նա կախարդական լապտեր է նուիրում հեքիաթի հերոսուհի Մարիամիկին՝ փոքրիկ փերու ձեռամբ, բայց եւ խորհելու մղում մեզ՝ մեծահասակներիս, որպէսզի գիտակցենք մանկական պարզ երազանքներն իրականացնելու մեր անզօրութիւնն ու չստեղծենք այդ երազանքները փշրելու վիճակներ:

Ի մի բերենք. *Թեւթեւիկը* մի գունագեղ աշխարհ է, որն ընթերցողի հետ խօսում է իմաստուն, նուրբ, թրթռուն լեզուով ու գեղանկարչական վառ պատկերներով:

Բանաստեղծուհի Նանէի չափածոյ երկերի մեր վերլուծութիւնն ամփոփելով հեքիաթների ժողովածուին անդրադարձով՝ մենք նպակտակ ունենք վերահաստատելու աւանդական այն հաւատալիքը, թէ իւրաքանչիւր դժուար իրավիճակ կարող է հագուցալուծուել հեքիաթի յանգոյն, որ երկնքից կարող է ընկնել երեք խնձոր, որ բարու ճանապարհը, թէկուզ տատասկոտ ու դժվուար, այնուամենայնիւ, անկասելի է:

Ինչպէս բազմիցս նշուեց այս ուսումնասիրութեան մէջ, Նանէ բանաստեղծն ու նրա քնարական հերոսը բոլոր պարագաներում չեն կորցնում իրենց հաւատը, նրանց հայեացքը միշտ երկնքին է, Բարձրեալին: Նրանք այդ հաւատի անդաւաճան սպասաւորներն են, եւ այդ հաւատով են լցնում նաեւ ընթերցողի հոգին:

LITERATURE, BISECTED BY WAR
(AN OVERVIEW OF THE POETRY OF NANÉ [NELLY NAZARIAN])
(SUMMARY)

KARINE RAFAELYAN (karine.rafaelyan@mail.ru)

The 44-day war in 2020 that caused the loss of the self-proclaimed independent state of Artsakh and deportation of its indigenous Armenian population split contemporary Armenian literature.

To validate her claim, the author focuses on the poetry of Nané (Nelly Nazarian) and as a post scriptum briefly reviews her latest book, a compilation of fairy tales, named *Tetevig*. She compares the content of the books Nazarian published before the 2020 war to the one which was published after 2020, namely "*Antsum Gyankov*" (Getting through Life).

The author notes that the themes of the poetry published in Nazarian's pre-2020 books include issues of nature, fatherland, love, God, the complicated challenges that humankind faces. On the other hand , there is a significant shift in her post-2020 poetry as the poems picture life during and after the war.

Eventually, the author, makes a further shift from the post-2020 depressive years and mood, as her fairy tale book opens up ways to bypass and overcome the heavy feelings and thoughts of the war and cross into an optimistic avenue of hope for the future.

The author notes that notwithstanding the fact that only one author has been singled out in this study, yet there is a long list of authors whose poetry reflected the bisection and split that occurred in their perceptions and life after the 2020 war.

ԹԱԴԵՒՈՍ ՏՈՆՈՅԵԱՆ. ԱՇԽԱՐՀ, ՈՐ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԳՈՅՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ (Բ.)[1]

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
vachik_grigoryan@mail.ru

ԵՐԿԻՐԸ ԿԸ ԴԱՌՆԱ՞Յ ԵՐԿԻՆՔ

Երկրից յեփոյ ժողովածուն իր շարունակութիւնը ստանում է զուտ տրամաբանական իմաստով *Երկնքից առաջ* ժողովածուի մէջ: Քնարական հերոսի ճանապարհորդութիւնը յստակօրէն ցուցադրում է Երկրի ու Երկընքի՝ որպէս միմեանց կապուած փոխադարձ «անօթների» գոյութիւնը: Այստեղ թեման ինքնին տիեզերական է, քանի որ անեզր են իրարահալած մտքերի ու ապրումների, մեղքի ու քաւութեան մղում-պահանջների սահմանները: Որքան շատ է Երկրի վրայ մեղքը, այնքան մեծ է Երկնքին դիմելու, նոր չափումների մէջ մարդկային ինքնութիւնը չկորցնելու ցանկութիւնը:

Այս տարբեր, իրականում մէկ ամբողջական աշխարհի բացայայտումը Տոնոյեանի համար որոշակի սահմաններ չունի, քանի որ իրականում նրա քնարական հերոսը էութեան մէջ հաւասարակշռում է տարբեր թեւերը. մարդը ո՛չ հրեշտակ է՝ Երկնքին գերի, ո՛չ էլ կենդանի՝ Երկրին կապուած: Նա մարդ է՝ մարմին ու հոգի, որ քայլում է մեղաւոր հողագնդի արահետներով, բայց հոգու թռիչքով Երկնքի հետ է: Եթէ փակ է Երկինքը, ուրեմն չկայ եւ Երկիրը: Դրանք միասնական են որպէս ամբողջական՝ հակադրամիասնութեամբ ամբողջացող Տիեզերք, որտեղ կապող օղակը մարդն է: Նա հունցուած կաւի ծանրութեամբ չի կարող միայն Երկրում լինել, իսկ հոգու թռիչքով՝ միայն բացազատ Երկնքում: *Եթէ Երկնքում է, նրա մէջ կենդանի է Երկրի յուշը, իսկ եթէ Երկրում է՝ նրան սթափ են պահում Երկնքի ձայները:* Այսինքն՝ Տոնոյեանի բանաստեղծութիւնը անհող ու վերացական չէ, քանի որ խօսում է Երկրի վրայ ոտքերով ամուր կանգնած մարդու մասին, որ միտուած է դէպի երկինք, որտեղ հրեշտակները «սնուում» են Երկրի՝ նրա ներկայի ու հազարամեայ պատմութեան երակներից: Տոնոյեանի քնարական հերոսը ոչ թէ մեղաւոր *Երկիրը լքելու ցանկութեանն է յեփամուտ, այլ մարդու մարդացմանը,* Երկրի կայացմանը՝ մեղքերի բեռից թեթեւացման, ինքնահաստատման ուղիներով: Այս իմաստով նրա համար այլ Երկիր գոյութիւն չունի:

Ուրիշ ո՛չ մի տեղ չեմ կարող ապրել քո Երկնքի տակ,
Ուրիշ ո՛չ մի տեղ չեմ կարողանայ

[1] Ուսումնասիրութեան առաջին բաժինը՝ «Թադեւոս Տոնոյեան. աշխարհ, որ ընդլայնում է գոյութեան սահմանները (Ա.)», տե՛ս՝ *Հայկազեան հայագիտական հանդէս*, 44(2):2024, էջ 139-70:

Հանգիստ հող դառնալ։

(«Հայաստան, աշուն, վերջին չուն դրախտ»)

Երկրի գոյութեան երթը, որ իմաստաւորւում է Երկնքի առկայութեամբ ու նրա տեւական կանչով, որեւէ կերպ չի դառնում ապահով օրրան մարդ-արարածի համար, քանի որ գոյութիւնն ամէն պահի մաքառում է ու տառապանք: Երեւոյթի խորհրդանշական պատկերը «Զատիկ. հրաժեշտ մարմնին» բանաստեղծութիւնն է:

Քրիստոնէական եկեղեցու տաղաւար տօներից Զատիկը թերեւս ամենակարեւորն է իր խորհրդանշական բովանդակութեամբ: Բայց երեւոյթը՝ որպէս փրկութեան եւ զոհաբերման համադրում, իրականում դառնում է մահուան եւ յարութեան անանց խորհրդանիշ: Տոնոյեանը երեւոյթը դիտարկում է սեփական բանաստեղծական համակարգի տրամաբանութեան մէջ: Տիեզերակառոյցը նա դիտարկում է որպէս Երկնքի եւ Երկրի՝ միմեանց փոխլրացնող ոլորտներ: Երկինքը նաեւ տարբեր ոլորտներ ունի, թէեւ դրա մասին նա քիչ է խօսում, բայց եօթերորդ երկինքը նրա բանաստեղծութեան մէջ արտայայտւում է որպէս նպատակի իրականացման վերին սահման:

Հայ ժողովրդական բանահիւսութիւնը այս երկաստիճան կառուցակարգին աւելացնում է եւ անդունդը, թէեւ վերջնական իմաստով աւելի շատ շըրջանառւում է երկաստիճան կառոյցը: Տոնոյեանի բանաստեղծութիւնը յաճախ է անդրադառնում մեր դիւցազնավէպին, նրա հերոսներին: Բայց դա ոչ թէ բանահիւսական սիւժէի կամ նիւթի վերապատմում, մշակում-շարադրանք է կամ բանահիւսական նիւթի արծարծում, այլ ժողովրդական նիւթի բանաստեղծական իմաստաւորում, որ կապ չունի աւանդական ընկալումների հետ: Սա նշանակում է, որ տիեզերակարգի ժողովրդական պատկերացումները որոշակիօրէն սնել են Տոնոյեանի բանաստեղծական աշխարհի կայացման ընթացքը: Կրկնում ենք՝ ոչ թէ թեմաների, այլ աշխարհընկալման փիլիսոփայութեան առումով: Տոնոյեանի աշխարհը միտուած է ոչ թէ դէպի հողը, այլ դէպի Երկինք: Մարդու կայացման ընթացքը մշտատեւ է, այն որեւէ պահի կանգ չի առնում: Եւ որքան էլ ցաւալի է, կեանքը չի տալիս իրենով հրճուելու առիթներ, աւելի շատ են կորուստները, այն վրիպումները, որոնք ուղղելի չեն: Կամ էլ մարդուն յատկացուած ժամանակը քիչ է՝ դրանք սրբագրելու համար: Նոյնիսկ թւում է՝ վրիպումների պատճառները ոչ այնքան ենթակայական են, որքան գոյաբանական: Հետեւաբար բանաստեղծութեան տոնայնութեան մէջ ներքին պրկումը որեւէ կերպ չի թուլանում: Քնարական հերոսի մէջ եղած ապրումների, բարոյական կորուստների «լուծումները» միայն իրավիճակային կարող են լինել, իսկ վերջնարդիւնքում դրանք աւելի են սրւում: Պատճառները դուրս են մարդուց, հետեւապէս դրամատիզմը չի սպառւում ներքին լուծումով: Մարդու, կեանքի բովանդակութեան մէջ Երկրի դէմքով ներկայացող մարդը միահիւսում է ա-

ռօրէականն ու ողբերգականը, որ այս Երկրի հիմքում է՝ որպէս կառուցակարգ:

Խաչակնքում եմ լուռ, աւանդապահ՝
Հաւատ իմ կեանքի ամէն ատոմում,
Վերջը սա է միշտ՝ պատան ու տապան
Եւ… ոտաբոբիկ մուտքի արտօնում:

Իսկ բաժանման ու հանդիպման միջեւ
Մենակութիւնն է՝ կեանք յորջորջումով,
Որպէսզի արեամբ երազս շիջեն
Աչքերի առջեւ իմ հօր ու իմ մօր:

Ու էլ չի լինում ոչ մի ուղեցոյց՝
Բացի Խաչն ու Նա, որ պիտի ների.
Ես բաժանւում եմ իմ եկեղեցուց՝
Վրան արիւնոտ յուշը գամերի:

Կեանքի ընկալման նման դրամատիզմը դրա գոյութեան երթի արձանագրումն է՝ ընդհանուր ձեւակերպումներով, որոնք յանկարծ դառնում են մասնաւոր. կեանքը, որ բովանդակ մենութեան դրսեւորումն է, յանկարծ երեւում է իր արիւնամած դէմքով, որպէսզի առաւել որոշակի դարձնի քնարական հերոսի ողբերգութիւնը. երազը շիջել արեամբ մեծ ցաւ է, զաւակի երազը շիջել հօր ու մօր աչքերի առջեւ՝ ողբերգութիւն:

Պարզ է, որ իւրաքանչիւր անհատ անխուսափելիօրէն իր մէջ կրում է ողբակներ, որոնք գալիս են միջավայրից: Բայց դրութիւնը «փրկում» է վերերկրային ոլորտներին, կարճ՝ *Երկնքին հաւատացող անհատ-բանաստեղծը, որը ձերբազատւում է միջավայրի, երկրային մեղքերի բեռից ու ոտք է դնում բացարձակ ազատութեան սահմաններին:* Այստեղ արդէն անհատական յղացում-ոգորումները դառնում են անկրկնելի ու միջավայրից վեր, ոչ սովորական:

Ու էլ չի լինում ոչ մի ուղեցոյց՝
Բացի Խաչն ու Նա, որ պիտի ների.
Ես բաժանւում եմ իմ եկեղեցուց՝
Վրան արիւնոտ յուշը գամերի:

Բանաստեղծութիւնը Քրիստոսի զոհաբերման ու յարութեան տեսարանն է՝ սովորական մահկանացուի ճակատագրի ընթացքով բացուած: Երկրի անմարդկային կենսագրութիւնը գուցէ եւ փոքր-ինչ մեղմուէր՝ քրիստոնէութեան մարդասիրութեամբ կամ աստուածային սիրոյ ցօղումով: Բայց դա որեւէ կերպ տեղի չի ունենայ, քանի որ մարդկութեան փրկութիւնն ընթացել էր արեան հեղումով: Եւ դա չի կապւում միայն Քրիստոսի զոհաբերման պատմութեանը: Տէրը Մովսէսին եւ Ահարոնին պատուիրեց եգիպտացիներին կոտորելիս նոխազի արեամբ զատել իւրայիններին՝ դռան սէմին եւ շըրջանակի վերեւում նշան անելով (ԵԼՔ 12): Աստուած արեան նշանով զատեց իր ժողովրդին թշնամիներից: Համաձայն քրիստոնէական ուսմունքի՝ սա

նախանշանն էր Յիսուս Քրիստոսի (Գառն Աստծոյ) կամովին մահուան ընդունման եւ իր արեան հեղման՝ յանուն մարդկութեան փրկութեան: Քրիստոսն է այն յաւիտենական զոհը, որի միջոցով մարդն ստանում է մեղքերի թողութիւն, ապա կեանք եւ յարութիւն:

Ահա այս ողջ իրադարձութիւնների արդիւնքում ստացւում է արիւնոտ պատմութիւն, մինչդեռ թւում է՝ այն լինելու էր միայն մարդկութեան սիրոյ պատմութիւն: Նպատակն անցնում է արեան միջով, որից ձերբազատուել է ուզում Տոնոյեանի քնարական հերոսը («Ես բաժանւում եմ իմ եկեղեցուց՝ Վրան արիւնոտ յուշը գամերի»):

Երկրից բաժանուելու եւ Երկնքին միանալու մղումները քնարական հերոսին նախապատրաստում են վերերկրային ոլորտներին հասնելու, երկրային երեւոյթներից աւելի կատարեալ ու ամբողջական երեւոյթներին հաղորդակցուելու համար.

Բայց ինչ-որ մէկը ուրիշ գարունից
Ինձ ձայն է տալիս, ողջոյն քեզ, ողջոյն:

Երկրին հրաժեշտ տալու հարկադրական վարքը ցաւալի է ոչ այնքան սեփական կեանքը այստեղ աւարտելու համար, այլեւ այն պատճառով, որ Երկիրը արժանաւոր տուն չդարձաւ մեզնից յետոյ եկողների համար: Մինչդեռ Երկիրը մարդ էակի տունն էր, որտեղ մարդը իրեն կը զգար ամէնից ապահովն ու երջանիկը: Առանց Երկնքի Երկիրը նոյնն է, ինչ Մարմինը առանց Հոգու: Անհոգի Երկրում ոչինչ այլեւս չմնաց արժանահաւատ, որի համար կարելի էր ափսոսալ, միայն քարացած լռութեան մէջ մայրական սէրն ու ոգին է հսկում ամայացող շիրիմները:

Ամօթ, որ Երկիրն իմ չեղաւ Հօր պէս,
Որ չունենք Երկինք մեր Երկրի վրայ,
Որ շիրիմներին, երկինքներ որպէս,
Մայրերն են միայն արձանավկայ:

«Հրաժեշտ երկրին»

Երկրում ադամորդու մեղքերը շատ են, հետեւապէս կարօտաձեռք Մէկը, թերթելով նրա ճակատագրի գիրքը, առայժմ «մեզ ներել չի կարենում»: Մարդկութեան երթը ետեւից կործանումներ թողեց: Մարդը բաժանեց Երկիրն ու Երկինքը նրանց միջեւ, ովքեր էութեամբ հակադիր էին. Երկիրը՝ նըւաճողներին, իսկ Երկինքը՝ նրանց, ովքեր անձայն երազեցին դրա՝ Երկնքի մասին: Մարմնի եւ հոգու, ուժի եւ սիրոյ բանակների միջեւ բաժանումը խորացաւ ամբողջ Տիեզերքում: Մարդկութիւնը չկարողացաւ հաւասարակշռել Երկինքն ու Երկիրը, եւ ենթակայ մնաց աւելի Երկրի, ասել է թէ Մարմնի օրէնքներին ու պահանջներին: Մարդկութեան խուլ ու աղմկաձայն երթը սողալով անցաւ ու Երկնքին աղօթելու փոխարէն «հողին աղաչեց», հոգու տունը կառուցելու, հոգու տաճարը հիմնելու փոխարէն մարդկութեան խուլ, աղմըկաձայն կէսը հոգու համար արնոտ մահարձան կանգնեցրեց՝ Տիրոջը ելուզակի հետ խաչելով («Արնոտ մահարձան»):

Մարդկային հոգին, որ միտուած է երկնքին, ինքնակատարելագործուելու լայն հնարաւորութիւններ ունի, մինչդեռ մարմնի կարելիութիւնները այս իմաստով սահմանափակ են: Այդ պարագայում հոգին կարող է նոր մարմին առնել՝ լքելով նախկին կաղապարը («Վերջնականգառ»):

Երկինքը Տոնոյեանի բանաստեղծական կառոյցում դառնում է նաեւ Երկրի իւրատեսակ արտացոլքը: Ինչ կար Երկրում, կայ նաեւ Երկնքում, բայց զտուած, մարդկային հոգին Երկրից ոչինչ չի տանում: Նրան դիմաւորելու են բոլոր նրանք, ովքեր լքել են այս մեղաւոր աշխարհը: Տէրը «իմաստուն էտով» մարդկանց Տոհմածառը պտղաւորելու է գարունքի ցրտին («Տոհմածառի էտ»): Իսկ Երկրի վրայ անունով հինչեղ հայրենիքները եսասիրութեան երթով կործանում են փոքրերի կեանքը կամ էլ ստրկացնում են քաղաքակիրթ եղանակներով:

Եւ այնուամենայնիւ, որքան էլ աշխարհը ապականուած, որքան էլ Երկընքի ջանքերի արդիւնքում մեղաւոր Երկրի մեղքերը դառնան տանելի, այսաշխարհային կռիւների բովում անգամ եթէ յոգնենք, միեւնոյն է՝ այս Երկիրը միակն է, որտեղ յառնել է «հանճարը արաբի, հրեայի, հայի...»:

«Իմ մէջ են ապրում մարմինն ու հոգին» բանաստեղծութիւնը լաւագոյնըս վկայում է տարածութեան ու ժամանակի միասնական եւ օրգանական ընկալման մասին: Դրանք՝ որպէս փիլիսոփայական իրողութիւններ, արմատապէս տարբերւում են աւանդական ընկալումներից: Այստեղ դրանք աոօրէական կատեգորիաներ չեն, այլ տիեզերական: Բայց դրանց միասնութիւնը արտայայտուած է անհատական ընկալման մէջ՝ որպէս օրգանական ամբողջութիւն: Տարածաժամանակային փոխակերպումները քնարական հերոսի ներաշխարհում կատարւում են այնպիսի արագութեամբ ու ընթացքով, ինչպիսին մարդկային մտքի թռիչքն է, որի համար չկան անյաղթահարելի պատնէշներ: Ժամանակային շղթան չունի աւարտ, նրա նպատակը թւում է ընթացքն է՝ երբեք չընդհատուող:

Շրջածիրներին դառնում եմ հասու,
Ինչպէս տուն դարձող անառակ որդին,
Որ գալիս է՝ Հայր դառնայ երազուն,
Որ Հայրն էլ Որդի դառանայ վերստին...

Ժամանակի չընդհատուող հոլովոյթում մարդկային ոգին միտուած է երկընքին՝ որպէս յաւիտենութեան խորհրդանիշ, իսկ այդ պարագայում կեանքը՝ որպէս վերջաւոր էութիւն, բացակայում է նրա ընկալումներում: Տիեզերքում ամէն բան շարժւում է եւ երբեւիցէ որեւէ բան չի ուզում մեռած լինել:

Մեզ կը թուայ, թէ դեռեւս մենք կանք,
Ու տրուելու է մեզ կեանքը երկրորդ:
(«Մեզ կը թուայ...»)

Ամէն անգամ մաքառելով հոգու իրաւունքների պաշտպանութեան համար, սովորաբար մի կողմ է դրւում մարմնի, ասել է թէ Երկրի իրաւունքնե-

րը: Տոնոյեանի պարագայում իհարկէ դա այդպէս չէ: Մարմնի իրաւունքները պակաս կարեւոր չեն հոգու կողքին: Մարմինը իր ուժն ու գեղեցկութիւնը պիտի ունենայ՝ ոգին իր մէջ պարփակելու համար, մարմինը արժանի տունը պիտի լինի հոգու համար: Մինչդեռ մարդն անտեսել է մարմինը, ասել է թէ հոգին զրկուած է հանգրուանից: «Խաչը ծանր չէ, ես եմ անմարմին». սա ողբերգութիւն է մարդու համար: Հոգին գնում է ինքնակայացման ուղիով, աշխարհը միշտ է անաւարտ: Նա ծնւում է ու մեռնում դարձեալ: «Տեսնես երբեւէ նյութս կը յառնի՞», թէ՞ շարունակելու է անաւարտ վիճակում մնալ: Ասել է թէ կը շարունակի հոգին անապաստան մնալ, համընդհանուր երթում՝ վտանգուած:

Ահա այս վտանգուած երթի ճանապարհին մշտապէս ներկայ է հոգու իրաւունքը պաշտպանող, նրա սահմաններն ընդարձակող անհատը, որ մշտապէս միտուած է հոգու կատարելագործմանը: Ստացւում է, որ մարդու նպատակը՝ որպէս Երկրագնդի բնակիչ, մարդու կայացման գործին նուիրուածութիւնն է.

Ես սոսկ ծառան եմ այն կիսատ գործի,
Որից Մարդու ցեղն ուզում է յոգնել:

Իսկ կայացման ճանապարհին մեծ է Քրիստոսի խօսքի, նրա փիլիսոփայութեան արժէքը: Նա իր կեանքով փաստեց ճշմարտութեան ուղին, բայց երբեք չպիտի անտեսել եւ մարդու՝ խօսքի ու գործի նշանակութիւնը, որ այսօր գրւում է եկեղեցու անարատ որմին:

Տոնոյեանի քնարական հերոսը չի դառնում աստուածային կամքի հլու կամակատարը: Նրա համար խստօրէն կարեւորւում է անհատական պատասխանատուութեան խնդիրը: Առանց *անհատական կամքի ու հետեւողական ջանքի* ոչինչ չի կարող իրականանալ, մարդը չի կարողանայ յաջողութիւններ արձանագրել: Ուրեմն՝ անհնարին է հնազանդօրէն առաջ տանել գոյընթացը, եթէ ամէնօրեայ ճիգեր չես գործադրում:

Մարդու պատասխանատուութիւնը բաւականաչափ մեծ է, քանի որ հարկադրուած է ամէնօրեայ ինքնահսկման ուղիով առաջնորդուել: Մոլորեալ Երկիրն արդեօք կարող է նաւարկող տուն դառնալ՝ առանց խախտելու Արեւակարգի կշիռը, իսկ նրա բնակիչը, - որ ընդամէնը մարդ է - ի վիճակի՞ է ապրեցնելու Տիրոջ օրէնքն ու կարգը եւ միաժամանակ պահել-պահպանել ամէն կաղապար՝ ազատութեան որոմի տեղատարափի տակ, որ ընդունակ է մարդու տունը քանդել:

Գրքի յաջորդ շարքը «Հայաստան, աշուն, վերջին չուն դրախտ: Աստծոյ մի գաւառ» խորագիրն ունի:

Ինչպէս սովորաբար Տոնոյեանի շատ ժողովածուներ ունեն Հայաստանին նուիրուած բաժիններ, նոյնը տեսնում ենք այստեղ:

«Հայաստան» խորագրով բանաստեղծութունը լաւագոյնս բնութագրում է Տոնոյեանի գրի ինքնատիպութիւնը: Հայաստանը պատկերների՝ անդնդախոր ձորերի կամ հասկերով լեցուն արտերի երկիր չէ:

Այստեղ խօսքը ժամանակի անդունդի մէջ ցեղի հոգեւոր գանձերի մասին է՝ աշխարհընկալման տիեզերական չափումների, որին հասել է ժողովուրդը դեռ պատմութեան արշալոյսին: Այդ ամէնի մէջ, ամէնից զօրաւորը *«կեանքի յամառումն»* է՝ որպէս դարերին ուղղուած մարտահրաւէր:

Ակնյայտ է, որ Տոնոյեանի բանաստեղծութիւնը սնւում է ժողովրդական բանահիւսութիւնից: Ժողովրդական իմաստութիւնից վերյառնած գաղափարը չէր կարող չներազդել բանաստեղծական խօսքի վրայ, եթէ այն կենդանի օրգանիզմ է ու չի կարող չհամզգալ անցեալը, դրա ոգին: Դեռեւս Գիլգամէշը անմահութեան ծաղիկը փնտռելու համար Հայաստան ուղեւորուեց[2]: Հայաստանը՝ որպէս անմահութեան երկիր, հին աշխարհում մեծ համարում ունէր: Տոնոյեանի խօսքում այս ամէնը իմաստաւորւում է հետեւեալ կերպ.

Այստեղ փթթում է անեզրական վարդ՝
Բոյրով եդեմի, գոյնով կենսադեղ,
Այստեղ մեռնում են եւ մահ, եւ աւարտ,
Անմահանում են՝ ապրելով այստեղ:
(«Իմ երկիրն՝ Աստծոյ մի գաւառ»)

Ահա այս անցեալի փորձից հանուած եզրայանգումը սոսկ երկրի արձանագրումը չէ: Գրողի համար իր՝ լոյս անթեղող հայրենիքը համընդհանուր քաոսի մէջ ապրող աշխարհի մէջ «ապրում է որպէս Աստծոյ մի գաւառ», եւ ուր է թէ այդ երկրի ափիշը բեղուն հաւատ հասցնէր «աստղին մի-գաւառ»: Պատահական չէ, որ նրա երկիրը անցեալի նկարագրով ու մարդկային որակներով դիտւում է որպէս «աստղաճամփի յուժկու թիավար»: Հայրենիքը ընդհանուր հոգու քաւարան է, այս իմաստով նրա դերը խիստ կարեւոր է դէպի Հաւատ ընթանալու մարդկութեան ճանապարհին:

Այսուհանդերձ, բանաստեղծական վերացարկումները, որ կապւում են հոգեւոր ոլորտներին, որեւէ կերպ չեն դառնում անկախ ու ինքնուրոյն: Երկրի «ձգողական ուժը» մշտապէս քնարական հերոսին պահում է Երկրի ուղեծրում

...Սակայն եթէ երկնքին մօտենանք, հասնենք,
Հողը դարձեալ ետ կը գայ, կ'ունենանք հասցէ:
(«Հասցէ»)

Առաջին հայեացքից դժուար է ասել, թէ որ ոլորտն է բանաստեղծի համար կարեւոր՝ Երկի՞նքը, թէ՞ Երկիրը: Բայց որ Երկիրը լեցուն է ներքին հակասութիւններով ու բանաստեղծական կիրքը այստեղ յաճախ է գնում նիւթը յաղթահարելու ճանապարհով, ուստի այս ոլորտում դրամատիզմն աւելին է թւում:

Երկի՛ր, դու դարձեալ թողել ես անտէր

[2] Վ. Գրիգորեան, Ա. Առաքելեան, Ն. Իսկանդարեան, *Եւրոպական էպիկական աւանդոյթը եւ «Սասնայ ծռեր» էպոսը*, «Մռաւ պրինտ», Երեւան, 2024, էջ 364:

Նրանց, որ քեզ տէր կանգնելու ելան,
Հպատակներիդ ուսին ես բարդել
Յղփացեալներիդ ախորժակն անդարդ,
Ու քամիները եկել են՝ հարթեն
Քո լեռները, որ ծոցերում եռման
Փայփայում են դեռ արեգակ ու հանգ:

Այս ամէնն աչքի առջեւ ունենալով հանդերձ՝ *բանաստեղծը չի անտեսում հոգեւոր արժէքները՝ որպէս ելքի դուռ:* Քառսուն գազ հորում յայտնուած ժողովուրդը ձեռքը Վերին գանձերին է մեկնել՝ իբրեւ փրկութեան յոյս:

«...Որ նախ պիտի լինի խօսքով» շարքում խօսքի արժէքը ներկայացնող գործեր են: Բնականաբար դրանք եւս առնչւում են հոգեւոր ոլորտներին:

Խօսքը Տոնոյեանի համար երեւոյթները իրողութիւններ դարձնելու միջոց է: Այն, ինչ կատարւում է, նախ պիտի լինի խօսքով, խօսքի մէջ: Սա թերեւս յայտնի ճշմարտութիւն է՝ դեռեւս Աստուածաշնչից եկող: Բայց Խօսքը բանաստեղծի համար նաեւ Երկինքն ու Երկիրը միացնող բացառիկ միջոցն է, որ Երկրից դէպի Երկինք տանող անցում-թռիչքուղին է ձեւաւորում: Այլ կամուրջ գոյութիւն չունի՝ խօսքի զօրութեամբ ու ուժով, որ մարդը կը կառուցի՝ երկնային ոլորտներին հաղորդակցուելու համար: Այդքան կարեւոր է Խօսքի արժէքը բանաստեղծի համար:

Որքան կարեւոր է Խօսք *ասելը*, նոյնքան կարեւոր է եւ այն *լսելը*: Ու երբ բանաստեղծի խօսքը ձեռք կը բերի ասացող-լսողի միասնական «կարգավիճակ», այդ դէպքում միայն Խօսքը կը հնչի որպէս Երկրին տիրակալ եւ ոչ իբրեւ անծանցեալ մի բան:

Վերջին հաշուով բանաստեղծն այն կարծիքին չէ, թէ իր խօսքը կարող է փրկել աշխարհը, նրա ընկալումներն այդչափ նախայարձակ չեն: Բաւական է, որ այդ խօսքը ներդաշնակուի տիեզերական համընդհանուր երթին:

Իմ խօսքը ոչինչ, ոչինչ չի ասում,
Յիշողութիւնն է նախորդ խօսքերի,
Որ տարածուել են երկնքում հասուն՝
Փարուած Անեզրի քնքուշ հոսքերին:

Եւ քանի որ Տոնոյեանի բանտեղծական աշխարհում Երկնքի ու Երկրի միջեւ կապը որեւէ պահի չի ընդհատւում, մարդու տեղափոխումը մի ոլորտից միւսը կատարւում է Խօսքի միջոցով, որ միացնում է Երկինքն ու Երկիրը, այդ *միացումը* արդիական է եւ ֆիզիկական իմաստով: Այսօր արդէն հրամայական անհրաժեշտութիւն է տիեզերական նոր հանգրուանների յայտնաբերումն ու տիեզերական մարմինների իւրացումը: Այսօր առաւել քան երբեւէ Տիեզերքը մօտեցել է մեզ, աւելի ճիշտ՝ մենք ենք մօտեցել Տիեզերքին: Նրա խելագարութեան հասնող անսահմանութեան առջեւ Տոնոյեանի բանաստեղծութեան մէջ վախ չկայ, քանի որ Տիեզերքը մէկ է՝ Աստղծու կողմից արարուած:

Սակայն անյայտ է՝ կը բաւի՞ արդդոք շրջանն իմ կեանքի,
Որ լուսատարիք ծիրս հասցնեմ աստղերում հեռու
Ինձ պէս միայնակ ապրող-արարող այն ինձնմանին,
Որին, ինչպէս ինձ, մի օր նոյն Տէրն է հիւրընկալելու:

Ու քանի որ նոյնն է Տիեզերքը մեր, ու մենք նրա մարմնի մի մասն ենք, նրան ճանաչելու, նրան հաղորդակցուելու մղումը մշտապէս հետեւելու է աստղանաւորդին, քանի որ անծայրածիր Տիեզերքին հաղորդակցուելիս Նաւորդը Տիեզերքի ծովանկարում հարկ է, որ գծի «քարտէզն իր անհերք»:

Իհարկէ, բանաստեղծը նկատում է եւ համընդհանուր Տիեզերքում այն անսպասելի վտանգները, որոնք կարող են ի յայտ գալ անսպասելիօրէն:

Նիբիրու մոլորակի մասին խօսակցութիւնները ծաւալուեցին, երբ 2009ի Մայիսին այն կարելի էր նկատել: Նիբիրուն 3600 տարուայ հեռաւորութիւնից յայտնւում է մեզ: Բայց դրա հետեւանքները Երկրագնդի համար կարող էին կործանարար լինել: Ահռելի չափերի արդիւնքում Երկրագունդը կարող էր իր ուղեծրից դուրս գալ: Բայց բանաստեղծի ընկալումներում առասպելական մոլորակի տիեզերական երթը կարող էր եւ միանգամայն այլ առաքելութիւն ունենալ: Արդեօք Նիբիրուի վերադարձը միայն կործանման նախանշան է, գուցէ դա բացարձակապէս այլ սկիզբ է մարդկութեան գոյընթացի սահմաններից դուրս, եւ կեանքը նոր պայմաններում միանգամայն այլ ընթացք ու աւարտ կ'ունենար.

Պայծառանում է երկնակամարում
Նաւամոլորակն առասպելական,
Ու իմ արեան մէջ էլ չի յամառում
Կեանքն այն, որ մեզ միշտ տարել է ի մահ:

Տոնոյեանը, իհարկէ, գիտե նաեւ հայ դասական բանաստեղծութեան մէջ արտայայտուած գաղափար-ապրումների մասին, որոնք առնչուել են աստղերի, տիեզերական շարժի ու մահուան հետ: Բայց դրանք կապւում են եւ ազգային աւանդներին՝ տիեզերական գաղտնիքների մէջ խորանալու անյագուրդ մղումով:

Գրիգոր Գուրզադեանին նուիրուած բանաստեղծութիւնները հայի՝ տիեզերական գաղտնիքների մէջ խորանալու մղումի հետ նաեւ այդ տիեզերական ներդաշնակութիւնը անաղարտ պահելու ձգտումի մասին են («Տարեց երկինք», «Հոգոցը մեռնող աստղի»):

Երկրագունդը մնում է ինչպէս ելքի, այնպէս էլ մուտքի դուռ աստղանաւորդի համար: Ադամորդին չի կարող մոռանալ տունը: Տունդարձի ճամփան անցնում է մարդ արարածի էութեան առանցքով, նա ամբողջական կարող է լինել միայն սեփական տանը.

Իմ սրտում՝ ահա, կենտ մի բանաձեւ.
Երկու կարօտը մի կեանք է, քանզի
Մէկով ես գնամ գուցէ անհասցէ,
Միւսով ետ գալ հասցընեմ հազիւ:

(«Աստղային բանաձեւ»)

Տիեզերական ճամփորդութիւնից յետոյ բանաստեղծի քնարական հերոսը մնում է երկրի վրայ: Նրա մղումները ինչքան էլ վերերկրային լինեն, որեւէ կերպ չեն կտրում իրենց ամուր կապերը Երկրի հետ, որտեղ խնդիրները շատ են ու կապուած են մեր հազարամեակների փորձին: Տիեզերական յարահոս ժամանակը փոխւում է ներկայով՝ շատ որոշակի խնդիրներով ու նպատակներով: Ագռաւաքարը՝ որպէս արքետիպ, ամենախորունկ խորհրդանիշն է հայ մշակոյթի պատմութեան մէջ: Բանաստեղծը դրա իմաստը դիտարկում է հակադիր ծայրաթեւերի ամբողջութեան մէջ: Այն մեզ համար դառնում է ինչպէս մուտքի, այնպէս էլ ելքի դուռ:

Երկու կողմում էլ Ագռաւաքարի
Ես եմ. եւ ներս, եւ… դուրս գալ եմ ուզում:

Ամէն ինչ մնացել է նոյնը, չեն փոխուել ցորենն ու գարին, բայց փլուզւում է հողը ոտքի տակ: Այս պարագայում, երբ հնար չկայ, մնում է մուտքի դուռը մեզ համար, որտեղ արհաւիրքներից գոնէ ժամանակաւոր հեռու կը պահենք մեր մարդկային որակները: Բայց որքա՞ն ժամանակ է հնարաւոր մենութեան մէջ մնալ: Այդ դէպքում արդէն կարեւոր է դուրս գալ Ագռաւաքարից՝ նոր կեանքով ապրելու համար: Ագռաւաքարն այստեղ Երկրի վրայ է, բայց նա զետեղարան է ոչ միայն ազգի զարմի, այլեւ երկնքի եօթերորդ հարկի ու սերունդների միջեւ եղած նաւարկող կամրջի:

Ժողովածուն եզրափակող վերջին բանստեղծութիւնը՝ «Երկիրն իմ բաժին», ունի «Ուղերձ որդուս» յիշատակումը: Իհարկէ, խօսքը եկող սերնդին է ուղղուած: Սերունդների միջեւ եղած կապն անխուսափելի է հենց ոգու իմաստով: Թէեւ հիասթափութիւն կայ ապրած կեանքի հանդէպ, որովհետեւ անճակատամարտ տանուլ տուած Երկինքն արդիւնքում մեզ «մի կարգին երկիր» էլ չթողեց, եկող սերնդի գործն էլ դժուարին է լինելու, եթէ կարող է՝ թող հօր երկիրը որդին իրեն վերադարձնի, իսկ այնուհետեւ բաժանի նրանց, ում սրտում որ մի կտոր երկինք կայ:

Մարդու կայացման ընթացքը անցնում է Երկնքով: Ելքը Երկիրը իր բարոյական նկարագրով, կենսաձեւով Երկնքի վերածելն է: Դա կատարուելու է անհատական ջանքի, ապա նաեւ հասարակութեան վերափոխման ուղիով՝ բարոյական արժէքներին վերադառնալու, հոգեւոր գանձերը հարստացնելու ճանապարհով:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՕԹՔ

Բնական է, որ գրողը խօսելով իր ժողովրդի պատմութեան, անցեալի ու ներկայի բարդութիւնների մասին, չէր կարող որեւէ կերպ չառնչուել *հաւատքին*: Թէեւ այնպէս չէ, որ մարդիկ իրենց վիճակը կարգաւորելու, դժուարութիւնները յաղթահարելու համար որպէս վերջին միջոց, դիմում են հաւատքին՝ մի տեսակ սոցիալական դժուարութիւնները յաղթահարելու մի-

ջոց, բայց Տոնոյեանի համար եկեղեցու քրիստոնէական ընկալումը՝ որպէս մշակութային երեւոյթ, դառնում է կարեւոր բոլոր առումներով: Այն մեծ չափով ձեւաւորում է մեր մշակոյթի դէմքը՝ որպէս ինքնութեան դրսեւորման կարեւոր ձեւ: Պատահական չէ, որ նրա ստեղծագործութիւնների մէջ որոշակի շերտ են այն գործերը, որոնք կառուցւում են հոգևոր բառապաշարի ու քրիստոնէական խորհրդանշանների գործադրմամբ:

Փորձութիւնն Աստծոյ մենաշնորհն է,
Իմ անձն ո՞վ է, որ ուզենայ փորձի
Այն նախնիներին, ում պարտքն էր օրհնել
Մեր Թուրը Կայծակ, Խաչն ու մեր Հօր Ձին:

Չարն ինչքան էլ որ ուզենայ փորձի,
Ասում եմ՝ մի՛ տար ի փորձութիւն, Տէր,
Ես սոսկ ծառան եմ այն կիսատ գործի,
Որից Մարդու ցեղն ուզում է յոգնել:

Այստեղ գործածուած բառերն ու կապակցութիւնները՝ Աստուած, փորձութիւն, մենաշնորհ, օրհնել, չար, մի՛ տար ի փորձութիւն, Տէր, վերջնարդիւնքում ստեղծում են ոչ թէ կրօնական բովանդակութեամբ բանաստեղծութիւն կամ տրամադրութիւն, այլ միանագամայն նոր տրամադրութիւն կամ փիլիսոփայական եզրայանգում: Աստծու կողմից դարերի մէջ փորձութեան է ենթարկուել մեր Կայծակ Թուրը, Խաչն ու մեր Հօր Ձին: Ու եթէ չարը ուզում է փորձութեան տանել, մարդն իր կարողութեան ու յոյսի չափով դարձեալ Տիրոջն է դիմում՝ վտանգաւոր ընթացքը կանխելու յոյսով: *Ստացւում է, որ մարդը երեւոյթների հոլովոյթում հեգեւանք է եւ ոչ թէ պատճառ:* Նա միայն լաւագոյն դէպքում պիտի կարողանայ առանց յոգնելու շարունակել ճանապարհը, որ գծել է Աստուած, իսկ դա մարդուց Աստուած գնացող ճանապարհն է՝ հազարամեակների լուծելիք խնդիր: Նրան այլ բան չի մընում, քան ուղին շարունակելը:

Հոգևոր առարկաների, երեւոյթների, բառաձեւերի գործածումը Տոնոյեանի պոեզիայում ոչ թէ տեքստը ձեւաւորող միջոց է, այլ ներծուլուած է տեքստի խորքում: Ինչքան հնարաւորութիւն է տալիս կրօնական թեման, ասելիքը կարող էր երեւակայութեամբ ծաւալուել: Կրօնը բանաստեղծութեանը բաւականաչափ մօտ է երեւոյթների մատուցման ձեւով: Երկուսի պարագայում էլ մեծ է *երեւակայութեան* դերը: Բայց Տոնոյեանը չի տրւում երեւակայութեան գայթակղութեանը: Նրան չի գրաւում քրիստոնէական սիւժէն կամ պատմութիւնը: Նրան գրաւում է տեքստից վերացարկուած գաղափարը, որ մարմին է առնում ներկան իմաստաւորող իրադրութեան մէջ: Անհատի ողբերգութիւն է դառնում իրենից յետոյ եկող սերունդներին որեւէ կերպ հաղորդակցուելու անկարողութիւնը: Իսկ չէ՞ որ նրանց՝ այս աշխարհում ապրելու համար այնքան մեծ են եղել սերունդների, տուեալ դէպքում անհատի մաքառման ջանքերն ու զրկանքները: Ապագայից դիտուած հայեացքը պակաս դրամատիկ չէ, որքան ներկայից՝ ապագան դիտուածը: Ա-

հա թէ հոգևոր թեման ինչ կերպ է իմաստաւորում բանաստեղծի սէրն ու ափսոսանքը՝ եկող սերունդներին հաղորդակից դառնալու անհնարինութեան ֆոնին.

Ես եկայ աշխարհ ու ... հեռանում եմ,
Հագուստս մաշուեց, ու հոգիս մերկ է:
Նրանց համար, որ հագուստ դեռ ունեն,
Մխիթարութեան փոխարէն՝ երգեր,
Նրանց համար, ում դեռ չեն ասել «Կեր,
Այս է մարմինս», դէպի Անհուններ
Աչքերս յառած՝ մեռնում եմ յամառ
Ու հեռանում եմ՝ թողած սերունդներ:

Օրինակները ցոյց են տալիս, որ բանաստեղծին հետաքրքրում են ոչ թէ կանոնական թեմաները, մեկնաբանութիւնները, այլ ժողովրդական աւանդոյթով փոխանցուած ընկալումներն ու առաջին հերթին զուտ անհատական մեկնաբանութիւնները: Այս իմաստով քրիստոնէական թեմաները ոչ թէ նպատակ են, այլ ասելիքը արտայայտելու միջոց: Նա դիմում է կրօնական թեմաներին այնքանով, ինչքանով որ դրանք կան նրա քնարական հերոսի ապրումների, ընկալումների ոլորտներում: Դրանք արտայայտւում են այնքանով, ինչքանով որ կարող են ապրումների դրսեւորման միջոց լինել:

Բաւական է դիտել *Մոմի կաթիլներ* (2001) ժողովածուն, որպէսզի պարզ դառայ, թէ հոգեւոր խորհրդանշանը ինչպէս է դառնում անհատական ապրումները ձեւաւորող գերակայ միջոց:

Ամէն գիշեր,
Երբ համբուրուեն քո կոպերը,
Ես նրանց տակ կը գիշերեմ,
Ու որպէսզի
Երազները քո չմրսեն,
Ամէն գիշեր
Կոպերիդ տակ մոմ կը վառեմ:

Անընդհատ ծաւալուող գործողութեան մէջ թէեւ կարեւորվւում են առարկայական պատկերները, բայց քիչ չէ եւ տարածուող յոյզը: Բայց շարքում կարեւորը մարմինը եւ հոգին միասնաբար՝ որպէս ամբողջական մարմին, տեսնելու բանաստեղծական կարողութիւնն է՝ առանց ճիգերի:

Դու երեփ մոռացել ես,
Էլ չես յիշում
Աւերուած վանքն ու խորանն այն,
Ուր կանգնեցիր աչքերդ փակ՝
Որպէս արծաթ մի աշտանակ,
Քո ուսերին ես վառեցի
Համբոյրների մոմերն անձայն,
Ու քնքշօրէն իրար գրկած՝
Մենք Աստծու մօտ վերադարձանք...

Պատկերները՝ աւերուած վանքի, արծաթեայ աշտանակի՝ դրա ուսերին վառուող անձայն մոմերը խորհրդաւոր ու լուռ պատկերներ են յարաբերակցում՝ համբոյրներից ծնուող կրակներ, երբ վերացական, հոգեւոր թեմաները ետ են մղւում՝ առաջնութիւնը մի պահ թողնելով աշխարհիկ զգացողութեանը, որպէսզի յաջորդ պահին հոգու եւ մարմնի վերերկրային դաշինքն իր ապահով հանգրուանը գտնի. «Մենք Աստծոյ մօտ վերադարձանք…»:

Տոնոյեանի *Մոմի կաթիլներ* ժողովածուի բանաստեղծութիւնները իւրատեսակ «հայկական թանկաներ» են: Ճապոնական մշակոյթում դեռեւս Ը. Դարում գրի առնուած այս ձեւերն իրենց ծաղկումն ապրել են Ժ.-ԺԳ. դարերում: Հնագոյն այս ժանրը յստակ կառոյց ունի՝ 31 վանկերով (5-7-5-7-7) անյանգ հնգատող: Տոնոյեանը, իհարկէ, նպատակ չի ունեցել այս ժանրով գործեր ստեղծել, տողերը 4ից մինչեւ 9-10ի կարող են հասնել: Ես նկատի ունեմ թանկաների արտակարգ նրբագեղութիւնը, լակոնիկ ձեւի մէջ ասելիքը մատուցելու հմտութիւնը: *Մոմի կաթիլներ*ը հենց այս իմաստով է նման «թանկաների»: Նոյնիսկ կառուցուածքով դրանք մօտենում են այս ժանրաձեւին: Առաջին երեք տողերը կարող են առաջադրել հիմնական խնդիրը, իսկ երկու տողերը՝ դառնում են ամփոփում.

Լոյսերը մարիր,
Մարիր լոյսերը,
Թող լոկ մոմերը քո աչիկների,
Թող պարանոցդ իմ շնչից հալուի,
Ինչպէս որ բոցից ուսերը մոմի:

*Մոմի կաթիլներ*ը կառուցուած է այլաբերութեան տարբեր ձեւերի համադրումներով, քանի որ այլ կերպ չէր էլ լինի, քանի որ սակաւաթիւ բառերով շատ բան ասելու լաւագոյն ձեւը *տրոպի* ձեւերի լայն կիրարկումն է: «Սիրոյ մոմեր» շարքում աւելի գերակշռում է *կարմիրը*: Այն յարակից թեմաներով տարածւում է բանաստեղծական փոքրիկ կտաւի տարածքով մէկ. կարմիրից արտածուող ջերմութիւնը չի նուազում.

Քո կոպերը երկու կակաչ են կոկոնում,
Երբ նայում ես մոմի բոցէ շրթունքներին.
Զու՜ր ես մարում համբոյրների մոմերը իմ,
Կակաչների ողջ հովի՜տ կայ իմ աչքերում…

Նոյն կերպ՝

Երբ հագնում ես ալ կարմիր,
Մոմի բոց ես թրթռուն,
Ու թւում է յանկարծ ինձ՝
Սրտիս տեղ մոմ է վառւում…

Կարմիրը յարաբերակցւում է արեանը, դա ինչպէս կենսական ուժի, այնպէս էլ կործանման խորհրդանիշն է: Դրանք փոխկապակցուած են: Սիրտը մոմով «փոխարինելու» գիւտը սիրտը դարձնում է աւելի փխրուն ու ան-

պաշտպան: Նոյն կերպ՝ հմտօրէն օգտագործել է սեւ գոյնը՝ առօրեականի մէջ կեանքի դրամատիկական թեւը նրբօրէն ներկայացնելու համար.

Դու լաց եղար աչքերդ փակ,
Մոմի խոշոր արցունքներով,
Արցունքներդ սրբող մատիս
Մնացել էր...
մի սեւ փետուր...

«Մայրական մոմեր» շարքը հոգևոր խորհրդանշանները գործադրելու ճանապարհով Տոնոյեանը նոր իմաստաւորմամբ է ներկայացնում մեր գըրականութեան մէջ մօրը նուիրուած գործերը: Մօր նուիրուածութեան մասին բազմաթիւ բանաստեղծութիւններ կան: Տոնոյեանը ասելիքին ինքնատիպ ձեւ է տալիս: Բայերի կուտակմամբ ստեղծում է «մեծ պատմութիւն», որտեղ առաջադրուած խնդիր-պատմութիւնը իր եզրայանգումն ունի.

Մայրս ասում էր. «Որդիս,
Աստուած է քեզ պահելու»,
Ու դառնալով մոմ՝ վառուեց,
Որ շահի սիրտը Աստծու...

Նման կառոյցը բնորոշ է այս շարքի բոլոր բանաստեղծութիւններին, դրանք ունեն առաջադրուած խնդիր եւ եզրայանգում: Երեւոյթները ներկայացուում են մեղմ տոներով, ոչինչ չի բարձրաձայնւում, դրանք շշնջոցներ են, որ ասւում են նախ՝ դրանք արտաբերողի, ապա եւ մնացած մարդկանց համար: Ինչպէս կարող է շշնջալ եկեղեցում մոմ վառող հաւատացեալը՝ լուռ ու իր մէջ կենտրոնացած, կողմնակի ձայներից ու հովերից նոր վառուող մոմը պաշտպանելու ջանքով: Բանաստեղծն ամէն անգամ վախենում է՝ ձայներից ու յանկարծահաս հովերից վտանգուած տեսնել իր վառած հերթական մոմը: Նրան մնում է ամէն անգամ ափերով պատսպարել՝ սիրոյ, յոյսի, երկիրն ու երկինքն իրար առնչող աստուածային լոյսերը:

Իհարկէ, արուեստի ցանկացած ստեղծագործութիւն պայմականութեան որոշակի մասնաբաժին կամ տարր ունի: Կարեւորը դրանից հնարաւորինս հեռու մնալն է: Անկեղծութիւնը ամենակարեւոր որակն է Տոնոյեանի պոեզիայի: Ես չէի ասի, թէ դրանք աղօթքներ են, բայց վստահաբար կարող եմ ասել, որ նրա բանաստեղծութիւնների գերակշիռ մասը անցնում է այն ճանապարհով, ինչով որ ի յայտ է գալիս աղօթքը: *Պոեզիան կարող է ծնունդ տալ աղօթքին եւ բանաստեղծութեան միջոցով մարդուն հաղորդակցել Աստծուն:* Այս մօտեցումն ակնյայտ է Տոնոյեանի բոլոր ժողովածուներում: *Նա բանստեղծական խօսքը դարձնում է միջոց՝ մարդուն հաղորդակցելու համար բացարձակ կեցութեանը, հեւտեւաբար եւ բացարձակ ճշմարտութեանը:* Մարդը՝ որպէս հոգու եւ մարմնի հակադրամիասնութիւն, հանդէս է գալիս բոլոր շարքերում: Բայց դրանք աղօթքներ չեն դասական իմաստով: *Աղօթքը մարդու եւ Աստծու միջեւ երկխօսութիւն է, բանաստեղծի խօսքը թէեւ երկխօսութիւն է, բայց սեփական «Ես»ը առաջնային պլան բերելու եւ իր*

ապրումները հանրային դարձնելու ցանկութեան մէջ է, ինչը բացառում է աղօթքի պարագայում:

Բնորոշ է «Ես որպէս հին օրերի աղօթարար» բանաստեղծութիւնը, որ «Չարենցի ձայնը» ենթավերնագիրն ունի:

Իհարկէ Չարենցի ողբերգութիւնը՝ ազգային անմեկնաբանելի, բայց որոշակի ճակատագրի հետ կապուած, դժուար է արտայայտել նոր բառերով ու պատկերներով, ինչին հասել է Տոնոյեանը:

Նա շնչում է հեռու ու առնական մի օր,
Մենք բիբել ենք դարեր մեր նիզակով օրն այդ,
Բայց նա արեւի տակ գլորուել է յաւէտ
Ու չի թողել՝ իրեն մենք մօտենանք:
Ու՞ր է գլորւում այս արեւը, որ կարծես
Որդան մի գնդիկն է իմ ցեղարեան,
Ու մենք ճի՛շտ ենք անում, որ գնում ենք այսպէս՝
Երկրի բախտին հլու,
Երկրի բախտին խոնա՛րհ:

Մեր հաւատը ինչի՞, ինչի՞ չի վերածուել՝
Սրի՛,
Վանքի՛,
Խօսքի՛
Ու կարմիրի որդան,
Մինչեւ եկել, եկել

Վեհերոտ ու վեհոտ
Մի խաչքար է դարձել ճամփին մեր որոնման:

Այս տրամադրութիւններն ու առանձին բառերի գործածումը յիշեցնում են «Դէպի լեառն Մասիս» եւ «Պատմութեան քառուղիներով» պոեմների իրարահալած ապրումների ներքին չդադարող ընթացքը, պատմութեան յարահոս աղէտներին որպէս ականատես ու երկրի բախին հլու եւ խոնարհ մեր վարքը: Բայց բանաստեղծութեան մատուցման ձեւը որպէս աղօթք է ընտրուած, ինչն արտայայտուած է եւ վերնագրում: Սակայն դա էլ քիչ է: Միայն ձեւը չի կարող երեւոյթը հնարաւորինս մօտեցնել անկեղծութեանը:

Բանաստեղծութեան սկիզբն ու աւարտը գրեթէ նոյն բառերն են ու նախադասութիւնը, իսկ իրականում դրանք տարբեր են: Սկիզբը անհրաժեշտ է, որպէսզի գիտակցութեան դաշտ բերուի մեր պատմութեան մէջ Աստծուն ամէնից մօտ, Աստծու հետ երկխօսութեան մտած Սրբին՝ Գրիգոր Նարեկացուն, որ օրհնում է հայոց նշխար հացի սեղանը:

Որպէս հին օրերի աղօթարար,
Որպէս Գրիգոր Նարեկացի՝
Ես պարզում եմ աջս՝
Որպէս խաչը արդար,
Եւ սեղանն եմ օրհնում
Մեր այս նշխար-հացի:

Բայց բանաստեղծը գիտի, որ կեցութեան եւ ասելիքի սկիզբն ու վերջը աստուածային ոգին է կամ դրան հաղորդակցուող հայոց Սրբի աղօթքը:

Ահա՝ պարզած աջս՝
Որպէս արդար Խաչը,
Այդ ճամփան եմ օրհնում նշխար-հացի՝
Որպէս հին օրերի աղօթարար,
Որպէս Գրիգոր Նարեկացի:

Այսուհանդերձ առկայ է մէկ այլ երակ, որ Տոնոյեանի բանաստեղծութիւնը մեծ չափով մօտեցնում է հոգեւոր թեմային կամ աղօթքին: Բանն այն է, որ բանաստեղծութիւնը ընկալելով որպէս կենդանի օրգանիզմ, որ շարունակութիւնն է անհատի ապրած կեանքի կամ դրա դրսեւորման ձեւերից մէկը, բանաստեղծը իր գործը դիտարկում է որպէս միջոցներից մէկը՝ հոգին մաքրելու («Տէր, մէկ այլ մարմին տուր ինձ, ես սրտանց//Մեղքն իմ քաւել եմ ուզում, ուստի՝ թոյլ տուր՝ դեռ ապրեմ»), ապա նաեւ այդ ուղիով երկնային համընդհանուր ոգուն հաղորդակցուելու կամ դրան միանալու համար:

Ինձ մնում է լոկ՝ Ձիրքով Ստեղծումի հարազատ մնամ
Իմ Հօրենական Նմանողութեանն ու Չարչարանքին,
Որ կարողանամ մի անգամ կանգնել խաչին յանդիման
Ու հանապազօր հացի պաշարով բարձրանամ երկինք:
(«Հողերկրպագու անձս»)

Իհարկէ բանաստեղծի յղացումներում առաջնային չեն դառնում հոգևոր ընկալումները, սիւժէները, խորհրդանիշերը: Նրա համար կարեւորը ներաշխարհից բարձրացող մղումն է, որ խօսքը տանում է դէպի ոգին, մօտեցնում աղօթքին՝ որպէս ինքնախոստովանութեան բարձրագոյն ձեւ: Միանգամից ասենք, որ բանաստեղծութիւնը ոչ թէ աղօթքին հասնելու ընթացքով է ձեւաւորւում կամ իմաստաւորւում, այլ խօսքը աղօթողի անկեղծութեան, նրա ակնածանքի մասին է: Բանաստեղծը երբեք էլ նպատակ չունի իր խօսքը վերածել աղօթքի, իրականում նա բանաստեղծութիւնը աւելի բարձր է դիտում, քան աղօթքը: Բանաստեղծի խօսքը՝ որպէս մաքուր ապրումների ու խոհերի արտայայտութիւն, մարդուն հաղորդակցում է վերին ոլորտներին՝ որտեղ հոգին փորձում է Երկրի վրայի մեղքերը չէզոքացնել կամ էլ տանելի դարձնել մարդ-արարածի գոյընթացը:

Այս թեման ամփոփելու համար ասենք, որ Տոնոյեանի ժողովածուներում քրիստոնէական բարոյականութեանն առնչուող հարցադրումները ոչ այնքան քրիստոնէական, այլ մարդկային բարոյականութեան մասին են: Լաւ թէ վատ՝ նշանակութիւն չունի: Դրանք կանոնական պահանջների արտայայտութիւն չեն, այլ անհատական մղումների: Այդ պատճառով էլ նրա բանաստեղծութիւններում ներքին լարումը չի թուլանում:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՏԻՊԸ

Ընդունելով Տոնոյեանի բանաստեղծութեան նոր տարածաժամանակային չափումների ու տեղավայրի ինքնատիպութիւնը՝ որպէս երեւոյթների բանաստեղծական իմաստաւորման գլխաւոր միջոց, կարևոր է անդրադառնալ եւ այդ բանաստեղծութեան ստեղծման տիպին:

Ստեղծագործական գործընթացը միանգամայն ինքնատիպ երեւոյթ է ամէն գրողի համար: Մեզ համար կարեւոր է, թէ ինչ ճանապարհով է գրողը ստեղծում իր գործերը: Ստեղծագործական երեւակայութիւնը պայծառանում է տարերային յոյզերի՞ արդիւնքում, թէ առաջնայինը դառնում է միտքը: Ֆրանսացի հոգեբան Ռիբօն տարբերում է ստեղծագործական երեւակայութեան երկու տիպ՝ իրենց երեք փուլերով: Առաջին. այստեղ իշխում է առաջնորդող գաղափարը կամ խնդիրը, որ լուծման կարիք ունի: Սա առաջին փուլն է: Այնուհետեւ ի յայտ է գալիս լուծման բացայայտումը: Սա երկրորդ փուլն է: Այնուհետեւ հետեւում է իրականացումը կամ գեղարուեստական իրացումը: Սա երրորդ փուլն է: Երկրորդ տիպ. այստեղ նախորդում է անորոշ, չգիտակցուած վիճակը, դրան հետեւում է գաղափարի յայտնաբերումը, սա երկրորդ փուլն է: Այն աւարտւում է մշակմամբ ու գաղափարի զարգացմամբ: Սա երրորդ փուլն է: Մտաւոր եզրայանգումներին հակուածութիւն դրսեւորող: Այս տիպերը չեն խօսում բարձր կամ ցածր երեւակայութեան մասին: Քիչ չեն եւ Տոնոյեանի բանաստեղծութիւնները, որոնք կարող են երկրորդ տիպին պատկանել, բայց նրա բանաստեղծութիւններում գերակշռում է առաջին տիպը: Իհարկէ երկու դէպքում էլ բանաստեղծը հետեւողական ապրումների ու մտքի լարման ճանապարհով ձեւակերպում է խնդիրն ու դրա լուծումը: Վերջին հաշուով կարեւորը ստեղծուած արդիւնքն է, ոչ թէ երեւակայութեան տիպը:

Սահմանումներ Հայաստանի համար (2015) ժողովածուն գրուած է ըստեղծագործական երեւակայութեան առաջին տիպով: Դրանք գրուած են հատու տողերով՝ առանց մակդիրների չարաշահման ու երբեք չթուլացող դրամատիզմի չափաբաժնով: Նախ հրապարակման տարեթիւը խօսում է մեծագոյն կորուստների մասին եւ երկրորդ՝ ներկան որեւէ կերպ չի թուլացնում դարից աւել ծգտող ցաւը: Անցեալն ու ներկան մշտապէս երկխօսութեան մէջ են: Բայց ինչպիսին էլ լինի առաջադրուած խնդիրը կամ դրա լուծման ընթացքը, միեւնոյն է՝ բանաստեղծական խօսքը մշտապէս պահում է քրիստոնեայի դասական կերպարից եկող մի երանգ, որը հնարաւորութիւն է տալիս ելք գտնել, շարունակել ուղին՝ այն հաւատքով, որ քարքարոտ ու արիւն խմող արահետները հանելու են մարդուն արժանի ուղիների: Երկիրը իր անցեալով ու ներկայով մնում է անփոխարինելի, միակ ու անկրկնելի տունը տիեզերքում:

Քեզանից հեռու ուրիշ ոչ մի տեղ
Չունեմ գնալու՝ Երկնքից բացի,
Հո՛ղ իմ, չունեցար սրտացաւ մի տէր՝

Մի քիչ աղ խառնէր քո ցամաք հացին:

Քեզանից հեռու ուրիշ ոչ մի տեղ
Չունեմ գնալու՝ Երկնքից բացի,
Հո՛ղ իմ, ծնուե՛լ է Մանուկդ միթէ,
Որ մանկանց ջարդ է ու այսքան կացին:

Քեզանից հեռու ուրիշ ոչ մի տեղ
Չունեմ գնալու՝ Երկնքից բացի
Քանզի ուզում եմ ապրե՛լ, ապրե՛լ դեռ
Հացով արդար ու ո՛չ միայն հացիւ:

Առաջին երկու տողերը, որ Երկրին հաւատարիմ մնալու բացարձակ հաւաստիացումներ են, դառնում են նախահիմք՝ օրուայ ողբերգութիւնը աստուածաշնչեան պատմութեամբ իմաստաւորելու: Գուցէ ծնուե՛լ է Մանուկը՝ գալիքի պահապանը, հակառակ դէպքում ինչպէ՞ս «հիմնաւորել» պատմութեան՝ մեզ հրամցրած ծաղրը. «Որ մանկանց ջարդ է ու այսքան կացին»: Բայց անելանելի թուացող ուղին յանգում է հոգեւոր որակներով ապրելու փափաքին: Այդ պարագայում արգելքները հեշտ են յաղթահարուելու:

Բանաստեղծի համար Հայաստանը իր անցեալով, պատմութեան զոհասեղանին դրուած կորուստներով, ապրելու գերեզմանակուր տառապանքով առաջ ընթանալու յամառութեամբ Հայաստանը դառնում է «մոլորակի խարիսխ»: Ամենամեծ կորուստներն ու զրկանքները չեն կարողացել հայի մէջ սպանել ապրելու, գոյատեւման յոյսը:

Տոնոյեանի բանաստեղծութիւններն իրենց ծաւալուող տրամադրութեամբ ժամանակավրէպ կամ յանկարծահաս երեւոյթներ չեն, եթէ մասնաւորապէս խօսքը վերաբերում է հայրենասիրութեանը: Տոնոյեանի պարագայում դա ոչ այնքան հայրենասիրութեան թեմա է, որքան ազգային մշակոյթի ընդերքից եկող որակ: Ոչ թէ պետք է խօսել հայրենասիրութեան մասին, այլ պարզապէս լինել հայրենասէր: Հենց այդպիսին է գրողի պոեզիան: Դրա համար էլ նրա խօսքում չկայ հրապարակախօսականի տարրը կամ կեղծ պաթոսը: Բառը գրւում է, քանի որ ծնւում է, բառը «դրսից» չի կանչվում, որ ասելիք բերի: Բառը անկեղծութեան դրսեւորումն է: Ահա «Տանս չափ» բանաստեղծութիւնը:

Ես մտածում եմ մէն-մի Հայաստան՝
Տանս չափ, բոլո՛ր հայերի համար,
Յամառ օրէնքով, երկնքով վստահ,
Ստահակուածի խոհերից ազատ,

Տանիքների տակ՝ առնական ուսեր,
Ու սէր մանկածին, տիեզրի Նորմարդ,
Արդարութեան հետ նաեւ արու սէր՝
Ուսելու համար գրերը յուսատ:

Ուսելու համար գրերը յուսատ

Ես մտածում եմ մէն-մի Հայաստան,
Ստահակուածի խօսքերից ազատ,
Տանս չափ, բոլո՛ր ազգերի համար…

Խօսքը Հայաստանի մասին է: Բայց ո՛ր Հայաստանի: Տան չափ տարածք ունեցող, բայց աշխարհի ազգերին իր մէջ տեղաւորելու ընդունակ Հայաստանի մասին: Իրադրութիւնն ակամայից յիշեցնում է Աբգար թագաւորի նամակը՝ գրուած Յիսուսին: Աբգարը հրաւիրում է Աստծու որդուն գալ իրեն բժշկելու, «ես մի փոքր եւ գեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բաւական է»[3]: Ոչ մի երկրի թագաւոր իր քաղաքը համաձայնութեամբ ու սիրով չի կիսել մէկ ուրիշի հետ: Աբգարի համար իր «փոքր եւ գեղեցիկ քաղաքը» միանգամայն բաւական է երկուսի համար, քանի որ խօսքը ոչ թէ քաղաքը կիսելու, այլ քաղաքը մարդկանցով հարստացնելու, գեղեցկացնելու մասին է, ոչ թէ նիւթականը, այլ մարդկային հոգեւոր արժէքները առաջնային դարձնելու մասին: Բանաստեղծը չի ասում, որ իր տունը փոքր է ու ապրելու համար անյարմար՝ փոքրութեան իմաստով: Նա պատրաստ է իր տուն ընդունել աշխարհի մարդկանց, քանի որ մեծ, անչափելի մեծ սիրտ ու սէր ունի մարդկանց համար պահած, հետեւապէս մարդասէր հայրենիքը կարող է իր գիրկն ընդունել աշխարհի բոլոր մարդկանց:

Բայց որեւէ պահի Տոնոյեանը հայրենիքի մասին խօսելիս չի շրջանցում բարդութիւնները: Դրանք մտորումների հետեւանք են եւ ոչ թէ ինքնաբուխ, անորոշ թեմայից դէպի որոշակին գնացող ուղի: Առաջադրուած խնդիրը («Երկի՛ր, դու դարձեալ թողել ես անտէր») ծաւալւում է: Նրանք, ովքեր ելան տէր կանգնելու երկրին, մնացին անտէր, նրանց ուսերին բարդուեց յղփացածների ախորժակը: Ահա առաջադրուած ու զարգացում ստացած խնդիրը պէտք է լուծում ստանայ: Քանի որ երկիրը իր էթնիկական ոգու ներքին ուժով ամբողջական է ու անանց՝ դժուարութիւնների առաջ, հետեւապէս լեռները հարթել փորձող քամիները անցողիկ են իրենց խորքում «դեռ արեգակ ու յանգ» ունեցող լեռների կողքին: Կենսունակ ուժ ու արարելու ոգի ունեցող երկիրը լեռների նման մնալու է կանգուն արհաւիրքների հանդէպ:

Ստեղծագործական երեւակայութեան առաջին տիպին են պատկանում եւ այլ բանաստեղծութիւններ եւս՝ «Ճշգրիտ մաթեմատիկան Հայաստանում», «Հայաստանում մէկն անպայման կողքիդ է» եւն.:

Տոնոյեանի բանաստեղծութիւնը չի գնում աւանդական, դասական պոեզիային բնորոշ երկուութիւնը լուծելու ճանապարհով՝ արեւե՛լքն է նախընտրելի, թէ՛ արեւմուտքը՝ մօտալուտ կործանման վտանգներով լեցուն: Նրա մօտեցումը սահմաններ չունի, քանի որ պայքարը Երկնքի ու Երկրի միջեւ ձգուող ճանապարհին գտնուող մարդու համար է: Նա ընդունա՛կ է յաղթահարել Երկրի ձգողական ուժը, թէ՛ շարունակելու է համակերպուել երկրում

[3] Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն*, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1981, էջ 177:

իրերի դրութեանը՝ մի կողմ թողնելով բարձրագոյն արժէքները: Ի վերջոյ մարդը անկատար էակ է, նրա ստեղծածը՝ եւս, բայց ստեղծած բանաստեղծութիւնը յոյս է ներշնչում, որ նա կարող է շարունակել Երկնային ուղին:

Արդի բանաստեղծութեան առանձնայատուկ որակներից մէկը խօսքի ազատ զարգացումն է: Տոնոյեանը ջարդում է աւանդական համակարգը, քանի որ այն կաշկանդում է ասելիքը: Բանաստեղծութիւնը դառնում է ա-ռօրէական: Այդպիսին են «Ընտրութիւն», «Ծերուկ կոմունիստի վերջալոյ-սը», «Բեռնակիրը» եւն.: Այս կարգի գործերը բանաստեղծական թեմաներ չունեն, բայց ուղղակիօրէն արձանագրում են շփոթ ու վտանգներով լեցուն ժամանակը, որտեղ աւանդական հաւասարաչափ ու համաչափ գծերը փո-խարինուել են անսպասելի, բեկեալ գծերով: Կեանքը դարձել է անկանխա-տեսելի ու չար: Այս գործերում բանաստեղծը հայեցողի դերում է, նա քնա-րական հերոս չէ, քանի որ այստեղ գրեթէ ոչինչ չկայ կեանքի բանաստեղ-ծական շերտից: Այդ բանաստեղծութիւններում ենթիմաստի դերը նուազում է՝ առարկայական ձեւակերպումները կեանքի դրամատիզմը ներկայացնող արձանագրումներ են դառնում:

Սոնէտների պսակը (2020 Մայիս-Յունիս) յատկանշական է ողջ նա-խորդ գրքերի մեկնաբանութեան ֆոնին: Իհարկէ զուտ կառուցուածքի ա-ռումով 14 սոնէտները իրենց ասելիքով ի մի են բերւում վերջին պսակի մէջ: Բայց շարքը սրանով չէ կարեւոր, այլ նախորդ գործերի հետ ունեցած օրգա-նական, ակնյայտ կապերով: Այն, ինչ բնութագրեցինք աստուածային ա-րարման եւ մարդու ստեղծման հակադրութիւն, այստեղ հասել է իր լրումին: Աստծոյ դրած կարգը իր տեղը զիջում է մարմնի պահանջմունքների ար-դիւնքում ձեւաւորուած կարգին:

Այսուհանդերձ ներքին հակադրութիւնը, որ կայ՝ որպէս աստուածային շնորհի եւ մարդու կամքով ստեղծած «անբարոյականութեան կանոնների» միջեւ, բանաստեղծի խօսքը դարձնում է ողբերգական: Մարդկային խելա-յեղ մղումների հետեւանքով աստուածային արարման կրող մարդը նոր ժա-մանակների լաբիրինթոսում մնացել է մենակ, քանի որ ձեռնարկումները խորքում Աստուածային կամքին դէմ գնացող են, որ ժամանակի մէջ նա-խապատրաստում են մարդ-արարածի կործանումը: *Այս ամէնը ոչ այնքան գիտակցուած սխալի, որքան մարդկային բնոյթի մէջ ծաւալուող բնական ո-րակների աղարտման հետեւանք է:*

Մարդն ապրում է՝ մարմնի փորձութեանը մշտապէս ենթակայ: Այն, ինչ ժառանգել ենք մեր ծնողներից, ներկայում դարձել է խիստ խոցելի, մարմ-նահոգեկան աղաւաղումը սպառնում է վերջնականապէս փլել մեր սերունդ-ների երերացող արժէհամակարգը: Միակ ելքը բնութիւնից, Աստծուց տըր-ուած նախնական՝ բնական որակներին ու կեցութեանը հաւատարիմ մնալն է: Աստուածային նախասահմանուած կարգով աշխարհ եկած արարածնե-րըն իրենց սեռային պատկանելութեանը հաւատարիմ պիտի մնան՝ ընդդէմ մորեխի, որ դոներ է բացում միայն դիմակով՝ կեղծիքով լեցուն մարդկանց

առաջ: Մորեխը հասել է օրէնքի ուժով աստուածային կամքը լռեցնելու աստիճանին: Ելքը մնացել մէկը. հաւատարիմ մնալ նախնիների աւանդական կենսաձեւին, որ ժողովուրդն արձանագրել է իր դիւցազնավէպում. «Չենք պղտորի ակունքը գետ կտրող առուի...»: Սեփական արժէհամակարգին՝ ԳՐԻՆ, հաւատարիմ մնալը ապագայի առհաւատչեան է: Բանաստեղծի խօսքի ուժը նախնեաց իմաստութեան, դարերի դժուարընթաց փորձից կորզուած եզրայանգում է, որ կեղծիքների ժամանակը յաղթահարում է ժողովրդի դարաւոր ոգուն ճշմարիտ խօսքի հաղորդակցութեամբ:

Դռներին նոյն կնիքն է՝ «Մուտքը՝ դիմակով»,
Դռներ շատ կան, բայց մէկն է տանում դէպի Կեանք,
Ու որ Հոգին չապրի սոսկ մարմընի կամքով,
Ու որ Ոգին դեռ զօրի Կեանքին մերձենալ,

Չենք պղտորի ակունքը գետ կտրող առուի.
Այս է մարմինը խօսքիս. կերէք, որ յառնի:

Երբեւիցէ քնարական հերոսին չի լքում լաւատեսութիւնը: Բանաստեղծը համոզուած է, որ քաղաքակրթութեան հարուածներից մարդը ուշքի կը գայ՝ ճանապարհը շարունակելու համար, իսկ դա դժուարին ուղի է: Որպէսզի Երկիրը դառնայ Երկինք, մարդը «պէտք է մոռանայ» Երկիրը, իսկ դա դըժուարին խնդիր է, եթէ ոչ անհնարին, մնում է բարոյական արժէքներին հաւատարիմ մնալու, սեփական արատներից ազատագրուելու, ինքնահսկման տառապանքով մարդանալու ճանապարհը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Բանաստեղծական թեմայի, տարածաժամանակային ընկալումների ոլորտում Տոնոյեանը հայ բանաստեղծական քարտէզի վրայ նոր տարածք է յայտնաբերում՝ իր աշխարհը, որի սահմանները ճգտում են տիեզերական չափումների: Այս ուղին վերացական, ժամանակից ու իրադրութիւնից կըտրըուած չէ: Դրանք ինչքան վերերկրային են, նոյնքան էլ հողեղէն: Տարբեր ոլորտները՝ Երկինքն ու Երկիրը հաւասարակշռելով, բանաստեղծն ստեղծում է այլաբանական ընկալումների համակարգ: Նիւթականի եւ հոգեւորի, Երկրի ու Երկնքի համադրումներն ընդլայնում են նիւթականի եւ հոգեւորի փոխյարբերութեան սահմանները: Ընդլայնւում են աւանդական ընկալումների սահմանները: Երկիրը մարմինն է, Երկինքը՝ հոգին: Միմեանց ճգում են կամ միմեանց վանում: Իսկ աւելի ճիշտ՝ փորձում են փոխլրացուել միմեանց մէջ՝ անկարելի ու անիմաստ է Երկիր ունենալ՝ առանց Երկնքի, ինչպէս որ անիմաստ է ու անկարելի մարդկային մարմինը դիտել առանց հոգու եւ հակառակը:

Տիեզերական չափումների մէջ անգամ մարդկային իրարահալած ապրումների ինքնամերժման ու ինքնակայացման բախումներում պատասխանները միեւնոյն է՝ մնում են այստեղ՝ Երկրի վրայ: Հոգու եւ մարմնի աւանդական բախման թեման Տոնոյեանը տեղափոխում է նոր ոլորտ. մարդ-

կային հոգու եւ մարմնի յարաբերութիւնները՝ լուծելի կամ անլուծելի, վերածւում են տիեզերական յարաբերութիւնների: Այն, ինչ կայ Երկրի վրայ, նոյնը Երկնքում է՝ տիեզերական անսահմանութեան մէջ:

Այս միտումը, որ ամբողջանում է Տոնոյեանի բնաստեղծութեան սահմաններում, բնոյթով որքան էլ համամարդկային, սերտօրէն առնչւում է մեր ազգային նկարագրին: Բանաստեղծը չի կարող իր մէջ չներառել իր ժողովրդի մշակոյթին բնորոշ որակները, նրա անցած ճանապարհը, աշխարհընկալումը, երազանքներն ու մտահոգութիւնները: Այս իմաստով էլ գրողի բանաստեղծութիւնները միանգամայն «հողեղէն» են: Եթէ ցաւը, մտահոգութիւնը չծնուեն երկրի ընդերքից, ապա երկնային արձագանգները կը լինեն թոյլ ու նուաստ՝ առանց յոյզի կամ հոգու:

Արդի բանաստեղծութիւնը յաղթահարեց դասականի տարածաժամանակային ծաւալումները՝ նկարագրական, պատկերաւոր խօսքը փոխարինելով տարածութեան ու ժամանակի նոր՝ տիեզերական բնոյթով: Այդ հիմնական հասկացութիւններն անհատի ներաշխարհում ձուլուեցին որպէս մէկ ամբողջութիւն եւ դրանց դրսեւումները դարձան նոյնքան հասանելի ու գործնական, ինչպէս երեւոյթների սովորական որակները: Ժամանակի ու տարածութեան անցումները ոչ թէ պատկերային են ու սահմանազատ, այլ մտածական են՝ յարաբերական սահմաններով: Դրանք իրենց ծիրում ներառում են ինչպէս արդի, այնպէս էլ անցեալի դարաւոր պատմութիւնը: Բանաստեղծութիւնը դառնում է ոչ այնքան ժամանցային, որքան գործնական՝ ասելիքը տեղ հասցնելու իմաստով: Դրան այլեւս պէտք չէ նախաբան՝ ընթերցողին նախապատրաստելու եւ ասելիքը ծաւալելու իմաստով: Այն ըսկզբից եւեթ լարուած է ու լուծմանը գնացող ընթացքը եւս լարում է պահանջում՝ իսկ աւարտը նշանակալի է, բայց ոչ պաթետիկ:

Փշրանքներ

Տէր իմ, ես չեմ մասնակցել սրանց գինի ու հացին,
Թէեւ իրենց սեղանից ինձ փշրանքներ են նետել,
Իմ մեղքն այն է, որ ոչինչ չաւելացրի եղածին,
Ու չթողի քո որդուն ողնացողունն իմ էտեր:
Յարմարուեցի այդպէս էլ կատարողի իմ դերին
Ու երազելն էլ, աւա՛ղ, չմոռացայ ոչ մի օր,
Դու ամենայն ինչ գիտես, բայցեւ գիտե՛ս, որ, Տէր իմ,
Ոչինչ չկայ այս երկրում երազելուց ահաւոր:
Ամէն բան է այս երկրում մօտեցել իր աւարտին՝
Եւ մարմնամերձ մեր կեանքը, եւ ուծացումը հոգու,
Ահա դրուած քո գաւթում իմ աննշխար միակ դին
Եւ փշրանքներն այն շուրջս, որ ես կերայ իմ կեանքում:

Այսպիսի բանաստեղծութիւնը նոր մարմին ունի՝ առանց զարդարանքների ու մեղրածոր խոստումների: Սա ջղուտ խօսք է՝ քամուած աւելորդ բառերից ու իդէալական պատկերներից: Սա անհատի ողբերգութիւնն է, որին

ճզմեց ժամանակը՝ դարձնելով սեփական կամակատարը: Ո՛չ թէ մարդը, ո՛չ թէ անհատը, այլ ժամանակը գծեց նրա ապրելու ու երազանքի սահմանները:

Ժամանակը մարդուց վերցրեց ամենաթանկը՝ կեանքը: Ամէն ինչ նորից վերսկսելու ջանքերն այլեւս անհնարին են: Ահա այս զգացողութեամբ մտնել աշխարհ եւ հլու յամառութեամբ թողնել աշխարհը՝ Տոնոյեանի քնարական հերոսը որեւէ կերպ չի կարող համաձայնել: Մարդը յայտնուել է նոր իրադրութեան մէջ, աշխարհը նրան գեղեցկութեամբ զմայլուելու հնարը չի տուել, սակայն մարդը տեսել է Երկինքը՝ առանց որի անիմաստ է Երկրագունդը: Նա պատրաստ չէ մեռնել որպէս երկրացի՝ Ադամի որդի, նա աստուածային շնորհի, Աստծու զաւակն է՝ հետեւապէս նրա էութեան մէջ քիչ չէ եւ Երկնքի չափաբաժինը՝ որպէս յաւերժութեան, անվերջ կատարելագործման, հետեւապէս մարդացման գործընթացին մասնակից ոլորտ:

Ահա այս յղացումները, որ Տոնոյեանը յարաբերակցում է տիեզերական չափումներին, նրա պոեզիան դարձնում են ներքուստ դրամատիկ, բայց ոչ երբեք յուսահատական: Նրա քնարական հերոսը թէեւ զգում է Երկրի ձգողական ուժը, բայց չի կարող Երկնքին չնայել ու չբաղձալ նրա գոյութեան ձեւերին հաղորդակցուելու հնարաւորութեանը: Մարդը մասնիկն է Տիեզերքի եւ նրա մէջ եղած հոգու եւ մարմնի փոխադարձ ինքնամերժումներն ու հակադրամիասնութիւնը Տիեզերքի կառոյցի հիմքում են՝ Երկնքի ու Երկրի տեսքով: Մարդը, որ Երկնքի եւ Երկրի միջեւ է, երբեք չի դառնում անվերադարձ աստղանաւորդ, նրա սէրը, ցաւը, ուրախութիւնն ու հիասթափութիւնը երկրային են՝ երբեւիցէ չմոռացուող ու երկրի ձգողական ուժը «դիտմամբ» չյաղթահարող: Նրա քնարական հերոսը երբեք եւ ոչ մի պահի չի մոռանում վերադարձի մասին, նրան սպասում են իր անցեալը, նաեւ ապագան: Քանի որ առանց երկրի, չկայ նաեւ ապագայ, չկայ նաեւ երկինքը՝ իր անսահման բազմաձեւութեամբ, որ առաջանալու, աւելին լինելու հնարաւորութիւն է ստեղծում:

Բանաստեղծը քիչ է ասել՝ սիրում է իր հայրենիքը, նրա չարքաշ հաւատաւորին, բայց դա ո՛չ ճչացող սէր է, ո՛չ էլ քծնանք՝ թաքուն: Այն ժամանակաւոր աւարառութիւնները, որ կատարւում են երկրում, միեւնոյն է՝ երկրորդական են այն խոր ու իմաստաւոր սիրոյ կողքին, որ տածում է պոետը ժողովրդի հանդէպ: Բայց այդ սէրը չի կարող լինել «դիպուածային» այն իմաստով, որ *նա խօսելով երկրի, հողի, հայրենիքի մասին, խօսում է միանգամայն կենդանի, հոգեւոր ամբողջութեան մասին:* Նրա սէրը շատ որոշակի է՝ առանց ծեքծեքումների: Նա պատմութեան ու նորագոյն կորուստները սրտով զգացողն է, հետեւապէս այդ սէրը չի կարող լինել ընդհանուր ու վերացական:

Ժամանակը բանաստեղծին հրամցրել է մի հայրենիք, որտեղ ուրախանալու քիչ բան կայ: Ժամանակն սպառնում է մարդկային տեսակի գոյութեանն ընդհանրապէս: Վտանգները տարածուել են բոլոր ոլորտներում:

Սոցիալական կեանքի յանկարծակի, անկանխատեսելի փոխակերպումները, աւանդական արժէքների ոտնահարումը, հոգեւոր արժէքների զանգուածայնացումը չնահանջող տագնապներ են յարուցում: Երկրին սպառնացող վտանգները, դրա ներսում սպառողական հոգեբանութեան բերած աղէտները երկրորդական են «դարձնում» բարոյական արժէքները: Խընդիրները ոչ թէ լուծւում, այլ ծանրանում են, մարդու ողբերգութիւնը դառնում է գրեթէ գիտակցուած վիճակ: Տոնոյեանի քնարական հերոսը այս ամէնի կրողն է՝ ինքը շարունակի՛ կառչած մնալ աւանդական արժէքներին, թէ թոյլ տայ, որ ժամանակը իրեն սեւ հեղեղաջրի թեւերին առած մօտեցնի անդունդին: Այս պայքարը՝ ինքն իր հետ, նրա քնարական հերոսին դարձնում է դրամատիկ ու ոչ անգործունեայ: Նրա մաքառումները մշտատեւ են, եթէ անգամ սպառուել են ուժերը:

Մի՛ կշռիր ինձ, Տէր, մի՛ կշռիր, քանի... քանզի վէրքը կայ,
Դու արդէն գիտես՝որ մասն է հոգիս ու մարմինս՝ որ,
Յոգնել է արդէն,
յոգնել է,
յոգնել հոգիս հերթապահ,
Ու սպառել եմ ապաշխարութեան ժամերս բոլոր:
(«Հոգիս հերթապահ»)

Բոլոր ժամանակներում մարդկային արատներից մաքրուելը մարդու համար եղել է կարեւոր նպատակ: Բայց եսամոլութիւնը, կուտակման տենչը, այլատեացութիւնը յաղթահարելը մնացել է միայն երազանք: Այնքան է մարմինը հիւանդացել, որ նրա փրկութիւնը թւում է՝ դարձել է անդարմանելի: Բանաստեղծը ստիպուած է գրել ոչ միայն իր ժողովրդի, այլև ընդհանրապէս մարդու հիւանդութեան եւ ո՛չ նրա մաքառումների ու հերոսականութեան պատմութիւնը, թէեւ այդ ամէնի մէջ սեփական ցաւի զարկերն անընդհատ են՝ ծանր հետեւանքներով:

Տոնոյեանի բանաստեղծութիւնն արդի հայ գրականութեան ինքնատիպ էջերից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բոլոր ժամանակներում արատներից մաքրուելը մարդու համար եղել է կարեւոր նպատակ: Բայց եսամոլութիւնը, կուտակման տենչը, այլատեացութիւնը յաղթահարելը մարդու համար մնացել է միայն երազանք: Այնքան է մարմինը հիւանդացել, որ նրա փրկութիւնը թւում է՝ դարձել է անդարմանելի: Բանաստեղծը ստիպուած է գրելու ոչ միայն իր ժողովրդի, այլ ընդհանրապէս մարդու հիւանդութեան պատմութիւնը եւ ոչ թէ նրա մաքառումների ու հերոսականութեան, թէեւ այդ ամէնի մէջ սեփական ցաւի զարկերն անընդհատ են՝ ծանր հետեւանքներով:

Մարդու գոյութեան ընթացքը, եթէ մնալու է բացառապէս բնազդների ենթակայութեան տակ, ապա ենթադրուելիք ուղին տանելու է դէպի ան-

կում: Միակ փրկութիւնը մարդու ինքնակատարելագործումն է՝ նրա պատասխանատուութեան բարձր գիտակցումով: Հայրենիքի հանդէպ Թադեւոս Տոնոյեանի անանց սէրն արտայայտւում է ինչպէս ներկան, այնպէս էլ պատմական անցեալը ներկայացնող բանաստեղծութիւններում: Նրա ըստեղծագործութիւնն առանձնանում է ծաւալի սեղմութեամբ ու բովանդակութեան հարստութեամբ:

Տոնոյեանի բանաստեղծութիւնն արդի հայ գրականութեան ինքնատիպ էջերից է:

THADEVOS DONOYAN:
A WORLD THAT ENLARGES THE LIMITS OF EXISTENCE (II)
(SUMMARY)

VACHAGAN GRIGORYAN (vachik_grigoryan@mail.ru)

This is the second part of an extensive critical study of one of the renowned contemporary poets of Armenia, Thadevos Donoyan. Its first part was published in the previous book of the *Haigazian Armenological Review* (44/2).

The author notes that the individual has almost always been challenged to clear himself of mischief and stains. However, overcoming selfishness, greed, racial intolerance is still a dream that has not been realized. Due to the extent of the sickness of the human body, curing it has become almost impossible. Dononyan not only highlights the sickness of his own nation but of humankind too. He narrates the story of this sickness rather than the struggles and heroic attempts of humankind in overcoming these stains.

Tonoyan notes that if the survival of humankind continues to be thoroughly under the influence of instincts, then its future will be destruction. He suggests that the only salvation is in self-perfection based on a high level of responsibility of self-awareness.

The author concludes that Donoyan's love of his fatherland is expressed in poetry that reflects both the present and the historical past. His style is compact and rich in content.

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ (1874-1888)

ԱՐՄԻՆԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ (armine.melkonyan@yahoo.com)
ՅԱՍՄԻԿ ԻՐԻՑԵԱՆ (hiritsyan@gmail.com)

19րդ դարի նշանաւոր բանասէր, ձեռագրագէտ, եկեղեցական գործիչ Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեան Տոսպեցին (աւազանի անունով՝ Մարտիրոս, 1830, Վան – 1891, Երուսաղէմ) հոգեւոր-գիտական գործունէութիւնն սկսել է 1850ին Լիմ անապատում, իսկ 1859ից հաստատուել Վարագավանքում[1]: Ղեւոնդ վարդապետն առաւելապէս յայտնի է որպէս հայերէն ձեռագրերի յիշատակարանների առաջին ժողովողներից մէկը[2]: Մաշտոցեան Մատենադարանում (ՄՄ) պահւում են նրա հաւաքած յիշատակարանների անտիպ ժողովածուները՝ «Յիշատակարանք կամ նըշխարք պատմութեան հայոց» վերտառութեամբ (ՄՄ 4515, 6273, 6332, 9027), ինչպէս նաեւ կնիքների ժողովածուն՝ «Կնքագիր»ը (ՄՄ 10013[3]): Մեզ հասած բազմաթիւ ձեռագրերում Ղեւոնդ վարդապետն աւանդել է իր յիշատակագրութիւնները, նշումները, որոնք վկայում են, որ նա թերթել, ուսումնասիրել է տուեալ ձեռագիրը, ընդօրինակել յիշատակարանները[4]:

---

[1] Ղեւոնդ վարդապետի կեանքի եւ գործունէութեան մասին մանրամասն տե՛ս՝ «Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան (կենսագրական ակնարկ)», *Մուրճ*, 1903, թիւ 11 (Նոյեմբեր), էջ 73-87. նաեւ՝ Ե. Տէր Մկրտիչեան, «Ղեւոնդ Փիրղալէմեան. 1830-1891»,*Գանձեր Վասպուրականի, հտր. 1*, Պոստոն, 1966, էջ 249-61. նաեւ՝ Ա. Մելքոնեան, «Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեանի գործունէութիւնը եւ գրական ժառանգութեան խնդիրը (նորայայտ ինքնակենսագրականի առթիւ)», *Բանբեր Մատենադարանի,* 30:2020, էջ 408-20:

[2] Ս. Գօլանճեան, Յ. վրդ. Հիւսեան, Բ. աթոռակից կթղկս. Կիւլեսէրեան, Գ. Տէր-Վարդանեան, *Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները*, հրատ. պատրաստեց՝ Գ. Տէր-Վարդանեան, *Էջմիածին*, 2015, էջ 48-50. նաեւ՝ Կ. Աւետեան, «Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանը եւ իր յիշատակարանների հաւաքածոն», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, ԼԱ*:2018, Երեւան, էջ 240-44:

[3] «Կնքագիր»ը պարունակում է 19րդ դարի հայ հոգեւոր եւ ազգային գործիչների, կրօնական եւ կրթամշակութային կենտրոնների եւ ընկերութիւնների շուրջ 468 հայերէն, ինչպէս նաեւ՝ արաբատառ կնիք: Առաջիկայում այն պատրաստելու ենք հրատարակութեան (Ա. Մելքոնեան):

[4] Օրինակ՝ ՄՄ 4677 Ճառընտիրում նա գրառել էր իր ընդարձակ ինքնակենսագրական-յիշատակարանը (Ա. Մելքոնեան, «Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանի գործունէութիւնը», էջ 417-18: Նրա գրառումները խիստ կարեւոր են նաեւ առան-

19րդ դարի հայոց պատմութեան եւ մշակոյթի ուսումնասիրման համար յուժ հետաքրքրական են նրա ուղեգրութիւնները՝ որոնցում նկարագրում են Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան մասերի, Օսմանեան կայսրութեան հայաբնակ վայրերի եկեղեցիներ ու վանքեր, բնակիչների կենցաղը, նիստուկացը, ճաշատեսակները[5]:

Ղեւոնդ վարդապետի գաւառական բառարանը՝ «Ժողովածու բառատետր գաւառական բառից» վերտառութեամբ, որին նուիրուած է սոյն յօդուածը[6], մինչեւ վերջերս համարուել է կորած: Դեռեւս 1903ին *Մուրճ* ամսագրի խմբագրական յօդուածում այն թուարկուում է Փիրղալէմեանի կորած երկերի ցանկում[7]: Այն յայտնաբերել ենք (Ա. Մ.) Հայաստանի ազգային արխիւում պահուող Գիւտ աւագ քահանայ Աղանեանցի արխիւային ֆոնդում[8]: Նոյն ֆոնդում են գտնուում նաեւ Ղեւոնդ վարդապետի «Ժամանակագրութիւն»ը, Սբ. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերի ժողովածուն, որը նա կազմել է 1889ի ամռանը[9], ինչպէս նաեւ՝ յիշատակարանների ժողովածուի ԺԸ. պրակը (ընդգրկում է 1510-30ականների յիշատակարաններ): Յատկանշական է, որ Փիրղալէմեանի աշխատութիւնները նրա մահից 7 տարի անց՝ 1898ին, Աղանեանցի միջոցով Կ. Պոլսից բերուել են Էջմիածին եւ յանձնուել ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցուն[10]: Դժուար է ասել, թէ արդեօք Աղանեանցի արխիւում պահուող նշեալ երկերը, այդ թւում եւ «Գաւառական բառարան»ը, ե-

---

ձին ձեռագրերի պատմութեան ուսումնասիրման համար (A. Sirinian, “Per la storia di un manoscritto armeno in Inghilterra (London, Wellcome Library, ms. 16586)”, *Armenia through the Lens of Time. Multidisciplinary Studies in Honour of Theo Maarten van Lint*, F. Alpi, R. Meyer, I. Tinti, and D. Zakarian (eds.), Armenian Texts and Studies, 6, Leiden-Boston, Brill, 2022, էջ 234-44:

[5] *Ճանապարհորդութիւն ի Մայր աթոռն Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս*, գրեաց Ղեւոնդ վ. Փիրղալէմեանց Տոսպեցի՝ յուխտէն Վարագայ, Կ. Պոլիս, 1871. նաեւ՝ *Չորս ընկերք, որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչեւ Կոստանդնուպոլիս,* գրեց Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեան՝ միաբան Վարագայ վանից, Թիֆլիս, 1882:

[6] Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը բարեյիշատակ Գէորգ Տէր-Վարդանեանին՝ թեմայի վերաբերեալ յուժ օգտակար խորհուրդների համար:

[7] «Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան (կենսագրական ակնարկ)», *Մուրճ*, էջ 86:

[8] Գ. Կ. Աղանեան, ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 780՝ հետեւեալ ձեւակերպմամբ «Տոսպեցի Ղեւոնդ Վարդապետ Փիրղալէմեանի կազմած բառբառային բառերի ծանօթագրութիւնները: Ձեռագիր»:

[9] Ա. Յարութիւնեան, Ա. Մելքոնեան, «Ս. Էջմիածնի տապանագրերի՝ Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեանի նորայայտ ժողովածուն», *Էջմիածին*, Զ:2021, էջ 141-61:

[10] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ., մանր մատենագիրք. ԺԵ-ԺԹ. դար*, հրատ.՝ Գիւտ Ա.. քհն. Աղանեանց, Թիֆլիս, 1912, սիւն ԾԴ.:

ղել են այդ կապոցներու՞մ, թէ՞ քահանան այն ձեռք է բերել աւելի վաղ եւ այլ տեղից: Նշենք, որ Աղանեանցը եւ Փիրղալէմեանը մտերիմ գրական-ընկերական յարաբերութիւններ են ունեցել. այս առումով հետաքրքրական է Ղեւոնդ վարդապետի՝ Մանչեստրից Գիւտին յղած նամակը, որով նա վերջինիս հրաւիրում էր Մանչեստր՝ հրատարակչութիւն եւ հայկական դպրոց հիմնելու նպատակով[11]: Իդէպ, Փիրղալէմեանի նիւթերից որոշները հրատարակուել են Աղանեանցի *Դիւան հայոց պատմութեան* շարքի Ժ. հատորում[12]: Ուրեմն, բացառուած չէ, որ քահանան այդ երկերը վերցրած լինէր իր ուսումնասիրութիւններում գործածելու, միգուցէ եւ հրատարակելու նպատակով:

Դեռեւս 1871ին լոյս տեսած իր *Ճանապարհորդութիւն ի Մայր աթոռն Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս* աշխատութեան առաջաբանում (գըրուած 1871 Յունուար 1ին) Փիրղալէմեանը յայտնում է իր միւս աշխատութիւնները հրատարակելու ակնկալիքը, եւ ըստ էութեան, թուարկում դրանք՝ նշելով նաեւ իր հաւաքած 2500ից աւելի գաւառական բառերի մասին.

> Քաջայոյս եմ անշուշտ, որ հայրենասէր վերծանողք՝ գթալով մեր աղքատութեան վերայ, իւրեանց սիրալիր համակրութեամբ զմեզ խրախուսեալ քաջալերեն. եթէ այս բախտիս բախտաւորիմ, ինչպէս որ ակն ունիմ, հետզհետէ կարգաւ պիտի հրատարակեմ միւս հատորիկներն եւս: Բաց ի սոցանէ մեր ուղեւորութեանց մէջ՝ ձեռք բերած հին մատենից հազարաւոր ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ, որք քաղաքական եւ ազգային պատմութեանց շատ մութ եւ անծանօթ կէտերն կարեն լուսաւորել, ինչպէս նաեւ հին եկեղեցեաց արձանագրութիւնք, եւ երեւելի արանց մահարձանի պատճէնք, եւ **գաւառական 2500էն աւելի բառերն իրենց բուն ինչմամբ եւ նշանակութեամբ** (այս եւ միւս ընդգծումները մերն են - Ա.Մ., Յ.Ի.), ժամանակին կթողու հրատարակել: Գործոյս հեղինակ՝ Ղեւոնդ Վարդապետ Տոսպեցի[13]:

Գաւառական բառերի մասին աւելի ուշ ակնարկել է նաեւ Գարեգին Սրուանձտեանցը՝ 1885 Մայիսի 24ին Կ. Պոլսից պատմաբան, բանասէր Գրիգոր Խալաթեանցին ուղղած նամակում: Նա յայտնում է, որ Փիրղա-

---

[11] Նամակը պահւում է Երեւանի Գրականութեան եւ արուեստի թանգարանում (ԳԱԹ): Նամակի հրատարակութիւնը տե՛ս՝ Ա. Մելքոնեան, «Մանչեստրի հայ համայնքը Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանի հոգեւոր առաջնորդութեան տարիներին (1873-1878)», *Միոն*, Օգոստոս-Դեկտեմբեր 2022, էջ 354:

[12] Այս մասին տե՛ս՝ Ա. Մելքոնեան, «Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանի գործունէութիւնը», էջ 411:

[13] Փիրղալէմեանց Ղեւոնդ վ. Տոսպեցի, *Ճանապարհորդութիւն ի Մայր աթոռն*, էջ Դ.:

լէմեանի «*հաւաքածներն են ձեռագիր մատենից յիշատակարանք եւ ձեռագիր տարեգրութիւնք, զորս տպագր[ական] տեսչութիւն թոյլ չտար նոյնութեամբ հրատարակել, ինքն եւս չուզեր դրամ ծախսել,* ***ունի նաեւ գաւառական բառեր****: Ես խորհուրդ տուի, որ պարբերական հանդէսներու մէջ մասն-մասն հրատարակէ. չհամոզուեր, կուզէ էջմիածին տանի*» [14]:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒՄԸ ՄԱՆՉԵՍՏՐՈՒՄ

Ինչպէս տեսանք, 1871ին Ղեւոնդ վարդապետը խօսում է իր հաւաքած գաւառական բառերի մասին, սակայն որպէս բառարան այն կարգաւորուել եւ վերջնական տեսքի է բերուել աւելի ուշ՝ Մանչեստրում, ուր 1873-78՝ նա ստանձնել էր տեղի հայ համայնքի հոգեւոր հովուութիւնը[15]: Մանչեստրեան տարիները բազմաշխատ եւ անընդմէջ շրջագայող եկեղեցական գործչի համար համեմատաբար հանգիստ մի շրջան էր եւ պատահական չէ, որ հենց այդ շրջանում, ինչպէս տեղեկանում ենք յիշատակագրութիւններից, նա կարողանում է կարգաւորել ոչ միայն «Գաւառական բառարան»ը, այլեւ տարիների ընթացքում ժողոված տարաբնոյթ նիւթերը՝ հայերէն յիշատակարանների հաւաքածուն, կնիքների ժողովածուն եւ «Ժամանակագրութիւն»ը:

Բառարանի առանձին թերթերի ստորին լուսանցքներում, սովորաբար իւրաքանչիւր տառով սկսուող բառախմբից յետոյ, Փիրղալէմեանը թողել է համառօտ յիշատակագրութիւն՝ նշելով տուեալ բառախմբի հիմնականում գրութեան վայրը, տարին, ամիսը եւ օրը, ինչպէս՝ «*1874 յունվ*[16]*. 14, երկուշաբթի, ի Մանչեստէր*[17]» (2ա), «*1874 յունվ. 14, ի փօնի Յովհաննու Մկրտչի, ի Մանչէսթէր*» (2բ), «*1874 յունվ. 15, երեքշաբթի, ի Մանչեստէր*» (4ա), «*1874 յունվ. 16, ի Մանչեստէր*» (4բ), «*1874 յունվ. 18, ուրբաթ, ի Մանչեստէր*» (5ա), «*Յունվ. 23, չորեքշաբթի, Սուրբ Սարգսի Պահոց*» (11բ) եւն.:

---

[14] Վ. Գ. Վարդանեան, «Գրիգոր Խալաթեանի անտիպ նամակները Գարեգին Սրուանձտեանցին», *Պատմաբանասիրական հանդէս*, 1:1971, էջ 130 (նամակը հրատարակուել է ժամանակակից ուղղագրութեամբ, մենք այն վերածել ենք դասականի): Բացառուած չէ, որ 1889ի ամռանը նա անտիպ հատորների հրատարակութեան նպատակով է այցելել Մայր աթոռ Սուրբ Էջմիածին:

[15] Ա. Մելքոնեան, «Մանչեստրի հայ համայնքը», էջ 345-54:

[16] Փիրղալէմեանի Գաւառական բառարանում յաճախ է հանդիպում վ տառը ւ-ի փոխարէն. այս եւ միւս դէպքերում պահպանել ենք հեղինակի ուղղագրութիւնը:

[17] Արխիւային ֆոնդում ցուցակի նկարագրութեան մէջ բառարանի սկսման ամսաթիւ համարուած է «6 Փետրուարի 1874 թ.»ը՝ գլխաւոր յիշատակարանի տուեալը, մինչդեռ ամսաթուի եւ տեղի առաջին յիշատակութիւնը սա է՝ «*1874, յունվ[ար] 14, երկուշաբթի, ի Մանչեստէր*»:

Գլխաւոր յիշատակարանից պարզ է դառնում, որ բառարանի հիմնական նիւթը հաւաքուած է եղել դեռեւս 1872ին: Այն մանրամասն սրբագրել եւ այբբենական կարգով ընդօրինակել է քննելիք աշխատութեան մէջ. «***1872 յունիս 28-ին գրեալ խառն տետրակն «Գաւառական բառարանիս» մեծափաժան աշխատութեամբ ըստ այբբենական կարգադրութեան վերածելով աստ օրինակեցի ի պէտս ճոխութեան լեզուիս հայոց: 1874, փետ[րուարի] 6, Բարեկենդանի չորեքշաբթին, ի Մանչեստէր քաղաքն Անգղիացւոց: Հաւաքող գործոյս՝ Ղեւոնդ ծ. վարդապետ Փիրղալէմեան Տոսպեցի***» (22բ): Ամենայն հաւանականութեամբ, 1872ի տետրակի մէջ հեղինակն ուղղակի նշել է իրեն հետաքրքրող բառերը, բառաձեւերը՝ գերակշիռ մասը վերցնելով իր ժամանակի առօրեայ-խօսակցական լեզուից, զուգահեռ տուել բացատրութիւններն ու բնորոշումները: Բացառուած չէ, որ որոշ բառեր վերցուած լինեն իր ընդօրինակած յիշատակարաններից: Բառարանն սկզբնապէս ունեցել է 22 թերթ՝ հեղինակի էջակալմամբ՝ 1-44՝ 1ա-22բ: «Ֆ» տառով սկսուող բառախմբից յետոյ Փիրղալէմեանն ամփոփում է իր բառարանը՝ յստակեցնելով ընդգրկուած բառերի քանակը. «*2135 բոլորն այսքան լեալ է առ այժմ*» (22բ): Բառարանի աւարտից յետոյ Փիրղալէմեանը մերթընդմերթ նոր բառեր է աւելացրել բուն բառացանկին՝ որոնք ըստ այբբենական կարգի դրել է համապատասխան տեղերում եւ տարբերելու համար գրել կարմիր թանաքով: Այդ մասին եւս առկայ է յիշատակարան. «*311 բառ եւս կարմիր մելանաւ գրեալս յետոյ յաւելան, որով 2446 բառ եղեւ առ այժմ: Ղեւոնդ վարդապետ: 1877, մայիս 9 ըստ Նոր տումարի, ի Մանչեստէր*» (22բ)[18]: Հետեւաբար, կարելի է ասել, որ դասաւորման հիմնական աշխատանքն արուել է 1874 Յունուար-Փետրուար ամիսներին, իսկ դրանից յետոյ մինչեւ 1877 Մայիս 9՝ կատարել 311 բառի յաւելումը: Աւելի ուշ հեղինակի ձեռքով բուն բառարանին կցուած է նաեւ վանդակաւոր գործարանային թուղթ ունեցող տետ-

[18] Իւրաքանչիւր տառից յետոյ Փիրղալէմեանը նշում է տուեալ տառով սկսուող ընդօրինակած բառերի քանակը, ինչի արդիւնքում ունենք յստակ վիճակագրութիւն՝ Ա-121, Բ-50, Գ-92, Դ-48, Ե-11, Զ-49, Է-52, Ը-25, Թ-105, Ժ-23, Ի-31, Լ-100, Խ-118, Ծ-32, Կ-205, Հ-32, Ձ-21, Ճ-98, Մ-117, Յ-4, Ն-21, Շ-75, Ո-31, Չ-37, Պ-152, Ջ-30, Ռ-3, Ս-81, Վ-41, Տ-119, Ց-23, Փ-70, Ք-74, Օ-21, Ֆ-4: Նշենք, որ սա նախնական հաշուարկն է. մինչ յետագայի կարմիր թանաքով լրացումները՝ իր արած թուաբանական հաշուարկներից յետոյ եւս սեւ թանաքով բազմաթիւ լրացումներ կան տողամէջերին: Օր.՝ Ղ տառով սկսուող 2 բառերն իրենց բացատրութիւններով հեղինակն աւելացրել է աւելի ուշ (12բ), նաեւ Յ տառի՝ 4 բառից բացի այլ լրացումները սեւ թանաքով (14բ) եւն., ինչի արդիւնքում բառարանում արձանագրուած բառերն աւելի մեծ թիւ են կազմում՝ գրչութեան յիշատակարանում նշած թուի համեմատ:

րակ «*Տօղիկ ի գաւառական ինչ-ինչ բառից բացատրութիւն է հետեւեալն՝ ըստ այբբենական ցանկի*» (23ա)՝ նոր բառերի յաւելումներով (որոշ բառեր այստեղ կրկնուած), թերթակալումը շարունակած՝ թ. 23-33 (հեղինակի էջակալում չունի, գիրը՝ կապոյտ թանաքով): Այս մասն աւարտել է 1888 Դեկտեմբերին Կ. Պոլսում, ուր հոգեւոր ծառայութիւն էր իրականացնում Թոփգափու թաղամասի Սբ. Նիկողայոս եկեղեցում[19]. «*Աւարտեցաւ բառարտերս 1888 դեկտ[եմբերի] 13, երեքշաբթի ի Կ. Պոլիս ի Թոփգափու ի Սուրբ Նիկողայոս Սքանչելագործ հայրապետի եկեղեցին, ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Տոսպեցւոյ՝ Վարագայ վանուց վանականի, մինչ անարժանութեամբ քարոզիչ էի անդ*» (33ա):

ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆԻ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆ ԻԲՐԵՒ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՄԱՆ ՓՈՐՁ. ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Փիրղալէմեանի կազմած Գաւառական բառարանի գոյութիւնը եւս մէկ անգամ փաստում է բազմավաստակ հոգեւորականի բազմակողմանի հետաքրքրասիրութիւնների լայն ծիրի մասին: Տարբեր բնակավայրերում լինելու շնորհիւ հեղինակն արձանագրել է տարածքային բազմազանութիւն ունեցող բազմաթիւ բառեր: Դրանց մեծ մասը պատկանում է տարբեր բարբառների եւ յատուկ է որոշակի աշխարհագրական տեղանքի: Բառայօդուածները հիմնականում համառօտ են, յաճախ միատող: Բառերի բացատրութիւնները տրուած են հեղինակի ձեւակերպմամբ՝ աւելի ժողովրդախօսակցականին մօտ լեզուով:

Հեղինակի հիմնական նպատակը ընթերցողին գաւառական-բարբառային բառերի իմաստին ծանօթացնելուն զուգահեռ՝ հայերէնի բառապաշարի հարստացումն է, ինչպէս նշում է իր գլխաւոր յիշատակարանում՝ «*... ի պէտս ճոխութեան լեզուիս հայոց*»: Միաժամանակ, այս անտիպ աշխատութեան մէջ բառայօդուածը՝ բառընտրութիւնը եւ բառերի բացատրութիւնները, արտայայտում են հեղինակի լեզուական հետաքրքիր դիտարկումներն ու բնորոշումները:

Վերոնշեալ աշխատութիւնը Ղեւոնդ վարդապետի՝ հայերէնի բառապաշարին վերաբերող կարեւոր գործերից է. բառարանի գոյութեամբ հայերէնագիտութեան մէջ աւելանում է 19րդ դարի վերջերին շրջանառուող աշխարհաբարեան հայերէնի եւս մէկ նմուշ, որի յետագայ աւելի խոր ուսումնասիրութիւնը թոյլ կը տայ աւելի յստակեցնել տուեալ ժամանակաշրջանի հայերէնի բառապաշարի շերտը:

Հետաքրքիր է Ղեւոնդ վարդապետի Գաւառական բառարանի յարաբերակցութիւնը ժամանակի նմանատիպ բառարանների հետ: Աշխարհա-

[19] Մանչեստրից նա վերադարձել է 1878 Նոյեմբերին:

բարի քերականութիւնն ուսումնասիրող աշխատութիւններին[20] զուգահեռ՝ 19րդ դարում հրատարակւում էին նաեւ աշխարհաբարին վերաբերող բառարաններ (պէտք է նշել, որ այդ շրջանում հրատարակուող բառարանների հիմնական մասը միտուած էր հայ մատենագրութեան՝ գրաբարով աւանդուած ահռելի նիւթը հասկանալի դարձնելուն): Դա էր պատճառը, որ աւելի գերակշռում էին գրաբար-աշխարհաբար կաղապարով կազմուած բառարանները: Իհարկէ, ժամանակաշրջանի անգերազանցելի բառարանն է *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*[21] կոթողային հրատարակութիւնը: Ժամանակի միւս բառարաններից են *Բառգիրք հայկազեան լեզուի*[22], *Առձեռն*[23], *Համառօտ բառարան ի պէտս նորավարժից*[24], *Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց*[25] եւն.[26]:

Ղեւոնդ վարդապետի «Ժողովածու բառատետր գաւառական բառից» աշխատութիւնը որոշ չափով տարբերւում է վերը նշուած բառարաններից: Նրա նպատակը գիտական սկզբունքներով բառարան կազմելը չէր՝ ի

---

[20] Մխիթար Սեբաստացի, *Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց*, Վենետիկ, 1727. նաեւ՝ Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866. նաեւ՝ Գ. Մուրատեան, *Հայերէն քերականութիւն նորավարժ ուսանողաց համար*, Տփխիս, 1860. նաեւ՝ Վ. Չալըխեան, *Քերականութիւն հայկազնեան լեզուի*, Վիեննա, 1862. նաեւ՝ Ա. Գարագաշեան, *Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն*, Կ. Պոլիս, 1865. նաեւ՝ Զ. Տօնէլեան, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի*, Կ. Պոլիս, 1897. նաեւ՝ Ն. Մելիք-Թանգեան, *Աշխարհաբարի քերականութիւնը*, Նոր Ջուղա, 1900 եւն.:

[21] Հ. Գաբրիել Աւետիքեան, հ. Խաչատուր Սիւրմէլեան, հ. Մկրտիչ Աւգերեան, *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտր. 1, Ա-Կ,* Վենետիկ, 1836 եւ *հտր. 2, Հ-Ֆ,* Վենետիկ, 1837:

[22] Գ. Փէշտըմալճեան, *Բառգիրք հայկազեան լեզուի, հտր. 1, Ա-Կ,* Կոստանդնուպոլիս, 1844 եւ *հտր. 2, Հ-Ֆ,* Կոստանդնուպոլիս, 1846: *Նոր Հայկազեան* բառարանից անկախ՝ Կ. Պոլսում Փեշտիմալճեանը ձեռնարկում է Հայկազեան բառարան կազմելու գործը: Յայտնի է, որ այս աշխատութիւնը հեղինակը գրել է դեռեւս 1826ից առաջ, սակայն չի աւարտել, յետագայում այն լրացրել են վերջինիս աշակերտները (Գ. Գասպարեան, *Հայ բառարանագրութեան պատմութիւն*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 133):

[23] Հ. Մկրտիչ Աւգերեան, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1846: Աւելի ուշ բառարանը վերահրատարկուել է 5000 բառայօդուածի յաւելմամբ (*Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Գ. Ճէլալեան, Վենետիկ, 1865):

[24] *Համառօտ բառարան ի պէտս նորավարժից*, Վենետիկ, 1859:

[25] Եդ. Հիւրմիւզեան, *Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց*, Վենետիկ, 1869:

[26] Ժամանակաշրջանի այլ բառարանների մասին տե՛ս՝ Գասպարեան:

տարբերութիւն աւելի ուշ Հրաչեայ Աճառեանի կամ վերը նշուած շատ այլ բառարանագիրների, ովքեր իրենց բառարանների սկզբում գրել են այն կազմելու յստակ սկզբունքները, նպատակներն ու պատճառները: Փիրղալէմեանը պարզապէս հաւաքել է առօրեայ-խօսակցական լեզուում կիրառուող հետաքրքիր բառեր, տուել դրանց նշանակութիւնը՝ նպատակ ունենալով տուեալ բառերը ոչ միայն փրկել անհետացումից, այլեւ դնել լայն կիրառութեան մէջ՝ ի նպաստ հայերէնի բառապաշարի ընդլայնման: «Ժողովածու բառատետր գաւառական բառից» խորագիրը եւս փաստում է, որ հեղինակի նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գաւառական բառերի հաւաքումը, ժողովումը: Ուշագրաւ է այն, որ Փիրղալէմեանը, լեզուագէտ չլինելով հանդերձ, գիտակցել է բարբառների կարեւորութիւնը՝ որպէս լեզուի բառապաշարի հարստացման հիմնական աղբիւր, եւ իր հետաքրքրասիրութեան ու ջանասիրութեան շնորհիւ հաւաքել ու արձանագրել է բազմաթիւ բարբառային բառեր[27]:

Ղեւոնդ վարդապետի այս գործն արժեւորւում է հիմնականում որպէս բարբառային բառարանի եւս մէկ օրինակ կամ փորձ այն դէպքում, երբ հայ հեղինակների՝ մեզ յայտնի գաւառական (բարբառային) բառարաններն աւելի ուշ են կազմուել եւ հրատարակուել, ինչպէս՝ Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բանը* (Վաղարշապատ, 1912) եւ Հր. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան* (Թիֆլիս, 1913): Վերջիններս կազմուած են բարբառային բառարանների կազմութեան անհրաժեշտ սկզբունքների կիրառմամբ. ըստ այդմ՝ գիտական հրատարակութիւններ են: Մինչ այդ գաւառական-

[27] Այս առումով Փիրղալէմեանի գործը կարելի է համեմատել իր ժամանակակից, Մխիթարեան միաբանութեան անդամ Գաբրիէլ արք. Այվազեանի (Այվազովսկի) «Բառազննութիւն աշխարհիկ լեզուի» ձեռագիր աշխատութեան հետ (Թէոդոսիա, 1869): Այվազեանը եւս, լեզուաբան չլինելով հանդերձ, փորձել է կազմել նըմանատիպ բառարան՝ աշխարհաբար-աշխարհիկ լեզու կաղապարով: Միայն թէ ի տարբերութիւն Փիրղալէմեանի, ում նպատակը բարբառային բառերի արձանագրումն էր եւ լեզուի հարստութեանն այդկերպ նպաստելը՝ Այվազեանը խնդիր էր դրել ~~իր առջեւ~~ ուղղորդել ժամանակակից հեղինակներին՝ ընտրելու այն աշխարհաբար տարբերակը, որն օգտագործելով վերջիններս կարող էին ե՛ւ հասկանալի լինել ժողովրդին, ե՛ւ չշեղուել հայերէնի զարգացման ճիշտ ուղուց (տե՛ս՝ Յ. Իրիցեան, «Գաբրիէլ Այվազեանի 'Բառազննութիւն աշխարհիկ լեզուի' ձեռագիր երկը՝ որպէս աշխարհաբարի տարածմանը նպաստող աշխատութիւն», *Բանբեր Մատենադարանի*, 27:2019, էջ 371-87): Այս իմաստով նշանակալից է Այվազեանի ներդրումը գրական աշխարհաբարի կազմաւորման գործում, իսկ նրա աշխատութիւնը մօտենում է գիտական բառարանի կազմման բոլոր չափանիշերին, քանի որ հեղինակը ծաւալուն առաջաբանով նշում է իր գործի կազմման նպատակը, սկզբունքները, պատճառները: Այժմ հրատարակութեան ենք պատրաստում նշուած ձեռագիր աշխատութեան բնագիրը (Յ. Իրիցեան):

բարբառային բառերի (ոչ գիտական սկզբունքներով կազմուած) բառարանագրման փորձեր եւս եղել են հիմնականում տետրակների կամ այլ՝ ժողովածուների տեսքով: Ըստ Աճառեանի՝ հայերէնի գաւառական բառերով առաջին հետաքրքրուողներն անուանի հայագէտներ իտալացի Ֆրանչեսկօ Ռիվոլան եւ գերմանացի Եոհան Շրէօդէրն են: Ռիվոլան իր *Հայերէն-լատիներէն բառարան* (Միլան, 1621)[28] հրատարակութեան մէջ անդրադարձել է մասնաւորապէս Ջուղայի բարբառին, իսկ Շրէօդէրն իր *Գանձ Արամեան լեզուի* (Ամստերդամ, 1711)[29] աշխատութեան մէջ տալիս է գաւառական բարբառով միքանի նմուշ: Հայ իրականութեան մէջ Աճառեանը գաւառական բառերի ամենամեծ նախնական շտեմարան համարում է Մխիթար Աբբայի *Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ* (Վենետիկ, 1769) աշխատութիւնը, որն ըստ նրա՝ «*կը պարունակէ գաւառական բառերու ճոխ մթերք մը*»: Անչափ կարեւորելով աւելի ուշ հրատարակուած *Նոր հայկազեան բառարան*ը (Վենետիկ, 1836-37)՝ հեղինակն ընդգծում է. «*Ուղիղ խօսելով ա'յս է հայ գաւառական բառարանի առաջին իսկական փորձը. Նախորդները կամ իբրեւ բարբառներու օրինակ (բնագիր) եւ կամ իբրեւ անուղղակի կատարուած գործ (ռամկօրէն բառեր)՝ անուղղակի կերպով կը մտնեն գաւառական բառարանագրութեան շարքը*»: Այնուհետեւ թուարկում է մի շարք գործեր, որոնք հիմնականում անուղղակիօրէն են առնչւում գաւառական բառերի արձանագրմանը[30]: Այս առումով Ղեւոնդ վարդապետի Գաւառական բառարանը մէկն է վերը նշուած աշխատութիւններից, որը շատ դէպքերում անփոխարինելի աղբիւր կարող է լինել գաւառական-բարբառային բառերի ուսումնասիրութեան համար:

«Ժողովածու բառատետր գաւառական բառից» աշխատութեան մէջ, ինչպէս առհասարակ բնորոշ է գաւառական-բարբառային բառարաններին, արձանագրուած են ժողովրդի կեանքն ու կենցաղը պատկերող բառեր: Վերջիններիս մեծ մասը առտնին գործածութեան առարկաների, կերակուրների, նոյնիսկ խաղերի անուանումներ են: Բառապաշարի այս շերտը հիմնականում դուրս է մնացել գրական աշխարհաբարի շրջանակնե-

---

[28] Francesco Rivola, *Dictionarium Armeno-Latinum*, Milano, 1621: Այն 1633ին Փարիզում վերահրատարակւում է:

[29] Johann Joachim Schröder, *Thesaurus linguae Armenicae, antiquae et hodiernae*, Amsterdam, 1711:

[30] Աճառեանն այդ ցանկում կարեւորում է նաեւ Գ. Ախվերդեանի՝ Սայեաթ-Նովայի երգերի հրատարակութիւնը՝ Թիֆլիսի բարբառով եւ բարբառային բառերի բացատրութեամբ: Գաւառական բառարանների պատմութեան մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Հր. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 5-7. նաեւ՝ *Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. 1*, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2001, էջ VII-XII:

րից՝ ունենալով իրեն փոխարինող գրական համարժէքները, կամ ընդհանրապէս չունենալով իրենց իմաստային համարժէքները: Այդ առումով աւելի է կարեւորւում Փիրղալէմեանի բառարանը՝ որպէս լեզուի բառապաշարի համակողմանի ուսումնասիրութեան լրացուցիչ աղբիւր:

Գաւառական բառարանում ներառուած բառերը, ինչպէս նշեցինք, Փիրղալէմեանը հիմնականում հաւաքել է իր ճամփորդութիւնների ընթացքում. որոշ բառերի դիմաց՝ լուսանցքում, նշում է տուեալ բառի գործածման վայրը, ինչպէս օրինակ՝ «***Անթեղել*** *– կրակ մոխրին տակ պահել. Արմաշ*» (1բ), «***Անց են գացել*** *– անցեալ են, գնացեալ են. Երեւան*» (1բ), «***Աշել*** *– նայել, դիտել. Կարին*» (1բ), «***Գրողի տարած*** *– առ տղայս Վանայ ոճովն (3բ)*» եւն.: Այսպէս՝ ըստ նշումների կարելի է ենթադրել, որ հիմնական բառերը հաւաքուած են հետեւեալ վայրերից՝ Արճէշ, Երեւան, Թաւրիզ, Թիֆլիս, Կարին, Կարս, Մուշ, Շատախ, Վան: Քանի որ հեղինակը վանեցի էր, Վարագավանքի հոգեւորական, ուստի պատահական չէ, որ բառարանում արձանագրուած բառերի գերակշիռ մասն այնուամենայնիւ յատուկ է Վանի բարբառին:

Գաւառական բառարանում առկայ բառապաշարը կարելի է դասակարգել միքանի խմբերի.-

Բարբառային տարածուած տարբերակներ. սրանք բառերի այն խումբն են, որոնք հասկանալի են տարբեր բարբառակիր անձանց, այսինքն հանդիպում են մէկից աւելի բարբառներում եւ որպէս այդպիսին առանձնայատուկ չեն՝ **Ադամամութ** – գիշեր՝ թանձր խաւար (1ա), **Ազապ** – դեռ չկարգուած երիտասարդ (1ա), **Աղութ քար** – կանաչ անդամանդ (1ա), **Անգալ** – անդամալոյծ (1ա), **Ափեղցփեղ** – խառնիխուռն խօսիլ, շաղակրատել (2ա), **Բանջրաբուսիկ** – եկած հալած ձիւն գարնան (2ա), **Գինդ** – զարդ ականջի (3ա), **Գրող** – մահուան հրեշտակ (3բ), **Գրքակալ** – գրակալ գիրք դնելու համար (3բ), **Դիժար** – կարօտ, փափաք, ցաւ (3բ), **Դփել** – զարնել, գանակոծել, ծեծել (4ա), **Էդիկ** – այդ, դա. դերանուն ցուցական (4բ), **Էստուց** – աստի. Երեւան (5ա), **Էրան էրան** – կարգ ի կարգ, դաս դաս, ջոկ ջոկ (5ա), **Թլօլ** – թոթովախօս (6ա), **Թմպրած** – անզգայ, ապուշ (6ա), **Ժաժկ** – շարժ, սասանութիւն (6բ), **Իզկուրուս** – անհետք, աննշմար (7ա), **Իստկած** – մաքրուած (7ա), **Իրիցել** – այրել, վառել (7ա), **Լաճ** – մանչ զաւակ, արու տղայ (7բ), **Լամուկ** – տաճկի տղայ, 2. լիրբ տղայ (7բ), **Լխբոր** – կակուղիկ, հասուն միրգ (7բ), **Խորթ մէր** – անհարազատ մայր (9ա), **Կէսրէր** – փեսայի հայր (10բ), **Կնանիք** – կանայք, կին մարդիկ. Երեւան (10բ), **Մէրօ** – աղւոր աղջիկ, խելոք օրիորդ (14ա), **Սատակ** – տաճիկ մեռեալ (18ա), **Փոխնակ** – երկրորդ անգամ առած կին, երկրորդ կին (21ա) +[ՀԳԲ,

1076] [31] +[ՍԱՀԲԲ, 655] +[ՀԼԲԲ, 16] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 511]**, Գօլերայ** – տարափոխիկ ցաւ, մահտարաժամ (24ա), **Ճիժ** – լաճ, մանչ, տղայ (28բ), **Ճիժ պիժ** – փոքր տղայք (28բ), **Մելիք** - ռէսաց ռէս՝ դիհապետ (28բ): Նըշ-ուածներից որոշներն այժմ գրական բառապաշարի մաս են կազմում. Ինչ-պէս՝ *գինդ*-ականջօղ, *ադամամութ*-գիշերային թանձր խաւար եւն.: Հետա-քրքիր է *փոխնակ* բառի իմաստային փոփոխումը ժամանակակից գրա-կան հայերէնում: Վերջինս այժմ կիրառւում է միայն *փոխնակ մայր* կա-պակցութեան մէջ եւ նշանակում է կենսաբանական մօրը փոխարինող կին, ով լոյս աշխարհ է բերում վերջինիս երեխային: Կրկին *փոխարինող* իմաստը պահպանուել է, սակայն միայն *փոխնակ* բառը չի արտայայտում վերը նշած իմաստը. փոխուել է նաեւ խօսքիմասային պատկանելութիւնը՝ փոխնակ՝ գոյական, փոխնակ մայր՝ ածական: Որոշ բառեր Փիրղալէմեա-նը ընդօրինակել է երկիցս, օր.՝ հիմնական բառարանում ունենք՝ **Ազապ** – դեռ չկարգուած երիտասարդ (1ա), աւելի ուշ բառարանին կցուած վանդա-կաւոր տետրակում եւս՝ **Ազապ** – դեռ չամուսնացեալ երիտասարդ (23ա) եւն.:

Այս խմբի ենթախումբ կարելի է համարել նաեւ արձանագրուած այն բառերը, որոնք գրական բառապաշարի լիարժէք անդամ են, պարզապէս այստեղ ունեն որոշ հնչիւնական առանձնայատկութիւններ, այսինքն բարբառներում գործածուած են տուեալ բարբառին յատուկ հնչիւնական փոփոխութիւններով՝ **Աշըղ** – գուսան, երգիչ (1բ), **Առագէլ** – արագիլ թըռ-չուն (1բ), **Գէլ** – գայլ (3ա), **Գոռտ** – գորտ (կուրպաղի) (3ա), **Զրից** – զրոյց, խօսք. Երեւան (4բ) եւն.: Որոշ բառեր արտասանական որեւէ տարբերու-թիւններ չունեն. օր.՝ **Գօմէշ** – գոմէշ (3բ) եւն.: Այսօրինակ բառերը կարող են հիմք հանդիսանալ այն ենթադրութեան, որ Փիրղալէմեանը բառերի մի մասը վերցրել է նաեւ ձեռագրերի յիշատակարաններից՝ նոյն այդ ուղղագ-րութեամբ:

Կերակուրների, մրգերի, բոյսերի անուանումներ. **Ալուչայ** – սալոր (1ա), **Ածիկ** – համ փոխած հաց՝ ցորեան. քաղցու (1ա), **Աղանծ** – բոված ցորեան ընդ կանեփի հունդի խառնեալ (1ա), **Անիսոն** – խոտ ինչ համեմիչ օղւոյ (1բ), **Աւելուկ** – անուշ խոտ ինչ համեմիչ թանապրոյ (2ա), **Գինձ** – անուշ

[31] Գաւառական բառարանում ընդօրինակուած բուն գաւառական բառերից որոշ-ները (ընտրել ենք քիչ-յայտնիները) փորձել ենք գտնել բարբառային եւ բացատ-րական միքանի բառարաններում՝ նպատակ ունենալով պարզել, թէ ինչ չափով են այդ բառերն արձանագրուած աւելի ուշ հրատարակուած նոյնաբնոյթ բառա-րաններում (աւելի վաղ հրատարակութիւններից համեմատել ենք նաեւ *Նոր հայ-կազեան բառարանի*ն հետ): Եթէ բառը գտել ենք բառարանում նոյն բառաձեւով, դրել ենք + նշանը (կից նաեւ էջը), հակառակ դէպքում՝ - նշանը:

բանջարեղէն ինչ համեմիչ թանի (3ա), **Դալ** – կովու խիժով պատրաստած խորտիք (3բ), **Էծուպտուկ** – տեսակ ինչ լաւ խաղողոյ ի Վան (5ա), **Թաքուցք** – որդակեր միրգ, պտուղ (6ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ]**, Ժուռ** – տհաս խաղող եւ այլ տհաս մրգեղէնք (6բ) +[ՀԳԲ, 394] +[ՍԱՀԲԲ, 230] +[ՀԼԲԲ, 163] +[ՆՀԲ, 840] +[ՀԲԲ, 147]**, Ժոչոր** – տհասութեան մէջ չորացեալ խաղող (7ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ]**, Լղմոր** – կարի հասուն միրգ, ծիրան (8ա) +[ՀԳԲ, 428] +[ՍԱՀԲԲ, 253] +[ՀԼԲԲ, 234] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Կայլայ** – մսեղէն կերակուր հանդերձ ջրով (խաշլամայ) (10ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 30 /կայլաց/] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Կանգառ** – ուտելու անուշ խոտ ինչ լեռնային (10ա) +[ՀԳԲ, 547 /կանկառ/] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 36 /կանկառ/] +[ՆՀԲ, 1051 /կանկար/] +[ՀԲԲ, 385 /կանկառ/], **Կարագ** – նոր իւղ (10ա), **Կլօճ** – չհասած խմորէն շինած հաց (10բ) +[ՀԳԲ, 574 /կլոճ/] +[ՍԱՀԲԲ, 346 /կլոճ/] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 444], **Կլօր** – սեխ (կաւուն) (10բ) +[ՀԳԲ, 575 /կլոր/] +[ՍԱՀԲԲ, 346 /կլոր/] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 444 /կլոր/], **Կուտապ** – ոսպով, սոխով եւ ընկոյզով համեմեալ հաց (11ա) +[ՀԳԲ, 608] +[ՍԱՀԲԲ, 368] +[ՀԼԲԲ, 217] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 485], **Ակիաստ** – ցորեկի ճաշ (23ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Փլաւ** – ձաւարով կեր (32բ) եւն.: Ուշագրաւ է սեխի անուանումը՝ **կլօր**. *Շրջան* իմաստին զուգահեռ այս բառիմաստի գոյութիւնը: Բառարանում **փլաւը**՝ բացատրւում է *ձաւարով ուտելիք*, մինչդեռ այժմ փլաւ են անուանւում նաեւ բրնձով, ոսպով եւ այլ ընդեղէններով պատրաստուած ուտելիքը, այսինքն տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: Իսկ **Կանգառ** բոյսի համանուն բառը ժամանակակից գրական հայերէնում նշանակում է *երթուղու յաջորդական կանգ առնելու տեղ, կայան*: Ժամանակակից արեւմտահայերէնում այն պահպանել է իր իմաստը:

Կենցաղում գործածուող առարկաներ, տնտեսութեանը, անասնապահութեանը վերաբերող բառեր. բարբառային բառարաններում արձանագրուած այսօրինակ բառերն ընդհանրապէս շատ կարեւոր են յետագայում անասնապահութեանը, հողագործութեանը, տնտեսութեանը վերաբերող առանձին բառարանների կազմման համար. **Ագուգայ** – հողէ գործիք ինչ ի պէտս թոնրոց (1ա) +[ՀԳԲ, 45] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 5] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 4], **Ասղանի** – թել, թերձան (1բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] +[ՆՀԲ, 314] +[ՀԲԲ, 235], **Բանակ** – կարգ որթոյ տկնկոց, թումբ կոչոց նորա (2ա) +[ՀԳԲ, 172] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 160] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 326], **Դժդժալ** – ճենճերիլ մսեղէն խորտկաց (3բ), **Էջ** – խաղողի առաջի կաթիլս ի հնձան (5ա) +[ՀԳԲ, 332] +[ՍԱՀԲԲ, 195] +[ՀԼԲԲ, 27] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 49], **Էրէմուկ** – դեռ չծնած գոմէշ (5ա) +[ՀԳԲ, 300 /երեմուկ/] +[ՍԱՀԲԲ, 196] +[ՀԼԲԲ, 33 /էրեմուկ/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 50], **Թաղթփուշ** – գորգ (խալի) (5բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 70] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Թաղիս** – լմկած բուրդ (քէչէ) (5բ),

Թնթոց – հարիսայ հարելու փայտին ասի (6ա) -[ՀԳԲ] +[ՍԱՀԲԲ, 216] +[ՀԼԲԲ, 119] +[ՆՀԲ, 815] +[ՀԲԲ, 114], **ժեխ** – աւելուցք (չօփ). Մուշ (6բ) -[ՀԳԲ] +[ՍԱՀԲԲ, 228] +[ՀԼԲԲ, 156] +[ՆՀԲ, 834] +[ՀԲԲ, 142], **Խսիր** – փսիաթ (9ա), **Խօտ** – կոտրած պուտի կամ կժի կտոր (9բ) +[ՀԳԲ, 500] +[ՍԱՀԲԲ, 299] +[ՀԼԲԲ, 345 /խոդ/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 315], **Կատան** – թաղիք շինող վարպետ (10ա) +[ՀԳԲ, 554] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 51] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 398], **Կեանայ** – եզանց եւ կովուց ոջիլ, տիզ (10ա), **Կլկլիկ** – նեղբերան փարչ (10բ), **Մօլ** – խոշոր մեծ շուն. գայլխեղդ (14բ) +[ՀԳԲ, 803] +[ՍԱՀԲԲ, 496] +[ՀԼԲԲ, 72 /մոլ/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 379], **Ջրածիկ** – հողէ գաւաթ ջուր խմելոյ համար (18ա) +[ՀԳԲ, 942] +[ՍԱՀԲԲ, 577] +[ՀԼԲԲ, 197] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 148], **Սաեայ** – ճերմակ բեհեզից պատմուճան հարսից (18ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Սեղանտախտակ** – միս վրան կտրատելու փայտ, 2. հաց ուտելու, 3. գունդ գրտնկելու (18ա) եւն.: Այս շարքում հետաքրիքիր են ժամանակակից գրական հայերէնի **խոտ** եւ **բանակ** բառերի իմաստային տարբերութիւնները ՝ **Խօտ** – կոտրած պուտի կամ կժի կտոր (9բ), **Բանակ** – կարգ որթոյ տկնկոց, թումբ կոչոց նորա (2ա): **Բանակ** բառը *կարգի, շարքի* իմաստով ընդհանուր է նաեւ ժամանակակից գրական հայերէնի համար՝ *կարգ զինուորների*, եւ բառիմաստի ընդլայնմամբ՝ *որեւէ պետութեան զինուած ուժերի ամբողջութիւն*:

Խաղերի անուանումներ. **Էրկէն էշ** – խաղ ինչ տղայոց ի Վան (5ա), **Լակօ** – կաղինով խաղ ինչ տղայոց ի Վան (7բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Օռտօզ** - խաղ ինչ տղայոց ի վերայ բոլորակ գծի (22ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ] եւն.: Փիրղալէմեանն արձանագրել է նոյնիսկ այնպիսի բառ, որը բուն խաղի անուանումը չէ, այլ նշանակում է խաղից յետոյ՝ երեխաների միմեանց ծաղրելը. **Զըռ** – տղայոց յետ խաղի ի վերայ միմեանց ծաղրել (4բ):

Կոչականներ, եղանակաւորող բառեր, ձայնարկութիւններ. **Ախպէրիկ** – ո՛ եղբայր, եղբայր իմ (1ա), **Զըրըմփ** – մի բանի վերէն ի վար անկանելու ձայն (4բ), **Էրանիկ** – երանի՛ (5ա), **Փը՛շտ** – կատու վախցնելոյ կերպ (21ա), **Օհօ՛** – կով կշելոյ ձայն (22ա), **Օ՛շտ** – շուն վախցնելոյ կերպ (22ա) եւն.: Ժամանակակից գրական հայերէնում կոչական ձայնարկութիւններն են՝ աղջի՛, ա՛յ, արա՛, ծո՛, տո՛ եւն., եւ Փիրղալէմեանի արձանագրած **ախպէրիկ** տարբերակը այս շարքի հետաքրքիր լրացում է:

Դարձուածային արտայայտութիւններ. **Գրողի պրտուճ** – խօսք անիծից մարցն (3բ), **Գրողի տարած** – առ տղայս Վանայ ոճովն (3բ) եւն.:

Գաւառական բառարանում չափազանց ուշագրաւ են որոշ բառայօդուածներում Փիրղալէմեանի՝ գլխաբառերի բացատրութիւնները, հետաքրքիր դիտարկումները եւ տեղ-տեղ բանաստեղծական նկարագրութիննե-

րը[32], երբ գլխաբառերի իւրօրինակ բնորոշումներն արտայայտում են հեղինակի ուրոյն լեզուամտածողութիւնը. **Անիծ** – հունդ կամ հաւկիթ ոջլոց (1բ), **Բոբիկ** – անկօշիկ, 2. ամէն բանի մէջ մտնող (2բ), **Գէժ** – ապուշ, խելք վրան չպահող (սարսամ) (2բ), **Գէշանալ** – աղէկ ընթացից շեղիլն, մերձ ի մահ լինիլ (3ա), **Գիտնոսիկ** – շատգէտ իբր Խիկար. Շատախ (3ա), **Զըռզըռ** – էշին երգել տալու յորդորել (4բ), **Լինդ** – ատամանց քովի միս (7բ), **Խումար** – գինեթափ (9ա), **Խօպան** – անգործ դատարկաշրջիկ (9բ) +[ՀԳԲ, 483 /խոպան/[33]] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 350 /խոպան/] +[ՆՀԲ, 966 /խոպան/] +[ՀԲԲ, 285 /խոպան/], **Խօպանանալ** – դատարկաշրջիկ լինիլ (9բ), **Կոպ** – աչաց շրթունք (11ա), **Կտուց** – հաւու բերան կամ թռչնոց բերան (11բ), **Ձոր** – լեռնամէջ (12բ), **Մասուր** – վարդի պտուղ. սերմի պարկ (13բ), **Պզուկ** – ոսպի չափ մորթի վերայ եղած ուռուցք (16բ), **Տանձ** – անխելք, ապուշ (19բ) +[ՀԳԲ, 1012] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 129] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 371] եւն.: *Աչքերի շրթունք* (կոպ) կամ *թռչունների բերան* (կտուց) բառակապակցութիւնները իմաստային առումով իւրօրինակ ձեւակերպումներ են, որոնք հրաշալի արտայայտում են նաեւ բառիմաստը: Բառընտրութեան տեսանկիւնից ուշագրաւ է նաեւ «**Ափսաթաթիկ** – փոքր տղայի ձեռօք եւ ոտիւք նոր քայլափորձ» (2ա) +[ՀԳԲ, 161] +[ՍԱՀԲԲ, 78] +[ՀԼԲԲ, 139] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 299] գլխաբառի առկայութիւնը բառարանում, որը ժամանակակից գրական հայերէնի բառապաշարում եւս կարող է իր ուրոյն տեղն ունենալ, քանի որ բառակազմութեան եւ իմաստային տեսանկիւնից լիովին համապատասխանում է հայերէնի բառակազմական օրինաչափութիւններին:

Գաւառական բառարանում արձանագրուած բառերի առանձին խումբ կարելի է համարել այն գլխաբառերը եւ իրենց բացատրութիւնները, որոնք ժամանակակից հայերէնում հոմանիշեր են՝ վերջիններիս մի մասն այստեղ արտայայտուած նաեւ բառակապակցութիւններով՝ **Գլխացաւ** – գլխի ցաւ (3ա), **Գլխաւոր** – տան մեծ, 2. էրիկ մարդ (3ա), **Կեղտ** - աղտ (10ա), **Կնքել** – մկրտել (10բ), **Կրունկ** – գարշաբար (11բ), **Ձու** – հաւկիթ (12բ), **Ճոռտ** – գերի. Տփխիս (13ա), **Պապէ պապ** - հաւուց հաւ (30բ), **Վեց ամսական** – վեցամսեայ (31բ) եւն.: Նշուած բառերը նորութիւն չեն, սակայն ուշագրաւ են այդ ժամանակաշրջանում նոյնիմաստ բառերի գործածութեան յաճախականութիւնը պարզելու համար: Այսինքն եթէ Փիրղալէմեանը **կնքել** գլխաբառը բացատրում է **մկրտել** բառով, նշանակում է, որ

---

[32] Դա պատահական չէ, քանի որ Փիրղալէմեանն իր գործերից որոշները գրել է չափածոյ, օր.՝ «Ճանապարհորդութիւն»ները. Նա ունի նաեւ բանաստեղծութիւններ:

[33] Փիրղալէմեանի նշած իմաստով է միայն՝ «պարապ-սարապ», գործածութեան վայրը եւս Աճառեանը նշում է՝ «Վան»:

մկրտել բառն այդ ժամանակ գործածման աւելի բարձր յաճախականութիւն է դրսեւորել, առաւել տարածուած ու հասկանալի է եղել: Նմանապէս **կրունկ** բառը բացատրում է **գարշաբար** բառով, ինչը նշանակում է, որ **գարշաբար** բառն առաւել հասկանալի է եղել այդ շրջանում, քան **կրունկ** բառը: Համապատասխանաբար առաւել տարածուած են եղել **աղտ**, **հաւկիթ** բառերը՝ **կեղտ**, **ձու** բառերի համեմատ եւն.: Այս շարքի գլխաբառերից որոշները եւս այժմ գրական բառապաշարի լիարժէք անդամ են՝ **գըլխացաւ**, **գլխաւոր**, **կրունկ**, **վեց ամսական, ձու, կեղտ** եւն.:

Տեղային սահմանափակում ունեցող գաւառական բառեր. սրանք այն բառերն են, որոնք ունեն սահմանափակ կիրառութիւն, հասկանալի են միայն տուեալ բարբառի կրողներին եւ բարբառից դուրս՝ այլ բարբառներում հիմնականում չեն հանդիպում: Այլ խօսքով՝ սրանք են բուն *գաւառական-բարբառային* բառերը. **Ակընջկլայ** – բարի լուր. բարի լուր տուողի պարգեւ տալ (1ա) +[ՀԳԲ, 62 /ականջկլայ/] +[ՍԱՀԲԲ, 14] +[ՀԼԲԲ, 31] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 31], **Անկալատ** – ամբիծ, շատ գեղեցիկ, խօրոտ (1բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 61] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Բուբու** – թռչուն մի ի ձայնէն կոչեալ (2բ) +[ՀԳԲ, 203 /հոպոպ թռչունը/] +[ՍԱՀԲԲ, 115] +[ՀԼԲԲ, 218] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 389], **Բքլօզ** – տնակ, խրճիթ (2բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 225 /բքլոզ/] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Գահտիկ** – ծածուկ, գաղտուկ, թա*նգ*ուն (2բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 229 /գախտիկ/] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Գնտածուրիկ** – գտնուած իր ինչ (3ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Գօրովրել** - համոզել, սիրտ շահել (3բ) +[ՀԳԲ, 252 /գորովրել/] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 284 /գորովրել/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 446 /գորովրել/], **Դաղ** – խար, խարան (3բ) +[ՀԳԲ, 263] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 301] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 484], **Դամաղ** – փոքր ինչ արբեալ. Երեւան (3բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 303] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Դաշ** – յառաջ, նախ, կանխապէս (3բ) +[ՀԳԲ, 266] +[ՍԱՀԲԲ, 159] +[ՀԼԲԲ, 307] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 486], **Զակօլ** – մեծ թրթուր (4ա) -[ՀԳԲ] +[ՍԱՀԲԲ, 187 /զաքոլ/] +[ՀԼԲԲ, 395 /զակոլ/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 16 /զաքոլ/], **Զմլայ** – այսպէս, այսկերպ. Մուշ (4բ) +[ՀԳԲ, 321] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 415] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 28], **Զօնար** – գօտի (4բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Էնասկնայ** – այնպէս, այնգունակ (5ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Էօդ** – որթոյ շիւղ (5ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Լախ** – հոտած հաւկիթ (7ա) +[ՀԳԲ, 407] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 195] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 180], **Լէպ** – հնարք, ձեւ խաբման (7բ) +[ՀԳԲ, 420 /լեպ/] +[ՍԱՀԲԲ, 247] +[ՀԼԲԲ, 220 /լեպ/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 196], **Լիլ** – տիղմ, կաւ, ցեխ (7բ) -[ՀԳԲ] +[ՍԱՀԲԲ, 248] +[ՀԼԲԲ, 226] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 198], **Լխճոր** – աղտոտ, զազիր (8ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 230] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 202], **Լոկիկ** դեռ երես մազ չբուսած պատանի (8ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -

[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Լուտիկ** – շան փոքր լակոտ (8ա) +[ՀԳԲ, 439] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 255] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 218], **Խոռճկել** – տաճիկ կամ քիւրտ թաղելուն ասի (9ա) +[ՀԳԲ, 483] +[ՍԱՀԲԲ, 288] +[ՀԼԲԲ, 352] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 285], **Խօշխաթուն** – մարախ[34] (չէկիրկէ) (9բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 350 /խոշխաթուն/] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Կեռակ** – այլազգ, հեթանոս (10բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Կլաւ** – պարարտ, գէր (10բ, կրկն.՝ 27ա) +[ՀԳԲ, 572] +[ՍԱՀԲԲ, 344] +[ՀԼԲԲ, 98] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 442], **Կռիկ** – ագռաւ (11ա) +[ՀԳԲ, 613] +[ՍԱՀԲԲ, 372] +[ՀԼԲԲ, 168] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 491], **Նաղարայ** – թմպուկ (14բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 132] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 439], **Պնայ** – որմնադիր վարպետ (17ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 201 /բնա/] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Պսպօր** – աչքբաց, ճարպիկ (17բ) +[ՀԳԲ, 930] +[ՍԱՀԲԲ, 569 /մանկահասակ աղջիկ/] +[ՀԼԲԲ, 123 /պսպոր/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 123], **Սարակ** – օրականաւ բանուոր, գործաւոր (18ա) +[ՀԳԲ, 957] +[ՍԱՀԲԲ, 584] +[ՀԼԲԲ, 283] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 191], **Սլուլ** – սաստիկ ցուրտ (18բ) +[ՀԳԲ, 972] +[ՍԱՀԲԲ, 592] +[ՀԼԲԲ, 358] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 225], **Տատիկ** – վարպետի կին (19բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Փափա** – հաց ըստ հնչման տղայոց (20բ) +[ՀԳԲ, 1066] +[ՍԱՀԲԲ, 649] +[ՀԼԲԲ, 358] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 492], **Փէքրավոր** – վարդապետի սպասաւոր (21ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Քիւշտիկ** – ըմբշամարտութիւն (կիւլէշ) (21բ) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Այլօր** – աքաղաղ (23ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Գէլվազ** – սաստիկ ցուրտ քամի (23բ) +[ՀԳԲ, 223 /գելուազ/] +[ՍԱՀԲԲ, 131] +[ՀԼԲԲ, 235 /գելվազ/] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 433], **Դիր** – անգամ, հեղ (24ա) +[ՀԳԲ, 278] +[ՍԱՀԲԲ, 165] +[ՀԼԲԲ, 336] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 523], **Դիր** – գերեզման (24ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] -[ՀԼԲԲ] +[ՆՀԲ, 627] +[ՀԲԲ, 523], **Խան** – պանդոկ (26ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 279] +[ՆՀԲ, 919] +[ՀԲԲ, 237], **Խէճ** – մերձ, կից, մօտ (26ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 311 /խեճ/] -[ՆՀԲ] -[ՀԲԲ], **Մուխսի** – մահտեսի (29ա) -[ՀԳԲ] +[ՍԱՀԲԲ, 490] +[ՀԼԲԲ, 92] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 362], **Պտղի** – վանքի բաժին ցորէն (30բ) -[ՀԳԲ] +[ՍԱՀԲԲ, 570] +[ՀԼԲԲ, 127] -[ՆՀԲ] +[ՀԲԲ, 125], **Պրակ** – տնկեալ անտառ (31ա) -[ՀԳԲ] -[ՍԱՀԲԲ] +[ՀԼԲԲ, 131] +[ՆՀԲ, 665] +[ՀԲԲ, 127]: Ուշագրաւ է, որ Փիրղալէմեանը **անկալատ** (գեղեցիկ) բառը բացատրում է նաեւ **խօրոտ** բառով, մինչդեռ **խօրոտ** բառի բացատրութեան համար եւս ունի առանձին բառայօդուած՝ **Անկալատ** – ամբիծ, շատ գեղեցիկ, խօրոտ (1բ), **Խօրոտ** – գեղեցիկ, աղուոր (9բ):

Ըստ վերը նշուած բառարաններում տուեալ բառերի առկայութեան՝ պարզ է դառնում, որ Փիրղալէմեանի արձանագրած ոչ բոլոր բառերն են

[34] Իմա՛՝ մորեխ:

ներառուել նոյնիսկ յետագայում կազմուած բառարաններում՝ գոնէ իր նըշած բառաձեւով կամ բառային նրբիմաստով: Այսպէս օրինակ՝ **Սաեայ** բառը արձանագրուած է վերը յիշատակուած բառարաններում **Սայա** բառաձեւով՝ հիմնականում *կանացի գոգնոց* իմաստով, սակայն ոչ մէկում առկայ չէ Փիրղալէմեանի նշած՝ «*ճերմակ բեհեզից պատմուճան հարսից*» իմաստը: Այս առումով Փիրղալէմեանի Գաւառական բառարանն աւելի է կարեւորւում՝ որպէս նոր բարբառային բառերի կամ արդէն արձանագրուած բառերի նոր իմաստների անփոխարինելի շտեմարան[35]:

Բերուած օրինակները ցոյց են տալիս, որ Ղեւոնդ վարդապետը կարողացել է մեծ հմտութեամբ ժողովել ու մէկտեղել հայերէնի բառապաշարի տարբեր շերտեր՝ առօրեայ-խօսակցական լեզուում գործածուող համագործածական բառերից մինչեւ տեղային սահմանափակում ունեցող բարբառային բառեր[36]:

ԻԲՐԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ

Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանի մեծագոյն ցանկութիւնը եղել է իր հաւաքած արժէքաւոր սկզբնաղբիւրների լոյսընծայումը: Այդ նպատակով իր հրատարակած գրքերի առաջաբաններում նա հայցում է ուսումնասէր ընթերցողների օժանդակութիւնը (որպէսզի նրանցից իւրաքանչիւրը գնի իր հրատարակած գրքերից մէկը)՝ միւս հատորները հերթականութեամբ հրատարակելու համար.

> Եթէ ընթերցասէր Հայ ազգայինք եւ սիրողք պատմութեան նախնեաց իւրեանց, գնահատելով զայս մեր տաժանելի աշխատութիւնս, որ յօգուտ ինքեանց յօժարութեամբ ի գործ եդի զմի մի օրինակ ՆՕՏԱՐՔ Հայոց գնելով քաջալերեսցեն զմեզ եւ չթողուցուն նուաստիս մնալ եւ ճնշիլ ի ներքոյ ծանր պարտուց տպագրութեան առիթ կարդան այսու ինձ հետզհետէ հրատարակել զամենայն հաւաքածոյս իմ շարունակաբար, որք կարեն մեծ լոյս սփռել ի վերայ պատմութեանս մերոյ. որք այժմ կան եւ մնան ի մէնջ անծանօթ ի ձեռագիր մատեանս ցրուեալք ի սփիւռս տիեզերաց[37]:

---

[35] Չի բացառւում, որ Փիրղալէմեանի արձանագրած բառերն այլ հնչիւնական տարբերութիւններով գտնուեն այդ բառարաններում (որոշները կից նշել ենք շեղ գծերի մէջ՝ //), սակայն բառաձեւի նոյն այդ ուղղագրութեամբ բացակայում են:

[36] Նորայայտ Գաւառական բառարանը հիմնովին արժեւորելու համար անհրաժեշտ է կատարել համակողմանի ուսումնասիրութիւն, որը, կարծում ենք, մօտ ապագայում կ'իրականացնենք՝ բառարանի բնագրի հրատարակմանը զուգահեռ:

[37] *Նօտարք հայոց*. հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսպեցւոյ՝ Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, 1888, էջ Ե.-Զ.. նաեւ՝ *Չորս ընկերք, որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչեւ Կոստանդնուպո-*

Մեծ վարդապետի այս չիրագործուած ցանկութիւնն արձանագրուած է նոյնիսկ նրա չափածոյ տապանագրի մէջ, որ յօրինել է Խրիմեան Հայրիկը՝ ներկայացնելով Ղեւոնդ վարդապետի իրեն ուղղուած խնդրանքն ու իղձը. «*Հայրի՛կ, քեզ յանձնեմ եւ կտրակ թողում / Ձերկոցս իմ վաստակ ի լոյս հա՛ն, ի լոյս*»[38]:

Այսու յոյս ունենք, որ մօտ ապագայում կ'աւարտենք հրատարակութեան պատրաստումը բազմաշխատ հոգեւորականի եւ բանասէրի այս եւ միւս անտիպ եւ նորայայտ երկերի, փորձելով իրագործել նուիրական ցանկութիւնը՝ երախտաշատ վարդապետին ի նպաստ հայ բանասիրութեան, ձեռագրագիտութեան եւ պատմութեան:

Համառօտագրութիւններ.-

ՀԳԲ՝ Հր. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, Լազարեան ճեմարան, Մոսկուա, 1913:

ՍԱՀԲԲ՝ Սահակ Ամատունի, *Հայոց բառ ու բանը*, ելեքտրաշարժ տպարան Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1912**:**

ՀԼԲԲ՝ *Հայոց լեզուի բարբառային բառարան*, հտ. 1-7, ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիա, Երեւան, 2001-2012:

ՆՀԲ՝ *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, երկասիրութիւն երից վարդապետաց՝ ի. Գաբրիել Աւետիքեան, ի. Խաչատուր Սիւրմէլեան, ի. Մկրտիչ Աւգերեան, *հտ. 1, Ա-Կ,* տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 1836 եւ *հտ. 2, Հ-Ֆ,* Վենետիկ, 1837:

ՀԲԲ՝ Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտր. 1-4*, Հայկ. ՍՍՌ պետական հրատարակչութիւն, Երեւան, 1944-1945:

A RECENTLY DISCOVERED DICTIONARY OF PROVINCIAL WORDS (1874-1888) BY GHEVOND VARDAPET P'IRGHAMEMIAN

(SUMMARY)

ARMINE MELKONYAN (armine.melkonyan@yahoo.com)
HASMIK IRITSYAN (hiritsyan@gmail.com)

The essay presents the recently discovered "Joghovatzu Baratetr Gavarakan Barits" (Dictionary of Collected Provincial Words) dictionary of provincial words, compiled by Ghevond Vardapet P'irghalēmean (1830, Van-1891, Jerusalem), a prominent philologist, clergyman and traveller. Ghevond Vardapet recorded provincial words mainly during his travels in the cities and towns of Western Armenia, particularly Van, Mush, Karin, Kars, Archesh, and Shatakh, as well as Yerevan, Tbilisi and Tabriz. Most of the words, however, are typical of the Van dialect, as he was originally from Van and a monk at the Varag Monastery of Van.

լիս, էջ Բ.. նաեւ՝ *Ճանապարհորդութիւն ի Մայր աթոռն Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս*, էջ Գ.-Դ.:

[38] Մ. Աղաւնունի, *Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, 1929, էջ 235. նաեւ՝ Տ. Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի, հտր. երկրորդ*, Երուսաղէմ, 1931, էջ 1285-86:

The Dictionary was put in order almost entirely in the city of Manchester between January 1874 and May 1877, while he was the pastor of the Armenian community of Manchester. However, P'irghalēmean completed his dictionary in Constantinople on 13 December 1888, while serving at the Armenian Church of St. Nikoghayos in Topkapi.

The dictionary mainly contains words related to everyday life, food and games, recorded "*in their original sound and meaning*" and for the "richness of the Armenian language", as the compiler explains. A comparison of some of the words in this dictionary with other similar dictionaries shows that not all the words recorded by P'irghalēmean are included in other dictionaries, at least not in the form or meaning he mentions. In this respect, his dictionary is a valuable addition to the corpus of dialect words or new meanings of words already recorded.

The authors note that that Ghevond Vardapet managed to skillfully collect and bring together different layers of Armenian vocabulary, from colloquial and widespread everyday words to dialect words.



Լրացուած հատուածի եւ ամբողջ բառարանի վերջին էջը



Բառարանի առաջին մասի սկիզբը

1918–1920Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱՅԻ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՒ ԱՄՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԳԱՅԻԱՆԷ ՄԱԽՄՈՒՐԵԱՆ
ggmakhm@hotmail.com

ՄՈՒՏՔ

Յօդուածում վերլուծւում է Ֆրանսայի, Բրիտանիայի եւ ԱՄՆի քաղաքական եւ ռազմական գործիչների գնահատականների եւ վերաբերմունքի փոփոխութիւնը անկախ Հայաստանի Հանրապետութեան կերտման, Արեւմտեան Հայաստանի օսմանեան լծից ազատագրման եւ այդ երկու մասերից միացեալ պետութեան ստեղծման հեռանկարների հանդէպ: Դաշնակից տէրութիւնների կարծիքը ՀՀի մասին մեծապէս ձեւաւորում էր նրանց վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ, ուստի նրանց հետ արդիւնաւէտ աշխատելու համար անհրաժեշտ է արտաքին գործընկերների հայեացքների խորը ուսումնասիրութիւն: Արեւմտեան քաղաքական գործիչների վերաբերմունքը յաճախ կախման մէջ է եղել նրանց հետապնդած շահ-նպատակներից, այնուամենայնիւ, այն մշակւում էր՝ ելնելով առկայ իրադարձութիւններից ու հայկական իշխանութիւնների աշխատանքից: Կիրառելով երեք տէրութիւնների գործունէութեան համեմատական վերլուծութիւն ու ժամանակագրական զուգադրութիւն, ինչպէս նաեւ նոր արխիւային նիւթի եւ թեմային վերաբերող արդի հրապարակումների միաձուլում՝ յօդուածը քննարկում է, թէ որքանով է հայկական անկախութեան ընկալումը արտացոլուել՝ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ Բրիտանիայի, Ֆրանսայի եւ ԱՄՆի ընթացիկ ու յետագայ քաղաքականութեան մէջ: Փաստացի նիւթի զգալի մասը, յօդուածի բուն թեման ու առաջարկուող եզրակացութիւնները առաջին անգամ են ներկայացւում ընթերցողին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ՝ 1917Ի ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1917ի բոլշեւիկեան յեղափոխութիւնը դրդեց օսմանեան բանակին իւր նախորդ նահանջներից ու պաշտպանութիւնից անցնել լայնածաւալ յարձակման՝ կովկասեան ամբողջ ճակատով: Սա յանգեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը եւ ամբողջ տարածքը պաշտպանելու անհրաժեշտութեան: Հայաստանի անկախութիւնը առաւել արդիւնաւէտ գործիքն էր, այդ խնդիրը լուծելու համար:

Երբ 1917 Նոյեմբերի 23ին հայոց ռազմական յանձնակատարի ժամա-

նակաւոր պաշտօնատար, աւագ զօրավար Լեւոն Թադէոսի Տիգրանեանը (Լէոնիդ Թադդէի Տիգրանով), դոկտոր Հ. Զաւրեանն ու փոխգնդապետ Նիկողայոս Մելիք-Փարսադանեանը (Նիկոլայ Ալեքսանդրի Մելիք-Պարսադանով) Պետրոգրադում Ֆրանսայի դեսպան Ժ. Նուլանսի հետ հանդիպման քննարկել են ֆրանսացու առաջադրած հարցը՝ կովկասեան ճակատի համար հայկական զօրամիաւորումներ կազմաւորելու մասին: Դեսպանը «այդքան անյուսալի» էր համարում Ռուսաստանի վիճակը, որ հայերին խորհուրդ էր տալիս յենուել միայն սեփական ուժերի վրայ եւ զբաղուել ազգային բանակաշինութեամբ, «այլապէս հայերին սպառնում էր վերջնական կործանում»:

Ֆրանսան պատրաստ էր սատարել այդ գործին, քանի որ «*անկախ Հայաստանի կերտումը մտնում էր նրա ցանկութիւնների շրջանակի մէջ*»: Դեսպանը խոստացել էր բարոյական ու նիւթական օգնութիւն, իսկ հայերը «*պէտք է կազմակերպէին որեւէ պատասխանատու մարմին, որը կը վայելէր ազգի վստահութիւնը եւ կը կարողանար գործել իբրեւ կառավարութիւն*»[1]: Ի պատասխան՝ խօսակիցները Նուլանսին պատմել են Հայոց Ազգային ժողովի եւ Փարիզում նրա ներկայացուցիչ Պօղոս Նուբարի մասին[2]: Նորութիւնը ողջունելի էր, քանի որ դեսպանը Նուբարի մտերիմներից էր:

Ֆրանսացին հիւրերին առաջարկեց կապեր հաստատել նաեւ բրիտանացիների եւ ամերիկացիների հետ, եւ աւելի մանրամասն զրուցել Պետրոգրադում ֆրանսական ռազմական առաքելութեան պետ, զօրավար Ա. Նիսսէլի հետ: Վերջինս հաստատեց Ֆրանսայի՝ հայերին փող, հրահանգիչներ ու հանդերձանք տրամադրելու պատրաստակամութիւնը: Նիսսէլը նաեւ նշեց Թիֆլիսում գործող Ֆրանսայի ռազմական գործակալ, փոխգնդապետ Պ.-Օ. Շարդինյիի կարծիքն իմանալու անհրաժեշտութիւնը: Զօրավարը զգուշացրեց Ռուսաստանում յեղափոխութեան եւ անիշխանութեան խորացման վտանգի մասին. այն դժուարացնելու էր բանակաշինութիւնն ու յանգեցնելու էր հայերի մեկուսացմանը: Նա խնդրեց մշտական կապ պահպանել իր, բրիտանացի եւ ամերիկացի ռազմական կցորդների հետ:

Այդ հարցի առնչութեամբ, 1917ի Նոյեմբերի 24ին Բրիտանիայի ռազմական կցորդ, զօրավար Ա. Նոքսը յայտարարեց, թէ Լոնդոնին շաբաթներ են հարկաւոր խնդիրը վերլուծելու համար: Ըստ Տիգրանեանի, Զաւրեանի եւ Մելիք-Փարսադանեանի, Նոքսը «*թերագնահատեց նրանց առաջարկից բխող Դաշնակիցների շահը*»: Բրիտանացին ցածր էր գնահատում հայերի կազմակերպուածութիւնը, չէր ցանկանում մեծ գումարներ

[1] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 1267, ցուցակ 2, գործ 105, թերթ 1:

[2] Նրա մասին տե՛ս՝ Մ. Մարտիրոսեան, «Ազգային մեծ գործիչը եւ բարերարը. Պօղոս Նուբար փաշա», *Պատմաբանասիրական հանդէս*, 1:2021, էջ 3-25:

տրամադրել եւ հայերին խորհուրդ տուեց գործակցել կազակների հետ: Նման միտք արտայայտեց նաեւ նրա ամերիկացի պաշտօնակից զօրավար Ջադսոնը: Ըստ նրա՝ ԱՄՆի կառավարութիւնը, «*անկասկած, կը գայ հայերին օգնութեանը՝ Ռուսաստանում որոշ կարգ ու կանոն հաստատուելուց յետոյ*»[3]: Այժմ նա առաջարկում էր հանդարտ սպասել, մինչեւ իրադարձութիւնները իրենք իրենց կարգաւորուեն: Այնինչ, լայնածաւալ ճգնաժամի եւ քաղաքական միայնութեան պայմաններում Հայաստանին՝ բոլոր երկիւղներով հանդերձ, հարկաւոր էր ոչ թէ յետաձգել, այլ արագացնել անկախութեան ընդունումը: Հասկանալի է, որ որքան լուրջ է վտանգը, այնքան շատ պէտք է լինի այդ հասարակութեան ազատութիւնը, ինքնուրոյնութիւնն ու նախաձեռնութիւնը: Սրանք ցանկացած ինքնապահպանման կենսական միջոցներն են:

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ 1918Ի ԿՈՎԿԱՍԵԱՆ ՃԱԿԱՏԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՈՐՊԷՍ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՆԱԽԱԴՐԵԱԼ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ

Երեք պետութիւններից Ֆրանսան էր բոլորից աւելի սատարում Հայաստանի անկախութեանը: Անկախութիւնը դիտւում էր որպէս ազգի ինքնակազմակերպման եւ ազգապահպանման միակ միջոց: 1917ի Դեկտեմբերի 9ին Շարդինային տեղեկացրեց Նուլանսին, որ ռուսա եւ թրքահայերը միանգամայն ունակ են միասնական պետութիւն ստեղծելու: Յաղթանակից յետոյ Դաշնակիցները կարող են ձեւաւորել նման միաւոր՝ միջազգային համաժողովի անունից: Քանի որ Նուլանսը սերտօրէն առնչւում էր Հայոց Ազգային խորհրդի նախագահի, Կ.Պոլսում ՀՀ պատուիրակութեան ղեկավար Աւետիս Ահարոնեանի հետ, Շարդինային թելադրում էր սատարել ինքնապաշտպանութեան եռանդուն կազմակերպիչ Ա. Թորգոմին (Արշակ Երուանդեան) եւ օգնել նրան նոր գումարտակներ կազմակերպելու խնդրում: Չէ՞ որ հայերը իրենց բանակ էին հրաւիրում բրիտանացի եւ ֆրանսացի հրահանգիչներ ու հսկիչներ: Այնինչ, ռուսական բանակը՝ նրան տրամադրուած հսկայ գումարներով հանդերձ, գտնւում էր անյուսալի վիճակում[4]:

Ֆրանսայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին 1918ի Յուլիսի 12ին յղած նամակում Նուբարը նշել է ֆորէյն օֆիսի ղեկավար Ա. Բալֆուրի ամսի 11-ին համայնքների պալատում արտասանած ճառը: Վերջինս պնդում էր հայերի բաւարար չափով զարգացած լինելը, որպէսզի Դաշնակիցները կարգաւորեն նրանց ճակատագիրը ազգերի ինքնորոշման սկզբունքով: Նամակի հեղինակը մտահոգ էր, որ Պոլսում գումարուելիք Քառեակի խորհրդաժողովը ՀՀին չպարտադրէր Բաթումի պայմանագրի վաւերա-

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 105, թ. 2:
[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 1:

ցումը: Սա կը ստիպէր Երեւանին «*համաձայնուել փոքր, իրեն անկախ անուանող, բայց յետագայում Գերմանիայի վասալ դարձած* [Բաթումի պայմանագրի սահմաններով գծած Հայաստանի] *Հանրապետութեան հետ*»: Այնինչ, 25 հազ. հայ, որոնք քաջաբար կռւում էին կովկասեան ճակատում, բարոյանիւթական աջակցութեան սուր կարիք ունէին: Ուստի Ֆրանսան պէտք է մերժի Պոլսի բանակցութիւնները: Նուբարը պահանջում էր Կլեմանսոյի կառավարութիւնից «*արդարութիւն դրսեւորել յաղթանակի օրը հայերի ու նրանց ազգային իղձերի կատարման նկատմամբ*»[5]:

1918 Օգոստոսի 4ին եւ Սեպտեմբերի 6ին Գերմանիայում ՀՀ կառավարութեան ներկայացուցիչներ Համօ Օհանջանեանն եւ Արշակ Զուրաբեանը տեղեկացնում են Բեռլինում ՌԽԴՍՀ լիազօր ներկայացուցիչ Ա. Իոֆֆէի[6] հետ ունեցած իրենց բանակցութիւնների մասին: Վերջինս կտրականապէս մերժում էր նախ ամբողջ Անդրկովկասի, այնուհետեւ՝ հայերի անկախութիւնը: Գերմանիան «վերին աստիճանի թանկ էր համարում» բոլշեւիկների հետ հաստատուած լաւ յարաբերութիւններն, իսկ Աւստրօ-Հունգարիայի հետ բանակցելիս Մոսկուան միայն Վրաստանն էր զիջում: Գերմանիային տրամադրուելիք նաւթի դիմաց Բաքուն վերադարձնում էին Ռուսաստանին, եւ Բեռլինը խոստացաւ զերծ մնալ քաղաքական մեքենայութիւններից[7]:

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՅԵՏՈՅ

Դաշնակիցների յաղթանակից յետոյ ՀՀ կառավարութիւնը 1918ի Դեկտեմբերի 7ին հաստատեց հրահանգ՝ Դաշնակից պետութիւններ ուղարկըւող պատուիրակութեան համար: Այն նախատեսում էր.-

- Հայաստանի ներքին ինքնավարութիւն եւ քաղաքական ու ռազմական օրէնքների ինքնուրոյն ստեղծում: Արտաքին քաղաքականութեան առումով Հայաստանի անկախութիւնը սահմանափակուելու է այնչափ միայն, որչափ դա անհրաժեշտ կը լինի ապահովութիւն, հովանաւորութիւն եւ աջակցութիւն ձեռք բերելու համար:
- Հայաստանի մշտական չէզոքութիւնը ապահովուելու է միջազգային երաշխիքներով:
- Հայաստանի անկախութեան ապահովումը պէտք է որոնել մէկ կամ միքանի պետութիւնների դիւանագիտական եւ ռազմական պաշտպանու-

[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 357, թ. 268–269:

[6] Աւելի մանրամասն տե՛ս՝ А. Ю. Ватлин, Л. В. Ланник, Т. Пентер, *Берлинская миссия полпреда Иоффе 1928 г., Документы*, (*Ա. Յու. Վատլին, Լ. Վ. Լաննիկ, Տ. Պենտէր, Լիազօր ներկայացուցիչ Իոֆֆէի 1928ի Բեռլինի առաքելութիւնը. Փաստաթղթեր*) Մոսկուա, Политическая энциклопедия (քաղաքական հանրագիտարան), 2023:

[7] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 28 եւ գ. 656, թ. 132 դարձ.:

թիւնում. գերադասելի է մէկ պետութեան հովանաւորութիւնը: Մեծ պետութիւնների շարքում նախընտրելի է այն մէկի հովանաւորութիւնը, որն իր աշխարհագրական դիրքի եւ քաղաքական միտումների էութեամբ ազատ է տարածքային ձգտումներից եւ մեր երկրի ներքին քաղաքական կեանքին միջամտելու հակումներից:

- Հայաստանը կարող է դաշնային կամ համադաշնային կապեր հաստատել հարեւան պետութիւնների հետ: Եթէ մեծ պետութիւններից որեւէ մէկը չմտնի համադաշնութիւն՝ չէզոքութեան եւ հովանաւորութեան պայմանները մնում են ուժի մէջ:
- Առանձին անելիքներ.- Ձգտել որ Դաշնակից պետութիւնները եւ Միացեալ Նահանգները իրենց դիւանագիտական ներկայացուցիչներին ուղարկեն Երեւան եւ ընդունեն մեր ներկայացուցչին, առանց սպասելու որ Հայաստանի միջազգային դրութիւնը վերջնականապէս որոշուի: Այժմ եւեթ պարտաւորեցնել Թուրքիային պարպել Անդրկովկասը մինչեւ 1914ի սահմանները՝ յանձնելով Հայաստանին իրեն պատկանող հողերը՝ բոլոր ամրութիւներով եւ ռազմամթերքներով, փոստ-հեռագրային եւ անշարժ ամբողջ ունեցուածքով[8]:

Նոյն Դեկտեմբերին Նուբարի ղեկավարած Հայ Ազգային պատուիրակութիւնը «Հայկական դատի մասին» վերնագրեալ յուշագիր ներկայացրեց Դաշնակից Գերագոյն ռազմական խորհուրդ: Այն հայցում էր ազատ, միացեալ, անկախ հայրենիք «*Մեծ Տէրութիւնների եւ Միացեալ Նահանգների պաշտպանութեան ներքոյ*»: Այդ երկրներից մէկը՝ որպէս հոգատար, «*պէտք է տարիներ շարունակ կազմակերպի եւ ղեկավարի նոր պետութիւնը*»[9]: Նա պէտք է կարգադրի սահմանադիր ժողովի հրաւէրն ու «բաւականին երկար» իրականացնի ժամանակաւոր կառավարումը, այդ թըւում՝ գաղթականների հայրենադարձն ու տնտեսական զարգացումը, «*որպէսզի խնամարկեալ Հայաստանը հասունանայ մինչ լիակատար քաղաքական անկախութիւն*»:

Ազգային պատուիրակութիւնը չէր կասկածում, որ «*նորաստեղծ հայկական Արարատեան հանրապետութիւնը պատրաստակամութեամբ կը միանայ նոր հայկական պետութեանը*»՝ ձեւաւորելով միացեալ ամբողջութիւն: Այդ ինքնավար պետութիւնը, պատնէշ էր դառնալու «*խաղաղութեանն ու քաղաքակրթութեանը իրապէս սպառնացող*» պան-թուրանական շարժման առջեւ[10]: Սա էր հին, քաղաքակիրթ ժողովրդի մնացորդները փրկելու միակ լուծումը:

---

[8] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 183, թ. 7-8. նաեւ՝ Ս. Ղ. Ղազարեան, «Հայաստանի Հանրապետութեան քաղաքականութիւնը Հայկական Հարցում 1919–1920 թթ.», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 3:2002, էջ 177:

[9] *Memorandum On the Armenian Question, Armenian National Delegation at Paris*, 2nd issue, London., Waterlow Brothers & Layton Ltd., 1918, էջ 15:

[10] *Memorandum On the Armenian Question*, էջ 16:

Շուտով՝ 1919ի Յունուարի 13ին, Ալեքսանդրապոլում ՀՀ կառավարութեան ներկայացուցիչ Սիրական Տիգրանեանը տեղեկացրեց Ահարոնեանին՝ Անդրկովկասում բրիտանական զօրքի հրամանատար, զօրավար Ջ. Ֆորեստիէ-Ուոքըրի հետ իր բանակցութիւնների մասին: Զօրավարը պատմեց 1917ի դեկտեմբերեան այն համաձայնագրի մասին, որն ամբողջ երկրամասը ճանաչեց բրիտանական շահերի ոլորտ: Ըստ զօրավարի, նրա կայսրութիւնը «*շատ հաւանում եւ աջակցում էր անկախ հանրապետութիւնների գոյութեանը*»[11]: Ֆորեստիէ-Ուոքըրն հետաքրքրուած էր Ռուսաստանի սահմանադրական միապետութեան կողմնակից, Ռուսաստանի հարաւում ստեղծած Կամաւորական բանակի գլխաւոր հրամանատար, զօրավար տեղապահ Անտոն Դենիկինի վերաբերմունքով՝ հայկական անկախութեան հանդէպ: Սահմանների առնչութեամբ զօրավարը զատեց Բաթումը որպէս բրիտանական նահանգապետութիւն ու հեշտութեամբ Հայաստանին էր միացնում Կարսը, «*երբ համոզուի, որ նման Հայաստանը (կամայ-ակամայ) չի միանայ Ռուսաստանին*»[12]: Հակառակ դէպքում, Բրիտանիան կը ցանկանայ տեսնել այդ երկու տարածքները Ռուսաստանից դուրս:

Այդ զրոյցից յետոյ հրամանատարը Երեւան ուղարկեց գնդապետ Ք. Տեմպերլիին: Վերջինս խօսում էր մէկ պաշտպանող տէրութեան ենթակայ՝ Ալեքսանդրապոլից Մերսին փոռւած Հայաստանի մասին: Արեւելեան Հայաստանը միացւում էր Արեւմտեանին՝ որպէս միասնական պետութիւն, քանի որ օսմանեան մասը «*պէտք է ցանկացած պարագայում ազատուէր թուրքական լծից*»: Տեմպերլին կրկնեց Յունուարի 10ին հրապարակուած Դաշնակիցների յայտարարութիւնը, աւելացնելով, թէ՝ «*Մէկ ամիս առաջ այդ ամէնը մեզ դեռեւս պարզ չէր*»[13]: Բրիտանացին դժգոհում էր ՀՀ պատուիրակութեան Փարիզ ուշ ժամանելուց, իսկ նրա խօսքերը հաստատեցին Օհանջանեանը Բեռլինից ու Բաքուի Ազգային խորհրդի լիազօր Սարգիս Արարատեանի Յունուարի 21ի գաղտնի հեռագիրը՝ ՀՀ կառավարութեանը: Տեմպերլին պատմում էր Արեւմտեան Հայաստանի վերջնական անջատման եւ «*ձեր շրջանի թուրքականին հաւանական միացման*» մասին[14]: Արարատեանը նշեց, որ բրիտանացիները ճանաչում են Կովկասի տեղական կառավարութիւնները, սատարում են Բաքուի Հայ Ազգային խորհրդին՝ Վանի, Սալմաստի, Ուրմիայի գաղթականներին պահելու գործում եւ օգնում տուն վերադարձնել Բաքուի 40,000 հայերին: Լիազօրը շեշտում էր ՀՀ Փարիզի համաժողովում ներկայացուած լինելու անհրաժեշտութիւնը:

---

[11] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 65, թ. 1:
[12] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 65, թ. 2–3:
[13] Մէջբերումներ՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 65, թ. 3:
[14] ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 78:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՕՆ, 1919ԻՒՆ

Փետրուարի 12ին Ահարոնեանն ու Նուբարը «Հայկական Հարցը Խաղաղութեան համաժողովի առջեւ» վերնագրեալ յուշագիր ներկայացրեցին Փարիզի համաժողովի դիւան: Այդ փաստաթուղթը տեղեկացրեց նրա մասնակիցներին, թէ «Հայ Ազգային պատուիրակութիւնը՝ այն ազգի միահամուռ կամքով, որի մի մասը Կովկասում արդէն ձեւաւորեց անկախ հանրապետութիւն, հռչակեց միասնական Հայաստանի անկախութիւնը, ինչի մասին 1918ի Նոյեմբերի 30ի իր յայտագրով տեղեկացրեց դաշնակից կառավարութիւններին»[15]: Միացեալ պատուիրակութիւնը նշեց իր ժողովրդի «ինքնակամ ու բնական» մասնակցութիւնը աշխարհամարտի բոլոր հիմնական ճակատների մարտերին: Դա ամէնից առաջ Կովկասի ճակատն էր, որտեղ իր պետութիւնը կերտող ազգը 1918 Փետրուարի 5ից Հոկտեմբերի 18ը միայնակ դիմադրում էր օսմանեան բանակին[16]: Այնուհետեւ նըշւում էին Պաղեստինի ճակատը՝ Հայկական լեգէոնով, Ֆրանսայի, Բրիտանիայի, ԱՄՆի զօրքերը (50 հազ. հայերով), եւ Արեւելեան, Արեւմտեան ու Կովկասի ճակատները՝ ռուսական բանակի 250 հազ. հայ զինուորներով[17]:

Յուշագրում նշւում էր Օսմանեան կայսրութիւնում 1915-18ին սոսկալի Եղեռնի զոհերի մասին, երբ «*Հայաստանը մահուանն աւելի շատ փուրք է տուել, քան պատերազմող տէրութիւններից որեւէ մէկը*»[18]: Այդ զոհերն իսկ

---

[15] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1005, թ. 1. նաեւ՝ R. Hovannisian, *The Republic of Armenia, vol. I*, University of California Press, Berkeley & Los Angeles, 1971, էջ 258:

[16] 5 Փետրուար 1918ին օսմանեան 3րդ բանակը յարձակում էր սկսել Բիթլիսից Տիրեբոլի վրայ (Necmi Koral, *Birinci Dünya Harbi Idari Faaliyetler ve Lojistik*, Ankara, T.C. Genelkurmay Askeri Tarih ve Stratejik Etüt Başkanliği, 1985, էջ 492): Փետրուարի 12ին հրամանատար Վեհիբ փաշան յայտագիր յղեց յարձակում սկսելու մասին (*Документы и матерьялы по внешней политике Закавказья и Грузіи (Փաստաթուղթեր ու նիւթեր Անդրկովկասի եւ Վրաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ),* Թիֆլիս, Типограф. Правит. Груз. Респ., 1919, էջ 48–49: 1918ի Հոկտեմբերի 18ին հայկական ինքնապաշտպանութեան ուժերը յաղթանակ տարան Մսմնա գիւղի մօտ, կասեցնելով օսմանեան բանակի առաջխաղացումը Ղարաբաղում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 204):

[17] *Հայ ժողովրդի պատմութիւն, հտր. VI, Հայաստանը 1870-1917 թուականներին*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1981, էջ 547. նաեւ՝ А. О. Арутюнян, *Кавказский фронт 1914–1917 гг. (Ա. Հ. Յարութիւնեան, Կովկասի ռազմաճակատը 1914-1917 թթ.)*, Հայաստան, Երեւան, 1971, էջ 296. նաեւ՝ ԱՄՆում Բրիտանիայի նախկին դեսպան, Լորդերի պալատի անդամ, դերկոմս Ջէյմս Բրայսի՝ արտգործնախարար Ա. Բալֆուրին 30 Սեպտեմբեր 1918ին հասցէագրած նամակն ու Հոկտեմբեր 3ի նախարարի տեղակալ Ռ. Սեսիլի պատասխանը Բրայսին՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 357, թ. 270, 273-273 դարձ.:

[18] Աւելի մանրամասն տե՛ս՝ J. H. Count von Bernstorff, *Memoirs of Count Bernstorff*,

«անկախութեան իրաւունք են տալիս» երկրին, որը լրացնում են պատմաքաղաքական, էթիկայի եւ բարոյական փաստարկները, քանի որ բարեփոխումների օսմասնեան բոլոր ծրագրերը արեան մէջ են խեղդուել նրա կառավարութեան կողմից[19]: Բ. Դուռը կիրառում էր սպանութիւն ու կողոպուտ, խոշտանգում եւ անարգանք, բռնի մահմեդականացում ու սովամահութիւն: Ուստի, Դաշնակիցները «*պարտականութիւն են սրանձնել ազատել Հայաստանը պատմութեան մէջ աննախադէպ բռնակալութիւնից: Ազգերի պատերազմն ու նրան յաջորդած ազգերի խաղաղութիւնը պէտք է Հայաստանին բերեն լիակատար անկախութիւն*»[20]:

Կիլիկիայով հանդերձ, արեւմտեան վեց նահանգներից ու Տրապիզոնից բացի, պատուիրակութիւնը միացեալ պետութեան մէջ էր ընդգրկում «*Կովկասում առկայ Հայկական Հանրապետութեան ամբողջ տարածքը*», այդ թւում՝ Երեւանի նահանգը, Թիֆլիսի նախկին նահանգի հարաւը, Ելիզաւետպոլի նահանգի հարաւ-արեւմուտքը եւ Կարսի մարզը՝ առանց Արդահանից հիւսիս գտնուող մասի:

Քանի որ մինչեւ 1919ի Մայիսը՝ Խաղաղութեան խորհրդաժողովի առաջին փուլում, մեծ տէրութիւնները չէին կիրառում ազատագրուած ժողովուրդների եւ նրանց աւերուած եւ ամայացած տարածքների անկախացման յստակ վարքագիծ, Միացեալ պատուիրակութիւնը հայցում էր Դաշնակիցների համահաւաք պաշտպանութիւն կամ Ազգերի Լիգային անդամակցած Հայաստանի խնամակալութիւն: Հոգատարին, որը պէտք է գործէր 20 տարուց ոչ աւելի, հարկաւոր էր համաձայնեցնել «*Փարիզում այժմ գումարուած եւ ամբողջ ազգը ներկայացնող հայկական խորհրդաժողովի հետ*»: Վեհաժողովից պահանջում էին ստեղծել «*ջարդերի, վկարումների, թալանի եւ աւերումների ժամանակ*» կրած կորուստների հատուցման համակարգ: Թուրք եւ թաթար իշխանութիւնները ենթակայ էին հարկադիր տարհանման: Բնակչութիւնը պէտք է զինաթափուէր, եւ «*պատժուէին բոլոր նրանք, ովքեր մասնակցում էին ջարդերի, բռնութիւնների, թալանի եւ զոհուածների ունեցուածքի զաւթմանը*»: Հարկաւոր էր հեռացնել բոլոր ա-

---

transl. E. Sutton, Random House, New York, 1936. նաեւ՝ V. Dadrian, *The History of the Armenian Genocide, Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, Providence RI and Oxford, 1995. նաեւ՝ *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), Материалы Политархива МИДа кайзеровской Германии* (Հայկական Հարցը եւ հայերի ցեղասպանութիւնը Թուրքիայում *(1913-1919)*, Կայզէրական Գերմանիայի ԱԳՆի Քաղարխիւի նիւթերը, Ժողովածու), Сборник, Сост. В. А. Микаелян (կազմ. Վ. Ա. Միքայէլեան*)*, Գիտութիւն, Երեւան, 1995, էջ 498. նաեւ՝ R. Kévorkian, *Le Génocide des Arméniens*, Odile Jacob, Paris, 2006, էջ 885-90. նաեւ՝ E. Rogan, *The Fall of the Ottomans, The Great War in the Middle East*, Basic Books, New York, 2015, էջ 387:

[19] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1005, թ. 1:

[20] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1005, թ. 3:

ազակներին եւ ուրացող քոչուոր ցեղերը, ներառեալ «*երիտթուրքական վարչակարգի ներքոյ վերաբնակուած մահմեդական գաղութարարներին*»[21]: Վերջապէս, հարկաւոր էր վճռապէս ազատել բոլոր կանանց, օրիորդներին, երեխաներին հարէմներից ու բռնի իսլամացումից: Թուրքիայում առկայ հայկական գոյքի տնօրինման իրաւունքը վստահուեց Պոլսի հայ կրօնական իշխանութիւններին: 5 տարուայ ընթացքում տարագրեալներն ու նրանց երեխաները կարող էին ստանալ Հայաստանի քաղաքացիութիւն՝ տեղեակ պահելով երկու երկրների իշխանութիւններին:

Հայաստանն էլ համաձայն էր ստանձնել օսմանեան պարտքի մի մասը՝ 1914ի դրութեամբ: Ահարոնեանն ու Նուբարը վստահեցնում էին յուշագրի վերջնամասում, թէ «*խաղաղ, արդար եւ ազատ հասարակարգի պայմաններում, ինչպէս եւ Ազգերի Լիգայի բարի կամքի եւ խոհուն օգնութեան ու հոգատար տէրութեան համագործակցութեան շնորհիւ Հայաստանն արագ կը վերածուի բարգաւաճ ու հարուստ պետութեան եւ կը դառնայ ... Արեւելքի խաղաղութեան եւ քաղաքակրթութեան կարեւորագոյն գործօններից մէկը*»[22]:

Խորհրդաժողովի համար կազմուած լրացուցիչ յայտագրերի մէջ կար փաստաթուղթ՝ կովկասեան հայկական հանրապետութեան մասին: Դրանում նշւում էր, թէ Անդրկովկասը պոկուեց Ռուսական կայսրութիւնից 1917ի վերջին, իսկ նրա երեք մասերի անկախութիւնը հռչակուել էր 1918 Մայիսի վերջին միայն: Այնուհետեւ, երբ ցարական կովկասեան բանակը կազմալուծուեց եւ հայերին մէնակ թողեց իրենց դարաւոր թշնամու հանդիման, այս երիտասարդ հանրապետութիւնը՝ իր սահմանափակ միջոցներով, դիմադրեց այն ժամանակ Կարսի վրայ յարձակուող թուրքական բանակին եւ եօթ ամիս կատաղի պայքարեց նրա դէմ:

Հակառակ հայերի աղաչանքին, Ռուսաստանը նրանց թողեց բախտի քմահաճոյքին ու մատնեց նրանց ուժերն ակնյայտ գերազանցող պատերազմի, յետոյ՝ նրանց հետ չխորհրդակցելով, Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային յանձնեց Կովկասի հայկական նահանգները. Կարսը, Արդահանն ու Կաղզուանը՝ անհաշուելի վնաս հասցնելով հարիւր հազարաւոր հայերի, եւ իր իսկ կամքով ու գործողութիւններով ընդմիշտ խըզեց իր եւ Հայաստանի միջեւ եղած բոլոր կապերը[23]: Միացեալ Լեհաստանը, Ֆինլանդայի անկախութիւնը եւ ուկրայնական պետութեան հիմնադրումը մերժեցին նախկին Ռուսական կայսրութեան պահպանման հարցը: Ուրեմն, կարիք չկար մեկուսացնելու Թուրքական Հայաստանը Ռուսակա-

---

[21] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1005, թ. 9:

[22] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1005, թ. 10:

[23] *The Armenian Question Before the Peace Conference, A Memorandum Presented Officially by the Representatives of Armenia to the Peace Conference at Versailles, on February 26th, 1919*, Press Bureau of the Armenian National Union of America, New York, 1919, էջ 31:

նից: Արեւելեան մասը օգնելու էր արեւմտեանին՝ կազմակերպելու պետութիւնն ու տնտեսութիւնը, իսկ նրանց միացումը միանգամայն բնական ընթացք էր: Յատկապէս ազգային միասնութիւնը նպաստեց հայերի ցարական կոչի արձագանգին ու կամաւորական ջոկատների ստեղծմանը, այդ միասնութիւնը նրանց ուղղեց Ֆրանսայի եւ Բրիտանիայի բանակների շարքերը:

ՀՀ պատուիրակութեան ղեկավար Ահարոնեանը եւս մէկ յուշագիր է ներկայացրել Փարիզի համաժողովի նախագահ Կլեմանսոյին: Այն եւս յիշատակում էր ցարական բանակի 150-200,000 հայ մարտիկների մասին, եւ թէ՝ Դաշնակիցների համակրանքն ու աջակցութիւնը մղեց երիտթուրքական կառավարութեան կողմից հայերի աննախադէպ կոտորածին ու նրանց աքսորին՝ սիրիական անապատ: Ըստ յուշագրին, 1915-18ին արեւմտեան նահանգներում զոհուեց մէկ միլիոն մարդ: Նոյն ժամանակահատուածում ռուսական բանակը փլուզուեց՝ բարոյալքուած բոլշեւիզմի կարգախօսներով, եւ իսպառ լքեց Կովկասեան ճակատը: Սա ստիպեց կովկասահայութեանը անձնուրաց եւ միայնակ մարտնչել ընդհանուր թշնամու դէմ՝ առանց որեւէ աջակցութեան: Ռուսական բանակի խայտառակ դասալքութեանը անմիջապէս հետեւեց Բրեստի ամօթալի հաշտութիւնը:

Վերջինս ոչ միայն «*թուրքերին թողեց ռուսական բանակի հայերի ամենագործուն օգնութեամբ գրաւուած Թուրքական Հայաստանի նահանգները, այլեւ թուրքերին յանձնեց նոյնիսկ զուտ հայկական կովկասեան նահանգները՝ Կարսն ու Կաղզուանը, ինչպէս եւ Բաթումն ու Արդահանը*»: Ահարոնեանը նշում է, որ օգտուելով Ֆրանսայի ԱԳՆ ղեկավար Ա. Ռիբոյի եւ Թիֆլիսում ֆրանսական հիւպատոսութեան ծառայութիւններից, ինքը հայցեց նախարարի ոչ միայն բարոյական ու ռազմանիւթական օգնութիւնը՝ Սայքս-Պիկոյի համաձայնագրի չեղարկումով հանդերձ, քանի որ այն հրապարակուեց բոլշեւիկների կողմից, այլեւ Հայաստանի անկախութեան անյապաղ հռչակումը[24]: Օգնութիւնը խոստացել էին: Ֆրանսայից յիշեցրին Բրիտանիայի վարչապետ Դէյվիդ Լլոյդ Ջորջի 1918 Յունուարի 5ի հանդիսաւոր յայտարարութիւնը, թէ նրա երկիրը ճանաչում է Հայաստանի անկախ ազգային գոյութեան իրաւունքը: Այնուհետեւ ֆորէյն օֆիսի ղեկավար Բալֆուրը Յուլիսի 11ին յայտնեց համայնքների պալատում, թէ Դաշնակից տէրութիւնների առաջնորդները «*բացէիբաց արտայայտուեցին Հայաստանի ապագան ինքնորոշման սկզբունքներով կարգաւորման օգտին*»[25]:

---

[24] Նոյն, էջ 66-67:

[25] *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1918, Supplement I The World War, vol. I*, Government Printing Office, Washington, 1933, էջ 11. նաեւ՝ Great Britain Parliament, House of Commons, *The Parliamentary Debates 1918, Hansard*, Official report, 5th series, vol. 108, London, His Majesty's Stationary

ՀՀ պատուիրակութեան ղեկավարը Անդրկովկասի երեք մասերը ճիշտ է նկարագրել որպէս տարբեր քաղաքական կողմնորոշման տարածքներ, որտեղ Վրաստանը գտնւում էր Գերմանիայի, իսկ Ադրբեջանը՝ Թուրքիայի արտաքին ազդեցութեան ներքոյ: Սա բացառում էր երկրամասի վարչական սերտաճումը, որը կարող էր միասնական մնալ միմիայն մէկ եւ բաւականաչափ ուժեղ երկրի հսկողութեան պարագայում: Քանի որ Դաշնակիցները նման վերակացու չէին ուղարկում, մնում էր կանոնաւորել տեղի հանրապետութիւնների անկախութիւնը եւ ապահովել դրանք արտաքին ներխուժումներից: Յուշագրի հեղինակը կրկնեց, որ Ռուսաստանը հայերին թողել է կործանման, ինչը նշանակում է, որ նա ընդմիշտ խզել է կապերն Հայաստանի հետ: «*Հետեւաբար, Հայաստանի Հանրապետութիւնը իրեն իրաւասու էր համարում պահանջել՝ անյապաղ ճանաչելու իր վաստակած ու մարտի դաշտում ձեռք բերուած անկախութիւնը, երբ նոյնիսկ թշնամին սփիւռած էր ընդունել նրա զէնքի յաջողութիւնը*»[26]: Այդ ամէնին գումարւում էին ողջ ժողովրդի կրած գերմարդկային վնասները: Ահարոնեանը՝ Ազգային պատուիրակութեան լիակատար համամտութեամբ, պահանջում էր ճանաչել ՀՀ անկախութիւնը եւ նրան տեղ տրամադրել Փարիզի բանակցութիւնների սեղանի շուրջ:

Այդ ենթախորքում, 1919ի Մարտի 21ին արտգործնախարար Ս. Տիգրանեանը՝ ՀՀում Բրիտանիայի ռազմական ներկայացուցիչ Տեմպերլիին յղած նամակում Հայաստանը բնութագրեց որպէս անկախութեանը պատրաստուող երկիր[27]: Եւ արդէն ամսի 28ին, Անդրկովկասում բրիտանական զօրքի հրամանատար զօրավար Վ. Թոմսոնը յստակեցրեց Երեւանում՝ կառավարութեան հետ խորհրդակցութեան ժամանակ, որ ռուսական կամաւորական բանակը ֆինանսաւորելու կողքին, բրիտանացիները սատարելու են նաեւ երկրամասի անկախութեանը[28]: Յուլիսի 28ին, Փարիզի վեհաժողովում ՀՀ պատուիրակութեան ղեկավար Ահարոնեանը իր հանրապետութեան արտգործնախարար Ալեքսանդր Խատիսեանին գրած նամակով տեղեկացնում էր՝ վեհաժողովին կից գործող, Դենիկինի կազմուած Ռուսական պատուիրակութեան դիրքորոշման կարեւոր փոփոխութիւնների մասին: Եթէ կէս տարի առաջ կամաւորական բանակի հրամանատարը կտրականապէս մերժում էր ՀՀ անկախութիւնը, ապա Յուլիսի 10ի դրութեամբ ներկայացուցիչ Վ. Մակլակովը[29] պաշտօնապէս հաղոր-

---

Office, 1918, col. 473, www.hansard-archive.parliament.uk, մատչում՝ 15. 07. 2024ին. նաեւ՝ *The Armenian Question*, էջ 67:

[26] *The Armenian Question*, էջ 69:

[27] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 121, թ. 2:

[28] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 16:

[29] Նախկինում Ժամանակաւոր կառավարութեան դեսպան, 1918ի Նոյեմբերից՝ Դենիկինի փարիզեան ռուսական քաղաքականութեան խորհրդատու:

դեց 4ի Խորհուրդին՝[30] Ռուսաստանի համաձայնութիւնը՝ Երեւանի քաղաքական անկախութեանն ու Հայաստանի երկու մասերի միացմանը: Մակլակովը յաւելեց, որ խիստ թշնամական միջավայրը նոր պետութեանը ըստիպելու է հաստատուն դաշինք կազմել Ռուսաստանի հետ[31]:

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԴՐՈՅԹԸ ՈՒ ՀՀ ԵՒ ԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

1919 Օգոստոսի 23ին Լոնդոնում՝ ռազմական նախարարութիւնում հանդիպում է կայացել ռազմական նախարար Ուինստոն Չերչիլի անձնական քարտուղար Ա. Սինկլէրի եւ զօրավար Անդրանիկ Օզանեանի միջեւ: Նրանց զրոյցի գրառումները բաժանուել էին կառավարութեան բոլոր անդամներին: Նոթերում նախարարի օգնականը նշում է, որ Անդրանիկն ու նրա հայրենակիցները յստակօրէն հասկանում էին, որ Դաշնակիցներն առաջին հերթին պաշտպանում են փոքր ազգերի ազատութիւնը եւ անկախութիւնը: 1918ին Անդրանիկն ու նրա մարտիկները կռւում էին հասկանալով անկախութեան պահանջի առաջնահերթութիւնը: Այժմ էլ՝ 1919ի Օգոստոսին, երբ հայերի գոյութեան սպառնալիքը չվերացուեց, զօրավարը դիմում էր բրիտանական բանակին՝ կոչ անելով չլքել Կովկասը: Նրանց զօրքի, այնուամենայնիւ, հեռանալու պարագային ինքը պատրաստ էր վերադառնալ որպէս փոխարինող Հայաստան ու Դաշնակիցների նիւթական ու ֆինանսական օժանդակութեամբ հաւաքագրել երկու զօրաբաժին: Այդ մտադրութիւնը իրականացնելու համար պահանջւում էր բրիտանական մեծածաւալ մատակարարում ու մինչեւ 40 հոգի սպայակոյտի սպայ՝ նորակոչիկներին կազմակերպելու եւ առաջնորդելու համար: Օզանեանի կարծիքով, Անդրկովկասում թուրքերի տարած յաղթանակը աւելի մեծ վընաս կը բերի ոչ թէ ամերիկացիներին կամ ֆրանսացիներին, այլ յատկապէս Բրիտանիային[32]:

Արեւմտահայութեան եւ արեւելահայութեան հասարարական միտքն եւ ազատագրական շարժումը ձեւաւորւում էին տարբեր պայմաններում եւ

---

[30] Քանի որ Ահարոնեանի նախորդ սուրհանդակը Երեւանն է մեկնել 1919ի Յունիսի 24ին, նշենք. Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի վարչապետեր Լլոյդ Ջորջի, Կլեմանսոյի, Վ. Օռլանդոյի եւ ԱՄՆ նախագահ Վիլսոնի զրոյցները արձանագրւում էին մինչեւ Յունիսի 28ը: Ամսի 29ին ԱՄՆ նախագահ մեկնել էր տուն ու 4ի Խորհուրդն էլ չէր գումարւում: Յուլիսի 28ի դրութեամբ գործում էր ԱՄՆ դեսպան Հ. Ուայթից, Բրիտանիայի եւ Իտալիայի արտգործնախարարներ Բալֆուրից ու Թ. Տիտտոնիից, Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոյից եւ Ճապոնի լիազօր դեսպան Ն. Մակինոյից կազմած 5ի Խորհուրդը:

[31] ՀԱԱ, ֆ. 200,24 ց. 1, գ. 290, թ. 17-18. նաեւ՝ Ա. Ահարոնեան, *Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2001, էջ 33–34:

[32] Churchill Archive Centre, Churchill College, Cambridge UK, CHAR 16/24/f. 132:

տարբեր տէրութիւնների ազդեցութեան ներքոյ: Թէեւ ազգի երկու թեւերն էլ ապրում էին միապետական, բռնակալ պետութիւններում, սակայն տարբեր էին Օսմանեան ու Ռուսական կայսրութիւնների տնտեսական եւ իրաւական զարգացումը, արեւմտամէտութեան ու իրենց հպատակներին կեղեքելու աստիճանը: Եթէ պոլսահայ մտաւորականութիւնն ու թուրքական վերնախաւը գտնւում էին Բրիտանիայի, Ֆրանսայի, Գերմանիոյ ազդեցութեան ներքոյ, ապա Թիֆլիսում եւ Բաքւում գործող արեւելահայ մտաւորականութիւնն ու գործարար շրջանակները կրում էին օսմանեանից աւելի զարգացած Ռուսաստանի ազդեցութիւնը: Համազգային ազատագրական միտքն ու շարժումը կենտրոնացած էին յատկապէս Արեւմտեան Հայաստանի ծանր վիճակի վրայ, երկրորդական համարելով այլ հարցերը:

Սակայն առաջին աշխարհամարտի ողբերգական գործընթացների արդիւնքում անկախութիւնը ձեւաւորուեց Արեւելեան Հայաստանի մէկ մասում՝ Երեւանի շուրջ, իսկ Արեւմտեան Հայաստանը քանդուեց համատարած բնաջնջման եւ ամբողջ ժողովրդի վտարման արդիւնքում: Այնտեղ կեանքը անհնարին էր, իսկ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը զուրկ էր պաշտպանունակ եւ ինքնաբաւ տարածքից, արտաքին ճանապարհներից, պետական ծառայողներից, կանոնաւոր զինուած ուժերից, արդիւնաբերութիւնից, բժշկական ու բարձրագոյն կրթութեան համակարգից, ու մինչեւ 1918 Յուլիսի 19ը՝ նոյնիսկ մայրաքաղաքից, որպէս պետութեան վարչական կենտրոնի[33]: Նշենք, որ թուրք-գերմանական ռազմազրրաւման պայմաններում հայութիւնը դատապարտուած էր ոչնչացման, եւ Դաշնակից տէրութիւնների յաղթանակը միայն ապահովեց կեանքը շարունակելու հնարաւորութիւնը:

Այդ իրողութիւնն էր թելադրում Ազգային, եւ 1919 Փետրուարի 4ին Փարիզ ժամանած ՀՀ պատուիրակութեան գործունէութիւնը[34]: Իրենց քայլերի եւ ընկալումների տարբերութիւնը պայմանաւորուած էր ոչ միայն տարբեր քաղաքական կողմնորոշումներով, այլեւ առաջին հերթին, Եւրոպայի յաղթած տէրութիւնների եւ ԱՄՆի շահերով ու ազդեցութեամբ: Հասկանալի է ՀՀ պատուիրակութեան զիջողական դիրքը Նուբարի ղեկավարած Ազգայինի նկատմամբ ու նրա աւելի սեղմ, բայց իրականանալի սահմաններից հրաժարումը: Այդ կեցուածքը ունէր պարզ բացատրութիւն՝ երկու պատուիրակութիւններն էլ վճռական դեր չունէին իրենց հարցերի լուծման գործընթացում ու ստիպուած համաձայնում էին եւրոպացիների բոլոր լուծումներին:

Քանի որ ՀՀ պատուիրակութեան թիկունքում կար թէկուզ թոյլ, բայց գնալով աւելի համակարգուող պետութիւնը, նրա անդամները ընդունում

---

[33] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, թ. 30. նաեւ՝ Ա. Բաբալեան, *Էջեր՝ Հայաստանի անկախութեան պատմութիւնից*, տպ. Յուսաբեր, Գահիրէ, 1959, էջ 8-9:

[34] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 55, 59 դարձ.:

էին եւրոպացիների կամ ԱՄՆի հոգատարութիւնը՝ պաշտպանութեան ապարէզում, սահմանափակելով դրսի միջամտութիւնը ֆինանսական, օրէնսդիր եւ այլ վարչական հարցերի: Ի տարբերութիւն դրա, Նուբարը՝ հոգատարութեան նախագիծը կազմելիս, կասկածամիտ էր Երեւանի ուժերի նկատմամբ, ուստի նա ընդարձակում ու երկարացնում էր հոգատար պետութեան լիազօրութիւնները[35]:

Բացի դրանից, Ազգային պատուիրակութիւնը կարեւորում էր Կիլիկիան եւ Խարբերդի նահանգը[36]: Նա ակնկալում էր Ֆրանսայի հոգատարութիւնը Կիլիկիայում, ուղղուած լինելով դէպի Միջերկրական ու եւ եւրոպական շուկայ: ՀՀ պատուիրակութիւնը պարզում էր Բաթում նաւահանգստի եւ պատերազմի տարիներին ռուսական բանակով ռազմակալուած նահանգների ապագան[37]: Յատկապէս նրանք պէտք է միացուէին առկայ հանրապետութեանը ու կապուէին ռուսական շուկայի հետ: Սակայն ե՛ւ Նուբարը ե՛ւ Ահարոնեանը՝ ՀՀ կառավարութեամբ հանդերձ, թերգնահատեցին քաղաքականութեան ռազմական գործօնը: 1919 Օգոստոսից՝ երբ բրիտանական բանակը հեռացաւ Անդրկովկասից, ու յատկապէս 1920 Ապրիլ-Մայիս ամիսներից՝ երբ արդէն ակնյայտ էր բոլշեւիկների եւ ֆրանսացիների գործակցութիւնը քեմալականների հետ, պարտադիր էր էապէս փոխել հայերի արտաքին քաղաքականութիւնը:

Այնինչ, Ազգային պատուիրակութիւնն ու 1920 Մայիսի 5ից Յուլիսի 13ը Փարիզում գումարուած Հայ ազգային Բ համագումարի մասնակիցները չեն կարողացել մշակել նոր ռազմավարութիւն. արդեօ՞ք պաշտպանել Կիլիկիան ու ձեւաւորել նրա առանձին, ինքնուրոյն պետութիւնը, թէ՞ կազմակերպել զանգուածային արտագաղթ, որոշելով նրա հիմնական ուղղութիւնն ու անմիջական բանակցութիւններ սկսել թուրքական կողմի հետ[38]: Է՛լ աւելի մեծ էր Երեւանի կառավարութեան անելիքը՝ ինչպէս Մոսկուայի, այնպէս էլ քեմալականների հետ յարաբերութիւնների ոլորտում: Այդ պայ-

---

[35] Հմմտ.՝ հայկական 24 Յունիս 1919ին եւ 20 Մարտ 1920ին կազմած հոգատարութիւնների նախագծերը (ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1218, թ. 5-6 եւ ֆ. 200, ց. 1, գ. 556, թ. 126-27). նաեւ՝ *Armenia in Documents of the U.S. Department of State 1917–1920*, comp. G. Makhmourian, Institute of History NAS RA, Yerevan, 2020, էջ 129:

[36] Տե՛ս, օրինակ՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 50, թ. 1, կամ Նուբարի 1920 Փետրուարի 12ի նամակը Բրիտանիայի արտգործնախարար Ջ. Քերզոնին (ՀԱԱ, ֆ. 420, ց. 1, գ. 1047, թ. 6-7):

[37] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 557, թ. 318:

[38] *Համահայկական խորհրդակցութիւններ (1912-1920 թթ.), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, կազմ.՝ Ա. Վիրաբեան, Գ. Աւագեան, Ռ. Գրիգորեան, Ա. Կիրիմեան, պատ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, Հայաստանի Ազգային արխիւ, Երեւան, 2004, էջ 580, 622, 633-34. նաեւ՝ R. Hovannisian, *The Republic of Armenia, vol. III From London to Sèvres, February-August, 1920*, University of California Press, Berkeley & Los Angeles, 1996, էջ 376-78:

մաններում յատկապէս ռազմական գործօնը վճռորոշ էր արտաքին քաղաքականութեան համար: Նամանաւանդ որ 1920 Մայիսի 11ից, երբ հրապարակուեց Սեւրի պայմանագրի նախագիծը, ե՛ւ Դաշնակից տէրութիւններին, ե՛ւ Երեւանի կառավարութեանն ու Փարիզում գործող պատուիրակութիւններին քաջ յայտնի էր Թուրքիայի ազգայնականների պատերազմին պատրաստուելու փաստը:

ԴԱՇՆԱԿԻՑ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ՝ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՆՎԻՃԵԼԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ 1919 ԴԵԿՏԵՄԲԵՐ-1920 ՕԳՈՍՏՈՍԻՆ

Տարածաշրջանում Բրիտանիայի գերագոյն յանձնակատար Ջ. Ուորդրոպը՝ 1919 Հոկտեմբերի 15-17ին Հայաստանի Հանրապետութիւն կատարած այցից յետոյ, գրեց իր արտգործնախարար Քերզոնին. հայերն «*անկասկած կը հասնեն յաջողութեան, եթէ անգամ նուազագոյն հնարաւորութիւն ստանան*»: Այդ ժողովուրդը «*եղել է մեր հաւատարիմ դաշնակիցը, կռուել քաջաբար ու փոկունօրէն*», ինչն ընդմիշտ կը փակի «*զրպարտիչների բերանները, որոնք ասում էին, թէ իբր նրա արհեստը կոտորածի չդիմադրող զոհ լինելն է*»: Հայերի ռազմական սխրագործութիւնը «*լիովին արդարացնում է ազատ քաղաքական կեանքի նրանց պահանջը, որին նրանք միագամայն պիտանի են*»[39]: Այս հիմնադրոյթը շարունակուեց 1919 ձմռանը, մինչեւ 1920 Օգոստոսին ստորագրած Սեւրի պայմանագիրը: Այսպէս, 1920 Մարտի 11ին լորդերի պալատում Քերզոնը փաստացի ճանաչուած ՀՀն անուանել է ապագայ պետութեան միջուկը: Նա նոր երկրի համար պահանջում էր հայերի յստակ ազգային գերակշռութիւն պաշտպանելու յարմար սահմանները ու ելք դէպի ծով: Նախարարը նշեց ԱՄՆի ինքնաբացարկը պաշտպանութեան հարցերում, բայց ակնկալում էր նրանց նիւթական աջակցութիւնը: Դաշնակիցները կարող էին զէնք տրամադրել, սակայն ՀՀն ինքը պէտք է զինուորներին համալրէր: Ընդ որում, քաղաքական գործիչը պարզաբանեց. Հայկական Հարցը՝ Արեւելքում առկայ շատ հարցերի նման, չի կարգաւորւում միայն Հանրապետութեան ներսում, այլ որոշւում է արտաքին ուժեղ գործօններով[40]: Այդուհանդերձ, բրիտանացիները պահանջում էին որ Երեւանն առաւելագոյնս եւ ամէն գնով պահպանի իր անկախութիւնը: Ի տարբերութիւն նրանց՝ Ֆրանսա-

---

[39] Great Britain Foreign Office Archives, Public Record Office, London, class FO 608 Peace Conference, 1919-1920: Correspondence, vol. 79, file 342/1/12, doc. 2114, Encl., p. 608–609.

[40] *The Times*, London, 12 Մարտ 1920, էջ 10. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 10 դարձ. նաեւ՝ *The New York Times*, 12 Մարտ 1920, էջ 1. նաեւ՝ Great Britain Parliament, House of Commons, *The Parliamentary Debates 1923*, Hansard, Official report, 5th series, vol. 162, London, His Majesty's Stationary Office, 1923, col. 633, https://hansard.parliament.uk/Commons/1923-03-28/debates/ffd383e7-018b-4556-91d1-6d1f60ed88de/Armenians, մատչում՝ 15 Յուլիս 2024:

յում մշակուեց ամբողջական տեսակէտ՝ միջպետական, առաջին հերթին՝ տնտեսական յարաբերութիւնների մասին: Իսկ ամերիկացիները ՀՀին այդքան անհրաժեշտ պաշտպանութիւն խոստացող հոգատարութիւնը փոխարինել էին անկախութեամբ:

Այսպէս, 1919 Դեկտեմբերի 12ին Ֆրանսայի ԱԳՆը մշակել է իր ուրոյն հայեցակարգը ՀՀ եւ ողջ միացեալ Հայաստանի սահմանների մասին[41]: 1920 Փետրուարի 12ին երկրի վարչապետ Ա. Միլերանը «Հրահանգներ» ուղղեց Թիֆլիսում իր գերագոյն յանձնակատարին: Նա չէր բացառում Ռուսաստանի վերադարձն Անդրկովկաս, ուստի Հայաստանի առնչութեամբ շեշտադրում էր տնտեսական կապերը: Նրա անկախութեան աջակցութիւնը անուանուեց ֆրանսական դիւանագիտութեան գերակայութիւն[42]: Կոմս Դ. դը Մարտէլն ի կատար էր ածում այդ առաջադրանքն ու նշում թուրք-թաթարական դաշինքի մահաբեր վտանգը Հայաստանի ֆիզիկական գոյութեան համար: Հետեւաբար, նա պահանջում էր Ֆրանսայի ռազմաքաղաքական մասնակցութիւնն ու հայկական բանակի առաւելագոյնս ամրապնդումը[43]:

Իր հերթին, ԱՄՆ ծերակոյտի միջազգային յարաբերութիւնների յանձնաժողովի ենթայանձնաժողովը՝ 1919 Սեպտեմբերի 27-Հոկտեմբերի 10-ին, այնուհետեւ բուն ծերակոյտը՝ 1920 Մայիսի 29-Յունիսի 1ին, երիցս լսեցին Ամերիկայի հայկական քաղաքականութեան հարցը: Սեպտեմբերին ենթայանձնաժողովի անդամները քննարկեցին ծերակոյտի համատեղ բանաձեւը՝ լիովին անկախ, միացեալ Հայաստանի մասին, որը Ամերիկայի նախագահը կարող էր պաշտպանել բանակի եւ նաւատորմի բոլոր միջոցներով: Այդ պետութիւնը պէտք է ստանար ոչ թէ ռազմավարական, այլ ազգային սահմաններ: Ընդ որում, ինչպէս նշեց ծերակուտական Ջ. Շ. Վիլիամսը, քննարկման պահին Թուրքիան, քրդերն ու տեղի թաթարները «*աշխատում էին ոչնչացնել հայկական ցեղը*» ամբողջ Անդրկովկասում[44]: Ի պատասխան, նա լսեց՝ «*Եթէ որեւէ մեծ փէրութիւն չսրանձնի հայկական պետութիւնը հիմնելու պատասխանատուութիւն, ապա հայ չի մնալու՝ այն սրեղծելու համար*»[45]: Հետեւաբար, երբ ծերակուտական եւ ԱՄՆ յաջորդ նախագահ Ու. Հարդինգը հարց ուղղեց՝ «*Արդեօ՞ք Հայաս-*

---

[41] *Documents on British Foreign Policy, 1919–1939, vol. 4*, ed. E. L. Woodward and R. Butler, 1st Series, London, His Majesty's Stationery Office, 1952, էջ 942-56.

[42] *Documents diplomatiques français 1920–1932*, 1920, *tome I (10 Janvier – 18 mai)*, Imprimerie Nationale, Paris, 1997, էջ 172-74.

[43] Նոյն, էջ 513-14:

[44] *Maintenance of Peace in Armenia*, Hearings before a Subcommittee of the Committee on Foreign Relations, United States Senate, 66th Congress, 1st Session on S.J.R. 106 A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia, Washington, Governmental Printing Office, 1919, էջ 3, 16, 7-8:

[45] Նոյն, էջ 10, 13–14, 27-28, 30, 36-39, 50-51, 72-73, 78, 87-91:

փանի ժողովուրդը գերադասում է իր քաղաքականութեամբ եւ ինքնորոշմամբ օժտուած միացեալ պետութեան ճանաչու՞մը, թէ՞ հոգատարին», Ամերիկայի Հայ Ազգային միութեան կողմից ենթայանձնաժողով հրաւիրուած Բոստոնի դատապաշտպան Վ. Մալքոմը նախընտրեց հոգատարին: Իրաւաբանը հաստատեց Հարդինգի մտավախութիւնը, որ հայերի ուժը ինքնապաշտպանութեան համար չէր բաւարարում[46]:

Նոյնը կրկնեց նաեւ պետքարտուղարի օգնական Վ. Ֆիլիպսը: Հայաստանի Հանրապետութեան գոյապահպանութեան համար անհրաժեշտ էր պաշտպանել երկաթուղիները, ապահովել սնունդն ու արտադրողական գործիքները[47]: Նախիջեւանը ցոյց տուեց, որ մէկ ամերիկեան հետեւակային գնդի, իսկ աւելի լաւ՝ հետեւակի ուժեղացուած զօրախմբի կամ 20-հազարանոց զօրաբաժնի թէկուզ երկու տարի տեղում չմնալը երկրին սպառնում էր լայնածաւալ յարձակումով եւ համընդհանուր կոտորածով[48]: Այնինչ, նկատեց հրաւիրեալներից մէկը, ԱՄՆ իրօք կը յաղթի պատերազմում միայն այն դէպքում, եթէ իրենք էլ ձեւաւորեն իրենց հարկաւոր աշխարհը: Իդէպ, հայերը կայունացնող ազդեցութիւն են գործում տարածաշրջանում՝ նրանք յարգում են սեփականութեան իրաւունքը, աշխատասէր են ու ձգտում են գիտելիքի: Մի ամբողջ ցեղի փրկութիւնը կախուած է այն բանից, թէ արդեօ՞ք օգնելու ենք նրանց, թէ՞ ոչ: Քաղաքացիական բնակչութեանն ու զինուորներին սնունդ, զինամթերք ու 30-հազարանոց ազգային բանակին մատակարարելը, Երեւանի կառավարութեանը փաստացի ճանաչելն ու Բաթում-Բաքու երկաթուղին հսկողութեան տակ առնելն ապահովելու է ժողովրդի պահպանումը: Իսկ առանց արտաքին օգնութեան՝ Հանրապետութիւնը կէս տարի էլ չի ապրելու[49]: Նկատենք, որ ենթայանձնաժողովում ելոյթ ունեցած ՀՀ առաջին վարչապետ Քաջազնունին հայցում էր ընդամէնը 4-5 հազար ամերիկեան զինուոր եւ փոխառութիւն՝ 30-40-հազարանոց ազգային բանակը սննդով ու զինամթերքով ապահովելու, ինչպէս նաեւ վարկեր՝ քաղաքացիական բնակչութեանը կերակրելու համար: Պարտքն ապահովւում էր հանրապետութեան ամբողջ հումքով ու հանքարդիւնաբերութեամբ[50]:

Ինչպիսի՞ն էր լսումների արդիւնքը: ԱՄՆ քաղաքական գործիչներն իսկոյն ժխտեցին հոգատարութիւնն ու սահմանափակեցին ռազմական խընդիրը ոչ թէ միացեալ Հայաստանի, այլ ՀՀ կառավարութեան փաստացի ճանաչելու հարցով: Մնացած ամէն ինչ, նոյնիսկ փաստացի թերի ճանա-

---

[46] *Maintenance of Peace in Armenia*, էջ 24:
[47] *Maintenance of Peace in Armenia*, էջ 34-35.
[48] Նոյն, էջ 37-38, 52-53, 58–59, 78, 94, 98, 105, 123-25:
[49] Նոյն, էջ 94, 96, 105, 120-21:
[50] Նոյն, էջ 110-11.

չումը, անժամկէտ յետաձգուեց[51]: Վերջնական վճիռը կայացուեց 1920 Մայիսի 29-Յունիսի 1ին՝ բուն ծերակոյտում: Յունիսի 1ին օրէնսդիրները մերժեցին նախագահի՝ Հայաստանի հոգատարութիւնը ստանձնելու պաշտօնական դիմումը: Իսկ ինչպէ՞ս էին ընկալում ծերակուտականները Հայաստանը եւ նրա հոգատարութեան խնամակալութեանը փոխարինած քաղաքական լիիրաւ ինքնիշխանութիւնը:

Ծերակուտականներ Հ. Ք. Լոջը, Ջ. Ռիդը, Չ. Թոմասն ու Ֆ. Բրանդեջին իսկոյն անդրադարձան միացեալ պետութեան գլխաւոր խնդրին՝ յստակ ու Հանրապետութեան ուժերով պաշտպանելի սահմանների բացակայութեանը: Դրանք դեռ պէտք է հաստատէր ԱՄՆ նախագահը: Խնդիրներին գումարւում էին բնակչութեան խառը ազգային կազմը, Վրաստանի, Ադրբեջանի եւ քրդերի հետ սուր հակամարտութիւնները, Դարդանէլներով հանդերձ հաղորդակցման արտաքին ուղիներից կախուածութիւնը, նեղուցներից եւ Անատոլիայից Անդրկովկաս սփռուած տարածաշրջանի ռազմական հսկողութեան կարիքը, միշտ ռազմատենչ այլադաւան շրջապատը՝ համաշխարհային գերազանցութեան ձգտող հայերի վաղեմի տիրակալը, քեմալականների ահեղ եռանդը, շահերի անմիջական բախումը Ռուսաստանի եւ Բրիտանիայի հետ, մեծ ու երկարաժամկէտ ներդրումների եւ մեծաքանակ բանակի անհրաժեշտութիւնը[52]:

Ջ. Ռոբինսոնը նկատեց, որ ԱՄՆը մասամբ պատասխանատու է այն քաղաքական պայմանների համար, որոնցում յայտնուել է Հայաստանն ու նրա ժողովուրդը: Նա առաջարկեց էապէս ամրացնել ՀՀ ինքնիշխանութիւնը, որն ունակ է ստեղծել կայուն, ժամանակակից պետութիւն: Ծերակուտականն ասաց, որ կարելի է ծովային հետեւակով ռազմանաւ ուղարկել Բաթում՝ ընդհանուր կարգ ու կանոն պահպանելու համար: Փարիզի համաժողովը Հայաստանն անուանեց անկախութեան համար բաւարար զարգացած երկիր, հոգատարի խորհրդատուութեան եւ օգնութեան ենթակայ: Ընդ որում, այդ ամբողջ ոլորտը՝ Բաթում-Երեւան-Բաքու ճանապարհով հանդերձ, նախագահի իրաւասութեան մէջ է, ծերակոյտը չի կարող նուազեցնել նրա իշխանութիւնը: Ռոբինսոնը ամէնից անընդունելի էր համարում հայի երկարամեայ անզէն վիճակը «*մի երկրում, որտեղ նրանից բացի իւրաքանչիւր տղամարդ իր հրացանն է կրում*»: Առաւել եւս, քանի որ այդ ժողովուրդը, հնարաւորութեան դէպքում, միշտ հարուած էր հասցնում հարուածի դիմաց: Չէ՞ որ մենք՝ ամերիկացիներս, «*նրանց խըրախուսում էինք կռուել Դաշնակիցների գործի համար, ուղղակիօրէն խոս-*

[51] R. Hovannisian, *The Republic of Armenia, vol. II*, University of California Press, Berkeley & Los Angeles, 1982, էջ 384, 388:

[52] *Armenian Mandatory*, Congressional Record, 66th Congress, 2nd Session, vol. 59, pt. 8, Washington, Governmental Printing Office, 1920, էջ 7877, 7889, 7966-69, 8052-53, 8060-61, 8065, http://congress.gov/bound-congressional-record/1920/06/01/senate-section?p=1, մատչում՝ 15 Յուլիս 2024:

փանալով ու հասկացնելով, թէ մեր յաղթանակի դէպքում նրանց նկատմամբ հալածանքները կը դադարեն»: Նրանք կռուել են ցանկացած այլ զինուորներից ոչ-պակաս, հետեւաբար, մենք պարտական ենք այդ մարդկանց, որոնք նպաստել են մեր յաղթանակին: Հայերը մարտնչել են քաղաքացիական անկախութեան ու կրօնական ազատութեան համար: Այժմ «*դրսեւորել դաւաճանութեանը հաւասար անտարբերութիւն*», ու չտրամադրել նրանց կառավարութեանը գործնական օժանդակութիւն՝ նշանակում է նրանց մատնել կործանման[53]:

Քրիստոնէական միասնութեան հարցը լուսաբանեցին Բրանդեջին, Ջ. Մքկորմիկը եւ Լոջը: Առաջինն ասում էր, որ ԱՄՆը պարտաւոր չէ զբաղուել ցանկացած ժողովրդով, նրա ինքնորոշման կամ քրիստոնեայ լինելու դէպքում: Երկրորդը յիշատակեց դիւանագիտութեան ցինիկութիւնը. «*Սուլթանի գաւազանը վաղուց կ'ընկնէր նրա փկար ու թուլացուող բռնումից, եթէ նրա ձեռքերը չպահէին Եւրոպայի քրիստոնեանյ տէրութիւնները*»: Մեզ չեն տուել Երուսաղէմն ու Սուրբ Հողը՝ Հայաստանի հետ միասին, քանի որ այդ տարածաշրջանում առկայ անվերջ գժտութիւնը «*իրականում պահպանում է այլ տէրութիւնների նիւթական շահերը: Եւրոպայում պատրանքներով չեն տարուում*» այդ հարցի առնչութեամբ: Իսկ երրորդը չէր ցանկանում պատասխանատուութիւն ստանձնել «*Հայաստանում ազգերի ուղեխաչքի համար: ... Հայերը քաջ ժողովուրդ են, որ դարերով պայքարել են իրենց անկախութեան հաստատման եւ իրենց իսկ կրօնին հետեւելու համար: Կարծում եմ, նրանք արժանի են օգնութեան: Գոյութիւն ունեն նրանց աջակցելու բազմաթիւ ձեւեր, առանց Միացեալ Նահանգների ներգրաւմանը*»[54]: Բացի 40 մլն. դոլ. արդէն իսկ առաքուած բարեգործութիւնից, նրանց կարելի է հանդերձել ու զէնք տալ: Լոջը չէր ուզում ամերիկացի զինուորների կեանքեր կորցնել օտար գժտութիւններում: Իսկ Թ. Ջ. Ուոլշը հարցրեց թէ արդեօք հնարաւոր չէ՞ Հայաստանը պարզապէս ներառել ԱՄՆի կազմում եւ այդպիսով իրականացնել դրա լիակատար հսկողութիւնը:

1920Ի ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՐՊԷՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԲՌՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄ

Երեք տէրութիւններն էլ՝ ԱՄՆը, Ֆրանսան եւ Բրիտանիան առանց մեծ դիմադրութեան ընդունեցին 1920 Սեպտեմբերի 22ից Դեկտեմբերի 2ը ծաւալուած թուրք-հայկական պատերազմի հետեւանքով հայկական անկախութեան կործանումը: Ու թէեւ Մ. Նահանգների նախագահը մինչեւ նոյն թուականի Նոյեմբերի 22ը զբաղւում էր թուրք-հայկական սահմանի մշակմամբ, բոլոր բանիմաց քաղաքական գործիչները ընկալում էին նրա աշ-

[53] Նոյն, էջ 8053-56, մէջբերումներ՝ էջ 8055, 8056:
[54] Նոյն, էջ 8059, 8060, 8062 եւ 8058:

խատանքը որպէս իրական կեանքին չառնչուող զբաղմունք: Իրականում տարածաշրջանը նորից վերահսկում էին Թուրքիան ու Ռուսաստանը, որոնց հետ ընդհարուելն անընդունելի էր Վաշինգտոնի համար: Ֆրանսայի նոր վարչապետ Լէյգը Նոյեմբերի 4ին գործարկել էր հայ-ֆրանսական յարաբերութիւնների նոր մօտեցում: Նա պարսաւում էր Խորհրդային Ռուսաստանը, համարում էր այն Թուրքիայից վտանգաւոր, բայց մեղմացնում էր իր դիմադրութիւնը բոլշեւիկների հանդէպ, թէեւ պահանջում էր ամէն կերպ սաստկացնել այդ պայքարը Հայաստանում: Ընդ որում, Լէյգը գրանցում էր ինքնիշխան ՀՀ պետութեան ճգնաժամային վիճակը: Այժմ մընում էր հոգ տանել այդ հանրապետութիւնում գտնուող ֆրանսական սեփականութեան մասին եւ առաւել արդիւնաւէտ իրականացնել հումքի արտահանումը, շարունակել աջակցութիւնը Երեւանի համալսարանին ու տեղափոխել քաղաքական գործունէութիւնը Վրաստան[55]:

Առաւել գործունեայ բրիտանական քաղաքականութիւնը պահանջում էր ամէն գնով շարունակել հայկական անկախութիւնը: Բրիտանացիները 1920 Նոյեմբերի 5ի դրութեամբ անգամ հասկանում էին, որ պատերազմը մահաբեր վտանգ է ՀՀ գոյութեանը, իսկ նրա երկարաձգումը աւելացնելու է հայկական տարածքի կորուստը: Այնուամենայնիւ, նրանց յարմար չէր Կարսն ընդգրկող Հայաստանը, որտեղ վերադառնալու էր ռուսական ազդեցութիւնը: Բոլշեւիկների ցանկացած հզօրացում պահանջում էր ՀՀի առաւելագոյն թուլացում, որն իրականացւում էր նրա անկախութիւնը պաշտպանելու կարգախօսով[56]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի քաղաքական անկախութեան հիմնաւորումը եւ Արեւմտեան Հայաստանի միաւորումը Արեւելեանի հետ կուռ պետութեան կազմում, խարսխուած էր երկու պատմական իրողութիւնների վրայ: Դա հայոց Մեծ Եղեռնը եւ արեւմտեան նահանգների իսպառ աւերումն է օսմանեան կառավարութեան կողմից 1915-18ին, ինչպէս նաեւ Կովկասի ռազմաճակատի փլուզումը՝ ռուսական բանակի փախուստով հանդերձ, 1917

---

[55] *Documents diplomatiques français 1920–1932, 1920, tome III (24 Septembre 1920 – 15 janvier 1921)*, P.I.E. - Peter Lang, Bruxelles, 2002, էջ 230-34:

[56] Տե՛ս՝ 1920 Հոկտեմբերի 3ին՝ Երեւանում, Հոկտեմբերի 16ին եւ 22ին՝ Թիֆլիսում տեղի ունեցած զրոյցներն Անդրկովկասում բրիտանական գերագոյն յանձնակատար, փոխգնդապետ Կ. Բ. Ստոուքսի (C. B. Stokes) հետ, ինչպէս եւ Պոլսում Բրիտանիայի գերագոյն յանձնակատար, փոխծովակալ Ջ. դը Ռոբէկի 1920 Նոյեմբերի 5ի նամակը Ֆորէյնն օֆիսի պետ Ջորջ Քըրզընին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 389–389 դարձ.. նաեւ՝ ֆ. 200, ց. 2, գ. 83, թ. 9. նաեւ՝ ֆ. 1457, ց. 1, գ. 183, թ. 2-3. նաեւ՝ Great Britain Foreign Office Archives, Public Record Office, London, class 371 Political: General Correspondence 1919-1920, volume 5172, document E 14269, file 262, index 44, Enclosure, էջ 74, 80:

Դեկտեմբերից 1918 Փետրուարը եւ առաջին աշխարհամարտի այդ հատուածի հայկական ինքնապաշտպանութիւնը 1918 Փետրուարի 5ից Յունիսի 4ը, իսկ փաստօրէն՝ մինչ այդ թուականի Հոկտեմբերի 18ը:

Ֆրանսայի քաղաքական գործիչներն առաջինն էին, որ տակաւին 1917ի Դեկտեմբերին, իրադրութեանը միանգամայն համապատասխան, նշեցին ՀՀ անկախութեան անհրաժեշտութիւնը: Առաջին աշխարհամարտում Դաշնակից երկրների յաղթանակից յետոյ ԱՄՆի եւ Բրիտանիայի ղեկավարները դրական արձագանգեցին ՀՀ գործունէութեանը՝ նրան օգնելով կենսական նշանակութիւն ունեցող սննդով ու մասամբ զինամթերքով: Իդէպ, բրիտանական հրամանատարութիւնը բոլոր վիճելի տարածքները ենթարկեց իր իրաւասութեանը: Փարիզի խաղաղութեան համաժողովում հայկական անկախութիւնը բոլորի կողմից գնահատւում էր որպէս քաղաքական առումով կենսունակ, որը թէեւ կարօտ էր ռազմական պաշտպանութեան, վարչական օժանդակութեան ու նիւթական աջակցութեան՝ հոգատարութեան տեսքով: Բոլոր երեք տէրութիւնների քաղաքական գործիչները նշում էին, որ ՀՀ անկախութեան եւ յատկապէս միացեալ Հայաստանի համար հիմնական սպառնալիքը արտաքին հաղորդակցութեան ուղիների բացակայութիւնն էր եւ թուրք-թաթարական ներխուժման վտանգը: 1920ին Ֆրանսան շեշտադրեց տնտեսական կապերը, ԱՄՆը հրաժարուեց հոգատարութիւնից, իսկ Բրիտանիան ամբողջութեամբ դուրս հանեց իր զօրքը Անդրկովկասից՝ պարզ հասկանալով քեմալա-բոլշեւիկեան դաշինքի վտանգը հայկական պետութեան համար: Նրանք բոլորը տեսականօրէն զբաղւում էին միացեալ Հայաստանի սահմանազատմամբ, սակայն իրականում անգործուն դիտարկել եւ ընդունել էին 1920ի թուրք-հայկական պատերազմի աղէտալի արդիւնքը, Ռուսաստանի վերադարձը եւ Թուրքիայի տարածքային ձեռքբերումները: Ամբողջութեամբ վերցրած, 1918-20ի անկախութեան ամենաեռանդուն աջակիցը Ֆրանսան էր, այնուհետեւ՝ ԱՄՆը, իսկ ամենազուսպ դիրքերը գրաւեց Բրիտանիան: Ընդ որում, ՀՀ պետական ամբողջ կազմի աշխատանքը գովում եւ Հանրապետութիւնը դիտարկում էին որպէս բնական միջուկ յետագայ միաւորման համար:

ASSESSING AN INDEPENDENT REPUBLIC OF ARMENIA AT THE END OF WWI BY FRENCH, BRITISH AND AMERICAN POLITICIANS
(SUMMARY)

GAYANE MAKHMOURIAN (ggmakhm@hotmail.com)

The justification for Armenian political independence and Western Armenia's unification with its Eastern counterpart into a single state was based on two historical realities: a) the Armenian Genocide, b) the complete devastation of the provinces of Western Armenia by the Ottoman government in 1915-1918. These realities were accompanied by the collapse of the Caucasian Front, the flight of the Russian Army from it (December 1917-February 1918), and its replacement by Armenian self-defence units (from 5 February till 4 June and actually until 18 October) in 1918.

French politicians were the first who quite adequately paid attention to the situation and the necessity of an independent Armenian Republic, in December 1917. After the victory of the Entente Powers in WWI, the USA and Great Britain leaders responded positively to the activities of the Republic of Armenia, providing it in 1919 with vitally important food and some military aid. At the same time, the British Command took all territorial disputes of the regional under its own jurisdiction. At the Paris Peace conference Armenian independence was estimated by all as politically more or less accomplished, though it required foreign military protection, and administrative and material support in the form of a mandate. Politicians of all three Powers noted that the main threat to Armenian independence and especially to a united Armenian state came from the absence of external communications, alongside the danger of a Turkish-Tatar invasion. In 1920 France prioritised its economic interests, the USA gave up the mandate and Britain completely evacuated its troops from the Transcaucaus, clearly comprehending the danger of the Turkish-Bolshevik alliance for the Armenian state. All of them theoretically dealt with the issues of delimitation of the borders of a United Armenian state, though in practice they merely observed and accepted the catastrophic results of the Turkish-Armenian war of 1920, Russia's return and Turkey's territorial acquisitions. Overall, between 1918 and 1920 France was the most ardent supporter of Armenian independence, followed by the USA, while Britain took the most reserved position. In addition, the efforts of the Armenian state apparatus were appreciated, and the Republic was seen as the natural nucleus for further unification.

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑԵՐԸ 1878-82ԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ[1]

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԵԱՆ
r.tatoyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Մեծ Բրիտանիան՝ որպէս Արեւելեան եւ դրան յարակից հայկական հարցերում վճռական դերակատարութիւն ունեցող մեծ տէրութիւններից մէկը, Հայկական Հարցի արծարծման գրեթէ բոլոր հիմնական հանգրուաններում կարեւորել եւ շարունակական հետաքրքրութիւն է ցուցաբերել Արեւմտեան Հայաստանի[2] ժողովրդագրութեան հարցերին: Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգներում իր հիւպատոսներին նա յանձնարարել է մանրամասնօրէն ուսումնասիրել երկրի տեղագրութիւնն ու աշխարհագրութիւնը, բնակչութեան թուակազմը, սովորոյթներն ու տրամադրութիւնները:

Սոյն հետազօտութեան շրջանակներում կը ներկայացնենք եւ կը վերլուծենք բրիտանական դիւանագիտութեան անդրադարձը արեւմտահայութեան թուաքանակի, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էթնիկական կազմի հարցերին՝ կենտրոնանալով Հայկական Հարցի արծարծման առաջին հանգրուանի վրայ, որը ժամանակագրական առումով ընդգրկում է Բեռլինի պայմանագրի[3] ստորագրումից անմիջապէս յետոյ ընկած ժամա-

---

[1] Ուսումնասիրութիւնն արուել է «Կողբ» հիմնադրամի (https://koghb.org/) առաջարկով՝ «Հայ-բրիտանական համաժողով» ծրագրի շրջանակներում:

[2] Հայկական Հարցի շուրջ 1878-1914ի գործընթացների առումով, Արեւմտեան Հայաստան անուանման տակ ընդունուած է հասկանալ Հայկական Լեռնաշխարհի՝ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող հատուածը, որն ըստ օսմանեան վարչական բաժանման ընդգրկուած էր այսպէս կոչուած «վեց նահանգների»՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի եւ Սեբաստիայի վիլայէթների կազմում:

[3] 1878 Յուլիսի 13ին ստորագրուած Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածի համաձայն՝ օսմանեան իշխանութիւնները պարտաւորուեցին *«առանց յետագայ յապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից յարուցուած բարելաւումներն ու բարենորոգումները»* (*Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923),* կազմ.՝ Ջ. Ս. Կիրակոսեան, Ռ. Գ. Սահակեան, խմբ.՝ Ջ. Ս. Կիրակոսեան, «Հայաստան» հրատ., Երեւան, 1972, էջ 128): Պայմանագրում Արեւմտեան Հայաստանի տարածքի՝ «հայաբնակ մարզեր» ձեւակերպումից ելնելով՝ արեւ-

նակաշրջանը (1878-82), երբ Բրիտանիայի արտաքին գերատեսչութիւնը Հայկական Հարցում ստանձնել էր յատկապէս մեծ, շատ առումներով նոյնիսկ առանցքային դեր:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԱԽՔԱՆ 1878Ը

Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգները Բրիտանիայի արտաքին քաղաքականութեան ուշադրութեան ոլորտում յայտնուեցին յատկապէս 1853-56ին, Ղրիմի պատերազմից յետոյ: Բրիտանական դիւանագիտութիւնը առաջին հերթին կարեւորում էր Արեւմտեան Հայաստանի տարածքի՝ որպէս Միջին Արեւելք-Կենտրոնական Ասիա տարածքում եւ դրան մաս կազմող Օսմանեան կայսրութիւնում Բրիտանիայի հիմնական մրցակից՝ Ռուսաստանի սահմանակից ռազմավարական երկրամաս:

Յատկապէս 1860-70ականներին Բրիտանիան Օսմանեան կայսրութիւնը դիտարկում էր որպէս դէպի հարաւ՝ Հնդկական ովկիանոս Ռուսաստանի ծաւալապաշտական նկրտումների դէմ պատուարներից մէկը եւ, դրանից ելնելով, Օսմանեան կայսրութիւնում բրիտանացի դիւանագիտական ներկայացուցիչները շեշտում էին Հայաստանի ռազմավարական կարեւորութիւնը՝ պնդելով, որ ոչ մի պարագայում չպէտք է թոյլ տալ, որ այն ամբողջապէս անցնի ռուսների ձեռքը: Ենթադրւում էր, որ Հայաստանի եւ քրդական լեռների վրայ իշխանութիւն ունենալով՝ Ռուսաստանը կը կարողանայ սպառնալ Պարսից ծոցին, Հնդկաստանին եւ Ափրիկէում՝ բրիտանական տիրոյթներին[4]:

Պոլսում Բրիտանիայի դեսպանից բացի, այդ երկրի մերձարեւելեան քաղաքականութիւնը իրականացնում էին նաեւ Օսմանեան կայսրութեան նահանգներում գործող հիւպատոսները: Այս պաշտօններում, որպէս կանոն, նշանակւում էին գործունեայ եւ կարող գործիչներ, որոնք շատ դէպքերում ձեռք էին բերում զգալի հեղինակութիւն եւ ազդեցութիւն[5]:

Արեւմտեան Հայաստանի տարածքում Բրիտանիայի առաջին կանոնաւոր գործող հիւպատոսական ծառայութիւնը հիմնւում է 1836ին Էրզրումում (հիւպատոս՝ Ջէյմս Բռանթ)[6]: 1852ին բրիտանական հիւպատոսութիւն է

մտահայութեան թուաքանակի, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էթնիկ կազմի հարցերն ածանցուեցին Հայկական Հարցին՝ դառնալով դրա բաղադրիչը:

[4] Akaby Nassibian, *Britain and the Armenian Question, 1915-1923*, St. Martin's Press, New York, 1984, էջ 5:

[5] Ա. Ջ. Կիրակոսեան, *Բրիտանական դիւանագիտութիւնը եւ արեւմտահայութեան խնդիրը*, Երեւան, 1999, էջ 28:

[6] Տե՛ս՝ Ahmet Dönmez, "The Role of James Brant in the Process of Structural Changes in British Consulates," *Adalya, the Annual of Koç University Suna & İnan Kiraç Research Center for Mediterranean Civilizations*, Istanbul, 22:2019, էջ 371:

բացւում Դիարբեքիրում[7]: 1860ականներին Էրզրումի եւ Դիարբեքիրի հիւպատոսութիւնները միաոժամանակ միաւորւում են՝ գործելով «Քուրդիստանի հիւպատոսութիւն» անուան տակ (հիւպատոս՝ Ջոն Թէյլըր)[8]:

Հիւպատոսները պարբերաբար ճանապարհորդում էին Արեւմտեան Հայաստանի տարածքով՝ այդ ընթացքում հաւաքուած տուեալները ներկայացնելով արտգործնախարարութիւն ուղարկուող զեկուցագրերում, ինչպէս նաեւ բրիտանական գիտական պարբերականներում:

Արեւմտեան Հայաստանի նորաստեղծ հիւպատոսութիւններից ստացուող զեկուցագրերում հենց սկզբից կարեւոր տեղ էր յատկացուած տարածքի ազգաբնակչութեան վիճակագրութեանը: Այսպէս, Էրզրումում Բրիտանիայի հիւպատոս Ռոբըրտ Դելիէլը[9] 1865 Մարտին ներկայացնում է Էրզրումի կամ «Էրմենիստանի»[10] նահանգի բնակչութեան թուաքանակի մասին մանրամասն տուեալներ՝ ըստ առանձին վարչատարածքային ենթամիաւորների (սանջակ/գաւառ), կազա/գաւառակ եւ նահիէ/գիւղախումբ): Համաձայն հիւպատոսի տուեալների՝ նահանգում ապրում էր 1,200,814 մարդ, որից 791,746ը իսլամ էին, իսկ 409,068ը կամ ընդհանուր բնակչութեան մօտ 32%ը՝ քրիստոնեայ (այդ ժամանակ նահանգի կազմի մէջ էին

---

[7] David Wilson, *"List of British Consular Officials in the Ottoman Empire and its Former Territories from the Sixteenth Century to about 1860,"* The Levantine Heritage Foundation, July 2011, էջ 19, http://www.levantineheritage.com/pdf/List_of_British_Consular_Officials_Turkey(1581-1860)-D_Wilson.pdf, մատչում՝ 27 Յունիս 2022:

[8] Նոյն: Դիւանագիտական պաշտօններ զբաղեցնելը Թէյլըրը համատեղել է հնագիտական աշխատանքների հետ՝ ինչպէս տարբեր հնագիտական արշաւախմբերի կազմում, այնպէս էլ ինքնուրոյն իրականացնելով Միջագետքում շումէրական եւ ասորեստանեան տարբեր հնավայրերի պեղումներ (https://www.britishmuseum.org/collection/term/BIOG63058, մատչում՝ 08 Հոկտեմբեր 2022):

[9] Պաշտօնավարել է 1859-65ին:

[10] Էրզրումի նահանգի համար «Էրմենիստան»-Հայաստան անուանումը օսմանեան պաշտօնական գրագրութիւնում օգտագործւում էր մինչեւ 1860ականների կէսերը (Herve Georgelin, "Perception of the Other's Ill-Fate: What Greek Orthodox Refugees from the Ottoman Empire Reported about the Destruction of Ottoman Armenians," in *Late Ottoman Genocides: The Dissolution of the Ottoman Empire and Young Turkish Population and Extermination Policies*, edited by Dominik J. Schaller, Jürgen Zimmerer, Routledge, New York, 2009, էջ 54): Օսմանեան կայսրութիւնում բրիտանացի դիւանագէտները, հետեւելով ընդունուած կարգի, մինչեւ 1878ին Հայկական Հարցի միջազգային դիւանագիտութեան օրակարգ մտնելը Արեւմտեան Հայաստանի հիւսիսային շրջանների համար նոյնպէս օգտագործել են Հայաստան - Արմենիա (Armenia) անուանումները:

մտնում, բացի Էրզրումից, նաեւ ապագայ Բիթլիսի եւ Վանի նահանգներից որոշ տարածքներ)[11]:

1860ականների երկրորդ կէսին Արեւմտեան Հայաստանի շրջաններով պարբերաբար ճանապարհորդել է «Քուրդիստանի» հիւպատոս Թէյլըրը: Արտգործնախարար կոմս Քլարենդոնին 1869 Մարտի 18ին հասցէագրած ընդարձակ տեղեկագիրը, որում ամփոփուած են նրա 1868-69ի ճանապարհորդութեան արդիւնքները, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ վիճակագրական առատ նիւթ է պարունակում: Ինչպէս հաղորդում է բրիտանացի հիւպատոսը, ռուս-թուրքական սահմանի եւ Եփրատ գետի միջեւ ողջ երկայնքով ձգուող հարուստ հարթավայրերում, բացառութեամբ Դերսիմի[12], բնակչութեան մեծ մասը հայ էր. *«Այդ ընդարձակ տարածութեան վրայ հայերը իւրացրել են ամբողջ գիւղատնտեսութիւնը եւ առեւտուրը, իսկ քաղաքներում նրանց ձեռքերում է գտնւում դրամագլխի եւ առեւտրի երեք քառորդը»*[13]:

Թէյլըրը վիճակագրական տուեալներ է հաղորդում Արեւմտեան Հայաստանի տարածքի գրեթէ իւրաքանչիւր մանր վարչատարածքային ենթամիաւորից: Այդ վիճակագրութիւնների կարեւոր եւ արժէքաւոր առանձնայատկութիւններից է այն, որ իսլամ բնակչութիւնը բաշխուած է ըստ էթնիկ խմբերի. առանձին տրուած են քրդերի, թուրքերի, ղզլբաշների, արաբների եւ չերքէզների[14] թուաքանակի տուեալներ: Ըստ Թէյլըրի հաշուարկի՝ հիւպատոսութեան տարածքի (Էրզրում-Վան-Բիթլիս-Դիարբեքիր-Խարբերդ) ընդհանուր բնակչութեան թիւը 2,314,200 էր, որից թուրքեր՝ 442,500, քրդեր՝ 848,000, քրիստոնեաներ՝ 649,000, ղզլբաշներ՝ 200,500 եւն.: Այսինքն, քրիստոնեայ բնակչութիւնը ընդհանուր բնակչութեան մօտ 28% էր:

---

[11] Commercial Reports Received at the Foreign Office from Her Majesty's Consuls, Printed by Harrison and Sons, London, 1865, էջ 453-55. նաեւ՝ *Турецкая имперія (Изъ военно-статистическаго сборника на 1868 г.)*, подъ ред. Н.Н. Обручева [Թուրքական կայսրութիւն (1868ի ռազմական-վիճակագրական ժողովածոյից), Ն. Ն. Օբրուչեւի խմբագրութեամբ], Սանկտ-Պետերբուրգ, Военная тип. Гл. Штаба [Գլխաւոր շտաբի զինուորական տպարան], 1868, էջ 207-10:

[12] Դերսիմը գտնուել է Թէյլըրի յատուկ հետաքրքրութեան կենտրոնում: Այդ երկրամասին անդրադարձ կայ դեռեւս 1866ի ճանապարհորդութեան օրամատեանում (J. G. Taylor, "Journal of a Tour in Armenia, Kurdistan, and Upper Mesopotamia, with Notes of Researches in the Dersim Dagh, in 1866," *The Journal of the Royal Geographical Society of London*, 38:1868, էջ 281-361):

[13] *British Documents on Ottoman Armenians, volume I (1856-1880),* edited by Bilal N. Şimşir, Türk Tarih kurumu, Ankara, 1982, էջ 66:

[14] Չերքէզները զանգուածաբար Արեւմտեան Հայաստան եւ Օսմանեան կայսրութեան այլ տարածքներ են տեղափոխուել 1817-64ին՝ Կովկասեան պատերազմի հետեւանքով, Ռուսաստանի կողմից Կովկասը նուաճելուց յետոյ:

Մեկնաբանելով այս թուերը՝ Թեյլըրը նշում է հետեւեալը. *«Այսպիսով կարելի է տեսնել, որ Էրզրումի վիլայէթում քրիստոնեաները [թուով] գերազանցում են քրդերին, վերջիններս էլ՝ թուրքերին: Քրդերն իրենց թուով առաջ են անցնում թուրքերից նաեւ Դիարբեքիրի վիլայէթում: Այս էթնիկ խմբերից իւրաքանչիւրը ենթակայ է բազմաթիւ ենթաբաժանումների, ինչն արդիւնք է հարաւային նահանգներից ներգաղթի, տարբեր ծագման, դաւանանքի եւ զբաղմունքի, ինչը դրոշմել է նրանց տարբեր ազգութիւններին յատուկ ակնյայտ առանձնայատկութիւններով, թէեւ նրանք ենթակայ են մէկ կառավարութեանը եւ դարեր շարունակ ապրում են նոյն երկրում»*[15]:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԵՌԼԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ՝ ԲԵՆՋԱՄԻՆ ԴԻԶՐԱՅԷԼԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1878-1880 ԳԱՐՈՒՆ)

1877-78՝ ռուս-թուրքական պատերազմում Օսմանեան կայսրութեան պարտութիւնից յետոյ, պատերազմի արդիւնքների վերանայման ուղղութեամբ բրիտանական դիւանագիտութեան ջանքերի ընդհանուր յաջողութեամբ պայմանաւորուած՝ Բրիտանիայի ազդեցութիւնը Օսմանեան կայսրութեան նկատմամբ առժամանակ էապէս աճում է[16]: Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայէլիի պահպանողական կառավարութեան (1874 Փետրուար–1880 Ապրիլ) արտաքին քաղաքականութեան հիմնական նպատակներից մէկն է դառնում այդ ազդեցութեան է՛լ աւելի ամրապնդելն ու ընդարձակելը, յատկապէս Օսմանեան կայսրութեան՝ Ռուսաստանին սահմանակից վիլայէթներում: Դիզրայէլիի կառավարութիւնը Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով նախատեսուած հայկական բարեփոխումները դիտարկում էր Օսմանեան կայսրութեան արդիականացման եւ դրա միջոցով Ռուսաստանի ծաւալապաշտական նկրտումները զսպելու ենթախորքում, ուստի այդ հարցում սկսում է վարել նախաձեռնող քաղաքականութիւն: Բրիտանիան դրա համար տիրապետում էր բաւարար դիւանագիտական լծակների, քանի որ 1878 Յունիսի 4ին իր եւ Օսմանեան կայսրութեան միջեւ ստորագրուած Կիպրոսի համաձայնագրով նա հնարաւորութիւն էր ստացել, շրջանցելով միւս մեծ տէրութիւնները, Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների հարցով ուղղակի ճնշում գործադրել օսմանեան կառավարութեան վրայ[17]:

---

[15] *British Documents on Ottoman Armenians, volume I*, էջ 61:

[16] Նշուածը քաջ գիտակցում էին հենց իրենք՝ բրիտանական կառավարութեան անդամները (Բրիտանիայի արտգործնախարար Սոլզբըրիի 1878 Սեպտեմբերի 18ով թուագրուած նամակը Պոլսում բրիտանական դեսպան Հենրի Լայարդին (Lady Gwendolen Cecil, *Life of Robert, Marquis of Salisbury, vol. II. 1868-1880*, Hodder and Stoughton, London, 1921, էջ 315):

[17] Կիպրոսի պայմանագրով Մեծ Բրիտանիան պարտաւորւում էր զէնքի ուժով պաշտպանել Օսմանեան կայսրութեան ասիական տիրոյթները Ռուսաստանի ո-

Նշուած քաղաքականութեան իրականացման տրամաբանութիւնը նախ պահանջում էր ընդարձակել Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բրիտանական ռազմադիւանագիտական ներկայութիւնը: Ուստի՝ Դիզրայէլիի կառավարութիւնում Բրիտանիայի արտգործնախարար (1878 Ապրիլ-1880 Ապրիլ) Ռոբըրտ Սոլզբըրիի նախաձեռնութեամբ 1878ի վերջերին-1879ի սկզբներին Օսմանեան կայսրութեան ասիական նահանգներում բրիտանական հիւպատոսական ցանցը էապէս ընդլայնւում է: Ստեղծւում են երկու՝ «Քուրդիստանի» եւ «Անատոլիայի» գլխաւոր հիւպատոսութիւնների պաշտօններ, ինչպէս նաեւ դրանց ենթակայ վեց փոխհիւպատոսութիւններ, ընդհանուրը՝ ութ հիւպատոսական եւ փոխհիւպատոսական ծառայութիւններ:

«Քուրդիստանի» գլխաւոր հիւպատոսութեան պատասխանատուութեան տարածքն ընդգրկում էր Արեւմտեան Հայաստանի Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի եւ Խարբերդի վիլայէթները: «Անատոլիայի» գլխաւոր հիւպատոսութեան շրջանում ներառուած էին Արեւմտեան Հայաստանի Սեբաստիայի նահանգը եւ Փոքր Ասիայի բոլոր նահանգները:

Հիւպատոսական եւ փոխհիւպատոսական պաշտօններում նշանակւում են սպայական կոչում ունեցող զինուորականներ: «Քուրդիստանի» գլխաւոր հիւպատոս է նշանակւում հազարապետ Հենրի Թրոտէրը (նստավայրը՝ Դիարբեքիր), որը վայելում էր բրիտանական կառավարութեան վստահութիւնը նաեւ որպէս վիճակագիր[18]: Թրոտէրի ենթակայութեամբ գործում էին երկու փոխհիւպատոսներ՝ հրամանատար Էմիլիուս Քլէյթընը (նստավայրը՝ Վան) եւ հրամանատար Ուիլիըմ Էլըրէթը (նստավայրը՝ Էրզրում):

Փոքր Ասիայում Բրիտանիայի գլխաւոր հիւպատոսի պաշտօնը ստանձնում է գնդապետ Չարլզ Ուիլսընը (նստավայրը՝ Սեբաստիա): Նրա ենթա-

---

տնձգութիւններից, իսկ օսմանեան կառավարութիւնն ի պատասխան «խոստանում էր» մտցնել այդ շրջաններում անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք *«պիտի մանրամասնաբար որոշուեն երկու պետութիւնների միջեւ, եւ որոնք նպատակ ունեն Դռան քրիստոնեայ եւ այլ հպատակների բարուօք կառավարումը եւ պաշտպանութիւնը խնդրոյ առարկայ եղած երկրներում»* ("the Sultan promises to England to introduce necessary reforms, to be agreed upon later between the two Powers, into the Government and for the protection of the Christian and other subjects of the Porte in those territories.") (Լէօ, *Հայոց հարցի վաւերագրերը*, տպ. Ն. Աղանեանց, Թիֆլիս, 1915, էջ 104. անգլերէն բնագիրը տե՛ս՝ *Handbooks Prepared Under the Direction of the Historical Section of the Foreign Office, no. 65. Cyprus*, H. M. Stationery Office, London, 1920, էջ 67): Օսմանեան կայսրութեան պահպանութեան պարտաւորութեան կատարման համար հարկաւոր եղած միջոցների ապահովման նպատակով Բրիտանիայի ուղղակի կառավարման տակ էր անցնում Կիպրոս կղզին, ինչից եւ համաձայնագիրը ստացել է իր անունը:

[18] K. Karpat, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics*, The University of Wisconsin Press, Wisconsin, 1985, էջ 52:

կայութեան էին գործում հրամանատար Հ. Կուպըրը (յետագայում նրան փոխարինել է տեղակալ Ֆ. Բենէթը, նստավայրը՝ Կեսարիա), հրամանատար Ջ. Ստիւըրթը (նստավայրը՝ Գոնիա), տեղակալ Հ. Չերմսայդը (նստավայրը՝ Այդին), տեղակալ Հ. Քիչընըրը (յետագայում նրան փոխարինել է հազարապետ Ջ. Պիքթոն-Վարլոուն, նստավայրը՝ Կաստամունի)[19]:

Նորանշանակ հիւպատոսներին եւ փոխհիւպատոսներին յանձնարարւում է մանրամասն ուսումնասիրել իրենց պատասխանատուութեան գօտու շրջանների վարչական կացութիւնը, տեղեկագրել զեղումներն ու անկարգութիւնները եւ այդ մասին յայտնել թէ՛ արտգործնախարարութեանը եւ թէ՛ Պոլսում Բրիտանիայի դեսպան Հենրի Լայարդին[20] (պաշտօնավարել է 1877-80 Մայիս)՝ օսմանեան կառավարութեանը համապատասխան դիմումներ եւ միջնորդութիւններ ներկայացնելու համար[21]: Բարեփոխումների հարցի հետապնդման առումով ի սկզբանէ նաեւ մեծ տեղ է յատկացւում Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրական պատկերի՝ երկրի տեղագրութեան ու աշխարհագրութեան, ազգաբնակչութեան թուակազմի, սովորոյթների եւ տրամադրութիւնների ուսումնասիրութեանը: Տեղի բնակչութեան վիճակագրական տուեալները կենտրոնացնելու եւ վերլուծելու գործը ի պաշտօնէ ստանձնում են Թրոտըրը եւ Ուիլսընը:

Բրիտանացի հիւպատոսներն ու փոխհիւպատոսները նշանակումից գրեթէ անմիջապէս ետք սկսում են Օսմանեան կայսրութեան արեւելեան հայաբնակ նահանգների բնակչութեան թուաքանակը վիճակագրել: Առաջին իսկ տուեալների ստացումից յետոյ նրանք սկսում են արձանագրել, որ օսմանեան պաշտօնական վիճակագրութիւնը չի արտացոլում Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրական առարկայական պատկերը. հայերը ու այլ քրիստոնեայ էթնիկ խմբերը թերհաշուառուած են: 1879 Յուլիսի 15ի զեկուցագրում Թրոտըրը, ներկայացնելով Էրզրումի եւ Վանի վիլայէթների օսմանեան վիճակագրական տուեալները, որոնց համաձայն Էրզրումի արական սեռի իսլամ բնակչութեան թիւը՝ 197,768 եւ քրիստոնեաներինը 55,043 շունչ էր, իսկ Վանի գաւառում համապատասխանաբար՝ 126,208 եւ 97,555, նշում է հետեւեալը. *«Թուրքական տուեալների մասով ես լաւ հիմքեր ունեմ*

---

[19] Sir Charles Moore Watson, *The Life of Major-General Sir Charles William Wilson*, John Murray, London, 1909, էջ 108. նաեւ՝ A. O. Sarkissian, *History of the Armenian Question to 1885*, University of Illinois press, Urbana, Illinois, 1938, էջ 98:

[20] Լայարդը նաեւ յայտնի է որպէս հնագէտ. նա պեղել է Ասորեստանի մայրաքաղաք Նինուէն:

[21] Լէօ, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հտր. Ա.*, տպ. Պահրի եղբարց, Փարիզ, 1934, էջ 107: Բրիտանացի նորանշանակ հիւպատոսների ու փոխհիւպատոսների պարտականութիւնների մաս էր կազմում նաեւ սահմանին ռուսական գործունէութեանը հետեւելը (G. R. Berridge, *British Diplomacy in Turkey, 1583 to the Present. A Study in the Evolution of the Resident Embassy*, Martinus Nijhoff Publishers, Leiden, 2009, էջ 89):

ենթադրելու, որ 40%ով քրիստոնեաների թուի աւելացումը կարող է տալ ցուցանիշ, որը մօտ կը լինի իրականութեանը»[22]:

Քլայթընին հասցէագրուած 1879 Յուլիսի 24ի նամակում Թրոտըրը կարեւորում է տեղի բնակչութեան՝ քոչուոր ու նստակեաց քրդերի եւ հայերի թուաքանակի վերաբերեալ ճշգրիտ վիճակագրական տուեալների հաւաքման խնդիրը: Նրա կարծիքով թուրքական կառավարութեան տուեալները շատ թերի էին եւ հաւատ չէին ներշնչում: Որպէս օրինակ նա նշում է, որ, ըստ օսմանեան պաշտօնական տուեալների՝ Մուշի գաւառի արական սեռի հայերի թիւը 48,000 էր, իսկ համաձայն տեղի հայ հոգեւորականութեան՝ 120,000[23]: Արտգործնախարար Սոլզբըրիին հասցէագրուած 1879 Օգոստոսի 8ի զեկուցագրում Թրոտըրը ներկայացնում է Էրզրումի վիլայէթի ժողովրդագրական պատկերը՝ ըստ հայկական տուեալների. նահանգում կար 195,500 քրիստոնեայ, 185,000 թուրք եւ 112,500 նստակեաց ու քոչուոր քուրդ ազգաբնակչութիւն[24]:

ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒԻԼԻԸՄ ԳԼԱԴՍՏՈՆԻ՝ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1880ի գարնանը Բրիտանիայում կայացած խորհրդարանական ընտրութիւններով իշխանութիւնն անցնում է ազատական կուսակցութեանը՝ Ուիլիըմ Գլադստոնի գլխաւորութեամբ (1880 Ապրիլ–1885 Յունիս): Նոր կառավարութիւնը որոշ չափով վերանայում է հայկական բարեփոխումների հետապնդման ուղղութեամբ բրիտանական քաղաքականութիւնը: Եթէ Դիզրայէլին եւ Սոլզբըրին կարեւորում էին բարեփոխումների հարցում օսմանեան կառավարութեան հետ ուղղակի-երկկողմ հաղորդակցութիւնն ու շփումները (իդէպ, այդ հաղորդակցութեան արդիւնքները առաւել քան համեստ էին՝ օսմանեան կառավարութիւնը խուսանաւումների եւ ձգձգումների միջոցով հետեւողականօրէն հրաժարւում էր տեղերում վիճակը բարելաւելու ուղղութեամբ բրիտանական միջնորդութեամբ գործուն լիազօրութիւններով օժտուած եւրոպացի պաշտօնեաների նշանակումներին եւ այլ բարեփոխումների իրականացումից՝ երկիւղ կրելով, որ բարեփոխումները յանգեցնելու են Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բրիտանական փաստացի հովանաւորութեան հաստատմանը[25]), ապա Գլա-

[22] *British Documents on Ottoman Armenians, vol. I*, էջ 484:

[23] Կիրակոսեան, *Բրիտանական դիւանագիտութիւնը*, էջ 137:

[24] *British Documents on Ottoman Armenians, vol. I*, էջ 517:

[25] Dwight E. Lee, *Great Britain and the Cyprus Convention Policy of 1878*, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1934, էջ 159-60: Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բարեփոխումների իրականացման ուղղութեամբ Դիզրայէլիի կառավարութեան ջանքերի ձախողման մասին մանրամասն տե՛ս նաեւ՝

դստոնը փորձում է շեշտը դնել Բեռլինի պայմանագրի երաշխաւոր բոլոր մեծ տէրութիւնների միասնական գործողութիւնների իրականացման վրայ[26]: Դրան համաձայն՝ 1880 Մայիսին Պոլսում Բրիտանիայի դեսպան Լայարդին փոխարինած Ջորջ Գոշէնին յանձնարարւում է ուժեղացնել ճնշումները օսմանեան կառավարութեան վրայ՝ *«պարզորոշ կերպով փոխանցելով սուլթանին եւ [Բարձր] Դռանը, որ Թուրքական կայսրութեան պահպանման միակ յոյսը նրա վարչակազմի՝ ինչպէս մայրաքաղաքում, այնպէս էլ նահանգներում հիմնովին եւ մանրազնին բարեփոխուելն է»*[27]:

Բրիտանիայի նախաձեռնութեամբ 1880 Յունիսի 11ին մեծ տէրութիւնները նոյնաբովանդակ յուշագիր են ուղարկում օսմանեան կառավարութեանը՝ Բեռլինի պայմանագրով ստանձնած բոլոր պարտաւորութիւնները կատարելու պահանջով: Յուշագրի երրորդ կէտը վերաբերում էր Արեւմտեան Հայաստանում բարեփոխումներին: Մեծ տէրութիւնները օսմանեան իշխանութիւններից պահանջում էին լիարժէք եւ անյապաղ կատարել Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածը՝ զուգահեռաբար ներկայացնելով այն քայլերը, որոնք այդ ուղղութեամբ ձեռնարկուել են[28]:

Նոյն թուականի Յուլիսի 5ին Օսմանեան կայսրութեան արտաքին գործերի նախարար Աբեդին փաշան, դեսպանների համատեղ յուշագրին ի

W. N. Medlicott, *Congress of Berlin and After*, Frank Cass & Co., London, 1963, 2nd edition, էջ 290-346, 383:

[26] Գլադստոնն ու նրա կառավարութեան անդամները 1878ի Կիպրոսի պայմանագիրը բնութագրում էին որպէս «խելացնոր դաշնադրութիւն» ("insane covenant"), որը Բրիտանիային ոչ ուղղակի կերպով պատասխանատու է դարձնում Հայաստանում թուրքական տիրապետութեան բնոյթի համար եւ ստիպում ստանձնել ինչպէս Ռուսաստանի դէմ, այնպէս էլ յօգուտ Հայաստանի այնպիսի պարտաւորութիւններ, որոնք նա ի վիճակի չէ կատարելու (Gertrude M. Tuckwell, *The Life of the Rt. Hon. Sir Charles W. Dilke, vol. I*, John Murray, Albemarle Street, London, 1917, էջ 327): Դրանից ելնելով՝ Գլադստոնի կառավարութեան նպատակն է դառնում Բեռլինի պայմանագրի կէտերից շատերի կատարմանը դիմադրող օսմանեան կառավարութեան վրայ ճնշում գործադրելու ուղղութեամբ բոլոր մեծ տէրութիւնների համատեղ գործողութիւնները՝ այսպէս կոչուած «եւրոպական *կոնցերտը*» վերակենդանացնելու հիմքեր ստեղծելը (W. N. Medlicott, "The Gladstone Government and the Cyprus Convention, 1880-85," *The Journal of Modern History*, 2(12):1940, էջ 187):

[27] Thomas J. Spinner, *George Joachim Goschen: The Transformation of a Victorian Liberal*, Cambridge University Press, New York, 1973, էջ 68:

[28] Յուշագրի՝ Հայկական Հարցին վերաբերող հատուածը տե՛ս՝ М. Г. Роленъ-Жекменъ, «Арменія, армяне и трактаты», *Положеніе армянъ в Турціи до вмешательства державъ въ 1895 году* [Մ. Գ. Ռոլէն-Ժեկմէն, «Հայաստանը, հայերը եւ պայմանագրերը», *Հայերի վիճակը Թուրքիայում նախքան տէրութիւնների միջամտութիւնը 1895ին*], Մոսկուա, типографія «Разсвѣтъ» [«Լուսաբաց» տպարան], 1896, էջ 91-2:

պատասխան, յայտարարում է, որ օսմանեան կառավարութիւնը մտադիր չէ բարեփոխումներ իրագործել յատկապէս հայ բնակչութեան համար, քանի որ հայերն Արեւմտեան Հայաստանի տարածքում փոքրամասնութիւն են. *«Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի նահանգներում հայ բնակչութեան մարդահամարը տուել է հետեւեալ արդիւնքները. հայերի թիւը կազմում է 17%, ոչ-իսլամ այլ համայնքներինը՝ 4%, իսկ իսլամները կազմում են բնակչութեան 79%ը»*՝ նշում էր Աբեդին փաշայի պատասխանում[29]:

Աբեդին փաշայի Յուլիսի 5ի պատասխան գրութիւնը Գոշէնը ուղարկում է Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Ջորջ Գրենվիլին[30] հետեւեալ մեկնաբանութեամբ. *«Այս կապակցութեամբ հայաբնակ նահանգների բնակչութեան վիճակագրութիւնը չափազանց մեծ կարեւորութիւն է ձեռք բերում: Բարձր Դուռն իր պատասխանում կառչած է թուերի, որոնք կարելի է համարել զարմանք յարուցող»*[31]:

Իր հերթին, լորդ Գրենվիլը Աբեդին փաշայի յուշագիրը ուղարկում է Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բրիտանական հիւպատոսական ցանցի ներկայացուցիչներին՝ խնդրելով կարծիք յայտնել դրանում ներկայացուած տուեալների արժանահաւատութեան մասին[32]: Բրիտանացի դիւանագէտները միանշանակ մերժում են արեւմտահայութեան թուաքանակի հարցում օսմանեան կառավարութեան վիճակագրութեան հաւաստիութիւնը: Այսպէս, Չերմսայդը՝ Գոշէնին հասցէագրած 1880 Օգոստոսի 9ի նամակում նշում է, որ օսմանեան պաշտօնական վիճակագրութիւնը *«ամենաանորոշն է ու անբաւարարը, ինչպէս եւ այն ամէնը, ինչ թուրքական կառավարութեան տնօրինութեան տակ է գտնւում»*[33]: Թրոտըրը, վերլուծելով 1880ին թուրքական կառավարութիւնից ստացած Արեւմտեան Հայաստանի վիլայէթների բնակչութեան վիճակագրական աղիւսակները, համարում է, որ Դիարբեքիրի եւ Խարբերդի («յատկապէս Խարբերդի» - ընդգծում է հիւպատոսը) քրիստոնեայ տարրը զգալիօրէն թերի է հաշուած[34]: Նա օսմանեան վիճակագրութեան թերութիւններից առանձնացնում է նաեւ այն, որ դրանում բոլոր իսլամ ազգերը ներկայացուած են որպէս մէկ ընդհանրութիւն եւ որեւէ փորձ արուած չէ բաժանելու նրանց ըստ ազգութիւննե-

---

[29] Նոյն, էջ 94: Աբեդին փաշայի ամբողջ նամակի հայերէն թարգմանութիւնը տե՛ս՝ Լէօ, *Հայոց հարցի վաւերագրերը*, էջ 165-72:

[30] Պաշտօնավարել է 1880 Ապրիլի 28ից 1885 Յունիսի 24ը:

[31] *British Documents on Ottoman Armenians, volume II (1880-1890)*, edited by Bilal N. Şimşir, Türk Tarih kurumu, Ankara, 1989, էջ 80:

[32] Роленъ-Жекменъ, էջ 95:

[33] Karpat, էջ 53:

[34] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 128:

րի (թուրքեր, քրդեր, զազաներ, ղզլբաշներ եւն.): *«Թուրքական պաշտօնեաները ակնյայտ պատճառներով նրանց դասակարգում են մէկ ընդհանուր իսլամ խմբի մէջ»*՝ հաղորդում է հիւպատոսը[35]:

Արեւմտահայութիւնը ներկայացնող կառոյցը՝ Պոլսի հայոց պատրիարքարանը եւս չի ընդունում օսմանեան վիճակագրական տուեալները: Դեռեւս 1880 Յունիսի 17ին Բրիտանիայի դեսպանի հետ զրոյցի ընթացքում պատրիարք Ներսէս Վարժապետեանն առաջարկում է բարեփոխումների ենթակայ Արեւմտեան Հայաստանի նահանգների տարածքից առանձնացնել բուն հայաբնակ տարածքները[36] եւ կազմել մէկ ընդհանուր նահանգ՝ դրա ղեկավար նշանակելով բոլոր եւրոպական մեծ տէրութիւնների կամ Բրիտանիայի կողմից երաշխաւորուած քրիստոնեայ նահանգապետի: Պատրիարքը նշում էր, որ այդ նորաստեղծ նահանգի տարածքում քրիստոնեայ բնակչութիւնը քանակապէս գերազանցում է իսլամներին, եթէ հաշուարկից դուրս թողնուեն ոչ-նստակեաց քրդերը, որոնք այնտեղ են գտնւում տարուայ ընթացքում միայն վեց ամիս[37]: Ի հիմնաւորումն իր ասա-

---

[35] Դրա հետ մէկտեղ, հիւպատոսը փորձում է հաւասարութեան նշան դնել այս հարցում օսմանեան իշխանութիւնների եւ Պոլսի հայոց պատրիարքարանի դիրքորոշումների միջեւ՝ աւելացնելով, որ *«նոյնքան ակնյայտ պատճառներով հայկական ինքնավարութեան ստեղծման ջատագովների շահերից է բխում բաժանել մուսուլմաններին ինչքան հնարաւոր է շատ ենթախմբերի»* (նոյն, էջ 127):

[36] Նշուած առանձնացումը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ այսպէս կոչուած վեց նահանգների կազմում օսմանեան կառավարութիւնն ընդգրկել էր տարածքներ, որոնք գտնւում էին Հայկական Լեռնաշխարհի սահմաններից դուրս եւ առաւելաբար քրդաբնակ ու թուրքաբնակ էին: Ուսումնասիրողներից շատերը դրանում տեսնում են Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ կազմուած տուեալ վարչական միաւորի ընդհանուր բնակչութեան մէջ հայերի եւ այլ քրիստոնեայ էթնիկ խմբերի տոկոսային յարաբերակցութիւնը հնարաւորինս նուազեցնելու օսմանեան իշխանութիւնների միտում (մանրամասն տե՛ս՝ Vahakn N. Dadrian, *Warrant for Genocide. Key Elements of Turko-Armenian Conflict*, New Brunswick (USA) and London (U.K.), 1999, էջ 139-44, նաեւ՝ Е.К. Саркисян, «Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении», *Страны и народы Ближнего и Среднего Востока. т. V, Турция* [Ե. Կ. Սարգսեան, «Օսմանեան կառավարութեան վարչական եւ ժողովրդագրական քաղաքականութիւնը Արեւմտեան Հայաստանում», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հատոր Ե. Թուրքիա*], Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1970, էջ 362-63. նաեւ՝ Գ. Մ. Բադալեան, «Սուլթանական կառավարութեան վարչաժողովրդագրական քաղաքականութիւնը», *Հայոց պատմութիւն, հտր. III. նոր ժամանակաշրջան, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կէս-XIX դարի վերջ)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, «Զանգակ-97», Երեւան, 2010), էջ 448-56. նաեւ՝ Ռ. Ա. Թաթոյեան, *Արեւմտահայութեան թուաքանակի հարցը 1878-1914 թուականներին,* Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան, 2015, էջ 52-57):

[37] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 44:

ծի՝ 1880 Յունիսի 24ին պատրիարքը Մեծ Բրիտանիայի դեսպանին է ներկայացնում պատրիարքարանի՝ 1878-80ին Արեւմտեան Հայաստանում անցկացուած մարդահամարի տուեալների հիման վրայ պատրաստած վիճակագրական աղիւսակը (տե՛ս Յաւելուած Ա.)[38]: Համաձայն պատրիարքարանի տուեալների՝ Արեւմտեան Հայաստանի առանձնացուած տարածքում՝ Վանի, Մուշի եւ Բիթլիսի գաւառներ (առանց Սղերդի), Էրզրումի նահանգ, Դիարբեքիրի նահանգի Դիարբեքիրի գաւառ, Խարբերդի նահանգի Խարբերդի եւ Արղանա-Մադէնի գաւառներ, Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գաւառ եւ Հալէպի նահանգի Մարաշի գաւառ) բնակչութեան ընդհանուր թիւը 1,831,300 էր, որից հայեր՝ 780,800 (ընդհանուր բնակչութեան 42.6%), իսկ բոլոր քրիստոնեայ ազգութիւնները միասին՝ 1,054,800 (ընդհանուր բնակչութեան 57.6%): Ի տարբերութիւն օսմանեան վիճակագրութեան, որտեղ մուսուլման բնակչութիւնը ներկայացուած էր որպէս միատարր զանգուած, պատրիարքարանի տուեալներն արտացոլում էին Արեւմտեան Հայաստանի ամբողջ էթնիկ խայտաբղետ պատկերը. առանձին տրուած էին թուրքերի, քրդերի, չերքէզների, եզդիների, ղզլբաշների, թուրքմէնների եւ իսլամադաւան այլ էթնիկ խմբերի թուերը[39]:

Պոլսի հայոց պատրիարքարանի պատրաստած վիճակագրական աղիւսակը, ինչպէս եւ նախկինում Արեւմտեան Հայաստանի հայ հոգեւորականներից ստացած տուեալները հիւպատոսների կողմից արժանանում են բարձր գնահատականի եւ ընդունւում հայ բնակչութեան թուաքանակին վերաբերող մասով: Այսպէս, Թրոտըրը Բրիտանիայի դեսպանին հասցէագրած 1881 Յուլիսի 11ի զեկուցագրում նշում է. *«Ես ուշադրութեամբ ուսումնասիրեցի պատրիարքի կողմից վերջերս ներկայացուած տուեալները եւ չգտայ դրանց մէջ ոչինչ, ինչը կարող էր ինձ պարտադրել փոխել իմ կարծիքը քրիստոնեաների եւ մուսուլմանների համեմատական թուաքանակի վերաբերեալ: Աղիւսակները կազմուած են խնամքով եւ, հաւանաբար, աւելի են մօտ իրականութեանը, քան պատրիարքարանից մինչ այդ սպացուած ոեւէ վիճակագրութիւն»:* «*Իրաւ,*- եզրափակում է նա,- *տուեալները, որոնք վերաբերում են զուտ հայ բնակչութեանը, աւելի մանրամասն են եւ, գուցէ, աւելի ճշգրիտ, քան մեր պրամադրութեան տակ եղած որեւէ այլ թիւ*»[40]:

Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրութեան նկատմամբ Թրոտըրի վերաբերմունքի վերաբերեալ ուշագրաւ դիտարկումներ է պարունակում Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Նիկոլայ Գիրսին հասցէագրուած Պոլսում Ռուսաստանի դեսպան Ե. Նովիկովի՝ 1880 Օգոստոսի

---

[38] Նոյն, էջ 81-82:

[39] Պոլսի հայոց պատրիարքարանի՝ 1878-80ի մարդահամարի եւ դրա արդիւնքում կազմուած վիճակագրութեան մասին մանրամասն տե՛ս՝ Թաթոյեան, *Արեւմտահայութեան թուաքանակի հարցը*, էջ 78-87:

[40] *British Documents on Ottoman Armenians*, էջ 250:

21ի (Սեպտեմբերի 2) զեկուցագիրը. *«Մինչեւ վերջերս քրդերի եւ թուրքերի եռանդուն պաշտպան մայոր Թրոտըրը փոխել է իր տեսակէտը եւ ճանաչել է հայոց պատրիարքի կազմած հայ բնակչութեան վիճակագրութեան ճշգրտութիւնը՝ անգամ ճանաչելով այդ թիւն իրականից ցածր: Նա համաձայն չէ պատրիարքի հետ միայն քրդերի թուաքանակի որոշման հարցում, որոնց նա համարում է աւելի մեծաթիւ»*[41]:

1880ի ամռան բրիտանացի հիւպատոսները շարունակում են տարբեր աղբիւրներից հաւաքել Արեւմտեան Հայաստանին վերաբերող վիճակագրական տուեալներ: Օգոստոսի վերջերին Գոշէնը Պոլիս է հրաւիրում Ուիլսընին եւ Թրոտըրին՝ «արեւելեան վիլայէթներում» տիրող իրավիճակի մասին հնարաւորինս սպառիչ տեղեկատուութիւն ստանալու համար: Ի թիւս այլոց՝ քննարկման առարկայ է դառնում նաեւ Արեւմտեան Հայաստանում բնակուող տարբեր ազգերի թուային յարաբերակցութեան հարցը: *«Գնդապետ Ուիլսընը եւ հազարապետ Թրոտըրը այժմ մանրակրկիտ ուսումնասիրում են Աբեդին փաշայի եւ հայոց պատրիարքի ներկայացրած թուերը՝ համադրելով դրանք տարբեր ժամանակներում իրենց կողմից հաւաքուած տուեալների հետ»*՝ նշում է դեսպանը արտգործնախարարին հասցէագրած 1880 Սեպտեմբերի 3ի զեկուցագրում[42]:

Ի կատարումն Գոշէնից ստացած բանաւոր առաջադրանքի՝ Թրոտըրը կազմում եւ դեսպանի ուշադրութեան է ներկայացնում Արեւմտեան Հայաստանի բնակչութեան բաղդատական աղիւսակներ՝ ըստ տարբեր աղբիւրների՝ Պոլսի հայոց պատրիարքարանի եւ տեղերում հայ հոգեւորականութեան տուեալներ, օսմանեան պաշտօնեաներից ստացուած տուեալներ եւ օսմանեան տարեգրքերից (*սալնամէ*) քաղուած տեղեկութիւններ, անհատների հաշուարկներ, ճանապարհորդութիւնների ընթացքում հաւաքուած տուեալներ եւն. (Թրոտըրի կազմած աղիւսակները տե՛ս՝ Յաւել. Բ., աղ. 2):

Բացի վերոնշեալ աղիւսակներից, 1880 Հոկտեմբերի 30ին Թրոտըրը դեսպանին է յանձնում նաեւ *«Տեղեկագիր Քուրդիստանի հիւպատոսութեան շրջաններում բնակուող տարբեր ազգութիւնների վերաբերեալ, գլխաւորապէս բարեփոխումների հարցի առնչութեամբ դիտարկուած»* վերտառութեամբ տեղեկագիրը[43]: Այս ծաւալուն փաստաթղթում Թրոտըրը

---

[41] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 529, թ. 99 (բուն աղբիւրը՝ МИД РФ, Армянские дела, СПб, Главный архив ВПР, дело № 117, л. 30 [Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան Գլխաւոր Արխիւ, Սանկտ-Պետերբուրգ, ՌԴ ԱԳՆ, Հայկական գործեր, գործ № 117, թերթ 30]):

[42] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 109:

[43] *Turkey, No. 6 (1881). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria*, London, 1881, էջ 248-60: Տեղեկագրի տուեալները ներկայացնելիս օգտուել ենք հայերէն թարգմանութիւնից, որը մաս առ մաս հրատարակուել է *Մասիս* օրաթերթում («Ժողովուրդք Արմէնոյ-Քուրդիստանի. տեղեկագիր Պ. Թրօթթըրի «վերաբերմամբ գլխաւորապէս բարենորոգմանց

ներկայացնում է «Քուրդիստանի», այն է՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի եւ Դիարբեքիրի նահանագների տարածքում բնակուող իւրաքանչիւր էթնիկ խմբի համառօտ պատմութիւնը, նիստուկացը, թիւն ու բաշխումը: Հիւպատոսն արձանագրում է, որ նշուած շրջաններում իսկապէս գոհացուցիչ կամ արժանահաւատ մարդահամարներ չեն անցկացուել, սակայն իր տրամադրութեան տակ եղած տուեալների քննութիւնը նրան թոյլ է տալիս յանգել այն եզրակացութեան, որ այնտեղ կայ մօտաւորապէս 700,000 քրիստոնեայ եւ 1,750,000 իսլամ ազգաբնակչութիւն[44]: Յաջորդիւ, Թրոտըրը նաեւ հաղորդում է տարածքում բնակուող էթնիկ խմբերից իւրաքանչիւրի մօտաւոր թուաքանակի տուեալներ. քրդեր՝ 1,000,000 (այդ թւում՝ 100,000 զազա), հայեր՝ 600,000-700,000, թուրքեր՝ 500,000, տարբեր յարանուանութիւնների ասորիներ՝ մինչեւ 83,000[45], եզդիներ՝ 20,000, յոյներ՝ 5000, չերքէզներ՝ 5000, հրեաներ՝ 1000 եւն.:

Այսպիսով, ըստ Թրոտըրի հաշուարկի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի եւ Էրզրումի նահանգներում ընդհանուր բնակչութեան թիւը մօտ 2,450,000 էր, եւ հայերն ու այլ քրիստոնեաները կազմում էին դրա մօտ մէկ երրորդը: Հիւպատոսի հաղորդած հայ բնակչութեան թուաքանակը՝ մինչեւ 700,000, շուրջ մէկուկէս անգամ գերազանցում էր նոյն տարածքի համար օսմանեան վիճակագրութեան տուեալը եւ մօտաւորապէս համապատասխանում էր Պոլսի հայոց պատրիարքարանի հաշուարկին: Հայերը նշուած տարածքում, ըստ Թրոտըրի, մօտ 200,000ով աւել էին թուրքերց եւ մօտ 300,000ով պակաս՝ քրդերից:

1880 Օգոստոսի վերջերին Գոշէնի եւ Թրոտըրի հետ հանդիպումների եւ խորհրդակցութիւնների ընթացքում Ուիլսընն առաջարկում է դեսպանին սեփական ուժերով՝ ռազմական փոխհիւպատոսների եւ իր տրամադրութեան տակ եղած այլ անձանց օգնութեամբ, երեք ամսում մօտաւոր մարդահամար անցկացնել Արեւմտեան Հայաստանի վիլայէթներում, որի միջոցով հնարաւոր կը լինէր ճշտել հրապարակի վրայ առկայ հակասական տուեալները, սակայն այդ ծրագիրը այդպէս էլ կեանքի չի կոչուում[46]:

խնդրոյն», *Մասիս, լրագիր հանապազօրեայ, քաղաքական, ազգային, բանասիրական եւ տնտեսական* (Կ. Պոլիս), 1881, Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12), Հոկտեմբերի 1-2-3, 5 (Հոկտեմբերի 13-14-15, 17):

[44] *Մասիս,* 1881, Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12):

[45] Այդ թւում նեստորական ասորիներ՝ 53,940 (ըստ Քլայթոնի տուեալի), 74,466 (ըստ ամերիկացի բողոքական միսիոնար Քըդսի տուեալի), քաղդէական ասորիներ՝ 6000, յակոբիկեան ասորիներ՝ 2000 (*Մասիս,* 1881, Հոկտեմբերի 3 (Հոկտեմբերի 15) եւ *Մասիս,* 1881, Հոկտեմբերի 5 (Հոկտեմբերի 17):

[46] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 109: Ուիլսընը նախկինում մէկ այլ առիթով նշում էր, որ նման մարդահամարի անցկացումը կարող է մեծ ծախսեր պահանջել (նոյն, էջ 84): Հայկական բարեփոխումների կապակցութեամբ սեփա-

1880 Սեպտեմբերի 11ին բրիտանական դիւանագիտութեան նախաձեռնութեամբ մեծ տէրութիւնների դեսպանները նոր համատեղ յուշագիր են ուղարկում Բարձր Դռանը՝ ամբողջութեամբ նուիրուած Աբեդին փաշայի՝ Յուլիսի 5ի պատասխանի այն հատուածին, որը վերաբերում էր օսմանեան կառավարութեան կողմից Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով ստանձնած պարտաւորութիւնների կատարմանը: Յուշագրում, ի թիւս տարբեր ոլորտներում բարենորոգումների անցկացման հարցերի, դեսպանները հանգամանալից անդրադառնում են նաեւ Արեւմտեան Հայաստանի բնակչութեան թուաքանակին: Մեծ տէրութիւններն ըստ էութեան մերժում են օսմանեան վիճակագրական տուեալների հաւաստիութիւնը Արեւմտեան Հայաստանի նահանգների բնակչութեան ազգային կազմի որոշման հարցում եւ պահանջում անկողմնակալ յանձնաժողովի կողմից նոր մարդահամարի անցկացում: Ստորեւ՝ նոտայի համապատասխան հատուածն ամբողջութեամբ.

կան ուժերով Արեւմտեան Հայաստանում մարդահամար անցկացնելու հնարաւորութիւնը 1880ի ամռանն արծարծւում է նաեւ Բրիտանիայի խորհրդարանում: Այսպէս, 1880 Յուլիսի 23ի Լորդերի պալատի նիստին, հայկական բարեփոխումների մասին Ջէյմս Բրայսի հարցմանն ի պատասխան, արտգործնախարարի տեղակալ Չարլզ Դիլքը նշում էր, որ հայաբնակ նահանգներում իրավիճակն աւելի վատ է, քան Օսմանեան կայսրութեան այլ մասերում, եւ գրեթէ անհնարին է չափազանցել այնտեղ գերիշխող չարաշահումները եւ անիշխանութիւնը: Դիլքը ափսոսանք էր յայտնում, որ Բարձր Դուռը մեծ տէրութիւնների յուշագրին ի պատասխան մերժել է ընդունել անգլիացի հիւպատոսների զեկուցագրերի իսկութիւնը. *«Վեհափառ Թագուհւոյն կառավարութիւնը մտադիր է անմիջապէս պարտ ու պատշաճը տնօրինել որպէսզի սպուգէ Հայաստանի գաւառներու մէջ բնակող այլ եւ այլ ցեղերու ճիշտ թիւը, ոչ միայն իր յատուկ, այլ եւ Եւրոպայի միւս մեծ տէրութեանց ծանօթութեան համար: Եւրոպական պաշտօնաւորներ այս վիճակագրութիւնը պիտի ճշդեն, քանի որ կարեւոր է այն իբրեւ հիմ ապագայ բարենորոգումներու առաջարկին համար»* (*Արեւելեան մամուլ,* Օգոստոս 1880, էջ 243):

Դիլքի խոստացած եւ բրիտանական դիւանագիտական գրագրութիւնում արծարծուած մարդահամարի չանցկացուելուն արձագանգել է հայկական մամուլը: Մասնաւորապէս, *Մասիս*ը, 1881 Հոկտեմբերի 20 (Նոյեմբերի 1) համարի խմբագրականում յիշեցնելով Դիլքի խօսքերը, այնուհետեւ հռետորական հարց էր տալիս. *«Ո՞ւր են սակայն «հիւպատոսաց օժանդակութեամբ կատարուելիք» վիճակագիրներն: Ինչ որ յիշեալ հաւաքածոյն* (նկատի ունի *Կապոյտ գրքի* թողարկումը, որտեղ հաւաքուած էին Արեւմտեան Հայաստանի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ 1878-80ի հիւպատոսական հաղորդագրութիւնները – Ռ.Թ.) *կը դնէր [բրիտանական] խորհրդարանին առջեւ, ոչ այլ ինչ էր, բայց եթէ արդէն զանազան աղբիւրներէ ելած ցուցակաց բաղդատութիւն մը, որ իրօք շատ բան մը կը հասկցնէր... բայց այդ չափը Սըր Չարլզ Տիլքի խոստման համապատասխան նկատելու համար, պէտք էր որ եղքէն մի ուրիշ կարգադրութիւն եղած լինէր»* (*Մասիս,* 1881, Հոկտեմբերի 20 (Նոյեմբերի 1)):

Բարձր Դուռը ձգտում է նուազեցնել այդ պարբերութեան (Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածի – Ռ.Թ.) նշանակութիւնը՝ վկայակոչելով ինչպէս հայ, այնպէս էլ քրիստոնեայ բնակչութեան թիւը՝ համեմատած ամբողջ ժողովրդի ընդհանուր թուի հետ: Նոտային կից ներկայացուած աղիւսակն[47] այն աստիճանի է տարբերւում միւս բոլոր տուեալներից, որ տէրութիւնները չեն կարող այն ճշգրիտ ճանաչել:

Հայոց պատրիարքի տրամադրած կից զետեղուող բնակչութեան վիճակագրութիւնը ցոյց է տալիս այն մեծ տարբերութիւնը, որը գոյութիւն ունի տարբեր տուեալների միջեւ: Յուլիսի 5ի նոտան միայն տալիս է մահմեդական եւ քրիստոնեայ բնակչութեան յարաբերակցութիւնը: Տէրութիւնները կը ցանկանային իմանալ այն հիմքը, որի վրայ կատարուել են հաշուարկները: Նրանք կարեւոր են համարում 61րդ յօդուածով նկատի առնուած նահանգներում բնակուող քրիստոնեաների եւ մահմեդականների համապատասխան թուաքանակների մօտաւոր մարդահամարի անցկացումը հնարաւորինս կարճ ժամկէտերում անկողմնակալ յանձնաժողովի կողմից, որի կազմը կ'որոշուի յետագայում:

Պէտք է հասկանալի լինի, որ Բարձր Դուռը կ'ընդունի մարդահամարի արդիւնքները՝ արուած այն պայմաններում, որոնք կ'երաշխաւորեն դրա լիակատար անկողմնակալ բնոյթը եւ, համապատասխանաբար, դրանք հաշուի կ'առնի նահանգների կազմակերպման ժամանակ: Շատ հաւանական է, որ տեղական բոլոր պահանջմունքները բաւարարելու համար անհրաժեշտ կը լինի վերանայել տարբեր վիլայէթների ներկայ աշխարհագրական սահմանները[48]:

Համատեղ նոտային կից մեծ տէրութիւնների դեսպանները զետեղում են Պոլսի հայոց պատրիարքարանից ստացած վիճակագրական աղիւսակը՝ դրանով այն հակադրելով օսմանեան կառավարութեան տուեալներին եւ ըստ էութեան ակնարկելով, որ պատրիարքարանի տուեալներն իրենք եթէ օսմանեան տուեալներից ոչ աւելի, ապա առնուազն ոչ նուազ արժանահաւատ են համարում:

Ի պատասխան մեծ տէրութիւնների համատեղ նոտայի՝ Բարձր Դուռը 1880 Հոկտեմբերի 3ին ներկայացնում է հայկական բարենորոգումների սեփական ծրագիրը, որը քիչ աղերս ունէր մեծ տէրութիւնների առաջարկների հետ եւ կոչուած էր յետագայ խուսանաւումների եւ ձգձգումների միջոցով խուսափել Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով ստանձնած պարտաւո-

---

[47] Խօսքը վերաբերում է օսմանեան կառավարութեան վիճակագրական տուեալները պարունակող աղիւսակին:

[48] *Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում: Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, խմբ.՝ Մ. Ներսիսեան, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, «Հայաստան» հրատ., Երեւան, 1991, էջ 7-13). նաեւ՝ *Մեղու Հայաստանի*, 1881, Օգոստոսի 22:

րութիւնների կատարումից: Մարդահամարի անցկացման պահանջը կատարեալ լռութեան էր մատնւում եւ արհամարհւում էր[49]:

Գոշէնը, ստանալով Բարձր Դռան Հոկտեմբերի 3ի պատասխանը, այն բնութագրում է որպէս յանդուգն[50]: Սակայն այս պատասխանին մեծ տէրութիւնների որեւէ գրաւոր արձագանգ չի հետեւում. Հայկական Հարցում օսմանեան կառավարութեան խուսափողական դիրքորոշմանը հակադարձող այլ գործնական քայլեր նոյնպէս չեն ձեռնարկւում: Արեւմտեան Հայաստանում Բրիտանիայի հիւպատոսներին մնում էր միայն արձանագրել, որ օսմանեան իշխանութիւնների կողմից անցկացուող բարեփոխումները «կատարեալ ֆարս են»: *«Մուսուլման եւ քրիստոնեայ բնակչութեան թուաքանակը, որի հիման վրայ պէտք է որոշուի կառավարող տարրը, ամբողջովին խեղաթիւրուած է»*՝ մասնաւորապէս նշւում էր հազարապետ Թրոտըրին ուղղուած հրամանատար Քլայթոնի՝ 1880 Նոյեմբերի 16ի զեկուցագրում[51]: Օսմանեան կառավարութիւնը տեղական կառավարող օղակները «բարեփոխելիս» յենւում էր բացառապէս իր պատրաստած վիճակագրութեան վրայ՝ անտեսելով «անկողմնակալ» մարդահամար անցկացնելու մեծ տէրութիւնների կոչը:

1881ի ընթացքում բրիտանական դիւանագիտութիւնը միքանի ապարդիւն փորձեր է անում մեծ տէրութիւնների ուշադրութիւնը հրաւիրելու հայկական բարեփոխումների խնդրով սուլթանական կառավարութեանը նոր համատեղ բողոք ներկայացնելու հարցի վրայ[52]: Իվերջոյ, 1881 Սեպտեմբերի 15ին Պոլսում մեծ տէրութիւնների դեսպանների համատեղ խորհրդակցութեան ժամանակ գրաւոր նոտայով հանդէս գալու առաջարկը, ըստ էութեան, անորոշ ժամանակով յետաձգւում է, որոշւում է դրա փոխարէն սահմանափակուել բանաւոր հարցադրումներով[53]:

Հայկական Հարցում մեծ տէրութիւններին միասնական գործողութիւնների բերելուն ուղղուած Բրիտանիայի ջանքի ձախողումը մեծապէս պայմանաւորուած էր Ռուսական կայսրութիւնում տեղի ունեցող զարգացումներով: 1881 Մարտի 1(13)ին ցար Ալեքսանդր Բ.ի սպանութիւնից յետոյ նրան յաջորդած Ալեքսանդր Գ.ը վերանայում է իր հօր ազատական քաղաքականութիւնը՝ որդեգրելով ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին ազգային-ազատագրական գաղափարների ու շարժումների նկատմամբ խիստ զգուշաւոր, եթէ ոչ թշնամական վերաբերմունք: Դրա հետեւանքով՝ ռուսական

---

[49] Բարձր Դռան պատասխանի բնագիրը տե՛ս Роленъ-Жекменъ, էջ 104-5:

[50] Նոյն, էջ 106:

[51] ՀԱԱ, ֆ. 818, g. 1, գ.529, թ. 111:

[52] Կիրակոսեան, *Բրիտանական դիւանագիտութիւնը եւ,* էջ 193-94:

[53] Նոյն, էջ 204: 1881-82ին Հայկական Հարցի շուրջ ընթացող դիւանագիտական գործընթացները դէպքերին ժամանակակից միջազգային իրաւունքի մասնագէտ Ռոլէն Ժեկմէնն անուանում էր «դիւանագիտական կատակերգութիւն» (Роленъ-Жекменъ, էջ 109):

դիւանագիտութիւնն առժամանակ կորցնում է հետաքրքրութիւնը հայկական բարեփոխումների նկատմամբ՝ թողնելով Բրիտանիային այս հարցում միայնակ[54]:

Իր հերթին, Բրիտանիան հրաժարւում է Հայկական Հարցում ինքնուրոյն՝ առանց բոլոր մեծ տէրութիւնների մասնակցութեան, օսմանեան կառավարութեան վրայ լուրջ ճնշում բանեցնելուց: Ինչպէս նշում է Լէօն. *«Գլադստոնը, վերցնելով Կիպրոսը, դէն էր շպրտում Կիպրոսի դաշնագրութիւնը: …Նա Անգլիայի վրայից վերցնում էր յատուկ պատասխանատուութիւնը Փոքր Ասիան ռեֆորմներով բարեկարգելու վերաբերմամբ եւ դարձնում էր Անգլիան սոսկ մէկն այն վեց տէրութիւններից, որոնք սփորագրել էին Բեռլինի դաշնագիրը, … քրիստոնեաների փրկութիւնը ձգելով բոլոր վեց պետութիւններին, այսինքն՝ ոչ ոքի»*[55]:

Հայկական Հարցի նկատմամբ Բրիտանիայի հետաքրքրութեան թուլացման գործում դեր է խաղում նաեւ 1882ի ամռան-աշնան ամիսներին այդ երկրի կողմից Եգիպտոսի գրաւումը[56]: Կիպրոսում եւ Եգիպտոսում ռազմական ներկայութեամբ Բրիտանիան կարողանում է իր համար ապահովել Հնդկաստան տանող երթուղու վերահսկման կենսական հանգրուան, որը կախուած չէր Օսմանեան կայսրութեան բարիկամեցողութիւնից, ինչը յանգեցնում է Բրիտանիայի ռազմավարական շահերի տեսանկիւնից Օսմանեան կայսրութեան՝ որպէս Ռուսաստանի կայսերապաշտական նկրտումների համար պատնէշի նշանակութեան նուազմանը[57]: Նա այլեւս մեծ շահագրգռութիւն չունէր Օսմանեան կայսրութեան այլ շրջաններում, յատկապէս՝ ռուս–թուրքական սահմանակից Արեւմտեան Հայաստանի տարածքում սեփական դիրքերի ամրապնդման հարցում:

---

[54] Robert F. Zeidner, "Britain and the Launching of the Armenian Question," *International Journal of Middle East Studies,* 7(4):1976, էջ 475. հմմտ.՝ J.A.R. Marriott, *The Eastern Question. An Historical Study in European Diplomacy*, Clarendon Press, Oxford, 1940, էջ 398-99: Ալեքսանդր Գ.ի օրօք հայերի եւ Հայկական Հարցի նկատմամբ ռուսական քաղաքականութեան մասին մանրամասն տե՛ս՝ Stephen Badalyan-Riegg, *Russia's Entangled Embrace: The Tsarist Empire and the Armenians, 1801-1914*, Cornell University Press, Ithaca and London, 2020, էջ 162-98: 1879-80ին Հայկական Հարցում օսմանեան իշխանութիւնների վրայ ճնշում գործադրելու՝ Բրիտանիայի ջանքերի նկատմամբ ռուսական դիւանագիտութեան վերապահ վերաբերմունքի մասին տե՛ս՝ В. Г. Тунян, *Россия и Армянский вопрос* [Վ. Գ. Թունեան, Ռուսաստանը եւ Հայկական հարցը], Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան, 1998, էջ 97-105):

[55] Լէօ, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հտր. Ա,* էջ 122:

[56] Ջ. Կիրակոսեան, *Բուրժուական դիւանագիտութիւնը եւ Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.)*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1980, էջ 144:

[57] William Hale, *Turkish Foreign Policy 1774-2000*, Frank Cass Publishers, London-Portland, Oregon, 2002, էջ 30:

Սրանից ելնելով, ստեղծուելուց երեքուկէս տարի անց՝ 1882 Հոկտեմբերին բրիտանական կառավարութիւնը վերացնում է «Քուրդիստանի» եւ «Անատոլիայի» զինուորական հիւպատոսների եւ փոխհիւպատոսների համակարգը, իսկ Ուիլսընը եւ զինուորական փոխհիւպատոսների մեծ մասը Փոքր Ասիայից փոխադրւում են Բրիտանիայի վերահսկողութեան տակ անցած Եգիպտոս[58]: Վիճակագրական տուեալների հաւաքման եւ մշակման ուղղութեամբ Թրոտըրի եւ Ուիլսընի աշխատանքները յետագայ ընթացք չեն ունենում: Նրանց թէեւ յաջողւում է մէկտեղել տարբեր վիճակագրական տուեալներ եւ դրանց հիման վրայ համեմատական աղիւսակներ կազմել, սակայն «արեւելեան վիլայէթներում» առկայ յաճախ իրարամերժ տուեալները ստուգելու նպատակով փորձնական մարդահամար անցկացնելու գաղափարն այդպէս էլ մնում է թղթի վրայ:

1881-84՝ Պոլսում Բրիտանիայի դեսպան լորդ Դաֆերինը գնդապետ Ուիլսընին ուղղուած հրաժեշտի նամակում (1882 Օգոստոսի 28) հետեւեալ գնահատականն է տալիս նրա եւ այլ զինուորական հիւպատոսների ու փոխհիւպատոսների՝ Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի տարածքում կատարած աշխատանքներին. *«Երկրի նիւթական եւ ֆիզիկական յատկանիշերի, նաեւ նրա բնակիչների վիճակի վերաբերեալ այն տեղեկատուութիւնը, որը Դուք տրամադրել էք Նորին Մեծութիւն Կառավարութեանը, չափազանց արժէքաւոր է: Անատոլիայի աւելի ամբողջական եւ սպառիչ քննութիւն, քան ձեր եւ ձեր գործընկերների կողմից արուածը՝ հաւանաբար երբեք չի իրականացուել Արեւելքի որեւէ մասում»*[59]:

Կարելի է արձանագրել, որ բրիտանական արտաքին գերատեսչութիւնը նման ծաւալի ուսումնասիրութիւն Արեւմտեան Հայաստանի տարածքում չի կատարել նաեւ 1882ից յետոյ. այսպիսով, այդ ձեռնարկը մնաց եզակի՝ Հայկական Հարցին Բրիտանիայի առնչութիւնների պատմութեան մէջ: Յետագայում Օսմանեան կայսրութիւնում հաւատարմագրուած բրիտանացի դիւանագէտների անդրադարձները Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրութեան հարցերին ստացան անկանոն բնոյթ՝ հիմնականում սահմանափակուելով օսմանեան կառավարութեան տրամադրած տուեալների մասին կարծիք յայտնելով[60]:

---

[58] Earl George Buckle, *The Life of Benjamin Disraeli, Earl of Beaconsfield, vol. VI. 1876-1881*, John Murray, London, 1920, էջ 301: *«Բրիտանական ազդեցութիւնը, որը մեծ առաջընթաց էր ապրում Անատոլիայում, անհետացաւ, որպէսզի գրեթէ անմիջապէս փոխարինուի գերմանականով»*՝ աւելացնում է Դիզրայէլիի բրիտանացի կենսագիրը (նոյն):

[59] Watson, էջ 200-1:

[60] Այսպէս, երբ 1890ին Օսմանեան կայսրութեան արդարադատութեան նախարարութիւնը Բրիտանիայի դեսպան Ուիլիըմ Ուայթին ներկայացնում է նոր անցկացուած պաշտօնական մարդահամարի տուեալները, դեսպանը խնդրում է Էրզրումում Բրիտանիայի հիւպատոս Քլիֆորդ Լոյդին մեկնաբանել դրանք: Լոյդը, ներ-

Տեսնելով Հայկական Հարցում մեծ տէրութիւնների համատեղ քայլերի անորոշութիւնը եւ Բրիտանիայի միայնակ հանդէս գալու դժկամութիւնը՝ օսմանեան իշխանութիւններն է՛լ աւելի հաստատուեցին անվերջ խուսանաւելու միջոցով Հայկական Հարցին լուծում չտալու քաղաքականութեան մէջ: Համապատասխանաբար, Բարձր Դուռը շարունակեց պնդել Ա-րեւմտեան Հայաստանում հայերի փոքրամասնութիւն կազմելու դրոյթի վրայ՝ օգտագործելով այս փաստարկը բոլոր առիթներով, երբ որեւէ փորձ էր արւում բարձրացնելու հայկական բարեփոխումների հարցը: Իրենց հերթին, մեծ տէրութիւնները հնարաւորութիւն ստացան օգտուելու հայ բնակչութեան թուաքանակի հարցի առկախ բնոյթից, երբ հարկն է, պատճառաբանելով Հայկական Հարցում իրենց անգործութիւնը հայերի փոքրամասնութիւն լինելու փաստարկով, եւ միեւնոյն ժամանակ իրենց զինանոցում պահելով եւ ըստ անհրաժեշտութեան շրջանառելով 1880 Սեպտեմբերի 11ի համատեղ նոտայում բարձրացուած պահանջները:

1870ականների վերջ-1880ականների սկզբին բրիտանացի հիւպատոսների հաւաքած վիճակագրական առատ նիւթը եւ կատարած հաշուարկները բրիտանական դիւանագիտութեան կողմից օգտագործուել են նաեւ յետագայ տարիներին: Այսպէս, դրանք հիմք են կազմել Բրիտանիայի ռազմական նախարարութեան հետախուզութեան բաժնի ղեկավարի օգնական, գնդապետ Ուիլիըմ Էվերէթի՝ 1895 Մայիսի 11 թուակիր ընդարձակ (37 տպագիր էջ) «Փոքր Ասիայի եւ դէպի արեւելք ընկած թուրքական նահանգների ազգաբնակչութեան մասին» վերնագիրը կրող տեղեկագրի պատրաստման համար[61]: Հեղինակը, որը 1879-82՝ զբաղեցնում էր Էրզրումում Բրիտանիայի փոխհիւպատոսի պաշտօնը, իսկ 1882-88՝ յաջորդել էր Թրոտըրին «Քուրդիստանի» հիւպատոսի պաշտօնում, ի թիւս Ասիական Թուրքիայի վիլայէթների, ներկայացնում է նաեւ Արեւմտեան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչութեան թուաքանակի հաշուարկ: Արեւմտեան Հայաստանի վեց նահանգների համար Էվերէթի տուեալների համեմատութիւնն օսմանեան կառավարութեան՝ նոյն թուականին կազմած վիճակագրութեան հետ ցոյց է տալիս, որ, ըստ բրիտանացի դիւանագէտի՝

կայացնում է սեփական հաշուարկը, ըստ որի՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի եւ Խարբերդի վիլայէթների ոչ-մուսուլման բնակչութեան թիւը 53,925 շնչով աւել, իսկ մուսուլման բնակչութեան թիւը՝ 198,673ով պակաս էր օսմանեան կառավարութեան նոր վիճակագրութիւնում ներկայացուած տուեալների համեմատ (*British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 686. նաեւ՝ Յաւելուած Գ.):

[61] British National Archives, CAB 37/38/26, *Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces to the Eastward,* compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, Intelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895:

նշուած տարածքում ապրում էր շուրջ 43,3%ով աւելի հայ, քան ներկայացնում էին օսմանեան իշխանութիւնները (Աղ. 1):

Աղիւսակ 1.- Արեւմտեան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչութեան թուաքանակն ըստ օսմանեան կառավարութեան եւ Էւերէթի տուեալների

Նահանգ	Օսմ. տուեալներ, 1895[62]	Էւերէթ, 1895[63]	Տարբ. (%)
Վանի	60,448	112,536	86,1
Բիթլիսի	101,358	152,398	50,3
Էրզրումի	109,808	134,902	22,8
Դիարբեքիրի	60,597	73,825	21,8
Խարբերդի	80,276	156,356	94,7
Սեբաստիայի	120,052	133,367	11
Ընդամէնը	**532,539**	**763,384**	**43,3**

Բրիտանացի դիւանագէտը օսմանեան տուեալների համեմատ մօտ 16%ով ցածր է ցոյց տալիս մուսուլման բնակչութեան թիւը (Աղ. 2):

Աղիւսակ 2.- Արեւմտեան Հայաստանի վեց նահանգների իսլամ բնակչութեան թիւն ըստ օսմանեան կառավարութեան եւ Էւերէթի տուեալների

Նահանգ	Օսմ. տուեալներ, 1895[64]	Էւերէթ 1895[65]	Տարբ. (%)
Վանի	207,028	131,275	-36,6
Բիթլիսի	352,713	133,986	-62,1
Էրզրումի	545,782	505,185	-7,4
Դիարբեքիրի	378,253	333,456	-11,6
Խարբերդի	494,881	504,946	2,0
Սեբաստիայի	801,630	731,610	-8,7
Ընդամէնը	**2,780,287**	**2,340,458**	**-15,9**

Օսմանեան տուեալների համեմատ Էւերէթը նաեւ զգալիօրէն բարձր է ցոյց տալիս հայաբնակ վեց նահանգներում ոչ-իսլամ բնակչութեան յարաբերակցութիւնը իսլամների նկատմամբ (Աղ. 3): Ըստ բրիտանացի դիւանագէտի՝ Վանի եւ Բիթլիսի նահանգներում քրիստոնեաները (ներառեալ ասորի բնակչութիւնը) անգամ մեծամասնութիւն էին կազմում, իսկ բոլոր

[62] Տե՛ս՝ Karpat, *Ottoman population 1830-1914*, էջ 148-149 (օսմանեան մարդահամարների տուեալներում կաթոլիկ եւ բողոքական բնակչութեան թիւը սովորաբար տրուած է առանց ազգային պատկանելութիւնը նշելու. մենք աւելացրել ենք դրանց տուեալները հայ առաքելական բնակչութեան թուին՝ ելնելով այն իրողութիւնից, որ տուեալ շրջաններում բողոքականներն ու կաթոլիկները գրեթէ բացառապէս հայեր էին):

[63] Տե՛ս՝ *Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces*, էջ 35:

[64] Տե՛ս՝ *Turkey No. 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, in Continuation of Turkey No. 2, Presented to both Houses of Parliament by Command of Her Majesty. August 1896*, Harrison and Sons, London, 1896, էջ 98:

[65] Տե՛ս՝ *Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces*, էջ 35:

վեց նահանգներում ոչ-իսլամները կազմում են բնակչութեան 28,4%ը (օսմանեան կառավարութիւն՝ 20%) (Էւերէթի պատրաստած ամբողջական աղիւսակը տե՛ս՝ Յաւելուած Դ.):

Աղիւսակ 3.- Արեւմտեան Հայաստանի վեց նահանգներում իսլամների եւ ոչ-իսլամների յարաբերակցութիւնն ըստ օսմ. կառավարութեան եւ Էւերէթի տուեալների				
Նահանգ	**Օսմ. տուեալներ, 1895**[66]		**Էւերէթ, 1895**[67]	
	Իսլամ	Ոչ-իսլամ	Իսլամ	Ոչ-իսլամ
Վանի	207,028 (68%)	101,264 (32%)	131,275 (41,2%)	183,873 (58,3%)
Բիթլիսի	352,713 (76%)	126,874 (24%)	133,986 (46,8%)	152,398 (53,2%)
Էրզրում	545,782 (81,5%)	123,935 (18,5%)	505,185 (78,4%)	138,902 (21,6%)
Դիարբեքիրի	378,253 (82%)	83,752 (18%)	333,456 (74,2%)	115,888 (25.8%)
Խարբերդի	494,881 (85%)	91,422 (15%)	504,946 (76,3%)	157,006 (23,7%)
Սեբաստիայի	801,630 (83%)	170,351 (17%)	731,610 (80,4%)	178,970 (19,6%)
Ընդամէնը	**2,780,287 (80%)**	**697,598 (20%)**	**2,340,458 (71,6%)**	**927,037 (28,4%)**

Օսմանեան կայսրութեան Փոքր Ասիոյ վիլայէթները 1895ին
(*Map of Turkey in Asia (Asia Minor)*, Rand, McNally & Co., Chicago, 1895)

[66] Տե՛ս՝ *Turkey No. 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey*, էջ 98:

[67] Հաշուարկները մեր կողմից, ըստ՝ *Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces*, էջ 35:

BRITISH DIPLOMACY AND THE NUMBER OF WESTERN ARMENIANS, AND ISSUES RELATED TO THE ETHNIC COMPOSITION OF WESTERN ARMENIA BETWEEN 1878 AND 1882, IN THE CONTEXT OF THE ONGOING PROCESSES OF THE ARMENIAN QUESTION

(SUMMARY)

ROBERT TATOYAN (r.tatoyan@gmail.com)

Great Britain, as one of the great powers with a decisive role in the Eastern and the Armenian questions, showed continuous interest in the demography of Western Armenia at almost all the main milestones of the Armenian question, instructing its consuls in the eastern provinces of the Ottoman Empire to study in detail the topography and geography of the region, as well as its population numbers, customs, and opinions.

The research presents and analyzes the approaches of British diplomacy to the issues concerning the number of Western Armenians and the ethnic composition of the population of Western Armenia. The paper focuses on the first milestone in the discussion of the Armenian question, which chronologically spans the period immediately after the signing of the Treaty of Berlin, from 1878 to 1882. During this time, the British Foreign Office assumed a particularly significant and, in many ways, leading role in the negotiations on the Armenian reform plan.

Յաւելուած Ա.- Արեւմտեան Հայաստանի նահանգների բնակչութեան համեմատական աղիւսակ (ներկայացուել է Մեծ Բրիտանիայի դեսպան Ջորջ Գոշէնին՝ Պոլսի հայոց պատրիարք Ներսէս արք. Վարժապետեանի կողմից 1880 Յունիսի 24ին)[1]									
Յաւելուած **Հայեր**	Էրզրում	Վան, Մուշ, Բիթլիս	Սեբաս-տիա	Խարբերդ	Դիարբեքիր	Հալէպ	Ընդ.	Ընդ.	Ընդհ. գումար
Հայեր	110,000	250,000	40,000	140,000	80,000	80,000	700,000		
Կաթոլիկ հայեր	10,000	2,000	10,000	5,000	8,000	10,000	45,000		
Բողոքական հայեր	1,000	500	2,000	10,000	800	500	14,800		
Յունադաւան հայեր	-	-	-	3,000	-	-	3,000		
Ալեւի-ղզլբաշ հայեր	10,000	-	5,000	-	-	-	15,000		
Բոշա հայեր	3,000	-		-	-	-	3,000		
	134,000	252,500	57,000	158,000	88,800	90,500	-	780,800	
Յոյներ									
Յոյներ	5,000	-	5,000	2,000	5,000	-	17,000		
Կաթոլիկ յոյներ	-	-	-	-	-	6,000	6,000		
	5,000	**-**	**5,000**	**2,000**	**5,000**	**6,000**	**-**	**23,000**	
Ասորիներ									
Նեստոր. ասորիներ	-	85,000	-	5,000	40,000	40,000	**170,000**		
Կաթոլիկ ասորիներ	-		-	-	15,000	66,000	**81,000**		
		85,000	**-**	**5,000**	**55,000**	**106,000**		**251,000**	**1,054,800**
Թուրքեր									
Թուրքեր	50,000	20,000	50,000	60,000	40,000	50,000	270,000		
Չերքէզներ	10,000	-	15,000	10,000	15,000	-	50,000		
	60,000	20,000	65,000	70,000	55,000	50,000		320,000	
Խառը բնակչթն.									
Եզդիներ	-	20,000	-	-	5,000	-	25,000		
Գնչուներ	10,000	-	-	5,000	-	5,000	20,000		
Ղզլբաշներ	-	-	-	15,000	15,000	-	30,000		
Հրեաներ	-	1,500	-	-		-	1,500		
	10,000	**21,500**	**-**	**20,000**	**20,000**	**5,000**		**76,500**	

[1] *Մեղու Հայաստանի* (Թիֆլիս), 22 Օգոստոսի 1881:

Քոչուոր ցեղեր									
Ձազա քրդեր	60,000	70,000	15,000	30,000	-	15,000	190,000		
Ալեւի քրդեր	-	-	-	10,000	40,000	-	50,000		
Արաբ քրդեր	-	-	-	-	30,000	40,000	70,000		
Աւշար քրդեր	-	-	-	-	-	10,000	10,000		
Քուրդ ֆահի բեդուիններ	-	40,000	-	-	-	-	40,000		
Թուրքմեններ	-	-	-	-	-	20,000	20,000		
	60,000	**110,000**	**15,000**	**40,000**	**70,000**	**85,000**		**380,000**	
									776,500
									1,831,300

Յաւելուած Բ.- «Քուրդիստանում» Մեծ Բրիտանիայի հիւպատոս Հենրի Թրոտըրի կազմած վիճակագրական աղիւսակները (1880)

Աղիւսակ II.- (Ա.) Էրզրումի, Վանի, եւ Բիթլիսի վիլայէթների բնակչութեան վիճակագրութեան համեմատական աղիւսակ (բացառութեամբ Սղերդի)

Աղբիւր	Հայ՝ առաք., կաթ., եւ բողոք.	Նեստր.	Յոյն	Հրեայ	Գնչու	Թուրք եւ չերքէզ	Քուր-մանջի քրդեր	Ձազա քրդեր	Եզդի[1]	Գումար		Ընդհ.
										Ոչ Իսլամ	Իսլամ	
Դելիէլ, 1863	Մանրամասնութիւններ չեն տրուած									289,309	609,758	899067
Թէյլըր, 1869	290,500	110,000	4000	1200		244,700	320,000	158,000	2000	405,700	724,700	1130400
Բեռլինի ծրագիր, 1878	1,150,000	14,000	5000	--	3000[2]	400,000	80,000	35,000	13,000	1,172,000	528,000	1,700,000
Պաշտօնապէս՝ Չարլզ Դիլքին, 1880	563,685	84,995[3]	3420	363	-	223,484[4]	273,095	67,369	3627	652,463	567,575	1,220,038

[1] Եզդիներին մենք ներառել ենք մուսուլմանների մէջ, քանի որ, զինուորագրելու նպատակով նրանք մտցուած են պաշտօնական ցուցակների մէջ որպէս մահմեդական:

[2] Ներառեալ 3000 գնչու:

[3] Ներառեալ30 ղպտի:

[4] 218,584 թուրք, 2800 չերքէզ, 2,000 լազ եւ 100 պարսիկ:

Պատրիարքը դեսպանին, 1880	373,500	85,000	5000	1500	13,000[5]	80,000	40,000[6]	140,000[7]	20,000	478,000	280,000	758000
Վահան վարդ., 1879	440,500	--	--	--	--	--	--	--	--	--	--	--
Քէյթըն, 1880	---	53,940	--	--	--	--	--	--	--	--	--	--
Պաշտօն.թուեր	316,444	61,778	6792	2050	--	821,476				387,064	821,476	1,208,540

(Բ.) Դիարբեքիրի վիլայէթի վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների (ներառեալ Սղերդը)

Աղբիւր	Հայեր[1]	Ասորի[2]	Յոյն	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.	Քուրման ջի քուրդ	Զազա քուրդ եւ ղզլբաշ	Արաբ	Եզդի[4]	Ընդամէնը	
											Ոչ իսլամ	Իսլամ
Թէյլըր, 1869	Քրիստոնիաներ 130,000		1000	--	45,000[5]	391,000[6]	12,500[7]		118,000	8000	109,000	574,500
Պատրիարքը դեսպանին	88,800	55,000[8]	5000	--	--	55,000[9]	30,000[10]	55,000[11]	--	5000	148,800	145,000
Պաշտօնական տուեալներ, 1880	76,958[12]	10,212	306	432	--	--	328,174		--	--	87,908	328,174

[5] Ներառեալ 3000 բոշա, այսինքն հայախօս գնչուներ, որոնց պատրիարքը հայ է համարում:
[6] Բնագիր փաստաթղթի մէջ անուանւում են «բեդուիններ»:
[7] Ներառեալ 10,000 ալեւիներ կամ ղզլբաշներ, որոնց պատրիարքը հայ է համարում, սակայն, քանի որ դրանք, անտարակոյս, մուսուլման են (շիա), մենք որպէս այդպիսին ենք հաշուել նրանց:
[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[4] Մենք հաշուել ենք եզդիներին մուսուլմանների մէջ:
[5] 30,000 թուրք եւ 15,000 չեչէն:
[6] Բնագրում պարզ չէ, այս թուի մէջ հաշուա՞ծ են զազա քրդերը, թէ՞ ոչ:
[7] Հաւանաբար ղզլբաշ թուրքեր:
[8] Պատրիարքը հաշուում է 40,000 նեստորականներ եւ 15,000 կաթոլիկ ասորիներ: Բայց Դիարբեքիրի նահանգում մշտական բնակութիւն հաստատած նեստորականներ չկան, այլ կան միայն որոշ քանակորվ յակոբիկեաններ եւ քաղդէացիներ:
[9] 40,000 թուրք 15,000 չերքէզ:
[10] Պատրիարքը անուանում է նրանց արաբ քրդեր:
[11] Պատրիարքը հաշուումէ 40,000 ալեւի եւ 16,000 ղզլբաշ: Սակայն, ինչքան մեզ յայտնի է, ալեւիները եւ ղզլբաշերը նոյնն են:
[12] Հաշուարկում ներառուած է Սղերդի սանջակի բնակչութիւնը, որը վերջերս անցել է Դիարբեքիրից Բիթլիսի վիլայէթին:

Սալնամէ, 1879	--	--	--	--	--	--	--	--	--	--	129,092	562,778
13. Մասնաւոր	--	19,200	370	--	--	--	--	--	--	--	--	--

(Գ.) Խարբերդի վիլայէթի բնակչութեան վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի եւն.[2]	Յոյն[3]	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.[4]	Քուրմանջի քրդեր	Զազա քրդեր եւ ղզլբաշներ	Արաբներ	Եզդիներ	Ընդամէնը	
											Ոչ Իսլամ	Իսլամ
Թէյլըր, 1899	130,000 քրիստոնեայ			--	--	140,000	100,000	30,000	--	--	130,000	270,000
Պատրիարքը դեսպանին	155,000	5000[5]	5000	--	5000	70,000[6]	--	55,000[7]	--	--	170,000	125,000
Պաշտ. թուէր	88,204	826	2382	378	--	--	337,788	--	--	--	91,790	337,788
Մասնաւոր	--	1500	--	--	--	--	--	--	--	--	--	--

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդեացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[3] Ներառեալ ուղղափառներ եւ կաթոլիկներ:
[4] Ներառեալ թուրքեր եւ չերքէզներ:
[5] Ներառեալ 3000 այսպէս կոչուած հայկական յոյներ:
[6] 60,000 թուրք եւ 10,000 չերքէզ:
[7] Ներառեալ 30,000 զազա քուրդ, 10,000 ալեւի եւ 15,000 ղզլբաշ:

(Դ.) Հալէպի վիլայէթի բնակչութեան վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի[2]	Յոյն[3]	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.[4]	Քուրմանջի քուրդ	Զազա քուրդ եւ ղզլբաշ	Արաբ	Եզդի	Ընդամէնը	
											Ոչ Իսլամ	Իսլամ
Պատրիարքը Դեսպանին	90,500	106,000[5]	6000	--	5000	80,000	40,000[6]	15,000	--	--	207,500	135,000
հիւպատոս Սքին, 1860	Մօտաւոր										100,000	400,000
Պաշտ. թուեր	67,634	5520	14,750	7144	654	--	539,702	--	--	--	95,702	539,702
Վահան Վրդ.	82,080	--	--	--	--	--	--	--	--	--	--	--
Մասնաւոր	--	4650	--	--	--	--	--	--	--	--	--	--

Աղիւսակ III.- Սահմանամերձ վիլայէթների որոշ սանջակների բնակչութեան թուաքանակի տարբեր հաշուարկներ պարունակող համեմատական աղիւսակ							
Վիլայէթ		Իսլամ	Ոչ-իսլամ	Վիլայէթ		Իսլամ	Ոչ-իսլամ
Բայազէտ	1	27,550	5,810	Երզնկա	3	93,780	23,040
	2	72,900	9,200		4b	91,994	22,628
	3	57,960	9,900		4c	98,056	23,880
	4	54,292	9,550		7	97,866	24,352
Բիթլիս եւ Մուշ	1	86,600	73,542	Մալաթիա	5	179,279	13,796
	2	86,100	48,300		7	133,666	13,464

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[3] Ներառեալ ուղղափառներ եւ կաթոլիկներ:
[4] Ներառեալ 50,000 թուրք, 10,000 աւշար եւ 20,000 թուրքմէն:
[5] Պատրիարքը անուանում է նրանց արաբ քրդեր:
[6] 40,000 նեստորականներ եւ 66,000 կաթոլիկ ասորիներ: Սակայն, ըստ Էութեան, նեստորականներ չկան, իսկ ասորիների թիւը խիստ չափազանցուած է:

	4	115,392	94,196		4	107,950[2]	38,478
	6	114,396	93,786	Մարդին	5	144,520	26,086
	7	242,920 (a)	136,614 (a)		7	82,816	23,232
Դիարբեքիր	4	111,935	49,656		4	117,245	39,072
	5	114,522	35,798	Սղերդ	5	124,458	53,412
	7	64,594	27,534		6	164,374	48,206
Էրզրում	3	85,860	52,200		7	47,092	23,678
	4a	173,802	59,374		2	216,900	195,800
	4b	201,528	60,036		4b	256,570	208,808
	7	168,692	61,140	Վան եւ Հեքիարի	6	138,120	100,924
					7	174,408	138,976
					8	62,000[3]	213,000

Ծանօթագրութիւններ.- 1) Սըր Ռոբերտ Դելիէլ, 1863, 2) Պարոն հիւպատոս Թէյլըր, 1869, 3) Պարոն հիւպատոս Թէյլըր, 1871, 4) Սալնամէ, պաշտօնական տարեգիրք, թուականն անյայտ: Սալնամէում տրուած է միայն տների թիւը, իւրաքանչիւր քրիստոնեայ տան համար հաշուել ենք վեց եւ իսլամ տան համար՝ հինգ շունչ, 4a) 1288ի սալնամէ, 4b) 1289ի սալնամէ, 4c) 1294ի սալնամէ, 5) 1297 (1880)ի սալնամէ, 6) Կայսերական յանձնակատար Եուսուֆ փաշայի տուեալներ, 7) Պաշտօնական վիճակագրութիւն (զօրավար Բէյքըր), 8) Նախկին պատրիարք Խրիմեան, Վան, a) Բիթլիսի եւ Մուշի համար պաշտօնական վիճակագրութիւնը ներառում է Էրզրումից եւ Վանից վերցուած եւ Բիթլիսի վիլայէթին կցուած տարածքների տուեալներ: Բիթլիսի վիլայէթը ներկայումս կազմաւորման ընթացքում է, այդ պատճառով, այս վիճակագրութիւնը համեմատելի չէ այլ թուերի հետ:
Աղբիւր՝ *British Documents on Ottoman Armenians, vol. II,* էջ 129-31, 136:

[2] Ներառեալ եզդիներ:
[3] Ներառեալ 2000 եզդիներ:

Յաւելուած Գ.- «Քուրդիստանի» հիւպատոսութեան բնակչութեան համեմատական աղիւսակ (1890) (Աղբիւր՝ *British Documents on Ottoman Armenians*, vol. II, էջ 686)				
Վիլայէթներ	Նորին Մեծութեան Դեսպանին Բարձր Դռան կողմից ներկայացրած պաշտօնական թուերը, 1890		Քլիֆորդ Լոյդի հաշուարկը, 1890	
	Ոչ իսլամ	Իսլամ	Ոչ իսլամ	Իսլամ
Էրզրում	113,488	441,671	113,488	441,671
Բիթլիս	109,944	167,054	121,082	166,794
Վան	135,912	282,582	155,988	115,000
Դիարբեքիր	71,870	240,574	87,584	304,584
Խարբերդ	81,158	300,194	88,155	205,353
Ընդամէնը	**512,372**	**1,432,075**	**556,297**	**1,233,402**

Յաւելուած Դ.- Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի ազգաբնակչութեան թուաքանակի վերաբերեալ Էւերէթի վիճակագրական աղիւսակը (1895) (British National Archives, CAB 37/38/26, *Report on the population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward,* compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, ntelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895, էջ 258)										
Վիլայէթ	Սանջակ	Բնակչութիւն				Յարաբերակցութիւնը ամբողջ բնակչութեան նկատմամբ			Տարածքը, քառ. կմ	Բնակչթ. /1 քառ. կմ
		Մուսուլմ. եւ այլ յարանթ.ներ	Քրիստ.		Ընդ.	Մուսուլմ. եւ այլ յարանթ.ներ (%)	Քրիստոնեաներ			
			Հայեր	Այլ յարանթ.ներ			Հա-յեր (%)	Այլ յարանթ.ներ %		
-	Բիղա	109,571	1,688	18,179	129,438	84.65	1.31	14.04	7,500	17
Զմիւռնիա	Զմիւռնիա	291,925	10,045	187,040	489,010	59.70	2.05	38.25	12,500	39
	Սարուխան	293,399	3,882	48,468	345,749	81.86	1.12	14.02	11,850	29
	Այդին	187,922	634	17,021	205,577	91.41	0.31	8.28	7,600	27
	Դենիզլի	210,697	430	2,860	213,987	98.46	0.20	1.34	7,850	27
	Մենթեշէ	131,907	114	10,133	142,154	92.79	0.08	7.13	13,200	11
	Իզմիթ	131,885	48,635	40,795	221,315	59.59	21.98	18.43	11,130	20
Բրուսա	-	1,318,818	72,375	198,526	1,589,719	82.97	4.55	12.48	68,400	23

Կաստամունի	-	1,918,768	10,431	27,594	1,956,793	98.05	0.54	1.41	50,000	39
Անգորա	Անգորա	267,019	14,218	1,896	283,133	94.31	5.02	0.67	83,000	11
	Եոզղաթ	243,986	31,041	4,870	279,897	87.17	11.09	1.74		
	Կայսերի	136,590	48,693	25,449	210,732	64.82	23.11	12.07		
	Կարաշեհիր	116,999	346	1,794	119,139	98.20	0.29	1.51		
Կոնիա	-	989,200	9,800	73,000	1,072,000	92.28	0.91	6.81	91,600	12
Ադանա	-	292,550	29,432	4,390	326,372	89.64	9.02	1.34	40,000	8
Տրապիզոն	-	698,566	37,446	133,544	869,556	60.33	4.31	15.36	31,300	28
Սեբաստիա	Սեբաստիա	273,390	78,585	5,872	357,847	76.39	21.96	1.65	39,450	9
	Ամասիա	191,980	17,387	10,572	219,939	87.29	7.91	4.80	24,450	9
	Թոքատ	160,820	16,590	10,006	187,416	85.81	8.85	5.34	10,000	19
	Գարահիսար	105,420	20,805	19,153	145,378	72.52	14.31	13.17	9,800	14
Հալէպ	-	651,397	85,140	25,903	762,440	85.44	11.16	3.40	762,439	10
Էրզրում	-	505,185	134,902	4,000	644,087	78.43	20.94	0.63	76,720	8
Խարբերդ	-	504,946	156,356	650	661,952	76.28	23.63	0.09	37,800	17
Դիարբեքիր	Դիարբեքիր	64,878	28,317	13,213	106,408	60.97	26.61	12.42	17,530	6
	Մարդին	82,964	21,075	16,289	120,328	68.94	17.52	13.54	20,740	6
	Արղանա	186,424	24,433	11,751	222,608	83.74	10.98	5.28	8,530	26
Բիթլիս	Բիթլիս	29,281	39,287	-	68,568	42.70	57.30	-	29,850	9
	Մուշ	46,157	66,871	-	113,028	40.83	59.17	-		
	Գենջ	14,045	10,832	-	24,877	56.45	43.55	-		
	Սղերդ	44,503	35,408		79,911	55.69	44.31	-		
Վան	Վան	69,690	106,388	1,107	177,185	39.33	60.05	0.62	22,700	8
	Հեքիարի	61,585	6,148	70,230	137,963	44.64	4.46	50.90	25,000	5
Ընդամէնը	**-**	**10,332,467**	**1,167,734**	**984,305**	**12,484,506**	**82.77**	**9.35**	**7.88**	**1,520,939**	**8.20**

(Դ.) Հալէպի վիլայէթի բնակչութեան վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի[2]	Յոյն[3]	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.[4]	Քուրմանջի քրդեր	Զազա քուրդ եւ ղզլբաշ	Արաբ	Եզդի	Ընդամէնը	
											Ոչ Իսլամ	Իսլամ
18. Պատրիարքը դեսպանին	90,500	106 000[5]	6,000	--	5,000	80,000	40,000[6]	15,000	--	--	207,500	135,000
19. հիւպատոս Սքին, 1860	Մօտաւոր									100,000	400,000	
20. Պաշտ. թուեր	67,634	5,520	14,750	7,144	654	--	539,702	--	--	--	95,702	539,702
21. Վահան վրդ.	82,080	--	--	--	--	--	--	--	--	--	--	--
22. Մասնաւոր	--	4,650	--	--	--	--	--	--	--	--	--	--

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[3] Ներառեալ ուղղափառներ եւ կաթոլիկներ:
[4] Ներառեալ 50,000 թուրք, 10,000 աւշար եւ 20,000 թուրքմէն:
[5] Պատրիարքը անուանում է նրանց արաբ քրդեր:
[6] 40,000 նեստորականներ եւ 66,000 կաթոլիկ ասորիներ: Սակայն, ըստ էութեան, նեստորականներ չկան, իսկ ասորիների թիւը խիստ չափազանցուած է:

Յաւելուած Ա.- Արեւմտեան Հայաստանի նահանգների բնակչութեան համեմատական աղիւսակը (ներկայացուել է Մեծ Բրիտանիայի դեսպան Ջորջ Գոշէնին Պոլսի հայոց պատրիարք Ներսէս արք. Վարժապետեանի կողմից 1880 Յունիսի 24ին)[1]									
Յաւելուած **Հայեր**	Էրզրում	Վան, Մուշ, Բիթլիս	Սեբաստիա	Խարբերդ	Դիարբեքիր	Հալէպ	Ընդ.	Ընդ.	Ընդհ. գումար
Հայեր	110,000	250,000	40,000	140,000	80,000	80,000	700,000		
Կաթոլիկ հայեր	10,000	2,000	10,000	5,000	8,000	10,000	45,000		
Բողոքական հայեր	1,000	500	2,000	10,000	800	500	14,800		
Յունադաւան հայեր	-	-	-	3,000	-	-	3,000		
Ալեւի-ղզլբաշ հայեր	10,000	-	5,000	-	-	-	15,000		
Բոշա հայեր	3,000	-		-	-	-	3,000		
	134,000	252,500	57,000	158,000	88,800	90,500	-	780,800	
Յոյներ									
Յոյներ	5,000	-	5,000	2,000	5,000	-	17,000		
Կաթոլիկ յոյներ	-	-	-	-	-	6,000	6,000		
	5,000	**-**	**5,000**	**2,000**	**5,000**	**6,000**	**-**	**23,000**	
Ասորիներ									
Նեստոր. ասորիներ	-	85,000	-	5,000	40,000	40,000	**170,000**		
Կաթոլիկ ասորիներ	-		-	-	15,000	66,000	**81,000**		
		85,000	**-**	**5,000**	**55,000**	**106,000**		**251,000**	**1,054,800**
Թուրքեր									
Թուրքեր	50,000	20,000	50,000	60,000	40,000	50,000	270,000		
Չերքէզներ	10,000	-	15,000	10,000	15,000	-	50,000		
	60,000	20,000	65,000	70,000	55,000	50,000		320,000	
Խառը բնակչթն.									
Եզդիներ	-	20,000	-	-	5,000	-	25,000		
Գնչուներ	10,000	-	-	5,000	-	5,000	20,000		
Ղզլբաշներ	-	-	-	15,000	15,000	-	30,000		
Հրեաներ	-	1,500	-	-		-	1,500		

[1] *Մեղու Հայաստանի* (Թիֆլիս), 22 Օգոստոսի 1881:

	10,000	**21,500**	**-**	**20,000**	**20,000**	**5,000**		**76,500**	
Քոչուոր ցեղեր									
Ձազա քրդեր	60,000	70,000	15,000	30,000	-	15,000	190,000		
Ալեւի քրդեր	-	-	-	10,000	40,000	-	50,000		
Արաբ քրդեր	-	-	-	-	30,000	40,000	70,000		
Աւշար քրդեր	-	-	-	-	-	10,000	10,000		
Քուրդ ֆահի բեդուիններ	-	40,000	-	-	-	-	40,000		
Թուրքմէններ	-	-	-	-	-	20,000	20,000		
	60,000	**110,000**	**15,000**	**40,000**	**70,000**	**85,000**		**380,000**	
									776,500
									1,831,300

Յաւելուած Բ. «Քուրդիստանում» Մեծ Բրիտանիայի հիւպատոս Հենրի Թրոտըրի կազմած վիճակագրական աղիւսակները (1880)

Աղիւսակ II.- (Ա.) Էրզրումի, Վանի, եւ Բիթլիսի վիլայէթների բնակչութեան վիճակագրութեան համեմատական աղիւսակ (բացառութեամբ Սղերդի)

Աղբիւր	Հայեր՝ առաքել., կաթ. եւ բողոք.	Նեստր.	Յոյն	Հրեայ	Գնչու	Թուրք եւ չերքէզ	Քուրմանջի քրդեր	Ձազա քրդեր	Եզդի[1]	Գումար		Ընդհ.
										Ոչ Իսլամ	Իսլամ	
1. Ռոբերտ Դելիէլ, 1863	Մանրամասնութիւններ չեն տրուած									289,309	609,758	899,067
2. Հիւպ. Թեյլոր, 1869	290,500	110,000	4000	1200		244,700	320,000	158,000	2000	405,700	724,700	1,130,400
3. Բեռլինի	1,150,000	14,000	5000	--	3000[2]	400,000	80,000	35,000	13,000	1,172,000	528,000	1,700,000

[1] Եզդիներին կամ սատանայապաշտներին մենք ներառել ենք մուսուլմանների մէջ, քանի որ, զինուորագրելու նպատակով նրանք մտցուած են պաշտօնական ցուցակների մէջ որպէս մահմեդական:

[2] Ներառեալ 3000 գնչու:

ծրագիր, 1878												
4. Պաշտ. հաղորդած Չարլզ Դիլքին, 1880	563,685	84,995[3]	3420	363	-	223,484[4]	273,095	67,369	3627	652,463	567,575	1,220,038
5. Պատր.ը դեսպանին, 1880	373,500	85,000	5000	1500	13,000[5]	80,000	40,000[6]	140,000[7]	20,000	478,000	280,000	758,000
6. Վահան վրդ., 1879	440,500	--	--	--	--	--	--	--	--	--	--	--
7.Փոխհ իւպ. Քլէյթոն, 1880	---	53,940	--	--	--	--	--	--	--	--	--	--
8. Պաշտ. թուեր	316,444	61,778	6792	2050	--	821,476				387,064	821,476	1,208,540

[3] Ներառեալ 30 ղպտի:

[4] 218,584 թուրք, 2800 չերքէզ, 2000 լազ եւ 100 պարսիկ:

[5] Ներառեալ 3000 բոշա, այսինքն հայախօս գնչուներ, որոնց պատրիարքը հայ է համարում:

[6] Բնագիր փաստաթղթի մէջանուանուում են «բեդուիններ»:

[7] Ներառեալ 10,000 ալեւիներ կամ ղզլբաշներ, որոնց պատրիարքը հայ է համարում, սակայն, քանի որ դրանք, անտարակոյս, մուսուլման են (շիա), մենք որպէս այդպիսին ենք հաշուել նրանց:

(Բ.) Դիարբեքիրի վիլայէթի վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների (ներառեալ Սղերդը)												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի[2]	Յոյն	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.	Քուրմանջի քրդեր	Զազա քրդեր եւ ղզլբաշներ	Արաբ	Եզդի[4]	Ընդամէնը	
											Ոչ իսլամ	Իսլամ
9. Թէյլոր, 1869	Քրիստոնիաներ 130,000			1000	--	45,000[5]	391,000[6]	12,500[7]	118,000	8000	109,000	574,500
10. Պատր.ը դեսպանին	88,800	55,000[8]	5000	--	--	55,000[9]	30,000[10]	55,000[11]	--	5000	148,800	145,000
11. Պաշտ. տուեալներ, 1880	76,958[12]	10,212	306	432	--	--	328,174		--	--	87,908	328,174
12. Սալնամէ, 1879	--	--	--	--	--	--	--	--	--	--	129,092	562,778
13. Մասնաւոր	--	19,200	370	--	--	--	--	--	--	--	--	--

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[4] Մենք հաշուել ենք եզդիներին մուսուլմանների մէջ:
[5] 30,000 թուրք եւ 15,000 չեչէն:
[6] Բնագրում պարզ չէ, այս թուի մէջ հաշուա՞ծ են զազա քրդերը, թէ՞ ոչ:
[7] Հաւանաբար, ղզլբաշ թուրքեր:
[8] Պատրիարքը հաշուում է 40,000 նեստորականներ եւ 15,000 կաթոլիկ ասորիներ: Բայց Դիարբեքիրի նահանգում մշտական բնակութիւն հաստատած նեստորականներ չկան, այլ կան միայն որոշ քանակորվ յակոբիկեաններ եւ քաղդէացիներ:
[9] 40,000 թուրք 15,000 չերքէզ:
[10] Պատրիարքը անուանում է նրանց արաբ քրդեր:
[11] Պատրիարքը հաշուումէ 40,000 ալեւի եւ 16,000 ղզլբաշ: Սակայն, ինչքան մեզ յայտնի է, ալեւիները եւ ղզլբաշերը նոյնն են:
[12] Հաշուարկում ներառուած է Սղերդի սանջակի բնակչութիւնը, որը վերջերս անցել է Դիարբեքիրից Բիթլիսի վիլայէթին:

(Գ.) Խարբերդի վիլայէթի բնակչութեան վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի եւն.[2]	Յոյն[3]	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.[4]	Քուրմանջի քրդեր	Զազա քուրդ եւ ղզլբաշ	Արաբ	Եզդի	Ընդամէնը	
											Ոչ Իսլամ	Իսլամ
14. Թէյլըր, 1899	130,000 քրիստոնեայ			--	--	140,000	100,000	30,000	--	--	130,000	270,000
15. Պատր.ը դեսպանին	155,000	5000[5]	5000	--	5000	70,000[6]	--	55,000[7]	--	--	170,000	125,000
16. Պաշտ. թուեր	88,204	826	2382	378	--	--	337,788	--	--	--	91,790	337,788
17. Մասնաւոր	--	1500	--	--	--	--	--	--	--	--	--	--

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդեացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[3] Ներառեալ ուղղափառներ եւ կաթոլիկներ:
[4] Ներառեալ թուրքեր եւ չերքէզներ:
[5] Ներառեալ 3000 այսպէս կոչուած հայկական յոյներ:
[6] 60,000 թուրք եւ 10,000 չերքէզ:
[7] Ներառեալ 30,000 զազա քուրդ, 10,000 ալեւի եւ 15,000 ղզլբաշ:

(Դ.) Հալէպի վիլայէթի բնակչութեան վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի[2]	Յոյն[3]	Հրեայ	Գնչու	Թուրք եւ այլն[4]	Քուրմանջ ի քրդեր	Ձազա քուրդ եւ ղզլբաշ	Արաբ	Եզդի	Ընդամէնը	
											Ոչ Իսլամ	Իսլամ
18. Պատր.ը դեսպանին	90,500	106 000[5]	6000	--	5000	80,000	40,000[6]	15,000	--	--	207,500	135,000
19. Հիւպ. Սքին, 1860	Մօտաւոր										100,000	400,000
20. Պաշտ. թուեր	67,634	5520	14,750	7,144	654	--	539,702	--	--	--	95,702	539,702
21. Վահան վրդ.	82,080	--	--	--	--	--	--	--	--	--	--	--
22. Մասնաւոր	--	4650	--	--	--	--	--	--	--	--	--	--

Աղիւսակ III.- Սահմանամերձ վիլայէթների որոշ սանջակների բնակչութեան թուաքանակի տարբեր հաշուարկներ պարունակող համեմատական աղիւսակ (*British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 129-31, 136)

		Իսլամ	Ոչ-իսլամ				
Բայազէտ	1	27,550	5,810	Երզնկա	3	93,780	23,040
	2	72,900	9,200		4b	91,994	22,628
					4c	98,056	23,880

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[3] Ներառեալ ուղղափառներ եւ կաթոլիկներ:
[4] Ներառեալ 50,000 թուրք, 10,000 աւշար եւ 20,000 թուրքմէն:
[5] Պատրիարքը անուանում է նրանց արաբ քրդեր:
[6] 40,000 նեստորականներ եւ 66,000 կաթոլիկ ասորիներ: Սակայն, ըստ էութեան, նեստորականներ չկան, իսկ ասորիների թիւը խիստ չափազանցուած է:

	3	57,960	9,900		7	97,866	24,352
	4	54,292	9,550	Մալաթիա	5	179,279	13,796
Բիթլիս եւ Մուշ	1	86,600	73,542		7	133,666	13,464
	2	86,100	48,300	Մարդին	4	107,950[2]	38,478
	4	115,392	94,196		5	144,520	26,086
	6	114,396	93,786		7	82,816	23,232
	7	242,920 (a)	136,614 (a)	Սղերդ	4	117,245	39,072
Դիարբեքիր	4	111,935	49,656		5	124,458	53,412
	5	114,522	35,798		6	164,374	48,206
	7	64,594	27,534		7	47,092	23,678
Էրզրում	3	85,860	52,200	Վան եւ Հեքիարի	2	216,900	195,800
	4a	173,802	59,374		4b	256,570	208,808
	4b	201,528	60,036		6	138,120	100,924
	7	168,692	61,140		7	174,408	138,976
					8	62,000[3]	213,000

Ծանօթագրութիւններ.- 1) Սըր Ռոբերտ Դելիէլ, 1863, 2) Պարոն հիւպատոս Թեյլըր, 1869, 3) Պարոն հիւպատոս Թեյլըր, 1871, 4) Սալնամէ, պաշտօնական տարեգիրք, թուականն անյայտ: Սալնամէում տրուած է միայն տների թիւը, իւրաքանչիւր քրիստոնեայ տան համար հաշուել ենք վեց եւ իսլամ տան համար՝ հինգ շունչ, 4a) 1288ի սալնամէ, 4b) 1289ի սալնամէ, 4c) 1294ի սալնամէ, 5) 1297 (1880)ի սալնամէ, 6) Կայսերական յանձնակատար Եուսուֆ փաշայի տուեալներ, 7) Պաշտօնական վիճակագրութիւն (զօրավար Բէյքըր), 8) Նախկին պատրիարք Խրիմեան, Վան, a) Բիթլիսի եւ Մուշի համար պաշտօնական վիճակագրութիւնը ներառում է Էրզրումից եւ Վանից վերցուած եւ Բիթլիսի վիլայէթին կցուած տարածքների տուեալներ: Բիթլիսի վիլայէթը ներկայումս կազմաւորման ընթացքում է, այդ պատճառով, այս վիճակագրութիւնը համեմատելի չէ այլ թուերի հետ:

[2] Ներառեալ եզդիներ:

[3] Ներառեալ 2000 եզդիներ:

Յաւելուած Գ.- «Քուրդիստանի» հիւպատոսութեան բնակչութեան համեմատական աղիւսակ (1890) (*British Documents on Ottoman Armenians*, vol. II, էջ 686)				
Վիլայէթներ	Նորին Մեծութեան Դեսպանին Բարձր Դռան կողմից ներկայացրած պաշտօնական թուերը, 1890		Քլիֆորդ Լլոյդի հաշուարկը, 1890	
	Ոչ իսլամ	Իսլամ	Ոչ իսլամ	Իսլամ
Էրզրում	113,488	441,671	113,488	441,671
Բիթլիս	109,944	167,054	121,082	166,794
Վան	135,912	282,582	155,988	115,000
Դիարբեքիր	71,870	240,574	87,584	304,584
Խարբերդ	81,158	300,194	88,155	205,353
Ընդամէնը	**512,372**	**1,432,075**	**556,297**	**1,233,402**

Յաւելուած Դ.- Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի ազգաբնակչութեան թուաքանակի վերաբերեալ Էւերէթի վիճակագրական աղիւսակը (1895)[4]										
Վիլայէթ	Սանջակ	Բնակչութիւն				Յարաբերակցութիւնը ամբողջ բնակչութեան նկատմամբ			Տարած ութիւնը, քառ. կմ	Բնակչթն. /1 քառ. կմ
		Մուսուլման ներ եւ այլ հարանվան ութիւններ	Քրիստոնեաներ		Ընդ.	Մուսո լման եւ այլ յարան վանու թիւնն եր (%)	Քրիստոնեաներ			
			Հայեր	Այլ հարա նվան ութիւ ններ			Հայեր (%)	Այլ յարանվ անութիւ ններ %		
-	Բիղա	109,571	1,688	18,179	129,438	84.65	1.31	14.04	7,500	17
Զմիւռնիա	Զմիւռնիա	291,925	10,045	187,040	489,010	59.70	2.05	38.25	12,500	39
	Սարուխան	293,399	3,882	48,468	345,749	81.86	1.12	14.02	11,850	29
	Այդին	187,922	634	17,021	205,577	91.41	0.31	8.28	7,600	27
	Դենիզլի	210,697	430	2,860	213,987	98.46	0.20	1.34	7,850	27
	Մենթեշէ	131,907	114	10,133	142,154	92.79	0.08	7.13	13,200	11
	Իզմիթ	131,885	48,635	40,795	221,315	59.59	21.98	18.43	11,130	20
Բրուսա	-	1,318,818	72,375	198,526	1,589,719	82.97	4.55	12.48	68,400	23
Կաստամունի	-	1,918,768	10,431	27,594	1,956,793	98.05	0.54	1.41	50,000	39
Անգորա	Անգորա	267,019	14,218	1,896	283,133	94.31	5.02	0.67	83,000	11
	Եոզղաթ	243,986	31,041	4,870	279,897	87.17	11.09	1.74		
	Կայսերի	136,590	48,693	25,449	210,732	64.82	23.11	12.07		
	Կարաշեհիր	116,999	346	1,794	119,139	98.20	0.29	1.51		
Կոնիա	-	989,200	9,800	73,000	1,072,000	92.28	0.91	6.81	91,600	12

[4] Աղբիւր՝ British National Archives, CAB 37/38/26, *Report on the population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward,* compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, ntelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895, Էջ 258:

Ադանա	-	292,550	29,432	4,390	326,372	89.64	9.02	1.34	40,000	8
Տրապիզոն	-	698,566	37,446	133,544	869,556	60.33	4.31	15.36	31,300	28
Սեբաստիա	Սեբաստիա	273,390	78,585	5,872	357,847	76.39	21.96	1.65	39,450	9
	Ամասիա	191,980	17,387	10,572	219,939	87.29	7.91	4.80	24,450	9
	Թոքատ	160,820	16,590	10,006	187,416	85.81	8.85	5.34	10,000	19
	Գարահիսար	105,420	20,805	19,153	145,378	72.52	14.31	13.17	9,800	14
Հալէպ	-	651,397	85,140	25,903	762,440	85.44	11.16	3.40	762,439	10
Էրզրում	-	505,185	134,902	4,000	644,087	78.43	20.94	0.63	76,720	8
Խարբերդ	-	504,946	156,356	650	661,952	76.28	23.63	0.09	37,800	17
Դիարբեքիր	Դիարբեքիր	64,878	28,317	13,213	106,408	60.97	26.61	12.42	17,530	6
	Մարդին	82,964	21,075	16,289	120,328	68.94	17.52	13.54	20,740	6
	Արղանա	186,424	24,433	11,751	222,608	83.74	10.98	5.28	8,530	26
Բիթլիս	Բիթլիս	29,281	39,287	-	68,568	42.70	57.30	-	29,850	9
	Մուշ	46,157	66,871	-	113,028	40.83	59.17	-		
	Գենջ	14,045	10,832	-	24,877	56.45	43.55	-		
	Սղերդ	44,503	35,408		79,911	55.69	44.31	-		
Վան	Վան	69,690	106,388	1,107	177,185	39.33	60.05	0.62	22,700	8
	Հեքիարի	61,585	6,148	70,230	137,963	44.64	4.46	50.90	25,000	5
Ընդամէնը	**-**	**10,332,467**	**1,167,734**	**984,305**	**12,484,506**	**82.77**	**9.35**	**7.88**	**1,520,939**	**8.20**

(Դ.) Հալէպի վիլայէթի բնակչութեան վիճակագրութիւնն ըստ տարբեր աղբիւրների												
Աղբիւր	Հայ[1]	Ասորի[2]	Յոյն[3]	Հրեայ	Գնչու	Թուրք եւն.[4]	Քուրմանջի քուրդ	Զազա քրդեր եւ ղզլբաշներ	Արաբ	Եզդի	Ընդամէնը	
											Ոչ Իսլամ	Իսլամ
18. Պատր.ը դեսպանին	90,500	106 000[5]	6,000	--	5,000	80,000	40,000[6]	15,000	--	--	207,500	135,000
19.Պրն հիւպ. Սքին, 1860	Մօտաւոր									100,000	400,000	
20. Պաշտ. թուեր	67,634	5,520	14,750	7,144	654	--	539,702	--	--	--	95,702	539,702
21. Վահան վրդ.	82,080	--	--	--	--	--	--	--	--	--	--	--
22. Մասնաւոր	--	4,650	--	--	--	--	--	--	--	--	--	--

[1] Ներառեալ առաքելականներ, կաթոլիկներ եւ բողոքականներ:
[2] Ներառեալ նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկեաններ եւ կաթոլիկ ասորիներ:
[3] Ներառեալ ուղղափառներ եւ կաթոլիկներ:
[4] Ներառեալ 50,000 թուրք, 10,000 աւշար եւ 20,000 թուրքմէն:
[5] Պատրիարքը անուանում է նրանց արաբ քրդեր:
[6] 40,000 նեստորականներ եւ 66,000 կաթոլիկ ասորիներ: Սակայն, ըստ Էութեան, նեստորականներ չկան, իսկ ասորիների թիւը խիստ չափազանցուած է:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՇՈՅ ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱՒԱՌԻ ԱԲՐԻ ԳԻՒՂԻ՝ ԸՍՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ

ՎԵՐԱ ՍԱՀԱԿԵԱՆ
verasahakyan@matenadaran.am

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ Մատենադարանում՝ 101-117 թղթապանակներում, պահւում է աւելի քան ութ հազար վաւերագիր: Դրանք հիմնականում հայութեան կողմից ամենայն հայոց 125րդ կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեանին հասցէագրուած դիմումներ ու խնդրագրեր են, ինչպէս նաեւ ծխատէր քահանաների կամ գիւղական համայնքների կողմից ներկայացուած աղքատութեան մասին վկայագիր-տեղեկագրեր[1]: Նամակներում դիմումատուները նշել են իրենց հին եւ, մասամբ նաեւ գաղթից յետոյ բնակութեան նոր հասցէները, անուն-ազգանունները, իսկ վկայագրերի պարագայում՝ կից ներկայացուած են գիւղական համայնքների ընդարձակ ցուցակներ, կնիքներ, ստորագրութիւններ:

Այս վաւերագրերը կարեւոր տեղեկութիւններ են պարունակում ընտանիքի անդամների, սեռատարիքային կազմի, տարածուած հիւանդութիւնների, գաղթի ընթացքի եւ պատճառների, ժամանակի մասնագիտութիւնների, լեզուի իմացութեան, բարբառների եւ խօսուածքների, բնակչութեան կրթութեան եւ գրագիտութեան, դպրոցների գործունէութեան եւ այլ հարցերի մասին:

2023ին, աւարտելով 8000 նամակների գրեթէ ամբողջական սղագրումը, վաւերագրերը խմբաւորեցինք ըստ նահանգների, գաւառների եւ գաւառակների՝ նախատեսելով իւրաքանչիւր գաւառին նուիրել առանձին հատոր: Աւելի ուշ, ուսումնասիրելով օսմանեան շրջանի տեղեկագրերն ու մեզ հասանելի փաստաթղթերը, հայերէն եւ օտար աղբիւրներն ու սկզբնաղբիւրները, նկատեցինք, որ իւրաքանչիւր բնակավայրի վերաբերեալ առանձին, համալիր ուսումնասիրութեան մեծ անհրաժեշտութիւն կայ: Ուստի, նախաձեռնեցինք գիւղերին նուիրուած յօդուածների շարքի պատրաստման

[1] Այս նամակների մասին մանրամասնութիւններ տե՛ս՝ Վ. Սահակեան, «Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի արխիւը որպէս հայկական տեղանունների ուսումնասիրման սկզբնաղբիւր», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, 40:2020, էջ 189-200. նաեւ՝ Վ. Սահակեան, *Մշոյ Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերն ըստ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների, գիրք I*, Մատենադարան, Երեւան, 2021. նաեւ՝ V. Sahakyan, "The Demographic Characteristics of Bylanik Province," *Studies in Oriental* Sources, V:2024, Երեւան, էջ 246-63:

գործը[2]: Ներքին Բուլանըք գաւառակի Աբրի (ներկայումս՝ Էսենլիք) գիւղին նուիրուած այս ուսումնասիրութիւնը մեր նախաձեռնած շարքի 4րդ յօդուածն է:

Յօդուածի շրջանակում, Մկրտիչ Խրիմեանի ֆոնդից առանձնացրել ենք տասը նամակ, որոնք գրել են Աբրի գիւղի հայ բնակիչները: Այդ նամակներն արտագրել ենք արխիւային նիւթերի արտագրման կանոններին ու պահանջներին համաձայն: Նիւթը շարադրելիս օգտուել ենք նաեւ վաղ օսմանեան շրջանի տեղեկագրերից, իսկ հայ մատենագրութիւնից քաղել ենք գիւղի մասին եղած կարեւոր յիշատակումները:

Ուսումնասիրութեան նորոյթը նրանում օգտագործուած նորայայտ վաւերագրերն են, որոնք ունեն կարեւոր նշանակութիւն հայաբնակ բնակավայրերի հայկականութիւնը փաստելու, դարասկզբի քաղաքական իրավիճակը ներկայացնելու, ինչպէս նաեւ ժողովրդագրական որոշ հարցեր քննելու առումով: Միեւնոյն ժամանակ, յաւելուածաբար ներկայացուած բնագրերը կարող են դառնալ օժանդակ նիւթ՝ 19րդ դարավերջ-20րդ դարասկզբի Օսմանեան կայսրութիւնում առկայ ընկերային խնդիրները, ազգամիջեան յարաբերութիւնները, բնակեցման քաղաքականութիւնը, Օսմանեան կայսրութեան եւ հայ ժողովրդի պատմութիւնը, լեզուական բազմաշերտայնութիւնը, հայերէնի բարբառային առանձնայատկութիւնները, հայոց մէջ անձնանունների եւ ազգանունների, տեղանուանագիտական եւ այլ հարցերի առնչութեամբ հետազօտութիւններ կատարող մասնագէտների համար:

ԱԲՐԻ ԳԻՒՂՆ ԸՍՏ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐԻ (ՕՍՄԱՆԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ)

Աբրի բնակավայրի մասին, որը ներկայումս համապատասխանում է Թուրքիայի Հանրապետութեան Մուշի Էսենլիք գիւղին, մատենագիտական առաջին տեղեկութիւնները տրամադրելի են 16րդ դարում կազմուած օսմանեան տեղեկագրերից: Դրանցում կան մանրամասնութիւններ բնակչութեան քանակի, վճարուելիք հարկերի, կրօնական եւ այլ հաստատութիւնների մասին: Առաջին նման տեղեկագիրը կազմուել է 1514ի Չալդըրանի ճակատամարտից գրեթէ 20 տարի անց (1537ին), երբ Աբրի գիւղն անցել էր օսմանեան գերիշխանութեան տակ՝ Խնուսի լիուայի[3] կազմում, Բլեջան նահիէի (գիւղախմբի) մէջ: Նախքան 1514 թուականը այն կարա-կոյունլուների եւ ակ-կոյունլուների տիրապետութեան ներքոյ էր: Օսմանեան գրաւու-

[2] Վ. *Սահակեան,* «Ժամանակագրութիւն Մշոյ Բուլանըք գաւառի Փիօնք գիւղի՝ ըստ Օսմանեան տեղեկագրերի եւ հայկական սկզբնաղբիւրների», *ՀԱՍԿ Հայագիտական տարեգիրք,* նոր շրջան, ԺԳ:2024, էջ 475-92. նաեւ՝ Sahakyan, էջ 246-63:

[3] -لواء - Օսմանեան վարչական բաժանումներում՝ վարչատարածքային միաւոր, որը ղեկավարում էր մութասարրիֆը:

մից մինչեւ 1535 Խնուսը կառավարւում էր *եուրթլուք-օջաքլըք*[4] համակարգով: 1535ից յետոյ այն վերածուեց դասական օսմանեան սանջակի, որի ղեկին սուլթանական կենտրոնական իշխանութիւնը նշանակեց սանջակբէյ (վարչական ղեկավար): Այնուհետեւ, այստեղ ներդրուեց *թիմարային* համակարգը, որին յաջորդեց *թահրիրը*՝ տեղական մարդահամարի անցկացումը եւ գոյքի գրանցումը, որն էլ հենց իրականացուեց 1537ին:



ՄՄ, ԽԿՖ, թղթ. 111, վաւ. 124, 1901 եւ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 91, 1895

Յետագայ զարգացումները, որոնք կապուած էին Իրաք կատարուած արշաւանքների եւ նոր գրաւումների հետ, անհրաժեշտութիւն առաջացրին վարչական նոր վերաբաժանման: Ձեւաւորուեց Էրզրումի էյալէթը, Խնուսը դարձաւ Էրզրումին ենթակայ սանջակ, իսկ Բուլանըքը եւ Բլեջանը մտան

[4] «Եուրթլուք»ը եւ «օջաքլըք»ը օսմանեան պետութեան սահմանամերձ հողերն են, որոնք յաճախ անջատւում եւ Եուրթլուք-Օջաքլըք անունով իրենց տէրերին էին թողնւում: Նրանք կառավարում էին այդ հողերը, նրանց տասանորդն ստանում, որի փոխարէն պարտաւորւում էին պաշտպանել երկրի սահմանները (*Թուրքական աղբիւրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի միւս ժողովուրդների մասին, հտր. 1,* թարգմ.՝ Ա. Խ. Սաֆրաստեան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան, 1961, էջ 371:

Խնուսի սանջակի կազմի մէջ: Այս վարչական բաժանումը պահպանուեց 1544, 1556, 1568, 1569ի թիմարի գրանցամատեաններում (Timar tahrir defterleri[5])[6]:

Յետագայում, թէեւ փոփոխութիւններ տեղի են ունեցել, սակայն ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ Բուլանըքը գրեթէ մինչեւ 1847 թուական մնաց որպէս Խնուսին ենթակայ քազա (գաւառ), իսկ թանզիմաթեան փոփոխութիւնների շրջանում, երբ Մուշը բաժանուեց Վանից, Վարդոն, Մանազկերտն ու Բուլանըքը ներառուեցին Մուշի կազմում՝ որպէս առանձին գաւառներ:

Ինչպէս տեսանք 1537ի տեղեկագրում[7] արձանագրուած է Բլեջան անունով մի վարչատարածքային միաւոր, որը համապատասխանում է յետագայում Ներքին Բուլանըք կոչուող գիւղախմբին[8]: Աբրի գիւղը ընդգրկուած է նրա մէջ: Ի տարբերութիւն այս տեղեկագրում յիշուող այլ բնակավայրերի, ինչպիսիք են, օրինակ, Միրպարը (Մերպար) կամ Միրպար-Ռըբաթը, որպէս զուտ հայաբնակ, Աբրիում, իր անուան հայկական հնչողութեամբ հանդերձ որեւէ քրիստոնեայ բնակչութիւն չի արձանագրուած[9]: Շուրջ քսան տարի անց կազմուած Խնուսի *լիուայի* մանրամասն տեղեկագրում արդէն (կազմուել է 1555ի Ամասիայի դաշնագրի կնքումից յետոյ, Սեֆեան Իրանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ) Բուլանըք եւ Բլեջան գիւղախմբերում ընդհանուր հաշւում է 31 տուն հայ[10]: Ուսումնասիրողները կարծում են, որ 1537ի գրանցամատեանում հայ բնակչութեան մասին տեղեկութեան բացակայութիւնը հնարաւոր է, որ կապուած լիներ ինչպէս քրիստոնեաներին չգրանցելու (քանի որ այն համառօտ տեղեկագիր էր), այնպէս էլ՝ պատերազմական պայմանների արդիւնքում բնակչութեան գաղթի հետ, մինչդեռ

---

[5] Սրանք գրանցամատեաններ էին, որոնք կազմւում էին Օսմանեան կայսրութիւնում գաւառների, գիւղերի եւ հողատարածքների հարկահաւաքման նպատակով: Այս մատեաններում գրանցում էին այդ շրջանի բոլոր հողատէրերին, հողատարածքների չափերն ու սեփականութեան ձեւերը, բնակչութեան մասին որոշ տեղեկութիւններ:

[6] Murat Alanoğlu, *Osmanli Klasik Döneminde Bulanik ve Blecan (1514-1850), (Բուլանըքն ու Բլեջանը Օսմանեան դասական շրջանում (1514-1850), Bulanik-Kop İnsan-Coğrafya-Tarih-Kültür*, ed. İs Yuca, Çizgi Kitapevi Yayinlari, Konya, 2020, էջ 187-217:

[7] Bitlis vilayeti icmal tahrir defteri (Բիթլիսի վիլայէթի համառօտ գրանցամատեան):

[8] Այլ մանրամասներ տե՛ս՝ Վ. Սահակեան, *Մշոյ Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերն ըստ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների, գիրք I*, Երեւան, Մատենադարան, 2021:

[9] *294 Numarali Hinis Livâsi Mufassal Tahrîr Defteri (963/1556)*, (294 համարի Խնուսի լիուայի մանրամասն գրանցամատեան (963/1556)), Yay. haz. A. Özkiliç, A. Coşkun, A. Sivridağ, M. Yüzbaşioğlu, Defteri Hâkânî Dizisi: VI, Ankara, 2000, էջ 86:

[10] Alanoğlu 2020, էջ 195:

յաջորդող մատեաններում արդէն արձանագրուած են իրենց հին բնակավայրերը վերադարձող քրիստոնեաներ եւս[11]:

Ե՞րբ է հիմնադրուել Աբրին, ովքե՞ր են եղել հիմնադիրները: Այս եւ նման հարցերի առնչութեամբ՝ մատենագիտական տեղեկութիւններն ու վկայութիւնները եւս աղքատիկ են:

Վերջին տարիներին թուրք հետազօտողները վկայակոչում են նորայայտ վաւերագրեր, որոնց վրայ հենուելով նշում են, թէ Աբրին եղել է Աբդուլմելիք անունով մէկի սեփականութիւնը, որը հաստատուել է այդտեղ եւ կառուցել է այն աղօթատեղին, որը ներկայումս յայտնի է որպէս Աբրիի մզկիթ: Մզկիթի կառուցման թուական է համարւում 1325ը, իսկ 1333ին արդէն այն գրանցուել է որպէս վաքֆ[12], որոնց մասին տեղեկութիւնները պահպանուել են մզկիթի վրայ եղած արձանագրութեան մէջ:

Խօսքը փոխանցենք Գարեգին վարդապետ Սրուանձտեանցին: Պատմելով Խըրթ գիւղի մի ջրի ակունքի եւ նրա շուրջ եղած մի գերեզմանի մասին, նա գրում է. «*Այս գերեզմանը իբրեւ սուրբ կը պաշտեն հայերը Քառասուն Մանկունք անունով, եւ քիւրտերը՝ Հալիլ բաբա: Մէկ շեխ՝ Մուրատ անուն, կը նստի Խըրթ գեղը, եւ կը համարի թէ այդ գերեզմանի մէջ թաղուածին սերունդէն է ինքը. կ'ուզէ հաստատել իւր փունը ու փոխմն այդ Հալիլ բաբայի օճախով ու անունով. եւ ասոր համար* ***երկու տարի կայ միայն որ*** *տաճկական գերեզմանաքարի պէս երկու քար անկել փուեր է գերեզմանին երկու ծայրը: -* ***Է՛հ, միթէ կարելի՞ է գերեզմաններն ալ կրօնափոխ ընել...»***[13]:

Թէպէտեւ հայ մատենագրութեան մէջ կան աւելի վաղ շրջանին վերաբերող յիշատակութիւններ, բնակավայրի մասին առաջին գրաւոր անդրադարձներն արուել են 1870ականներին: Դրանք ընթերցողին են փոխանցում Աբրիի աշխարհագրութեան, աւանդոյթների, սովորոյթների ու կենցաղի մասին որոշ տեղեկութիւններ՝ ակնարկելով նաեւ նրա հիմնադրման առնչութեամբ որոշ հիմնաւոր տեսակէտներ: Այդ հեղինակներից է Գարեգին վրդ. Սրուանձտեանցը, որն իր *Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի Դուռ* գրքում Աբրի գիւղի մասին ունի բաւական հետաքրքիր մի հատուած.

> Ապրի գեղը Պուլանըխայ մէջն է. մեծ օճախներ կան շեխերուն այս տեղը, որոց ծերերէն լսելով պատմողներ կան, թէ սոցա նախնիք եղեր են հո-

[11] Նոյն:

[12] A. D. Çobanoğlu, "Muş Esenlik Köyün'de Bir Ortaçağ Yapisi: Şeyh Abdülmelik (Şeyh Abri) Cami Ve Vakfiyesi," (Մուշի Էսենլիք գիւղի մի միջնադարեան կառոյց. Շեյխ Աբդուլմելիք (Շեյխ Աբրի) մզկիթը եւ վաքֆը:) *Uluslararasi Sosyal Araştirmalar Dergisi*, 12(62): 2019, էջ 505:

[13] Գարեգին վրդ. Սրուանձտեանց, *Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ*, Կ. Պոլիս, տպարան Ե.Մ. Տնտեսեան, 1874, էջ 64: (Բնագիրը բերուած է ըստ 1874ի հրատարակութեան՝ առանց միջամտութիւնների):

ռոմ եպիսկոպոսներ: Յոյները Հայաստանի մէկ բաժնին տիրած էին արդէն մեր Արշակունեաց անկման ժամանակները. իսկ միջին դարու ընկիզբներէն մեծն Հայաստան, որ կարելի է ասել այսօրուան Տաճկի Հայաստանի մասը, բոլորովին յունաց բաժինն է եղեր: Կարինը յունաց կուսակալութիւն էր եւ գաւառ: Այս մեր ցոյց տուած վայրերն՝ Կարնոյ թեւերն են. անբնական չէ, որ յունաց գաղթականներ եկած լինին այս կողմերը իրենց եկեղեցական ուխտիւ, որոնք Քաղկեդոնի բանակները կը կազմէին բարոյապէս. եւ կ'առաջնորդուէին անխնայ ջարդել եւ կորուսել տալու հայոց տուները եւ զաւակները, պաշտօնեայ գոլով Քրիստոսի, պաշտօն վարելով մոգերուն Յազկերտի: Ադոնց թողուցած աւերակները դեռ կը մխան ու կը ծխան Հայաստանի հողին վրայ, Հայոց սրտի եւ գլխի մէջ: Ասոնք վանքեր եւ եկեղեցիներ ալ ունեցած եղեր են, ինչպէս մինչեւ այսօր ցոյց կուտան Շուշարայ գաւառի մէջ: Վարդուայ Գոնտէմիր գեղը՝ հերու բլուր մը քակեցին եկեղեցին շինելու համար քար հանելով. բլուրի տակէն տաճար մը երեւցաւ, որ բոլորովին յունական ձեւ եւ շէնք էր: Ուրիշ շատ կան այդ Շուշարայ, Վարդուայ եւ Խնուսայ կողմերը: Վերոյիշեալ Ապրի գեղի շեխերու տան – օճախի - մօտը քար հանելու համար փորելով՝ գտած էին մէկ մարդաչափ բարձրութեամբ քարէ արձան մը՝ մարդակերպ քանդակուած, որուն վրայ Յունարէն գրեր կան եղեր, զոր Մամիկոնեան Վարդան Աղան վերցուցեր, տարեր էր շեխերէն խնդրելով: Արդ, այդ շեխերը, ինչպէս ըսած են, լինելով Յունաց եպիսկոպոսներ, եւ ինչպէս որ են նոքա ցարդ՝ հողի, գեղի եւ ագարակի տէր, ու ճոխ մարդիկ, Արաբացւոց արշաւանաց ժամանակները՝ չուզելով իրենց ունեցած կացութիւնը կորսնցընել, փոխեր են կրօնքնին, եւ իրենց առջի վիճակը պահելով՝ միանգամայն եւ կին առնելով վառ պահեր են իրենց օճախը եւ շարունակեր են մինչեւ ցայժմ: Ասոնք են սաստիկ մոլեռանդ եւ Տէրութեան օրինաց հակառակ շատ անգամ զՀայերը կեղեքող. եւ այս ախտը կամ բնաւորութիւնը աւելի Քաղկեդոնականաց թշնամութեան յատկութիւնն է, քան Մահմէտականաց: Ես կը հաւանիմ ընդունել այսպէս…[14]:

Աբրիի անուան վերաբերեալ վերջին շրջանում շրջանառութեան մէջ են դրուել մի քանի վարկածներ: Այդ վարկածներից մէկի համաձայն տեղանունը կապուած է գիւղի հիմնադիր շէյխ Աբդուլմելիքի անուան հետ, որը երբեմն իբր կոչուել է նաեւ Շէյխ Աբրի[15]: Սակայն ոչ մի վաւերագրում[16] նա յի-

[14] Սրուանձտեանց 1874, էջ 64-66:

[15] Çobanoğlu 2019, էջ 506:

[16] Շէյխ Աբրին աղբիւրներում յիշատակուել է այսպէս. Şeyh Salih Haci Abdülmelik ibni Ramazan, (Yilmaz, 2009, 80; Yilmaz, 2014, 171-72), Şeyh Aynü'l Melek, (H.1310/M.1892-93 tarihli Bitlis Salnamesi, Հիջրի 1310 / Միլլադի 1892-93 թուա-

շատակուած չէ Աբրի անունով: Այլ վարկածի համաձայն, իբր՝ երբ (1325ին) շէյխ Աբդուլմելիքը որոշել է կառուցել ներկայիս Աբրիի մզկիթը քարեր է բերել լցրել, սակայն առաւօտեան տեսել է, որ այդ քարերը տեղափոխուել են մի ճահճոտ վայր: Երբ նոյնը կրկնուել է նաեւ յաջորդ օրը, Աբդուլմելիքն այն համարել է աստուածային նախանշան: Աղօթել է, ճահիճը չորացել է ու տեղում կառուցել է մզկիթը, իսկ գիւղի անունը "Abwir''ից, որն, ըստ յօդուածագրի, նշանակում է ջուրը չցամաքող տեղ, ստացել է Աբրի անունը[17]:

Հնարաւոր է, որ կան/եղել են այսպիսի աւանդազրոյցներ, սակայն վերոյիշեալ ուսումնասիրութիւնը, որից քաղել ենք մէջբերումները, փոխանցում է նաեւ մէկ շատ առանցքային վկայութիւն այն մասին, որ մինչ Աբդուլմելիքի հաստատուելը եւ աղօթատեղի կառուցելու որոշումը արդէն իսկ գոյութիւն ունէր Աբրի անունով բնակավայր, որը քանդուած կամ աւերուած լինելու պատճառով յօդուածում յիշատակուած է Հարաբէ Աբրի (Harabe Abri)[18] անուն: Սա արդէն իսկ ցոյց է տալիս, որ այդ անունով բնակավայր կար, որն ամենայն հաւանականութեամբ սելջուկեան արշաւանքների արդիւնքում հիմնովին քանդուել էր, դարձել աւերակ, սակայն որտեղ մեր կարծիքով կանգուն էր մնացել քրիստոնէական, սրբատաշ քարերով կառուցուած եկեղեցին, որը եւ Աբդուլմելիքն ընդգրկում է իր *զաւիէի* կազմում: Սա է վկայում նաեւ այն հանգամանքը, որ ի սկզբանէ այն չի ունեցել մինարէ:

Աբրիի անուան առնչութեամբ հայ եկեղեցական գործիչ, պատրիարք Մաղաքիա Օրմանեանը (1841–1918) առաջ է քաշում աւելի հիմնաւոր հետեւեալ տեսակէտը: Նա կարծում է, որ գիւղանունը առնչւում է 5րդ դարի Բզնունեաց եպիսկոպոս Աբրահամ Զենակեցու հետ, որը Սահակ-Մեսրոպեան դպրոցի առաջին հետեւորդներից լինելով թաղուել էր Աբրի գիւղում, որի գերեզմանը կանգուն էր նոյնիսկ մինչեւ 20րդ դար[19]: Այս հանգամանքը նկատի առնելով՝ Օրմանեան պատրիարքը գալիս է այն համոզումին, թէ ամենայն հաւանականութեամբ Աբրի տեղանունը կարող է կապուած լինել Բզնունեաց այս եպիսկոպոսի գործունէութեան եւ նրա թաղման վայրի գտնուելու հետ[20]:

Մենք տեղանունի ստուգաբանութիւնը կը թողնենք համապատասխան մասնագէտներին, սակայն կը նշենք, որ Աբրի անունը, եթէ անգամ Աբրահամ Զենակեցու անուան հետ եւս կապ չունենայ, այն բուն ու մաքուր հայկական տեղանուն է, որի հիմքում ապրել ու ապրուել բայերն են, որը գրեթէ

կանի Բիթլիսի տարեգիրք), (Şeyh Abdülmelik (H.1316/M.1898 tarihli Bitlis Salnamesi, Շեյխ Աբդուլմելիք (Հիջրի 1316 / Միլլադի 1898 թուականի Բիթլիսի տարեգիրք), Seyyid Nizameddin, Seyyid Aynü'd-din, Şeyh Aynü'l-Melek:

[17] Çobanoğlu, էջ 506-7:

[18] Նոյն, էջ 506:

[19] Մ. արք. Օրմանեան, *Ազգապատում, հտր. Ա.*, տպ. մայր աթոռ Սուրբ Էջմիածնի, Էջմիածին, 2001, էջ 510-11:

[20] Նոյն:

անփոփոխ մնացել է թէ՛ Հարաբէ Աբ(պ)րիի մասին յիշատակող սկզբնաղբիւրներում եւ թէ՛ աբրեցիների բանաւոր ու գրաւոր խօսքում, իսկ Խրիմեանին ուղղուած նամակներով մեզ հասել Աբրի[21], Ապրի[22], Յապրիլ[23], Յաբրի[24], Հաբրի[25], Ապրուայ[26] տարբերակներով, այլ աղբիւրներում նաեւ Էպրի[27], Աբրվէ (Աբրւէ)[28], Ապրե[29], Ապրէ[30] ձեւերով: Ինչ վերաբերում է թուրք հետազօտողների կողմից վերջերս շրջանառութեան մէջ դրած վաւերագրերին, այստեղ բերուած են նաեւ Արի (Ari) եւ Աբրու (Abru) ձեւերը[31]: Նկատենք սակայն, որ Արի անունով առանձին բնակավայր եւս եղել է այդ տարածաշրջանում: Կարծում ենք, որ սա որպէս գիւղանուան տարբերակային ձեւ ներկայացուել է սխալմամբ[32]: Ինչ վերաբերում է Աբրու ձեւին կարծում ենք՝ հընչողութեան այս տարբերակը մուտք է գործել տեղի հայ բնակչութեան ազդեցութեամբ, որն էլ վկայում է, որ այնտեղ հայերը եղել են մեծամասնութիւն եւ ունեցել են մշտական բնակութիւն[33]:

Գրեթէ 7 դար գրաւոր աղբիւրներում յիշատակուող Աբրի տեղանունը 20-րդ դարում անուանափոխուեց՝ Թուրքիայում ընդունուած համար 7267 օրէնքի պահանջով, որը փոփոխութեան ենթարկեց մօտաւորապէս 12,000

---

[21] «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ հիմնադրամ (ՄՄ), Խրիմեան կաթողիկոսի ֆոնդ (ԽԿՖ), թղթ. 103, վաւ. 91, 1895:

[22] ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 103, 1895:

[23] ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 238, 1895:

[24] ՄՄ, ԽԿՖ, թղթ. 104, վաւ. 130, 1896:

[25] ՄՄ, ԽԿՖ, թղթ. 109, վաւ. 20, 1899:

[26] ՄՄ, ԽԿՖ, թղթ. 109, վաւ. 284, 1899:

[27] «*Շեյխեր կան, որոնք սոխթաներ կը պահեն կը կարդացնեն, բայց ի՞նչ կը կարդացնեն… հասկցողը կը հասկնայ: Ասոնցմէ քանիսը Մշոյ թաղերուն մէջն են, միւսները գեղերն են, զոր օրինակ շէյխ մը Թիլ, շէյխ մը Մալաքանդ, շէյխ մը Յափկոն, շէյխ մը Էպրի, շէյխ մը Լաթառ…*», Սրուանձտեանց, 1982, էջ 126

[28] *Համբաւաբեր*, հմր. 45, Թիֆլիս, 6 Նոյեմբեր 1916, Յաւելուած հմր. 45, էջ 1:

[29] Գ. Մ. Բադալեան, «Արեւմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրէին: Մաս վեցերորդ: Բիթլիսի նահանգի հիւսիսային, արեւելեան եւ արեւմտեան գաւառները», *Վէմ*, Ը(ԺԴ)3(55):2016, Յուլիս-Սեպտեմբեր, I-XXXVI, էջ X:

[30] ՀԱԱ, Ֆ. 227, Ց. 1, Գ. 440, ԹԹ, 1916:

[31] *294 Numarali Hinis Livâsi Mufassal Tahrîr Defteri (963/1556)*, էջ 84:

[32] В. Маевский, *Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетов, (Վանի եւ Բիթլիսի վիլայէթների ռազմավիճակագրական նկարագրութիւն),* Штаб Кавказского военного округа, Тифлис , 1904., *с.* 120:

[33] Հայերէնում Գառնի տեղանուան սեռականը կարող է դառնալ նաեւ Գառնու: Այս նմանութեամբ Աբրի տեղանունը կարող էր դառնալ Աբրու:

օտար ծագման գիւղանուն[34]: Այս անուանափոխուող բոլոր բնակավայրերը առնչւում էին տարածաշրջանում քրիստոնեայ ժողովուրդների գոյութեան հետ: Սա եւս մի վկայութիւն էր, որ ժամանակի թուրքական իշխանութիւնները ընդունել էին, որ Աբրին ո՛չ Աբդուլմելիքին տրուող անուններից մէկն էր, ոչ էլ կապուած էր աղօթատեղի կառուցելու համար առեղծուածային ու աստուածային միջամտութեան մասին պատմող աւանդազրոյցի հետ:

Ինչ վերաբերում է նախքան Հայոց ցեղասպանութիւնը Աբրիի մասին եղած վիճակագրական տեղեկութիւններին, նշենք, որ մեզ է հասել Մանուէլ Միրախորեանի «Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի» եռահատոր գիրքը, որի համաձայն, 19րդ դարավերջին գիւղն ունեցել է 75-80 տուն բնակիչ, որի կէսը եղել են հայեր, կէսը՝ քրդեր[35]: Մէկ այլ ուսումնասիրութեան հեղինակ է ռուսական բանակի զօրավար Մայէւսկին: Նրա հեղինակած ռազմական վիճակագրութեան համաձայն (1899) Աբրի գիւղը ներկայացուած է որպէս զուտ քրդաբնակ[36]: Կարծում ենք՝ Միրախորեանի ուղեգրութիւնը կարելի է համարել խիստ հաւաստի, քանի որ հրատարակուել է Կ. Պոլսում՝ ժամանակի օսմանեան կառավարութեան կրթութեան նախարարութեան յատուկ արտօնագրով[37]: Համեմատելով Միրախորեանի այս գիրքը յետագայ 1912-15ին հրատարակուած վիճակագրական նիւթերի հետ, նկատում ենք, որ Աբրիի հայութեան թիւը, նախքան Հայոց Ցեղասպանութիւնը եղել է 30-50[38] տուն: Սա

---

[34] Դրանք նախ ուսումնասիրուել էին նահանգների վարչութեան գլխաւոր տնօրէնութեան՝ «Օտար անունների փոփոխման յանձնաժողով»ի կողմից: 1968ին կազմուած այս տեղանունների ցանկում Աբրին կամ Աբրիքէօյը ստացաւ Էսենլիք անունը: Նոր վարչատարածքային բաժանման համաձայն այն Էրենթեփէի շրջանի (Bucak) Բուլանըք գաւառակի (İlçe) Մուշի գաւառի (İl) կազմի մէջ էր (*Köylerimiz, 1 Mart 1968 gününe kadar*, İçişleri Bakanliği İller İdaresi Genel Müdürlüğü, 1968, էջ 212):

[35] Մ. Կ. Միրախորեան, *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն պիտանի գիտնոց (Հատոր III)*, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ս.Ղ. Պարտիզպանեան, 1885, էջ 87:

[36] Маевский, *с.* 120:

[37] Միրախորեան, կազմ:

[38] 30 տուն՝ Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները. ուսումնասիրութեան մը փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական եւ տնտեսական դրութեան*, Երեւան, տպարան Կուլտուրա, 1912, էջ 146: 31 տուն՝ 203 հայ, Kévorkian R. and Paboudjian P., Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du génocide, Paris, 1992; Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History, Published in 2011 by I. B. Tauris & Co Ltd, New York, p. 500: 35 տուն՝ 210 շունչ, Վ. Պետոյեան, Սասունի եւ Տարօնի պատմաաշխարհագրական տեղագրութիւն, Երեւան, Լուսակն, 2005, էջ 94-95: 45 տուն՝ Ն. պ. Մարտիրոսեան,

ցոյց է տալիս, որ 30 տարուայ ընթացքում (1884-1915) Աբրիում ընկերային, քաղաքական պայմանները եղել են այնպիսին, որ բնակչութեան աճ չի արձանագրուել, մարդիկ գաղթել են, սպանուել, ձերբակալուել, արտաքսուել, հարստահարուել, որոնց մասին յստակ նկարագրուած են Մկրտիչ Խրիմեանին ուղղուած աբրեցիների նամակներում:

Մեր ուսումնասիրած վաւերագիր նամակներից, հասկացւում է, որ գիւղի հայութիւնը 19րդ դարավերջին ենթարկուել է ամենատարբեր ճնշումների, որոնց արդիւնքում մարդիկ դիմել են փախուստի, հաստատուել Ռուսական Հայաստանում, հայաշատ Բաքու և Թիֆլիս քաղաքներում՝ ապաւինելով ամենայն հայոց կաթողիկոսի բարեսրտութեանն ու օժանդակութեանը: Թղուով տասը նամակներից պարզել ենք, որ Աբրի գիւղից Մկրտիչ Խրիմեանին է դիմել տասը ընտանիք, որոնց ընդհանուր թիւը կազմել է 165-175 անձ: Այս թիւը ստացել ենք նամակագիրների կողմից նշուած շնչերի քանակը հաշուելու արդիւնքում: Ըստ այդմ՝ Պետրոս Տէր Դաւթեանի երկու նամակներից պարզել ենք, որ ընտանիքը բաղկացած է եղել 7 շնչից: Նրա որդուն սպանել են: Իսկ նա հաստատուել է Դադալու գիւղում վեց շնչից բաղկացած ընտանիքով: Միւս նամակում խօսւում է երկու այլ ընտանիքների մասին, որոնք բաղկացած են եղել 40 շնչից[39]: Այս նամակից պարզում ենք նաեւ, որ տեղի քահանան եղել է Յովսէփ քհնյ. Տէր Յովհաննիսեանցը, եւ, որ բացի իրենից Աբրին ունեցել է եւս մէկ քահանայ՝ Տէր Յարութիւն անունով, ինչն էլ վկայում է, որ Աբրին բաւական մեծ հայ համայնք պէտք է ունեցած լինէր: Միւս երկու նամակներից պարզում ենք, որ Աբրի գիւղում է ապրել նաեւ Աբրահամ Նազարեանցի ընտանիքը՝ բաղկացած 7 շնչից, եւ Աբրահամ Յակոբեանի ընտանիքը՝ բաղկացած 6 շնչից: Միւս նամակում յիշատակուող Մելիք Աղա Խաչատրեանի ընտանիքի մասին նամակում տեղեկութիւններ չկան: Սակայն ունենք առաւել ուշագրաւ մի վկայութիւն. 1898ին Մկրտիչ Խրիմեանը մի այցելութիւն է կատարել Բաքու: Այդ այցի շրջանակում նա քարոզ է խօսել, որտեղ, անդրադառնալով հայութեան ծանր կացութեանը, շեշտել է, թէ Մելիք Խեչոյի նահապետական ընտանիքը[40]՝ 70-

---

«Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», *Վան-Տոսպ*, Թիֆլիս, 28 Փետրուար, 1916, էջ 7: 50 տուն, Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին, Նիւ Եորք, 1985, Ա. հ., էջ 99-101:

[39] Առհասարակ նամակներում նկատել ենք, որ քահանայական ընտանիքները՝ սովորաբար աւելի մեծ են եղել: Կան 25 եւ աւելի շունչ ունեցող ընտանիքներ (տե՛ս օրինակ ՄՄ, Խկֆ, թղթ. 113, վաւ. 088, 1903 թ.):

[40] Սովորաբար կիրառուել է տուն ձեւով, որտեղ ընդգրկուած էին լինում տատը, պապը, հօրեղբայրները՝ իրենց ընտանիքներով, սակայն այս նամակների մեծ մասում խօսւում է միայն մէկ ընտանիքի մասին, այդ պատճառով գրել ենք ընտանիք եւ ոչ՝ տուն: Սակայն յատկապէս այս նամակում խօսւում է գերդաստանի մասին:

80 շնչից բաղկացած, ցիր ու ցան է եղել: Ինչպէս կարդում ենք 1895ով թուագրուած Մելիք Աղա Խաչատրեանի նամակում, այդ ընտանիքի կոտորածը այնքան սահմռկեցուցիչ է եղել, որ նոյնիսկ դրան է անդրադարձել ժամանակի մամուլը, իսկ Բաքւում բարձրաձայնել է նաեւ Խրիմեան կաթողիկոսը: Այս վկայութիւնը նկատի առնելով՝ Մելիք Աղա Խաչատրեանի գերդաստանի համար մենք հաշւում ենք 70-80 շունչ: Միւս նամակների համաձայն Ազնիւ Տէր Դաւթեանի ընտանիքը բաղկացած է եղել 6 շնչից, Միսաք Տէր Դաւթեանինը՝ 7 շնչից, իսկ Մարտիրոս Պետրոսեանի ընտանիքը՝ 12 շնչից:

Այսպիսով, մեր ունեցած 10 նամակում նշուած ութ ընտանիքը բաղկացած է եղել 85 շնչից: Մէկ ընտանիքի շնչերի քանակն անյայտ է, չգիտենք: Միջին ստանալու համար այս թիւը (85) բաժանենք ութի, կը ստանանք միջինը 10.6 շունչ[41]: Քանի որ մենք մէկ ընտանիքի մասին տեղեկութիւն չունէինք մեր ստացած թուին (85) աւելացնենք 10.6: Ընդհանուրը կը ստանանք 95.6 շունչ: Եթէ այս թուին աւելացնենք Մելիք աղա Խաչատրեանի գերդաստանի թիւը (70-80 շունչ) կստանանք՝ 165.6-175.6 շունչ:

Եթէ յենուենք մեզ հանդիպած նամակներից քաղուած ընտանիք-տուն-շունչ օրինակներին, ապա կարող ենք նկատել նաեւ այլ օրինաչափութիւններ եւս, օրինակ՝ 7 տուն՝ 80 շունչ եւն.[42]:

Նկատելի է, որ հինգ նամակ գրուել է 1895ին, երկու նամակ 1896ին, եւ մէկական նամակ 1898, 1899 եւ 1900ին: Սա ցոյց է տալիս, որ Աբրիի հայ հասարակութիւնը պատեհ ու անպատեհ առիթներով չէ, որ դիմել է Խրիմեանին, այլ խիստ անհրաժեշտութեան պարագայում, մասնաւորապէս համիդեան կոտորածների պատճառով:

Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով պէտք է նշենք, որ մենք չենք պնդում, թէ Աբրի գիւղը 19րդ դարավերջին եւ 20րդ դարասկզբին ունեցել է ընդամէնը 10 տուն հայ բնակիչ կամ Աբրի գիւղի հայութեան թիւը կազմել է 165-175 շունչ: Մենք միայն տալիս ենք այն թուերը, որոնք քաղել ենք մեր ձեռքին առկայ փաստաթղթերից: Նշենք նաեւ, որ կան բազմաթիւ վաւերագրեր եւս, որոնք պարունակում են գաղթականների

Կարծում ենք, հաւանական է, որ խօսքը Խեչոյի եւ զաւակների ընտանիքների մասին է:

[41] Ս. Կարայեանը մէկ տան միջին թիւ է տալիս 5-6 անձը՝ միեւնոյն ժամանակ մատնանշելով, որ ընտանիքներ կային, որոնք ունէին նաեւ 15-16 շունչ: Մեր ուսումնասիրած նամակներում ընտանիքները բաղկացած են 6-12, հազուադէպ 15, 20, 25, 30 շնչից՝ ներառելով արական եւ իգական սեռի ներկայացուցիչներին եւ նոյնիսկ երբեմն նշելով նրանց տարիքն ու առողջական վիճակը (ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 223 Ա., 223 Բ.): Այլ վկայութիւնների համաձայն օրինակ 2 տան անդամները կազմել են 62 շունչ (ՀՀ, Ազգային արխիւ, 57րդ ֆոնդ, 5րդ ցուցակ, 132րդ գործ, էջ 28):

[42] ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 280:

ընդարձակ ցուցակներ, որոնք սակայն չեն տրամադրում տեղեկութիւն այն մասին, թէ մարդիկ որտեղի՞ց են եկել[43]: Այդ ցուցակները կազմուել են Մայր Աթոռ հասած գաղթականներին անհրաժեշտ օգնութիւն տրամադրելու համար:

Բոլոր վաւերագրերի ուսումնասիրման, վերծանման արդիւնքում միայն, կարծում ենք, անուն-ազգանուններով, ձեռագրերի համեմատութեամբ, յարակից նիւթերի օժանդակութեամբ կարելի կը լինի գտնել առանց բնակավայրի նշումների այս անձանց եւ գերդաստանների մասին տեղեկութիւններ եւ լրացնել աբրեցիների մասին այլ վկայութիւններ նոյնպէս:

ԱԲՐԵՑԻՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԽՐԻՄԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ա.

Նորին Վեհափառութեան Տ[եա]ռն եւ Տ[եա]ռն Մկրտիչ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամ[ենայն] Հայոց եւ Ծայրագոյն[44] Պատրիարգի[45] Մայր Աթոռոյ Ս[ր]բոյ Էջմիածնի

Ի Տաճկաստանու տարունացի,Բուլանուղ գաւառի Աբրի գիւղացի Պետրոս Տ[է]ր-Դաւիթեանէ[46]

Խոնարհաբար խնդիր

Վեհափա՛ռ Տ[է]ր,

Ահա առաջի առնեմ խոնարհաբար եւ համբոյրել Ս[ուր]բ Գարշապարն Ա[ստուա]ծընտիր Վեհափառութ[եան]դ: Վ[ա]սն[որ]ոյ այլ[եւս] ոչ կարեմք համարձակիլ խնդրագրաւ եւ բանիւ դիմել Ս[ուր]բ Վեհափառութ[եան]դ: Ըզչարչարանս եւ զնեղութ[իւն]ս մեր քանզի արդէն յայտնի եղած է Ձեր Վեհափառութ[եա]ն: Եւ եւս մեր թախանձանքն[47] Ձեր ազգասիրութ[եա]ն կողմից աւելի վշտեր կաւելացնէ: Այլ է՝ Ձեր անհրաժեշտ Ս[ուր]բ աղօթիւք յոյս է, որ փարատինք[48]:

Ուստի, առ ձեռն նոյն բարբարոսաց, որ կարելի չէր մնալ հայրենի գաւառն, որ եւ իսկ մի որդիս սպանեալ են, եւ այնու փախուցեալ թափառական ընտանիքով զերկիրն Ռուսահայոց, եւ աժմոյս կամ Դադալու[49] գիւղում,

---

[43] ՄՄ, Խկֆ, թղթ. 111, էջ 124., թղթ. 107, վաւ. 300 (ա, բ): Վաւերագրերի լուսապատճենները տե՛ս յաւելուած բաժնում:

[44] Բն.՝ *ծայրագուն*:

[45] Բն.՝ *պատրիարգի*:

[46] Պետրոս Տէր-Դաւիթեանի 1896ին գրուած մէկ այլ նամակ տե՛ս՝ ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 130:

[47] Բն.՝ *թաղանծանքն*:

[48] Բն.՝ *փարատինգ*:

[49] Ներկայիս ՀՀ, Արագածոտնի մարզ, Եղնիկ գիւղ:

խնդրեմ Վեհափառութ[եան]դ՝ խնամ անիջիք ուր[եք] ուրեք բարեհաճեսցի[50] ողորմածութ[եամբ]ն Ձեր բնակուել ժամանակաւոր՝ մինչեւ ծագեսցի լոյսն ա[ստուածա]յ[ին] միջնորդութ[եամ]բն Ա[ստուա]ծընտիր Վեհափառութ[եա]ն Ձեր:

Տարունացի , Բուլանուղ գաւառի Աբրի գիւղի՝
Պետրոս Տ[է]ր-Դաւիթեան, 18 Յուլիսի, 1895 ամի[51]

Բ.

Նորին Վեհափառութեան Ծայրագոյն Պատրիարգ եւ Ընդհանուր Հայրապետ Ամ[ենայն] Հայոց Տ[եառն] Տ[եառն] Մկրտիչ Ս[ր]բազնագոյն Կաթուղիկոս
Պուլանըխի Ապրի գիւղի ծխատէր Յովսէփ քահանայ Տ[էր]-Յովհաննէսեանցէ

Խոնարհական խնդիր

Վեհափա՛ռ Հայրապետ,

Թուէս մի տարի յառաջ, տանս մէջ վեց հայրենակից ճանապարհորդ հիւրընկալելով, մի հայի մատնութ[եամ]բ ձերբակալուեցանք վեց ընկերներով՝ չորս ամիս: Յորոց երեքը կղերական էին, իսկ երեքը՝ աշխարհական՝ Պաղիշու բանտի մութ խորշերու մէջ: Եւ յետ չորից ամսոյ 60-ակ[ա]ն օսմանեան ոսկի տուժելով՝ ազատուեցանք: Բայց քանի օրէն յետոյ կրկին մեզ բանտարկել ուզեց կա[ռա]վ[ա]րութ[իւնը]՝ ինչպ[է]ս ըրաւ միւսներուն:

Մեր դրացի Տէր Յարութ[իւն] ք[ա]հանայի հետ այս կողմ անցանք, իսկ կառավ[ա]րութ[իւն]ը քրդերի ձեռօք իր սրտի վրէժը լուծեց. մեր ամէն ունեցածը աւարի առնել տուաւ: Այս պ[է]ս անցանք այս կողմ՝ 40 հոգիէ բաղկացած մեր ընտանիքը թողնելով այն կողմ:

Իսկ նուաստս այս քանի ամիս էր, որ Շիրակայ գաւառ Մունջուղլու ըսուած մի աղքատ գիւղի քահանայութ[եա]ն պաշտօն կ'վարէի եւ այս տարուան ձեռքս անցած քանի կոպեկով ուզեցի ցանք ցանիլ, այն ալ մեր մեղքէն անցեալ շաբթու մի գիշերուան մէջ Յովնանի /// նմանու[թիւ]ն ունեցաւ, զի ցուրտը յանկարծ փչացրեց, ըստ նմին նորին մերձակայ գտնուող տասը գիւղերն:

Վեհափա՛ռ Տէր, այժմ տարակուսած եմ եւ չըգիտեմ՝ այն սրտամաշ տարակուսութեան որդը ինչպ[է]ս սրտէս մեռցնեմ, ի՞նչ կերպ ընեմ, որ սոյն ցաւալի խնդրոյն վերջ դրուի:

---

[50] Բն.՝ *բարեհաջեսցի*:
[51] ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 91:

Նշդեի[52] բարձրգոյն ք[ա]հանայ մի եմ, ոչինչ չունիմ, բացի անտանելի ցաւերէն, որ գիտեն, թէ մեզ վիճակուած է: Ունիմ նաեւ մի ընտանեաց ***ը***ստուար խումբ մը հայրենեացս մէջ, որք երկու սարսափելի թշնամիներէ պաշարուած են: Մինն է սով, իսկ Բ.՝ թշնամեաց սարսափ, որ երկուն եւս մահ կսպառնան:

Կաղաչեմ լալագին Վեհութե[ան]դ՝ ժամ յառաջ դարման տանէք մեր ընտանեաց վիճակի բարօրութեան:

Իսկ ինձ՝ նուաստիս, չըկարեմ յայտնել, զի թշուառութիւնը 65 ծերութեանս հասակիս մէջ ձգեց զիս պանդխտութեան տղմին, եւ քաջ գիտեմ, որ Ձերին Վեհութենէն ի զատ ուրիշ մէկը չէ կարօղ զիս այս տեղէն դուրս հանել: Ուրեմն՝ օգնեցէ՛ք…

Ամենախորին ակնածամբ մատչիմ համբոյր որդիական՝
Յովսէփ ք[ահանայ] Տ[էր] Յ[ովհաննէսեան]
1895, Օգ[ոստոսի] 27
Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ[53]

Գ.

Նորին Վեհափառութեան[54]
Աստուածընտիր Հայրապետի Ամ***է***նայն Հայոց Տեառն Տեառն Մկրտչի
Աբրահամ Ակօփով Նազարիեանցէ

Խնդիր

Ի 1894 ամի, Բուլանխու գաւառէն Աբրի գիւղի բնակիչ Աբրահամ Յակոփով Նազարիեանցս (7) ընտանիքով ապրում էինք քիւրտերի անգթութեան տակ, բայց ն***իւ***թական[55] կար***ո***տութիւն չունէինք……

[52] Հին քերականութեան դասագրքերի համաձայն լծորդատառք համարուող բառերը ունեն երկձեւութիւն, օրինակ՝ թակարթ-թակարդ, դժգոհ-տժգոհ, աստիճան-աշտիճան, նշդեհ-նժդեհ եւն. (Մեսրովբ Տէր-Յարութիւնեան, *Քերականութիւն հայոց լեզուի*, Կ. Պոլիս, Յօրթագեօղ, ի տպարանի Պօղոս Արապեան, 1826 թ., հտ. Ա., էջ 6):

[53] ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 103:

[54] Այս վաւերագրում է-ե, վ-ւ, օ-ո, հ-յ հնչիւնների դասական ուղղագրական տարբերութիւնները նշել ենք թաւ եւ թեք, տառասխալներն ու վրիպակները բերել ենք տողատակում, բացթողունուած տառերը ներկայացրել ենք փակագծերի մէջ (): Նման աշխատանքն արել ենք բնագրերի արտագրման սկզբունքներին համաձայն՝ նկատի ունենալով, որ վաւերագրերը կարող են օգտակար լինել լեզուաբանական այլեւայլ հետազօտութիւններով զբաղուող մասնագէտների համար:

[55] Բն.՝ ն*ոյ*թական:

Բայց *հ*անկարծ *իբրեւ*[56] *հ*եղափոխական մատնեցին թուրք կառավարութեանը, իսկ ես անձս[57] ազատելու համար փախա(յ) Ռուսաստանի խորքերը՝ անմխիթար, խեղճ[58], թշուառ[59], տանից-տեղից զրկուած[60], բ*օլօ*րովին տնէն[61] լուր մը չըստացած, եր*էխան էր*իս[62] կար*ո*տը քաշ*էլ*ով: *Հ*անկարծ եկա(յ) Վաղարշապատ եւ գտա(յ) իմ ընտանիքս Վաղարշապատում: Այն ընտանիքս, որ փափուկ էի պահ*էլ* մինչեւ վերջը[63]. լաւ կերած, լաւ խմած, լաւ շրջանի մէջ[64] ապրած: Աժմս աչքերս կուրանում է, երբ տեսնում եմ բոպիկ, տկլոր, քաղցած[65], զրկ*վ*ած ամ*ե*ն բանից, անօգնական[66] ման *էի* գալիս այս եւ այն կողմ, օրական հաց հայթայթելու: Ու ես էլ ըսկսեցի[67] մշակութիւն, որ ընտանիքիս օգնեմ[68], բայց որքան տանջւում[69] եմ, կրկին օրական (25. 30.) կապէկից աւել[70] չ*էի* կարողանում վաստակ*էլ*: Դրանով ընտանիքս չը բա*վ*ականանալով, շատ եւ անսահման նեղութեան մէջ[71] լինելով, դիմ*էլ էի* Վեհափառութեանդ[72]:

Օ՜վ Հայրիկ, օգնի՛ր[73] անկեալիս[74], կտրի՛ր թոռներիդ ողբը[75] եւ աղա(ղա)կը, որ հա՜ց… հա՜ց են ասում: Ամաչութիւնիս ոչ մ*ե*կին չենք յայտնում, դիմ*էլ էի*նք միայն[76] Հայրի՛կ, քեզի: Ի սէ՛ր Ասու դու, գթաս[77]:

Վեհափառութեանդ[78] ըստոր ծառա(յ) Աբրահամ Յակոբով
Նազարիեանց

---

[56] Բն.՝ *փրեվ*:
[57] Բն.՝ *անցս*:
[58] Բն.՝ *խեղջ*:
[59] Բն.՝ թշվառ:
[60] Բն.՝ *զրկվաց*:
[61] Բն.՝ *տնին*:
[62] Բն.՝ *երէխանէրիս*:
[63] Բն.՝ վերչը:
[64] Բն.՝ մեչ:
[65] Բն.՝ քախցած:
[66] Բն.՝ *անօքնական*:
[67] Բն.՝ ըսկսեսի:
[68] Բն.՝ օքնեմ:
[69] Բն.՝ տանջըվում:
[70] Բն.՝ ավէլ:
[71] Բն.՝ մէչ:
[72] Բն.՝ Վէհաբառութեանդ:
[73] Բն.՝ օքնիր:
[74] Բն.՝ անկիեալիս:
[75] Բն.՝ ոխպը:
[76] Բն.՝ միեայն:
[77] Բն.՝ գտես:
[78] Բն.՝ Վէհաբառութեանդ:

Ի 1895 ամի Օգոստոսի 17-ին[79]

Դ.

Նորին Վեհափառութեան Տ[եառ]ն Տ[եառ]ն Մկրտիչ Սրբազնագոյն
Կաթուղիկոս Ա[մենայն] Հայոց
Պուլանըխի Յապրիլ գիւղի գաղթական Աբրահամ Յակոբեան 6
հոգի
Մշոյ դաշտի Գրթագոմ գիւղացի Յովհան[ն]էս Մանուկեան 5 հոգի –
[ընդհանուր] 11

Խոնարհական խնդի

Պանծալի՛ Հայրիկ,

Թուէս մի ամիս առաջ հրաման շնորհեցիք Եղուրադ, Խաչիկ վ[ա]րդապետին՝ մեր ընտանեաց ցորեան բաշխէ, բայց որքայնութիւն մէջը չըյիշելուն հ[ա]մ[ար] գեր[ապատիւ] Խաչիկ Վ[ա]րդ[ա]պետն գործը մինչ օրս յետաձգեր է՝ չը գիտեմք, թէ ինչ է միտք. որ մեզ այսպ[է]ս կը տանջէ:

Սուրբ վայրս գալէն գնալէն մեր ոտի տրէխ չը մնաց: Իսկ Հըմայեակ Վ[ա]րդ[ա]պետ եւս նմանապէս՝ իբրու շանթ[ը]նկէց Արամազդ, իր կծու խօսքերով մեր սրտերը բոլորովին վառեց, եւ մեզ ահաբեկ ըրած է մի անգամ: Եւ մեր ընտանիք մնացած են այն խեղճ դրութեան՝ անօթի եւ մերկ: Նմանապէս եւ մեք՝ 'ի յերերման եւ բոլորովին յուսահատ:

Ուստի, կաղաչեմ Վեհ[ափառ] Հայրապետ, եթէ խոստացած է Ձերին Վեհութեան, որ մեր ընտանեաց ցորեան տրուի, ժամ յառաջ երկտող գրով հրաման մը շնորհէք՝ տրուի անմեղական կերպով: Ապա թէ ոչ՝ մեր ընտանիք սովամահ կը լինին՝ այսպիսի առատութեան տարիի մէջ: Վ[ա]սնզի այս երկու հայրերը մտքերնին դրած են մեր ընդանիքը վերջացնեն:

Ամենախոնարհ ակնածու[թեամբ] մատչիմ համբոյր որդիական՝
Աբրահամ եւ Յ[ակոբեան], Յովհանէս Մ[անուկեան
1895 Սեպ[տեմբերի] 23
Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ[80]

Ե.

Նորին Վեհափառութե[ա]ն Տ[եառն] Տ[եառն] Մկրտչի Ա.
Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Բուլանըղ գաւառի Ապրի գեղջ Մելիք աղայ Խաչատրեանէ

Պաղատախառն խնդիր

Բարեգո՛ւթ Հայր,

Արդէն իմ կրած նեղութիւնների եւ որդւոցս սպանութիւնների եւ աւարառութեանց մասին Յունուար ամսոյ 22-ին N 3 Նոր-Դարը նկարագրել է: Ես

[79] ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 117:
[80] ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 238:

այլ եւս չեմ կարող նկարագրել: Եւ 'ի հարկէ, բարերար Հայրութիւնդ քաջ գիտէ՝ ես այժմ բնակ*վ*ում եմ Կարսի նահանգի Չօլախլի գիւղում՝ բազմաթիւ ընտանեօք, չունիմ ոչ մի աշխատաւոր, բացի ինձանից: Ես էլ արդէն ջարդ ու փուշուր եղած, բոլոր մարմինս վէրքերով պատած է, չունիմ ապրելու միջոց եւ անգամ տան քիրայ[81], որ կարողանամ գոնէ իմ ընտանիքս մէկ տեղ պատսպարել: Կորցրել եմ ամէն ինչ:

Վեհափա՛ռ Տէր, թէեւ ամօթխածու[թիւ]նը ինձ թոյլ չէր տալիս դիմէի բարերար Հօրդ, բայց աւա՛ղ անցել է: Վասն որոյ խնդրում եմ եւ աղաչում օգնութիւն՝ խեղճ թշուառականիս: Եթէ հնարաւոր էր՝ հրամայէիք տալ յանձնարարական՝ շրջելու Ռուսաստանի վիճակները, իսկ եթէ ոչ՝ ինչպէս Ձերդ բարերար Հայրութիւնը կ'տնօրինէ, որով ազատած կ'լինէք խեղճ թշուառիս տաժանակիր նեղութիւններից, եւ մենք աղօթարար բարերար Հօրդ անգին կենաց երկարութեան:

Ամենախոնարհ ծառայ՝ Մելիք աղայ Խաչատրեան
1895 թ. Հոկտեմ[բերի] 13
'Ի Ս[ուրբ] Էջմիածին[82]

Զ.

Նորին Վեհափառութեան Տ[եառն] Տ[եառն] Մկրտչի
Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Պետրոս Տէր-Դաւթեանից

Խոնարհ խնդիր

Ահա մի քանի ժամանակ է, որ կնոջս եւ չորս երեխաներիս հետ, հազիւ ազատուելով Բուլանըխա Յաբրի գիւղից, կարողացայ գալ այս կողմեր՝ նոյնիսկ որդուս զոհ տալով բռնաւոր շէյխ Խալիմի գնդակին: Երեխաներիս ամենամեծը 12 տարեկան մի տղայ է, իսկ միւսները նրանից փոքր են: Այժմ մնում եմ Վաղարշապատ: Տէր Վարդան քահանան 5 ր(ուբլով) մի սենեակ է վարձով տուել մինչեւ Զատիկ, բայց միջոց չունեմ այսքան ծանրութեան տակ տոկալու: Գոնէ, մտածում եմ, մի գործ լինէր, կամ՝ աշխատելու մի տեղ, ես կը կարողանայի նորա հոգսը քաշել: Միւս կողմից տարիքս արդէն անցել է, եւ ինձ համար այդքան ընտանիքը շատ ծանր է խնամել ու տոկալ:

Յուսալով, որ անտես չէք առնի որդիական խոնարհ խնդիրս, ահա մատուցանում եմ այն Ձեզ:
1896 ամի, Նոյեմբեր 7
Վաղարշապատ[83]

---

[81] Վարձ:
[82] ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 290:
[83] ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 130:

Է.

Նորին Վեհափառութեան Ա[ստուա]ծընտիր Կաթուղիկոսի, Հայրապետի
եւ ողորմած Հայրիկին Ամ[ենայն] Հայոց
Մշոյ Բլանուխայ Աբրի գիւղից գաղթական կին՝ Ազնիւ Տէր-Դաւթեանէ

Աղերսանօք խնդիր

Սորանից մէկ ամիս առաջ գաղթելով տեղս, չորս մերկ զաւակացս, էրիկս, տկար դրութ[եամբ] մինչեւ ցարդ անմխիթար եւ ողորմելի վիճակի մէջ տանջւում ենք:

Այս պատճառաւ, դիմելով գթառատ եւ ողորմած Հօրդ ոտքը, կաղաչեմ եւ մեզ ողորմանալ, որովհետեւ անճարու[թեն]է մինչեւ Զատիկ տեղս ապրել կամինք եւ ապա վերադառնալ հայրենիք, ուստի ցիր ու ցան եղած ենք: Որով, օրհնելով պիտի օրհնեմք ողորմած Հայրապետիդ անգին կեանքը յաւիտեան:

Ամենախոնարհ աղախին՝ Ազնիւ Տ[է]ր-Դաւթեան[84]
5-ն Դէկտեմբերի, 1896 ամի
Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ[85]

Ը.

Նորին Վեհափառութեան Տ[եառն] Տ[եառն] Մկրտչի Սրբազնագոյն
Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Ի Մշու Բուլանղ գաւառի Աբրի գիւղացի նորաեկ գաղթական
Մարտիրոս Պետրոսեանից

Խոնարհա*պ*ար եւ աղերսախառն խնդիր

Վեհափա՛ռ Տէր,

Այս վեց ամիս է, որ ես եկել եմ եւ ապրում եմ Պարսայ նահանգի Շատրուան գիւղում: Ունիմ տասը եւ երկու հոգի ընտանիք, որոնք անաշխատ են եւ իմ աշխատութեամբ մինչեւի յիմայ ապրել են: Բայց յիմայ, տեսնելով, որ օգնութիւն չըկայ ո՛չ գիւղից եւ ո՛չ ազգասէր հայերից, եւ անտանելի ծըմեռը, որ գալիս այ, պէտք է սովամահ լինէ*մ*ին: Ուստի, դիմեցի Ձեր Վեհափառութեան դուռը, որ օգնէք եւ խնամք տանէք սովեալ ընտանիքին, որոնցը ո՛չ ուտելիք հաց կայ, եւ ո՛չ՝ հագուստ: Կա՛մ օգնէք, կա՛մ եթէ ոչ՝ վեր կառնեմ ընտանիքը, կը բէրեմ Ձեր Սրբութեան դուռը, կը թողնեմ: Թող այդ տեղ մահանան, ո՛չ թէ այստեղ: Կրկին[86] խնդրում եմ եւ աղերսում՝ Ձեր ողորմա-

[84] Ազնիւ Տէր-Դաւթեանի միւս նամակը՝ գրուած 1899 թ., տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 109, վաւ. 284:
[85] ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 139:
[86] Բն.՝գրկին:

ծութիւնից, որ խնամք տանէք թշուառ ընտանիքին, սովից եւ ցրտից ազատէ՛ք, որի փոխարէն կստանաք վարձք Ա[ստուա]ծուց[87]:

Անհամբեր սպասեմք Ձեր Վեհ[ափառութեան] խնամատար
կարգադրութեանը:
1898 ամի, 5 Նոյեմբերի[88]

Թ.

Նորին Ա[ստուա]ծարեալ Ս[ուրբ] Օծութ[եան] Տ[եառն] Տ[եառն]
Մկրտչի Ա. Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամ[ենայն] Հայոց
Մշոյ նահանգի Հաբրի գիւղի բնակիչ՝ Միսակ Տէր-Դաւթեանէ

Խոնարհաբար խնդիր

Ողորմա՛ծ Հայրապետ,

Խնդրամատոյց ծառաս, բնակուելով Վաղարշապատում եւ լինելով տասն ու եօթ ամաց, ունիմ մէկ ծերունի մայր, որը անկարող է աշխատութ[եան], ունիմ նաեւ փոքրիկ քոյր եւ եղբայրներ: Ընդամէնն բաղկանում ենք եօթն ընտանիքից: Իսկ ես՝ թշուառս, դժուարանում եմ մշակութեամ]բ հոգալ նոցա՝ գոնէ ցամաք հացի պիտոյքն: Շարունակ աշխատութ[իւն] չլինելու պատճառաւ՝ վերջին անտանելի թշուառութ[եան] մէջ ենք, մանաւանդ հացի սուղ լինելու համար:

Ուստի, սոյն խնդրով դիմում եմ ի խնամս որդեսէր Հօրդ, աղաչելով՝ բարեհաճէք հրամայել Ս[ուրբ] Էջմիածնի որեւիցէ ծառայութ[եան] գործերում մեզ եւս մի յարմար գործ շնորհել, որ ես իմ աշխատութեամ]բս կարողանամ մեր եօթն ընտանիքն խնամարկել՝ օրինելով Վեհափառ Սրբութեանդ կեանքը:

Ձերդ Սրբութ[եան] ամենախոնարհ ծառայ՝ Միսակ Տէր-Դաւթեան
1899 թ[իւ], Ապրիլ 20
Վաղարշապատ[89]

Ժ.

Նորին Սրբազնութեան Վեհափառ Կաթուղիկոս Հայոց Հայրիկին
Մշու գաւառի Բուլանուխի Ապրի գիւղի բնակիչ՝
Խաչատուր Տէր-Դաւթեանից

Ամենախոնարհ խնդիր

Ահա երկու ամիս է, որ երկրէն եկեր եմ Կովկաս եւ հանդիպեր եմ ամէն տեսակ նեղութիւնների ու զրկանքների: Չուզեցի այլ եւս օտարութեան փողըն ու հողը, իմ երկիրը դարձեալ կուզեմ երթամ: Այնտեղ ընտանիք ունիմ, երեխաներ ունիմ, իմ ցաւ ու դարդը ունիմ: Կուզեմ երթամ իմ բունս՝ իմ ձա-

[87] Բն. Ա[ստուա]ծանից:
[88] ՄՄ, Խկֆ, թղթ. 107, վաւ. 110:
[89] ՄՄ, Խկֆ, թղթ. 109, վաւ. 020:

գերուս հետ ծ(ո)ւարելու: Սակայն գնալու միջոց չունիմ: Գլուխս կորցրածի պէս թափառում եմ: Հնար չունիմ, որ երթամ:

Խնդրում եմ Հայոց Հայրիկէն՝ ինձ մի ճամբու ճար անի, ինձ հանի օտար երկրէն: Երթամ իմ տեղ, իմ բուն: Քանի ցաւից ու դարդից աւելի՝ այստեղ ո-չինչ չունիմ:

Խաչատուր Տէր-Դաւթեան
1900 թ[իւ], Մարտի 20, Թիֆլիզ[90]

CHRONOLOGY OF ABRI VILLAGE IN THE BULANIK DISTRICT OF MUSH (BASED ON OTTOMAN REPORTS AND ARMENIAN SOURCES) (SUMMARY)

VERA SAHAKIAN (verasahakyan@matenadaran.am)

The article is dedicated to the village of Abri in the Bulanik district of Mush. Based on Ottoman records and primary sources, the article examines various perspectives on the foundation of the village. Although late Ottoman-period statistics indicate that a significant Armenian population resided in the village, today, following its renaming as Esenlik, no Armenians inhabit the settlement.

The author analyzes petitions of Armenian refugees addressed to Catholicos Mkrtich Khrimian (1892–1907). Among approximately eight thousand letters, ten were identified as having been written by former residents of Abri. The author quantifies the number of individuals from Abri who sought assistance from Khrimian and identifies the families that once inhabited the village. Furthermore, the study explores the causes of their displacement, the hardships they encountered, and the underlying factors that compelled their migration.

[90] ՄՄ, Խկֆ, թղթ. 110, վաւ. 108:

THE VIENNESE ARMENIANS IN THE WAR OF THE HOLY LEAGUE (1683–1699)

JAKOB BREU
jakob.breu@posteo.de

ABSTRACT

This article engages with the oft-studied War of the Holy League, or "Great Turkish War" (1683–1699), from a perspective that has found little attention thus far. Studying Armenian actors in Vienna whose biographies were inextricably linked with a war that was not primarily "theirs", but who still contributed considerably to the Habsburg war effort against the so-called "arch-enemy", diversifies the overall picture of this period. Armenians were members of the diplomatic mission of Count Alberto Caprara, who was ordered to Istanbul in the wake of the second Ottoman siege of Vienna. Armenians also were spies by order of the Viennese Imperial War Council and brought valuable information on the Ottoman war preparations to Vienna, and even proposed and executed a sabotaging mission in the beleaguered Ottoman stronghold Buda, a part of modern Hungarian Budapest, in 1686. This article concentrates on the reasons why the Armenians engaged in this war and brings forth four relevant factors: Armenians had to deal with unfavorable surroundings in Vienna that forced them to make themselves indispensable to the court or other influential persons in order not to be exiled or arrested; they were embedded in a network of other Armenians and influential members of the court who proposed to them risky war-related undertakings; they got promises that they would receive large fortunes; and they were drawn to engage in the war for the sake of a common Catholic faith.

INTRODUCTION

The second Ottoman siege of Vienna 1683 and the ensuing War of the Holy League of 1683 till 1699 – sometimes called the "Great Turkish War", although the name is problematic – have attracted considerable attention.[1]

[1] This article is an abridged and re-worked excerpt of my unpublished Masters thesis, *Armenier_innen im „Großen Türkenkrieg". Ihre Rollen, Involvierung und Bedeutung in mikrogeschichtlicher Untersuchung, mit Fokus auf die Jahre 1683–90.* University of Vienna (Vienna 2024).
It is futile to give a list of published books or articles on the War of the Holy League and its campaigns and sieges. The bibliography of the Ottoman sieges by Walter Sturminger that lists all works published until 1951 fills already a whole book (Walter Sturminger, *Bibliographie und Ikonographie der Türkenbelagerungen Wiens 1529 und 1683*, Veröffentlichungen der Kommission für Neuere Geschichte Österreichs

The war facilitated Austria's rise to being one of the European great powers and marked the beginning of Ottoman decline and considerable loss of territory; likewise, the war was the last time Ottoman armies could bring the *jihad* to Central Europe. Within this war, Armenians played an important role on both sides, but only a very few studies have tried to bring in their perspective. With regard to Armenians living in Vienna and taking the side of the Habsburg Empire in this conflict, the attention of these studies was also partly diverted to their role in establishing the first Viennese coffeehouses.[2] While these studies have minutely reconstructed the biographies of the relevant Armenian actors, it was not their aim to surpass this micro-historical perspective and ask why these Armenians were involved in the war at all. The following pages will give an answer to this question.

Studying the War of the Holy League from an Armenian perspective makes it possible not only to diversify the overall picture of the war, but also to firmly place it in New Diplomatic History. New Diplomatic History recognizes foreign relations as a political field shaped by various actors, defines decisions as actor-made and examines their genesis in the interplay of these actors.[3] Approaches rooted in New Diplomatic History abandon earlier concepts such as "international", which are not practicable for the early

41, Graz, Cologne, 1955). Two older English books on the second Ottoman siege and events prior and after that which are still useful are John Stoye, *The Siege of Vienna*, London, 1964; and Thomas M. Barker, *Double Eagle and Crescent. Vienna's Second Turkish Siege and Its Historical Setting*, Albany, NY, 1967.

[2] Karl Teply, *Die Einführung des Kaffees in Wien. Georg Franz Koltschitzky, Johannes Diodato, Isaak de Luca*, Forschungen und Beiträge zur Wiener Stadtgeschichte 6, Vienna, 1980. Apart from his monography, Teply wrote some articles published in *Handes Amsorya* which detailed the lives of relevant Armenians even further: Karl Teply, "Gabriel aus Şebinkarahisar. Ein Abenteurer im Dienst großer Politik. Der Kundschafter und Saboteur Gabriel aus Şebinkarahisar und die Wiedereroberung Ofens 1686", *Handes Amsorya* 87:1973, col. 215-44; Karl Teply, "Kalust Nurveli Shahin. Ein armenischer Geheimagent aus dem Großen Türkenkrieg 1683–1699", *Handes Amsorya* 87:1973, col. 331-72; Karl Teply, "Johannes Diodato. Der Begründer des Wiener Kaffeehauses", *Handes Amsorya* 88:1974, col. 87-106, 233-248, 533-44 (*Handes Amsorya* 89:1975, col. 107-24, 227-52, 357-70, 469–502), *Handes Amsorya* 91:1977, col. 253-78.

[3] Hillard von Thiessen and Christian Windler, "Einleitung: Außenbeziehungen in akteurszentrierter Perspektive", *Akteure der Außenbeziehungen. Netzwerke und Interkulturalität im Historischen Wandel*, ed. Hillard von Thiessen and Christian Windler, Externa. Geschichte der Außenbeziehungen in neuen Perspektiven 1, Cologne, Weimar, Vienna, 2010, pp. 3-5.

modern period anyway, and attempt to write a "transnational" history.[4] At the same time, the concept of politics itself is defined much more broadly. Social, institutional, economic and cultural factors and practices are included in the analysis. Traders, missionaries or transculturally active families are understood as actors who shape foreign policy and their interconnections and networks are examined, as is the increasing involvement of women in foreign relations.[5] Interpreters are also of particular importance, and their influence on policy-making towards the Ottoman Empire was examined in more detail. Their activity was understood as a "transcultural decoding of signals" and their translations were thus ascribed interpretative power.[6]

These theoretical impulses are of great interest for the study of Armenians involved in the War of the Holy League, as these Armenians were also transcultural actors traveling to and fro in the Ottoman Empire and Christian principalities in Europe; also, they were active as traders, interpreters and scouts and were able to shape the foreign relations of both empires to a certain extent. Within this article I will focus primarily on the Viennese Armenians and only touch on those in Poland and the Ottoman Empire, for certain specifics of the context in Vienna are detrimental to a larger comparison and the reasons these Armenians were involved in the war are to a certain degree only applicable in the Viennese case, but the theoretical considerations are also valid for the Armenians engaged in the conflict on the Ottoman side.

The two most prominent Viennese Armenians in the 17th century, whose biographies are inextricably linked to the War of the Holy League, were Johannes Diodato[7] and Kalust Nurveli Shahin; the latter because of his descent from a Persian-Armenian family was also known as "doctor

---

[4] Hillard von Thiessen, "Außenbeziehungen und Diplomatie in der Frühen Neuzeit und im Übergang zur Moderne: Ansätze der Forschung – Debatten – Periodisierungen", *Internationale Geschichte in Theorie und Praxis*, ed. Barbara Haider-Wilson, William D. Godsey, and Wolfgang Mueller, Vienna, 2017, p. 145.

[5] Thiessen and Windler, "Einleitung", p. 6; Thiessen, "Außenbeziehungen und Diplomatie", p. 161.

[6] Wolfgang Kaiser, "Politik und Geschäft: Interkulturelle Beziehungen Zwischen Muslimen und Christen im Mittelmeerraum", *Akteure der Außenbeziehungen. Netzwerke und Interkulturalität im Historischen Wandel*, ed. Hillard von Thiessen and Christian Windler, Externa. Geschichte der Außenbeziehungen in neuen Perspektiven 1, Cologne, Weimar, Vienna, 2010, p. 312; E. Natalie Rothman, *The Dragoman Renaissance. Diplomatic Interpreters and the Routes of Orientalism*, Ithaca, London, 2021.

[7] Diodato is only known by his Italian name. In Armenian, his name can be approximately reconstructed as Hovhannes Astowacatur, although different variants of the surname exist and are to be taken into consideration.

persianus". Both Diodato and Shahin were traders, members of diplomatic missions or engaged in diplomatic encounters, and e spies for the Habsburg Empire. Their greatest merit was to implement a spying mission in the Ottoman stronghold Buda in 1686 and to instigate an explosion of the powder magazine in the fortress. Thus, they fit well within the framework of New Diplomatic History.

Map showing Hungary and the Habsburg-Ottoman border in the 17th century. The exact boundary changed a few times during this century in the course of wars until the War of the Holy League, when Hungary was completely conquered by Habsburg forces. The area denoted in white represents the Ottoman Empire and Ottoman Hungary. The Habsburg lands (Austria and Western Hungary) are marked in dark grey. Light gray is the County of Transylvania, which was an Ottoman vassal. (F. W. Putzger, *Historischer Atlas*, Vienna 1963, p. 83. Map reworked by J.B.)

The remainder of this article will proceed in neither a biographical nor a chronological way,[8] but devote its sections to four different reasons that account for and explain Viennese Armenian involvement in the War of the Holy League. Each section will give examples and by doing so return to Diodato's (and partly Shahin's) life and their actions, thereby allowing us to get a better picture of the two Armenians and other Armenians with whom they engaged. The first section will look at the background of the Armenian actors in Vienna and describe the upheavals in the Armenian highlands at the end of the 16th and especially the beginning of the 17th century that caused

[8] For studies proceeding in these ways see the aforementioned works by Teply.

mass migration, partly of a forced nature. Following this, the article turns to the time of the War of the Holy League and the years prior to 1683. Section 2 analyzes the unfavorable surroundings for Armenians in Vienna, how they were perceived and which persecutions they had to fear. Section 3 proceeds to study personal networks between Armenians and their contacts with members of the Imperial Court and especially the Imperial War Council (*Hofkriegsrat*), which proves to be the most important factor for understanding Armenian involvement in the war. Section 4 focuses on personal profits the Armenians sought to get for their services, while section 5 finally turns to the aspect of religion and the role it played in facilitating Armenian involvement on the side of the Habsburg Empire. Following this, the last section brings in some remarks about Armenian involvement in the Ottoman and Polish armies.

BACKGROUND OF ARMENIAN ACTORS

The involvement of Armenians in the War of the Holy League – especially of those Armenians living in Vienna – is inexplicable, at least to a certain degree, if one does not consider the backgrounds of the relevant actors and their families. It is remarkable that of the most prominent Armenians in Vienna, at least one – Kalust Nurveli Shahin – was a descendant of the Armenians displaced at the beginning of the seventeenth century. As for the others, they were certainly affected by the large waves of migration and, even if their family's history cannot be reconstructed in all details, kinship with the displaced is very likely.

The beginning of the 17th century was a period of major upheaval in the Armenian Highlands. The Ottoman Empire underwent an era of enduring crisis, especially in eastern Anatolia[9] and the western part of the Armenian Highlands known as Lesser Armenia (P'ok'r Hajk'), which culminated in what has been called the "Great Anatolian Rebellion" of 1591 to 1611.[10] This rebellion of mostly mercenaries (*sekbanlar*), but also other armed men who organized themselves in bands of brigands and robbers, is also called the Celali revolt, because the insurgents drew their historical legitimacy from the

[9] By "eastern Anatolia" I do not mean the modern Eastern Anatolia Region which is an administrative unit of the modern Turkish republic that was created only in 1923 and encompasses large areas of the Armenian Highlands that were historically never seen as being part of Anatolia. Rather I use the term for describing the eastern part of the historical region of Anatolia that borders Lesser Armenia.

[10] William J. Griswold, *The Great Anatolian Rebellion, 1000–1020 / 1591–1611*, Islamkundliche Untersuchungen, Berlin, 1983, p. 83. "'"

uprising of Sheikh Celal in Amasya at the beginning of the 16th century.[11] The Celali revolts have been variously explained as a religiously deviant movement with connections to the Shi'ites of Persia, as being caused by widespread economic distress and the collapse of the village economy, which could also be connected to climatic changes in the 16th century during the "Little Ice Age", or as being fed upon by rivalries of local magnates who hired mercenaries. The *sekbanlar*, as another explanation has it, were seen as deserters and excluded from the Ottoman army; thus, they formed armed gangs to prevent further persecution.[12] While the revolts can only be explained in a multicausal way, it is more important in this article to engage with the effects of the revolts.

The Celali revolts had a dramatic impact on eastern Anatolia and the Armenian Highlands, which can be easily discerned by looking at demographic parameters. The number of settlements in eastern Anatolian regions such as Amasya as well as the number of inhabitants per settlement decreased drastically.[13] This led to the "collapse of rural order" in Anatolia;[14] people left their villages and moved to cities in the region, but many migrated to the urban centers on the Bosphorus, the Aegean Sea, and the Black Sea. The migration particularly affected Armenians, who fled the brutality of the Celalis, which plundered monasteries and beat and tortured the population. The hardship described by Armenian historiographers and other Armenian sources of the time was exacerbated by extreme weather events and led to famine and even cannibalism.[15] Because of the increased mortality in the wake of the Celali uprisings and mass migration, the Armenian population declined drastically. The Armenian population in Tokat halved and in Sivas it even fell

---

[11] Sam White, *The Climate of Rebellion in the Early Modern Ottoman Empire*, Studies in Environment and History, Cambridge, 2011, p. 164.

[12] Religion as explanation has been promoted by Griswold (esp. p. 215), but it did not persuade. The economic dimension is most prominent in the works of Mustafa Akdağ. His arguments are summed up in English by M. A. Cook, *Population Pressure in Rural Anatolia. 1450–1600*, London Oriental Series 27, London, New York, Toronto, 1972, pp. 30-42. The other explanatory factors can be found in: Halil İnalcik, "Military and Fiscal Transformation in the Ottoman Empire, 1600–1700", *Archivum Ottomanicum* 6:1980, pp. 292-97; White; Baki Tezcan, *The Second Ottoman Empire. Political and Social Transformation in the Early Modern World*, New York, 2010, 144f.

[13] Oktay Özel, *The Collapse of Rural Order in Ottoman Anatolia. Amasya 1576–1643*, The Ottoman Empire and Its Heritage 61, Leiden, 2016, pp. 89–133.

[14] The term is used by Özel in the abovementioned book.

[15] Henry Shapiro, *The Rise of the Western Armenian Diaspora in the Early Modern Ottoman Empire. From Refugee Crisis to Renaissance in the 17th Century*, Edinburgh, 2022, pp. 47-59; Griswold, 49f.

from 2000 to 600 households.[16] The migration, which has been termed the "Great Armenian Flight", led to Armenians settling in such diverse places as Egypt, Rumelia, the Crimea, Poland, the Black Sea coast or Belgrade.[17] Most, however, moved to the Aegean coast and the Bosporus. The poet Azaria wrote in his history of the Celali revolts that "Istanbul became very full".[18] His laments are supported by the numbers presented by the Armenian traveler Simēon Lehac'i, who noted that before the flight there were only 80 Armenian households in Istanbul, but after the migration 40,000 new Armenian households were registered.[19]

The massive migration of Armenians thus led to the establishment of a Western Armenian diaspora around the straits, the Marmara Sea and the Aegean; Istanbul especially became the focal point of Western Armenian culture. The newly arrived were often forced to find their places in unfavorable surroundings, where they came into conflict with the Ottoman authorities and the Greek-orthodox population (e.g., over the rights to build a church).[20] Also in the Armenian community itself animosities between those already established in Istanbul and the newcomers, often economically more prosperous than the former, escalated.[21] Therefore, the newly arrived were forced to a more competitive way of life. Increasingly mobile and risk-taking merchants, in due course, found their way to other areas as well. They formed the backbone of the merchants in Aleppo[22],and they also went to the Holy Roman Empire and Vienna.

Taking a step back, it is also necessary to pay attention to similarly decisive events in the Armenian Highlands that happened at the same time as the Celali revolts. Between 1603 and 1618 the Ottoman-Safavid War – one in a successive range of clashes between the two neighboring empires – was fought primarily in the Caucasian borderlands. Shah Abbas I had wished to restore the Safavid Empire to past glory and, after consolidating his position and defeating tribes to the north, he took up hostilities against the powerful neighbor. But the war went not as Abbas I had assumed, as the Ottoman

---

[16] Simēon Lehac'i, *The Travel Accounts of Simēon of Poland*, ed. and transl. George Bournoutian, Costa Mesa, CA, 2007, 168f.

[17] Shapiro, pp. 65–67.

[18] Cited in Shapiro, p. 65.

[19] Lehac'i, p. 33.

[20] Shapiro, pp. 87-94, 107-11, 113-18.

[21] Hagop Levon Barsoumian, *The Armenian Amiras of the Ottoman Empire*, Yerevan, 2006, p. 33, http://digilib.aua.am/book/2655/3152/22887. These two groups are called *nersec'i* (insiders) and *drsec'i* (outsiders) respectively.

[22] Bruce Masters, *Christians and Jews in the Ottoman Arab World. The Roots of Sectarianism*, Cambridge Studies in Islamic Civilization, New York, 2001, pp. 71-80.

general Sinan Paşa put up a considerable army and drove the Safavids back and out of the central Armenian Highlands.[23] In this phase of the war, the Safavids resorted to scorched-earth tactics. These tactics were a common feature of the Ottoman-Safavid conflicts, in which both sides used them repeatedly and caused economic crises and even complete destruction of certain towns.[24] In 1604, Abbas I commissioned the deportation of Armenians, especially those living in the city Julfa (Armenian *Jˇuğa*) on the river Araxes, who had been engaged in the silk trade for over a century.[25] This deportation has been convincingly explained as an initially improvised action in connection with prior scorched-earth tactics, but one of which soon the Safavids took advantage.[26] The Julfa Armenians were in subsequent years resettled in Isfahan, where they formed their own town fittingly named New Julfa (Armenian *Nor Jˇuğa*). Nowadays it is a city quarter of Isfahan. Other Armenians, who were similarly deported, often faced a much worse destiny than the 5000 to 10,000 resettled Julfanians, and many died during the deportation.[27] The fact that the Julfanians received better treatment is a sign that the Safavids soon realized the positive impact of the resettlement on their economy. Under the Shah's patronage, the Armenians could continue their commercial activity. They monopolized the Persian silk trade and established trade networks in the Mediterranean, Western Europe, Russia, and even South East Asia and the Americas.[28]

Both the Celali revolts and the deportation of Armenians in the course of the Ottoman-Safavid War triggered the establishment of a commercial elite, highly mobile, risk-taking and assertive. Members of this commercial elite were able to move effortlessly between different Christian and Islamic

---

[23] David Blow, *Shah Abbas. The Ruthless King Who Became an Iranian Legend*, London, New York, 2009, pp. 75-80.

[24] Edmund M. Herzig, "The Rise of the Julfa Merchants in the Late Sixteenth Century", *Safavid Persia. The History and Politics of an Islamic Society*, ed. Charles Melville, Pembroke Persian Papers 4, London, New York, 1996, p. 309.

[25] Sebouh Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean. The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, The California World History Library, Berkeley, CA, 2011, pp. 26-34; Vazken S. Ghougassian, "Julfa i. Safavid Period", *Encyclopaedia Iranica*, 2009, https://www.iranicaonline.org/articles/julfa-i-safavid-period; Dickran Kouymjian, "Armenia from 1375 to 1604", in *The Armenian People from Ancient to Modern Times, vol. 2, Foreign Dominion to Statehood. The Fifteenth Century to the Twentieth Century*, ed. Richard G. Hovannisian, New York, 2004, 20f.

[26] Aslanian, pp. 33-36.

[27] Andrew J. Newman, *Safavid Iran. Rebirth of a Persian Empire*, London, 2009, p. 61.

[28] Aslanian, Ghougassian, Herzig.

cultures and domains, often spoke several languages and maintained far-reaching networks. They served in different positions in various courts all over Europe and could be active as mediators in a variety of relationships.[29] In Vienna especially, Armenians were present in the 17th century. The number of the Viennese Armenians was never exceedingly high, hardly surpassing 30 or 40 people; however, they proved to be extraordinarily important for the Viennese court.[30] Some of them were diplomatic couriers between Istanbul and Vienna (*türkische Hofkuriere*) and were thus in a close relationship with the Imperial War Council, which needed their services.[31] Diodato and Shahin were of even greater importance. Their integration into the War of the Holy League is partly a logical consequence of this.

UNFAVORABLE SURROUNDINGS IN VIENNA

The situation for Armenians in Vienna was by and large unfavorable, for they were met with various stereotypes, allegations, and prosecutions. Negative perceptions shaped to a large extent the realities of the life of Armenians in Vienna. Being perceived as outsiders who clad themselves differently, used different and for the common Viennese incomprehensible languages, and wrote in non-readable scripts, they were often accused of secretly working for the Ottomans. Armenians who were active for the Imperial War Council were repeatedly confronted with mistrust. The fact that Armenians conducted diplomatic courier services, gathered information and travelled often between Vienna and Istanbul gave rise to the suspicion that they were double agents who informed not only the War Council but also the Ottomans. Even years before Johannes Diodato got the official mission to form an espionage network, he was accused by the imperial resident in Istanbul, Philipp Beris, of having sheltered another Armenian, who was in Beris's eyes an Ottoman spy, and of having given him valuable information. Beris wrote in 1671 to Montecuccoli, then president of the War Council:

> Finally [...], it should not be concealed what a dangerous matter it is with those Rascians who are staying and settling in Vienna, who obtain *Hoffreiheit* and protective decrees under a false pretext, and are nothing but spies; it recently happened that a renegade Armenian from Galata named Menes stayed in Vienna for a long time with another Rascian or Armenian, [...] whose name is Johanes Deodato, and who pretends to be a

[29] Aslanian, p. 66.

[30] Karl Teply, "Ein vergessenes Kapitel Wiener Geschichte: Die erste armenische Kolonie in Wien", *Handes Amsorya* 87:1973, col. 459-90.

[31] Dóra Kerekes, "Im Auftrag des Kaisers", *Armenier im östlichen Europa. Eine Anthologie*, ed. Tamara Ganjalyan, Stefan Troebst, and Bálint Kovács, Vienna, Cologne, Weimar, 2018, pp. 308-31; Teply, *Einführung*.

Catholic; since he spies enough, this Deodato procured a passport for Menes [...], with which passport he traveled from there to Rome, and afterwards again to Venice; and arriving here via Ragusa, now [he] walks here [in Istanbul] like a Turk and is called Mahomet; [he] knows more about Vienna than someone who has lived there for 10 years.[32]

Apart from the specific accusations against Diodato, which had no repercussions for him,[33] this passage is remarkable for two reasons: First, Beris transmits anti-Armenian stereotypes and generalizations. He regards all Armenians as being spies (for the Ottomans) and as having obtained the *Hoffreiheit* – which means the right for merchants to supply the imperial court with certain goods and not being subject to the regulations applicable to civic merchants[34] – by fraud. Furthermore, in his eyes Armenians were only pretending to be Catholics. Second, Beris equates Armenians and Rascians (*Raizen*), even though the latter were Orthodox Serbs or – sometimes the term was used more broadly – Orthodox Southern Slavs. The difficult religious landscape in south-eastern Europe and the Ottoman Empire and the different religious affiliation of Armenians were hard for the Viennese to understand and – in this case – also for the imperial resident, who had more knowledge about the region and its inhabitants than the common German. This equalization of Armenians and Rascians occurs frequently in 17th century sources.

The most prominent equalization is the so-called "Raizenpatent" of 1678. This decree was issued by the Lower Austrian administration with recourse to the emperor and expelled all Rascians from Vienna.[35] The decree provided exceptions for only three of those "Rascians", namely Johannes Diodato, Constantin Ciriac and Franz Georg Koltschitzky – or "Franciscii Georgii Goldtschüz", as the source reads. The latter served as scout during the second Ottoman siege of Vienna in 1683. All three were spared exile because of their importance as merchants. Diodato and Ciriac had *Hoffreiheit*, and Koltschitzky had worked as translator for the "Erste privilegierte Orientalische Kompagnie", an influential merchant society that traded primarily with the

[32] Beris to Montecuccoli, Belgrade, March 31, 1671. OeStA Vienna, HHStA, Turcica I 142, 1671/1–4, fol. 179v–180r.

[33] Teply, *Einführung*, p. 80.

[34] Felix Czeike, *Historisches Lexikon Wien in 5 Bänden, vol. 3, Ha-La*, Wien: Kremayr & Scheriau, 1994, 228f.

[35] Walter Sturminger, "Die Kundschafter zur Zeit der zweiten Türkenbelagerung Wiens im Jahre 1683", *Festschrift zur Feier des 200jährigen Bestandes des Haus-, Hof und Staatsarchivs*, ed. Leo Santifaller, vol. 2, Vienna, 1951, p. 362.

Ottoman Empire.[36] The former two were both Armenians, and as for Koltschitzky, his Armenian-ness was postulated by historians, although it cannot be fully proven.[37] Of the other persons named in the decree, who were expelled from Vienna, at least two were confirmed Armenians (Peter Georgi and Ahslan Michal), two others presumably as well (Gregori Isaac, Daniel Riehs).[38] All in all, the decree mentions more Armenians than non-Armenians, but all of them are summed up as being Rascians.

The expulsion of Armenians from Vienna was thus a real threat. Even though Armenians could soon again settle in the imperial capital, be merchants or serve coffee, their situation in Vienna was never fully secure. Diodato, who had been spared in 1678, was still reminded that he could also be expelled if he continued housing possible spies and upholding "suspicious correspondence"; "in the adverse case he would be ipso facto deprived of his *Hoffreiheit* and he would be, like the others, sent away from here".[39] Kalust Nurveli Shahin had not been in Vienna when the decree was issued, only arriving there a few months afterwards. Still the prospect of being exiled must have troubled him. Some years later, in 1684, he was put on trial and barely escaped conviction.[40] In 1689–90 Diodato faced the same destiny and was spared only due to the emperor, who trusted him because of his merits.[41] This is all the more important because it showcases how Armenians could come under intense pressure, be expelled, imprisoned or even sentenced to death.

Two other points merit attention. First of all, due to their assertive attitude, Viennese Armenians frequently came into conflict. They quarreled both with other Armenians and with non-Armenians. Their proneness to litigation did not improve their general position.[42] Moreover, previous allies and patrons could turn into enemies, as happened with the imperial

---

[36] Teply, *Einführung*, p. 12.

[37] Karl Teply, "Georg Franz Koltschitzky und Georg Thomas Michaelowitz – Abschied von eingewurzelten Legenden", *Museum Perchtoldsdorf*, Perchtoldsdorf, 1973, pp. 179-220; Teply, *Einführung*, 7f, 15f; Isabella Ackerl, *Von Türken belagert – von Christen entsetzt. Das belagerte Wien 1683*, Vienna, 1983, pp. 100-2.

[38] Teply, *Einführung*, p. 16.

[39] Cit. in Sturminger, "Kundschafter", p. 362.

[40] Meninski to Hofkriegsrat, 1685. GLA Karlsruhe, 46/3555/194; Teply, *Einführung*, 97f.

[41] Hinterlassener Hofkriegsrat to Anwesender Hofkriegsrat, Vienna, 31 December 1689. OeStA Vienna, KA, HKR HR Records 70, 1690, Outgoing letters January Nr. 45, fol. 8r; OeStA Vienna, KA, HKR HR Book 384, 1690 Protocol of incoming letters, fol. 189v, 201r; Teply, *Einführung*, pp. 146–52.

[42] The protocols of the Hofkriegsrat, listing all incoming and outgoing letters, mention especially Diodato very often, mostly in respect to his claims and lawsuits against opponents. See also Teply, *Einführung*.

interpreter for Oriental languages, Franz de Mesgnien-Meninski, who was also responsible for organizing Habsburg espionage against the Ottoman Empire. Once Meninski fell out with Diodato and Shahin, he used every possible maneuver to damage them. Especially noteworthy are his accusations written in a 30-page-letter addressed to the War Council in 1685. He accused the two Armenians of being spies for the Ottoman enemy; concerning Shahin he even claimed him to be an Ottoman subject, a "servant of a Turk" or a "servant of the Ottoman barbarians".[43] Meninski complained about Shahin's lies, claimed that he had been counterfeiting money together with Diodato, that he was an adulterer in Ottoman Hungary and that, when Shahin had come to Vienna in 1678, he was directly involved in bringing the plague to the city. In a more general vein, he stated that Ottomans did not trust Armenians, thought of them as a "dishonorable people" and would never tell them secrets.[44] These accusations were completely unfounded, but it is noteworthy that Meninski, as a person who had cultivated good relations with Armenians, could switch immediately to a broad catalog of anti-Armenian accusations as soon as he came into conflict with them.

The second point of interest is that Armenians' achievements were not acknowledged by all. Their efforts during the siege of Buda of 1686 especially were played down. Some, such as the Venetian ambassador to Vienna, Federico Cornaro, did not believe that the Armenians could transmit important information or that they could ever be trusted, because they were disloyal.[45] Cornaro did know what Armenians had planned and which strategically relevant information they transmitted, but he still chose to distrust them. When the Armenians blew up the ammunition's depot in Buda, most of the imperial soldiers present, and even the generals Charles V of Lorraine, Max Emanuel of Bavaria and Louis of Bade, did not believe that it was the Armenians' achievement; rather they speculated a cannonball had hit the depot.[46] Several pamphlets[47] and even modern historians[48] took up their interpretation.

---

[43] Meninski to Hofkriegsrat, 1685. GLA Karlsruhe, 46/3555/194, fol. 3r, 8v.

[44] Ibid., fol. 2v.

[45] Federico Cornaro, *Berichte des Venetianischen Gesandten Friedrich von Cornaro Über die Belagerung und Rückeroberung Ofens im Jahre 1686. Avvisi del cavaliere Federico Cornaro ambasciatore Veneto circa l'assedio e la presa della fortezza di Buda nell' anno 1686*, ed. Sigmund von Bubics, Budapest, 1891, p. 214, https://www.digitale-sammlungen.de/de/view/bsb11472148?page=1 .

[46] Copy of a letter of Max Emanuel of Bavaria, 22 July 1686. GLA Karlsruhe, 46/3559/62; Copy of a letter of Louis of Bade, 24 July 1686. GLA Karlsruhe, 46/3559/63; Charles of Lorraine, *Lotharingiai Károly Hadinaplója Buda Visszafoglalásáról 1686. Magjelent Buda Ostromának 300. Évfordulójára [War*

Given these premises, it is clear that Armenians were under a constant pressure to assert themselves and prove their value to the imperial court to escape exile or trial, while at the same time their achievements were hardly acknowledged. These unfavorable surroundings were of great importance; however, they do not explain completely why Armenians engaged in the war; other factors are of equal importance.

PERSONAL NETWORKS AND INTEGRATION OF ARMENIANS INTO THE IMPERIAL COURT

Personal networks are a very important factor for understanding Armenian involvement in the War of the Holy League. In fact, the most important Armenians involved in the Habsburg war effort were all drawn into the conflict at the instigation of others. Especially important are the relationships of the Armenians with members of the imperial court.

Johannes Diodato already had contacts with the imperial court before 1678; his patrons there helped him, without doubt, to survive the "Raizenpatent" unscathed. No later than 1670 Diodato proposed a lucrative deal to the President of the Imperial Chamber (*Hofkammer*), Ludwig Georg Count Sinzendorf, and the Inspector of the Vienna Mint, Johann Gabriel von Selb. Diodato promised to procure silver from the Ottoman Empire with the help of Rascians and to deliver it exclusively to the Vienna Mint. Both Sinzendorf and Selb agreed and felt that this would be of great benefit to the

---

diary of Charles of Lorraine on the recapture of Buda in 1686, published for the 300th anniversary of the siege of Buda], Budapest, 1986, p. 346; Cornaro, p. 223.

[47] *An Historical Description of the Glorious Conquest of the City of Buda, the Capital City of the Kingdom of Hungary, by the Victorious Arms of the Thrice Illustrious and Invincible Emperor Leopold I, under the Conduct of His Most Serene Highness, the Duke of Lorraine, and the Elector of Bavaria*, London, 1686, p. 34, https://www.proquest.com/docview/2264208956/13191091/; *Diarium Einer Kurtzen und Warhafftigen Relation Alles Dessen / was sich bey Belagerung und Eroberung der Haupt-Statt und Vestung Ofen / Und kurz hernach zwischen den Christlichen und Türckischen Armeen von tag zu tag begeben* (1686), p. 19, https://www.digitale-sammlungen.de/de/details/bsb11190300; Casimiro Freschot, *Ristretto dell'historia d'Ungheria, E singolarmente le cose occorseui sotto il Regno dell'Augusto Leopoldo sino alla trionfante prea di Buda*, Bologna, 1686, p. 442.

[48] Freiherr Philipp Röder von Diersburg, *Des Markgrafen Ludwig Wilhelm von Baden Feldzüge wider die Türken, vol. 1*, Karlsruhe, 1839, pp. 198-204; Horst Glassl, "Der bayerische Anteil an der Eroberung Budapests im Jahre 1686", *Ungarn-Jahrbuch* 7, 1976, p. 128; Jean Bérenger, "Le siège de Bude de 1686", *Dix-septième siècle* 229, No. 4:2005, p. 601.

emperor.[49] Bringing silver to Vienna had been primarily a Jewish responsibility, but in 1669 Emperor Leopold I had expelled the Jews from Vienna,[50] thus leaving a gap that Diodato sought to fill. In the following years, he purportedly imported 80 million marks in silver, although he could not deliver as much as was needed to ensure regular operation of the Viennese mint.[51] Still he rose to importance and became a relevant merchant with Hoffreiheit who created a trade network between Vienna and Istanbul based on Rascian and Armenian merchants working primarily for him (but not always).[52] Probably due to this, Count Alberto Caprara asked Diodato to be part of his entourage when the Count got the assignment as a special diplomat for Istanbul.[53]



One of the espionage letters written by Gabriel Shebin in 1686 showing the originally visible letters in black ink and the invisible ink in brown. When Diodato made the latter visible by using a brazier, this caused holes in the document (Source: OeStA Vienna, HHStA, Hungarica, Misc. 427-32, fol. 123)

[49] Diodato to Emperor Joseph I, probably 1705. WStLA Vienna, Alte Registratur/Old Registry, A1 – Consolidated records: 70/1710 [henceforth Diodato 1705], fol. 2r.

[50] Barbara Staudinger, "Von Silberhändlern und Münzjuden", *David. Jüdische Kulturzeitschrift* 68, April 2006, pp. 28-30.

[51] Diodato 1705, fol. 2v; Staudinger, "Von Silberhändlern und Münzjuden", p. 30.

[52] One of Diodato's 'servants' (as he calls them) was Kyro, of whom Diodato fell foul after 1692, because he not only found out that Kyro had not kept any records at all about the goods imported in Diodato's name, but had even "slovenly wasted" 15,000 guilders. Diodato litigated against Kyro from around 1693 till 1701 (Diodato 1705, fol. 8; Teply, *Einführung*, 156f).

[53] Diodato 1705, fol. 4r.

The Caprara mission of 1682–83 was instigated to extend the peace treaty of Vasvár (1664) with the Ottoman Empire, which was due to expire. The Imperial War Council and especially its president, Hermann of Bade, were keen to prolong the peace in the East in order to turn the entire focus on Louis XIV's expansionist policy.[54] Thus they also chose to believe for a long time the Ottoman government's putative assurances of peace, although the Habsburg resident in Istanbul, Kunitz, and later also Caprara, warned that the grand vizier was "very determined" to wage war.[55] Consequently, the Caprara mission failed.[56]

The sources suggest that Diodato belonged to the more important members of the Caprara mission. He took part in the parade that Kunitz and Caprara had to perform prior to their first conference with the grand vizier.[57] Furthermore, he was able to act as Caprara's informant on several occasions, using his language skills to his advantage. When the sultan summoned the watchmaker of the legation to the seraglio to repair a watch, Caprara sent Diodato with him as a translator. In the sultan's palace, Diodato was able to talk to a "nobleman of the seraglio" about the Ottomans' war plans. The latter initially said that Győr was probably the target, but informed Diodato the next day that the Grand Vizier was "making very high pretensions".[58] This was the first indication that Kara Mustafa was already making war plans that went beyond Győr.

Diodato learned the extent of these plans during another confidential conversation with an Ottoman court official. This court official, now serving as *kapicibaşi* in the palace and thus supervising the palace guard, had been a childhood friend of Diodato and was possibly also an Armenian. The *kapicibaşi* sent for Diodato when he and Caprara were in Edirne during the fall and winter of 1682/83. There he told him that Kara Mustafa had long been planning the attack on Vienna, and he advised him to flee the city with his family; otherwise, they could end up in slavery. Diodato immediately went

---

[54] Barker, pp. 122, 133-35.

[55] Kunitz to Hofkriegsrat, Istanbul, 12 July 1681. OeStA Vienna, HHStA, Turcica I 151, 1681/4–8, fol. 80; Kunitz to Hofkriegsrat, Istanbul, 31 July 1681. OeStA Vienna, HHStA, Turcica I 151, 1681/4-8, fol. 83r; Caprara to Emperor Leopold I, Istanbul, 10 March 1682. OeStA Vienna, HHStA, Turcica I 151, 1682/5–6, fol 15r.

[56] For English narratives of the Caprara mission see Stoye, *Siege of Vienna*, pp. 48-52; Barker, pp. 122-35.

[57] OeStA Vienna, HHStA, Turcica I 151, 1682/5–6, fol 51, 90.

[58] Caprara to Emperor Leopold I, Istanbul, 16 July 1682. OeStA Vienna, HHStA, Turcica I 152, 1682/7–8, fol. 73v, 76r; Caprara to Emperor Leopold I, Istanbul, 19 October 1682. OeStA Vienna, HHStA, Turcica I 152, 1682/9–12, fol. 84r.

to inform Caprara, who passed the information in an encrypted letter to the emperor.[59]

These two examples show why Caprara had requested Diodato's participation in the legation. His language skills and good contacts enabled him to obtain information that Caprara or other members of the legation found difficult to access. He proved to be so valuable and reliable to Caprara that the emissary suggested on 2 May 1683 in a letter to the court to send Diodato on a special mission to Aleppo, then part of the Safavid Empire, as he spoke all the languages required for this and, being a merchant, he would probably not attract attention.[60] This special mission was likely part of the efforts to conclude an alliance with Safavid Persia against the Ottoman Empire;[61] however, Diodato was not chosen for this mission.

Caprara's patronage of the Armenian even went further than this. In May 1684 or 1685[62] Caprara summoned Diodato and told him the emperor requested him to send informants to Buda and Belgrade and thus to establish an espionage network. Caprara referred to Hieronymus Scalvinoni, who was imperial chamberlain, and Scalvinoni explained the Emperor's order, "you ought to send one of your men to Turkey so that this one might notify [us] here of what occurs and happens there."[63] Diodato did as he was instructed, and in the years afterwards the War Council issued orders that Diodato's "men", their merchant goods and letters could pass undisturbed.[64] Therefore, Diodato's participation in the Caprara mission was a turning point that opened the way for him directly into the War Council or even to the Emperor, who granted Diodato an audience in 1686. In fact, it seems likely that Caprara suggested Diodato as the focal point of the espionage network, once the court discussed how it should be established, for Caprara had recommended the trustworthy Armenian previously. Thus, personal relations are an important explanation for Diodato's step-by-step integration into the war efforts against the Ottoman Empire.

The espionage network established by Diodato flourished especially during the year 1686, when the Imperial War Council needed him to infiltrate Buda. By this time, Diodato was already on good terms with the president of the

---

[59] Diodato 1705, fol. 5.

[60] Caprara to Emperor Leopold I, Edirne, 2 March 1683. OeStA Vienna, HHStA, Turcica I 152, 1683/1–3, fol. 131v.

[61] Barker, 368f.

[62] Diodato gives wrongly the date of May 1688, which is impossible for various reasons, the most important of which is that Buda had already been conquered in that year and Belgrade fell only a few months after May 1688.

[63] Diodato 1705, fol. 6.

[64] OeStA Vienna, KA, HKR HR Book 371, 1685 Protocol of incoming letters, fol. 333v.

Council, Hermann of Bade, who patronized him.[65] In any case, the failed siege of Buda in 1684 made the War Council realize that the next attack on the main Ottoman fortress in Hungary had to be better prepared and supported with a new espionage mission. Diodato knew an Armenian residing in Buda, Karakaş, who had probably already been part of his merchant network and supplied him with information previously.[66] Also he used for his purposes the Armenian adventurer Gabriel Shebin, who proved to be his most important helper in implementing the espionage mission. Shebin had come to Vienna in 1685 in dubious circumstances[67] and was probably indebted both to Diodato and Kalust Nurveli Shahin: Diodato had redeemed the Armenian when he had been arrested in Esztergom and Gabriel, once he was in Vienna, resided at Shahin's quarters and had to pay him 26 guilders for lodging.[68] In this problematic situation, both Diodato and Shahin proposed to him to go as a spy to Buda. Shebin's motivation for agreeing to Diodato's plan will be discussed in the section below in more detail, but at this point it is important to note that Shebin was involved in the war efforts because Diodato knew him, and that Karakaş served as an informant for the same reason.

Karakaş had refused to write spy letters personally, allegedly because he was illiterate,[69] but rather because he wanted to conceal his contribution to such a risky mission as much as possible. Only in this way is it explainable that Diodato even wrote that Karakaş did not know what the mission encompassed.[70] In reality, Karakaş helped Gabriel Shebin as much as he could; he had the necessary contacts with the officer responsible for the powder magazine, the *çorbaçi,* Ahmed Ağa, and therefore could – together with Shebin – instigate him to set fire to it.[71] Also the fact that Karakaş had been an informant for Diodato before and that in 1687 he agreed to go to Belgrade for another spying mission cast doubt on Karakaş's purported

---

[65] Hermann's patronage of Armenians was met with resentments; for example, the Venetian volunteer Francesco Grimani, who fought in the siege of Buda in 1686, wrote to Cornaro that the Margrave of Bade had always supported the Armenians' projects, even though most others did not trust them at all (Cornaro, p. 225).

[66] Diodato 1705, fol. 7v.

[67] The details of Shebin's arrival in Vienna cannot be summarized here; for that purpose see Diodato to Emperor Leopold I, probably 1686. OeStA Vienna, HHStA, Turcica I 153, 1686 [henceforth Diodato 1686], fol. 82v-84r; Teply, "Gabriel"; Teply, *Einführung*, pp. 120-23.

[68] Teply, "Gabriel", col. 222f.

[69] Diodato 1705, fol. 10r.

[70] Diodato 1686, fol. 85v.

[71] Diodato 1705, fol. 11v-12r.

illiteracy.[72] Be that as it may, Shebin and Karakaş developedsome lively activity in Buda during that year, which not only encompassed the mentioned detonation of the powder magazine on 22 July 1686, but also writing various letters in the Armenian language by using invisible ink that Diodato could make visible later in Vienna.[73] In these letters, Shebin described the location of the towers and other fortifications as well as the mines and proposed advantageous ways of attacking and storming the fortress of Buda.[74]

Shebin's letters reached Vienna mostly via the normal postal traffic, but for getting them out of the heavily guarded fortress, he needed scouts and renegades who could pass through the front lines. Of these confidants, several were Armenians, who also informed the imperial forces beleaguering the fortress of what happened inside or gave information on the severity of the detonation that demolished the powder magazine.[75] These Armenians – most of whom are not known by name[76] – show that Gabriel Shebin and

---

[72] Teply, *Einführung*, p. 141.

[73] Diodato 1705, fol. 12v; Hamasasp Oskian, "Nersēs V. Erewanc'i ew Bowdapesti azatagrowmi hamar growac hayerēn cackagir namaknerə", *Handes Amsorya*, 7-9:1967, col. 257-82.

[74] OeStA Vienna, HHStA, Turcica I 152, 1683/4–12, fol. 58–73; OeStA Vienna, HHStA, Turcica I 153, 1686, fol. 31-36; OeStA Vienna, HHStA, Hungarica, Misc. 427-32. See also Teply, *Einführung*, pp. 125-26.

[75] Cornaro, pp. 189, 215–20; Charles of Lorraine, p. 348; *Warhafftig und außführlicher Bericht Alles dessen / Was bey der Anno 1686. vorgenommenen Belägerung der Stadt Ofen Von Anfang derselben biß zu der den 2. Sept. erfolgten glücklichen Eroberung so wol auf Kayserlicher als Chur-Bayrischer und Chur-Brandenburgischer Seite von Tag zu Tag merckwürdiges passiret*, Augsburg, 1686, p. 29, https://www.digitale-sammlungen.de/de/details/bsb10911204; *Diarium, Das ist, Kurtze und warhafftige Erzehlung alles des Jenigen / Was Zeit-währender Belägerung der gewaltigen Vestung und Schlüssel des Ottomannischen Reichs in Ungarn / Ofen / sonst Buda genannt / von Tag zu Tag sich zugetragen*, 1687, p. 31, https://www.proquest.com/docview/2111775376 / .

[76] The only Armenian scout known by name was Gregor Melchior, who came from Safavid Persia and had a wife and children in Vienna as well as a brother, who had asked the War Council in 1686 to be included as a soldier in the Imperial army. Gregor Melchior was the most important of Gabriel Shebin's scouts in Buda, transmitted various letters, and in July 1686 he even brought the letters all the way to Vienna and was interrogated in the imperial capital. His report about the situation in the beleaguered fortress is fascinating evidence (Cornaro, pp. 215-20). More information about Gregior Melchior can be found in: OeStA Vienna, KA, HKR HR Book 372, 1686 Protocol of outgoing letters, fol. 81v; OeStA Vienna, KA, HKR HR Book 374, 1687 Protocol of outgoing letters, fol. 444v; OeStA Vienna, KA, HKR HR Book 376/2, 1688 Protocol of outgoing letters, fol. 611v; Aršak Alpoyačean, *Patmut'iwn Ewdokioy Hayots'*, Cairo, 1952, p. 1061.

Karakaş did not operate in a vacuum; rather it is noticeable from an overall perspective that a number of Armenians in Buda sympathized with the Habsburgs. The Venetian volunteer Grimani reported that one of the letters bore more than one signature,[77] so not only Gabriel Shebin but also other Armenians must have signed it. At the very least, the court in Vienna recognized "the active partisanship of the Armenians of Buda for the cause of Christianity".[78] According to a contemporary pamphlet, this involvement can be attributed to the Armenians' fear that during the siege of Buda they might suffer like they had during the siege of Nové Zámky in 1685. Back then the pasha of that fortress had ordered the Christians to do very dangerous work on the fortifications, during which many people lost their lives.[79] However, personal networks and contacts seem also to be a likely explanation for the involvement of so many Armenians, although this cannot be ascertained.

GAINING PERSONAL PROFITS

Many Viennese Armenians, most prominently Diodato, were merchants. Gaining personal profits and trying to accumulate wealth was an important part of their life, so it comes as no surprise that personal profits are as well an explanation for Armenian involvement in the War of the Holy League.

When imperial chamberlain Scalvinoni asked Diodato to establish his espionage network, he also brought forward that it was now time for Diodato to make his fortune – at least according to Diodato's own account of the meeting written down two decades later.[80] Scalvinoni also promised Diodato to pay all the correspondents the latter needed with a hundred ducats yearly, funds that he later, again according to Diodato, could not mobilize.[81] It is instructive, however, that money was of such prominence in the recruitment of Armenian spies. Even if Diodato's rendition likely exaggerates fortune-making to a point where it is of the greatest importance even for Scalvinoni, its role in the recruitment process is plausible. Diodato could establish his espionage network exactly because he could promise these large sums.

Personal profits played a prominent role also during the recruitment of Gabriel Shebin. When Gabriel came to Vienna in 1685, Johannes Diodato and Kalust Nurveli Shahin were at loggerheads with each other: Shahin had established another espionage network based on his brother Vardan and other Armenians in Buda and utilized his good contacts with Ottoman officials

---

[77] Cornaro, p. 198.
[78] Teply, *Einführung*, p. 132.
[79] *Warhafftig und außführlicher Bericht*, 27.
[80] Diodato 1705, fol. 6v.
[81] Diodato 1705, fol. 8r.

in the fortress; Diodato envied him and tried to monopolize all Armenian communication channels with Buda. He even wrote to Shahin's contacts that the latter was now in disgrace and that it was fruitless to write any more letters to him.[82] Shahin was deeply annoyed and sought to harm his competitor during the following year. Hence, when Gabriel Shebin arrived in Vienna, both Diodato and Shahin, in contest with each other, tried to utilize the newcomer and to recruit him for the spying mission. Shahin introduced Gabriel Shebin to the counts Brandeis, Bercka and Ricciardi, who presented him with the prospect of "mountains of gold" as payment for his possible future activities in Buda.[83] It is not known what Diodato promised him, but Gabriel Shebin chose his side, so Diodato's offer could not have been less than that of Shahin and his partners. Clearly promising personal profits played a decisive role in recruiting Gabriel Shebin.

It cannot be ascertained in all cases what was offered to Armenians and what profits they eventually earned. There are numerous letters of Armenians addressed to the War Council in which they urged that the promised sums should be paid. The War Council, unable to pay its important spies from its own budget, could often only pass the letters on to the Imperial Chamber. However, the Chamber was by and large not able or willing to meet all demands and pay all sums that had been promised during the years of war. Consequently, the Viennese Armenians – owing to their insistent nature – wrote even more letters.[84] In some cases the demands were likely even higher than the previous promises, for Armenians sought to profit from the partly confusing situation as much as possible. The best example is again Gabriel Shebin who wrote in 1687 to the War Council that he had personally paid the *çorbaçi* Ahmed Ağa 1000 ducats to lay fire to the powder magazine in Buda.[85] This ludicrous claim, which was clearly wrong and could be easily refuted by Diodato,[86] fits accordingly with other equally doubtful stories told by the

---

[82] Interrogation protocol of Schahin, 14 July 1686. GLA Karlsruhe, 46/3453/39.

[83] Diodato 1686, fol. 84v.

[84] OeStA Vienna, KA, HKR HR Book 374, 1687 Protocol of outgoing letters, fol. 380r, 413v, 444v, 468r, 639v; OeStA Vienna, KA, HKR HR Book 375, 1687 Protocol of incoming letters, fol. 80r, 466v; OeStA Vienna, KA, HKR HR Book 376/1, 1688 Protocol of outgoing letters, fol. 239v; Teply, *Einführung*, 138f.

[85] OeStA Vienna, KA, HKR HR Book 374, 1687 Protocol of outgoing letters, fol. 427v; Diodato 1705, fol. 16r; Teply, *Einführung*, p. 138.

[86] In reality Diodato had sent a letter with his seal to the *çorbaçi* and thus satisfied his needs. Gabriel Shebin himself had arrived, almost destitute, in Vienna in 1685 and was indebted to various people; it would be extremely unlikely that he had procured such a large sum as 1000 ducats from an unknown source in such a short time. For Diodato's account see Diodato 1705, fol. 13r, 15r.

Armenian adventurer. Another example of his faulty tales is the one in which he fooled the pasha in Buda in 1686 and lied about his true incentives. Then he had claimed to have been ambushed by imperial troops and to have lost all his possessions. The pasha was moved to tears, gave Gabriel Shebin all he wanted and did not suspect that in reality he had been sent to spy for the Imperial War Council.[87]

Overall, not many Armenians got what they had wanted. Some, most prominently Diodato, realized that their claims would never be met. So Diodato changed tracks and settled for a licence to open the first Viennese coffeehouse, thereby gaining for some years a virtual monopoly on selling coffee. Granting him a licence was much easier for the imperial authorities than finding money and paying the promised sum.[88] Others like Gabriel Shebin continued insisting on money they would never get.

RELIGIOUS AFFILIATION

It is a non-trivial factor that many Armenians living in Vienna – if not all, but their religion is not always known – were of Catholic faith. Since their individual biographies can often only be reconstructed in part, in most cases it is not possible to ascertain whether they converted to Catholicism in Vienna or if they were Catholic already prior to their arrival in Catholic-dominated countries of Europe. The latter option is true for Diodato, who was the son of an already-Catholic Armenian merchant in Istanbul.[89] Whereas believing in the Catholic faith was an advantage in Vienna, it proved to be detrimental in Istanbul, where Armenian Catholics were a small minority and were persecuted in the latter half of the 17th and in the 18th century.[90] Especially in the 18th century, clergymen of the Apostolic Armenian millet supported or even fueled the persecution of Catholic Armenians by Ottoman authorities and proved to be loyal to the Sultan.[91] By and large, those Armenians of Apostolic Armenian faith stayed in the Ottoman Empire, while those of Catholic faith tended to be drawn to other Catholic countries in Europe. This

---

[87] Diodato 1686, fol. 85. The story was true insofar as Gabriel Shebin was in fact ambushed by marauding troops in the borderland between Habsburg and Ottoman Hungary, but all implications drawn from this were clearly false.

[88] Teply, *Einführung*, 105.

[89] Ibid., p. 61.

[90] Nerses Setian, "Eine Rechtfertigung der katholisch unierten armenischen Kirche aus der Geschichte", *Die Kirche Armeniens. Eine Volkskirche Zwischen Ost und West*, ed. Friedrich Heyer, Die Kirchen der Welt 18, Stuttgart, 1978, p. 161; Charles A. Frazee, *Catholics and Sultans. The Church and the Ottoman Empire 1453–1923*, Cambridge, 1983, pp. 179-82.

[91] Frazee, pp. 178-81.

observation is a first sign that religious affiliation is an explanation for Armenian involvement in the war on behalf of the Catholic European countries as well.

Religion also played a role among Viennese Armenians to account for their involvement in the War of the Holy League. In the already mentioned account of Diodato's meeting with Scalvinoni in 1684 or 1685, Scalvinoni referred to Diodato's ability to "serve the entire Christendom" by spying against the Ottomans.[92] Diodato was not the only one who referred to the common Christian religion as a worthwhile reason for being involved in the anti-Ottoman war efforts. Shahin boasted that soon he would "chase away the Turk and the Persian and release all Christians into liberty, who had wept under the yoke of these two tyrants for many centuries".[93] It cannot be determined if Shahin really believed that liberation of Armenians was possible and if religion was really a decisive point of consideration when Diodato or Shahin decided to establish espionage networks. Since they accounted for their motives only in letters directed to the Emperor or the Imperial War Council, letters which were written to trigger advantageous decisions of these bodies, they overemphasized certain points that seemed favorable to their cause.[94] However, it would be erroneous to simply deny the factor of religion in Armenian involvement. As seen above, the Catholic faith was in at least one case (Diodato) the basic trigger for resettlement in Vienna and thus, secondly, for involvement in the war for the Habsburgs and not the Ottomans.

ARMENIANS IN OTHER PRINCIPALITIES

Not only the Viennese Armenians, but also those living in other principalities, empires and dominions engaged in the War of the Holy League. However, since their involvement merits a study on its own,[95] the following remarks will only be cursory and serve to counterbalance the preceding study on Armenians in Vienna and to bear in mind that Armenian involvement surpassed the boundaries of the Habsburg lands. Also, it is important to stress that the four reasons for Armenian involvement found above are only partly transferrable to other principalities since, for instance, Armenians in the Ottoman Empire or the Polish-Lithuanian Commonwealth could never be

---

[92] Diodato 1705, fol. 6v.

[93] Meninski to Hofkriegsrat, 1685. GLA Karlsruhe, 46/3555/194, fol. 5r.

[94] For a discussion of the causes and the contents of these letters see Teply, *Einführung*, pp. 99-101, 173-75.

[95] Overall, the literature on Armenians working for the Ottomans in the War of the Holy League is even sparser than that about Viennese Armenians and their relations to the Imperial War Council and remains an understudied research topic.

threatened with expulsion in the same way as the Viennese Armenians with their much lower numbers.

In the Ottoman Empire, Armenians were regularly recruited as janissaries via the *devşirme* system, starting in 1464.[96] Some of them may have fought in the War of the Holy League against the League's forces, but – as always – the mostly unclear or unknown ethnic backgrounds of the janissaries make it impossible to verify that. Apart from the janissary corps, Armenians certainly served as Ottoman miners and sappers during the second siege of Vienna. The eyewitness Count Luigi Ferdinando Marsigli, at that time Ottoman captive and present in the beleaguerer's camp, praised the effectiveness of the Armenian-Ottoman miners and wrote that they "carried out the same work in just half of the time and with half of the effort" of their Viennese counterparts.[97] During the siege there were 5,000 Ottoman miners active, but the source does not report how many of them were Armenians.[98] Furthermore, there were Ottoman Armenians commissioned with provisioning the army. During the siege of Vienna, the sources mention Armenian bakers and cooks of whom three collaborated with the Christians; two sold them bread, one even revealed to them strategical plans of the Ottomans.[99] The sources only describe Armenians in a rebellious role, but it is likely that there were many more Armenian bakers present who, as they remained loyal, never appeared in the sources.

In the Polish-Lithuanian context, Polish Armenians were part of the army led by King Jan III Sobieski to Vienna to relieve the besieged city. For this purpose, 5000 Armenians were recruited. They were armed with muskets and javelins and due to their long red hats, armlets and long trousers they were a distinctive unit on the battlefield. Also, they bore banners embellished with large crosses in their emblems and thus placed themselves in a crusade

---

[96] Anahit Astoyan, *Hayern ōsmanyan banakowm. XIV daric' minčev 1918 t'*, Yerevan, 2010, 6f.

[97] Gábor Ágoston, *Guns for the Sultan. Military Power and the Weapons Industry in the Ottoman Empire*, Cambridge, 2005, p. 42.

[98] Georg Christoph von Kunitz, *Diarium Welches Der am Türckischen Hoff, und Hernach beym Groß-Vezier in der Wienerischen Belägerung gewester Kayserl. Resident Herr Baron Kunitz eigenhändig beschrieben*, 1684, p. 39, https://www.digitale-sammlungen.de/de/details/bsb10911174 .

[99] Richard F. Kreutel, *Kara Mustafa vor Wien. 1683 aus der Sicht Türkischer Quellen*, Osmanische Geschichtsschreiber. Neue Folge 1, Graz, Vienna, Cologne, 1982, p. 165; Oskian, col. 270.

tradition against the "infidels".[100] Their involvement can thus be explained by the common religious factor of Christian warfare against Ottoman Muslim adversaries.

CONCLUSION

Armenian involvement in the War of the Holy League was of a diverse nature and on behalf of both the Ottoman Empire and its Christian adversaries; while for the former Armenians were engaged as janissaries, sappers or army suppliers, it was the Armenians involved on the Austrian side and working as spies and merchants who were the main focus of this study. Their contribution to the Habsburg imperial war effort was considerable, because they provided information collected through their spying activities, in similar vein helped the Imperial forces when they laid siege to the fortress of Buda, and even conducted a military operation of some importance, namely blowing up the powder magazine in Buda in 1686. However, the most important question is why the Armenians even engaged in a war that was not primarily "theirs".

I showed in this article that four different aspects contributed to Armenian involvement on behalf of the Habsburgs and help to understand and explain it. The most important were the personal contacts and networks, because Armenians like Diodato started their war-related activities after they were ordered by members of the imperial court to do so. They at least needed the backing of the Imperial War Council for all their activities. On the other hand, Diodato recruited other Armenians for such activities as spying and sabotaging. Thus, personal networks are an indispensable explanation for Armenian involvement, but they do not suffice as a monocausal explanation. Rather one has to keep in mind that Armenians in Vienna were confronted with an unfortunate climate leading to prejudice, unjustified accusations and even trials and exile. Undertaking important tasks for the War Council or other important parts of the imperial court was a good option for being spared, as happened for example with Diodato, who escaped the Raizenpatent in 1678 as well as a later trial because he was of such great importance to the emperor and the court. Also, it is not a negligible fact that the relevant Armenians active in Vienna were merchants and adventurers and that they ascribed importance to earning a fortune and receiving material benefits from their activities for the War Council. Even though in the end they rarely got what they wanted, the promises that they would get a great deal of money

[100] Sadok Barącz, *Rys Dziejów Ormiańskich [Outline of Armenian History]*, Tarnopol, 1869, p. 65; *Zbiéracz Literacki [Literary Collector]* No. 12, Cracow, 3 October 1838, p. 96.

were in some cases decisive for recruitment of Armenians for dangerous undertakings. Finally, without considering the religious factor, it is not possible to understand why certain Armenians like Diodato moved to Vienna and subsequently worked for the Habsburg court while others stayed in the Ottoman Empire and were engaged on the other side of the conflict.

ՎԻԵՆՆԱԲՆԱԿ ՀԱՅԵՐ՝ ՍՈՒՐԲ ԴԱՇՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ (1683–1699) (ԱՄՓՈՓՈՒՄ)

ԵԱՔՈՊ ՊՐԷՕ (jakob.breu@posteo.de)

Ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ վիեննաբնակ հայերու մասնակցութիւնը Օսմանեան կայսրութեան դէմ Եւրոպայի Սուրբ Դաշնութեան ուժերու 1683-99 շրջանին մղած պատերազմներուն:

Հեղինակը կը քննարկէ չորս պատճառներ՝ վիեննաբնակ հայերու աջակցութեան.- ա) անոնք կը հալածուէին եւ խորթ կը նկատուէին Վիեննայի մէջ եւ հետեւաբար ստիպուած էին առնել այնպիսի քայլեր, որոնք զիրենք անփոխարինելի եւ ազդեցիկ կը դարձնէին Վիեննայի պալատական միջավայրին մէջ, բ) ընդառաջեցին վտանգալից պահանջքներու, որպէսզի չարտաքսուին երկրէն կամ չձերբակալուին, եւ կազմեցին ընդյատակեայ ցանց մը, գ) խոստացուեցան առատապէս պարգեւատրուիլ՝ իրենց վտանգալից առաքելութեան համար, դ) որովհետեւ կաթոլիկ հաւատքին դէմ ընդհանրական թշնամիին դէմ պիտի պայքարէին:

Հեղինակը կ'ընդգծէ թէ այս անձերը փախստականներ էին՝ Օսմանեան կայսրութեան մէջ, 1590-1610ականներուն բռնկած ճելալիներու ըմբոստութեան եւ յաջորդող ջարդ ու կողոպուտներէն, որոնք մեծ վնասներ պատճառեցին Փոքր Հայքի, մանաւանդ Սվազ-Թոքաթ-Ամասիա շրջանի հայութեան: Ան կու տայ անունները ընդյատակեայ այս ցանցի անդամներուն, կը նշէ անոնց գործունէութեանց բնոյթը, կը բացայայտէ անոնց անցեալը եւ կը ներկայացնէ խորքը ժամանակին, Եւրոպա-Օսմանեան կայսրութիւն յարաբերութեանց, ինչպէս նաեւ հայ իրականութեան:

Քննարկում

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԼԵՌՆԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
alpehist@gmail.com

ՄՈՒՏՔ

Արարատեան դաշտը Այրարատի՝ Մեծ Հայքի կենտրոնական նահանգի կենտրոնն է: Ըստ ազգածին աւանդութեան, այնտեղ է հաստատուել Հայկ նահապետի որդի Արամանեակը եւ նրա սերունդները, որից յետոյ այն դարձել է հին Հայաստանի քաղաքական, մշակութային, կրօնական եւ տնտեսական հիմնական կենտրոնը: Այստեղ են գտնուել համահայկական մայրաքաղաքների մեծագոյն մասը՝ Արմաւիր, Երուանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին, Երեւան: Դաշտը եզերում են՝ հարաւից՝ Մասիս, հիւսիսից՝ Արագած, հիւսիսարեւելքից՝ Արայի, արեւելքից՝ Գեղամայ լեռները: Ըստ Խորենացու եւ Սեբէոսի, Այրարատը կոչուել է նաեւ Արայի դաշտ[1], սակայն այդ անուանումը առաւել յարմար է ոչ թէ իր բազում լեռներով ու լեռնաշղթաներով յայտնի Այրարատ նահանգի, այլ նրա սրտի՝ Արարատեան դաշտի համար, որտեղ զոհուել է Արա Գեղեցիկը (աշխարհագրական միաւորները յաճախ կոչուել են այնտեղ զոհուած հերոսների անունով): Յետագայում նահանգի կենտրոնի անուանումը կարող էր անցնել ողջ նահանգին: Ըստ Խորենացու, Մասիսը կոչուել է Արամանեակի թոռ Ամասիայի, իսկ Գեղամայ լեռները՝ վերջինիս որդի Գեղամի անուններով: Այսպիսով, Արարատեան դաշտը եւ այն եզերող լեռները կրում են առաջին Հայկեանների - Խորենացու եզրոյթով - հայոց «ազգածին նահապետների» անունները: Առասպելաբանութեան մէջ անուանումը հաւասարազօր է արարմանը, եւ այսպիսով, դաշտը եւ այն եզերող լեռները արարուած են համարուել նաեւ Հայաստանը եւ հայ ժողովուրդը ստեղծած առասպելական հերոսների կողմից:

Սոյն յօդուածի նպատակն է ցոյց տալ, որ Արարատեան դաշտը ստեղծուած է համարուել այն նոյն հերոսների կողմից, որոնք եւ որոնցով է ստեղծուած համարուել Հայաստանը եւ հայ ժողովուրդը:

ԱՄՊՐՈՊԱՅԻՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ԵՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԼԵՌՆԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

[1] Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, թարգմ., ներած. եւ ծանօթ.՝ Ստեփան Մալխասեանց, Հայաստան հրատ., Երեւան, 1968, էջ 97. նաեւ՝ *Պատմութիւն Սեբիոս եպիսկոպոսի*, ներած., թարգմ. եւ ծանօթ՝, Արշաւիր Ծ.Վ. Գաբուճեան, տպ. ՄՏԿԿ, Անթիլիաս, 1990, էջ 78:

Հնդեւրոպական առասպելաբանութեան աչքի ընկնող յատկանիշն է ամպրոպային առասպելների եւ ամպրոպի աստծու նշանակալի ներկայութիւնը նրանում: Ընդ որում, մի շարք դիցարաններում ամպրոպի աստուածն է եղել գերագոյնը (հնդ. Ինդրա, յուն. Զեւս, լատ. Եուպիտէր, սլաւ. Պերուն): Ամպրոպի աստծու եւ նրա հակառակորդ օձ-վիշապի կռուի՝ «վիշապամարտի» առասպելն այնքան էական է եղել հին հնդեւրոպացիների կեանքում, որ այն Վիաչեսլաւ Իւանովի եւ Վլադիմիր Տոպորովի կողմից կոչուել է «հիմնական առասպել»[2]: Ամպրոպային վիշապամարտով էր բացատրւում ամպրոպը եւ նրա հետ կապուած երեւոյթները (կայծակ, որոտ, փոթորիկ), ինչը եւ յանգեցնում էր երկնային ջրերի արձակման՝ անձրեւի, ապա եւ հողի արգասաւորման, բնութեան զարթօնքի, բոյսերի ծաղկման եւ աճի, արդիւնքում՝ «նոր տիեզերքի» արարման: Առասպելաբանութեան մէջ տիեզերքի արարման՝ «տիեզերածնութեան» (cosmogony) առասպելներին առանցքային դեր է վերագրւում: Այսպէս, նրանք տեղայնացւում են ժամանակի սկզբում, «աշխարհի կենտրոնում», այդտեղով է անցնում ստորերկրայքը, երկիրն ու երկինքը միաւորող «աշխարհի առանցքը», եւ տիեզերածնութիւնն են կրկնում յետագայ բոլոր արարումները[3]:

Ամպրոպային առասպելն այնպիսի խորը հետք է թողել հայ իրականութեան մէջ, որ այն, իրօք, հանդէս է գալիս որպէս հայոց «հիմնական առասպել»: Հայ նախաքրիստոնէական կրօնի ամպրոպի աստուածն էր «վիշապաքաղ» Վահագնը, որի ծննդեան հիմնն է միայն պահպանուել հայոց ողջ հեթանոսական պոեզիայից, իսկ ամպրոպի աստծու վիպական փոխակերպումներից են ազգածին աւանդութեան Հայկ եւ Արամ նահապետերը[4], *Սասնայ ծռեր*ում՝ կայծակի թրի առաջին տէր Սանասարը[5] եւ այդ թրով իր գլխաւոր սխրագործութիւնը կատարող Դաւիթը[6], «Վիպասանքի»՝ Տիգրա-

---

[2] Տե՛ս յատկապէս՝ В. В. Иванов, В. Н. Топоров, *Исследования в области славянских древностей* (Հնդեւրոպական ամպրոպային վիշապամարտի առասպելի եւ նրա էական դերի վերաբերեալ), Մոսկուա, 1974. նաեւ՝ C. Watkins, *How to Kill a Dragon*, New York, Oxford, 1995. նաեւ՝ M. L. West, *Indo-European Poetry and Myth*, New York, 2007, էջ 237-55 եւն.:

[3] M. Eliade, *Cosmos and History. The Myth of the Eternal Return*, New York, Harper and Row, 1959:

[4] A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Washington DC, 2002. նաեւ՝ Ա. Պետրոսեան, «Հայկ նահապետը համեմատական առասպելաբանութեան լոյսի տակ», *Շնորհ ի վերուստ. առասպել, ծէս, պատմութիւն. յօդուածների ժողովածու նուիրուած Սարգիս Յարութիւնեանի ծննդեան 80ամեակին*, ՀՀԳԱԱ, Հնագիտութեան եւ Ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 2008, էջ 10-18:

[5] Մ. Աբեղեան, *Երկեր, հտր. Ա*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 414-17:

[6] Ս. Յարութիւնեան, «Վիշապամարտը 'Սասնայ ծռեր'ում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 11:1981, էջ 65-85:

նը[7], «Տարօնի պատերազմի»՝ սուրբ Կարապետը, Գիսանէն[8] եւ Գայլ Վահանը[9] (որի անունն իրականում Վահագնի մի ձեւափոխութիւնն է) եւ այլք: Այս առումով յատկանշական է, որ Հայկական Լեռնաշխարհի հնագոյն ամպրոպի աստծու՝ խուռիական աստուածների արքայ Թեշուբի (ինչպէս եւ նրա ուրարտական համապատասխանութեան՝ Թէյշեբայի) անունը եւ կերպարը փոխառուած են հնդեւրոպական՝ հնագոյն հայկական աւանդոյթից[10]: Այսինքն՝ հնդեւրոպական ամպրոպային առասպելն իր ազդեցութիւնն է թողել նաեւ հին մերձարեւելեան ժողովուրդների մշակոյթների վրայ:

Այստեղ անհրաժեշտ է խօսել նաեւ արեւելեան Միջերկրածովքում եւ մեզանում շատ տարածուած մի առասպելական կերպարի՝ «մեռնող եւ յարութիւն առնող» աստծու կամ հերոսի մասին, որը կարող է հանդէս գալ որպէս ամպրոպի աստծու (կամ նրա վիպական տարբերակի) որդի: Այդպիսիք են ազգածին աւանդութեան Արա Գեղեցիկը, որը զոհւում է պատերազմում, բայց իբր վերակենդանանում է արալէզ կոչուող առասպելական էակների միջոցով, Մասիսի վիհում զնդանուած եւ այնտեղից դուրս գալ ձգտող «Վիպասանքի» Արտաւազդը, Վանայ ժայռի «Միերի դռան» ետեւում փակուած *Սասնայ ծռեր*ի Փոքր Միերը (ընդ որում, Արա Գեղեցիկը որդին էր ամպրոպի աստծու փոխակերպումներից Արամ նահապետի, իսկ Փոքր Միերը՝ Սասունցի Դաւթի)[11]:

Այժմ քննենք Արարատեան դաշտի հիմնական տեղանունները:

ԼԵԱՌՆ ՄԱՍԻՍ

Մասիսը, Հայաստանի ամենաբարձր լեռը, հայոց մէջ հանդէս է գալիս որպէս դիցաբանական մի կենտրոն, մի տեսակ հայոց Ողիմպոս եւ ամպրոպի աստծու լեռ: Ըստ Խորենացու, «Վիպասանք» դիւցազնավէպում մա-

---

[7] Աբեղեան, էջ 138:

[8] Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, Համազգային Վահէ Սէթեան տպ., Պէյրութ, 1999, էջ 141-44:

[9] Ա. Պետրոսեան, *Հայկական էպոսի հնագոյն ակունքները 2*, ՀՀ ԳԱԱ, Հնագիտ. եւ Ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 2020, էջ 71-72:

[10] Ա. Պետրոսեան, «Խուռաուրարական Թեշուբ/Թէյշեբայի եւ յունական Թեսեւսի հայկական ծագումը», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 1:2024, էջ 239-59:

[11] Արա Գեեցիկի՝ որպէս «մեռնող եւ յարութիւն առնող» հերոսի վերաբերեալ տե՛ս՝ Աղեքսանդր վրդ. Մատիկեան, *Արայ Գեղեցիկ. Համեմատական-քննական ուսումնասիրութիւն,* Մխիթարեան տպ., Վիեննա, 1930. նաեւ՝ Գրիգոր Ղափանցեան, *Արա Գեղեցկի պաշտամունքը*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1944. նաեւ՝ Արմէն Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման խնդիրը*, Անտարես, Երեւան, 2017: Հայկական վէպերում այդ կերպարի միւս դրսեւորումների մասին, տե՛ս՝ Պետրոսեան, *Հայկական էպոսի հնագոյն 2*, էջ 10-12:

րաց Աժդահակ արքան, որի անունը ծագում է իրանական առասպելաբանութեան վիշապ Աժի Դահակայի անունից, երազում տեսնում է թէ ինչպէս մի կին, Հայաստանում, մի բարձր, սաստիկ սառնամանիքով պատուած լեռան վրայ ծննդաբերում է եռորեակ եղբայրների, որոնցից երրորդը՝ հայոց Տիգրան արքան վիշապ սանձած յարձակւում եւ սպանում է իրեն (սա համապատասխանում է իրանական առասպելաբանութեան եռուորեակ հերոս Թրայէտաոնայի եւ Աժի Դահակայի կռուին): Հնդեւրոպական աւանդոյթներում երկուորեակներ են հնդկական եւ հայկական ամպրոպի աստուածները (Ինդրայի երկուորեակ եղբայրն է Ագնի աստուածը, իսկ հայոց ամպրոպի աստծու առաւել վառ արտայայտուած վիպական փոխակերպման՝ Սանասարի երկուորեակ եղբայրն է Բաղդասարը): Կարելի էր կարծել, որ Տիգրանի եռուորեակութիւնը իրանական ազդեցութեան արդիւնք է, բայց պէտք է ասել, որ առասպելներում երկուորեակներն ու եռուորեակները երբեմն նոյնանում են, եւ Թեշուբը նոյնպէս եռուորեակ էր: Հայաստանի բարձր, սառնամանիքով պատուած լեռը, ակնյայտօրէն, Մասիսն է (Հայկական Լեռնաշխարհի յաւերժական ձիւներով պատուած միակ լեռը), որի վրայ են կենտրոնացած դիւցազնավէպի գործողութիւնները՝ Տիգրանի ծննունդը, Աժդահակի սերունդ վիշապազունները եւ Արտաւազդ արքայի զընդանումը:

Մասիսը երկգագաթ է, եւ կարող էր պատկերացուել որպէս «երկուորեակային» լեռ: Յատկանշական է, որ հնագոյն մերձարեւելեան (սիրիական, խեթական, խուռիական) ամպրոպի աստուածները պատկերուել են երկու, երբեմն՝ երեք լեռների, կամ՝ երկու կամ երեք գագաթներով լեռան վրայ կանգնած[12]: Հաշուի առնելով, որ ըստ նորագոյն տուեալների հենց Այրարատն է եղել հայոց հնագոյն օրրանը, կարելի է ասել, որ Մասիսի՝ երկուութեան հետ կապն է արտացոլում նաեւ Մասիսի մերձակայ երկրի ուրարտական դարաշրջանի անուանումը՝ Er(e)kuaḫi[13] (հմմտ.՝ հայ. *երկու*, հնդեւրոպական տեղանուանակերտ -ā եւ ուրարտերէնում տեղանուններին յաւելուող -ḫi ածանցներով)[14]:

Աքադական առասպելաբանութիւնից յայտնի է Մաշու (աքադ. Māšu) «Երկուորեակ» սրբազան լեռը: *Գիլգամէշ* դիւցազնավէպի հերոսը, անմա-

---

[12] M. Dijkstra, "The Weather God on Two Mountains," *Ugarit-Forschungen*, 23:1991, էջ 127-40:

[13] Н.В. Арутюнян, *Корпус урартских клинообразных надписей (Ուրարտերէն սեպագիր արձանագրութիւնների լիակատար ժողովածու)*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2001, էջ 504-5:

[14] Այրարատ նահանգի տարածքի եւ մերձակայ երկրամասերի վաղնջական ժամանակներում հայկական բնակչութիւն ունենալու վերաբերեալ տե՛ս՝ Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 181-200. նաեւ՝ Արմէն Պետրոսեան, Արամ Պալեան, «Հայոց ազգածագման խնդիրն ըստ վերջին հնաճիսական ուսումնասիրութիւնների», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 43/2:2023, էջ 449-460:

հութեան որոնումներում, հասնում է այդ լեռանը: Ընդ որում, ասորեստանեան աքադերէնում Մաշուի հնչումն է Māsu (Մասու): Այդ առասպելի աւելի ուշ՝ հրէական եւ յունական տարբերակներում անմահութեան աշխարհը տեղայնացւում է Հայկական Լեռնաշխարհում[15]: Հայերէն Մասիս լեռնանունը յոգնակի *Մասիք* ձեւի հայցական հոլովաձեւն է, որը - ինչպէս յաճախ այլ դէպքերում - վերածուել է հիմնական տեղանուան (հմմտ. Մասիսի սեռական *Մասեաց* ձեւը եւ Հայկական Լեռնաշխարհի բարձր լեռներից նոյնպէս երկգագաթ Սիփանի Նեխ Մասիք կոչումը): Ինչպէս ցոյց է տալիս Մասեաց ձեւը, այն հնդեւրոպական *-i(y)ā ածանցով մի կազմութիւն է, իսկ անուան արմատը, ակնյայտօրէն, անբաժանելի է ասորեստանեան Māsuից: Տեղանուններին բնորոշ հնդեւրոպական *-i(y)ā ածանցով հայերէնում այն կանոնաւոր կերպով կը դառնար *Մասիա* (արմատի վերջին ձայնաւորը այդ ածանցից առաջ ընկնում է՝ *Մասու + իա > *Մասիա*), ապա, վերջին ձայնաւորի օրինաչափ անկումից յետոյ՝ *Մասի*, որից եւ յոգնակի *Մասիք,* հայցական *Մասիս* ձեւերը[16]:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԸ

Ամպրոպի աստուածների բնորոշ զէնքերից էին գուրզը եւ նրա տարբերակները՝ մուրճը կամ կացինը (հմմտ.՝ Ինդրայի վաջրա-գուրզը եւ արեւմտահնդեւրոպական ու հին մերձարեւելեան ամպրոպի աստուածների մուրճ/կացինը)[17]: Ըստ Ագաթանգեղոսի, Լուսաւորչի յայտնի տեսիլքում նրան երեւում է երկնքից իջնող մի մարդակերպ էակ, ձեռքին ոսկէ մուրճ/կռան (բնագրում՝ *ուռն*), որով խփում է գետնին, մայրաքաղաք Վաղարշապատի կենտրոնին: Մեծ ու հզօր հնչիւններ են լսւում սանդարամե-

---

[15] E. Lipinsky, "El's Abode: Mythological Traditions Related to Mount Hermon and to the Mountains of Armenia," *Orientalia Loviensia Periodica*, 2:1971, էջ 41 ff:

[16] Մաշու/Մասու լեռնանուան Հայաստան հասնելու եւ տեղայնացումների վերաբերեալ տե՛ս՝ Պետրոսեան, *Հայկական էպոսի հնագոյն*, էջ 125-26, 132-33: Այսպիսով Մասիսի հին անուանադիր նահապետի՝ Գեղամի որդու անունը պէտք է լինէր *Մասիա*, որը Խորենացու աղբիւրում՝ Մար Աբասի յունարէն մատեանում ինչ-ինչ աղաւաղման պատճառով կամ միտումնաւոր կերպով մօտեցուել է Աստուածաշընչից յայտնի հրէական մի արքայի եւ փոքրասիական Ամասիա քաղաքի անուններին:

[17] Գուրզը, մուրճը եւ կացինը նոյն նախնադարու զէնքի՝ քարէ կացինի տարբերակներ են՝ փայտէ կոթ, որի վրայ քարէ կամ մետաղէ գլխիկ է ամրացուած: Մուրճ/կացնի՝ որպէս հին մերձարեւելեան եւ հնդեւրոպական ամպրոպի աստուածների զէնքի մասին տե՛ս համապատասխանաբար՝ И. М. Дьяконов, *Архаические мифы Востока и Запада (Արեւելքի եւ Արեւմուտքի վաղնջական առասպելները)*, Մոսկուա, 1990, էջ 142. նաեւ՝ Иванов, Топоров, էջ 93, 95: Այս հարցի շուրջը տե՛ս նաեւ՝ West, էջ 251-55. նաեւ՝ J. Töyräänvuori, "The Weapons of the Storm God in Ancient Near Eastern and Biblical Traditions," *Studia Orientalia*, 112:2012, էջ 149-82:

տից (ստորերկրայքից) եւ տարածքը դաշտաձեւ հարթւում է («*հարթ հաւասար դաշտածեւ յատակեցաւ*»): Քաղաքի մէջ, արքունի ապարանքի մօտ, երեւում է մի հսկայական ոսկէ խարիսխ, նրա վրայ՝ բարձր հրեղէն սիւն, վրան ամպէ խոյակ լուսեղէն խաչով: Այս տեսիլքը, ակնյայտօրէն, հեթանոսական առասպելի քրիստոնէացած մի տարբերակ է: Ոսկէ կռանով երկրին հարուածելը ներկայացնում է վիշապամարտիկ աստծու՝ իր զէնք-կայծակով ստորերկրայքի տիրակալ օձ-վիշապին խփելու դրուագը: Ընդ որում, հայ իրականութեան մէջ առաջին եւ միակ անգամ յիշւում է ամպրոպի աստծու վաղնջական զէնքը՝ մուրճ/կռանը (իր բնիկ հայկական անունով՝ *ուռն*)[18]: Սա «աշխարհի կենտրոնում» տեղայնացուող տիեզերածին առասպելի մի տարբերակ է. կռանով զինուած դիցաբանական կերպարը՝ աստուածը, խըփում է մայրաքաղաքի կենտրոնին (առասպելաբանական ենթախորքում՝ երկրի եւ այդպիսով՝ աշխարհի կենտրոնին), որտեղ, ստորերկրայքից, որպէս հետեւանք, բարձրանում է տիեզերական հրեղէն սիւնը՝ «աշխարհի առանցքը»: Վաղարշապատը՝ երկրի կենտրոնը, գտնւում է երկրի կենտրոնական նահանգի՝ Այրարատի սրտի՝ Արարատեան - Արայի - դաշտում, Արագածոտն գաւառում, որտեղ է եղել նաեւ հայոց առաջին մայրաքաղաք Արմաւիրը: Իսկ հարուածից յետոյ երկրի դաշտաձեւ հարթուելն ակնարկում է հենց այդ դաշտի արարումը երկնքից իջած աստծու՝ մուրճով երկրին խըփելու հետեւանքով[19]:

Հնդկական վաջրայի իրանական զուգահեռներն են աւեստ. vazra, պրսկ. gorz ձեւերը, որոնք փոխառուել են հայերէն որպէս *վազր* եւ *գուրզ*[20]: Այդ հնդիրանական բառերը ներկայումս յանգեցւում են հնդեւրոպական *weh$_2$gˆ- «ուժեղ խփել, ջարդել, ջախջախել, կործանել» արմատին (որից եւ *weh$_2$gˆ-ro- «գուրզ», «խփող, կործանող» իմաստով)[21]: Հնդիրանականին մօտ յունական առասպելաբանութեան մէջ հնդիրանական վաջրա/վարզայի զուգահեռը հանդէս է գալիս արդէն մթագնած ձեւով, հերոս Մելիագրոսի

---

[18] Գ. Ջահուկեան, *Հայերէն սփռւգաբանական բառարան*, Ասիողիկ հրատ., Երեւան, 2010, էջ 751:

[19] «Աշխարհի կենտրոնում» տեղայնացուող թագաւորանիստ մայրաքաղաքների վերաբերեալ տե՛ս՝ Eliade, էջ 12 et passim: Լուսաւորչի տեսիլքի վերաբերեալ այս առումով տե՛ս՝ Լ. Աբրահամեան, «Ջոհի մարմնից աճող երկնային տաճարը. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքը ազգաբանական տեսանկիւնից», *Հայոց սրբերը եւ սրբավայրերը*, Հայաստան հրատ., Երեւան, 2001, էջ 363-64:

[20] Այս բառերի մասին տե՛ս՝ *Encyclopaedia Iranica*. https://iranicaonline.org/. նաեւ Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հ. I-IV*, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1971:

[21] A. M. Lubotsky, "Gr. pēģnumi: Skt. pajrá-and loss of laryngeals before mediae in Indo-Iranian," *Münchener Studien zur Sprachwissenschaft*, 40:1981, էջ 135. նաեւ՝ Rix et al., *Lexikon der Indogermanischen Verben*, Wisbaden, Ludwig Reichelt, 2001, էջ 664:

անուան մէջ (որի վերջին մասը ծագում է *wagʰ-ro- նախաձեւից, *wի կանոնաւոր անկումով)[22]:

Ուրարտական արձանագրութիւններում՝ Արարատեան դաշտում բնակուող հիմնական ցեղը եւ նրա երկիրը կոչւում էին ’Aza կամ ’Aṣa, այսինքն՝ Vaza/Vaṣa (ուրարտ. սեպագիր ’aն կարդացւում է va/wa, իսկ za եւ ṣa վանկերը հաղորդուել են միեւնոյն նշանագրով): Այդ երկիրը ներառում էր Արագածոտնից Երեւան ընկած տարածքները[23]: Այլ տուեալներ չկան այս ցեղանուն/երկրանունը ստուգաբանելու համար, բայց, ելնելով վերոյիշեալ տեսիլքից, ապա այն առնչելով հնդկաիրանական վաջրա/վարզային համապատասխան յունական առասպելաբանութեան, կարելի է կարծել-ենթադրել, որ Vaṣa երկիրը եւս կոչուել է հնդեւրոպական նոյն արմատով, հնագոյն հայերէն *Վածա, տեղանուններում հանդիպող -ā < -eh₂ ածանցով (ուրարտ. ṣն համապատասխանում է հայ. ծին):

ԱՐԱԳԱԾ ԼԵՌ

Ըստ Խորենացու, Հայկը իր սպանած հակառակորդ Բէլ-Նեբրովթի դիակը հրամայում է տանել իր ոստանը՝ Հարք գաւառը եւ թաղել «*ի բարձրաւանդակ տեղւոջ*»: Այդ բարձունքը Նեմրութ լեռն է, Վանայ լճի արեւմտեան ափին, Մուշի դաշտի արեւելքում: Նեմրութը թուրքական ձեւն է աստուածաշնչեան Նեբրովթի, որը հայոց մէջ նոյնացուել է Հայկի հակառակորդ Բէլի հետ: Ըստ մի առասպելի, հայոց թագաւորը սպանում է իր վրայ յարձակուած Բէլին, հանում այս սարի գագաթը եւ այնտեղ թոնիր շինելով՝ մէջը վառում: Աստուած թոնիրը վերածում է լճի: Այլ տարբերակներում Նեբրովթը մի մեծ շինութիւն է կառուցում այդ լեռան վրայ եւ ապստամբում աստծու դէմ: Բայց կայծակներ են խփում, եւ Նեմրութն իր շինութեամբ հանդերձ գետնասոյզ է լինում: Առասպելի «հայոց թագաւորը», ակնյայտօրէն, Հայկն է, իսկ Բէլ-Նեբրովթ/Նեմրութին կայծակներով պատժողն ի սկզբանէ պէտք է լինէր ամպրոպի աստուածը՝ Հայկի դիցաբանական նախորդը:

Նեմրութի հրաբխային խառնարանը ամենամեծն է Արեւելեան կիսագնդում[24]: Այդ ահռելի հրաբուխը, անկասկած, առասպելաստեղծ հզօր կենտրոն պիտի դառնար: Նեմրութի մերձակայ բարձր լեռն է հայոց միւս Մասիսը՝ Սիփան-Մասիքը, ընդ որում, այդ լեռները համադրուել են, համապատասխանաբար, Բէլի եւ Հայկի հետ (Սրուանձտեանցն այդ մասին գրում է՝ «*որպէս թէ Նեմրութն լինէր Բէլը եւ Սիփանը մեր Հայկը, որ զԲէլն իր ոտքին*

[22] Watkins էջ, 408-13:

[23] Арутюнян, էջ 499-500:

[24] Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, Երեւան, 1986-2001 *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. IV*, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1991, էջ 976 (լեռան վերջին արտաժայթքումները տեղի են ունեցել 1352ին եւ 1441ին):

տակ կապած է»)[25], այսինքն՝ ընկալուել են որպէս հնագոյն ամպրոպի աստծու եւ նրա հակառակորդի լեռներ: Պարզ է, որ ե՛ւ Արագածը, ե՛ւ Նեմրութը ստեղծուած են համարուել ամպրոպի աստծու (մուրճ/կայծակի) հարուածից:

Արագածի խառնարանը եւս հսկայական է, վերածուած սառցէ լճի (կան եւ սովորական լճեր, որոնցից ամենամեծի տրամագիծը 1150 մ. է), եւ հեշտ է պատկերացնել, որ այստեղ, ինչպէս եւ Նեմրութի առասպելում, մենք գործ ունենք միեւնոյն՝ կայծակներով հալածուած եւ լեռան խառնարանում զընդանուած առասպելական կերպարի մի տարբերակի հետ: Հնարաւոր է պատկերացնել, որ Արայի դիցաբանական նախորդը այստեղ իր կայծակէ զէնքով հարուածել/ջարդել է լեռը եւ զնդանել վիշապի տեղական տարբերակին, կամ, որպէս «մեռնող եւ յարութիւն առնող» հերոս, ինքն է զնդանուածը, ինչպէս «Վիպասանքի» եւ *Սասնայ ծռերի* լեռներում զնդանուած մեռնող եւ յառնող հերոսները՝ Արտաւազդը եւ Փոքր Միերը: Ընդ որում, այդ գործողութիւնը կոդաւորուել է հնդեւրոպական *weh$_2$gˆ- (> *գաժ*) արմատով: Եւ միանգամից յիշողութեան մէջ արթնանում են Իսահակեանի բանաստեղծութեան տողերը՝ «Դու՛, Արագա՛ծ, ալմաստ վահան / Կայծակեղէն թըրերի»: Բանաստեղծի երեւակայութեան մէջ վերստեղծուել է այն նոյն պատկերը, որը հին մարդիկ ձեւակերպել են որպէս առասպել:

ԱՐԱՅԻ ԼԵՌ

Արա Գեղեցիկը զոհուել է Արարատեան՝ Արայի դաշտում, իսկ երկու ուշ գրանցուած առասպելներում ճշտւում է այդ վայրը՝ Արայի լեռան արեւելեան փէշին, Արզնի գիւղի տեղում[26]: Նոյնիսկ ներկայումս Արայի լեռը նմանեցնում են պառկած մարդու՝ իբր զոհուած Արային: Լեռան հարաւային կողմում կայ մի բնական պատռուածք, որի համար լեռը թուրքերէն կոչուել է *Գառնը եարըխ*՝ «Փորը պատռուած» եւ նման անուններով): Եւ կայ այնտեղ մի քարայր, որտեղ, իբր երկնային հրով վառւում է Լուսաւորչի օդից կախուած կանթեղը[27]: Քրիստոնեայ հայերի մէջ Արայի կերպարի յատկանիշերն անցել են Գրիգոր Լուսաւորչին[28] (հմմտ.՝ յատկապէս նրա բանտարկութիւնը Խոր վիրապում եւ դուրս գալն այնտեղից, համադրելի՝ մեռնող եւ յարութիւն առնող հերոսների մահուան եւ վերածննդի հետ): Լեռնային քարայրի հետ է կապուած նաեւ Փոքր Միերը: Կեանքի վերջում նա գնում է Վանայ բերդից արեւելք գտնուող մերձակայ լեռնագօտու ծայրը՝ «Ագռաւու քար», Թուր

[25] Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 52:

[26] Գրիգոր Ղափանցեան, *Արա Գեղեցկի պաշտամունքը*, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1944, էջ 11, 166-67:

[27] Ղափանցեան, էջ 99. նաեւ՝ Ա. Ղանալանեան, *Աւանդապատում*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 146:

[28] Տե՛ս օրինակ՝ Ն. Ադոնց, *Երկեր, հինգ հատորով, հտր. Ա., պատմագիտական ուսումնասիրութիւններ,* ԵՊՀ հրատ., Երեւան, 2006, էջ 54-59. նաեւ՝ A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern*, էջ 111-15:

կէծակիով ճեղքում այն եւ մտնում ներս: Ժայռը փակւում է, եւ Միերը մնում է ժայռի ներսի երեւակայական քարայրում:

ԳԵՂԱՄԱՅ ԼԵՌՆԵՐ

Ըստ Իւանովի եւ Տոպորովի, հնդեւրոպական ամպրոպի աստծու հակառակորդի անունը կազմուել է *wel- արմատով (հմմտ. հնդ. Vṛtra եւ Vala, եւ լիտվ. Velnias, ամպրոպի աստուածներ Ինդրայի եւ Պերկունասի հակառակորդների անունները)[29]: Անունը կազմւում է *wel- արմատի ածանցեալներով, տարբեր լեզուներում տարբեր ձեւերով (հմմտ. լիտվ. Վելնիաս, հնդ. Վրտրա անունները): Այս արմատի հայերէն կանոնաւոր ժառանգը կը լինի *գեղ-*: Հայկական անուանաբանութեան մէջ *գեղ*ով սկսուող տեղանունները մեծագոյն խտութեամբ հանդիպում են Սեւանայ լճի արեւմտեան ափին, ուր ազգածին նահապետ Գեղամի անունով են կոչւում Գեղամայ լեռները եւ Գեղամայ լիճը: Ըստ Խորենացու, Գեղամը շէնացնում է Սեւանայ լճի արեւմտեան ափը, այնտեղի լեռը (Գեղամայ լեռները) իր անունով կոչում Գեղ, իսկ շէները (գաւառը) Գեղարքունի: Ըստ այդմ, Գեղը համարուել է Գեղամ նահապետի եւ Գեղամայ լեռների հին անունը: Ներկայումս Գեղ է կոչւում Գեղամայ լեռների՝ բարձրութեամբ երկրորդ լեռը, կայ նաեւ՝ Գեղի անունով հին ամրոց նոյն շրջանում: Գեղարքունին ուրարտական աղբիւրներում մ.թ.ա. Ը. դարից աւանդուած է որպէս Uelikuni կամ Uelikuḫi երկիր, ինչը ցոյց է տալիս, որ այս անուանումները ծագում են հին *wel- նախաձեւից:

Նախապատմական Հայաստանի առանձնայատուկ, եզակի յուշարձանները՝ վիշապ քարակոթողները կամ վիշապաքարերը առաւել խտութեամբ հանդիպում են հին Գեղարքունի գաւառի տարածքում՝ Գեղամայ լեռներում[30]: Քարակոթողների երկու ամենամեծ խմբերը գտնւում են յիշեալ Գեղ լեռան վրայ (Ազատ գետի ակունքում) եւ Գեղի ամրոցի մերձակայքում: Յատկանշական է, վիշապաքարերը կոչւել են նաեւ *աժդահայ*, Գեղամայ լեռների ամենաբարձր լեռը, Գեղ լեռան հարեւանութեամբ՝ Աժդահակ, իրանական առասպելաբանութեան վիշապի անունով:

Դատելով այս տուեալներից, կարելի է ենթադրել այդ կոթողները հնում, մինչեւ իրանական *վիշապ* բառի փոխառութիւնը, կոչւել են **գեղ*: Դա

---

[29] Иванов, Топоров, էջ 31-75:

[30] Վիշապ բառը հայերէնում ներկայումս յաճախ օգտագործւում է որպէս եւրոպական *դրակոնի* (անգ. dragon) համարժէք, իսկ վերջինս նշանակում է «թեւաւոր եւ եղջերաւոր հրաշունչ մի առասպելական էակ»: Բայց հին հայերէնում բառի նշանակութիւններն են «մեծ օձ, յատկապէս ջրային», «մեծ ձուկ» (վիշապը որպէս մեծ ձուկ է պատկերացուել նաեւ խեթական, յունական, սկանդինաւեան եւ որոշ այլ ժողովուրդների առասպելներում): Վիշապ քարակոթողները յաճախ ձկան տեսք ունեն, եւ հայոց ամպրոպային հերոսների հակառակորդ վիշապը եւս հենց որպէս ջրային մեծ օձ-ձուկ է պատկերացուել (Ա. Պետրոսեան, «Երեսուն տարի անց. Վիշապ քարակոթողները եւ վիշապամարտի առասպելը», *Վիշապ քարակոթողները*, ՀՀ ԳԱԱ, Հնագիտութեան եւ Ազգագրութեան ինստ, Երեւան, 2015, էջ 13-52):

կարող է հաստատել նաեւ քարթուէլական (վրացերէնի եւ ազգակից լեզուների) *gwel- «օձ» արմատը, որը պիտի լինէր փոխառութիւն հնագոյն հայերէն միջանկեալ *gwel- ձեւից (հնդեւրոպական *welը հայերէն *գեղ* է դարձել հետեւեալ ճանապարհով՝ *wel->*gwel->*գեղ*-)[31]: Իմիջիայլոց, վիշապաքարերի կուտակման կարեւոր շրջան է նաեւ Արագած լեռը, որը, ինչպէս տեսանք, համարուել է ձեւաւորուած ամպրոպի աստծու զէնքի հարուածից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Արարատեան դաշտը եւ այն շրջապատող լեռները կոչուել են ազգածին աւանդութեան հերոսների՝ առաջին Հայկեանների անուներով: Այդ աւանդութիւնը իրականում առաջին հայկական դիւցազնավէպն է, որտեղ պատմւում է հայոց նախնիների հին տեղաշարժերի, պատերազմների եւ ժողովրդի ձեւաւորման մասին: Այն հնդեւրոպական առասպելաբանութեան վառ արտայայտուած մի նմուշ է[32]: Հայկից յետոյ բոլոր Հայկեան ազգածին նահապետերը, մինչեւ Արա Գեղեցիկ, ապրել եւ արարել են այդտեղ: Անուանումը առասպելաբանութեան մէջ համազօր է արարմանը եւ, ուրեմն, կարելի է ասել, որ հնագոյն հայոց պատկերացումներում Հայկից յետոյ այդտեղ է ձեւաւորուած համարուել հայ ժողովուրդը:

THE TOPONYMS OF THE PLAIN OF ARARAT AND THE SURROUNDING MOUNTAINS (SUMMARY)

ARMEN BEDROSSIAN (alpehist@gmail.com)

The author argues that in mythology the naming of a location is equivalent to the creation of that geographic area by the very legendary figure in whose name the area was named.

Basing his analysis on the above assumption, the author examines the toponyms of the plain of Ararat and its surrounding mountains with references from early and medieval Armenian historiographers, as well as linguistic analyses, and concludes that these were given the names of the mythical Haygian figures found in the legend of the creation of the Armenian nation. He notes that all the descendants of Haig, the Patriarchs of the nation until Ara Keghetsig (Ara the handsome) lived and worked in the plain of Ararat. He concludes, accordingly, that the plain of Ararat and its surrounding mountains as well as the Armenian nation and Armenia (*Hay joghovurt and Hayasdan*) were created by the relevant legendary heroes.

The author records that the legend of the creation of the Armenian nation is the first Armenian epic which narrates the movements of the ancestors of the Armenians, their wars as well as the formation of the nation. He underlines that this legend is a sample of Indo-European mythology.

---

[31] A. Y. Petrosyan, "Indo-European *wel- in Armenian mythology," *Journal of Indo-European Studies*, 1-2:2016, էջ 129-46:

[32] S. Ahyan, "Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes," *Revue de l'histoire des religions*, 3(199):1982, էջ 251-71:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՓԱՐԻԶԻ 1920 ԹՈՒԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Դ. ՆԻՍՏԻՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ
vatcheg@gmail.com

2004ին Երեւանի մէջ Հայաստանի Ազգային Արխիւին կողմէ հանրութեան ներկայացուեցաւ հաստատութեան այդ օրերու տնօրէն դոկտ. Ամատունի Վիրաբեանի պատասխանատու խմբագրութեամբ եւ իր ու Գոհար Աւագեանի, Ռոժենտ Գրիգորեանի եւ Ալբերտ Կիրիմեանի միատեղ ջանքերով կազմուած *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920թթ.)* խորագրով եւ *Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու* ենթախորագրով հատորը, որ կրնար շահիլ արեւմտահայերէնին տիրապետող մասնագէտի մը մասնակցութենէն անոր սրբագրութեան:

Հակառակ տեղ-տեղ թոյլ տրուած լեզուական անհարթութիւններու, հատորը կը մնայ գերազանցապէս օգտակար եւ արժէքաւոր հրատարակութիւն մը:

Զարմանալիօրէն, սակայն, հոն կայ կարեւոր բացակայ մը՝ 5 Մայիս 1920ին Փարիզի մէջ Գաբրիէլ Նորատունկեանի նախագահութեամբ ըսկսած Ազգային համագումարի երկրորդ նստաշրջանի Դ. նիստին ատենագրութիւնը:

Այդ նիստի ընթացքին է որ կատարուած է Պօղոս Նուպարի նախագահութեամբ գործող Հայ ազգային պատուիրակութեան (ՀԱՊ) միամեայ համարատուութիւնը, որ կը վերաբերի Ազգային համագումարի Ա. նստաշրջանէն ետք (Փետրուար 1919) մասնաւորաբար ՀԱՊի, բայց նաեւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան (ԱՀՊ) կատարած գործունէութեան:

ԱՀՊն կազմուած էր Նուպարի գլխաւորած ՀԱՊի եւ Աւետիս Ահարոնեանի գլխաւորած Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան (ՀՀՊ) անդամներով՝ խաղաղութեան խորհրդաժողովին առջեւ հայկական պահանջները միասնաբար որպէս մէկ մարմին ներկայացնելու եւ այդպիսով այդ պահանջներուն նկատառման հաւանականութիւնը բարձրացնելու նպատակով:

Վերը նշուած հատորին մէջ, Գ. նիստի (19 Մայիս 1920) ատենագրութեան կը յաջորդէ Ե. նիստինը (22 Մայիս 1920), որուն օրակարգին մէջ կը կարդանք. «1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան մասին»:

Յստակ է թէ համարատուութիւնը ներկայացուած է նախորդ՝ Դ. նիստին, ուր նաեւ սկսած է համարատուութեան քննարկումը:

Այս հրապարակումը, ուրեմն, կը նպատակադրէ ներկայացումը բացակայ ատենագրութեան. անոր առնչուող նիւթերը տակաւին վերջերս ձեռք բերած ըլլալով Հայաստանի Ազգային Արխիւէն, ուր տարիներ առաջ Փարիզէն ղրկուելով ի պահ դրուած է մէկ մասը ՀԱՊի դիւանաթուղթերուն (Ֆոնդ 430):

Հրատարակուող նիւթը կարեւոր է անով որ ընդհանուր գիծերով կը ներկայացնէ հայ ժողովուրդի պատմական բախտորոշ շրջաններէն մէկուն զուգադիպող եւ Սեւրի դաշնագրին նախորդող շրջանին միացեալ ամբողջական Հայաստանի մը ստեղծման ուղղութեամբ տարուած աշխատանքներու համարատուութիւն մը, որ նաեւ խարիսխը կը կազմէ նոյն նիստին սկսած եւ Ե., Զ., Է. նիստերով շարունակուած քննարկումներու (*Համահայկական*..., էջ 533–53):

Նաեւ՝ ան կը լրացնէ բաց մը, առանց որուն թերի կը մնան Ե. եւ յաջորդող նիստերու ընթացքին կատարուած քննարկումներն իրենց յղումներով: Օրինակ, Ե. նիստի «1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան» բաժնին առաջին պարբերութիւնն իսկ անհրաժեշտ կը դարձնէ բացակայ ատենագրութեան հրապարակումը: Հոն կ'ըսուի. «... Տիար Թէքէեանի կողմէ երէկուան նիստին եղած առարկութիւնը մտքի շփոթութիւն պատճառեց» եւայլն (*Համահայկական*..., էջ 533):

Այստեղ լոյսին բացուող նիւթերու բնագրերը կը գտնուին ՀԱՊի նշեալ Ֆոնդ 430ի ցուցակ 1ի 54էն 57 համարակիր գործերուն կամ թղթապանակներուն մէջ:

54րդ «գործ»ը կ'ընդգրկէ սակաւաթիւ հպումներով մաքրագիր ամբողջական տեղեկագիր մը «Տեղեկագիր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Գործունէութեան (1919 Ապրիլ – 1920 Մայիս)» խորագրով:

55րդ «գործ»ը կը պարունակէ Դ. նիստէն միայն օր մը առաջ պատրաստուած համարատուական տեղեկագրի ֆրանսերէն բնագրին հայերէն տարբերակը, որուն ստեղծումը վստահուած էր չորս անձի՝ Թէքէեան, Արամ Անտոնեան, Արտաւազդ Հանըմեան եւ Արշակ Չօպանեան, ինչպէս նշած է Անտոնեան:

56րդ «գործ»ի կողքերուն տակ կը գտնուի թերպահպանեալ եւ Անտոնեանի ձեռագրով մաքրագիր ատենագրութիւնը. իսկ 57րդ «գործ»ին վերապահուած է ընդունարանն ըլլալ դարձեալ Անտոնեանի ձեռագրով սեւագիր ատենագրութեան, որմէ դուրս կը մնայ համարատուական տեղեկագիրը եւ ուր կը հանդիպինք քննարկումներու մեկնարկին՝ յետ տեղեկագրի ընթերցման:

Որպէս հիմք ընդունելով 56րդ «գործ»ի վաւերագիրը, զայն ամբողջացնելու ծառայեցուցած ենք միւս երեք «գործ»երու նիւթերը:

Դիտել պէտք է տանք թէ «Պատուիրակութիւն» բառը միշտ չէ որ յստակօրէն կ'առնչուի ՀԱՊի կամ ԱՀՊի: Նոյնութեամբ պահպանած ենք անհետեւողական գլխագրումներն ու օտար անուններու տառադարձումները, ինչպէս նաեւ զանազան տարբերակներով ներկայացող կարգ մը եզրեր, ինչպէս՝ մանտա եւ հոգատարութիւն, Ազգերու Ընկերութիւն կամ Ընկերակցութիւն եւ Դաշնակցութիւն, Խաղաղութեան Համաժողով կամ Վեհաժողով եւ խորհրդաժողով, որոշապէս հետեւանք՝ թարգմանութեան հարկադրանքէն յառաջացած շտապողականութեան եւ թարգմանութիւնը չորս անձերու վստահուած ըլլալու իրողութեան:

Նկատի ունենալով նիւթին ծաւալն ու համարատուական ամփոփիչ բնոյթը, խուսափած ենք ծանօթագրութիւններով զայն ծանրաբեռնելու եւ ընդարձակելու փորձութենէն:

***

[Բ. ՆՍՏԱՇՐՋԱՆ][1]

ՆԻՍՏ Դ.

Ուրբաթ, 21 Մայիս 1920, ժամը 3ին[2].

—

Նախագահութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի

Ներկայ էին 18 պատգամաւոր

Եղիշէ Արքեպ. Դուրեան, ՊՊ. Աղաթօն պէյ, Տօքթ. Ա[րմենակ] Բարսեղեան, Դաւիթ-Բէկ (Մարտիրոս Սարգիսեան), Ա[լեւտիս] Թէրզիպաշեան, Վ[ահան] Թէքէեան, Բրօֆ. [Կարապետ] Թումայեան, Ա[րտաւազդ] Հանըմեան, Պօղոս պէյ Մըսըրլը, Տօքթ. [Յակոբ] Նեվրուզ, Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Պօղոս Նուպար փաշա, Ա[րշակ] Չօպանեան, Գ[րիգոր] Սինապեան, Մ[արտիրոս] Տէրպետէրեան, Ն[շան] Տէր-Ստեփանեան, Տ[իրան] Տէօվլէթեան, Գ[առնիկ] Ֆնտգլեան:

*

Մասնաւոր հրաւէրով ներկայ էին նաեւ Զաւէն Պատրիարք [Տէր Եղիայեան], Գերապայծառ [Յովհաննէս] Նազլեան եւ Պ. Տիգրան Չայեան:

—

[1] Նշուած՝ սեւագիր օրինակին մէջ (ՀԱՀ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 57), ուր նաեւ արձանագրուած է. «Վաւերացուեցաւ 28 Մայիս 1920[ին]»: Ինչպէս յետ վաւերացման մաքրագրումը, այնպէս ալ սեւագրութիւնն իր ուղղումներով - որոնք տրամաբանական է ենթադրել թէ կատարուած են վաւերացման նպատակով սեւագիր ատենագրութեան ընթերցման պահուն - թուղթին կատարած է Անտոնեան: Սեւագրին եւ մաքրագրին բոլոր տարբերութիւնները չէ որ պիտի նշուին յետագայ շարադրանքին մէջ: Նշենք նաեւ թէ սեւագիր օրինակին մէջ, ներկաներու խօսքերն արձանագրելէ առաջ, Անտոնեան պարզապէս նշած է. «Տեղեկագիր ~~Ազգ. Պատու.~~ Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան միամեայ գործունէութեան»:

[2] Սեւագիր օրինակին մէջ՝ 3½ին:

ՕՐԱԿԱՐԳ

1.- Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան[3]:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Ընթերցում ատենագրութեան.

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Մայիս 19-ի նիստին ատենագրութիւնը:

Ժողովին որոշման համեմատ, Գ. նիստին համար պատրաստուած էր խտացեալ ատենագրութիւն մը: Պ. Արշակ Չօպանեան փափաք յայտնեց որ կարեւոր նիստերու եւ վիճաբանութեանց առթիւ ատենագրուին իւրաքանչիւր ատենախօսի խօսքերը, այն կերպով ինչպէս որ եղած էր Ա. եւ Բ. նիստերուն համար:

Նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան յայտնեց թէ այդ էր նաեւ Դիւանին մտադրութիւնը:

2.- Դիւանի ընտրութեան մասին.

Նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան Դիւանի ընտրութեան անդրադառնալով, կրկնեց նախորդ նիստին ընթացքին իր կողմէ յայտնուած բաղձանքը թէ կը նախընտրէ ժողովին քան դիւանին մէջ մնալ, ազատօրէն կարենալ խօսելու համար յուզուած հարցերու մասին: Այս մտքով փափաք յայտնեց հրաժարելու ժողովին նախագահութենէն:

Համագումարը չընդունեց այս տեսակէտը, Նորատունկեան էֆէնտին ազատ թողլով յարմար դատած ատենը միջամտելու եւ իր տեսակէտները պարզելու վիճաբանութեան ենթարկուած խնդիրներու մասին:

3.- Յունաստանի պատգամաւորին խնդիրը.

Պ. Արտաւազդ Հանըմեան անդրադարձաւ Համագումարի այն որոշման որով Հին եւ Նոր Յունաստանի հայ գաղութներուն պատգամաւոր նկատուած էր Հին Յունաստանի գաղութին կողմէ ընտրուած Պ. [Միքայէլ] Պապաջանեանը, մինչդեռ Նոր Յունաստանի գաղութը իր կողմէ ընտրած էր Բրօֆ. Թումայեանը: Համագումարը այս որոշման յանգած էր՝ նկատելով որ Բրօֆ. Թումայեան արդէն իսկ պատգամաւոր ընտրուած է բողոքականներու Ազգապետարանին կողմէ եւ թէ մէկ պատգամաւոր չի կրնար երկու ձայն միացնել իր վրայ: Պ. Հանըմեան, դիտել տալով թէ Համագումարը «քիչ մը ընտանեբար» վարուեցաւ այս որոշման մէջ, առաջարկեց որ դիւանին կողմէ գոնէ առ ի տեղեկութիւն այս որոշումը հաղորդուի Նոր Յունաստանի գաղութին:

[3] Սեւագիր օրինակին մէջ, նաեւ՝ «2.- Տեղեկագիր եւ հաշուեցոյց գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան. 3.- Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին»:

Համագումարը ընդունեց այս առաջարկը եւ յանձնարարեց դիւանին որ նամակ մը գրելով պարզէ այն ստիպողութիւնը որով այդ որոշման յանգած էր:

4.- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնաժողովին.

Կարդացուեցաւ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշայի 17 Մայիս 1920 թուակիր նամակը, որուն յարակից՝ Համագումարին կը ղրկէր Պատուիրակութեան կողմէ տնտեսուած Ազգային Հանգանակութեան, ինչպէս նաեւ բրօբականտի եւ դիւանագիտական ծախքերու հաշիւները:

Նախագահ Նորատունկեան էֆէնտի ժողովին յիշեցնելով թէ նախորդ տարի Համագումարը ընտրած էր Հաշուեքննիչ Յանձնաժողով մը որուն կ'անդամակցէին ՊՊ. Մարտիրոս Տէրպէտէրեան, Տիգրան խան Քէլէկեան եւ Գառնիկ Ֆնտգլեան, առաջարկեց վերակազմել այդ Յանձնաժողովը եւ անոր յանձնել Պատուիրակութեան նախագահին կողմէ ղրկուած հաշիւները, որոնց քննութեան խնդիրը օրակարգին վրայ է արդէն:

Համագումարը Հաշուեքննիչ Յանձնաժողովը վերակազմեց, անդամ նշանակելով՝

ՊՊ. ՊՕՂՈՍ ՊԷՅ ՄԸՍԸՐԼԸ
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐՊԷՏԷՐԵԱՆ
ԳԱՌՆԻԿ ՖՆՏԳԼԵԱՆ

5.- Պատգամաւորներու ճշդապահութեան եւ վիճաբանութեանց կանոնաւորութիւնը.

Համագումարը ձայնակցեցաւ Պ. Տիրան Տէօվլէթեանի, որ գանգատ յայտնեց թէ պատգամաւորներէ ոմանք պէտք եղածին չափ ճշդապահ չեն ըլլար, որով նիստերու բացումը ուշ տեղի կ'ունենայ եւ աշխատութիւնները կը յետաձգուին:

Համագումարը յոյս յայտնեց որ այս անպատեհութեան մասին գանգատելու առիթ չի տրուիր այլեւս, ու ձայնակցեցաւ Պ. Տէօվլէթեանի այն խօսքերուն որոնցմով բաղձանք կը յայտնէր որ աւելորդ վիճաբանութիւններ տեղի չունենան եւ իւրաքանչիւր ատենախօս կարելի եղածին չափ հակիրճ կերպով մը պարզէ իր տեսութիւնները ներկայացուած խնդիրներու մասին, որպէս զի արագ լուծում մը գտնեն եւ օր առաջ լրանան Համագումարին աշխատութիւնները, նկատելով որ պատգամաւորներէն շատեր չեն կրնար երկար ժամանակ մնալ Փարիզ:

ՕՐԱԿԱՐԳ

1.- Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան

Ազգային Պատուիրակութեան տեղեկաբեր Պ. Արշակ Չօպանեան կարդաց Պատուիրակութեան միամեայ գործունէութեան մասին հետեւեալ ամփոփ տեղեկագիրը.-

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ[4]

Հայ Ազգային Պատուիրակութիւնը որ անուանուած էր Ամենայն Հայոց Վեհ. Կաթուղիկոսէն, 1918ի վերջերը հրաւիրեց, ինչպէս գիտէք, ամբողջ աշխարհի Հայերը իրենց պատգամաւորները ղրկել Փարիզի մէջ կազմուելիք Համագումարի մը որուն պաշտօնն էր գործունէութեան ծրագիր մը գծել եւ նոր Պատուիրակութիւն մը ընտրել: Թուրքիոյ եւ գաղութներու Հայերը ներկայացնող 38 պատգամաւորներ եկան մասնակցիլ այս Համագումարին որ տեղի ունեցաւ 24 Փետրուար 1919էն մինչեւ 22 Ապրիլ 1919[5]: Ռուսական Հայաստանը անկախ Հանրապետութիւն մը կազմած ըլլալով, պատգամաւորներ չէր ղրկած. հետեւաբար Համագումարը Թրքական Հայաստանի ներկայացուցչութեան մը հանգամանքը ունեցաւ. բայց Խաղաղութեան Վեհաժողովին մօտ Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան անդամները, որոնք նոյն միջոցին Փարիզ հասած էին, հրաւիրուեցան ազատագրուած Ռուսական Հայաստանը ներկայացնել Համագումարին մէջ, որուն մասնակցեցան խորհրդակցական հանգամանքով եւ ուր ամէն որոշում տրուեցաւ անոնց հետ համաձայնութեամբ:

Համագումարը ընտրեց չազատագրուած Հայաստանը ներկայացնող նոր պատուիրակութիւն մը եւ անոր տուաւ իր գործունէութեան ծրագրին լայն գիծերը պարունակող հրահանգ մը:

Այդ Հրահանգին համաձայն, նոյն Համագումարէն ընտրուած Հայ Ազգային Պատուիրակութիւնը Հանրապետութեան Պատուիրակութեան հետ միասին պիտի կազմէր «Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւն»ը,- ինչպէս որոշուեցաւ անուանել: Երկու պատուիրակութիւնները, վերոյիշեալ Հրահանգին համաձայն, պարտաւոր էին գործել իբրեւ միակ մարմին մը եւ ամէն դիմում համախոհաբար կատարել:

Համագումարը որոշեց որ նոր պատուիրակութիւնը պէտք է զինքը վերստին նիստի հրաւիրէ հետեւեալ երեք պարագաներուն մէջ.

1° Եթէ պատուիրակութիւնը ատոր պէտքը զգայ.

2° Եթէ պատուիրակութիւնը ստիպուած ըլլայ իրեն տրուած հրահանգներէն շեղելու.

3° Երբ Հայկական խնդիրը վերջնական լուծում մը ստանալու վրայ ըլլայ:

---

[4] Ի տարբերութիւն Անտոնեանի ձեռագրով արձանագրուած եւ թերպահպանեալ վաւերագրին (ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 56), այլ ձեռագրով գրուած ամբողջական տեղեկագիրը (ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 54. այսուհետեւ՝ Ա. Տարբերակ), ինչպէս նախապէս նշուեցաւ, խորագրուած է՝ «Տեղեկագիր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Գործունէութեան (1919 Ապրիլ – 1920 Մայիս)»:

[5] Անտոնեան ատենագրութեան մաքրագրման պահուն 1919ի փոխարէն սխալմամբ արձանագրած է 1909 երկու անգամ: Ա. տարբերակը գրառողը բաւականացած է միայն օրերու եւ ամիսներու նշումով, առանց տարեթիւի:

Այս վերջնական լուծման ժամը հասած ըլլալով, Ազգ. Պատուիրակութիւնը նիստի հրաւիրեց Համագումարը, Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան գործունէութեան հաշիւը տալու եւ ստացուած արդիւնքները անոր ներկայացնելու համար:

*

Հայ Ազգ. Պատուիրակութիւնը որ բաղկացած էր վեց անդամէ, իր առաջին նիստին մէջ (6 Ապրիլ 1919) նախագահ ընտրեց Վսեմ. Պօղոս Նուպար փաշան, դեր-նախագահ ՊՊ. Բրօֆ. Ա[բրահամ] Տէր-Յակոբեանը եւ Գ[րեգին] Փաստրմաճեանը, եւ ատենադպիր Պ. Արշակ Չօպանեանը: Հանրապետութեան Պատուիրակութիւնը կը բաղկանար ՊՊ. Ահարոնեանէ, Հ[ամազասպ] Օհանջանեանէ եւ Մ. Պապաջանեանէ. այս վերջինը Փարիզ հասաւ 1919 Յունիսի վերջը եւ քանի մը ամիս մասնակցեցաւ Հանրապետութեան Պատուիրակութեան, ինչպէս նաեւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան գործունէութեան. այնուհետեւ հրաժարականը ղրկեց իր կառավարութեան որ զայն ընդունեց՝ խնդրելով միայն իրմէ որ մինչեւ իր յաջորդին անուանումը շարունակէ աշխատակցիլ Պատուիրակութեան. Պ. Պապաջանեան մերժեց, բայց Ազգ. Պատուիրակութեան խնդրանքին վրայ հաւանեցաւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան նիստերուն մասնակցիլ իբրեւ խորհրդական:

Առաջին օրէն համաձայնութիւն գոյացաւ որ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան նիստերուն պիտի նախագահէ Վսեմ. Պօղոս Նուպար փաշա:

Պատուիրակութիւնը պահեց Հայկական Տեղեկատուութեան Պիւրօն, որ արդէն ստեղծուած էր նախկին Պատուիրակութեան կողմէ՝ Համագումարի կազմութենէն առաջ, եւ անոր տնօրէն նշանակեց Պ. Արտաւազդ Հանըմեանը եւ իբրեւ աշխատակից՝ Տիկին Զապէլ Եսայեանը: Նոյնպէս ստեղծեց Դիւանատուն մը (chancellerie) հայ ազգայնութեան վկայականներ յանձնելու, ֆրանսական յատուկ պաշտպանեալի անունով անցագիրներու ստացումը դիւրացնելու, եւ երկիր երթալ փափաքող բայց նիւթական միջոցներէ զուրկ Հայերու վերադարձին օգնելու համար: Պ. Մ. Կիւմշեան, որ Պատուիրակութեան Ընդհանուր Քարտուղար անուանուած էր, պաշտօն ստացաւ այս դիւանատունն ալ վարելու:

Ազգ. Պատուիրակութիւնը Պ. Ճէյմս Մալքոմը իրեն ներկայացուցիչ կարգեց Անգլիոյ մէջ, Պ. Ն. Տէր-Ստեփանեանը՝ Իտալիոյ եւ Պ. Մ[իհրան] Սվազլըն՝ Միացեալ-Նահանգներուն մէջ: Պ. Միհրան Տամատեան Կիլիկիա ղրկուեցաւ իբրեւ լիազօր ներկայացուցիչ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Դաշնակից իշխանութեան եւ Հայ հասարակութեան մօտ: 1920 Փետրուարին Տիկին Զապէլ Եսայեան Կիլիկիա ղրկուեցաւ որպէս օժանդակ Պ. Տամատեանի՝ դպրոցական գործին եւ որբերու պաշտպանութեան համար: Վերջերս Պ. Ա. Սասունի ալ հոն ղրկուեցաւ իբրեւ Պ. Տա-

մատեանի օժանդակ՝ թուրքերու սպառնալիքին դէմ Հայ ժողովուրդին պաշտպանութեան գործին համար:

Պատուիրակութիւնը պաշտօն ունէր, Համագումարին իրեն տուած հրահանգներուն համաձայն,

1° Հետապնդել, յանուն Հայկական Համագումարի, Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագրին մէջ գտնուող հայկական պահանջներուն լիակատար իրականացումը:

2° Սատարել Միացեալ Հայաստանի միակ կառավարութեան կազմուելուն իրականացման:

3° Աշխատիլ որ Հայ ազգը առաջին վայրկեանէն իսկ ընդունուի անդամ Ազգերու Ընկերութեան:

Երկար պիտի ըլլար թուել այն բոլոր դիմումները որ կատարուեցան, այն բոլոր յուշագիրներն ու Յիշատակագրերը որ ներկայացուեցան Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ՝ այս պաշտօնը գործադրելու համար: Պիտի տանք միայն մէկ ամփոփումը Պատուիրակութեան գործունէութեան լայն գիծերուն, պատրաստ ըլլալով լրացուցիչ տեղեկութիւններ հայթայթելու Համագումարի այն անդամներուն որոնք հարցումներ պիտի ուղղեն մեզ:

Համագումարը, գրեթէ միաձայնութեամբ, փափաք յայտնած էր որ Միացեալ-Նահանգները, Հայ ժողովուրդին ստուար մեծամասնութեան փափաքին համաձայն, Հայ պետութեան համար Ազգերու Ընկերութեան նշանակելիք հոգատարը դառնայ: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը, իր պաշտօնավարութեան սկզբնաւորութենէն իսկ, միեւնոյն ատեն բոլոր Դաշնակից Պետութեանց մօտ շարունակական դիմումներ ընելով հանդերձ, մասնաւորաբար աշխատեցաւ ստանալ ամերիկեան պատուիրակութեան եւ կառավարութեան աջակցութիւնը: Ամերիկեան պատուիրակութեան անդամներէն ոմանց խորհուրդով, 11 Ապրիլ 1919ին նամակ մը ուղղեց արտաքին գործոց նախարար Պ. Լանսինկի (Պ. Ուիլսոն այդ միջոցին Միացեալ-Նահանգներ կը գտնուէր), յանուն Հայ ազգին Ամերիկեան կառավարութենէն խնդրելով որ ընդունի Հայաստանի հոգատարութիւնը: Այս խնդրանքը համակիր ընդունելութիւն մը գտաւ: Որոշ եւ վճռական պատասխան մը չտրուեցաւ Ամերիկեան կառավարութեան կողմէ, որ չէր կրնար Հայաստանի հոգատարութեան ընդունուիլը որոշել՝ Ծերակոյտին կողմէ Ազգերու Ընկերութեան Դաշնաթուղթին վաւերացումէն առաջ: Բայց այն բերանացի յայտարարութիւնները զորս ըրած էր Նախագահ Ուիլսոն Ամենապատիւ Դուրեան Սրբազանի եւ Բրօֆ. Տէր-Յակոբեանի, երբ անոնք իրեն ներկայացան Ազգային Համագումարի նիստերու միջոցին, ու վերջէն Պօղոս Նուպար փաշայի եւ Պ. Ահարոնեանի, ինչպէս նաեւ Ազգ. Պատուիրակութեան եւ Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահներուն իր ուղղած նամակները, ցոյց կու տային Նախագահին յայտնի փափաքը,

որ ամբողջ Ամերիկեան պատուիրակութեան ալ փափաքն էր, Հայաստանի հոգատարութեան Ամերիկայի կողմէ ստանձ[ն]ման մասին:

Քիչ վերջը, Պ. Ուիլսոնի, Պ. Լոյտ Ճորճի, Պ. Քլէմանսոյի եւ Պ. Օրանտոյի միջեւ տեղի ունեցած խօսակցութեանց հետեւանքով, հասկացողութիւն գոյացաւ որ Հայաստանի հոգատարութիւնը պիտի տրուէր Ամերիկայի, ըստ որում Ամերիկեան կառավարութիւնը տրամադրութիւն կը յայտնէր զայն ընդունելու՝ եթէ Ծերակոյտը վաւերացնէր Ազգերու Ընկերութեան Դաշնաթուղթը:

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը Խաղաղութեան Վեհաժողովին մօտ՝ յարատեւ յարաբերութեան մէջ մնաց Ամերիկեան պատուիրակութեան հետ, ունեցաւ բազմաթիւ տեսակցութիւններ հոգատարութեան վերաբերմամբ քննութիւն մը կատարելու համար Հայաստան գացող եւ Պ. Չարլզ Քրէյնի նախագահութեան տակ գտնուող ամերիկեան Յանձնախումբի անդամներուն, ինչպէս նաեւ Զօրավար Հարպորթի հետ՝ անոր Հայաստան մեկնելէն առաջ: Դարձեալ բազմաթիւ տեսակցութիւններ ունեցաւ Տօքթ. Պարթընի հետ՝ անոր Փարիզէն անցած ատենը. Տօքթ. Պարթընն վճռապէս խոստացաւ աշխատիլ ի նպաստ Հայաստանի անկախութեան իրականացման, եւ ո՛եւէ ձեւի ներքեւ Ամերիկայի աջակցութեան ստացման: Նոյնպէս սերտ յարաբերութիւններ ունեցաւ Միացեալ-Նահանգներու Կ. Պոլսոյ նախկին դեսպան Պ. Մորկընթաուի հետ, որուն պատերազմի ընթացքին Թուրքիոյ մէջ Հայոց դէմ գործուած խժդժութեանց վերաբերմամբ ըրած հրատարակութիւնները եւ բանախօսութիւնները այնքան խոր տպաւորութիւն մը գործեցին Ամերիկայի մէջ: Ունեցաւ նաեւ մէկէ աւելի տեսակցութիւններ Գնդապետ Հասքէլի հետ, այս վերջնին իբր Բարձր-Քոմիսէր Հայաստան մեկնումէն առաջ:

Կովկասի մէջ սովի սպառնալիքին առջեւ, Պատուիրակութիւնը դիմումներ ըրաւ Ամերիկայի Պարենաւորման Նախարար Պ. Հուվըրի մօտ եւ ձեռք բերաւ ամսական 7000 թօնօ ալիւրի առաքումը Հայկական Հանրապետութեան. ստորագրուեցաւ պայմանագիր մը Ազգ. Պատուիրակութեան եւ Հայկական Հանրապետութեան Նախագահներուն կողմէ(*)[6], պայմանագիր՝ որուն համաձայն Հայկական պետութիւնը յանձն կ'առնէ յառաջիկային վճարել փոխ տրուած այս ալիւրին փոխարժէքը: Երեւանի կառավարութիւ-

[6] Անտոնեան աւելցուցած է այս ծանօթագրութիւնը. (*) Թարգմանութեան այս մասը սխալ պէտք է ըլլայ: Ֆրանսերէն բնագրին մէջ Ազգ. Պատուիրակութեան խօսք չկայ եւ նախադասութիւնը ճիշտ ու ճիշտ հետեւեալն է. «Un contrat a été signé par le Président de la Délégation de la République arménienne». այսինքն՝ «Պայմանագիր մը ստորագրուեցաւ Հայկական Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահին կողմէ», եւն.: Արդէն քանի մը տող վարը պայմանագրին Երեւանի կառավարութեան կողմէ վաւերացման յիշատակութիւնը ցոյց կու տայ որ ճիշտը ֆրանսերէն բնագիրն է:

նը վերջէն վաւերացուց այս պայմանագիրը որ ներկայ տարուան սկիզբը վերանորոգուեցաւ բազմաթիւ ամիսներու համար:

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը յատուկ դիմումներ ըրաւ Դաշնակից կառավարութեանց՝ թաթարներու եւ վրացւոց կողմէ վէճի տակ դրուած հայ հողամասերուն, Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջեւանի եւ Լոռիի համար, ինչպէս նաեւ Կիլիկիոյ համար:

1919ի գարնան վերջերը եղաւ վայրկեան մը ուր Ամբողջական Հայաստանի մը ծրագիրը, այնպէ՛ս ինչպէս Հայկական Համագումարը սահմանած[7] էր զայն եւ որ առաջին օրէն իսկ Ամերիկեան պատուիրակութեան հաւանութիւնը գտած էր, սկզբունքով ընդունուեցաւ Դաշնակիցներէն. թերթերու մէջ երեւցող կէս-պաշտօնական նօթեր նախատեսել կու տային Թուրքիոյ բաժանումը, Կ. Պոլիս միջազգային քաղաքի մը վերածուած, բուն թըրքական շրջանները երկու գօտիի բաժնուած, որոնց մէկը՝ Սուրիոյ հետ՝ կը դրուէր Ֆրանսայի հակակշռին տակ եւ միւսը՝ Իտալիոյ. Միջագետքը եւ Պաղեստինը Անգլիոյ պահպանութեան յանձնուած, եւ Հայաստանը՝ բաղկացած մեր Յիշատակագրին մէջ յիշուած բոլոր հողամասերէն (մէջը ըլլալով նաեւ Ատանայի վիլայէթը)՝ անկախ պետութիւն մը եղած, իրեն իբրեւ հոգատար ունենալով Ամերիկան: Ֆրանսական կառավարութիւնը ինքզինքը պատրաստ ցոյց կու տար հրաժարիլ Կիլիկիոյ վրայ իր յաւակնութիւններէն, ի բաց առեալ Իսկէնտէրունը, եթէ Ամերիկա ստանձնէր հոգատարութիւնը:

Ատկից քիչ վերջը, անգլիական նախարար Պ. Մօնթէկիւի առաջնորդութեամբ, Փարիզ ժամանեց Հնդկաստանի իսլամներուն պատգամաւորութիւնը որ կու գար Խաղաղութեան Համաժողովին մօտ բողոքել Թուրքիոյ բաժանումին եւ Սուլթանին Կ. Պոլսէն վտարման դէմ. այդ րոպէէն յետոյ յեղաշրջուեցաւ մեր բաղձանքներուն այնքան նպաստաւոր թուող այս կացութիւնը. բաւական ընդարձակ եւ անկախ ու Կ. Պոլիսը իրեն մայրաքաղաք ունեցող Թուրքիոյ մը կողմնակիցները վերստին ուժեղացան: Միւս կողմէ, Ամերիկացւոց մէջ գոյացաւ զօրաւոր հոսանք մը որ կը պահանջէր ո՛չ թէ Հայաստանի, այլ ամբողջ Թուրքիոյ եւ նոյն իսկ Կովկասի հոգատարութիւնը, մէջն ըլլալով Հայաստանը,- ինչ որ կնճռոտեց կացութիւնը: Պատուիրակութիւնը պայքարեցաւ այս հոսանքին դէմ, մղելու համար Ամերիկան որ ստանձնէ մի՛ միայն Թուրքիայէն անջատուած Հայկական պետութեան հոգատարութիւնը:

Ցաւելով տեսանք որ Զօրավար Հարպորթի վերջերս հրատարակուած տեղեկագիրը կը պաշտպանէր ամբողջ Թուրքիոյ եւ Հայաստանի համար հոգատարութեան մը տեսակէտը զոր մէջտեղ դնողներէն մէկը Պ. Մորկընթաուն էր:

[7] Ա. տարբերակին մէջ՝ սահմանագծած:

Թրքասէրները մինչեւ անգամ գաղափարը ունեցան Տամատ Ֆէրիտ փաշայի նախագահութեամբ Թրքական պատուիրակութիւն մը Փարիզ բերելու՝ Դաշնագրին խմբագրութենէն առաջ Թուրքիոյ ներկայացուցիչներուն կարծիքը առնել տալու նպատակով. այս Պատուիրակութեան ներկայացուցած Յիշատակագրին որ Թուրքիոյ ամբողջութեան պահպանումը կը պահանջէր, Խաղաղութեան Վեհաժողովը կորովի պատասխան մը տուաւ որ բոլորովին կը հակառակէր թրքասէրներու ձգտումներուն եւ որուն յետագայ հատուածը Օսմանեան իշխանութենէն ազատագրուիլը ցանկացող ոչթուրք ժողովուրդներու յոյսերը զօրացնելու բնոյթը ունէր.

«Պատմութիւնը մեզի կը յիշէ թրքական բազմաթիւ յաջողութիւններ եւ նաեւ բազմաթիւ թրքական ձախողութիւններ. նուաճուած ազգեր եւ ազատագրուած ազգեր: Յիշատակագիրն ալ կ'ակնարկէ դեռ մօտ ատեններս թրքական գերիշխանութեան տակ գտնուող հողամասերու նուազման:

«Բայց եւ այնպէս, այդ բոլոր փոփոխութիւններուն մէջ չենք գտներ միակ պարագայ մը, ըլլայ Եւրոպայի, ըլլայ Ասիոյ եւ մինչեւ իսկ Ափրիկէի մէջ, ուր ոեւէ երկրի վրայ Թրքական տիրապետութեան հաստատման յաջորդած չըլլայ այդ երկրին նիւթական բարօրութեան նուազումը եւ մշակութային մակարդակին անկումը. եւ գոյութիւն չունի նոյնպէս պարագայ մը ուր թրքական տիրապետութեան բարձման հետեւած չըլլայ նիւթական բարօրութեան յաւելում մը եւ մշակութային մակարդակի բարձրացում մը: Եւրոպայի քրիստոնեաներուն մէջ ըլլայ՝ թէ Սուրիոյ, Արաբիոյ եւ Ափրիկէի Մահմէտականներուն մէջ, Թուրքը ուրիշ բան ըրած չէ բայց եթէ քանդել ամէն ուր որ յաղթած է. ան երբեք կարող երեւցած չէ խաղաղութեան մէջ զարգացնելու ինչ որ շահած էր պատերազմով: Այս ուղղութեամբ չէ որ իր ձիրքերը կը կիրարկուին:

«Այս իրողութեանց բացայայտ եզրակացութիւնը ըլլալ կը թուի հետեւեալը.- Թուրքիա, առանց ոեւէ չքմեղանքի եւ առանց իր դէմ ոեւէ գրգռիչ պատճառի, կանխամտածութեամբ յարձակում գործած ըլլալով Համաձայնական պետութեանց վրայ եւ յաղթուած ըլլալով, իր յաղթականներուն թողած է իր այլացեղ կայսրութիւնը կազմող զանազան ժողովուրդներուն ճակատագիրը տնօրինելու ծանր պարտականութիւնը: Դաշնակից գլխաւոր պետութեանց ժողովը կը փափաքի այս պարտականութիւնը կատարել գէթ այն չափով ո՛ր չափով որ համաձայն է այդ ժողովուրդներու բաղձանքներուն եւ տեւական շահերուն հետ»:

Բայց այս կորովի եւ յստակ փաստաթուղթը երբեք չկասեցուց Թրքասիրական շարժումը որ, ընդհակառակը, երթալով մեծցաւ: Ամերիկայի մէջ Պ. Ուիլսոնի հակառակորդները կրկնապատկեցին իրենց ջանքերը անոր ծրագիրներուն իրականացման դէմ, ընդդիմացան Ազգերու Ընկերութեան շատ մը կարեւոր յօդուածներուն Ամերիկայի կողմէ ընդունուելուն, եւ մաքառեցան յանուն Ազգերու Ընկերութեան Ամերիկայի ո՛եւէ հոգատարութիւն ըստանձնելու գաղափարին դէմ: Հայկական անկախութեան դատը անտա-

րակոյս բարեկամներ միայն ունէր Ամերիկայի երկու ընդդիմադիր խումբերուն մէջ. Հանրապետականները, սկսեալ իրենց վարիչ Պ. Լոճէ, նոյնքան ջերմ կողմնակիցներ էին որքան Ռամկավարականները, անկախ ամբողջական Հայաստանի մը կազմութեան, բայց կը մտադրէին Ամերիկայի կողմէ այս Հայ պետութեան ուղղակի աջակցութիւն մը միայն ընծայել, առանց Ազգերու Ընկերութեան անունով ո՛եւէ հոգատարութիւն առնելու: Եկաւ վայրկեան մը ուր Դաշնակիցներու մէջ ամէն մարդ համոզուեցաւ թէ Պ. Ուիլսոն Ծերակոյտին մէջ մեծամասնութիւնը չպիտի ունենայ, ինչ որ դէպքերը քիչ վերջ եկան հաստատել: Մեր Ամերիկացի բարեկամներէն շատեր գրեցին Պատուիրակութեան թէ այլեւս բնաւ յոյս չկար որ Ամերիկա ստանձնէր Հայաստանի հոգատարութիւնը: Հանրապետական Կուսակցութեան պատկանող յայտնի հայասէրներ, որոնք անդամ էին Հայաստանի անկախութեան Ամերիկեան Քօմիթէին, շարունակ խորհուրդ կու տային Հայկական պատուիրակութեան որպէս զի չպնդէ հոգատարութեան մասին եւ միայն խնդրէ ամերիկեան ազգին օժանդակութիւնը, այսպիսով անխտիր ամբողջ ամերիկեան ժողովուրդին միահամուռ աջակցութիւնը ունենալու համար: Հայաստանի անկախութեան Ամերիկեան Քօմիթէին նախագահը, Պ. Ճէրըրտ, որ բարեկամ մըն է Պ. Ուիլսոնի, 10 Հոկտեմբեր 1919ին ամերիկեան կառավարութեան կ'ուղղէր Յիշատակագիր մը որով կը խնդրէր, ո՛եւէ հոգատարութենէ դուրս, Ամերիկայի ուղղակի եւ անմիջական օժանդակութիւնը Հայ պետութեան եւ բանակին, որպէս զի ի վիճակի ըլլան Թրքական Հայաստանը գրաւելու եւ Ամբողջական Հայաստանը կազմելու:

Ծերակուտական Պ. Ուիլեամս Ծերակոյտին ներկայացուց բանաձեւ մը որով կը խնդրուէր կառավարութենէն օգնել Հայ պետութեան, առանց ըսպասելու Ազգերու Ընկերութեան վերաբերեալ վէճին լուծման, 50 միլիոն տոլարի նուիրատուութիւն մը ընելով եւ 10.000 զինուոր ղրկելով Հայաստան:

Հայկական պատուիրակութեան թելադրութեան վրայ, մեր գաղութներէն շատերը, Փարիզ, Լոնտոն, Պրիւքսէլ, Իզմիր, Աթէնք, եւայլն, հեռագիրներ ղրկեցին Ծերակոյտի նախագահին, խնդրելով որ Ծերակոյտը ընդունի այդ բանաձեւը:

Միացեալ-Նահանգներուն մէջ հայասիրական շարժումը զօրացնելու եւ Հայկական պետութեան անմիջական օգնութիւն մը ստանալու նպատակով եղած դիմումները լաւագոյն կերպով կատարելու համար, Հայկական Հանրապետութեան Պատուիրակութիւնը 1919 Յունիսին առաջարկեց Ամերիկա ղրկել Վսեմ. Յովհաննէս խան Մասէհեանը իբրեւ լիազօր ներկայացուցիչ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան: Մասէհեան խան յայտնեց թէ պատրաստ է այդ պաշտօնը ստանձնելու, եւ որոշեց իրեն հետ տանիլ իբրեւ քարտուղար Պ. Լեւոն Շանթը: Ազգ. Պատուիրակութիւնը առանց վերապահութեան ընդունեցաւ այդ առաջարկը: Դժբախտաբար Մասէհեան խան արգելքներ ունեցաւ այս պաշտօնը կատարելու: Քիչ ժամանակ վերջը, Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեան Ամերիկա ղրկուեցաւ միեւնոյն պաշտօնով, իբրեւ

լիազօր ներկայացուցիչ Հայ Ազգ. Պատուիրակութեան, եւ Պ. Գ. Փաստրմաճեան այնտեղ գնաց Միացեալ-Նահանգներու մօտ [Հայաստանի] Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնով: Միեւնոյն ատեն, զինուորական պատուիրակութիւն մը, կազմուած Զօրավար Բագրատունիէ եւ Զօրավար Անդրանիկէ, առաջնին նախագահութեամբ, Ամերիկա կը մեկնէր յանուն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան, աշխատելու համար ձեռք բերել Ամերիկայի զինուորական օժանդակութիւնը Հայաստանի, այսինքն ամերիկեան զօրքերու առաքումը եւ Միացեալ-Նահանգներու կառավարութեան օգնութեամբ Հայ կամաւորական խումբերու կազմութիւնը: Հայկական Հանրապետութեան նախկին Վարչապետ Պ. Քաջազնունի եւ նախկին Ելմտական Նախարար Պ. Էնֆիաճեան, իրենց օժանդակ ունենալով Պ. Փիրալեանը, նոյն պահուն կը մեկնէին Ամերիկա, Երեւանի կառավարութեան կողմէ Ամերիկեան կառավարութենէն փոխառութ[եա]ն մը համար դիմումներ ընելու պաշտօնով: Համաձայնուեցաւ որ այս բոլոր պատգամաւորութիւնները միաբան պիտի գործէին եւ միեւնոյն ծրագրին պիտի հետեւէին: Այդ ծրագիրն էր՝ աշխատիլ ստանալու Ամերիկայի դրամ[ակ]ան եւ զինուորական օժանդակութիւնը, ինչպէս նաեւ ճանչցնելու Հայաստանի Հանրապետութեան գոյապէս անկախութիւնը իր ներկայ սահմաններուն մէջ: Մինչեւ այդ վայրկեանը կար տեսակէտներու որոշ տարբերութիւն մը երկու պատուիրակութեանց միջեւ՝ այս ճանաչումը ստանալու մասին ըլլալիք դիմումներուն վերաբերմամբ: Հանրապետութեան Պատուիրակութիւնը կ'ուզէր Երեւանի կառավարութիւնը ճանչցնել իբրեւ Ամբողջական Հայաստանի կառավարութիւն. Ազգ. Պատուիրակութիւնը կը նկատէր որ աւելի տրամաբանական է եւ քաղաքական կացութեան աւելի համապատասխան՝ որ Երեւանի կառավարութիւնը ճանչցուի իբրեւ գոյապէս կառավարութիւն Հանրապետութեան ներկայ սահմաններուն մէջ, ըսպասելով որ Միացեալ Հայաստանը կատարուած իրողութիւն մը դառնայ եւ վերջնականապէս կազմուած այս Հայկական պետութիւնը Դաշնակիցներու կողմէն իրաւապէս ճանչցուի: Վերոյիշեալ զանազան պատգամաւորութեանց մեկնումէն քիչ առաջ, յանուն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագրի մը առիթով, երկու պատուիրակութիւնները համաձայնեցան այդ խնդրին վերաբերմամբ հետեւեալ բանաձեւին վրայ.- Պահանջել Հայկական Հանրապետութեան, ա՛յնպէս ինչպէս որ կայ, գոյապէս անկախութեան ճանաչումը:

Դժբախտաբար պատգամաւորութիւնները, հակառակ իրենց ըրած բոլոր ջանքերուն, երկար ատեն ապարդիւն մնացին. Ամերիկա, Ազգերու Ընկերութեան վերաբերեալ իր մեծ վէճին պատճառաւ ինքն իր մէջ բաժնուած, մինչեւ այս վերջին ժամանակներս չկրցաւ վճռական որոշում մը տալ խընդրուած զինուորական եւ դրամական օգնութիւնը Հայաստանի հայթայթելու մասին: Անոնք յաջողեցան միայն վերանորոգել տալու Հայաստանի փոխ

տրուած ալիւրին պայմանագիրը, ոյժ տալով ատոր համար պատուիրակութեան իսկ ըրած դիմումներուն:

1920 Յունուար 14ին Խաղաղութեան Վեհաժողովը ճանչցաւ գոյապէս անկախութիւնը Վրաստանի եւ Ատրպատականի[8] Հանրապետութիւններուն: Ստոյգ աղբիւրէ տեղեկութիւն առինք թէ Վեհաժողովը յետաձգած էր Հայկական Հանրապետութեան ալ ճանաչումը, ո՛չ երբեք չարամիտ դիտումով մը, այլ Միացեալ Հայաստանի պետութեան կազմութենէն ետք այդ գործողութիւնը կատարելու մտադրութեամբ: Պատուիրակութիւնը խորհեցաւ թէ այդ յետաձգումը կրնար գէշ մեկնուիլ Հայ ժողովուրդին եւ իր դրացիներուն կողմէ, ու որոշեց նոր դիմում մը ընել Խաղաղութեան Վեհաժողովին որպէս զի մինչեւ Միացեալ Հայկական Պետութեան իրաւապէս ճանաչումը, գոյապէս ճանչցուի ներկայ Հանրապետութեան կառավարութիւնը[9]: Այս իմաստով Յիշատակագիր մը ներկայացուեցաւ Վեհաժողովին Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ, եւ Ապրիլ 19ին Վեհաժողովը ճանչցաւ Հայկական Հանրապետութեան գոյապէս անկախութիւնը, առանց սահմաններու հարցը կանխորոշելու. անգլիական արտաքին գործոց նախարարութիւնը, Ազգային Պատուիրակութեան Լոնտոնի ներկայացուցչին հաղորդելով այս որոշումը, կ'աւելցնէր թէ այս ճանաչումը չէր կապուեր Թրքական Հայաստանի եւ թէ կը վերաբերէր մի՛ միայն Երեւանի Հանրապետութեան: Այս ճանաչումը տեղի ունեցաւ նախ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ, յետոյ Ճաբոնի կողմէ. Ամերիկա վերապահեց իր որոշումը. միայն քանի մը շաբաթ առաջ է որ Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը, որ ճանչցած չէ Վրաստանի եւ Ատրպատականի Հանրապետութիւնները, ճանչցաւ Հայկական Հանրապետութեան գոյապէս անկախութիւնը, հետեւանք տալով մեր Ամերիկայի պատգամաւորութեանց, ինչպէս նաեւ նոյն ինքն Պատուիրակութեանս դիմումներուն:

Մինչ այդ, Հայաստանի հոգատարութեան Ամերիկայի կողմէ ստանձնումը Դաշնակիցներուն այնուհետեւ այլեւս անկարելի նկատուելով, Ֆրանսա վերադարձաւ իր 1916ի Համաձայնագրին վրայ հիմնուած նախկին ծրագրին, որով Կիլիկիա եւ Խարբերդի, Տիգրանակերտի ու Սեբաստիոյ վիլայէթները կը մտնէին ֆրանսական ազդեցութեան գօտիին մէջ. 1919 Նոյեմբեր ամսուն համաձայնութիւն մը կնքուեցաւ ընդմէջ Անգլիոյ եւ Ֆրանսայի, որուն հիման վրայ ֆրանսական զօրքերը Կիլիկիոյ մէջ բրիտանական զօրքերու տեղը պիտի բռնէին. այս համաձայնութիւնը, ինչպէս 1916ինը, կընքուեցաւ առանց Հայկական Պատուիրակութեան հետ խորհրդակցելու:

---

[8] Թէքէեանի թարգմանութեան համաձայն, Ա. Տարբերակին մէջ՝ Ատրպէճանի:

[9] Նախադասական կառոյցն այստեղ իր յստակութեամբ կու գայ հիմնաւորել Անտոնեանի բնագիրը հիմք ընդունելու մեր որոշումը: Ա. տարբերակին մէջ, որ բառացի արտագրումն է Թէքէեանի կատարած թարգմանութեան, կ'ըսուի. «... մինչեւ միացեալ հայկական պետութեան իրաւապէս ճանաչումը, ճանչցուի ներկայ Հանրապետութեան գոյապէս կառավարութիւնը»:

1919 Նոյեմբերին, վսեմ. Պօղոս Նուպար փաշայի հետ տեսակցութեան մը միջոցին, Լորտ Քըրզըն յայտարարեց թէ Ամբողջական Հայաստանի մը ծրագիրը չէր կրնար այլեւս իրականանալ, ըստ որում Նախագահ Ուիլսոն մեծամասնութիւն մը չունէր իրեն հետ եւ հետեւաբար Ամերիկա պիտի չընդունէր Հայաստանի հոգատարութիւնը: Լորտ Քըրզըն ըսած էր միեւնոյն ատեն թէ Վեհաժողովը վճռած էր Միացեալ եւ անկախ Հայկական պետութիւն մը կազմել, բայց թէ այդ պետութիւնը շատ նուազ ընդարձակ պիտի ըլլար քան ինչ որ Հայերը կը պահանջէին իրենց Յիշատակագրով. թէ՝ այդ պետութիւնը իր մէջ պիտի պարունակէր ներկայ Հանրապետութեան հողամասերը եւ Թրքական Հայաստանի մէկ մասը՝ Սեւ ծովու վրայ ելքով մը: Անիկա աւելցուցած էր. «Գալով Կիլիկիոյ՝ պէտք է յարմարիք Ֆրանսայի հետ, որովհետեւ այդ երկիրը Ֆրանսական գօտիին մէջ կը գտնուի»: Լորտ Քըրզըն դիտել տուած էր նոյնպէս թէ այդ ապագայ Հայկական պետութեան եւ Կիլիկիոյ մէջտեղը ինկող հողամասերը մեծ մասամբ իսլամներէ բնակուած ըլլալով, դժուար էր զանոնք անջատել Թրքական պետութենէն: Ազգ. Պատուիրակութեան նախագահը յայտնած էր Լորտ Քըրզընի թէ այս յայտարարութիւնները խորին ցաւ պիտի պատճառեն հայ ժողովուրդին, եւ յիշեցնելով անոր թէ Դաշնակիցները խոստումներ տուած են բոլոր հայ հողամասերը թրքական տիրապետութենէ ազատագրելու՝ պնդած էր սա՛ իրողութեան վրայ թէ այդ բոլոր շրջաններուն մէջ հայ ազգաբնակչութիւնը պատերազմի նախօրեակին մեծամասնութիւն կը կազմէր: Բայց Լորտ Քըրզըն կրկնած էր որ բոլոր Հայ հողամասերու արմատապէս ազատագրումը անկարելի դարձած է Ամերիկայի կողմէ հոգատարութիւնը ստանձնելու մերժումին պատճառաւ: Արդէն Լորտ Քըրզըն հրապարակաւ ալ, նոյն ատենները, միեւնոյն յայտարարութիւնը ըրաւ [անգլիական] խորհրդարանին առջեւ արտասանուած ճառի մը մէջ:

Ատկէ քիչ վերջը, Պ. Պէրթլօ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան քաղաքական գործերու տնօրէնը, Պօղոս Նուպար փաշայի հետ տեսակցութեան մը միջոցին համանման յայտարարութիւն մը ըրաւ վերածեալ բայց բացարձակապէս անկախ հայկական պետութեան մը վերաբերմամբ եւ հաւաստեց թէ Կիլիկիոյ մէջ մասնաւոր րէժիմ մը պիտի հաստատուի (*):[10]

Երկար խորհրդակցութիւններէ վերջ, Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ինքզինքը ցաւագին հարկին մէջ գտաւ ազգային ծրագիրը պատշաճեցնելու այս նոր կացութեան. անտարակոյս ոչ մէկ իրաւալքում ընդունուած էր. Պատուիրակութիւնը պիտի շարունակէր յայտարարել թէ

[10] Անտոնեան ծանօթագրած է. «(*) Այս տեղեկագիրը հազիւ պատրաստուած ըլլալով նախորդ իրիկուն, ՊՊ. Վահան Թէքէեան, Արամ Անտոնեան, Արտաւազդ Հանըմեան եւ Արշակ Չօպանեան իրենց մէջ բաժնեցին զայն, իսկոյն թարգմանելու համար: Սկիզբէն մինչեւ այստեղ թարգմանած է Պ. Վահան Թէքէեան»:

Հայ ազգին իրաւունքները՝ Խաղաղութեան Վեհաժողովին մատուցուած մեր Յիշատակագրին մէջ պահանջուած բոլոր հողամասերուն վրայ՝ կը մընան անեղծ. բայց որովհետեւ պարագաները անկարելի կը դարձնէին այս ամբողջական ծրագրին անմիջական իրականացումը, կը պահանջէր որ Հայկական պետութիւնը կազմուի Հայ Հանրապետութեան հողամասերէն, եւ Էրզրումի վիլայէթէն, Վանի վիլայէթէն (առանց Հէքքիարիի Սանճագին), Պիթլիսի վիլայէթէն (առանց Սղերդի Սանճագին) ու Խարբերդի Սանճագէն, ինչպէս նաեւ Սեւ ծովու եզերքի մէկ մասէն՝ ընդմէջ Տրապիզոնի եւ Պաթումի (մէջը ըլլալով նաեւ Տրապիզոնը, եթէ Դաշնակիցները մտադրութիւն չունենային Պոնտոսի Հանրապետութիւն մը ստեղծելու): Հայաստանի մընացեալ մասին համար, այսինքն Մալաթիոյ Սանճագին, Սվազի եւ Տիարպէքիրի վիլայէթներու քանի մը շրջանակներուն եւ Կիլիկիոյ համար՝ կը պահանջէր որ ամբողջովին ազատուին թրքական տիրապետութենէն, Դաշնակիցներէն ճանչցուին իբր հայկական հողամասեր, օժտուին ինքնավար րէժիմով մը եւ Ֆրանսա ստանձնէ անոնց պաշտպանութիւնը իբր հոգատար, Ազգերու Ընկերութեան անունով: Պարագաներուն յարմարցուած այս ծրագրին վերջնական խմբագրութեան մէջ՝ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ունեցաւ Ազգ. Համագումարի Նախագահ վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեանի աշխատակցութիւնը:

Լոնտոնի մէջ, այն դիմումներուն ընթացքին զորս կատարեց Վեհաժողովին մօտ որ մասնաւորաբար կը զբաղէր Թրքական հարցով, Պատուիրակութիւնը ունեցաւ աջակցութիւնը Ամենապատիւ Տ. Զաւէն պատրիարքի. քիչ ետքը ժամանեցին Հայ-Կաթոլիկ Պատրիարքարանի ներկայացուցիչ Նազլեան Գերապայծառ եւ Երեւանի Առաջնորդ Խորէն Եպիսկոպոս, որոնք թէ՛ Փարիզի եւ թէ՛ Լոնտոնի մէջ նոյնպէս օժանդակեցին Պատուիրակութեան:

Պօղոս Նուպար փաշա, Պ. Ահարոնեան եւ Զօրավար Կօրկանօֆ, ինչպէս նաեւ Ամեն. Զաւէն պատրիարք Լոնտոնի մէջ բազմաթիւ անգամներ ունկնդրութեան ընդունուեցան Սահմանագծման Յանձնաժողովին կողմէ եւ պարզեցին այն պատմական, ազգագրական ու ռազմագիտական պատճառները որոնց յենած էին Պատուիրակութեան հողային պահանջումները:

Սահմանագլուխը պիտի մեկնէր Տրապիզոնի արեւելեան կողմը գտնուող կէտէ մը, Սեւ ծովուն եզերքէն՝ ընդմէջ Տրապիզոնի եւ Սիւրմէնէի, եւ պիտի ուղղուէր դէպի հարաւ՝ դուրս ձգելով Երզնկան, բայց Հայաստանի պահելով Էրզրումը, Բաբերդը, Մամախաթունը. այս գիծը՝ Տաւրոսեան լեռնաշղթային հասնելուն՝ պէտք էր դառնար դէպի արեւելք եւ երկարէր մինչեւ Պարսկական սահմանագլուխը, դուրս ձգելով Հէքքիարին եւ Սղերդի Սանճագը եւ Հայաստանի պահելով Պիթլիսն ու Վանը. արեւելեան սահմանագլուխը հաստատուած էր թուրքեւպարսիկ հին սահմանագծով՝ մինչեւ Հայկական Հանրապետութեան երկրամասը. իսկ Հանրապետութեան սահ-

մանները յետագային պիտի որոշուէին Հայոց, Վրացւոց եւ Ատրպատականցւոց միջեւ կայանալիք համաձայնութեամբ մը:

Խորհրդաժողովին Լոնտոն գումարուած միջոցին՝ Պատուիրակութեան կողմէ բազմաթիւ ծանուցագրեր ուղղուեցան Գերագոյն Խորհուրդին եւ Դաշնակից զանազան կառավարութեանց, բացատրելու համար այն կենսական կարեւորութիւնը զոր ունէր Էրզրումի վիլայէթին ամբողջութեան եւ Խարբերդի Սանճագին կցումը Հայկական պետութեան:

Միւս կողմէ՝ Անգլիական կառավարութիւնը՝ վերջապէս նպաստաւոր ընդունելութիւն մը ընելով Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ երկար ատենէ ի վեր եղած դիմումներուն, խոստացաւ հայթայթել հայկական բանակին անհրաժեշտ զէնքերը, ռազմամթերքն ու կազմածները եւ բանակին թիւը բարձրացնել 40.000ի. խոստացաւ նաեւ բանակին տալ սպաներ: Հայկական պետութիւնը ապագային պիտի հատուցանէ Անգլիոյ կողմէ եղած այս ամբողջ օգնութեան ծախքերը: Բրիտանական կառավարութեան այս խոստումը արդէն իսկ գործադրուելու վրայ է: Ֆրանսական կառավարութիւնն ալ, իր կողմէ կը քննէ թէ ինչպէ՞ս պիտի կրնայ մասնակցիլ զէնքի եւ ռազմամթերքի այդ առաքման:

Լոնտոն մեկնելէն առաջ, Պօղոս Նուպար փաշա քանի մը տեսակցութիւններ ունեցած էր, որոնցմէ վերջինը Պ. Ահարոնեանի ընկերակցութեամբ, Պ. Պէրթլօի հետ՝ որուն պարզած էր Պատուիրակութեան կողմէ նոր կացութեան բերմունքով ընդունուած ծրագիրը. յիշեցնելով Կիլիկիոյ եւ սահմանակից երեք վիլայէթներու մասին այն յանձնառութիւնները զորս Ֆրանսա ստանձնած էր 1916ին, Ազգ. Պատուիրակութեան հետ կատարած իր բանակցութեանց ընթացքին՝ Հայկական Լեգէոնի կազմութեան առթիւ, Պօղոս Նուպար փաշա յոյս յայտնած էր թէ Ֆրանսա ոյժ պիտի տայ այսպէս նոր պարագաներուն յարմարցուած հայկական պահանջումներուն եւ պիտի գործադրէ իր խոստումները յիշեալ երեք նահանգներուն եւ Կիլիկիոյ մասին: Պ. Պէրթլօ վստահեցուցած էր զինքը թէ Ֆրանսա պիտի յարգէ իր յանձնառութիւնները եւ ոյժ պիտի տայ հայկական պահանջմանց:

Քիչ ետքը, Պ. Միլրան, երբ Լոնտոն կ'երթար Խորհրդաժողովին մասնակցելու, իրեն հետ կը տանէր ֆրանսական խորհրդարանի արտաքին գործոց Յանձնաժողովին կողմէ քուէարկուած որոշում մը, որով Յանձնաժողովը կը պահանջէր որ ամբողջովին Ֆրանսական ազդեցութեան ենթարկուելիք երեք նահանգներն ու Կիլիկիան սահմանակից ըլլան Հայկական պետութեան, այն տեսակ եղանակով մը որ Թուրքերու պատկանող ոչ մէկ հողամաս մնայ այդ ազդեցութեան շրջանակին եւ Հայկական Պետութեան միջեւ:

Անկլօ-Հայկական Քօմիթէն ալ 1920 Յունուար 1-ին բրիտանական կառավարութեան մատուցած Յիշատակագրին մէջ այդ ծրագիրը ջատագովեց: Ահաւասիկ այդ Յիշատակագրին էական մասերը.-

«... Հայաստանի եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ ամէն կապ պէտք է խզուի վերջնականապէս, եւ այս կերպով անջատուած երկիրը պէտք է պարունակէ Թրքական պետութեան արեւելեան սահմանէն սկսեալ մինչեւ արաբական պետութեան հիւսիսային սահմանին վերեւ գտնուող բոլոր նախկին Օսմանեան նահանգները, որոնց մէջ, 1914ին գոյութիւն ունէր Հայերէ, Քիւրտերէ, Յոյներէ, Գըզըլպաշներէ եւ Թուրքերէ բաղկացած խառն բնակչութիւն մը. այսինքն՝ Իսկէնտէրունի հիւսիսային կողմի, Տիարպէքիրի, Հէքքիարիի, Միջերկրականի վրայ Սելեւքէի արեւելեան կողմի, Գըզըլ Ըրմաքի վրայ Սվազի, եւ Սեւ ծովուն վրայ Եասուն հրուանդանին հողամասերով կազմուած երկիրը: Այս խոշոր գծերով սահմանուած երկրին մէջ՝ Կ. Պոլսոյ Օսմանեան կառավարութիւնը երկար տարիներու ընթացքին իրարու դէմ թշնամութեան եւ ներքին պատերազմի մղած է բնիկ զանազան ցեղերը. եւ շատ ապացոյցներ կան հաստատող թէ անգամ մը որ այս տարօրինակ եւ չարամիտ վեհապետութիւնը մեկուսացուի, այդ ցեղերը պիտի կրնան միասին ապրիլ բարեկամութեան եւ հաւասարութեան զգացումներով:

«Քօմիթէն կ'ընդունի որ երբ այդ երկիրը անջատուի Թուրքիայէն, կարելի չպիտի ըլլայ մօտաւոր ապագայի մը մէջ զայն կազմակերպել իբր միակ պետութիւն. միւս կողմէ՝ կ'ըմբռնէ որ եթէ Ամերիկա չընդունի ամբողջ երկրին վրայ հոգատարութիւնը, կարելի պիտի ըլլայ ուրիշ երկրի մը հոգատարութեան յանձնել այս երկրին հարաւ-արեւմտեան մասերը (Կիլիկիոյ ծովեզերքէն մինչեւ Տիարպէքիր եւ Խարբերդ): Այն պարագային երբ կարելի չըլլայ միակ հոգատարութիւն մը ապահովել Միացեալ-Հայաստանի համար, առարկութիւն չ'ըներ այդ կարգադրութեան դէմ, բայց կը թելադրէ որ այդ մասնակի հոգատարութիւնը նոյն երկիրներուն ապահովէ՝ ա.) կատարեալ անջատում մը Թուրքիայէն, բ.) կատարեալ անջատում մը Սուրիոյ ազգ. Արաբական պետութենէն, որուն համար ալ միեւնոյն պետութիւնը կրնայ առանձին հոգատարութիւն մը ստանձնել, գ.) ազատութիւն եւ հաւասարութիւն բոլոր ցեղերուն ու կրօնքներուն՝ հոգատարութեան ենթարկուած երկրին մէջ, դ.) պարտաւորութիւն մը հոգատար պետութեան կողմէ՝ ժողովուրդը մարզելու որպէս զի ինքզինքը կառավարէ եւ օր մը կարենայ ինք իր ձեռքով վարել իր ճակատագիրը, ու վերջապէս ե.) ներկայիս ըլլալիք այս առժամանակեայ կարգադրութիւնը պէտք չէ պարունակէ այն տեսակ բան մը որ օր մը արգելք դառնայ այդ նահանգներուն վերջնականապէս Հայաստանի միւս մասին միանալուն:

«Քօմիթէն կը պահանջէ որ Թուրքիայէն անջատուելիք հայկական երկիրներու մնացած մասը անմիջապէս մտնէ հայկական անկախ պետութեան մը կորիզին մէջ, որուն հաստատում[թեան ու] անմիջական ճանաչման համար կը բաժնէ Լորտ Քըրզընի յայտնած յոյսը: Քօմիթէն գոհունակութեամբ տեղեկացաւ որ լորտը չէ առաջարկած, ինչպէս կարգ մը ոչ-պաշտօնական շրջանակներու մէջ յայտարարուեցաւ, սահմանափակել այդ պետութիւնը արդի Երեւանեան Հանրապետութեան կատարելապէս անբաւական հողե-

րուն մէջ, բայց միւս կողմէ կը փափաքի որ լորտը աւելի յստակ յայտարարութիւն մը ընէ այս մասին: Քօմիթէին կարծիքով՝ անկախ Հայաստանը պէտք է պարունակէ ո՛չ միայն երեւանի եւ Կարսի նախապէս Ռուսիոյ սեփականութիւն եղող շրջանակները, այլ նաեւ նախապէս Օսմանեան Կայսրութեան պատկանող հողամասերու շրջանակ մը որ առ նուազն իր մէջ պարունակէ Վան, Մուշ, Էրզրում եւ Երզնկա քաղաքները ու Սեւ ծովուն վրայ նաւահանգիստ մը»:

Լորտ Պրայս, 1920 փետրուար 16 թուականով Մարդկային Իրաւանց Պաշտպանութեան Դաշնակցութեան կողմէ կազմակերպուած միթինկին առթիւ՝ նոյն Դաշնակցութեան նախագահին ուղղած նամակի մը մէջ կը գրէր.

«Իբր հետեւանք այն արիութեան որով Հայերը կռուեցան Դաշնակից բանակներու մէջ եւ որոնց փոխարէն խոստացուած էր հայկական ազատութիւնը, պարտականութիւն մը կը ծանրանայ Ֆրանսայի վրայ: Ուրախութեամբ կը ձայնակցինք ձեզի, պահանջելով որ ամբողջ Հայաստան միանգամ ընդմիշտ ազատի Թուրք տիրապետութեան ամէն մնացորդէ: Հաստատապէս կը հաւատանք թէ ֆրանսական ժողովուրդին համակրութիւնը զօրավիգ պիտի դառնայ Հայաստանի այն մասին եւ Կիլիկիոյ, որոնք (ինչ որ ալ ըլլայ) Ազգերու Ընկերութեան «մանտա»յով մը պիտի պաշտպանուին ու կառավարուին Ֆրանսայի կարեկից ձեռքով. մինչդեռ այն մասը որ իր քաղաքական կատարեալ անկախութեան պիտի տիրանայ իբր Հայկական Հանրապետութիւն, պիտի մտնէ մշտակայ յառաջդիմութեան ճամբուն մէջ»:

Պարագաներուն յարմարցուած այս ծրագրին վերաբերող բոլոր դիմումները Դաշնակից կառավարութեանց մօտ՝ տեղի ունեցան Լոնտոնի եւ Փարիզի ամերիկեան դեսպաններու խորհուրդը հարցնելէ վերջ. երկուքն ալ յայտարարեցին թէ յոյս չունին որ Ամերիկա ստանձնէ հոգատարութիւնը: Միւս կողմէ, պարագաներուն պարտադրած այս նուազագոյն ծրագիրը կազմելէ առաջ, Պատուիրակութիւնը, Ամբողջական Հայաստանի միութիւնը պահպանելու համար, փորձ մը ըրաւ, հարցնելով նախ Անգլիոյ, յետոյ Ֆրանսայի, թէ կ'ուզե՞ն ընդունիլ Ամբողջական Հայաստանի պետութեան հոգատարութիւնը. թէ՛ Լորտ Քըրզըն եւ թէ Պ. Պէրթլօ, որոնց այս հարցումը եղած էր Պօղոս Նուպար փաշայի կողմէ, մերժողական պատասխան տուին:

Գերագոյն Խորհուրդը, Լոնտոնի մէջ, Հայաստանի սահմանները գծելէ վերջ, Ազգերու Ընկերութեան Գործադիր Խորհուրդին դիմեց, անոր առաջարկելով ընդունիլ Հայաստանի հոգատարութիւնը: Գերագոյն Խորհուրդը խնդրեց այդ առթիւ Հայկական Պատուիրակութենէն այն անհրաժեշտ ծանօթութիւնները որոնք պէտք պիտի ըլլային այս հոգատարութեան նկատմամբ Ազգերու Ընկերութեան Խորհուրդը լուսաբանելու համար: Այդ ծանօթութիւնները տրուեցան Գերագոյն Խորհուրդին որ զանոնք հաղորդեց Ընկերութեան Խորհուրդին: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան

կողմէ դիմումներ եղան թէ՛ Լոնտոնի եւ թէ՛ Փարիզի մէջ, Ընկերութեան վարիչներուն մօտ, որպէս զի ընդունին Գերագոյն Խորհուրդին առաջարկը: Ընկերութեան Խորհուրդը, Փարիզի մէջ եւ մասնաւորաբար հայկական խնդրին համար ունեցած գումարման ընթացքին, որոշեց ստանձնել Հայկական պետութեան պաշտպանութիւնը. իր որոշումը որ տրուած էր բոլոր անդամներուն միաձայնութեամբ, ձեւաբանուեցաւ Անգլիոյ Հանրային Կրթութեան նախարար Պ. Ֆիշէրի ճառով, որուն գլխաւոր հատուածները հետեւեալներն են.-

«... Ազգերու Ընկերութեան Խորհուրդը այնպէս կը նկատէ որ ազատութեան, ապահովութեան եւ անկախութեան հիման վրայ Հայկական պետութեան մը կազմութիւնը նպատակ մըն է որ իր մէջ կը միացնէ եւ արժանի է միացնելու բովանդակ քաղաքակիրթ աշխարհին լուսամիտ հանրային կարծիքին գործօն համակրութիւնը: Բաւականաչափ յայտնի է արդէն թէ հայկական հինաւուրց ազգը դժբախտութեանց զոհ դարձաւ այս վերջերս. եւ իր դժբախտութիւնները՝ իրենց ընդարձակութեամբ ու սոսկումով կը գերազանցեն համանման ինչ որ կրցած են արձանագրել մարդկութեան տարեգրութիւնները այս մոլորակին վրայ: Եթէ կարելի չըլլար հնար մը գտնել այս դժբախտ ժողովուրդը ապահովելու համար այն աղէտներուն դէմ զորս կրեց վերջերս, ատիկա պիտի նշանակէր իրապէս թէ քաղաքակրթութեան միջոցները շատ աննշան բաներ են:

«Ազգերու Ընկերութեան Խորհուրդը այնպէս կը նկատէ թէ հասնելու համար այդ նպատակին որ տիեզերապէս բաղձալի հռչակուած է, պէտք է որ քաղաքակիրթ պետութիւն մը, Ազգերու Ընկերութեան հովանաւորութեան տակ, ընդունի Հայաստանի հոգատարութիւնը: Այնպէս կը հաւատանք թէ այս տեսակ լուծում մը սիրով պիտի ողջունուի Հայոց կողմէ. այդ լուծումը ամէնէն լուրջ յոյսերը կը ներշնչէ դրական ու բարգաւաճ վարչութեան մը հաստատութեան մասին, եւ կը համաձայնի այն կարգադրութեանց որոնք վերջերս ծրագրուեցան՝ Ազգերու Ընկերութեան պաշտպանութեան ենթարկելու համար Ասիոյ ուրիշ մասերը, որոնց մէջ, քաղաքական տեսակէտով, իրերու դրութիւնը բոլորովին տարբեր բան մը չէ(*):[11]

«Կարելի է հարց տալ սակայն թէ արդեօք հաւանակա՞ն է որ պետութիւն մը տրամադիր ըլլայ ընդունելու այդպիսի պատասխանատուութիւն մը: Ազգերու Ընկերութեան Խորհուրդը կը խորհի որ այդ հարցին պատասխանը մասամբ կախում ունի զինուորական միջոցներէն որոնք կարող են ձեռք առնուիլ խնդրոյ առարկայ եղող հողամասերը ազատագրելու եւ նոր պետութեան սահմանները պաշտպանելու համար, ու մասամբ ալ կախում ունի ելմտական նկատումներէ:

[11] Անտոնեան ծանօթագրած է. «(*) Պ. Թէքէեանի ընդհատած տեղէն մինչեւ այստեղ թարգմանեց Պ. Արամ Անտոնեան»:

«Խորհուրդը իր իրաւասութեանց սահմանէն դուրս նկատեց քննութիւնը Հայաստանի զինուորական կացութեան կամ այն անհրաժեշտ միջոցներուն որոնք պէտք են ձեռք առնուիլ ապահովելու համար խաղաղութիւնը այդ երկրին մէջ: Ինչ կը վերաբերի ֆինանսներուն, եթէ կարելի ըլլայ այնպիսի կարգադրութիւններու յանգիլ որ հոգատար պետութիւնը զերծ կացուցանէին այն ֆինանսական պատասխանատուութիւններէն որոնք կրնան իր վրայ պարտադրուիլ այդպիսի խնամատարութիւն մը ընդունելու պարագային, այդ պայմաններուն տակ կարելի է առաջուց ըսել որ անկարելի դժուարութիւններու կարող է չբաղխիլ Հայաստանի հոգատար մը գտնելու հարցը: Նոր պետութիւնը վարկի պէտք պիտի ունենայ որպէս զի կարելիութիւն ունենայ անցընելու իր գոյութեան առաջին ու դժուարին տարիները, ու այդ վարկը կ'ենթադրէ ֆինանսական երաշխաւորութիւն: Ընկերութեան Խորհուրդը տրամադիր է Ընդհանուր Ժողովէն խնդրելու որ իր անդամները խորհին այն միջոցներուն վրայ որոնք կարող են ապահովել Հայաստանի համար հաւաքական երաշխաւորութիւն մը: Սակայն մինչեւ այդ, եւ նկատի ունենալով այն պարագան որ Ընդհանուր Ժողովը աշունէն առաջ չպիտի գումարուի, Ընկերութեան Խորհուրդը Գերագոյն Խորհուրդին հետ յարաբերութեան պիտի մտնէ, գտնելու համար ֆինանսական առժամեայ կարգադրութեան այնպիսի եղանակ մը զոր կարելի ըլլայ գլուխ հանել դիւրացնելու համար հարցին այս ձեւով լուծումը, լուծում որ իբրեւ ամէնէն գոհացուցիչ արդիւնքները տալու ամէնէն աւելի հաւանականութիւն ունեցողը՝ ստացած է ընդհանուր հաւանութիւնը Ընկերութեանս Խորհուրդին»:

Լոնտոնի Խորհրդաժողովին գումարման պահուն, ֆրանսական զինուորներու Մարաշէն ետ քաշուելուն եւ անոր յաջորդող կոտորածներուն լուրերը հասան: Ազգային Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահները, ինչպէս նաեւ Զաւէն Սրբազան Պատրիարքը, անմիջապէս բազմաթիւ դիմումներ կատարեցին ֆրանսական, անգլիական, ամերիկեան կառավարութեանց եւ Գերագոյն Խորհուրդին մօտ, խնդրելով որ ամենավճռական միջոցներ ձեռք առնուին Կիլիկիոյ Հայոց ապահովութեան համար: Նոյնօրինակ դիմումներ կատարուեցան Փարիզի մէջ, Ազգային Պատուիրակութեան անդամներուն, ինչպէս նաեւ Նազլեան Գերապայծառին կողմէ՝ ֆրանսական կառավարութեան մօտ: Լոնտոնի մէջ կատարուած այդ դիմումներուն վրայ Գերագոյն Խորհուրդը իր նիստերէն երկուքը յատկացուց Կիլիկիոյ հարցին: Բրիտանական կառավարութիւնը, համախորհուրդ իր Դաշնակիցներուն հետ, որոշեց Կ. Պոլիսը գրաւման ենթարկել՝ այդ կերպով մէկ կողմէն դադրեցնել տալու համար թուրք ազգայնականներու յարձակումները Կիլիկիոյ քրիստոնէից դէմ, եւ միւս կողմէ իբր միջոց թուրքերը ստիպելու որ ընդունին Խաղաղութեան Դաշնագրին պայմանները: Ֆրանսական կառավարութիւնն ալ որոշ թուով օգնական զօրք ղրկեց Կիլիկիա եւ արտօնեց հայկական քանի մը կամաւորական խումբերու կազմութիւնը, անոնց տրամադրելով զէնք եւ ռազ-

մանիւթ: Կիլիկիոյ Հայոց Վեհափառ Կաթուղիկոսը այդ օրերուն Ֆրանսա հասնելով, յանուն իր հօտին դիմումներ կատարեց Հանրապետութեան Նախագահին, Նախարարապետին եւ Պատերազմական Նախարարին մօտ եւ ստացաւ անոնցմէ երաշխիքներ թէ ֆրանսական կառավարութիւնը իր կարելին պիտի ընէ պաշտպանելու համար Կիլիկիոյ Հայերը: Քիչ ժամանակ վերջ Հայ-Կաթոլիկ հասարակութեան Պատրիարքն ալ, Գերերջանիկ Թէրզեան Սրբազան, եկաւ իր ջանքերը միացնել Պատուիրակութեան այդ ուղղութեամբ թափած ջանքերուն: Բայց թուրք ազգայնականներու ուժերը, օր ըստ օրէ աճելով, շարունակեցին իրենց յառաջխաղացումը, եւ ֆրանսական զինուորները, որոնք թշնամիին թիւին համեմատ քիչւոր էին եւ հաւանօրէն Մարաշը պարպելէ յետոյ հրաման ստացած էին միայն երկաթուղիի գիծը եւ Ատանայի շրջանը պահպանել, չկրցան հարկ եղած ամբողջ պաշտպանութիւնը ընձեռել Հայ ազգաբնակչութեան: Այսպէսով է որ Հաճընի, Զէյթունի եւ ուրիշ վայրերու մէջ Հայերը կը կռուին ու կը դիմադրեն հերոսաբար, կղզիացած ու թուրքերէ պաշարուած ամէն կողմէ: Քանի մը ամիսներէ ի վեր Պատուիրակութիւնը շարունակած է եւ կը շարունակէ իր դիմումները ֆրանսական ու Դաշնակից պետութեանց մօտ, որպէս զի արմատական միջոցներ ձեռք առնուին վանելու համար այն վտանգը որ կը սպառնայ Կիլիկիոյ մեր հայրենակիցներուն:

Սան-Րէմօի մէջ Գերագոյն Խորհուրդը կրկին խնդրոյ նիւթ դարձուց Էրզրումի կցումը Հայկական պետութեան, բան մը որ որոշուած էր Լոնտոնի մէջ: Պօղոս Նուպար փաշա եւ Պ. Ահարոնեան երկուքն ալ լսուեցան Գերագոյն Խորհուրդին կողմէ եւ երկուքն ալ հաստատեցին որ եթէ Դաշնակիցները – ինչպէս Գերագոյն Խորհուրդին նախագահը ընդնշմարել տուած էր այդ նիստերու ընթացքին – չէին կրնար զօրք ղրկել Հայաստան, այդ պարագային Հայկական բանակին թիւը կարելի էր բարձրացնել 40.000ի, եւ եթէ Դաշնակիցները անոր տրամադրէին զէնք ու ռազմամթերք, այդ բանակը, Դաշնակից սպաներու հրամանատարութեան տակ եւ Դաշնակից դրօշակի տակ գործելով, կրնար Էրզրումը գրաւել ու պաշտպանել:

Այդ վկայութիւնները լսելէ ետք, Գերագոյն Խորհուրդը Էրզրումը Հայաստանի տրուելու մասին նպաստաւոր որոշումի մը յանգեցաւ. բայց յետոյ, իր կարգին խորհուրդ[ը] հարցնելով զինուորական Յանձնախումբին որ այն կարծիքը յայտնած էր թէ Էրզրումը գրաւելու համար շատ մեծ զինուորական ոյժի պէտք կար, Գերագոյն Խորհուրդը, բաժնուած կարծիքներով ու նեղուած դրութեան մէջ, որոշեց, վերջնական որոշում մը տալէ առաջ, վերջին անգամ մըն ալ դիմել Նախագահ Ուիլսոնի՝ հարցնելու համար թէ Ամերիկա կ'ընդունի՞ Հայաստանի հոգատարութիւնը. իսկ հակառակ պարագային խնդրելու համար իրմէ որպէս զի ինքը գծէ Հայաստանի եւ Թուրքիոյ բաժանման սահմանները: Միացեալ-Նահանգներու Հռոմի դեսպանը, Պ. Ճօնսըն, ներկայ գտնուեցաւ այն նիստին ուր Գերագոյն Խորհուրդը տուաւ այս որոշումը: Ազգային Պատուիրակութեան նախագահը Սան-Րէմօի մէջ

երկու անգամ տեսակցեցաւ Պ. Ճօնսընի հետ, որ վստահացուց զայն թէ «Հայկական դատը բարեկամ ձեռքերու մէջ կը գտնուի»: Ազգային Պատուիրակութիւնը նոյն առիթով հեռագիր մը ուղղեց նախագահ Ուիլսընի, ըսելով անոր թէ Հայաստան ի՞նչ կը սպասէր իրմէն եւ Ամերիկայէն՝ բոլոր Հայկական հողամասերու ազատութեան համար:

Հայկական Պատուիրակութիւնը, Սան-Րէմօի Խորհրդաժողովին աշխատութեանց փակումէն առաջ նոր Յիշատակագիր մը ներկայացուց Գերագոյն Խորհուրդին, պահանջելով որ Հայկական պետութեան կցուին ո՛չ միայն Էրզրում քաղաքը, այլ [նաեւ] ամբողջ Էրզրումի վիլայէթն ու Խարբերդի Սանճագը, եւ որպէս զի մասնաւոր րէժիմ մը հաստատուի Դաշնակից քօնթրօլի տակ՝ այս հայկական երկրամասերուն մէջ որոնք Հայկական պետութենէն դուրս պիտի մնային:

Այն խորհրդակցութիւնները որոնք Անգլիացիներու առաջարկով Լոնտոնի մէջ սկսուած էին Վրաստանի եւ Ատրպէճանի Պատուիրակութեանց եւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան միջեւ, եւ որոնք շարունակուած էին յետոյ Փարիզի մէջ, դարձեալ շարունակուեցան Սան-Րէմօի մէջ: Այդ բանակցութիւններու ընթացքին կարելի եղաւ համաձայնութիւն գոյացնել վէճի առարկայ եղող հողամասերը Իրաւախոհ Մարմնի մը որոշման յանձնելու մասին, բայց Վրացիներն ու Թաթարները չուզեցին ստորագրել այդ համաձայնութիւնը՝ նախապէս Պաթումի հարցին նկատմամբ համաձայնութիւն չգոյացուցած: Այդ համաձայնութիւնն ալ սակայն անկարելի եղաւ գոյացնել Վրացիներու անզիջողութեան հետեւանքով: Մեր Պատուիրակութիւնը ըրաւ կարգ մը զիջումներ, գլխաւորաբար հրաժարելով Ճորոխի ձախ ափը իբր Հայաստանի սահման ունենալու իր առաջարկէն եւ բաւականանալով միայն որ Հայերը իրաւունք ունենան իրենց ծախքովը շինելու երկաթուղիի գիծ մը որ Հայ Պետութեան սեփականութիւնը ըլլայ՝ կապելու համար Պաթումը Հայկական ներքնամասին, ինչպէս նաեւ այդ գիծէն մեկնող երկաթուղիի ուրիշ ճիւղ մը դէպի Լազիսթանի եզերքները որոնք Հայաստանի մաս պիտի կազմէին: Մեր Պատուիրակութիւնը կ'ընդունէր որ Պաթում քաղաքն ու Պաթումի նաւահանգիստը Վրաստանի տրուէին՝ Հայոց համար Պաթումի նաւահանգիստէն թրանզիթի համար ազատ անցքի իրաւունք միայն խնդրելով: Բայց Վրաստանի պատուիրակները մերժեցին Հայերուն այդ երկաթուղիի ճիւղը շինելու իրաւունքը եւ պահանջեցին որ Հայերը երկաթուղիի գիծին վրայ եւս Վրաստանի վեհապետական իրաւունքը ճանչնան: Բանակցութիւնները տակաւին չվերջացած՝ Վրացիները ծանուցագիր մը ներկայացուցին Գերագոյն Խորհուրդին՝ ամբաստանելով Հայերը իբրեւ բանակցութեանց ձախողման պատասխանատու:

Անգլիական Պատուիրակութեան անդամներէն Պ. Վանզիթարդ որ այս բանակցութեանց մեծագոյն մասին ներկայ գտնուած էր, եկաւ այն ատեն յայտարարել որ Լորտ Քըրզընն չպիտի հետաքրքրուէր այլեւս Անդրկովկաս-

եան երեք Հանրապետութիւններով, եթէ անոնք չհամաձայնէին իրենց մէջ, եւ թէ ինք կը խորհէր որ Հայոց առաջարկները՝ երկաթուղիի գիծը հայկական սեփականութիւն դարձնելու եւ դէպի Լազիսթանի եզերքները երկաթուղիի ճիւղ մը շինելու նկատմամբ, արդարացի եւ հիմնաւոր են: Պ. Վանզիթարդի ըրած այս յայտարարութեան վրայ նոր հաւաքում մը տեղի ունեցաւ համաձայնութեան եզր մը գտնելու համար, բայց Վրացիք, մեր Պատուիրակութեան առաջարկները միշտ անընդունելի նկատելով, յայտարարեցին որ իրենք իրաւասութիւն չունէին այդ հարցի մասին համաձայնութիւն կնքելու, եւ առաջարկեցին որ պատուիրակներ նշանակուին, որպէս զի երթան Կովկաս, երկու թէզերը ներկայացնեն իրենց Հանրապետութեանց կառավարութիւններուն, որպէս զի անոնք կայացնեն որոշում մը: Այս պայմաններուն մէջ, Հայկական Պատուիրակութիւնը ստիպուեցաւ, ինքն ալ իր կարգին, նամակով մը դիմել Գերագոյն Ժողովին՝ ճշդելով Վրացիներու ներկայացուցած Յիշատակագրին սխալ կէտերը եւ խնդրելով որ Գերագոյն Խորհուրդը, իբրեւ լաւագոյն լուծում, Հայկական Պետութեան կցէ Ճորոխի հովիտը, որպէս զի Հայաստանի երկաթուղին, իր ճիւղովը միասին, իր ամբողջ ընթացքը կատարէ հայկական հողամասի վրայէն՝ բացի Պաթում հասնելու համար եօթ քիլօմէթր երկայնութեամբ հատուածէ մը:

Պ. Վանզիթարդ յայտարարեց Հայկական Պատուիրակութեան որ Վրացիներու մերժումին հետեւանքով, առաջարկ պիտի բերուէր Գերագոյն Խորհուրդին որպէս զի Ճորոխի ձախ ափը Հայաստանի յատկացուի, անոր ապահովելու համար թրաֆիքի համար պէտք եղած ազատ անցքը:

Սան Րէմօի մէջ մեր Պատուիրակութեան աշխատութեանց իր աջակցութեան բաժինը բերաւ Տիար Գաբրիէլ Նորատունկեան:

*

Ազգ. Համագումարը յանձնարարած էր իր ընտրած Պատուիրակութեան որպէս զի միջոցներ ձեռք առնէ նպաստելու համար Միացեալ Հայաստանի կառավարութեան կազմութեանը:

Ազգ. Պատուիրակութիւնը մշակեց ծրագիր մը՝ կազմելու համար միացեալ կառավարութիւն, խորհրդարան եւ Պատուիրակութիւն: Հայկական Հանրապետութեան կառավարութեան հետ բանակցելու նպատակով Երեւան Առաքելութիւն մը ղրկելէ առաջ, Ազգ. Պատուիրակութիւնը կարծիքներու երկար փոխանակութիւն մը կատարեց Հանրապետութեան Պատուիրակութեան հետ որ, ինքն ալ իր կողմէ հակառաջարկներ բերած էր: Այդ օրերուն էր որ կատարուեցաւ Մայիս 28-ի *ակտ*ին հրապարակումը, որով Երեւանի կառավարութիւնը ինքզինքը հռչակեց Ամբողջական Հայաստանի կառավարութիւն: Երեւանի կառավարութեան այդ նախաձեռնութիւնը տեղի տուաւ, ինչպէս կը յիշուի, ամբողջ ազգին մէջ երկար բանավէճերու: Երեւանի կառավարութեան Ժողովրդական Կուսակցութեան պատկանող անդամները, Մայիս 28ի *ակտ*ին հետեւանքով, զոր չէին ընդուներ, իրենց հրաժարականը տուին եւ քաշուեցան: Այդ եղաւ նաեւ պատճառներէն մէկը, ո-

րոնց համար Պ. Պապաջանեան հրաժարեցաւ Հանրապետութեան Պատուիրակութեան անդամակցութենէն: Այս պայմաններուն մէջ Ազգ. Պատուիրակութեան համար պարտականութիւն մը կը դառնար՝ ո՛չ միայն Ազգ. Համագումարի ցուցմունքներուն համաձայն՝ Միացեալ կառավարութեան մը կազմութեան աշխատիլը, այլ նաեւ այդ արդիւնքը ձեռք բերելով վերջ դնել այն բոլոր վէճերուն որոնք առաջ եկած էին Մայիս 28ի *ակտ*ին հետեւանքով: Ազգ. Պատուիրակութիւնը դիւրացնելու համար միացման այդ գործը, հաւանեցաւ հրապարակաւ չբողոքել Մայիս 28-ի *ակտ*ին դէմ, որով Պ. Խատիսեանի նախարարութիւնը Ամբողջական Հայաստանի կառավարութիւն կը հռչակուէր, եւ այդ՝ Հանրապետութեան Պատուիրակութեան խնդրանքին վրայ, որ ինքն ալ ընդունելով թէ պէտք էր Երեւանի մէջ կատարուածը դարմանել, 1919 Յուլիս 18 թուականով հետեւեալ հեռագիրը տուաւ իր կառավարութեան.

«Փարիզի Հայ Ազգ. Պատուիրակութիւնը, որ կը ներկայացնէ Թուրքիոյ Հայերը, անընդունելի կը գտնէ այն պայմանները, որոնց մէջ հրատարակուած է Մայիս 28-ի Յայտարարութիւնը Երեւանի մէջ: Դարմանելու համար զայդ, անիկա մեզի կ'առաջարկէ կարգադրութեան եղանակ մը, երկուստեք հաւանութեամբ կազմելու համար Ամբողջական Հայաստանի միակ խորհրդարանը եւ կառավարութիւնը: Այդ նպատակով անիկա Առաքելութիւն մը պիտի ղրկէ Երեւան: Հետեւաբար կը խնդրենք նոր խորհրդարանի կողմէն այդ Յայտարարութեան վաւերացումը յետաձգել՝ սպասելով որ տեղդ հասնին պատգամաւորները, որոնք շուտով կը մեկնին այս տեղէն դէպի Երեւան, իրենց հետ բերելով մեր եւ Ազգ. Պատուիրակութեան մանրամասն հրահանգները»:

Երկու Պատուիրակութիւններու միջեւ բանակցութիւնները կատարեալ համաձայնութեան մը չյանգեցան եւ կարծիքներու տարբերութիւն եղաւ կարգ մը կէտերու մասին: Ազգ. Պատուիրակութիւնը Երեւան ղրկեց ՊՊ. Վահան Թէքէեանէ եւ Նշան Տէր-Ստեփանեանէ բաղկացած առաքելութիւն մը, կառավարութեան հետ բանակցելու համար: Պատուիրակութիւնը խնդրեց միաժամանակ Երեւանի կառավարութեան նախկին անդամ Պ. Սամսոն Յարութիւնեանէ որպէս զի ինքն ալ անդամակցի այդ առաքելութեան, եւ Պ. Յարութիւնեան ընդունեցաւ:

Այդ բանակցութիւնները բոլոր կէտերու շուրջ համաձայնութեան մը չյանգելով, *ընդհատուեցան* եւ ո՛չ թէ *խզուեցան*, ինչպէս ոմանք գրած են սըխալմամբ, ՊՊ. Թէքէեան եւ Տէր-Ստեփանեան պէտք տեսած ըլլալով Փարիզ վերադառնալ եւ խորհրդակցիլ Ազգ. Պատուիրակութեան հետ, որպէս զի այս վերջինը ինքը վերսկսի բանակցութեանց, խնդրին բոլոր մանրամասնութեանց ծանօթանալէ յետոյ:

Քիչ վերջը Պ. Խատիսեան նամակ մը ուղղեց Ազգ. Պատուիրակութեան՝ իր կողմէ պարզելով այն հակառաջարկները որոնք բանաձեւուած էին Երեւանի մէջ, կառավարութեան նշանակած բանագնացներուն կողմէ: Պ. Խատի-

սեան կը խնդրէր Ազգ. Պատուիրակութենէն որ ընդունի այդ հակառաջարկները: Ազգ. Պատուիրակութիւնը, նկատի ունենալով այն վճռական րոպէն ուր կը գտնուէինք Լոնտոնի Խորհրդաժողովի նախօրեակին, որոշեց ընդունիլ Պ. Խատիսեանի առաջարկութիւնները, եւ 1920 Յունուար 30 թուականով հետեւեալ հեռագիրը ուղղեց անոր.

«Ստացանք Ձեր նամակը որ կը պարունակէր Հանրապետութեան կառավարութեան առաջարկութիւնները, իբր հետեւանք՝ Միացեալ կառավարութիւն մը եւ խորհրդարան մը կազմելու համար մեր Պատգամաւորներու Երեւանի մէջ վարած բանակցութեանց: Ազգ. Պատուիրակութիւնը թէեւ սովորական ժամանակներու մէջ չպիտի կրնար ընդունիլ Ձեր առաջարկները, սակայն նկատի ունենալով հրամայական պահանջը համաձայնութեան մը յանգելու՝ իրականացնելու համար միութիւնը, հայրենասիրական պարտք կը համարի ընդունիլ Ձեր առաջարկները, պայմանաւ սակայն որ գոյութիւն ունեցող երկու Պատուիրակութիւնները անմիջապէս ձուլուին, Խաղաղութեան Վեհաժողովին ներկայանալու համար իբրեւ մէկ մարմին, եւ վերջ դնելու համար այն մեղադրանքներուն որոնք կ'ուղղուին մեզ թէ մենք միութիւն չենք ներկայացներ, ինչ որ կը վնասէ ազգային դատին: Կը խնդրենք հետեւաբար որ հեռագրական հրահանգ տաք Ձեր Պատուիրակութեան՝ անմիջական ձուլման համար եւ նոյնը նաեւ հեռագրով հաղորդէք մեզի: Հեռագրեցինք Սամսոն Յարութիւնեանի եւ Արշալոյս Մխիթարեանի, լիազօր իրաւունք տալով անոնց, որպէս զի, Ձեզի հետ համախորհուրդ, միացեալ կառավարութեան մը կազմութիւնը յառաջ բերեն, եւ տնօրինեն ուրիշ հարկ նկատուած լրացուցիչ կարգադրութիւնները»:

Պ. Խատիսեան Ազգ. Պատուիրակութեան իրեն ղրկած այս հեռագրին չէ պատասխանած մինչեւ հիմակ. մենք տեղեկացանք Պ. Սամսոն Յարութիւնեանի կովկասեան հայ լրագիրներու մէջ հրատարակած մէկ յօդուածէն թէ այս մասին կառավարութեան հետ իր կատարած բանակցութիւնները ո՛չ մէկ արդիւնքի յանգած են, եւ թէ ինքը իր առաքելութիւնը ձախողած կը նկատէ: Միւս կողմէ, լրագիրները հաղորդեցին Խատիսեանի նախարարութեան վերակազմութեան լուրը, եւ Պ. Խատիսեանի կազմած նոր նախարարութիւնը բացառապէս կազմուած է մէկ կուսակցութեան պատկանող կովկասահայ անդամներէ: Աւելի վերջը ստացուած լուրերու համաձայն, Պ. Խատիսեան հրաժարական տուած է եւ նախարարապետ նշանակուած է Պ. Օհանջանեան:

Միացեալ կառավարութիւնը եւ խորհրդարանը պիտի կազմուէին երբ Թրքական Դաշնագիրը ստորագրուելէ, Հայաստանի սահմաններու հարցը կարգադրուելէ եւ Թրքահայաստանի գրաւման գործը կատարուելէ յետոյ, Հայ ժողովուրդը բնականոն պայմաններու մէջ կատարէ[ր] Սահմանադիր Ժողովի մը գումարումը, ձեռնարկելու համար Միացեալ խորհրդարանի եւ կառավարութեան ընտրութեան:

Միացման ծրագրի բանակցութեանց վերաբերող պատմական այս հակիրճ տեսութեանց մէջ մենք չուզեցինք, նկատի ունենալով Կովկասի այժմու ծանր դրութիւնը, մտնել մանրամասնութեանը մէջ վէճի առարկայ եղող այն կէտերուն որոնք արգելք հանդիսացան այնքան ցանկալի միացման գործին իրականացման:

Մենք կը խորհինք որ մեր պարտականութիւնն է զգուշանալ արծարծելէ այն հարցերը որոնք կարող են կրկին հրահրել տարակարծութիւններն ու վէճերը, այնպիսի ժամու մը ուր համերաշխութիւնը ամէն ժամանակէ աւելի հրամայական է, եւ ուր մեր բոլոր ուժերը պէտք են կեդրոնանալ, մեր բոլոր ջանքերը պէտք են միանալ օգնելու համար մեր Հանրապետութեան իր անցուցած այժմեան ճգնաժամին մէջ:

*

Իր կազմութենէն անմիջապէս վերջ, Ազգ. Պատուիրակութիւնը Համագումարի ցուցմունքներուն համաձայն, կազմեց «փրօփականտ»ի Յանձնախումբ մը, ներգաղթի եւ վերաշինութեան Յանձնախումբ մը եւ ֆինանսական Յանձնախումբ մը:

Պատուիրակութիւնը պաշտօն յանձնեց ՊՊ. Չօպանեանի եւ Թէքէեանի որպէս զի կազմեն «փրօփականտ»ի Յանձնախումբը: Այդ Յանձնախումբին անդամակցելու հրաւիրուեցան Տիկին Զապէլ Եսայեան, ՊՊ. Ֆնտըգլեան, Դաւիթ-Բեկ, Թահմազեան, Հանըմեան, Պասմաճեան եւ Սաֆրաստեան: ՊՊ. Ֆնտգլեան եւ Սաֆրաստեան որոշ ժամանակ մը վերջ Փարիզէն հեռանալ պարտաւորուելով, ստիպուեցան դադրեցնել իրենց աշխատակցութիւնը, եւ անոնց տեղ Յանձնախումբի անդամակցութեան հրաւիրեց Պ. Արամ Անտոնեանը: Մասնաւոր տեղեկագիր մը պիտի կարդացուի Համագումարի յառաջիկայ նիստերէն մէկուն մէջ այդ Յանձնախումբի գործունէութեան մասին:

Ֆինանսական Յանձնախումբը, որուն կը նախագահէր մեր պաշտօնակիցը՝ Տօքթ. Նեվրուզ, բաղկացած էր հետեւեալ անձնաւորութիւններէն.- ՊՊ. Աճէմօֆ, Էսմէրեան, Ֆնտգլեան, Կիւլպէնկեան, Տիգրան խան Քէլէկեան, Մարաշեան, Ներսէս խան Ներսէսեան, Առաքել պէյ Նուպար, Սինապեան եւ Թնկըր: Բազմաթիւ նիստերու ընթացքին՝ այդ Յանձնախումբը խորհրդակցութիւններ կատարած է այն միջոցներու մասին որոնցմով կարելի էր իրականացնել Համագումարի պիւտճէն.- «Արտաքին փոխառութիւն, ներքին փոխառութիւն, Ազգային Հանգանակութիւն»: Վերջապէս անիկա, Պ. Գալուստ Կիւլպէնկեանի խորհուրդին վրայ, կանգ առած է Ազգ. մեծ հանգանակութիւն մը կազմակերպելու ծրագրին վրայ:

Տօքթ. Նեվրուզ մեր յառաջիկայ նիստերէն մէկուն մէջ Ձեզի պիտի կարդայ այս մասին յատուկ տեղեկագիր մը: Ազգ. Պատուիրակութիւնը առաջարկեց Հանրապետութեան Պատուիրակութեան որպէս զի միասին կատարեն այդ հանգանակութիւնը, բայց այս վերջինը նախամեծար համարեց որ կոչը Ազգ. Պատուիրակութեան կողմէ միայն ստորագրուի, քանի որ

Հանրապետութեան Պատուիրակութիւնը կը ներկայացնէ կառավարութիւն մը որ ունի իր պիւտճէն եւ եկամուտի աղբիւրները:

Ազգ. Պատուիրակութեան կողմէ ամբողջ ազգին ուղղուեցաւ ուրեմն Շրջաբերական կոչ մը՝ հանգանակութեան համար: Այդ հանգանակութիւնը սակայն դժբախտաբար չտուաւ սպասուած արդիւնքը:

Ազգ. Պատուիրակութիւնը իր տրամադրութեան տակ ունեցած է, իր կազմութեան օրէն մինչեւ 1920 Ապրիլի վերջ՝ 2.515.450 ֆր. 95. [սանթիմ]

Այս գումարը տրամադրուած է հետեւեալ կերպով.

Օգնութեան գործին	1.602.720,99
Փրօփականտի համար	276.656,90
Առաքելութեանց եւ դիւանագիտական ծախքերու համար	579.298,57
	2.458.676,46
Պատուիրակութեան մօտ պատրաստ կը մնայ ուրեմն ի 1 Մայիս 1920, ֆրանք	56.774,49
	2.515.450,95(*)[12]

Վերաշինութեան եւ ներգաղթի Յանձնաժողովը, որուն նախագահն էր Դուրեան Եղիշէ Սրբազան, կը բաղկանար հետեւեալ անձերէն.- Պատուիրակութեան անդամներ Փրոֆ. Տէր Յակոբեան եւ Պ. Փաստրմաճեան, ՊՊ. Պասմաճեան, Լեւոն Շանթ, Ա. Կէվրէկ, Ա. Խաչատուրեան, Ճ. Մալքօմ, Զ. Մաթիկեան, Վ. Փափազեան, Ս. Սվաճեան, Ա. Թէրզիպաշեան: Յանձնաժողովը բազմաթիւ նիստեր ունեցաւ խնդիրը ուսումնասիրելու համար, եւ իր աշխատութիւնները դադրեցուց, զանոնք վերսկսելու մտադրութեամբ այն րոպէին երբ Թրքական Հայաստան ներգաղթը կարելի պիտի ըլլար:

Պատուիրակութիւնը ինքն իսկ մտածեց արդէն թէ ընդհանուր ներգաղթի մը համար կոչ մը ուղղելու ժամը չէր եկած, քանի որ վեց նահանգները դեռ գրաւուած չէին Հայ ու Դաշնակից զօրքերով: Նոյն իսկ, իր գործունէութեան առաջին ամիսներուն մէջ, հեռագիրներ ղրկեց Պաղտատ եւ քանի մը ուրիշ տեղեր ուր տարագիրներ կը գտնուէին, խորհուրդ տալով անոնց որ չդառնան վեց նահանգները եւ մնան ժամանակաւորապէս ուր որ կը գըտ-

[12] Անտոնեան ծանօթագրած է. «(*) Պ. Անտոնեանի ընդհատած տեղէն մինչեւ այստեղ թարգմանեց Պ. Արտաւազդ Հանըմեան»: Մեր կողմէ հարկ կը տեսնենք աւելցնել թէ, եթէ Անտոնեանի մաքրագիր ատենագրութիւնն ամբողջութեամբ պահպանուած ըլլար, տրամաբանական պիտի ըլլար տեղեկագրի վերջաւորութեան ակնկալել այսպիսի ծանօթագրութիւն մը իր կողմէ. (*) Պ. Հանըմեանի ընդհատած տեղէն մինչեւ այստեղ թարգմանեց Պ. Արշակ Չօպանեան, բացի Թրքական Պատուիրակութեան յանձնուած Խաղաղութեան Դաշնագրի յօդուածները ներկայացնող հատուածէն:

նուին, կամ համախմբուին Կիլիկիա, որ գրաւուած էր Անգլիացիներու եւ Ֆրանսացիներու կողմէ:

Իրաւ է որ բազմաթիւ տարագիրներ դարձան հակառակ ատոր Խարբերդի եւ Սվազի վիլայէթները. ուրիշներ, աւելի ստուար թուով, ուղղուեցան դէպի Կիլիկիա, ո՛չ միայն Պատուիրակութեան խորհուրդին հետեւելով, այլեւ անգլիական եւ ֆրանսական իշխանութեանց խորհուրդին:

Ազգ. Համագումարի խմբագրած ուղեգիծը կը թելադրէր նաեւ կազմութիւնը զինուորական Յանձնախումբի մը: Պատուիրակութիւնը կը խորհէր զայն կազմել Անդրանիկ, Բագրատունի եւ Ղորղանեան զօրավարներով՝ մի քանի օժանդակներու հետ, բայց Անդրանիկ եւ Բագրատունի զօրավարներ Ամերիկա մեկնելով՝ այդ ծրագիրը մէկդի թողուեցաւ, եւ Զօր. Ղորղանեանն է որ միայնակ ըրաւ այդ բոլոր աշխատանքը, իբր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան զինուորական խորհրդական:

Բժշկական Յանձնախումբ մը որ Համագումարի հաւաքումէն առաջ կազմուած էր նախկին Պատուիրակութենէն, Ատանայի մէջ Հայկական Հիւանդանոց մը հիմնելու նպատակով՝ պահպանուեցաւ նոր Պատուիրակութենէն եւ կանոնաւորապէս շարունակեց իր աշխատութիւնները: Հիւանդանոցը հիմնուեցաւ եւ մեծապէս օգտակար եղաւ մեր այնտեղի հայրենակիցներուն: Յանձնախումբը զբաղեցաւ նաեւ բժշկական օգնութեանց կազմակերպութեամբ եւ ուղարկումով այն հայ կեդրոնները ուր ատոր պէտք կար: Տոքթ. Նեվրուզ պիտի կարդայ Ձեզ տեղեկագիր մը այս մասին:

*

Այն բազմաթիւ դիմումներուն մէջ, զորս Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ըրած է Համագումարէն գծուած գործունէութեան ծրագիրը իրագործելու համար, պիտի յիշենք անոնք որ կատարուեցան Դաշնակիցները մղելու համար Հայկական նահանգներու գրաւման օգնելու, ինչպէս եւ յաջողցնելու փոխառութիւն մը Հայկական Հանրապետութեան համար, յետոյ՝ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի նպաստամատոյց գործին համար: Այս դիմումները դժբախտաբար չյաջողեցան:

Պիտի յիշենք նաեւ դիմումները որ կատարուեցան այն տուգանքներուն համար զոր Թուրքիա պէտք է վճարէ, եւ այն հատուցմանց եւ յափշտակուած ինչքերու վերադարձումին համար զոր ան պէտք է ընէ Հայ ազգին, ինչպէս եւ ապահովելու համար պատժուիլը անոնց որ պատերազմի միջոցին Հայոց դէմ գործուած ոճիրին մասնակցեցան: Այս դիմումները նպաստաւոր ընդունելութիւն գտան, եւ անոնք մեծ մասամբ հաշուի առնուած են Թուրքիոյ պարտադրուած Հաշտութեան Դաշնագրին մէջ:

Ազգ. Պատուիրակութիւնը մշտական յարաբերութիւն պահպանած է Հայ կեդրոններու հետ, մասնաւորաբար Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին եւ Ամերիկայի Ազգային Միութեան հետ, ինչպէս Հայ Հանրապետութեան Պատուիրակութիւնը Երեւանի կառավարութեան հետ:

Պատուիրակութիւնը Ամերիկեան հայանպաստ Յանձնախումբէն ձեռք ձգած է Հայոց ղրկուած նպաստի գումարներուն կրկնումը. այսպէս, շատ անգամներ, Փարիզէն Պատուիրակութեան կողմէ, կամ մեր Ամերիկայի կազմակերպութեանց կողմէ ղրկուած գումարները կրկնուեցան[13] Ամերիկեան Նպաստամատոյց Յանձնախումբէն: Երախտագիտութեամբ կը յիշատակենք Հայութեան հանդէպ Ամերիկեան վեհանձնութեան այս նոր վկայութիւնը:

Պատուիրակութիւնը դիմումներ ըրած է ապահովելու համար մահմէտականացած Հայոց ազատութիւնը իրենց նախկին կրօնքին դառնալու, եւ Մահմէտականաց քով գերի մնացած կանանց եւ տղոց ազատումը ստանալու համար: Հաշտութեան Դաշնագրին մէջ այս խնդիրները հաշուի առնուած են:

Համագումարէն տրուած ուղեգիծը Պատուիրակութեան վրայ պարտք կը դնէր պահանջել[14] Հայաստանի թուրքերուն փոխադրութիւնը Փոքր Ասիոյ այն թուրք հողամասերուն մէջ որ թուրք տէրութեան մաս պիտի կազմէին, ինչպէս եւ արտաքսումը բոլոր այն քիւրտերուն որ ջարդերուն մասնակցած են: Այս ուղղութեամբ դիմումներ եղած են, բայց ակներեւ է որ արդի պայմաններուն մէջ այսպիսի պահանջներ ո՛եւէ հաւանականութիւն չունին Դաշնակիցներէն ընդունուելու. յանցաւորներու պատժուելուն մասին, յոյս կայ որ գլխաւոր պատասխանատուները դատի քաշուին, բայց անշուշտ անխոհեմ պիտի նկատեն դատի քաշել կամ արտաքսել բոլոր անոնք, ա՛յնքան բազմաթիւ, որ կոտորածներուն եւ տեղահանութեանց մասնակցեցան:

Դաշնագրին մէջ, փոխադարձ գաղթումներու վերաբերեալ յօդուածով, նախատեսուած է որ թուրքեր եւ քիւրտեր պիտի կարենան իրենց կամքով հեռանալ հայ տէրութեան հողերէն, երբ այս տէրութիւնը ամբողջապէս կազմուի. անոնց համար՝ որ պիտի մնան՝ հայ տէրութիւնը պարտաւոր է յարգել փոքրամասնութեանց օրէնքը:

Պատուիրակութիւնը դիմեց Պէլժ ու Ռումէն կառավարութեանց, խնդրելով որ անոնք Հաշտութեան Վեհաժողովին մօտ ուժ տան հայկական պահանջներուն. այդ երկու կառավարութիւնները ջերմագին ընդունելութիւն ըրին Պատուիրակութեան դիմումին եւ ի նպաստ Հայաստանի կոչ ուղղեցին Դաշնակիցներուն: Միեւնոյն կոչը ինքնաբերաբար ուղղուած էր ար-

---

[13] Բառը գործածուած է կրկնապատկումի նշանակութեամբ:

[14] ՀԱՊի արխիւին Փարիզէն փոխադրուելով եւ ՀԱԱին մէջ պահպանուող համապատասխան թղթածրարին (կամ հայրենական անուանումով՝ գործին) մէջ դըժբախտաբար կը բացակայի շարունակութիւնը Անտոնեանի մաքրագրած օրինակին, որով տեղեկագիրը ամբողջացնելու նպատակով յետագայ շարադրանքին համար նկատի ունեցած ենք՝ չնչին բացառութիւններով՝ մաքրագրեալ այն օրինակը, որ կազմուած է Թէքէեանի, Անտոնեանի, Հանըմեանի եւ Չօպանեանի թարգմանած բաժիններուն համադրումով (ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 54):

դէն Զուիցերիոյ կողմէ. իսկ յոյն կառավարութիւնը Հայկական դատը միշտ պաշտպանեց Դաշնակիցներուն մօտ:

Պատուիրակութիւնը ջանաց սիրալիր յարաբերութիւններ ունենալ Արաբներու, Սուրիացիներու, Փարիզի եւ Լոնտոնի մէջ Ռուսիոյ ներկայացուցիչներու, Սիօնականներու, Յոյներու եւ Պարսիկներու հետ: Բարեկամական յարաբերութիւններ ունեցաւ Ասորի-Քաղդէացիներու ներկայացուցիչներուն հետ, եւ անոնց հետ միասնաբար քանի մը դիմումներ ըրաւ Վեհաժողովին մօտ:

Գալով Վրացիներու եւ Ատրպատականցիներու, արդէն յիշեցինք բանակցութիւնները, զոր[ս] Պատուիրակութիւնը ունեցաւ անոնց հետ Փարիզ, Լոնտոն եւ Սան-Ռէմօ, բանակցութիւններ որ ինչպէս քիչ առաջ ցոյց տուինք, դժբախտաբար ձախողեցան, բայց զոր անհրաժեշտ է վերսկսիլ անմիջապէս որ պարագաները թոյլ տան:

Պոնտոսի Յոյներու Մասնախումբին հետ բանակցութիւններ արդէն ըսկսած էին Հայկ. Համագումարի ներկայացուցիչներուն կողմէ, անցեալ տարի, Պոնտական Մասնախումբին հրաւէրով. այդ բանակցութիւնները շարունակուեցան յետոյ Պատուիրակութեան եւ Պոնտոսի Յոյներուն միջեւ. անոնք համաձայնութեան մը յանգեցան, որովհետեւ Յոյները կ'ուզեն կազմութիւնը երկու տէրութեանց, Հայաստանի եւ Պոնտոսի տէրութեանց՝ դաշնակցական կապով մը միացած, մինչ Հայերը նախընտրելի կը գտնէին հարցը լուծել ըստ Պ. Վենիզէլոսի Հաշտութեան Վեհաժողովին մատուցած Յիշատակագրով ըրած առաջարկին, այսինքն այդ նահանգը միացնել Հայաստանին՝ լայն ինքնավարութեան րէժիմով մը: Այդ բանակցութեանց խզման հետեւանքով, Պոնտ[ա]ցի Յոյները պայքար մը սկսան լրագրաց ու Հաշտութեան Վեհաժողովի շրջանակներուն մէջ՝ Հայոց դէմ, տիրամոլութիւն վերագրելով անոնց. Քրիզանթոս Եպիսկոպոսը, Տրապիզոնի Յունաց Առաջնորդ, Փարիզ եկած ըլլալով, Պատուիրակութիւնը անոր հետ վերսկսաւ բանակցութիւնները, եւ կարելի եղաւ բանաւոր համաձայնութեան մը հասնիլ, որուն արդիւնքը եղաւ Պոնտոսեան Յոյներու պայքարէն դադարումը: Պատուիրակութիւնը յայտարարեց թէ պիտի չպնդէ Տրապիզոնի նահանգի մասին իր պահանջին վրայ, պահանջ զոր իր յիշատակագրին մէջ մտցուցած էր Պ. Վենիզէլոսի առաջարկով, եւ թէ՝ պիտի շատանար Տրապիզոն քաղաքի արեւելեան կողմը գտնուող Սեւ ծովու ափունքով:

Պատուիրակութիւնը բանակցութիւններ ունեցաւ Հաշտութեան Վեհաժողովին մօտ Քիւրտերու պատուիրակ Շէրիֆ փաշայի հետ, համաձայնութեան մը հասնելու համար: Այդ քայլն առաւ խորհուրդովը Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին, որ ի՛նքն իսկ Պոլսոյ Քիւրտ Ազգային Ակումբին հետ խօսակցութիւններ ունեցած էր, եւ հրաւիրած էր Պատուիրակութիւնը Շէրիֆ փաշայի հետ բանակցիլ համաձայնութեան մը յանգելու համար: Ջերմօրէն մղուեցաւ մանաւանդ Դաշնակից Պատուիրակութիւններէն՝ Քիւրտերուն հետ համաձայնութեան մը կնքումը: Համաձայնութեան մը ծրագիրը վէճի

դրուեցաւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան նիստերէն մէկուն մէջ, որուն ներկայ էր Պ. Ահարոնեան եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ: Այդ Քրտո-Հայկական համաձայնութեան բնագիրը խմբագրուեցաւ յետոյ, եւ ստորագրուելով՝ մէկ կողմէ՝ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս փաշայէ եւ Պ. Ահարոնեանի բացակայութեանը՝ Հանրապետութեան Պատուիրակութեան փոխանորդաբար նախագահ Պ. Օհանջանեանէ եւ միւս կողմէ՝ Շէրիֆ փաշայէ, ղրկուեցաւ Հաշտութեան Վեհաժողովին:

Պ. Փաստրմաճեան, Հայ Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Ամերիկայի մէջ, այդ համաձայնութիւնը քննադատեց եւ ի նշան բողոքի իր հրաժարականը տուաւ Ազգ. Պատուիրակութեան եւ Համագումարի անդամակցութենէ: Իր քննադատութիւնները լրագրաց մէջ ամբողջ բանակռիւ մը յարուցին: Պատուիրակութիւնը բաւականացաւ հակիրճ զեկոյցով մը այդ քննադատութեանց պատասխանելով: Համաձայնութիւնը աւելի եւս բուռն բանակռիւ մը յառաջ բերաւ Թրքաց եւ Քրտաց միջեւ Պոլսոյ թերթերուն մէջ: Շէրիֆ փաշա հրատարակեց «Մաթէն»ին, «Թան»ին, «Թայմզ»ին մէջ քանի մը նամակներ, ուր իրեն դէմ Թուրքերու կողմէ ուղղուած յարձակումներէն ազդուած, համաձայնութեան իմաստը կը խեղաթիւրէր, իր ստորագրած դաշինքէն կը հեռանար, ի միջի այլոց պաշտպանելով Սուլթանին վեհապետութեան տակ մնացած ինքնավար եւ ոչ-երկճղած Քիւրտիսթանի մը կազմութիւնը, փոխանակ անկախ Քիւրտիսթանին, զոր պահանջած էր վերոյիշեալ համաձայնագրով: Քիւրտերէ մաս մը, Պոլսոյ լրագրաց մէջ իրենց ըրած յայտարարութեանց համեմատ, կը թուին հաւատարիմ մնալ ուզել Համաձայնագրին, որ անկախ Քիւրտիսթանի մը կազմութիւնը կը պահանջէր. սիրալիր յարաբերութիւններ հաստատուեցան Պոլսոյ մէջ այդ ազգասէր Քիւրտերուն եւ Հայոց միջեւ: Միւս կողմէ՝ Վանի եւ Պիթլիսի նահանգները, որոնց Հայաստանի տրուելուն դէմ կը բողոքէր Շէրիֆ փաշա իր վերոյիշեալ նամակներուն մէջ, հայկական նահանգներէն ճիշդ անոնք են, զոր Դաշնակիցները որոշած են առանց վէճի Հայ պետութեան միացնել:

*

Ազգային Համագումարը կը հաւաքուի այն պահուն իսկ ուր Թուրքիոյ պարտադրուած դաշնագիրը Թուրք Պատուիրակութեան կը յանձնուի: Ուրեմն իրապէս Հայկական Հարցի լուծման ժամն է, դժբախտաբար այդ լուծումը չէ ստացուած, նոյն իսկ այս ժամուն, որոշ ու վճռական ձեւով մը:

Նախագահ Վիլսընի պատասխանը դեռ չէ հասած, եւ դաշնագիրը առկախ կը ձգէ Հայաստանի սահմաններուն հարցը, հարկադրելով միայն թիւրքերը ընդունիլ ինչ որ նախագահ Վիլսընը պիտի որոշէ այդ մասին: Հաշտութեան Վեհաժողովը յստակօրէն յայտնած է իր որոշումը վերաձեւել Հայաստան մը կազմելու մասին, Ամբողջական Հայաստանի ծրագրի մասին այլեւս խօսք չկայ. վերջին ճառին մէջ, զոր կ'արտասանէր խորհրդարանին մէջ, Պ. Լոյտ Ճորճ տեսակ մը հեգնութեամբ կը խօսէր Ամբողջական Հա-

յաստանի մը նկատմամբ հայոց պահանջներու մասին, որ՝ կ'ըսէր հսկայական բան մը ունին: Գերագոյն Խորհուրդը նախագահ Վիլսընի կարծիքն ուզած է միմիայն Էրզրումի, Վանի, Պիթլիսի եւ Տրապիզոնի նահանգներու մասին: Կիլիկիոյ, ինչպէս եւ Խարբերդի, Սվազի եւ Տիարպէքիրի վիլայէթներուն նկատմամբ, Խորհուրդը որոշած է որ անոնք պէտք է շարունակեն մաս կազմել Օսմանեան Պետութեան: Այդ բոլոր երկրամասերուն մէջ, Հայերը ո՛չ այլ ինչ պիտի ստանան, եթէ Պատուիրակութեան խնդրանքը չընդունուի, եթէ ոչ փոքրամասնութեանց օրէնքին օգտագործումը: *Քէ պ'Օրսէյի*ն մէջ մեզի կը յայտարարեն թէ այդ շրջաններուն մէկ մասին մէջ Դաշնակիցներու անունով փոքրամասնութեանց պաշտպանութեան վերահսկողութիւնը հաւանօրէն Ֆրանսայի պիտի յանձնուի. անձկութեամբ կ'սպասենք նախագահ Վիլսընի կարծիքը Հայաստանի սահմաններուն մասին եւ կը յուսանք որ ամերիկեան Ծերակոյտը պիտի գոնէ որոշէ որ Միացեալ-Նահանգները մասնակցին այն օգնութեան, զոր Դաշնակիցները որոշած են տալ կազմուելու վրայ եղող Հայ Տէրութեան:

Կացութիւնը որ բաւական շփոթ է, աւելի ե՛ւս կը կնճռոտի Պոլշէվիքներու Կովկաս մտնելովը. Պոլշէվիք կառավարութիւնը, իր առաջին օրերէն, հրովարտակով մը ճանչցած էր Թրքահայոց իրաւունքը՝ այն միջոցին Ռուսերէ գրաւուած Կովկասի սահմանակից երեք նահանգներու անկախութիւնը պահանջելու. պիտի ունենա՞յ միեւնոյն դիրքը՝ միացեալ անկախ Հայ տէրութեան նկատմամբ, հիմա որ կը ներկայանայ իբր դաշնակից մը Ատրպատականի Թաթարներուն եւ Քէմալեան Թուրքերուն:

Դաշնագիրը որ յանձնուեցաւ Թրքական Պատուիրակութեան, կը պայմանադրէ ստեղծումը ազատ եւ անկախ Հայ միացեալ տէրութեան մը, եւ Հայ ազգին կուտայ իրաւունք ստորագրելու, ի շարս Դաշնակից ազգերու, Թուրքիոյ պարտադրուած դաշնագիրը, վերապահելով հանդերձ Անդրկովկասեան շրջանին վիճելի հողամասերուն խնդրոյն լուծումը՝ Հայոց, Վրացւոց եւ Թաթարաց միջեւ համաձայնութեան մը, եւ նախագահ Վիլսընի թողլով իրաւախոհութիւնը Հայ Տէրութեան եւ Թուրքիոյ միջեւ սահմաններու որոշման մասին:

Ահա Դաշնագրին այն յօդուածները որ Հայ Տէրութեան կը վերաբերին.[15]
«Մէկ կողմէ՝
«Բրիտանական կայսրութեան, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճաբոնի,
«Որոնք ներկայ դաշնագրին մէջ նշանակուած են իբր գլխաւոր Դաշնակից պետութիւններ,

[15] Չօպանեան չէ թարգմանած յաջորդող չակերտեալ պարբերութիւններն ու յօդուածները: Ան ուղղակի անցած է աստղանիշին յաջորդող եզրափակիչ պարբերութիւններուն: Դաշնագրի յօդուածներուն վերաբերող այս միջանկեալ ձեռագիր բընագրին մէջ մանիշակագոյն մելանով կատարուած են հպումներ: Ջնջեալ բառերը կամ հատուածները կը ներկայացնենք ջնջում յատկանշող գծիկաւոր տառերով:

«Հայաստանի, Պէլճիքայի, Յունաստանի, Հիճազի, Բոլոնիոյ, Բորթուկալի, Ռումանիոյ, Սերպիօ-Խրուաթ-Սլօվէն պետութեան եւ Չեխօ-Սլօվաքիոյ,
«Որոնք վերոյիշեալ պետութեանց հետ կը կազմեն Դաշնակից Պետութիւնները,
«միջեւ.
«Միւս կողմէ,
«Թիւրքիոյ միջեւ,
«կնքուած է եւայլն.»
Այս կերպով կ'սկսի Հաշտութեան այն Դաշնագիրը որ յանձնուեցաւ Օսմանեան Կայսրութեան լիազօր Պատուիրակներուն:

Ձ. Գլուխ
Հայաստան

Յօդ. 88.- Թիւրքիա ~~ներկայ դաշնագրով~~ կը ճանչնայ Հայաստանը իբր ազատ եւ անկախ պետութիւն, ինչպէս արդէն ճանչցած են Դաշնակից Պետութիւնները:
Յօդ. 89.- Թիւրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ միւս ստորագրող բարձր կողմերը կը հաւանին Միացեալ-Նահանգներու Նախագահին իրաւարարութեան ենթարկել Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ նշանակուելիք սահմանները, Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Պիթլիսի վիլայէթներուն մէջ, եւ ընդունիլ անոր որոշումը, ինչպէս նաեւ ո՛եւէ տնօրինութիւն զոր պիտի ընէ՝ դէպի ծով Հայաստանի ելք մը տալու եւ Հայ-Թուրք սահմանագլուխին Թրքական կողմի ո՛եւէ մէկ մասը ~~ամբողջովին~~ զինաթափ ընելու մասին:
Յօդ. 90.- Այն պարագային որ[16] սահմաններու որոշումը 89րդ Յօդուածին համաձայն այդ վիլայէթներուն մէկ մասը կամ ամբողջութիւնը Հայաս-

[16] Հպումներու ենթարկուած բնագրին մէջ՝ ու: Իր ամբողջութեան մէջ՝ բնագրային հատուածը կը ներկայանայ հետեւեալ ձեւով, ուր շեղագրած ենք յաւելումներն ու գծիկաւոր տառերով զատորոշած ջնջումները. «*Այն պարագային ու [կարդալ՝ որ- Վ.Ղ.] սահմաններու որոշումը,* 89րդ Յօդուածին համաձայն, ~~երբ սահմանները որոշուին, եւ~~ այդ վիլայէթներէն*ուն* մէկ մասը կամ ամբողջութիւնը Հայաստանի փոխանց~~ուի~~*էր*, Թիւրքիա՝ ~~ներկայ դաշնագրով~~ *այժմէն կը յայտարարէ թէ* կը հրաժարի այդ փոխանցուած հողամասերուն վրայ իր ամբողջ իրաւունքներէն~~,~~ *ու տիտղոսներէն,* որոշման թուականէն սկսելով: Թուրքիայէն բաժնուած ուրիշ հողամասերու մասին ~~ներկայ~~ *այս* Դաշնագրին պարունակած տրամադրութիւնները, *ներկայ վայրկեանէն իսկ* գործադրելի պիտի ըլլան նաեւ այդ հողամասերուն նկատմամբ:
Համեմատութիւնն ու բնոյթը Թուրքիոյ այն ելեւմտական պարտաւորութեանց, զորըս Հայաստան պիտի ստանձնէ, ինչպէս նաեւ այն իրաւունքները զորս Հայաստան պիտի ստանայ վերոյիշեալ հողամասերուն ~~փոխանցման~~ *իր վեհապետութեան ենթարկման* հետեւանքով, պիտի որոշուին ներկայ Դաշնագրին Ը. մասին (Ելեւմտական տրամադրութիւններ) 241–244 Յօդուածներուն համաձայն:
Եթէ պէտք ըլլայ, յետագայ Համաձայնութիւններով պիտի լուծուին այն ամբողջ խնդիրները, որոնք ներկայ Դաշնագրով որոշուած չեն եւ որոնք կրնան ծագիլ

տանի փոխանցէ, Թիւրքիա՝ այժմէն կը յայտարարէ թէ կը հրաժարի այդ փոխանցուած հողամասերուն վրայ իր ամբողջ իրաւունքներէն ու տիտղոսներէն, որոշման թուականէն սկսելով: Թուրքիայէն բաժնուած ուրիշ հողամասերու մասին այս Դաշնագրին պարունակած տրամադրութիւնները, ներկայ վայրկեանէն իսկ գործադրելի պիտի ըլլան նաեւ այդ հողամասերուն նկատմամբ:

Համեմատութիւնն ու բնոյթը Թուրքիոյ այն ելեւմտական պարտաւորութեանց, զորս Հայաստան պիտի ստանձնէ, ինչպէս նաեւ այն իրաւունքները զորս Հայաստան պիտի ստանայ վերոյիշեալ հողամասերուն իր վեհապետութեան ենթարկման հետեւանքով, պիտի որոշուին ներկայ Դաշնագրին Ը. մասին (Ելեւմտական տրամադրութիւններ) 241–244 Յօդուածներուն համաձայն:

Եթէ պէտք ըլլայ, յետագայ Համաձայնութիւններով պիտի լուծուին այն ամբողջ խնդիրները, որոնք ներկայ Դաշնագրով որոշուած չեն եւ որոնք կրնան ծագիլ վերոյիշեալ հողամասերու փոխանցման հետեւանքով:

Յօդ. 91[17].- Այն պարագային՝ երբ 89րդ Յօդուածին մէջ յիշուած հողամասերէն մաս մը Հայաստանի անցնի, այս որոշումէն մինչեւ երեք ամիս պիտի նշանակուի սահմանագլուխներու գծման Յանձնախումբ մը, որուն կազմը յետագային պիտի նշանակուի, եւ որ՝ Հայաստանի ու Թուրքիոյ սահմանները պիտի գծէ տեղին վրայ, նոյն որոշման համաձայն:

Յօդ. 92.- Հայաստանի, Ատրպատականի եւ Վրաստանի միջեւ սահմանները փոխադարձաբար պիտի որոշուին այս պետութեանց համաձայնութեամբ: Այն պարագային ուր այս պետութիւնները, մինչեւ 89րդ Յօդուածին մէջ նախատեսուած որոշման կայանալը՝ չկարենան գոյացնել այդ համաձայնութիւնը, յիշեալ սահմանները պիտի որոշուին Դաշնակից գլխաւոր պետութեանց կողմէ, որոնք տեղւոյն վրայ պիտի կատարեն սահմաններու գծումը:

Յօդ. 93.- Հայաստան կ'ընդունի եւ կը համաձայնի Դաշնակից գլխաւոր պետութեանց հետ կնքուելիք դաշնագրով մը ստանձնել այն պարտաւորութիւնները, որոնք այդ պետութեանց կողմէ անհրաժեշտ պիտի նկատուին պաշտպանելու համար շահերը Հայաստանի բոլոր բնակիչներուն, որոնք ցեղով, լեզուով, ու կրօնքով կը տարբերին ժողովուրդին մեծամասնութենէն:

Հայաստան կ'ընդունի եւ կը համաձայնի Դաշնակից պետութեանց հետ կնքուելիք դաշնագրով մը ստանձնել այն պարտաւորութիւնները, որոնք

վերոյիշեալ հողամասերու փոխանցման հետեւանքով»: (Բաղդատել նաեւ 1946ին Գահիրէ լոյս տեսած Գաբրիէլ Լազեանի *Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր)* հատորով ներկայացուած բնագրին հետ (էջ 247), որ կը վերաբերի Սեւրի Դաշնագրին:

[17] Այս եւ յաջորդ յօդուածները կը ներկայացնենք ուղղակի հպումներու գործադրութեամբ, առանց մանրամասնելու անոնց բնոյթը:

անհրաժեշտ պիտի նկատուին պաշտպանելու համար թրանզիթի ազատութիւնն ու արդար րէժիմ մը ուրիշ ազգերու վաճառականութեան համար:

Դաշնագրին մէջ կան ուրիշ յօդուածներ որ կը վերաբերին Հայ ազգաբնակ[չ]ութեանց որ պիտի մնան Թուրք տիրապետութեան սահմաններուն մէջ: Դաշնագրին մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ որ Հաշտութեան Վեհաժողովին մատուցուած Հայկական Յիշատակագրին մէջ գտնուող պահանջներուն մէկ մեծ մասը ընդունուած [է]: Մեզ շահագրգռող յօդուածներէն ոմանց մէջ՝ կան պակասներ կամ շփոթութիւններ, զոր[ս] պէտք է լրացնել կամ պարզել: Դիմումներ պէտք է ըլլուին որ[18] այս նպատակով: Այդ հարկաւոր դիմումներէն մին այն է զոր պէտք է ընել որպէս զի Հայ Տէրութիւնը Ազգերու Ընկերակցութեան անդամ ընդունուի, ինչպէս ընդունուած է Հիճազի Տէրութիւնը:

Այն պահուն ուր մեր դատը իրական յաջողութիւն մը կ'ունենայ, այն պահուն ուր Դաշնակիցները վերջնականապէս կը ճանչնան Հայաստանի իրաւական անկախութիւնը, մեր երկիրը կը գտնուի, նորագոյն դէպքերուն հետեւանքով, տագնապալից կացութեան մը մէջ: Մեծ դժուարութիւններ կը ցցուին իրագործման առջեւ այն խոստումներուն, զոր կը պարունակէ Դաշնագիրը, ու ծանր վտանգներ կ'սպառնան մեր ժողովուրդին: Մեծ ճիգ մը անհրաժեշտ է այս դժուարութեանց յաղթելու եւ այդ վտանգներուն առաջքն առնելու համար: Մենք լիայոյս ենք որ մեր ժողովուրդը ցոյց պիտի տայ պէտք եղած կորովը, իմաստութիւնը, միաբանութիւնը, եւ զոհաբերութեան ոգին՝ այս հուսկ տագնապին յաղթելու եւ յաջողելու համար մեր ազգին դարաւոր երազը իրագործել՝ իսկապէս կազմելով Միացեալ Հայաստանը, վերածեալ բայց ճշմարտապէս անկախ ու կենսունակ:

Տեղեկագրին ընթերցումէն անմիջապէս ետք անոր քննարկումն սկսած ըլլալով, այստեղ կը ներկայացնենք Արամ Անտոնեանի գրառած եւ իր իսկ ձեռագրով կատարուած բազմաթիւ ջնջումներով ու այլ հպումներով լի սեւագիր ատենագրութեան այն բաժինը[19], որուն մաքրագիր օրինակին չենք հանդիպած: Չծանրաբեռնելու համար նիւթը, զանց կ'առնենք հպումներու մանրամասնութիւններն ու ապայապաւեալ ձեւով կը ներկայացնենք կըրճատեալ բառերը- Վ.Ղ.:

Պ. Ա. Թէրզիպաշեան.- Կ'ուզէի գիտնալ թէ այս համարատուութեան ամբողջ գիծերու մասին Պատուիրակութեան բոլոր անդամներն ալ համաձա՞յն են:

Պ. Ա. Չօպանեան.- Երբ դահլիճի մը անունով ընդհանուր յայտարարութիւն մը կ'ըլլայ, ոչ ոք կը փնտռէ թէ դահլիճին ո՞ր անդամը համամիտ է ա-

[18] Ջնջումը՝ մեր կողմէ: Դիտելի է թէ Չօպանեանի թարգմանութենէն կը բացակայի արտագրողին անուշադրութեան հետեւանքով սողոսկած այս անտեղութիւնը:

[19] ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 57, 5-24 համարակալումով թերթեր:

մէն մէկ ըսուածին եւ ո՛րը ոչ: Սա միայն կրնամ ըսել թէ Պատուիրակութեան որոշումները տրուած են ընդհանրապէս միաձայնութեամբ, մերթ մեծամասնութեամբ:

Պ. Վ. Թէքէեան.- Կան որոշումներ եւ գործեր որոնք տրուած կամ կատարուած են Պատուիրակութեան այս կամ այն անդամին պաշտօնով բացակայութեան միջոցին: Այսպէս՝ Բրօֆ. Տէր-Յակոբեան բացակայ է քանի ատենէ ի վեր, կը գտնուի Ամերիկա յատուկ պաշտօնով: Ես ալ միեւնոյն ստիպմամբ բացակայեցայ երկար ժամանակ: Ասիկա ամբողջ Պատուիրակութեան համարատուութիւնն է եւ անշուշտ ընդհանուր գիծերուն մէջ ամէնքըս ալ իւրացուցած ենք զայն:

Դուրեան Արքեպ.- Դիտողութիւն մը կ'ուզեմ ընել կարգ մը կէտերու մասին, որոնք մութ կը մնան Համարատուութեան մէջ: Օրինակ՝ Կիլիկիոյ համար ֆրանսական կառավարութեան մօտ եղած դիմումներուն ակնարկելով տեղեկագիրը կ'ըսէ թէ խոստում եղաւ որ «արմատական միջոցներ» ձեռք պիտի առնուին: Ի՞նչ են այդ արմատական միջոցները:

Պ. Չօպանեան.- Այսինքն օգնական զօրք պիտի ղրկուի Կիլիկիա եւ պիտի զինուին Հայերը՝ ինքնապաշտպանութեան համար:

Դուրեան Արք.- Լաւագոյն չէ՞ր որ այդ պարագան բացորոշ կերպով արձանագրուէր տեղեկագրին մէջ:

Պ. Վ. Թէքէեան.- Այս տեղեկագրին խմբագրութեան ատեն տեսակէտ մըն ալ իր որոշ ազդեցութիւնն ունեցաւ: Մտածելով որ եթէ ոչ անոր ամբողջութիւնը, գոնէ զանազան մասերը կրնան հրատարակութեան տրուիլ եւ պէտք է տրուին, ըստ այնմ խմբագրուեցաւ, որպէս զի հրատարակութեան պահուն անպատեհութիւն մը չծագի:

Պ. Տէր-Սրեփանեան.- Պատուիրակութիւնը երբ պէտք կը տեսնէր ժողովուրդը լուսաբանելու, նոյնքան եւ աւելի պէտք է մտածէր նախապէս Համագումարին տալու անհրաժեշտ լուսաբանութիւնները:

Պատգամաւորներէն ոմանք, Պ. Թէքէեանի առարկութեան անդրադառնալով, յարմար չգտան տեղեկագրին առ այժմ նոյն իսկ մասամբ հրատարակութիւնը:

Պ. Տէօվլէթեան փափաք յայտնեց որ տեղեկագիրը բազմագրուելով մէյ մէկ օրինակ տրուի բոլոր պատգամաւորներուն: Պ. Չօպանեան յոյս յայտնեց թէ քանի մը օրէն կարելի պիտի ըլլայ գոհացում տալ այդ բաղձանքին:

Պ. Բարսեղեանի պահանջման վրայ որոշուեցաւ Ազգ. Պատուիրակութենէն ստանալ Լոնտոնի մէջ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ ստորագրուած փոքրամասնութեանց իրաւունքներուն պատկանող պաշտօնագրին մէկ օրինակը:

Նոյնպէս՝ Պ. Թէրզիպաշեան պահանջեց Ազգ. Պատուիրակութենէն ստանալ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ Լոնտոնի մէջ Գերագոյն Խորհուրդին տրուած տասնամեայ պիւտճէի նախագիծը, որուն համար ըսաւ թէ չէ յիշատակուած տեղեկագրին մէջ:

Պ. Չօպանեան յայտնեց թէ այս նախագիծը կը գտնուէր այն ծանօթութեանց կարգին, որոնք ընդհանուր կերպով յիշատակուած են տեղեկագրին մէջ, զինուորական եւ հոգատար պետութեան ու Հայկական կառավարութեան յարաբերութեանց վերաբերող համաձայնագրի նախագիծերուն հետ, եւ որոնք Գերագոյն Խորհուրդին տրուեցան՝ լուսաբանելու համար Ազգերու Ընկերակցութեան Գործադիր Խորհուրդը Հայաստանի հոգատարութեան մանրամասնութեանց նկատմամբ: Համագումարը որոշեց այդ պիւտճէի նախագիծն ալ ստանալ Ազգ. Պատուիրակութենէն: Պ. Տիրան Տէօվլէթեանի առաջարկին վրայ, Համագումարը որոշեց նաեւ որ Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը բազմագրուելով բաժնուի պատուիրակներուն:

Պ. Թէրզիպաշեան յայտնելով թէ Համարատուութեան մէջ Հայ եւ Քիւրտ համաձայնութեան առթիւ Վանի եւ Պիթլիսի վիլայէթներուն Հայաստանի կցման մասին ապահովութիւն ստացուած ըլլալը ըսուած է, փափաքեցաւ գիտնալ թէ արդեօք Պատուիրակութիւնը կրցա՞ծ է գրաւոր կերպով ստանալ այդ ապահովութիւնը, քանի որ Շէրիֆ փաշա ալ կը պնդէ թէ այդ նահանգները կը պատկանին Քիւրտիսթանի:

Պ. Չօպանեան.- Գրաւոր պաշտօնական յայտարարութիւն մը չկայ:

Պ. Թէքէեան.- Սակայն կայ բան մը, զոր կարելի է ապահովութիւն մը նկատել, եւ ատիկա Գերագոյն Խորհուրդին կողմէ նախագահ Ուիլսընի եղած իրաւարարութեան առաջարկն է, որուն մէջ որոշապէս յիշատակուած են նաեւ Վանայ ու Պիթլիսի նահանգները:

Տ. Հաւէն Պաւրիարք.- Եթէ գրաւոր բան մը չկայ, գոնէ բերանացի շատ ապահովութիւններ տուած են, եւ ես վստահ եմ թէ նոյն իսկ Դաշնագրին մէջ պաշտօնապէս արձանագրուած կ'ըլլային ատոնք, եթէ նախագահ Ուիլսընի դիմում ընելու պէտք չտեսնուէր:

Պ. Թէրզիպաշեան.- Բայց նոյն իսկ նախագահ Ուիլսընի եղած առաջարկութեան ձեւէն յայտնի կ'ըլլայ թէ այս երկու վիլայէթներէն մասեր Հայաստանէն կրնան դուրս մնալ:

Պ. Չօպանեան.- Աւելի թանկագին ապահովութիւն մը ունինք այդ մասին: Լոնտոն երթալէ առաջ առիթ ունեցանք տեսնելու զինուորական քարտէս մը որ մտերմաբար ցոյց տրուեցաւ մեզի, եւ որուն մէջ որոշապէս Վան քաղաքն ու Պիթլիսն ամբողջ, բացի Հէքքիարիէն ու Սղերդի Սանճագէն, Հայաստանի թողուած էին:

Պ. Թէրզիպաշեանի առարկութեան վրայ թէ քարտէսները կրնան փոխուիլ, Նազլեան Գերապայծառ ժողովին ուշադրութեան յանձնեց այն պարագան թէ ճիշդ այս օրերս խոշոր շարժում մը կայ Փարիզի մէջ՝ Ֆրանսայի ապահովելու համար 1916ի գաղտնի Համաձայնութեամբ իրեն տրուելիք բոլոր թրքական հողամասերը, եւ թէ կրնայ ըլլալ որ այս լուրջ շարժման հետեւանքով փոխուին ոչ միայն քարտէսներ, այլ նոյն իսկ այն Հաշտութեան Դաշնագրի նախագիծը որ տրուեցաւ թուրք լիազօրներուն: Յիշատակելով

այս պարագան, Գերապայծառը թելադրեց որ միջոցներ ձեռք առնուին օգտուելու համար այդ շարժումէն, եւ նոր հաւանական արդիւնքներէն բաժին մը ապահովելու համար նաեւ հայկական պահանջմանց:

Պ. Դաւիթ-Բէկ ալ իր կողմէ շեշտեց թէ 1916ի գաղտնի դաշնագրին տրամադրութիւնները յարգել տալու համար Ֆրանսայի մէջ սկսած շարժումը իսկապէս կարեւոր է. յայտնեց նաեւ թէ այդ մասին բանախօսութիւններ տեղի կ'ունենան Ընկերաբանական Ընկերութեան սրահին մէջ, թէ հազարաւոր ծանուցումներ որոնք փակցուած են Փարիզ ու գաւառները եւ որոնք կը կրեն ստորագրութիւնը շատ կարեւոր ընկերակցութիւններու եւ մարմիններու, կը յայտարարեն թէ Ֆրանսա անիրաւուած է Թրքական Դաշնագրով, եւ թէ պէտք է Ֆրանսայի վերադարձուին Սուրիան ու Կիլիկիան՝ մինչեւ Եփրատ, Խարբերդը իր յարակից հողամասերով մէջն ըլլալու պայմանաւ, հակառակ պարագային՝ չեղեալ նկատելով Դաշնագիրը: Պ. Դաւիթ-Բէկ աւելցուց որ իրեն ալ առաջարկ եղած էր մասնակցիլ այդ բանախօսութեանց, պարզելու համար հայկական տեսակէտը, եւ թէ ինք, նկատի առնելով խնդրին փափկութիւնը, զգուշացաւ որոշ պատասխան մը տալէ:

Տ. Զաւէն Պատրիարք.- Կը զարմանամ որ այդքան խոշոր համեմատութիւն մը կը տրուի այդ շարժման, մինչդեռ իրապէս ոչ իսկ թերթերու մէջ յիշատակուած է:

Ի վերջոյ Պ. Դաւիթ-Բէկ հարցուց թէ զինուորական քարտէսը որուն ակնարկած էր Պ. Չօպանեան, ո՞ր պետութեան կողմէ պատրաստուած էր: Պ. Չօպանեանի պատասխանին վրայ թէ Անգլիական զինուորական իշխանութեան կողմէ պատրաստուած էր, վիճաբանութիւնը վերսկսաւ քարտէսներու փոփոխականութեան մասին:

Նախագահ Գաբրիէլ էֆէնտի Նորատունկեան, իր փորձառութեան վրայ հիմնուելով, յայտարարեց թէ քարտէսները ինքնին նշանակութիւն չունին եւ չեն կրնար հաստատ վաւերագիր մը դառնալ, որովհետեւ յանձնաժողով մը քարտէս մը կը պատրաստէ, ուրիշ յանձնաժողով մը կրնայ յաջորդել անոր եւ տարբեր քարտէս մը պատրաստել: Այդ խնդրին մէջ, յարեց, ակնարկելով Վանայ եւ Պիթլիսի մասին, Պ. Թէրզիպաշեանի կողմէ եղած հարցման, Պատուիրակութիւնը հաւանականաբար չէ կրցած պաշտօնական վաւերագիր մը ձեռք բերել եւ գոհացած է լոկ եղած խոստումներով:

Անդրադառնալով Թրքական Դաշնագրին փոխուելու հաւանականութեան, Նազլեան Գերապայծառ կրկնեց իր խօսքերը, որոնց, ինչպէս նաեւ Պ. Դաւիթ-Բէկի պատասխանելով, Պ. Չօպանեան յայտնեց թէ Ազգ. Պատուիրակութիւնը իր ուշադրութենէն չէ վրիպեցուցած այդ պարագան, եւ կազմած է մասնաւոր յանձնաժողով մը ձեռնհաս անձնաւորութիւններէ՝ ինչպէս Նորատունկեան էֆէնտի, ՊՊ. Սինապեան, Աճէմօֆ, Չայեան, որպէս զի քննեն Հաշտութեան Դաշնագիրը, որ արդէն վերջնական բան մը չէ, եւ միջոցներ թելադրեն մեզի եղած անիրաւութեանց դարմանման մասին:

Դուրեան Արք.- Դիտել պիտի տամ նաեւ թէ Պատուիրակութեան տեղեկագիրը լուռ կը մնայ Պատուիրակութեան այն անդամներուն նկատմամբ որոնք բացակայ են պաշտօնով, ինչպէս օրինակի համար Բրօֆ. Տէր-Յակոբեանը: Կարելի չէ՞ր տեղեկութիւն ստանալ անոնց գործունէութեան մասին:

Հարցումը երկրորդեց նաեւ Բրօֆ. Թումայեան: Պ. Չօպանեան պատասխանելով յայտնեց այն պատճառները որոնք ծնունդ առին Ամերիկայի կողմէ Հայաստանի ընծայուելիք ելմտական, դիւանագիտական եւ զինուորական աջակցութեանց յոյսէն ու անհրաժեշտութենէն եւ որոնց համար Բրօֆ. Տէր-Յակոբեան, ինչպէս աւելի վերջը զինուորական առաքելութիւնը Ամերիկա գացին: Գալով անոնց գործունէութեան մասին եղած հարցումներուն, Պ. Չօպանեան յայտարարեց թէ Պատուիրակութեան իմացածն ալ սա է որ տակաւին անոնք ձեռք չեն բերուած:

Պ. Տէրպէտրեան.- Դաշնակիցները ճանչցան Հայկ. Հանրապետութիւնը եւ յայտարարեցին թէ սահմանները պիտի որոշեն Թրքական Դաշնագրին խմբագրութեան ժամանակ: Ասիկա չի՞ նշանակեր թէ կ'ընդունէին Հայկ. Հանրապետութեան իրաւասութիւնը թրքական հողամասերու վրայ: Տեղեկագիրը քանի մը անգամներ կը յիշէ թէ այդ ճանաչումը Միացեալ Հանրապետութեան սահմաններու մէջ եղող տէրութեան համար է: Կա՞յ ո՛եւէ հիմք այդպէս ենթադրելու:

Պատասխան տրուեցաւ թէ ճանաչման ֆօրմիւլը տարտամ էր, որով կարելի չէ հաստատ բան մը ըսել այդ մասին:

Վիճաբանութեան առարկայ դարձաւ տեղեկագրին այն հատուածը որ Հնդիկ իսլամներու կողմէ Թուրքիոյ ի նպաստ կատարուած դիմումին կը վերագրէր յայտնութիւնը այն նոր պայմաններուն որոնք Միացեալ Պատուիրակութիւնը ստիպեցին Ամբողջական Հայաստանի պահանջումէն հրաժարելով նուազագոյն պահանջմանց ծրագիր մը կազմելու:

Բրօֆ. Թումայեան մերժեց այս պատճառաբանութիւնը, դիտել տալով որ Հնդիկ պատգամաւորները Լոնտոնի մէջ պարզապէս ճամբու դրուեցան Պ. Լոյտ Ճօրճի կողմէ: Պ. Չօպանեան պատասխանեց որ այդ մասին սխալ հասկացողութիւն մը կայ: Տեղեկագիրը Հնդիկ պատգամաւորներու կողմէ Լոնտոնի մէջ եղած դիմումին չ'ակնարկեր, այլ այն դիմումին զոր անցեալ տարի Փարիզի մէջ կատարեցին Պ. Մօնթակիւի առաջնորդութեամբ:

Պ. Թէրզիպաշեան.- Նոյն իսկ Հնդիկները չէին ժխտեր Հայաստանի մը կազմութեան անհրաժեշտութիւնը:

Տ. Զաւէն Պապրիարք.- Բայց այս տարի այդպէս չէին խորհեր. փոխեցին իրենց կարծիքը:

Պ. Ֆնտգլեան յայտարարեց այդ առթիւ թէ Ամբողջական Հայաստանի կազմութիւնը անկարելի դարձաւ այն օրէն երբ վերջնականապէս յայտնի եղաւ թէ Ամերիկա չ'ստանձներ հոգատարութիւնը: Պ. Ֆնտգլեան յիշեցուց նաեւ որ ատկէ վերջ, այսինքն Ապրիլի սկիզբը միայն, Պ. Լոյտ Ճօրճ յայտա-

րարեց թէ քանի որ յոյս չկայ Ամերիկեան հոգատարութեան մասին, անկարելի պիտի ըլլայ Ամբողջական Հայաստանի մը կազմութիւնը եւ Արեւելքի փշալից հարցին կարգադրութիւնը պիտի մնայ Անգլիոյ եւ Ֆրանսայի:

Յետոյ վիճաբանութիւն տեղի ունեցաւ այն կէտին շուրջ թէ ինչո՞ւ Ազգ. Պատուիրակութիւնը գրաւոր ապահովութիւն չէր ստացած Դաշնակից Պետութիւններէն՝ իրեն եղած խոստումներու մասին: Պատուիրակութեան անդամները որոնք ներկայ էին, բացատրեցին թէ գրաւոր ապահովութիւն ձեռք բերելու բացարձակ անկարելիութիւն կար, եւ յայտնեցին որ եթէ չկան այդ կարգի վաւերագրեր, ատիկա իրենց անփութութեան հետեւանքով չէ: Իրենց բաղձանքն ալ այդ եղած է միշտ, եւ միշտ աշխատած են որ տրուած խոստումները կարելի եղածին չափ ամուր ու դրական հիմերու վրայ դրուին: Բայց ուրիշ բան է բաղձալ, ուրիշ բան է ստանալ:

Պ. Վահան Թէքէեան.- Արդէն Պատուիրակութիւնը իր դիմումներուն տասէն ինը ստիպուած էր գրաւոր ընել, քանի որ չէր ալ կրնար ուրիշ կերպ ընել, որովհետեւ Պատուիրակութիւնը ընդհանրապէս Փարիզ կը մնար, մինչդեռ դիմումները մասամբ կ'ըլլային Անգլիոյ եւ մասամբ Ամերիկայի, որոնց հետ յարաբերութեան մտնելու գլխաւոր միջոցը գրաւոր դիմումն էր: Միեւնոյն կերպով՝ իր դիմումներէն մէկ մասին պատասխանն ալ գրաւոր կը ստանար: Բայց ոչ անշուշտ այն կարգի գրաւոր խոստումներ՝ ինչպէս փափաք յայտնուեցաւ որ ստացած ըլլայինք: Պատուիրակութեան դիմումներուն կը պատասխանուէր «նկատի կ'առնենք», «կ'աշխատինք» եւայլն ֆօրմիւլներով, կամ յոյսեր կը տրուէին, խոստումներ կ'ըլլային, միշտ անորոշ ու թէական: Պատուիրակութիւնը կրնա՞ր ըսել որ խնդրենք, մեզի գրաւոր ապահովութիւն մը տուէք ձեր խոստումներու մասին. ինչպէ՞ս կարելի էր ատանկ պահանջում մը ընել:

Պ. Գ. Ֆնտգլեան.- Քանի մը հարցումներ ալ ես պիտի ընեմ: Համարատուութեան մէջ յիշատակուած էր թէ Լորտ Քըրզըն 1919 Նոյեմբերին, Ամերիկայի կողմէ հոգատարութեան մերժման հետեւանքով Ամբողջական Հայաստանի մը կազմութիւնը անկարելի դարձած ըլլալը յայտնելով, մասնաւորաբար Կիլիկիոյ մասին խորհուրդ տուած էր որ բանակցինք ուղղակի Ֆրանսայի հետ: Համարատուութիւնը աւելցուցած էր թէ Լորտին յանձնարարութեան վրայ Պատուիրակութիւնը դիմած էր Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան եւ թէ Պ. Պէրթլօ յայտարարած էր որ «մասնաւոր րէժիմ»ի պիտի ենթարկուին Կիլիկիան եւ այն թրքական հողամասերը որոնք յիշատակուած են 1916ի գաղտնի դաշնագրին մէջ իբր Ֆրանսական ազդեցութեան շրջանակ: Կը փափաքէի գիտնալ նախ թէ ի՞նչ տեսակ բան պիտի ըլլար այդ մասնաւոր րէժիմը. որովհետեւ մինչեւ այսօր եղածը ուրիշ բան չէ, այլ լոկ վերադարձ մը դէպի ջարդերու եւ արհաւիրքի րէժիմը: Կը փափաքէի գիտնալ նաեւ թէ Ֆրանսա այդ մասնաւոր րէժիմին հաստատութեան ակնարկելով կ'ուզէր յայտարարել թէ ձե՞ռք պիտի քաշէ այն հողամասերէն որոնք 1916ի գաղտնի դաշնագրով իրեն թողուած էին, եւ եթէ իրօք պիտի

հրաժարի այդ հողամասերէն որոնք կը տարածուին Կիլիկիոյ ու Վերին Հայաստանի միջեւ, կարելի պիտի ըլլա՞յ անոնց մէջ ապահովել զոր օրինակ Արեւելեան Րումէլիի մէջ երբեմն կիրարկուած վարչական ձեւը, որ որքան ալ թրքական գերիշխանութեան ենթակայ մնար, փոխանցման ձեւ մը պիտի ըլլար եւ օր մը հնարաւոր պիտի դարձնէր այդ հողամասերուն Հայաստանի միացումը, ինչպէս Արեւելեան Րումէլին միացաւ Պուլկարիոյ: Ուրիշ հարցում մը կ'ուզեմ ուղղել Հպատակութեան փոփոխութեան հարցին նըկատմամբ, որու մասին Դաշնագիրը շատ որոշ տրամադրութիւններ չի պարունակեր, եւ որ շատ մեծ կարեւորութիւն ունի մասնաւորաբար Հայոց համար: Դաշնագրին տրամադրութեան համաձայն, փոքրամասնութեանց պատկանող այն անհատներն որոնք կը փափաքին իրենց հպատակութիւնը փոխել, մէկ տարուան ընթացքին անպատճառ պէտք է փոխադրուին այն երկիրը՝ որուն հպատակ մնալը կը նախընտրեն: Ասիկա ծանր անպատեհութիւն մըն է շատ մարդոց համար որոնք գործ կամ ստացուածք ունին, եւ չեն կրնար մէկ օրէն միւսը ամէն բան լքելով երթալ: Օրինակի համար Իզմիր ծնած, Իզմիր հաստատուած, Իզմիր գործ ունեցող Հայ մը, որ կը նախընտրէ Հայկական հպատակութիւն ընդունիլ, ինչպէ՞ս յանկարծ ամէն բան թողու եւ մեկնի: Կայ նաեւ ուրիշ տեսակէտ մը որ շատ աւելի կարեւոր է անշուշտ: Ի՞նչ պիտի ըլլան այն Հայերը որոնք կը մնան Թուրքիոյ տիրապետութեան թողուած նահանգներուն մէջ, պիտի կրնա՞ն, եթէ փափաքին, Հայկական հպատակ դառնալ: Թէեւ պաշտօնագրին մէջ փոքրամասնութեանց ապահովութիւնը երաշխաւորող տրամադրութիւններ կան, բայց վերջապէս, այս բոլոր անցքերէն ետք, դարձեալ թրքական գարշելի րէժիմին տակ մնալը հեռանկար մըն է որուն վրայ սոսկումով պիտի խորհի ամէն Հայ: Կ'ուզէի գիտնալ թէ արդեօք Պատուիրակութիւնը ի վիճակի՞ է այս մասին ալ մեզ լուսաբանելու:

Պ. Չօպանեան.- Պ. Ֆնտգլեանի առաջին հարցման մէջ ակնարկուած հողամասերուն նկատմամբ, Պատուիրակութիւնը միշտ աշխատած է որպէս զի ո՛եւէ պարագային մէջ վերջնականապէս ազատ մնան Թրքական տիրապետութենէն: Երբ պայմաններու փոխուելուն հետեւանքով հնարաւոր չեղաւ ամբողջական միացեալ Հայաստանի կազմութիւնը եւ անկլօ-ֆրանսական 1916ի համաձայնութիւնը իր ոյժը վերստացաւ թէ այստեղ եւ թէ Լոնտոն, Պատուիրակութիւնը բոլոր կարելի միջոցներով ջանաց որպէս զի գոնէ այդ շրջանակները զորս Հայկական Պետութեան կցելու հնարաւորութիւն չկար այլեւս, չվերադարձուին Թուրքիոյ եւ վայելեն լայն ինքնավարութիւն: Պատասխանուեցաւ թէ դժուար է ինքնավարութեան իրականացումը, բայց նոյն ատեն ապահովութիւն տրուեցաւ թէ բոլորովին Թուրք տիրապետութեան չպիտի թողուին, այլ անոնց մէջ պիտի հաստատուի մասնաւոր րէժիմ մը որ թէեւ չէ մանրամասնուած, բայց անշուշտ պիտի կրնայ անհետացնել մեր երկիւղները: Կ'ընդունիմ որ այսօր ջարդի րէժիմ մը կայ լոկ.

բայց ջարդերը բնական դրութիւն մը չեն. անոնց ալ վերջը պիտի գայ: Եւ արդէն ջարդուող մինակ մենք չենք, իրենք ալ կը ջարդուին:

Նորատունկեան Էֆէնտի.- Հիմա գործը ուրիշ գոյն առած է եւ Դաշնագրէն յայտնի կ'ըլլայ որ Կիլիկիան նոյն ձեւով կը վերադարձուի Թուրքերուն, ինչ ձեւով որ կը վերադարձուին միւս վիլայէթները: Դաշնագրին ընծայած ապահովութիւնը լոկ փոքրամասնութեանց վերաբերող տրամադրութիւններն են:

Տ. Զաւէն Պատրիարք.- Դաշնագրին յանձնուելէն երեք օր առաջ Պ. Միլրան զիս վստահեցուց որ թէեւ պիտի քաշուին Կիլիկիայէն, բայց Կիլիկիա միշտ պիտի մնայ Ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ եւ այնտեղ պիտի գտնուին Ֆրանսացի պաշտօնատարներ:

Նազլեան Գերապայծառ.- Այդ տեսակ վստահութիւններ մեզի ալ տրուեցան: Կ''ուզէի գիտնալ թէ ի՞նչ կայ գրաւոր որ այդ բոլոր խոստումներուն գործադրութիւնը երաշխաւորէ:

Պ. Թէքէեան՝ վիճաբանութեան ստացած ընթացքին ակնարկելով, յիշեցուց թէ ի բացակայութեան Պատուիրակութեան նախագահին՝ որոշուած էր տեղեկագրին նկատմամբ լոկ լուսաբանութիւններ միայն պահանջել, մինչդեռ կը յուզուին այն տեսակ խնդիրներ որոնց համար անհրաժեշտ է նախագահին ներկայութիւնը:

Պ. Ա. Թէրզիպաշեան.- Ես պարզ լուսաբանութիւն մը պիտի պահանջեմ: Համագումարը անցեալ տարի հռչակեց որ Հայերը իրաւունք ունին բաժին մը ստանալու Գերմանիոյ վճարելիք պատերազմական տուգանքէն: Նոյն իսկ յատուկ յանձնաժողով մը առաջարկ բերաւ այդ մասին, առաջարկ զոր Համագումարը իւրացուց եւ պարտք դրաւ Ազգ. Պատուիրակութեան վրայ՝ այս արդար պահանջումը պսակելու: Այն ատեն՝ այս պահանջման ոյժ տըրուեցաւ այն մտածմամբ թէ Թուրքիան չպիտի կրնայ տուգանք վճարել: Այդ նախատեսութիւնը կ'իրականանայ այսօր, ինչպէս կը տեսնուի Հաշտութեան Դաշնագրէն: Թուրքիոյ հասոյթները մեծ մասամբ կը յատկացուին հանրային պարտքին: Ոչ միայն միջոց չունի պատերազմական տուգանք վճարելու, այլ կը կասկածիմ նոյն իսկ որ գրաւման Դաշնակից բանակներու ծախքն անգամ չկարենայ վճարել: Մեր ազգը իր ահաւոր վնասներուն փոխարինութիւնը կրնար ստանալ լոկ Գերմանիոյ վճարելիք պատերազմական տուգանքէն: Համարատուութեան մէջ սակայն այդ մասին ոչ մէկ ակնարկութիւն կար: Այնպէս կը կարծեմ որ Պատուիրակութիւնը՝ ժողովուրդին ենթարկուած անսահման վնասները դարմանելու միակ թանկագին պատեհութիւնը փախցուց, եւ ասիկա՝ հակառակ այն պարտաւորութեան որ այդ մասին դրուած էր իր վրայ: Այս ենթադրութեան կը մղուիմ անոր համար որ երբ պ. Թէքէեան Երեւան եկաւ, հարցուցի իրեն թէ բան մը եղա՞ծ է այդ նըպատակով: Պատասխանեց թէ ոչ: Անկէ ի վեր՝ նոյնպէս ոչինչ եղած է: Եւ այս պարագան ինծի աւելի ցաւալի կը թուէր այնտեղ՝ Կովկասի մէջ՝ ուր աչքի առջեւ ունէի զոր օրինակ Աղեքսանդրաբօլի մէջ համախմբուած թշուառ-

ներու այն խմբաւորումը, բոլորն ալ վնասուած, կորսնցուցած ինչ որ ունէին, անսուաղ, անտուն ու անապաւէն, եւ որոնց ահաւոր վիճակին մէկ դարմանը կրնար ըլլալ այդ վնասուց հատուցման կարգադրութիւնը զոր անտես թողեր է Պատուիրակութիւնը: Բայց ես ուրիշ գանգատ մըն ալ ունիմ այս մասին Պատուիրակութեան դէմ: Այդ թշուառ վերապրողներուն վիճակին դարման մը գտնելու համար դիմում ըրի Պատուիրակութեան, անանկ ատեն մը ուր այնտեղ օրական 20 սայլ չէր բաւեր վայրկեանը վայրկեանին կուտակուող դիակներու փոխադրութեան հասնելու համար: Փաստեր ունիմ թէ այս նամակս հասած է Պատուիրակութեան: Բայց կը ցաւիմ ըսելու որ պատասխան անգամ չստացայ:

Պ. Վահան Թէքէեան.- Անգամ մըն ալ կը յիշեցնեմ որ վիճաբանութեան այս ընթացքը անհրաժեշտ կը դարձնէ Պատուիրակութեան նախագահին ներկայութիւնը:

Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշա որ ստիպուած էր բացակայիլ հարկեցուցիչ պատճառով մը, այդ միջոցին ժողովասրահ մտած ըլլալով, նախագահ Նորատունկեան էֆէնտի խօսքը տուաւ Պ. Գառնիկ Ֆնտգլեանի, որ կրկնեց իր հարցումներէն առաջինը՝ Կիլիկիոյ եւ առ հասարակ 1916-ի գաղտնի դաշնագրին մէջ Ֆրանսայի թողուած հողամասերու մասին եւ հարցուց դարձեալ թէ արդեօք կարելի՞ է որոշ լուսաբանութիւն մը ստանալ այն մասնաւոր րէժիմին նկատմամբ որուն պիտի ենթարկուին այդ հողամասերը, ինչպէս յայտնած էր Պ. Պէրթլօ:

Պօղոս Նուպար փաշա.- Ես նոյնիսկ աւելի հինէն պիտի սկսիմ անհրաժեշտ բացատրութիւնները այս խնդրին նկատմամբ, 1916ի Լոնտոնի Համաձայնութենէն, որուն կապուած է նաեւ հայ կամաւորականներու լէգէոնին կազմութեան խնդիրը, եւ որ սկզբնակէտն է վերոյիշեալ հողամասերու մասին Ֆրանսայի կողմէ ստանձնուած յանձնառութեանց: Երբ 1916 Դեկտեմբերին Լոնտոն կանչուեցայ, մեզի հաղորդեցին գաղտնի դաշնագիր մը որ կնքուած էր Անգլիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի միջեւ: Դաշնագիրը պատրաստած էին Պ. Ժօռժ Բիքօ եւ Սըր Մարք Սայքս, որուն մահը դժբախտութիւն մը եղաւ մեզի, որովհետեւ մեծ բարեկամ մըն էր Հայոց. եւ այն ձեւով ինչպէս որ խմբագրուած էր, այդ դաշնագիրը կը վճռէր Թուրքիոյ կատարեալ բաժանումը: Պատերազմին հետ՝ իւրաքանչիւր պետութիւն որոշած էր յաղթութեան պարագային իր բաժինը ստանալ Տաճկաստանէն: Ռուսիա կ'ուզէր տիրանալ Պոլսոյ եւ Հայաստանի արեւելեան նահանգներուն: Անգլիա իրեն կը պահէր Միջագետքը եւ Արաբիոյ վրայ գերիշխանութեան իրաւունք մը: Ֆրանսա՝ Սուրիան ու Կիլիկիան, յարակից ծանօթ սահմաններով: Սըր Մարք Սայքս եւ Պ. Ժօռժ Բիքօ յաջողեր էին համաձայնեցնել բոլոր հակամարտ շահերը եւ կազմեր էին վերջապէս այդ դաշնագիրը որուն Հայաստանի վերաբերող մասերը մեզի հաղորդուեցան բերանացի: Գրաւոր բան մը չէինք կրնար պահանջել, անոր համար որ կատարուած իրողութեան մը դէմն էինք, ամէն բան որոշեր, վճռեր էին եւ ապահովաբար անոնց գործադ-

րութեան համար մեր հրամանին չէին սպասեր: Ասիկա իրողութիւն մըն էր որ կրնար որոշ չափով մը խանդավառել մեզ: Կիլիկիան եւ ծանօթ երեք վիլայէթները վերջնականապէս կը փրկուէին թրքական տիրապետութենէն: Բայց ասով չբաւականացանք: Դժբախտութիւն մըն էր մեզի համար որ Հայաստան երկուքի կը բաժնուէր: Կատարուած իրողութեան մը դէմն էինք, ստիպուեցանք ընտրել նուազագոյն չարիքը, խնդրելով որ գէթ Կիլիկիոյ եւ ծանօթ վիլայէթներու շնորհուի ամենաշատ ինքնավարութիւն մը Ֆրանսայի թեւարկութեամբ: Այս մասին խոստում եղաւ անմիջապէս միշտ բերանացի: Բայց այս խոստումը առանց պայմանի չէր: Կը յիշեմ որ Ֆրանսական դեսպանատան մէջն էինք այդ օրը: Ներկայ էին թէ՛ Պ. Ժօռժ Բիքօ եւ թէ Սըր Մարք Սայքս: «Ինքնավարութիւն կը պահանջէք, բայց պէտք է ինքզինքնիդ արժանի ցոյց տաք ատոր, Հայերը պէտք է իրենց արիւնով գնեն իրենց ազատութիւնը»: Բառ առ բառ այսպէս ըսին, պահանջելով կազմութիւնը հայ կամաւորներու լէգէոնի մը որ գործօն մասնակցութիւն մը պիտի ունենար պատերազմին: Առաջարկը փափուկ էր, մանաւանդ վտանգաւոր: Ծանօթ էին մեզի այն ահաւոր ջարդերը որոնք տեղի ունեցած էին Թուրքիոյ մէջ: Բայց տակաւին ահագին թուով Հայեր պատանդ կը մնային թուրքերու ձեռքը: Կրնար ըլլալ որ հայ կամաւորներու մասնակցութիւնը պատերազմին՝ այդ վերապրող Հայոց համար նորէն վտանգի շրջան մը ստեղծէր: Բայց միւս կողմէ Հայաստանի խոշոր մէկ հատուածին՝ ամբողջ Կիլիկիոյ եւ անոր հետ ալ Խարբերդի, նոյն իսկ Սվազի վիլայէթներուն ազատութիւնն ու ինքնավարութիւնը կար: Կարելի չէր արհամարհել այս տեսակ հեռանկար մը եւ փախցնել զայն իրականացնելու առիթը: Ստիպուեցանք ընդունիլ առաջարկը, անշուշտ կարգ մը զգուշական պայմաններով, որոնցմէ գլխաւորն էր կամաւորները յատկացնել լոկ Հայաստանի վերոյիշեալ հատուածին ազատման ձգտող զինուորական գործողութեանց: Այդ միջոցին՝ Եգիպտոսի Ազգային Միութիւնն ալ ֆրանսացի զինուորականներու հետ բանակցութեան մտած էր հայ կամաւորներու լէգէոնի մը կազմութեան համար: Մեր ջանքերը միացուցինք եւ անոնք պսակուեցան մեր ակնկալութիւններէն աւելի, թէեւ կարելի չեղաւ ամբողջովին Եւրոպա փոխադրել զոր օրինակ Ամերիկայի մէջ արձանագրուած բոլոր կամաւորները, ինչպէս այս մասին կրնայ վկայել Պ. Թէքէեան որ Եգիպտոսի Ազգ. Միութեան կողմէ կը զբաղէր այդ խնդրով:

Պ. Թէքէեան.- 5000 հոգի արձանագրուած էին, բայց անոնց ընծայուած փոխադրութեան միջոցները այնքան անբաւական եղան որ հազիւ 1800 հոգի կրցան գալ:

Պօղոս Նուպար փաշա.- Ակնարկած զգուշական միջոցներուս համաձայն, կամաւորները մարզուեցան բոլորովին մեկուսի եւ աչքէ հեռու տեղ մը, Կիպրոսի մէջ, Ֆրանսացի սպաներու միջոցաւ, ու վերջէն, ինչպէս յայտնի է, ղրկուեցան Սուրիա, զօրավար Ալլէնպիի բանակը, մասնակցելու համար այն գործողութեանց որոնցմէ կախուած էր նաեւ Կիլիկիոյ փրկութիւնը:

Ծանօթ է արդէն թէ ի՛նչ արիութեամբ ու փառքով կատարեցին այդ մասնակցութիւնը: Ատոր փոխարէն ամէնքս ալ կը յուսայինք որ Ֆրանսա պիտի յարգէ իր յանձնառութիւնները: Բայց այդպէս չեղաւ դժբախտաբար:

Բրօֆ. Թումայեան.- Երբոր իրենց կը յիշեցնէք այդ յանձնառութիւնները, ի՞նչ կ'ըսեն, կ'ուրանա՞լ:

Պօղոս Նուպար փաշա.- Բնա՛ւ. ընդհակառակը կը խոստովանին թէ իրաւունք ունինք. բայց միւս կողմէ անկարելի կը նկատեն իրենց յանձնառութիւնները գործադրել: Տակաւին քանի մը օր առաջ Պ. Միլրան կ'ըսէր որ այդ յանձնառութիւնները յարգելու համար առնուազն 100.000 զինուոր պէտք է ղրկել այնտեղ, ինչ որ այժմ բացարձակապէս անհնար է: Ահա այսպէս տեղի ունեցաւ Կիլիկիոյ ընծայուելիք ինքնավարութեան խոստումը: Կը կրկնեմ որ բերանացի էր եւ կարելի չէր գրաւորապէս ստանալ: Ապահովաբար դեսպան չէինք որպէս զի այդ տեսակ պահանջում մը ընէինք: Ոչ իսկ Հանրապետութեան կառավարութիւնը գոյութիւն ունէր այդ միջոցին: Ներկայացուցիչն էինք մեծ ազգի մը որ իրեն համար ազատութիւն կը խնդրէր: Բնորոշեցինք միայն մեր պահանջումը թէ ինքնավարութիւն ըսելով չենք ուզեր հասկնալ զոր օրինակ Թունուզի եղածին պէս կարգադրութիւն մը որ աւելի կցում է քան ինքնավարութիւն: Խոստացան այդ ալ, եւ կը հաւատայի որ անկեղծ են իրօք: Այն ատեն՝ վարչապետը Պ. Պրիանն էր: Անցեալ օր երբ իրեն այցելեցի, ոչինչ ուրացաւ ինքն ալ, ինչպէս ոչինչ կ'ուրանայ Պ. Պէրթլօ: Բայց շատ շատ կ'ըսեն թէ գոհացում պիտի տրուի, եւ ասոր պէս կարգ մը տարտամ խօսքեր: Մնաց որ իրենք ալ շփոթած են, իրենք ալ նեղն են, ինչպէս ցոյց կու տան Կիլիկիայէն հասած լուրերը:

Պ. Գառնիկ Ֆնտգլեան.- Կը փափաքէի գիտնալ նաեւ թէ յիշեալ երեք նահանգները, Խարբերդ, Տիարպէքիր եւ Սվազ միշտ կը մնա՞ն Ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ, եւ եթէ չեն մնար, կարելի պիտի ըլլա՞յ անոնց համար ապահովել ինքնավար րէժիմ մը:

Պօղոս Նուպար փաշա.- Քանիցս պահանջեցինք ատիկա, երբ Ֆրանսա՝ որուն ազդեցութեան շրջանակին մէջ կ'իյնային այդ նահանգները 1916-ի դաշնագրով, լքեց զանոնք: Այս պահանջը ըրինք նաեւ Սան-Րէմօի մէջ: Բայց անօգուտ: Երբ այդ մասին կը խօսէի Լորտ Քըրզընի հետ, ըսաւ որ եթէ ամբողջական Հայաստանը չունեցաք, գոնէ կ'ունենաք Հայկական Պետութիւն մը: Հարցուցի թէ Կիլիկիան ի՞նչ պիտի ըլլայ: Պատասխանեց որ այդ մասին պէտք է խօսինք ուղղակի Ֆրանսայի հետ: Եւ արդէն՝ յարեց, Կիլիկիոյ մէջ ժողովուրդին ստուար մեծամասնութիւնը իսլամ է: Պնդեցի որ սխալ է այդ ենթադրութիւնը, եւ իսկոյն ծանուցագրով մըն ալ կրկնեցի այս պնդումս, հիմնուելով Ազգ. Պատուիրակութեան վիճակագրութեան վրայ, մանրամասն ցոյց տալով այն իրական համեմատութիւնը որ պատերազմէն առաջ գոյութիւն ունէր Կիլիկիոյ քրիստոնեայ եւ իսլամ բնակչութեանց թըւին միջեւ: Լորտ Քըրզըն կրկնեց թէ պէտք չենք մեծ յոյսեր տածել Կիլիկիոյ

մասին եւ թէ իրենց ստացած տեղեկութիւնները բոլորովին հակառակը կը պնդեն: 3–4 օր վերջ ալ, խորհրդարանին մէջ այդ թէզը պաշտպանեց:

Պ. Վ. Թէքէեան.- Նոյն իսկ առասպելական թիւ մը տալով Կիլիկիոյ իսլամ բնակչութեան մասին:

Պ. Ֆնտգլեան կրկնեց նաեւ պահ մը առաջ ըրած հարցումը՝ հպատակութեան փոփոխման խնդրին նկատմամբ:

Պօղոս Նուպար փաշա.- Դաշնագրին տրամադրութիւնը որոշ է այդ մասին: Այն անհատները որոնք կ'ուզեն փոխել իրենց հպատակութիւնը, պէտք է երկիրը թողուն տարուան մը ընթացքին, հաստատուելու համար այն երկրին մէջ որուն հպատակութիւնը կը նախընտրեն: Անշուշտ ծանր յօդուած մըն է ասիկա, ծանր մանաւանդ մեզի համար, բայց յօդուած մըն է որ սոսկ Թուրքիոյ Դաշնագրին մէջ գոյութիւն չունի, այլ միեւնոյն կերպով դրուած է նաեւ կնքուած միւս դաշնագիրներուն մէջ: Յետոյ այդ յօդուածը լոկ Հայերուն չի պատկանիր, անոր տրամադրութեան հաւասարապէս ենթակայ կը մնան նաեւ Պուլկարները, Յոյները, Թուրքերը: Մասնաւորաբար Յոյները մեզի չափ պատճառներ ունին անով շահագրգռուելու: Ուզեցինք գիտնալ թէ ի՞նչ կը խորհի այս մասին Պ. Վէնիզէլոս. ըսաւ թէ ինք ընդունած է այդ յօդուածը, որովհետեւ կարելի չէր ուրիշ կերպ վարուիլ:

Պ. Գ. Ֆնտգլեան.- Կարելի է ըմբռնել այդ տրամադրութիւնը այն անհատներուն համար որոնք թուրքերէն անջատուած հողամասերուն մէջ կը գտնուին: Իսկ անոնք որ Թուրքիոյ մէջ կը մնան, ի՞նչ պիտի ըլլայ անոնց դրութիւնը:

Պօղոս Նուպար փաշա.- Կը մնան թրքական հպատակ. ուրիշ բան եթէ ուզեցին մինչեւ տարի մը մեկնիլ եւ հաստատուիլ իրենց նախընտրած տէրութեան մէջ: Բայց նոյն իսկ եթէ Տաճկաստան մնալու ըլլան, Դաշնագրին փոքրամասնութեանց իրաւունքներուն պատկանող յօդուածները բաւական ապահովութիւն մըն են անոնց համար: Ատոնք մեծ բաներ չեն եւ լիովին չեն պսակեր մեր իղձերը: Եթէ Դաշնագիրը չպիտի գործադրուի, ըսելիք չունիմ. այդ պարագային իրապէս ոչ մէկ բան արժէք ունի: Բայց եթէ պիտի գործադրուի՝ գրեթէ Թուրքիա չկայ: Ոչ իսկ պարզ տուրք մը չպիտի կրնայ սահմանել իր սեփական կամքով: Ասով մեծ մասամբ կը նուազի այն անհանգստութիւնը զոր իրաւամբ կը զգանք Թուրքիոյ մէջ մնացած մեր ժողովուրդին դրութեան նկատմամբ:

Պ. Ա. Թէրզիպաշեան.- Հարցում մը պիտի ուղղեմ Պատուիրակութեան: Այն ողբալի վիճակը որուն ենթարկուած է մեր դատը եւ այն ոչ-բաւարար համարատուութիւնը զոր լսեցինք հիմա, ցոյց կու տան որ Պատուիրակութիւնը չէ ունեցած ժողովուրդին ակնկալած գործունէութիւնը: Արդ, Պատուիրակութիւնը որ Համագումարէն բղխած է, հարկ չի՞ տեսներ արդեօք Համագումարին խորհուրդով վարել յետագայ գործերը. թէ ոչ՝ կ'ուզէ դարձեալ ինքնագլուխ շարունակել, ինչպէս կ'ընէ արդէն Համագումարին բացուելէն ի վեր, այսինքն երկու շաբաթէ ի վեր:

Պօղոս Նուպար փաշա ստիպուած ըլլալով անմիջապէս մեկնիլ կարեւոր ժամադրութեան մը համար, նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան առաջարկեց յաջորդ նիստին քննել Պ. Թէրզիպաշեանի յարուցած հարցը, որուն համար անհրաժեշտ էր Պատուիրակութեան նախագահին ներկայութիւնը:

Ժողովը ընդունեց այս առաջարկը: Նիստը փակուեցաւ ժամը 7ին:

MINUTES OF THE FOURTH SESSION OF THE ARMENIAN NATIONAL CONFERENCE IN PARIS, IN 1920 (SUMMARY)

VATCHE GHAZARIAN (vatcheg@gmail.com)

This document, published here for the first time, is based on four separate handwritten records obtained from the National Archive of Armenia. These have been consolidated to reconstruct the complete minutes of a key session.

The minute represents the only missing part of an otherwise fully published account of the Armenian National Conference, held in Paris in May 1920. Convened shortly before the signing of the Treaty of Sèvres, the conference brought together delegates to assess the state of Armenian national interests and to chart a course forward—particularly with regard to securing Armenian rights and establishing a unified Armenian state that would include both the independent Republic of Armenia and portions of historical Armenian lands still under Turkish control.

During this pivotal session, delegates from Armenia and the Armenian Diaspora heard a joint report detailing the activities and accomplishments of the Armenian National Delegation and the Delegation of Integral Armenia. This report served as the foundation for subsequent discussions and resolutions.

As such, the recovered minute offers a valuable new lens for understanding, analyzing, and evaluating the Armenian National Conference in a more complete and nuanced way.

ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆԻ ԵՒ ԹԷՈԴԻԿԻ ՓՈԽԱՆԱԿԱԾ 34 ՆԱՄԱԿՆԵՐ (1925-1928)

ՍԵՒԱՆ ՍՐԿ. ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ
haygazian@gmail.com

Մեսրոպ եպս. Նշանեանի (Կ. Պոլիս, 1872-1944, Երուսաղէմ) ու Թէոդիկի (Կ. Պոլիս, 1873-1928, Փարիզ) նամակակցութեան ամենավաղ նմուշը կը պատկանի 1911ին, ամենավերջինը՝ 1928ին: Առնուազն տասնեւեօթ տարիներու վրայ երկարող այս թղթակցութիւնը ո՛չ միայն լոյս կը սփռէ հանրածանօթ *Ամէնուն տարեցոյցը*ի պատրաստութեան ծալքերուն ու Ի. դարու առաջին քառորդին խմբագրի մը աշխատանքի կերպերուն վրայ, այլեւ առիթ կու տայ բացայայտելու զուտ նամակակցութեամբ ընթացած բարեկամական յարաբերութեան մը մտերմութիւնն ու անկեղծութիւնը:

Մեսրոպ եպս. Նշանեան, որ 1939ին պիտի դառնար Երուսաղէմի հայոց պատրիարքը, բծախնդրութեամբ պահած է իր առաքած ու ստացած նամակները, ըլլան անոնք ժամանակի յայտնի անձերէն թէ համեստ ազգայիններէ: Ահա իր այս բծախնդրութեան, առաւել եւս Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռի՝ առհասարակ իր երջանկայիշատակ գահակալներու ժառանգութեան նկատմամբ տածած յարատեւ յանձնառութեան կը պարտինք Թէոդիկի հետ եղած նամակակցութեան պահպանութիւնն ու լոյս աշխարհ գալը:

Մեսրոպ եպս. Նշանեանի մեքենագրեալ նամակներուն պատճէնները կազմուած ձեւով մը, չորս հատորներու մէջ կը պահուին Երուսաղէմի Կիւլպէնկեան մատենադարանին մէջ՝ «Անձնական նամակներ Մեսրոպ արք. Նշանեանի» ընդհանուր խորագրով: Իսկ ստացած նամակները կը գտնենք Երուսաղէմի հայոց պատրիարքութեան արխիւատան Նշանեանի պատկանող թղթապանակներուն մէջ: Թէոդիկի այժմ հրատարակուող նամակներուն պարագային սակայն, պէտք է բանանք փակագիծ մը:

Հանգուցեալ բանասէր, խմբագիր Արա Գալայճեան (Երուսաղէմ, 1938-2012, ԱՄՆ), որ եղած է Եղիշէ Բ. պատրիարքի (Տէրտէրեան) անձնական քարտուղարն ու *Սիոն* պաշտօնաթերթի խմբագիրը, Երուսաղէմէն Միացեալ Նահանգներ տեղափոխութեան շրջանին, թերեւս սխալմամբ, կամ՝ հրատարակչական թերաւարտ ծրագիր մը ամբողջացնելու նպատակով՝ յատուկ արտօնութեամբ, հետը տարած է նաեւ Թէոդիկի թղթապանակը: Գալայճեանի մահէն ետք այդ նամակները հանգուցեալի այրիին կողմէ փոխանցուած են դոկտ. Վաչէ Ղազարեանին, որ նամականիին մէկ հատուածը՝ 1/14 Հոկտ. 1911-20 Դեկտ. 1926ի միջեւ եղածը, յառաջաբանով ու ծանօթագրութիւններով հրատարակած էր *Հայկազեան հայագիտական հանդէս*ի 2006ի ԻԶ. հատորին մէջ, «“Թղթեայ զաւակներու հայր”ը՝ Թէոդիկ» խո-

րագրով (էջ 263-96): Յարգելի բանասէրը, որ այդ նամակներուն բնագրերը արդէն իսկ ուղարկած է Երուսաղէմ, մնացեալ նամակներուն պատճէնները հրատարակութեան համար ազնուաբար տրամադրեց մեզի՝ նշելով, թէ յարմար առիթով մը, վստահելի անձի մը հետ այդ բնագրերն ալ պիտի ղրկէ Երուսաղէմի հայոց վանքը: Ներկայ հրատարակութիւնը Մեսրոպ եպս. Նշանեանի Թէոդիկին ուղղեալ պատասխաններու ընդգրկմամբ կ'ամբողջացնէ նախորդը եւ նոր նամակներով ալ կը դառնայ անոր մէկ շարունակութիւնը:

Թէոդիկի ու Մեսրոպ եպս. Նշանեանի ծանօթութիւնը կ'երթայ նախա-1911 շրջանին, երբ *Ամէնուն տարեցոյցը*ի հեղինակը լուսանկարներ փոխ առած է անկէ[1]: Փաստ կամ վկայութիւն կը պակսի, սակայն անոնք թերեւս ծանօթութիւն մըն ալ հաստատած ըլլային Կ. Պոլսոյ մէջ, ուր 1908-10ին շուրջ երկու տարի ապրած է Մեսրոպ վարդապետ, որպէս Մատթէոս արք. Իզմիրլեան պատրիարքի Երուսաղէմի աքսորավայրէն Կ. Պոլիս ուղեւորութեան ուղեկիցն ու անձնական քարտուղարը, կարճ շրջան մըն ալ - 1911ին - երբ Մատթէոս Բ. կաթողիկոսի վախճանումէն ետք Մայր աթոռէն Պոլսոյ ճամփով կը վերադառնար Երուսաղէմ:

Յետագայ օրերուն ու տարիներուն Նշանեան պիտի ջանար միշտ գոհացնել Թէոդիկի խնդրանքները, որոնք ընդհանրապէս կը վերաբերէին Ս. Յակոբեանց մամուլէն լոյս տեսած հրատարակութիւնները ունենալուն, իր տարեցոյցերու Երուսաղէմի ու շրջակայքին մէջ ցրւումին, Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատունէն կամ դիւանէն անտիպ նիւթերու կամ լուսանկարներու տրամադրումին, Եղիշէ արք. Դուրեան պատրիարքէն ինքնագիր կամ թարգմանածոյ քերթուածներ կամ յօդուածներ, նոյնիսկ իր զաւկին համար դրոշմաթուղթեր (ինք գործածած է դրոշմակ բառը) խնդրելուն եւն., ինչպէս նաեւ անձամբ իրմէ ստորագրեալ կամ անանուն յօդուածներով տարեցոյցին աշխատակցութեան:

Նշանեան Թէոդիկի ուղղեալ նամակի մը մէջ կ'ըսէ, թէ ինք «*պարզ կրօնաւոր մը[ն է], որուն համեստ գործունէութիւնը դուրս չէ ելած Երուսաղէմի վանական սեղմ շրջանակէն*»: Եթէ չհաշուենք որպէս Իզմիրլեան պատրիարքի եւ ապա կաթողիկոսի կողքին քանի մը տարի նախ Կ. Պոլիս եւ ապա Մայր աթոռ Ս. Էջմիածին գտնուած շրջանը, ինչպէս նաեւ հովուական ծառայութեան բերմամբ աստ ու անդ կատարած կարճատեւ այցելութիւնները, Նշանեան իր կեանքը անցուցած է Ս. Յակոբեանց վանքին մէջ, որպէս «անյաւակնոտ, պարզ աշխատաւոր մը», գործածելու համար Օշականի բառերը[2]: Այնուամենայնիւ Կ. Պոլսոյ *Բիւզանդիոն* օրաթերթի, *Տաճար* հան-

[1] Վաչէ Ղազարեան, «"Թղթեայ զաւակներու հայր"ը՝ Թէոդիկ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԻԶ:2006, էջ 265:

[2] Յ. Օշական, «Մեսրոպ Պատրիարք Նշանեան (Հայ մատենագրութեան մէջ)», *Սիոն*, Յուլիս-Օգոստոս-Սեպտեմբեր 1944, էջ 124:

դէսի, Մայր աթոռի *Շողակաթ* հայագիտական ժողովածուի մէջ երեւցած յօդուածներէն անդին, Մեսրոպ վարդապետ իր անուան շուրջ սկսած էր հիւսել հմուտ բանասէրի համբաւը՝ 1915ի սեւ տարին Ս. Յակոբեանց տպարանէն հրատարակելով Գրիգոր վրդ. Դարանաղցիի *Ժամանակագրութիւնը*:

Թէոդիկի եւ Երուսաղէմի պատրիարքութեան յարաբերութիւնները նոր հարթակ մը կը փոխադրուին 1920ականներու սկիզբը, երբ Եղիշէ արք. Դուրեան դարձած էր պատրիարք: Արեւմտահայ միւս մտաւորականներու հետ «հալածուած միլլիական սարսափէն»[3] Թէոդիկ կ'ապաստանի յունական Քորֆու կղզիի Կասթուրի գիւղը: Ան սակայն միշտ կը մտածէր հեռանալ «անհրապոյր եւ հիւրամերժ» այդ վայրէն՝ եւ «նետուիլ վայր մը», ուր պիտի կարենար իր նախասիրութիւններուն համաձայն նուիրուիլ աշխատութեանց եւ օգտակար ըլլալ իր անձին ու շրջապատին[4]: Իր այս բաղձանքը դրական արձագանգի արժանացած էր Եղիշէ պատրիարքէն ու Մեսրոպ վարդապետէն, որ այդ շրջանին ստանձնած էր լուսարարապետի պաշտօնը եւ մեծ հեղինակութիւն ունէր վանքէն ներս: Արդարեւ, Երուսաղէմի Հայոց թաղը, յետեղեռնեան շրջանին, Դուրեանի պատրիարքութեան օրերէն սկսեալ, վերածուած էր արեւմտահայութեան աշխարհիկ թէ հոգեւորական բեկորներու ժամադրավայրը: Յիրաւի, Բաբգէն եպս. Կիւլեսէրեան, Մկրտիչ եպս. Աղաւնունի, Կարապետ Գաբիկեան, Յակոբ Օշական, Շահան Պէրպէրեան, Վահան Թէքէեան եւն. մնայուն կամ այցելու բնակիչներն էին Ս. Յակոբեանց վանքին: Նշանեան նոյնիսկ գործնական թելադրութիւններ ըրած էր Թէոդիկի Երուսաղէմ մուտքը դիւրացնելու համար: «*Կը փափաքէր Երուսաղէմ գալ եւ Ս. Յակոբի հովանւոյն ներքեւ շարունակել իր գրական աշխատանքը իբրեւ անվեղար-վանական*», պիտի գրէր Բաբկէն եպս. Կիւլեսէրեան՝ անոր մահագրականին մէջ[5]: Դժբախտաբար սակայն երկու կողմերու այս փափաքը չ'իրականանար. Թէոդիկ Քորֆուէն ետք միջոց մըն ալ Կիպրոս մնալէ ետք, վերջնականապէս կը հաստատուի Փարիզ, ուր ալ կը կնքէ իր մահկանացուն 23 Մայիս 1928ի գիշերը, ուղեղային կաթուածի հետեւանքով:

Ներկայ նամականին աղօտ, սակայն որոշ գաղափար մը կու տայ *Ամէնուն տարեցոյցը*ի աղբիւրներուն եւ անոնց հասնելու նպատակով Թէոդիկի ի գործ դրած յամառ ջանքերուն մասին: Նշանեանի ուղղեալ նամակի մը մէջ ան կը փոխանցէ Լեւոն Բաշալեանի մէկ վկայութիւնը. «*Լ. Բաշալեան "ո՛ւր տեղերէն ալ կը գտնես ասանկ թանկագին ձեռագիրներ" ըսաւ ինձ, եւ ես իմ հպարտութեամբս չգոհացայ միայն, այլ եւ զայն Ձեզի պարտական ըլլալս … խոստովանեցայ*»: Թէոդիկ գիտէ, որ Երուսաղէմի վանքին «դիւա-

[3] Ղազարեան, էջ 272:

[4] Անդ:

[5] Բ. Ե., «Թէոդիկ», *Սիոն*, 7:1928, էջ 224:

նը շատ ճոխ է» ու կը փորձէ հնարաւորինս զգայացունց ու տպաւորիչ նիւթեր քաղել հոնկէ, Մեսրոպ սրբազանի միջնորդութեամբ: Ան նաեւ քաջ գիտէ յաչս ընթերցողին ստորագրութեան արժէքը եւ այս է պատճառը, որ կը հետապնդէ, աւելին՝ կը հալածէ իր նամակակիցը, որպէսզի ձեռագիր մը պոկէ Եղիշէ արք. Դուրեանէն, նոյնիսկ երբ վերջինս հիւանդութեան պատճառով անկարող է որեւէ աշխատանք կատարելու: Թէոդիկին յամառութիւնը քաղաքավարութեան դոյզն պահանջմանց իսկ նկատմամբ զանցառութիւն, նոյնիսկ երբեմն անհետաքրքրութիւն կարելի է համարել դիւրաւ, սակայն Մեսրոպ սրբազանէն իր վայելած յարգանքն ու սէրը («Իս սիրելնուդ ապացոյցը նոր չէ՛ որ պիտի տեսնեմ») կը ներշնչէ այս տոկունութիւնը:

Վերջացնենք՝ յիշեցնելով, թէ հետեւեալ նամակները կը ներկայացուին նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան, որու հարկը չէ ալ եղած: Անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնենք դոկտ. Վաչէ Ղազարեանի, որ Թէոդիկի նամակները տրամադրած է մեզի առ ի հրատարակութիւն, եւ Երուսաղէմի Կիւլպէնկեան մատենադարանի տեսուչ հոգշ. Տ. Ներսեհ վրդ. Ալոյեանի ու գրադարանավարուհի տիկին Աննա Կեճէքուշեանի, որոնք նպաստաւոր պայմաններ տրամադրեցին Մեսրոպ եպս. Նշանեանի նամականին ուսումնասիրելու շրջանին:

Ա.

Երուսաղէմ, 31 Մարտ 1925

Սիրելի Պրն. Թէոդիկ,

Ստացայ 13 Մարտ թուակիր Ձեր նամակը[6] ու պարունակութեանը տեղեկացայ: Հանգուցեալ Կարապետ Գաբիկեանի մահէն քիչ վերջ[7] անոր Այրի-

[6] Այս նամակը հրատարակած է Վաչէ Ղազարեան, վերոյիշեալ «"Թղթեայ զաւակներու հայր"ը՝ Թէոդիկ» հրապարակման մէջ, էջ 274-76:

[7] «Գուժկան Սեբաստիոյ»՝ Կարապետ Գաբիկեան (ծն. 1867, Սեբաստիա) իր մահկանացուն կնքէ 19 Փետրուար 1925ին, Երուսաղէմ: Բանասէր, բառարանագիր: Ան հայոց տեղահանութիւնը յաւերժացուցած էր իր *Եղեռնապատում*ով (*Եղեռնապատում Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, տպ. «Հայրենիք», Պոսթըն, 1924): Ցեղասպանութենէ ետք միջոց մը Հալէպ մնալէ ետք Օգոստոս 1920ին ապաստան գտած էր Երուսաղէմ, ուր կ'ուսուցչագործէր Ժառանգաւորաց վարժարանէն ներս: Գաբիկեանի մահուան առթիւ լուսարարապետ ու Ժառանգաւորացի տեսուչ Մեսրոպ եպս. Նշանեան հետեւեալ տողերը կը գրէ Թէոդիկի. «*Տարագրութեան տարիներուն կրած ֆիզիք. եւ հոգեկան տառապանքները հիւծած էին զինք, ուստի չկրցաւ դէմ դնել կողապատին. իր մահը կորուստ մըն է իսկապէս Հայ Գրականութեան համար. գաւառի համեստ այլ արժէքաւոր վերջին գրագէտներէն էր. ճանչցայ զինք հոս՝ իբր պարզականութեան նուիրուած ուսուցիչ մը, միաժամանակ իր բնակարանը՝ գրասեղանին գամուած աշխատող մը. իր Սեբաստիոյ Գաւառաբարբառն ու Բոյս-Բուժակը յոյժ գնահատելի երկեր են*» (Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը 1926*, Վենետիկ, տպ. Մխիթարեան, Ս. Ղազար, էջ 727-28): Հարկ է նշել, թէ Գաբիկեանի որդին՝ Գեղամ, ընդգրկած է եկեղեցական

ին[8] քովէն բերել տուած էի ՏԱՐԵՑՈՅՑ-ները ու անոնց հաշիւը թուղթի մը վրայ նշանակուած Հանգուցեալին ձեռագրով, որ կը ներկայացնէ հետեւեալը.-

Եգ. Ղրշ.

5 հատ նուէր տրուած (Ս. Պատրիարքի[9], Մկրտիչ[10], Բաբգէն[11] եւ Մեսրոպ Եպիսկոպոսներու եւ Գաբիկեանի)
13 հատ վաճառուած 30-էն.....390
3 հատ վաճառուած.....80
9 հատ անվաճառ
2 հատ անյայտ ---- 32

ասպարէզը՝ Կիւրեղ եպս. Գաբիկեան (1921-2003), դառնալով Երուսաղէմի հայոց պատրիարքութեան նոր շրջանի պատմութեան կարեւոր դէմքերէն մէկը եւ տեղի Ս. Թարգմանչաց վարժարանի երկարամեայ տեսուչ ու Ս. Տեղեաց արթուն պաշտպան:

[8] Կարապետ Գաբիկեան ցեղասպանութեան տարիներուն կորսնցուցած էր կինն ու զաւակները: Հալէպ գտնուած միջոցին կը ծանօթանայ ու կ'ամուսնանայ Ազնիւ Նորարեւեանի հետ, որ նոյնպէս վերապրող մըն էր:

[9] Նկատի ունի Եղիշէ արք. Դուրեանը, ծնեալ Կ. Պոլիս, Սկիւտար, 23 Փետր. 1860ին: 1878ին սարկաւագ, 1879ին աբեղայ կը ձեռնադրուի Մկրտիչ եպս. Իզմիրլեանէ: 1890-1914՝ Արմաշու դպրեվանքն է, նախ որպէս ուսուցիչ-տեսուչ, ապա փոխվանահայր-վերատեսուչ: 1909-10՝ պատրիարք Կ. Պոլսոյ: 1921էն մինչեւ 1930ին պատահած մահը եղած է Երուսաղէմի պատրիարք: Հեղինակ պատմական, բանասիրական ու գեղարուեստական գործերու:

[10] Մկրտիչ եպս. Աղաւնունի, ծնեալ Պարտիզակ, 1863ին: 1890ին կը ձեռնադրուի Նիկոմիդիոյ մէջ ու կը դառնայ Նիկոմիդիոյ առաջնորդական փոխանորդ եւ այցելու հովիւ Պոլսի (1890-94), առաջնորդ Քէօթահիոյ եւ Աֆիոն Գարահիսարի (1895-1905), Եգիպտոսի (1905-12): 1910ին կ'եպիսկոպոսանայ: 1916ին Կ. Պոլսէն կը տարագրուի Երուսաղէմ, ուր եւ կը մնայ մինչեւ իր մահը՝ 1941, վարելով պատասխանատու պաշտօններ ու ըլլալով ուսուցիչ Ժառանգաւորաց վարժարանի: Հեղինակ՝ բազմաթիւ մենագրութիւններու ու յօդուածներու:

[11] Բաբկէն եպս. Կիւլեսէրեան ծնած է 23 Մարտ 1868ին, Այնթապ, ուր աւարտած է Վարդանեան կրթարանը: Արմաշու դպրեվանքէն շրջանաւարտ ըլլալէ ետք 1895ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Վարած է Ճանիկի (1897-99), Տարօնոյ (1899-1900), Գաղատիոյ (1909) առաջնորդութիւնները, եղած է փոխվանահայր ու վերատեսուչ Արմաշու դպրեվանքի: Եպիսկոպոս՝ 1910ին: 1923ին կը հաստատուի Անթիլիաս: 1931ին Հալէպի մէջ կը ստանայ կաթողիկոսական ձեռնադրութիւն եւ օծում: Կը վախճանի 9 Յուլիս 1936ին, յԱնթիլիաս: Հեղինակ՝ պատմա-բանասիրական բազմաթիւ աշխատութիւններու:

ՃԱՌ-երը[12], իմ ձեռքով վաճառուած 17

Համագումար ՉՈՐՍ ՀԱՐԻԻՐ ՈՒԹՍՈՒՆ ԵՕԹՆ 487

Սոյն 487 Եգիպ. Ղրշ. գումարի փոխարէն կը ներփակեմ ՉԷՔ մը Ձեր հրամանին վճարելի, Բարիզի վրայ, ՉՈՐՍ ՀԱՐԻԻՐ ՔԱՌԱՍՈՒՆ ՀԻՆԳ ֆրանքի, թիւ 215727 / 37152:

Անյայտացած երկու օրինակներու մասին որեւէ յիշատակութիւն չգտայ Հանգուցեալի ծանօթագրութեանց մէջ: Այրին ալ բան մը չգիտեր: Իսկ մը-նացեալ ինը օրինակները պահուած են քովս ու կը սպասեն Ձեր հրամանին: Եթէ աժան գինով գնորդներ գտնեմ, ձեռքէ պիտի հանեմ, բայց դժբախտա-բար ոչ ոք կը մօտենայ, որովհետեւ ժամանակը առաջացած է:

Հանգուցեալ Գաբիկեանի ղրկածդ նամակներուն մէջէն Բաբգէն Սրբա-զանի վերաբերեալ տողերը կարդացի իրեն: Կարծեմ Սրբազանը հարկ ե-ղածը գրած է Ձեզ շահագրգռող խնդիրներու վերաբերեալ:

Ցաւակցական նամակնիդ յանձնեցի Հանգուցեալի Այրիին: Լսեցի թէ պիտի աշխատի ղրկել Ձեր խնդրածները:

Դեղագործ Տիար Սինանեանի հաղորդեցի եղբօրը[13] մահուան գոյժը: Տիար Սինանեան շատ աշխատեցաւ, Վանքն ալ միջամտեց զայն Երուսա-ղէմ բերել տալու համար, նոյնիսկ 300 Եգ. Ոսկի երաշխաւորութիւն տրուե-ցաւ, բայց անհետեւանք մնաց:

Սրբազան Պատրիարքի վերաբերեալ տողերդ օրինակելով ղրկեցի Նո-րին Ամենապատուութեան, որպէսզի աչքի առջեւ ունենայ իբրեւ յուշարար:

Ժառանգաւորաց Վարժարանի Ուսուցիչ Գրիգոր Էօլմէզեան (Անմահու-նի)[14] յանկարծամահ եղաւ 1924 Մայիս 15-ի լուսնալիք գիշերը:

Տպարանը չկարողացանք բանալ տակաւին գրաշարի չգոյութեան պատճառով[15]: Չորս ամիս առաջ Պաղեստին մուտքի արտօնութիւնը

---

[12] Թերեւս նկատի ունի *Ջուլումը մեր որբերը. ճառ արտասանուած Գընալըի "Ա-դամեան" թատրոնին մէջ 30 Դեկտ. 1920-ի գիշեր* գրքոյկը, տպագրուած Կ. Քե-շիշեան որդի տպարանէն, Կ. Պոլիս:

[13] Թէոդիկի 13 Մարտ 1925 թուակիրէն կը տեղեկանանք, թէ հանգուցեալը սկիւ-տարցի քարակոփ Գրիգոր Սինանեանն է, որ ունեցած է քոյր մը եւս՝ Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանի նահատակ տեսուչ փրոֆ. Անդրանիկ Կարապետեանի (1880-1922) այրին՝ Տիգրանուհին (Ղազարեան, էջ 293):

[14] Գրիգոր Էօլմէզեան կամ Անմահունի (1864-1924), եղած է դերձակ, ապա ինքնա-զարգացմամբ դարձած է ուսուցիչ: 1905ին ծննդավայր Մանիայի մէջ հիմնած է հայ-ամերիկեան վարժարանը: 1907ին անցած է Երուսաղէմ, ուր պաշտօնավա-րած է մինչեւ իր մահը: Երկերը՝ *Երախայրիք, Աշխարհաբարի քերականութիւն, Բնազանցական գիտութիւնք* եւն. (*Ամէնուն տարեցոյցը 1926*. նաեւ՝ Ղազարեան, էջ 292):

[15] Յունուար 1919ին մահացած էր վանքի տպարանի աւելի քան յիսուն տարուան գրաշարը՝ Կարապետ Փոթուխեանը (Օրագրութիւն Մեսրոպ վրդ. Նշանեանի, Ս. Թէոդորոս ձեռագրատուն, թիւ 3746):

գացած է Եգիպտոս, ուրկէ պիտի գայ գրաշարը, բայց ցարդ այնտեղէն անցագիր չէ տրուած: Եթէ բանանք տպարանը, նախնական պատրաստութիւններէ վերջ անմիջապէս պիտի սկսինք Հանգ. Օրմանեան Սրբազանի ԱԶԳԱՊԱՏՈՒՄ-ի երրորդ հատորի տպագրութեան, որուն ծախքը խոստացած է հոգալ Պօղոս Փաշա Նուպար[16]:

Անցեալ անգամ նկարս ղրկեցի ոչ թէ հրատարակուելու փափաքով, այլ իբրեւ դոյզն յիշատակ Ձեզի հանդէպ ունեցած համարումիս: Կենսագրութիւնս ալ ուզած էք: Բայց ինչ կեանք ունեցած եմ որ արժան ըլլայ կենսագրելու: Ով եմ ես,- Պարզ կրօնաւոր մը, որուն համեստ գործունէութիւնը դուրս չէ ելած Երուսաղէմի վանական սեղմ շրջանակէն: Հետեւապէս ծիծաղելի ունայնամտութիւն պիտի ըլլար իմ կողմէ Պատկերս ու Կենսագրութիւնս հրատարակուած տեսնելու[17]

Բ.

Երուսաղէմ, 4 Յունուար 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ ժամանակին Վենետիկի Մխիթարեան Տպարանէն հասցէիս ղրկուած 24 հատ 1926-ի ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑ, որոնցմէ մէկը ներկայացուցի Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր: Մնացեալները գրեթէ տեղաւորուածի պէս են, իւրաքանչիւրը 40-ական եգիպտական ղրուշի: Սակայն այս մասին ցարդ Ձեզմէ երկտող մը չստանալուս համար կը զարմանամ: Գիրքերու արժէքը պիտի փոխադրեմ Ձեր հասցէին, անմիջապէս որ ապառիկներ գանձեմ:

Անցեալ տարուան եօթը Տարեցոյցները, երեք ծրարներու մէջ, տակաւին կը մնան գրասեղանիս վրայ: Քանի անգամ փոսթին յանձնելու եղայ, բայց ճանապարհածախքին մեղքցայ: Ձանոնք Ձեր որդւոյն[18] ղրկելու համար նոր հրահանգի կը սպասեմ:

---

[16] Մաղաքիա արք. Օրմանեանի *Ազգապատում*ի առաջին եւ երկրորդ հատորները հրատարակուած էին հեղինակին կենդանութեան, յաջորդաբար 1913ին եւ 1914ին, Պոլսոյ մէջ: Իսկ երրորդ հատորը, որ գրուած էր Երուսաղէմ, ի պահ կը մնար Ս. Յակոբեանց միաբանութեան քով: Այս մէկն ալ պիտի հրատարակուէր 1927ին, Ս. Յակոբեանց տպարանէն, Բաբկէն եպս. Կիւլեսէրեանի հոգողութեամբ եւ Պօղոս փաշա Նուպարի մեկենասութեամբ, ի յիշատակ իր հօր՝ Նուպար փաշայի:

[17] Թէոդիկ ըստ երեւոյթին յարգած է Մեսրոպ սրբազանի փափաքը եւ 1926ի *Տարեցոյց*ին մէջ ոչինչ հրատարակած է անոր վերաբերեալ: 1927ի տարեցոյցին մէջ սակայն կայ Մեսրոպ եպս. Նշանեանի կենսագրութիւնը (էջ 584-85) եւ լուսանկարը (էջ 406): Իդէպ, նամակը հոս կ'աւարտի, առանց վերջակէտի ու ստորագրութեան: Հաւանաբար վերջին քանի մը տողերը չեն արձանագրուած:

[18] Թէոդիկի որդին էր Վահագն Թէոդիկ, ծնած 1903ին եւ ապրած մինչեւ 1960ականները:

Գալ տարուան Տարեցոյցիդ համար պիտի ղրկեմ Հայրիկի[19] անձնական մէկ նամակը (անտիպ)[20], սրամիտ եւ օրիժինալ, ուղղեալ առ Կարապետ Եզեանց[21], ի Բեթըրպուրկ, 1899-ին, վերջինիս ռուսերէն մէկ հրատարակութեան[22] առիթով:

Այս անգամ կը ներփակեմ երկու նկարներ, որոնք կ'արժեն որ մէյմէկ տեղ գրաւեն 1927-ի հատորիդ մէջ[23]:

Այս տարուան Տարեցոյցդ կը գերազանցէ նախորդները՝ եթէ ըսէի, շատ սովորական ասացուածք մը կրկնած պիտի ըլլայի: Չեմ գիտեր, սակայն, թէ ինչ բառերով հիւսեմ անոր գովքը: Տարեցոյց կազմելու արհեստը երթալով կը կատարելագործէք, ատոր կասկած չկայ: Այդ մարզին մէջ անմրցելի դարձած էք ու մասնագիտութեան դափնին ալ խլած էք: Երբ ՏԱՐԵՑՈՅՑ բառը արտաբերուի իսկոյն մտքի առջեւ կը պատկերանայ ԹԷՈԴԻԿ: Կարծես Անոր մենաշնորհը եղած ըլլայ այդ ապրանքին արտադրութիւնը: Ու իսկապէս միայն ԹԷՈԴԻԿ ֆիրման կը պատշաճի ՏԱՐԵՑՈՅՑ անունը կրող ոեւէ մատեանի: Ինչ պայմաններու մէջ ալ գտնուինք, նպաստաւոր թէ անյարմար, մօտիկ թէ հեռու, ամէն տարի շահեկան ու փնտռուած հատոր մը երեւան բերելու մոգական գաղտնիքը ունիք: Այս տարուան Հատորիդ թագն ու պսակն է ՈՐԹՆ ՈՒ ԻՐ ԲԵՐՔԸ աշխատութիւնդ[24]: Խղճամիտ,

---

[19] Մկրտիչ Խրիմեան, Խրիմեան Հայրիկ, Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոս ամենայն հայոց: Ծնած 1820ին, Վան: Կնոջ մահէն ետք վարդապետ կը ձեռնադրուի Աղթամարի մէջ, 1854ին: Եպիսկոպոս՝ 1864ին: 1869-73՝ պատրիարք Կ. Պոլսոյ: Պատուիրակ Պերլինի վեհաժողովի: 1891ին կ'աքսորուի Երուսաղէմ, ուր կը մնայ մինչեւ 1893: Կաթողիկոս ամենայն հայոց՝ 1893-1907: 1850ին իբրեւ ուխտաւոր այցելած էր Երուսաղէմ եւ գրած *Հրաւիրակ երկրին աւետեացը*:

[20] Հրատարակուած է 1927ի տարեցոյցին մէջ, «Նամակ Խրիմեան Հայրիկէ» խորագրով, էջ 288-89:

[21] Բանասէր, պատմաբան, ծնած 1835ին, Մոսկուա ու մեռած 1905ին, Ս. Փեթերսպուրկ: Աշխատած է ներքին գործոց եւ ապա կրթութեան նախարարութեանց մէջ: Զբաղած է Սանասարեան ու Իզմիրեանց կտակներու իրականացմամբ: Նիւթապէս նպաստած է Հ. Ղեւոնդ Ալիշանի *Այրարատ* ու *Սիսական* աշխատութիւններու հրատարակման: Հրատարակած է Ղեւոնդի, Յովհան Դարդելի եւն. գործերը: Ունի նաեւ հեղինակային կարեւոր աշխատանքներ հայ-ռուսական յարաբերութիւններու մասին:

[22] Հաւանաբար նկատի ունի *Сношения Петра Великого с армянским народом* [Պետրոս Ա.ի յարաբերութիւնները հայ ժողովուրդի հետ] գիրքը, որ հրատարակուած է Ս. Փեթերսպուրկ, 1898ին:

[23] Թէոդիկ-Նշանեան թղթակցութենէն կ'եզրակացնենք, թէ Մեսրոպ սրբազանը ուղարկած է Մաղաքիա արք. Օրմանեանէ երկու լուսանկար: Անոնցմէ մէկուն մէջ, նաւու մը կամրջակին վրայ, քով-քովի կ'երեւին Օրմանեան ու Պօղոս փաշա Նուպար (*Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 488):

[24] Թէոդիկ, «Որթն ու իր բերքը», *Ամէնուն տարեցոյցը 1926*, էջ 24-170: Թէոդիկ յաջորդ տարիներու տարեցոյցերուն մէջ հրատարակած է այս աշխատութեան

համբերատար ու մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը, որ ինքնին առանձին հատոր մը կ'արժէ: Շնորհաւորութիւններս:

Մենք հայերս աղուոր մաղթանքներ ունինք: Ճարտար երգիչին կ'ըսենք՝ *Ձայնդ անսպառ*, շնորհալի խօսողին՝ *Աղբիւրդ անսպառ*:

Ես ալ կը մաղթեմ Քեզի՝ ԳՐԻՉԴ ԱՆՍՊԱՌ[25]:

Մնամ սիրոյ ողջունիւ՝

Աղօթանուէր

Գ.

Երուսաղէմ, 6 Փետրուար 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Մեծագոյն հաճոյքով ստացայ Յունուար 12 թուակիր Ձեր պատասխանագիրը[26] եւ պարունակութեանը տեղեկացայ: Գրիս յապաղելուն պատճառ եղաւ Տարեցոյցներու ապառիկներուն գանձումին սպասելս: Նամակնիդ առնելուս պէս անցեալ տարիէն մնացած եօթն օրինակները ղրկեցի Ձեր որդւոյն հասցէին, ապահովագրեալ երեք ծրարներով:

Ձեր հաշիւը կ'ամփոփեմ հետեւեալ կերպով. Եգ. Դհ.

Վաճառուած 21 Տարեցոյցներու արժէքը (1926 տարւոյ) 40-էն 840

Իմ վաճառած 1925-ի 3 Տարեցոյցներ, մէկը 25-էն, 2-ը 20-էն 65

905

Նիւ-Եորք ղրկուած 7 Տարեցոյցներու փոսթի ծախքը զեղչելով 30

Կը պահանջէք ՈՒԹ ՀԱՐԻՒՐ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ Եգ. Դահեկան 875

Կը ներփակեմ նաեւ Հայրիկի առ Կարապետ Եզեանց ուղղած նամակի (անտիպ) պատճէնը: Կարապետ Եզեանի ռուսերէն հրատարակութեան մասին (նամակին մէջ յիշուած) հետամուտ եղայ տեղեկութիւններ քաղել, որպէսզի ներփակ պատճէնին կցեմ, բայց չկրցայ: Ձեզ կը թողում ռուսերէն այդ գիրքի վրայօք ծանօթութիւններ մը դնել: Կարապետ Եզեանցի նկարը հնարաւոր չեղաւ գտնել հոս: Պատկերը տեսած եմ, բայց չեմ յիշեր թէ որ գիրքին կամ հանդէսին մէջ կը գտնուի: Ձայն փնտռելն ալ Ձեզ կը թողում:

Այվազովսքիի[27] նկարը Խրիմի մէկ ծովեզերքի (հաւանաբար Թէոդոսիոյ) մէկ գիշերային տեսարանն է[28]: Ափսոս որ լուսանկարը իսկականին տպա-

---

յաւելուածները՝ *Ամէնուն տարեցոյցը 1927*, Փարիզ, էջ 120-24, *Ամէնուն տարեցոյցը 1928*, Փարիզ, էջ 141-44:

[25] «Ի՛նչ պայմաններու մէջ ալ գտնուիք»էն սկսեալ մինչեւ այս կէտը Թէոդիկ տեղադրած է 1927ի տարեցոյցի «Ընթերցողներս ու ինքս» բաժնին մէջ (էջ 2):

[26] Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 279-80:

[27] Մեծանուն ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքի (1817-1900):

[28] Լուսանկարը հրատարակուած է 1927ի տարեցոյցի «Գեղարուեստական» բաժինին մէջ, էջ 371, «Գիշերային տեսարան Խրիմի ծովափը» անունով: Որպէս բացատրութիւն գրուած է, որ իւղաներկ պաստառը «կը զարդարէ Երուսաղէմի Ս.

ւորութիւնը չի թողուր: Եւրոպացի կամ ամերիկացի այցելուներ երբ մեր պատրիարքարանի դահլիճը մտնեն, նկարին առջեւ կանգ կ'առնեն ու հիացումով կը դիտեն:

Կը յուսամ թէ Ձեր նոր միջավայրէն գոհ պիտի մնաք բարոյապէս եւ նիւթապէս[29]: Ազգային շրջանակ մը ունիք այժմ Ձեր բոլորտիքը, որ մեծ առաւելութիւն մըն է բաղդատմամբ Գօրֆուի մեկուսացեալ կեանքին, ու միջոցներ ալ ունիք առաւելագոյն չափով նուիրուելու գրական զբաղումներու: Չեմ տարակուսիր թէ պիտի օգտուիք պատեհութիւններէն ու Ձեր 1927-ի Տարեցոյցը *փարլախ*[30] բան պիտի ըլլայ: Կը մաղթեմ համբերութիւն ու յաջողութիւն:

Գործերը մեր մօտ գոհացուցիչ ընթացք ունին: Այս տարի կրթականին մասնաւոր զարկ տրուեցաւ, Ժառանգաւորաց Վարժարանի վրայ հինգ տարուան լրացուցիչ դասընթացքի յաւելումով, ունենալով գլուխ եւ ուղեցոյց Նորին Ամենապատուութիւն մեր սիրելի եւ ամենապատուական Պատրիարք Հայրը[31]: Սակայն Տպարաննիս դանդաղ կը քալէ ու ատոր միակ պատճառն է ցարդ շէնք շնորհք գրաշար մը ձեռք անցնել չկրնալնիս[32]: Այդ էսնաֆին[33] պատկանողները ընդհանրապէս առաւ-փախաւներ կ'ըլլան կոր: Շնորհակալ պիտի ըլլայի եթէ Ձեր ճանչցած արհեստին քաջահմուտ եւ խըղճամիտ գրաշար մը ներկայացնէիք ինծի: Հիմայ մամուլի տակ է հանգուցեալ Օրմանեան Սրբազանի[34] ԱԶԳԱՊԱՏՈՒՄ-ի երրորդ մասը, որու մինչեւ

Յակոբեան վանուց դահլիճը»: Հարկ է նշել, թէ Երուսաղէմի պատրիարքարանի դահլիճին մէջ նման իւղանկար մը չկայ այժմ:

[29] Թէոդիկ այդ շրջանին, գործի բերմամբ, Քորֆուէն փոխադրուած էր Կիպրոս, Նիկոսիա: 15 Փետր. 1926 թուակիր նամակի մը մէջ Մեսրոպ սրբազանի կը յայտնէ, թէ «*նոր միջավայրս հեռի է զիս գոհացնելէ. Գորֆուէն աւելի մեծ ամայութիւն մը շուրջպատած է զիս*» (Ղազարեան, էջ 281):

[30] Փայլուն (թրք.):

[31] Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը, որ 1843ին հիմնադրուած էր Զաքարիա Բ. Կոբեցի պատրիարքին կողմէ, փակուած էր առաջին աշխարհամարտի ընթացքին, 1917ին: Երեք տարի չորս ամիս փակ մնալէ ետք, 1920-21 կրթաշրջանի սկիզբը, 14/27 Սեպտ. 1920ին վարժարանը իր դռները վերստին կը բանայ, Մեսրոպ վարդապետի տեսչութեամբ:

[32] Ս. Յակոբեանց տպարանը հաստատուած է 1833ին, Գաբրիէլ Նիկոմիդացի պատրիարքի շրջանին: Առաջին աշխարհամարտի վաղորդայնին, ինչ-ինչ պատճառներով, ան փակ կը մնայ տասը տարի շարունակ, 1915-1925ի միջեւ: Ինչպէս Ժառանգաւորաց վարժարանը, տպարանն ալ կը վերաբացուի Եղիշէ արք. Դուրեանի օրօք, Մայիս 1925ին:

[33] Արհեստակիցներու խմբաւորում (թրք.):

[34] Մաղաքիա արք. Օրմանեան (1841-1918), նախկին պատրիարք Կ. Պոլսոյ, պատմաբան, աստուածաբան, հեղինակ բազմաթիւ ուսումնասիրութիւններու, որոնց կարեւորագոյնն է *Ազգապատում* եռահատոր աշխատանքը: Օրմանեան Ազգային կեդրոնական վարչութեան որոշմամբ 1913ի վերջին ամիսներուն, որպէս քննիչ

8-րդ ֆօրման հասած ենք: Հատորը պիտի պարունակէ 70-է աւելի ֆօրմաներ: Այս ընթացքով բաւական ուշ լոյս պիտի տեսնէ:

Սիրալիր ողջոյններ եւ մաղթանքներ Ձեր առողջութեան համար:

Աղօթարար

Դ.

Երուսաղէմ, 5 Ապրիլ 1926

Մեծայարգ եւ Սիրելի Պարոն Թէոդիկ,

Մեծ հաճոյքով ստացայ փետրուար 15 թուակիր Ձեր պատուական նամակը[35]: Թէեւ պատասխանը բաւական ուշացուցի, բայց կը յուսամ թէ ներողամիտ պիտի ըլլաք, նկատի ունենալով որ դատարկաձեռն չեմ ներկայանար այս անգամ:

Հանգուցեալ Գաբիկեանի ղրկած Հայկական մոզայիքի նկարը շատ ողորմելի բան էր, որը եթէ Տարեցոյցիդ մէջ արտանկարուելու ըլլար, տկար գաղափար մը անգամ չպիտի տար օրիժինալի մասին: Առանձին ապահովագրեալ ծրարով նոյն մոզայիքի լաւագոյն մէկ նկարը կը ղրկեմ յառաջիկայ Տարեցոյցիդ համար, իմ կողմէ պատրաստուած յօդուածի մը հետ միասին: Թէեւ, ըստ բաղձանացդ, պարզ նկարագրական մը ընելու դիտումով սկսայ, սակայն համեստ ուսումնասիրութեան մը կերպը առաւ: Շատ ուրախ պիտի ըլլամ եթէ յօդուածս նպաստէ Տարեցոյցիդ *փառաւոր*ութեան աղօտ *ճիլա*[36] մը աւելցնելու: Պիտի խնդրէի որ պատուիրէիք հոգ տանիլ տպագրական սխալներու, մանաւանդ բնագիրներուն մէջ, ուր սպրդած վրիպակներ կը փճացնեն գործին արժէքը: Մասնաւորապէս ուշադիր ըլլէք որ ծանօթութիւնները ճիշդ իրենց տեղերը դրուին: Մեր Սրբազան Պատրիարքը աչքէ անցուց ձեռագիրը ու յարմար դատեց տպագրուելու Տարեցոյցիդ մէջ[37]:

Ձեր փափաքին համաձայն կը ներփակեմ հանգուցեալ Օրմանեան Սըրբազանի ինքնագիր մէկ նամակը, գրուած 1914 օգոստոս 21-ին, առ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանց[38] յէջմիածին: Նամակը ժամանակին կէս

ուղարկուած էր Երուսաղէմ, ուր կը մնայ մինչեւ 1917ը, եւ ի շարս բազմաթիւ այլ աշխատութիւններու, կ'աւարտէ նաեւ *Ազգապատում*ի երրորդ հատորը:

[35] Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 281-82:

[36] Ջնարակ, փայլ (թրք.):

[37] Սրբազանին ուղարկած նկարը Երուսաղէմի յայտնի հայկական խճանկարն է: Արդարեւ այս լուսանկարը զարդարած է 1927ի տարեցոյցին կողքը, ինչպէս նաեւ տեղադրուած սրբազանին՝ խճանկարին վերաբերող յօդուածին մէջ («Երուսաղէմի հայկ. խճանկարը», էջ 399-406):

[38] Միաբան Մայր աթոռի: Ծնած էր Նախիջեւան, Աստապատ գիւղը, 1837ին: Ուսումը ստացած է Ս. Էջմիածնի Ժառանգաւորաց վարժարանի մէջ: 1860ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: 1874ին Գէորգ Դ. կաթողիկոս զինքը նշանակած է նորաբաց Գէորգեան ճեմարանի փոխտեսուչ: 1875ին օծուած է եպիսկոպոս: Վարած է պատասխանատու բազմաթիւ պաշտօններ: Քանիցս աքսորուած է: Իր ծախսով կառուցուած է Մայր աթոռի տպարանի մէկ մասը: Նոյնպէս իր

ճամբէն վերադարձած է, վերահաս պատերազմին հետեւանքով ճամբաները փակուելուն պատճառաւ: Այդ նամակը նկարին քովիկը շատ յարմար պիտի երթայ: Նկարը դէպ Երուսաղէմ ճամբորդութիւնը կը ներկայացնէ եւ նամակն ալ գրուած է Երուսաղէմէն, ուր իր պաշտօնին վրայօք ակնարկութիւններ ալ կան: Պիտի խնդրէի որ բնագիրը վերադարձնէիք, իւր տօսիէին մէջ պահուելու համար[39]:

Գրաշար Մկրտիչ Նահապետեանի մասին անմիջապէս գրեցի Պոլիս մեր Սմբատ եպիսկոպոսին[40]: Նամակս կարդացած պահուն Աբիկ Մուպահեաճեանն[41] ալ քովն է եղեր ու ինքն ալ երկրորդեր է Ձեր պատուաւոր վկայութիւնը: Սակայն Մուպահեաճեան յայտներ է թէ Մկրտիչ Նահապետեան կը տառապի այժմ կուրծքի բաւական լուրջ տկարութեամբ: Հիմայ վարանումի մէջ եմ, եթէ բերել տալու ըլլամ, կ'ապաքինի՞ թէ ոչ: Կը վախնամ որ վրանիս բեռ ըլլայ ու մենք հիւանդապահութիւն ընելու պարտաւորուինք, առանց տեսնելու իրմէ սպասուած օգուտը:

Ողջունիւ սիրոյ եւ յաջողութեան ջերմագին մաղթանքներով,

Աղօթանուէր

Ե.

Երուսաղէմ, 19 Ապրիլ 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Մեծագոյն հաճոյքով ստացայ ամսոյս 14 ամսաթիւ Ձեր պատուական նամակը: Շատ շնորհակալ եմ որ յիշեցուցիք 1922-ի Տարեցոյցիդ մէջ

մեկենասութեամբ հրատարակուած է «Պատմագիրք հայոց» մատենաշարը: Մեծ չափով նպաստած է Օրմանեանի գիրքերու հրատարակութեան: Մահացած է 12 Սեպտ. 1914ին (*Արարատ*, Սեպտ. 1914, էջ 789-92):

[39] Թէոդիկ չէ հրատարակած Օրմանեանի նամակը, որովհետեւ «բովանդակութիւնը ոչինչ կը ներկայացնէր» (Ղազարեան, էջ 283):

[40] Սմբատ եպս. Գազազեան, ծնած 1875ին (ըստ *Միոնի*, իսկ ըստ Աղաւնունիի՝ 1873ին), Կ. Պոլիս: Միաբան Երուսաղէմի, ձեռնադրուած է 1902ին: 1910-32՝ եղած է Երուսաղէմի պատրիարքութեան փոխանորդը Կ. Պոլսոյ մէջ, ըլլալով նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդը: 1924ին եպիսկոպոս ձեռնադրուած է: Վախճանած է 1935ին, Երուսաղէմ:

[41] Պոլսահայ խմբագիր, հանրային գործիչ, որ երկար տարիներ վարած է Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան թրքերէնի դիւանապետութիւնը: Ծնած է 1871ին: Կրթութիւնը ստացած է Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանի ու Հայկ. կրթարանի մէջ: Եղած է ազգային երեսփոխան, Կարինի Սանասարեան վարժարանի հոգաբարձու, Օրթագիւղի եկեղեցւոյ թաղային խորհուրդի անդամ: Աշխատակցած է *Սուրհանդակ*, *Բիւզանդիոն*, *Ժամանակ*, *Վերջին լուր* եւն. թերթերու: Մեռած է 1946ին ու թաղուած՝ Շիշլիի ազգ. գերեզմանատան մէջ: (Շնորհակալութիւն պոլսահայ գրող Գէորգ Գրիգորեանին, որ այս տեղեկութիւնները տրամադրեց իր աշխատասիրած, բայց տակաւին չհրատարակուած կենսագրական բառարանէն):

հրատարակուած Ձեր եւ Տէր Վարդանեանի[42] գրութիւնները խճանկարնեռու մասին: Ես ալ աղօտ իմն կը յիշէի այդպէս գրութիւն մը կարդացած ըլլալս, բայց չկրցայ մտաբերել թէ ո՞ւր: Կը խնդրեմ որ Ձեռագրիս 9-րդ երեսին վրայ աղբիւրներու կարգին աւելցնէք,

8.- Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, 1922, երես 221-228:

Նոյնպէս հաճեցէք ձեռագրիս 6-րդ երեսին 16-րդ տողին վրայ ընել հետեւեալ սրբագրութիւնը.

Գարեգին վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) Յովսէփեան

փոխել

Յովսէփեան սարկաւագ (այժմ Գարեգին արքեպիսկոպոս[43])

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր կարդացի նամակիդ մէջէն իրեն վերաբերեալ տողերը: Կ'ողջունէ Ձեզ սիրով ու կ'ըսէ *Ուզածները Մայիս ամսոյ մէջ ձեռքը կը հասնին, թող ապահով ըլլայ:*

Ողջունիւ սիրոյ եւ յաջողութեան մաղթանքներով,

Աղօթանուէր

Զ.

Երուսաղէմ, 13 մայիս 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ անցեալ ամսոյ 27 թուակիր Ձեր քառթը, ինչպէս նաեւ անոր յաջորդող նամակը, որ կը վերաբերէր հանգուցեալ նկարիչ Պետրոս Սրապեանի[44]: Այդ մասին յատկապէս գացի ու տեսնուեցայ հանգուցեալի աղջկան Տիկին Ֆնտըգլեանի հետ ու նամակնիդ իրեն յանձնեցի, որպէսզի աչքի

---

[42] Յովսէփ Տէր Վարդանեան ծնած էր Մարաշ, որպէս զաւակը Վարդան Ա. քհնյ. ու Ագապի Տէր Մինասեաններու: 1915ին ընտանեօք կը տեղահանուին ու կը հասնին Սուրիոյ հիւսիսը գտնուող Մումպուճ գիւղը: Միջոց մը ետք կնոջ ու զաւակներուն հետ կ'ապաստանի Հալէպ: 1928ին Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանէն կը հրատարակուի իր *Ինթիլլի-Այրանի սպանդը 1916 (մութ մնացած էջ մը Մեծ Եղեռնէն)* վկայագրութիւնը: Տէր Վարդանեան հեղինակած է նաեւ *Մարաշի ջարդը 1920-ին եւ պատմական համառօտ ակնարկ մը իր անցեալին վրայ* գրքոյկը, որ տպուած է Երուսաղէմ, տպ. «Արաքս», 1927ին: Երկուքն ալ հրատարակուած են Ս. Աթոռի միաբան Եղիշէ եպս. Չիլինկիրեանի մեկենասութեամբ:

[43] Գարեգին արք. Յովսէփեանց (1867-1952), կաթողիկոս տանն Կիլիկիոյ, նշանաւոր՝ որպէս արուեստաբան ու հայագէտ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Գերմանիոյ մէջ, յաճախելով Լայփցիկի, Պերլինի եւ Հալլէի համալսարանները: Յովսէփեանց ունի Երուսաղէմի հայկական ժառանգութեան նուիրուած ուսումնասիրութիւններ եւս:

[44] Սրապեան ծնած է 1833ին, Կ. Պոլիս, Օրթագիւղ: Նախնական կրթութիւնը ստացած է Սկիւտարի ճեմարանի մէջ, բարձրագոյն ուսումը՝ Հռոմ: Պոլիս վերադառնալով աշխատած է Պալեաններու քով: Գծագրութիւն եւ նկարչութիւն դասաւանդած է Պոլսոյ դպրոցներու մէջ: Եղած է Ինտրայի ուսուցիչը: 1893-96՝ Խրիմեան Հայրիկի հրաւէրով գտնուած է Մայր աթոռ, ուր ձեւաւորած է վեհարանի դահլիճն ու թանգարանը: 1896էն սկսեալ ապրած է Սոֆիա, ուր մեռած է 1898ին:

առջեւ ունենայ զայն ու աշխատի գոհացում տալ Ձեր փափաքին: Պարոն Արամ[45] Ֆնտըգլեան Պոլիս մնացած է, Երուսաղէմ ուխտի եկած են միայն Տիկինը ու երկու աղջիկները: Ձատիկէն անմիջապէս ետք մտադիր էին վերադառնալ, սակայն Տիկին Ֆնտըգլեանի երէց աղջկան անակնկալ դըժբախտութիւն մը պատահեցաւ, այն է պտոյտի մը պահուն ոտքը դարձաւ ու ոսկորը կոտրեցաւ եւ ստիպուեցան տեղիս Ֆրանսական հիւանդանոցը փոխադրել, ուր կոտրած ոտքը գաճի մէջ առին ու այդպէս 40 օր անշարժ պիտի մնայ: Ատոր համար մայրը եւ քոյրը շատ սրտաբեկ են ու հիւանդին սնարէն չեն բաժնուիր: Այսու հանդերձ խոստացան նամակնիդ ղրկել Պոլիս Պր. Արամ Ֆնտըգլեանի, որպէսզի Ձեր ուզած տեղեկութիւնները տայ:

1927-ի Տարեցոյցիդ կողքին համար Ձեր ընտրութեան մասին լռութիւնս բացարձակ հաւանութիւն կը նշանակէ եւ ոչ ուրիշ բան, ինչպէս կ'ըսէ թուրքերէն առածը *Սիւքիւթ իքրարտան իլէրի կէլիր*[46]: Միթէ Ձեր կիրթ ճաշակն ու ընտրութիւնը որեւէ առարկութիւն կամ դիտողութիւն կը վերցնէ՞: Այսու հանդերձ ըսեմ որ եթէ յաջող *ռըբրօտիւքսիօն* մը ունենաք, կողքի այդ նկարը *խըյախ*[47] բան մը պիտի ըլլայ ու հրաշալի տպաւորութիւն պիտի թողու:

Ձեր փափաքին համաձայն կը ներփակեմ կենսագրութեանս ուրուագիծը: Ինչպէս յառաջագոյն ալ գրած եմ, գործունէութիւնս վանական անձուկ շրջանակէն դուրս չէ ելած, ատոր համար չ'արժեր հրատարակութեան տալ զայն, մի գուցէ թեթեւսօլիկ ունայնամտութիւն համարուի: Այսու հանդերձ եղիցին կամք քո:

Նորին Ամենապատուութիւնը պիտի կատարէ իր խոստումը անպայման, միամիտ եղէք: Իրեն վերաբերեալ տողերը կարդացի, նոյն հաւաստիքը տըւաւ:

Սիրոյ ողջունիւ եւ յաջողութեան մաղթանքներով,

Է.

Երուսաղէմ, 9 Յուլիս 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

ՏԱՐԵՑՈՅՑԻդ գեղարուեստական բաժինին համար յատկապէս պատրաստել տուի ներփակ լուսանկարը իւղաներկի մը[48], նկարուած Տիրան Չը-

[45] Պէտք է ըլլայ Արտաշէս:

[46] Լռութիւնը հաւանութեան նշան է (թրք.):

[47] Գեղեցիկ, հաճելի (թրք. ռմ.):

[48] Ինտրայի խնդրոյ առարկայ ստեղծագործութիւնը՝ «Վերջալոյսն ի Մարմարա», հրատարակուած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 533: Որպէս բացատրական տըրուած են Մեսրոպ եպս. Նշանեանի նամակին այս տողերը:

րաքեանի[49] կողմէ (Ինտրա) 1892-ին ու նուիրուած իր հայրենակից ու ազգական հանգուցեալ Տէր Մամբրէ Եպիսկոպոս Մարկոսեանի[50]:

Նկարը, այժմ իմ տրամադրութեանս տակ, կը ներկայացնէ Մախսուսէի[51] շոգենաւ մը, որ աշնան իրիկնամուտի մը կը մօտենայ Կղզիներուն[52]: Հոն յաջողակ վրձինով երեւան բերուած է Մարմարայի վրայ աշնանային վերջալոյսի ամէն երանգները ներդաշնակ դասաւորութեամբ եւ բնութեան հարազատ նմանութեամբ: Տեսնող գեղարուեստասէրները շատ կը հաւնին ու կը գնահատեն: Ափսոս որ ներփակ լուսանկարը իսկականին հեռաւոր պատրանքը կու տայ: Տ. ՉՐԱՔԵԱՆ ստորագրութիւնը աղօտ իմն կը կարդացուի լուսանկարի աջակողմեան վարի անկիւնը, վրան ալ դրուած է 92 թուականը: Լուսանկարողն է Գրիգոր Խանճեան:

Սիրոյ ողջունիւ եւ յարգանքներով,

Ը.

Երուսաղէմ, 28 Օգոստոս 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացած եմ յաջորդաբար 19 յուլիս եւ 9 օգոստոս թուակիր Ձեր երկու քարթերը:

Հանգուցեալ Մամբրէ Սրբազան իմ տեսուչս ու դաստիարակս եղած է ու մաքուր յիշատակ մը պահած եմ իրմէ, այդ պատճառաւ սիրով եւ ուրախութեամբ ընդ առաջ կու գամ խնդրանքիդ՝ ներփակելով իւր կենսագրութիւնը, զոր ընդօրինակեցի ասկէ քսանամեակ մը առաջ ԲԻՒԶԱՆԴԻՈՆ-ի մէջ իմ

---

[49] Չրաքեան, կամ գրական անունով Ինտրա, ծնած է Պոլիս, Սկիւտար, 1875ին: Շըրջանաւարտ Պէրպէրեան վարժարանէ, միջոց մը ուսուցչութեամբ զբաղելէ ետք, կ'երթայ Փարիզ, ուր կը հետեւի նկարչութեան ու գրականութեան դասերու: 1906ին կը հրատարակէ *Ներաշխարհ*ը, 1908ին՝ *Նոճասպան*ը: 1910էն ետք կը հարի շաբաթապահութեան ու կը դառնայ աւետարանի քարոզիչ: Որպէս յեղափոխական ու կասկածելի անձ կը ձերբակալուի: Կը նահատակուի 1921ին, Տիարպեքիրի մօտ: Չրաքեան նաեւ յայտնի գեղանկարիչ էր:

[50] Մամբրէ եպս. Մարկոսեան, կամ Եազըճեան, ծնած էր Արաբկիր, Ծագ գիւղը, 1835ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ Պոլիս, ուր կը հետեւի նաեւ լուսանկարչութեան: Կ'աշակերտէ նշանաւոր լուսանկարիչ Պեհզատ Ումէտի: Միջոց մը հայերէնի ու գծագրութեան ուսուցիչ կ'ըլլայ Ս. Յակոբեանց վանքին մէջ: Կ'ամուսնանայ Արաբկիր: Կնոջ ու որդւոյն մահէն ետք, 1871ին կը դառնայ եկեղեցական, շարունակելով հանդերձ նկարչութեան արուեստը: Պատասխանատու պաշտօններ կը վարէ վանքէն ներս ու դուրս: Եպիսկոպոս՝ 1885ին: Նկարչական աշխատանքներու առընթեր ունի բազմաթիւ տպագրեալ ու անտիպ գրութիւններ: Վախճանած է 1907ին:

[51] Իտարէի մահսուսա՝ Պոլսոյ մէջ շոգենաւային փոխադրութեան ընկերութիւն մը, հիմնուած 1878ին:

[52] Նկատի ունի Պոլսոյ Իշխանաց կղզիները (Գնալը, Պուրկազ, Հալքի, Մեծ կղզի եւն.):

հրատարակածէս[53]: Ատկէ մաս մը յապաւեցի, օրուան սաղիմական խնդիրները շօշափելուն եւ հանգուցեալ Սրբազանի կեանքին հետ այնքան սերտ առնչութիւն չունենալուն համար: Ինչպէս պիտի տեսնէք, իմ պատրաստածս բաւական երկար է, Ձեզ կը մնայ կարեւոր կէտերը քաղուածաբար առնել եւ կոկիկ ամփոփում մը ընել[54]: Կենսագրականիս մէջ յիշուած մեծանուն Պետրոս Ադամեանի[55] ինքնանկար շատ յաջող Մամբրէ Սրբազանի իւղաներկը մեր քով կը գտնուի: Պիտի ջանամ ատոր լուսանկարն ալ Ձեր տրամադրութեան տակ դնել: Բայց տակաւին կանուխ է, երբ ժամանակը գայ, հաճեցէք յիշեցնել:

Պիտի ուզէի՞ք որ 1928-ի ՏԱՐԵՑՈՅՑ-իդ համար Խրիմեան Հայրիկէն նոր անտիպ մըն ալ ղրկէի: Ունիմ քովս շատ գեղեցիկ նամակ մը ուղղած մեծ հայասէր Ճէյմս Պրայսին[56], որով կը շնորհաւորէ իր ամուսնութիւնը ու այդ առթիւ սիրուն ու սրամիտ դարձուածներով հայկական հարցն ալ կը շօշափէ: Միայն կը կասկածիմ թէ այս վերջին կէտը գրաքննութեան ուշադրութիւնը հրաւիրէ ու արգելք ըլլայ ՏԱՐԵՑՈՅՑ-իդ Պոլիս մուտքին:

Մեր բարեկամ Պարոն Նուրեան[57] պիտի աշխատի ձեռք բերել արկածամահ Հայր Կօտէնս Օրֆալիի[58] մէկ լուսանկարը:

---

[53] Մեսրոպ վրդ. Նշանեան, «Մամբրէ եպիսկ. Մարկոսեան», *Բիւզանդիոն*, Կ. Պոլիս, 2/15 եւ 3/16 Փետր. 1907:

[54] Մեսրոպ եպս. Նշանեան, «Նկարիչ սրբազանը», *Ամէնուն տարեցոյցը 1928*, էջ 517-26:

[55] Մեծանուն դերասան, գրող ու նկարիչ, ծնած 1849ին Կ. Պոլիս, ուր ալ մեռած է 1891ին:

[56] Անգլ.՝ James Bryce, ծնեալ 1838, Պելֆասթ, մեռած 1922ին, Տեւոն, դերկոմս, անգլիացի պետական, հասարակական-քաղաքական գործիչ, Բրիտանիոյ ակադեմիոյ անդամ, իրաւաբան ու պատմաբան: Եղած է արտաքին գործոց փոխնախարար, առեւտուրի նախարար եւն.: Այցելած է Հայաստան: Բարձրացած է Արարատի գագաթը: Հանդիպումներ ունեցած է Ներսէս Վարժապետեան պատրիարքի, Մատթէոս Մամուրեանի, սերտ կապեր ունեցած՝ Արշակ Չօպանեանի, Պօղոս փաշա Նուպարի եւն. հետ: Հեղինակ՝ Մեծ Եղեռնի շրջանի հրատարակուած յայտնի «Կապոյտ գիրք» ժողովածուի: Երեւանի մէջ իր անունով կայ փողոց մը:

[57] Երուսաղէմի հայոց պատրիարքութեան բազմամեայ դիւանապետ: Ծնած է 1878ին, Պոլիս, Բերա, որպէս զաւակը պետական ու ազգային ծանօթ դէմք Յովհաննէս Նուրեանի: Բարձրագոյն ուսումը ստացած է Անգլիա, Ֆրանսա ու Միացեալ Նահանգներ: Որպէս հողագէտ, պատասխանատու պաշտօններ վարած է Օսմանեան երկրին մէջ: Առաջին աշխարհամարտէն ետք վարած է նաեւ ազգային պաշտօններ՝ ըլլալով պատրիարքարանի տեղեկատու դիւանի վարիչը: Քեմալականներու գալէն ետք կ'անցնի Եգիպտոս, ուրկէ ալ կը հասնի Երուսաղէմ: Եղիշէ պատրիարք զինք կը կարգէ Երուսաղէմի պատրիարքութեան դիւանապետ, զոր ձեռնհասութեամբ կը վարէ մինչեւ իր մահը՝ 1940:

[58] Հ. Կոտանս Օրֆալիի (1889-1926) մահագրականը, լուսանկարով հանդերձ, կը կարդանք 1927ի տարեցոյցին մէջ, էջ 637-38: Ծնած էր Նազարէթ, ուրֆացի

Մնամ սիրալիր ողջոյններով եւ Ձեր յաջողութեան մաղթանքներով,

Թ.

Երուսաղէմ, 4 Սեպտեմբեր 1926

Սիրելի Պր. Թէոդիկ,

Կը ներփակեմ արկածամահ Ֆրանչիսկեան Միաբանութեան անդամ Հայր Օրֆալիի նկարը:

Անշուշտ տեսած կ'ըլլաք ԱՐԵՒ-ի տարւոյս 29 յուլիսի համարը, որուն մէջ հանգուցեալի մասին գեղեցիկ յօդուած մը ունի Մկրտիչ Աղաւնունի Սրբազան[59]: Հայր Օրֆալիի կենսագրութեան իբրեւ լրացուցիչ մաս կարեւոր է նաեւ հետեւեալը:- Հանգուցեալի հայրը բնիկ Ուրֆացի եղած է, Գըզըլ-Օղլու հայ հռոմէական ընտանիքէն: Ասկէ 50 տարի մը առաջ ուխտաւորութեամբ եկած է Երուսաղէմ, ու վերադարձին երբ կ'անցնի եղեր Նազարէթէն, տեղին Ֆրանչիսկեան մեծաւորը տեսնելով որ յաջողակ արհեստաւոր մըն է, հոն վար կը դնէ, աշխատցնելու համար շինութեանց վրայ, կը յատկացնէ անոր առանձին բնակարան, ու կը պսակէ Նազարէթցի արաբ-քաթոլիկ աղջկան մը հետ: Այդ ամուսնութեան պտուղը կ'ըլլան 2 աղջիկ եւ 3 մանչ զաւակներ, որոնցմէ մէկը Հայր Օրֆալի:

Կը ներփակեմ նոյնպէս Հանգուցեալին առ Տ. Եղիշէ Դուրեան Ս. Պատրիարքն ուղղած 9 հոկտեմբեր 1924 թուակիր նամակի պատճէնը, որ արտայայտիչ է իր հայասիրական անկեղծ զգացումներուն[60]:

Մնամ ողջունիւ սիրոյ,

Ժ.

Երուսաղէմ, 12 Սեպտեմբեր 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ ամսոյս 6 թուակիր Ձեր քարթը[61]: Հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսի կենսագրութեան մէջ գրած եմ. «Մոսկուա հրատարակած է *Երկու խօսք ազգային դաստիարակութեան վրայ»*: Հարկ է ճշդել այսպէս. «Մոսկուա հրատարակած է *Ազգային յառաջադիմութեան մասին մի քանի*

(հոսկէ ալ իր մականունը), հայ-կաթոլիկ հօրմէ ու արաբ-կաթոլիկ մօրմէ: Կրթութիւնը կը ստանայ Ս. Երկրի դպրոցներուն մէջ: 1912ին քահանայ կը ձեռնադրուի, ապա կ'անցնի Հռոմ ու Ֆրիպուրկ, կատարելագործելու իր ուսումը: Կը վերադառնայ Ս. Երկիր, ուր 1925ին կը դառնայ Արեւելեան հնախօսական ընկերութեան նա-խագահը: 1922ին լատիներէնով կը հրատարակէ «Կափառնայում եւ իր աւերակ-ները» գործը: Արկածահար կը մահանայ Սիւքէմի աւերակներու մէջ աշխատած պահուն:

[59] Մկրտիչ եպս. Աղաւնունի, «Գիտնականի մը ցաւալի մահը Երուսաղէմի մէջ», *Արեւ*, 29 Յուլիս 1926:

[60] Հ. Կոտանս Օրֆալիի մասին Մեսրոպ սրբազանի տուած տեղեկութիւնները, լուսանկարը, ինչպէս նաեւ հանգուցեալին՝ Եղիշէ պատրիարքի ուղղեալ նամակը տեղ գտած են 1927ի տարեցոյցին մէջ, էջ 637-38:

[61] Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 285:

խօսք[62]*, Վարդգէս* կեղծանունով»: Կը յիշեմ նոյնպէս Ջուղայեցիի կրօնաթերթին[63] քանի մը կրօնական յօդուածներ տուած ըլլալը[64]: Նմանապէս Խրիմեան Կաթողիկոս Արքութեան տիտղոս շնորհած է բայց հայրապետական կոնդակը[65] հասաւ այն ատեն, երբ արդէն Մամբրէ եպիսկոպոս մի քանի շաբաթ առաջ վախճանած էր:

Այս անգամ առանձին ծրարով Ձեր հասցէին թղթատարին յանձնեցի հինգ նկարներ, ետեւները կարմրադեղով թուագրուած:

Թիւ 1- Պետրոս Ադամեանի իւղաներկ պատկերի արտանկարը լուսատիպ, որ կը ներկայացնէ Մամբրէ եպիսկոպոսը: Լուսանկարին աջակողմեան ստորին անկիւնը աղօտ իմն կը կարդացուի նկարիչին ստորագրութիւնը, որուն ճիշդ ներքեւը կայ 1885 թուականը, լուսանկարին մէջ անընթեռնելի[66]:

Թիւ 2- Մամբրէ եպիսկոպոսի ինձ նուիրած լուսանկարը, քաշուած մահէն չորսուկէս տարի առաջ[67]:

Թիւ 3- Դարձեալ Մամբրէ եպիսկոպոս, որ նկարուած է իբրեւ մօտէլ ծառայեցնելու համար իր շինելիք Սուրբ Ղեւոնդ երէցի պատկերին: Ասիկա, ինչպէս կը տեսնէք, սիրուն եւ օրիժինալ նկար մըն է, բայց ափսոս որ ժամանակը ըստ բաւականին եղծած է: Նկարին ֆօնը իր շինած թիւ 4 նկարն է:

Թիւ 4- ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵՒ ՈՐԴԻՔ ԵՒ ԹՈՌՈՒՆՔ, նկար Մամբրէ եպիսկոպոսի, որ այժմ կը գտնուի Սուրբ Յակոբայ տաճարի գաւիթի հարաւային երրորդ կամարին ներքեւ: Կիսաշրջանակի տրամագծի երկարութիւնն է 3,68 մէթր ու բարձրութիւնը, տրամագծի կեդրոնէն մինչեւ գագաթը, 3,15 մէթր: Լուսաւորչի գլխուն վերեւ սաւառնող հրեշտակի բռնած ժապաւէնին վրայ կը կարդացուի. «Պսակ ծերոց որդիք որդւոց եւ փառք որդւոց հարք իւրեանց: Առակ. ԺԷ 6»: Նոյնին առջեւ գետինը փռուած գալարուն ժապաւէնին վրայ կը կարդացուի. «Ահա ես եւ մանկունք իմ զորս ետ ինձ Աստուած: Եսայ. Ը. 18»: Ստորին ձախակողմեան անկիւնը պատկեր-

---

[62] 46 էջնոց գրքոյկը հրատարակուած է 1882ին:

[63] Խօսքը Թորոս քհնյ. Տէր Իսահակեան-Ջուղայեցիի (1861-1938) *Եկեղեցի Հայաստանեայց* կրօնական եւ աստուածաբանական ամսաթերթի մասին է, որ հրատարակուած է նախ Պոլիս, ապա Մանչեսթըր, յաջորդաբար 1888ին եւ 1900ին:

[64] Մամբրէ եպս. Մարկոսեանէ տպուած կը տեսնենք քարոզ մը ու նամակ մը միայն՝ «Քարոզ ի գեր. Տ. Մամբրէ եպ.է Մարկոսեան ի Սուրբ Ծնունդն Քրիստոսի» (*Եկեղեցի Հայաստանեայց*, նոր շրջան, թիւ 1, Ապրիլ 1900, էջ 19-26) եւ նամակը (նոյն, թիւ 6, Սեպտ. 1900, էջ 190):

[65] Արքութեան շնորհումի յայտարարութիւնը հրապարակուած է Մայր աթոռի պաշտօնաթերթ *Արարատ* ամսագրի 1907ի Յունուարի Ա. թիւին «Հայրապետական պարգեւք» բաժնին մէջ, էջ 7:

[66] Մամբրէ սրբազանի՝ Պետրոս Ադամեանի ձեռամբ 1883ին գծուած իւղանկարը տպագրուած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 522:

[67] Անդ, էջ 525:

ներու թիւերուն համեմատ նշանակուած են իւրաքանչիւրին անունները (լուսանկարին մէջ անընթեռնելի, սակայն ձեռագրով վարը քարթօնին վրայ նշանակուած): Ստորին աջակողմեան անկիւնը կայ հետեւեալ արձանագրութիւնը. Ի յիշատակ ծնողաց իմոց Յակովբայ եւ Խաթունի եւ համայն նընջեցելոց մերոց նկարեալ նուիրեցի Ս. Յակովբայ միաբան Մամբրէ Եպս. Յ. Մարկոսեան: 1896 յունիս 18, յԵրուսաղէմ: Նկարիս գաղափարը թէեւ իր մտքի ծնունդը չէ, սակայն դիրքերը ինք ձեւաւորած եւ գոյները ներդաշնակած է, ու ամբողջ տարի մը աշխատութիւն թափած է անոր վրայ[68]:

Թիւ 5- ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, նախ քան Երուսաղէմ աքսորուիլը Պոլիս նկարուած: Թուղթերուս դէզերուն մէջէն գտայ ու կը կարծեմ թէ անտիպ է, որովհետեւ չեմ հանդիպած ոչ մէկ հրատարակութեան մէջ:

Թիւ 1 նկարը Ձեր քով կը մնայ, իսկ բարի եղէք վերադարձնել թիւ 2, 3, 4 եւ 5 նկարները, որոնց երկուքը իմս են եւ երկուքը ուրիշներու:

Կը ներփակեմ երկու անտիպներ Խրիմեան Հայրիկէ: Մէկը նամակ մը ղրկուած առ Ճէյմս Պրայս, շնորհաւորական իր ամուսնութեան առիթով[69]: Կը թուի գրուած ըլլալ ի Պոլիս 1888-ին, քանի որ կ'ըսէ. «Տասն տարին անցաւ Հայկական խնդրոյն յղացումն»: Եւ երկրորդը դարձեալ նամակ մը Նոր-Նախիջեւանէն ղրկուած առ Նուպար փաշա, 20 մարտ 1895 թուակիր[70]:

Սիրելիս Թէոդիկ, կը կարծեմ թէ 1928-ի ՏԱՐԵՑՈՅՑիդ համար տուրքս լիովին հատուցի, ալ Քեզ տեսնեմ, նորէն *փառլախ* բան մը *մէյտան*[71] հանես, որուն համար ի սրտէ ցանկացող եմ եւ աղօթող Ձեր բարեկեցութեան եւ քաջողջութեան համար:

ԺԱ.

Երուսաղէմ, 1 Նոյեմբեր 1926

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Հաճոյքով ստացայ հոկտեմբեր 19 Ձեր թուակիրը[72]:

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, նոյն ըղձանքով կը սպասեմ 1927-ի հատորիդ օր առաջ հասնելուն: 25 օրինակները տեղաւորելու մասին կրնամ ապահովցնել Ձեզ, իսկ աւելիին համար դժուար թէ երաշխաւորեմ: Ընթերցողներու յոյժ սահմանափակ թիւ մը ունինք այստեղ, մէկ կարեւոր մասը կ'ուզէ *օթլախմիութեամբ*[73] անօթութիւնը անցընել: Եթէ անհամեստութիւն չըլլայ ըսել այդ 25 գիրքերը մեր դիրքին շնորհիւ կը քշուին, առ ամօթոյ կը պարտաւորուին չմերժել ու դրամը ցնծալ: Այսու հանդերձ կը փորձեմ, եթէ ուզողներ գտնուին, կը գրեմ Ձեզի:

---

[68] Անդ, էջ 518:
[69] Անդ, էջ 306:
[70] Անդ, էջ 308-12:
[71] Հրապարակ (թրք.):
[72] Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 285:
[73] Հացկատակութիւն (թրք.):

Ֆնտըգլեաններու հետ ես ուղղակի թղթակցութիւն չունիմ: Հասցէնին կը ներփակեմ, եթէ կ'ուզէք, Դուք անձամբ գրեցէք իրենց: Թէեւ Տիկին Ֆնտըգլեան հոս գտնուած ատեն գրեց ամուսնոյն, բայց կ'երեւի վերջինս հաշիւներ ունի վասն ահին հրէից:

Յառաջիկայ Յունուարէն սկսեալ մեր տպարանէն լոյս պիտի տեսնէ, կամ աւելի ճիշդ, պիտի վերհրատարակուի ՍԻՈՆ ամսաթերթը[74]: Նախապատրաստութիւններ տեսնուած են, կը մնայ աշխատակիցներ ապահովել: Երանի թէ հիմնաւոր գործ ըլլար ու կէս ճամբան չմնայինք:

Սիրոյ ողջոյններ եւ յաջողութեան մաղթանքներ:

ԺԲ.

Երուսաղէմ, 27 Դեկտեմբեր 1926

Սիրելի Թէոդիկ,

Հաճոյքով ստացայ ամսոյս 20 թուակիրդ[75] ու ներփակ քարթը յանձնեցի Սրբազան Պատրիարքին, որ կարդալու պահուն, ըստ գուշակութեանդ, անուշիկ ժպիտը նկարուեցաւ իր բարի դէմքին վրայ, ինչոր արտայայտիչն է Քեզ հանդէպ իր բարեացակամութեան ու ճիտիկդ ծուռ ձգել չուզելուն:

Ստացայ ժամանակին 28 Տարեցոյցներու ծրարները ու յանձնարարութեանդ համաձայն երեքը յանձնեցի նուէրընկալներուն, որոնցմէ ես ինքս կը փութամ յայտնել անկեղծ շնորհակալութիւն ազնիւ մտադրութեանդ համար: Վաճառուած են 23 հատ, թէեւ 7-ը տակաւին ապառիկ կը մնան: Այժմ քովս 2 հատ կայ, անոնց ալ մէյմէկ տեղ կը գտնեմ: Յառաջիկային ամէնուն փոխարժէքը չէքով կը ղրկեմ, միամիտ եղէք:

Ներկայ 1927-ի հատորդ ալ քսանամեակի հատորիդ[76] հարազատ երկուորեակն է ծաւալով ու պարունակութեամբ: Եթէ նախընթացիդ թագն ու պսակն էր ՈՐԹՆ ՈՒ ԻՐ ԲԵՐՔԸ[77], այս տարուանիդ ալ լուսապսակն է ԵՐԿԻՆՔ ԵՒ ԱՍՏԵՂՔ ընդարձակ աշխատութիւնդ[78], որ հատորիդ մուտքը կը զարդարէ եւ ընթերցողին կը թուի աստեղազարդ հոյակապ կամարի մը տակէն եւ դից ու դիցուհեաց շարքերէն անցնելով մտնել Տարեցոյցիդ միւզէին ճոխ ու ընդարձակ սրահները ու վայելել ցուցադրուած բազմազան առարկաները, զորս կիրթ ու ճաշակաւոր ընտրութեամբ դասաւորելու գաղտնիքը Քեզ միայն յատուկ է: Շատ ու շատ ապրիս:

Օրիժինալիդ հետ կը ներփակեմ Յորդանանի սրճագոյն մէկ նկարը, որ նոյն գետին մէկ տարբեր տեսարանը կը ներկայացնէ, աւելի գեղարուես-

---

[74] Երուսաղէմի հայ պատրիարքութեան պաշտօնաթերթի հրատարակութիւնը դադրած էր 1877 աւարտին: *Սիոն* վերստին հրատարակուիլ սկսած է Յունուար 1927ին, Բաբկէն եպս. Կիւլեսէրեանի խմբագրապետութեամբ:

[75] Թէոդիկի նամակը տե՛ս՝ Ղազարեան, էջ 287:

[76] Նկատի ունի 1926ի տարեցոյցը, որ տպագրուած էր Վենետիկ:

[77] Թէոդիկ, «Որթն ու իր բերքը», *Ամէնուն տարեցոյցը 1926*, էջ 24-170. նաեւ՝ *Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 120-24. նաեւ՝ *Ամէնուն տարեցոյցը 1928*, էջ 141-44:

[78] Թէոդիկ, «Երկինք եւ աստեղք», *Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 7-65:

տական, ու մակոյկին երեւցած տեղն ալ այն աւանդական վայրն է, ուր Քրիստոս մկրտուեցաւ[79]: Նոյնպէս կը ներփակեմ նոր ձեռք անցուցած մէկ լուսատիպս հանգուցեալ Մամբրէ Սրբազանի, պատկեր մը նկարելու դիրքին մէջ[80]: Թէեւ քիչ մը գունատ, բայց շատ սիրուն նկար մըն է եւ ճիշդ ու ճիշդ հանգուցեալին արտայայտութիւնը վերջին տարիներուն: Պիտի փափաքէի որ ասիկա մտնէր Տարեցոյցիդ մէջ ու ապա ինծի դարձնէիք տիրոջը յանձնուելու համար:

Ուր ուրեմն ՍԻՈՆ-ը սկսանք հրատարակել: Առաջին թիւը կազմ ու պատրաստ է, եւ հրապարակ պիտի դրուի յառաջիկայ Յունուար 1-ին: Երկար փնտռտուքներէ ետք խելքը գլուխը գրաշարապետ մը գտանք, Տիգրան Թօփալեան անուն, որ գործին հմուտ, աշխատասէր ու խղճամիտ անձնաւորութիւն մըն է, ու իր ներկայութիւնը քաջալերեց մեզ Հանդէսի հրատարակութեան: Առաջին թիւէն անշուշտ հատ մը պիտի ղրկեմ Քեզի, այն վստահութեամբ թէ պիտի հոգաս տեղէդ քանի մը բաժանորդներ ճարել: Երանի թէ մեր այս նոր ՍԻՈՆ-ը երկարակեաց ըլլար ու կէս ճամբան չմնար:

Սիրալիր ողջոյններով եւ յաջողութեան մաղթանօք,
Աղօթանուէր

ԺԳ.

Երուսաղէմ, 21 Յունուար 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Կը հաստատեմ անցեալ 27 դեկտեմբեր թուակիրս:

Ներփակ կը գտնէք 1927-ի 25 Տարեցոյցներուդ արժէքին փոխարէն Ձեր հրամանին չէք մը Լոնտոնի վրայ. այսօրուան թուականով, թիւ 275683 / 46079: Գանձեցէք ու հաշիւս փակեցէք եւ ստացումը հաճեցէք երկտողով մը տեղեկացնել ի միամտութիւն: Աստուած նորէն տայ, նորէն խնդացնէ:

Ջերմագին ողջոյններով,
Աղօթարար

[Ձեռագիրով] Չէքին գումարն է՝ 10 սթերլին եւ 5 շիլլին:

ԺԴ.

Նիկոսիա, 2-2-27

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ 21 յնվր. թուա[կիր] նամակնիդ՝ զիս մութէն ի լոյս հանող ներփակ £10.5 չէքով մը, իբր հաշուեփակ 27ի հատորներուս: Շատ ապրիք: Տող մը վերի խօսքս անո՛ր համար որ 28իս սկիզբ տուի նորէն ի Փարիզ, եւ ստիպեալ իմ գործին կէս փոխարժէքը կանխիկ ցնծալ: Ահա թէ ինչո՞ւ ցնծացուց զիս ղրկած չէքերնիդ: Նամակնուդ վերջին տողը միտքէս կը կրկնեմ

[79] Այս լուսանկարը զետեղուած է 1929ի տարեցոյցին մէջ, էջ 105, «Յորդանան (մակոյկին կողմն էր ուր մկրտուեցաւ Յիսուս)» բացատրագիրով:

[80] *Ամէնուն տարեցոյցը 1928*, էջ 520:

այս պահուս:- Սրբազան Հայր, անցեալ օր Սըր Սթօրս[81] Հաստատութեանս[82] տուած անպաշտօն այցին՝ իմացուց թէ ամէնուս սիրելի Ս. Պատրիարք Հայրը հիւանդ է: Բոլորս ալ շատ տրտմեցանք: Ուրախ պիտի ըլլայինք՝ եթէ Ն. Ամենապատուութեան ապաքինումին աւետիսը շուտ նօթճէիք մեզ:- Ձեր երբեմնի աշակերտ (նաեւ Դուրեան Ս.ի) Գուրգէն Տ. Վարդանեան[83] տարեցոյցիս շատ օգտակար կ'ըլլայ իր թելադրութիւններով եւ աշխատակցութեամբ: Ձեր Ս. Աջը կը համբուրէ, եւ կը խնդրէ որ Փաւստ[ոս] Բուզանդի սա տողը Բաբգէն Ս.ի ցոյց տայիք ի հարկին՝ ճիշդ թարգմանութիւնն իմ միջոցաւս իրեն հաղորդուելու խնդրանօք. «… զի յորժամ ի ձի հեծեալ էր, երան բարձի նորա ոչ յանձին եւ ի ծունկն ոչ հասանէր, այլ ի բացեայ կայ ի ձիոյ անտի»[84]:- Նոյնպէս, իմ նորընտիր պետս՝ ելեւմտից տեսուչ Տիար Օննիկ Թադէոսեան[85] Ձեր Ս. Աջը կը համբուրէ՝ իր մասնաւոր յարգանքներով, եւ կը խնդրէ որ իրեն ծանօթ ձեր կարգակիցներուն ալ բաժին հանէք անոնցմէ: Արժանիքս եւ հաշուակալական աշխատանքս գնահատող մըն է ինքը, ինչ որ բարեբախտութիւն մը կը նկատեմ սա դժնդակ պանդխտութեանս մէջ:- Ձեր վերջին թուակիրէն ալ առաջ՝ ձենէ ստացած էի նամակ մը եւ շնորհաւորական քարտ. ներողամիտ կ'ըլլաք անշուշտ այսպէս ուշ պատասխանելուս, վասն զի անկողնոյ կը ծառայէի այդ օրերուն:- Քաղաքէն հեռու եմ միշտ եւ ոչ զոք կը ճանչնամ հոն. կրնաք «Սիոն» ղրկել մեր հաստատութեան: Յաջողութիւն կը մաղթեմ:- Մեծագոյն հնհնուքս՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէ ստանալիք յօդուածս ու քերթուածս է: Ձեզ ունիմ միայն բարեխօս: Եւ ես վստահ եմ թէ պաշտելի հայրենակիցս իմ ճիտս ծուռ չի ձգեր նորէն: Մեծարանաց հաւաստեօք, կը մնամ

խ.[ոնարհ] ծ.[առայ] Թէոդիկ

ԺԵ.

Երուսաղէմ, 8 Փետրուար 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

---

[81] Սըր Ռանըլտ Սթորս (1881-1955), 1926-32՝ եղած է Կիպրոսի բրիտանական կուսակալ:

[82] Նկատի ունի Մելգոնեան կրթական հաստատութիւնը: Թէոդիկ 1926-27ին որպէս հաշուակալ աշխատած է այնտեղ:

[83] Գուրգէն Տէր Վարդանեան՝ հեղինակ *Երզնկա-Կամախ գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր* ուսումնասիրութեան, տպուած 1968ին, Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանէն, ինչպէս նաեւ այլ յօդուածներու: Աշխատակցած է նաեւ *Ամէնուն տարեցոյցը*ին:

[84] Հատուածը առնուած է Բուզանդի պատմութեան, հինգերորդ դպրութեան, «Յաղագս Մերուժանայ Արծրունոյ, որ հանդերձ զօրօք եկն ի վերայ Մանուէլի, եւ սատակեցաւ ի նմանէ» վերնագրեալ ԽԳ գլուխէն:

[85] Հեղինակ է *Բարեգործականի տեսլականը* (Պէյրութ, 1965), *Ապրիլեան հրաւառ թուղթ ուղղուած բովանդակ մարդկութեան* (Փարիզ, 1949) եւն. աշխատութիւններու:

Ստացայ 2 / 2 / 27 թուակիր Ձեր քառթը: Կը ներփակեմ Փաւստոս Բուզանդի հատուածին բացատրութիւնը, պատրաստուած Բաբգէն Սրբազանի կողմէ: Հաճեցէք յանձնել Պր. Գուրգէն Տէր Վարդանեանի իմ ողջոյնիս հետ:

Սրբազան Պատրիարք անցեալ Յունուար 9-էն ի վեր հիւանդ է բաւական լուրջ կերպով: Եղան օրեր որ մահուան ու կեանքի մէջ տատանեցաւ, ու ամբողջ հիւանդութեան ընթացքին տագնապներու եւ սրտադողի մատնեց մեզ: Այս վերջին քանի մը օրերը հանդարտած է ու կը յուսանք թէ մտած է ապաքինումի ճամբուն մէջ, թէեւ վիճակը շատ փափուկ է ծայր աստիճան տկարացած ու հիւծուած ըլլալով: Մեծանուն Հիւանդնիս առաջին օրէն առարկայ է 5-6 բժիշկներու ուշադիր ու հոգածու խնամքին ու Միաբանութեան անձնուէր ու որդիական գուրգուրանքին: Դուք ալ աղօթեցէք հեռուէն, որ Նախախնամութիւնը Նորին Ամենապատուութեան թանկագին ու սիրելի կեանքը պահպանէ: Մենք հոս այդ նպատակով ջերմեռանդ ու սրտագին հսկումներ ըրինք: Ես կը կարծեմ թէ 28-ի Տարեցոյցիդ համար չսպասէք Սրբազան Պատրիարքէն որեւէ յօդուած կամ քերթուած: Ներկայ վիճակին մէջ այդ արդէն անկարելի է: Եթէ առողջանալու ըլլայ, բժիշկները պատուիրած են, որ երկար ժամանակ մտաւոր աշխատանք պէտք չէ ունենայ: Վնաս չունի, կարեւորը այն է որ ինք կատարելապէս բուժուի:

Մեծ. Տիար Օննիկ Թադէոսեանին հաղորդեցէք փոխադարձ ողջոյններս ինչպէս նաեւ իւր պարագաներուն:

Ձեզ եւս ջերմապէս ողջունելով ու յաջողութիւն ցանկալով,

Մնամ աղօթանուէր,

ԺՉ.

Théotig, B. P. 295
Nicosia (Cyprus)

Նիկոսիա, 15 Փետր. 1927

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ամսոյս 2 թուակիրս:- «Սիոն»էն իմացայ բարի լուրը Ն. Ամենապատուութեան ապաքինումին[86]: Ամէնքս ալ ուրախացանք: Մէյմըն ալ չտեսնէ՛ ամէնուս սիրտը թունդ հանող ատանկ հիւանդութիւն: Համբո՛յր իր օրհնեալ աջին: Արդեօք արժանի պիտի ըլլա՞մ օր մը այդ համբոյրս իմ շուրթներովս ալ դրոշմելու եւ Ս. Տեղեաց համար վաղեմի բաղձանքս գոհացնելու:

*Ներփակ պիտի գտնէք Ե[րուսա]ղ[է]մ.ի *Յովսեփայ Աղբիւրը*: Այս պատկերն ի Գորֆու նկարիչ Ա. Մուրատեանէն[87] էի ձեռք ձգեր: Կը հաճի՞ք

[86] Եղիշէ պատրիարքի հիւանդութեան ու ապաքինումի տեղեկութիւնը կը կարդանք *Սիոն*ի Փետրուար 1927ի թիւին «Ս. Յակոբի ներսէն» բաժնին մէջ, էջ 64:

[87] Նկարիչ Աւետիս Մուրատեան ծնած է 15 Ապրիլ 1895ին, Սեբաստիա: Կրթութիւնը կը ստանայ ծննդավայրին մէջ՝ աշակերտելով Վարուժանի, Գաբիկեանի եւն.: Ա-

լիակատար ծանօթութիւններ մը կցել անոր վայրին, դիրքին ու հնութեանը մասին, եւ պատկերովը միասին ինձ վերադարձնել: Ասկէ առաջ սխալմամբ Բաբգէն Ս.ի (ամօթով եմ իր մօտ՝ խոստացած յօդուածս ուշացնելուս համար) *Աբրահամու աղբիւր* էի ըսեր, եւ Ն. Սրբազնութիւնը «ատանկ տեղ չկայ հոս» ըսեր էր, եւ ամենայն իրաւամբ:

*Հոս ունիմ պատուական բարեկամ մը եւ աշխատակից միանգամայն. անգամ մը ըսի կարծեմ. Գուրգէն Տ. Վարդանեանը: Կ'ուզէ տեղեկանալ ձեր երեքէն մէկէն (դուք, Բաբգէն Ս[րբազան]. եւ կամ Դուրեան պատր[իարք].) թէ *Վանափուր անուն ած.ի մը գոյութիւնը կ'ընդունի՞ մեր դիցաբանութիւնը, թէ ոչ զայն կը նկատէ մէկ վերադիրը Արամազդայ:* Երկտող պատասխան մը, խնդրեմ, ինծի գրելիք մէկ յօդուածին առթիւ է: Աղս հատնի՝ վրանիդ կը վազենք այսպէս. ներողամիտ եղէք, սիրելիդ իմ Սրբազան: Մեծարանաց հաւաստեօք՝

Թէոդիկ

ԺԷ.

Նիկոսիա, 21-2-27

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ամսոյս 15 թուակիրս. ի ձեռին ունիմ 8 փետր. թուակիրը՝ ներփակ բացատրականին հետ (Բաբգէն Ս.ի): Շնորհակալութիւն:- Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ապաքինման լուրը շատ ուրախացուց զմեզ: Ամէնքնուս աղօթքն անպակաս է՝ իր կատարեալ կազդուրմանը մասին: Մեր աղօթքին չափ նուիրական՝ կայ մանաւանդ Միաբանութեանդ գուրգուրանքը: Մեծ յոյս ունինք որ գարնանաբեր օրերն ալ պիտի նպաստեն իր առողջութեանը:- Թող ինք ողջ ըլլայ եւ զրկէ տարեցոյցս իր թանկագին աշխատակցութենէն: Թերեւս այս յոյսս ալ ի սպառ կորած չէ դեռ, եւ Ն. Ամենապատուութիւնը թերեւս կը հրահանգէ ձեզ կամ ձեր մէկ կարգակցին, որ իր թուղթերու գանձարանէն պատրաստ բան մը շնորհուի 28ի հատորիս համար: Եւ ասիկա ի մօտոյ նորէն ձեր ձեռքը կը պագնէ: Կը տեսնէ՞ք, ո՜րքան յամառ եմ խնդրանքիս եւ յոյսիս մէջ, հակառակ կազմիս տկարութեանը: Մեծարանաց հաւաստեօք եւ մշտանոյն սիրով՝ Թէոդիկ

Յ. Գ. Կրնաք «Ազգապատում» ղրկել նաեւ հաստատութեանս:

ԺԸ.

Նիկոսիա, 20-4-27

Սիրելի Սրբազան Հայր,

պա կ'ուսանի Կ. Պոլսոյ Գեղարուեստից բարձրագոյն վարժարանի մէջ: Ցեղասպանութեան տարիներուն, շնորհիւ նկարելու տաղանդին, զերծ կը մնայ տեղահանութենէ եւ Ֆերհատ անունով կ'ուսուցչագործէ Սեբաստիոյ գեղարուեստից վարժարանին մէջ: Ձինադադարին կ'անցնի Պոլիս, հոնկէ՝ Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս, Եւրոպա եւն.:

Նոր հանդիպեցայ ի լրագիրս, թէ անկումի արկած մըն էք անցուցեր: Անցած ըլլայ: Անկումներուն գերադրականը 3½ տարի առաջ ողջունած ըլլալով, գիտեմ թէ ի՛նչ զարհուրելի բան է ատիկա: Կը մխիթարուիմ, խորհելով որ երկուքնուս ալ անկումները շատ հեռի են բարոյական մարզէն, կեն-դանո՛ւյն մահացումէն: Եթէ ժամանակնիդ ու տրամադրութիւննիդ թոյլատու ըլլան, գրէիք ինծի որ եւ է հետք չէ մնացած անկէ, որպէսզի սիրտս հանգստանայ բոլորովին:- Բաբգէն Ս.ի քով ամօթով եմ շիտակը: Բառ առ բառ կրկնէիք այս խօսքս Ն. Սրբազնութեան: Բայց եթէ գար ու տեսնար վիճակս՝ ինքը կ'ըլլար ա. մեղքըցողը: Մեղքդ քաշեմ, Աւագ Շաբաթը եւ Զատկի արձակուրդս անցուցեր եմ գիշերական տքնութեամբ. Փարիզ ձեռագիր հասցնելու անձուկով: Քս. յարեաւ ի մեռելոց: Ձերդ՝ Թէոդիկ

[Ձախ լուսանցքին] Կը համբուրեմ նաեւ ապաքինեալ Ս. Պատրիարք Հ. Ս. Աջը: Ած լսեց աղօթքս:

ԺԹ.

Նիկոսիա, 17-5-27

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ապր. 20 թուակիրս: Մեծ հաճոյքով ընթերցայ «Արեւ»ի մէջ Ձեր նախագահութիւնը *«Արարա»ի յուշարձանի բացման հանդէսին,* որմէ հասու եղայ թէ բոլորովին ապաքինած էք[88]: Կ'ուզեմ անպայման ունենալ *նոյն յուշարձանին լուսանկարը:* Հերու Փարիզի կամաւորներու յուշարձանին պատկերն էի դրեր «Մահագրական»իս մէջ՝ պատշաճ յիշատակութեամբ[89]: Չ'ա՞րժեր որ 28իս մէջ նոյնն ընեմ «Արարա»ի համար: Ուստի այդ յուշարձանը եթէ լուսանկարուած է, իմ հաշուոյս օրինակ մը գնէիք եւ *շուտ* ինծի ղրկէիք. իսկ եթէ ոչ՝ իմ հաշուոյս լուսանկարել տայիք եւ *սեւ փայլուն թղթի վրայ* քաշուած օրինակ մը ինծի փութացնէիք: Իս սիրելնուդ ապացոյցը նոր չէ՛ որ պիտի տեսնեմ: Մինչեւ այս պատկերին ինձ ժամանումը՝ պիտի մնամ անձկութեան մէջ:- Հոգիս ի դող ընթերցայ նաեւ Ամենապատիւին դանակի տակ պառկիլը: Ած. կատարեալ բժշկութիւն տայ, ուրիշ աղօթք չունինք մեր շուրթերուն վրայ:- Բարեւներ իմ հարցնողաց:- «Սիոն» հետզհետէ կ'աղուորնայ կոր:

Ձերդ սիրով՝ Թէոդիկ

Ի.

Երուսաղէմ, 1 Յունիս 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացայ Մայիս 17 թուակիր Ձեր քարթը: Ստացած եմ նաեւ ժամանակին Փետրուար 15 եւ 21 երկու քարթերնիդ, երբ արկածի մը հետեւանքով անկեալ դնէի ի մահիճս: Քիչ մնաց արկածամահ պիտի ըլլայի, ձախակողման վանդակիս մէկ ոսկորին բեկանումով գործը անուշ տեղը

[88] Տե՛ս «Արարայի յուշարձանին բացումը», *Արեւ*, 28 Ապրիլ 1927:

[89] *Ամէնուն տարեցոյցը 1927*, էջ 628:

կապեցինք: Սակայն ես, մանաւանդ սկիզբի օրերը, բաւական սուր ցաւեր ու գալարումներ ունեցայ: Ասոր վրայ աւելցուցէք Սրբազան Պատրիարքի դաժան ու երկարատեւ հիւանդութիւնը, որ մեզ տագնապի ու շփոթի մատնեց, ալ դատեցէք թէ կրնայի՞նք ի վիճակի ըլլալ ուրիշ բաներով զբաղելու: Ատոր համար չեմ կարծեր թէ մեղադրէք զիս, լռութիւնս զանցառութեան վերագրելով:- Գանք հիմայ Ձեր գիրերուն:

Սրբազան Պատրիարքը Վանատուր անուն աստուածի մը գոյութիւնը չ'ընդունիր եւ Արամազդի վերադիրը կը համարի, թէեւ, կ'ըսէ, կան ոմանք, որ կը կարծեն թէ եղած ըլլայ այդ անունով աստուած մը[90]:

Կը վերադարձնեմ Ձեր ղրկած պատկերը: Տակը գրուած Յովսեփայ Աղբիւրը սխալ է, պէտք է ըլլայ Փիլիպպոսի Աղբիւրը, ինչպէս ճշդած եմ պատկերին ետեւ[91]:

Ձեզ համար յատկապէս նկարել տուի Արարայի[92] Հայ լեգէոնականներու Յուշարձանը, որմէ երկու հատ, մեծ եւ փոքր, կը ներփակեմ: Առանձին թուղթի մը վրայ օրինակուած են վրայի արձանագրութիւնները: Ասոնց կցած եմ խմբանկար մը Յուշարձանի բացումէն առաջ: Յուշարձանի կոթողը ծածկըւած է Անգղիական, Ֆրանսական եւ Հայկական դրօշակներով: Ներփակ միւս երկու նկարները առնուած են 1925 Հոկտեմբեր 25-ին աճիւններու հանդիսաւոր թաղման օրը: Ծանօթութիւնները կարդացէք նկարներուն ետեւի կողմը:

Վիրահատութիւնը կատարելապէս յաջողեցաւ Սրբազան Պատրիարքի վրայ: Վէրքը գրեթէ սպիացած է եւ կը յուսամ թէ քանի մը օրէն Ֆրանսական հիւանդանոցէն դառնայ Պատրիարքարան:

Մնամ ջերմագին ողջոյններով,
Աղօթանուէր

---

[90] Եղիշէ արք. Դուրեանի նիւթին շուրջ կատարած ուսումնասիրութիւնները հրատարակուած են յետմահու՝ *Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանութիւն*, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1933, էջ 31-33:

[91] Հակառակ Մեսրոպ սրբազանի ճշտումին, Փիլիպպոսի աղբիւրին անունը նշուած է սխալ՝ «Դաւթի աղբիւր» (տե՛ս 1929ի տարեցոյցը, Գուրգէն Տէր Վարդանեանի «Ջրապաշտութիւն» յօդուածը, էջ 329): Հարկ է նշել, թէ 1929ի տարեցոյցի պատրաստութեան ընթացքին՝ 24 Մայիս 1928ին իր մահկանացուն կը կնքէ Թէոդիկ: Տարեցոյցին այս հատուածը պատրաստուած է անոր մահէն ետք եւ պատրաստողները հաւանաբար տեղեակ չէին Թէոդիկ-Նշանեան նամակակցութեամբ կատարուած ճշտումին:

[92] Արարայի ճակատամարտը տեղի ունեցած է 19 Սեպտեմբեր 1918ին, ֆրանսական բանակի ենթակայութեամբ գործող Հայկական (Արեւելեան) լեգէոնի եւ օսմանեան բանակի միջեւ: ճակատումը աւարտեցաւ հայկական զօրքի յաղթանակով, որուն շնորհիւ դաշնակիցներու՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի զօրքերը հասան վերջնական յաղթանակի ու գրաւեցին Պաղեստինը: Հայկական կողմը ունեցաւ 23 նահատակ:

ԻԱ.

Նիկոսիա, 14-6-27

Սիրելի Սրբազան Հայր,

Ի ձեռին ունիմ ամսոյս 1 թուակիր նամակնիդ՝ ներփակ յուշարձանի եւ թաղմանական հանդէսի պատկերներուն հետ: Շատ շնորհակալ եմ որ լիուլի գոհացուցիք զիս՝ ի զարդ 28ի հատորիս ատոնք հայթայթելով եւ նահատակներուն անունները միառմի թուելով[93]: Փիլիպպոսի աղբիւրին ծանօթութիւնն ալ անցուցի. միայն մութ մնաց ինձ սա պարագան թէ, երբ «Բառարան Ս. Գրոց»ը[94] կ'ըսէ՝ Փիլիպ. սրկւգ. Եթովպացի ներքինիէն կանչուեցաւ եւ զայն դարձի բերաւ, Եթովպիա՞ մկրտած կ'ըլլայ ներքինին՝ թէ Երուսաղէմ: Ինչ որ է, խնդիր չէ, անցեալը միշտ միգամած կ'ըլլայ. «Տիւմանը տօղրու չըգսըն»[95]: Անցեալ ըլլայ Զեզի եւ Ամենապատիւին. սրտագին խընդակցութիւններս՝ երկուքնուդ ալ, նաեւ համբոյրներս ձեր սուրբ աջերուն: Յուսամ, հիւանդանոցէն վանք վերադարձած ալ է Ն. Ամենապատուութիւնը: Ձերդ խոնարհ,

Թէոդիկ

ԻԲ.

Նիկոսիա, 29-6-27

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ ամսոյս 14 թուակիր քարտս:- Այս տարի շատ ձանձրոյթ առթեցի Ձեզի. ի՞նչպէս պիտի փոխարինեմ, շուարեր մնացեր եմ: Ահա՛ նոր մը.- … Ձեռք անցուցի հետաքրքրական պատկեր մը որ կը ներկայացնէ *Դամասկոսի «Ամավի» ? մզկիթէն մաս մը՝ Յովհ. Մկրտիչի դամբանով, ըստ աւանդութեան,- իսլամաց նշ. ուխտատեղի:* Կ'ուզեմ լուսաբանուիլ այս մասին: Եթէ դուք կ'անգիտանաք, լրացուցիչ տեղեկութիւններ կարելի՞ է որ քաղէք Դամասկոսի Ձեր տեսուչ վարդապետէն, իսկոյն քարտ մը փութացնելով անոր, քանզի ժմնկ. քիչ կայ:

Այս ձանձրոյթը Ձեզ ուսելուս առթիւ, միտքս կ'իյնայ հայկ. առածը. «Մի՛ տար՝ մի՛ վարժեցներ. տուի՞ր՝ մի՛ դադրեցներ»:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր Ս. Աջը կը համբուրեմ: Ուրախութիւնն ընդհանուր է: Ն. Ամենապատուութեան պատրաստ ձեռագիրներուն գանձարանէն թղթիկ մը գոնէ պիտի չկրնա՞ք վերցնել իր թոյլտուութեամբ, ի զարդ 28ի հատորիս…: Չօճուգ աղլար՝ տէրտի չէօրէկ[96]: Ձերդ խոնարհ

Թէոդիկ

---

[93] Արարայի յուշարձանի բացման լուսանկարներն ու նկարագրականը հրատարակուած են *Ամէնուն տարեցոյցը 1928*, էջ 647-48:

[94] *Բառարան Ս. գրոց*, տպ. Ա. Յակոբ Պոյաճեանի, Կ. Պոլիս, 1879:

[95] Թրք. առած մը, ուղղակի իմաստը՝ ծուխը ուղիղ ըլլայ: Իմաստը՝ շիտակ, լաւ, գեղեցիկ ըլլալը այդքան ալ էական չէ, միայն թէ գործը ձեւականօրէն լաւ երեւի, ըստ պատշաճի կատարուած ըլլալը գիտցուի, կը բաւէ:

[96] Մանուկը կու լայ, ուզածը թխուածք է (թրք.):


IMPRIMERIE MASSIS
TOUS TRAVAUX EN TYPOGRAPHIE
ÉDITIONS
208bis RUE LAFAYETTE, PARIS (10e)

Թէոդիկի ձեռագիր նամակներէն մին

ԻԳ.

16 Յուլիս 27

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ստացած եմ անցեալ ամսոյ 14 եւ 19 թուակիր երկու քարթերդ: Անմիջապէս Դամասկոսի մեր Տեսուչ Սուրէն վարդապետ Քէմհաճեանի[97] գրեցի ու ղրկէ Ձեզ հասցնելու յանձնարարեցի որ տեղւոյն Ամավիյէ Մզկիթին վրայօք պատմական, աւանդական եւայլն տեղեկութիւններ քաղէ տեղացի իրազեկ անձերէ եւ փութով համար:

Ուրախ եմ որ Վարդապետը յանձնարարութիւնս կատարեց լրիւ ուղարկելով ներփակեալը ու ես կարողացայ միջնորդ ըլլալ ի գոհացումն Ձեր հարցասիրութեան:

Եթովպացի Ներքինին Փիլիպպոսէն մկրտուած է Պաղեստինի մէջ, Երուսաղէմէն Գազա տանող ճամբուն վրայ, ուր կը գտնուի այժմ Փիլիպպոսի աղբիւրը, որուն նկարը ունիք: «Բառարան Ս. Գրոցին» արժէք մի տաք: Կարդացէք «Գործք Առաքելոցի» Ը գլուխը համար 26-40, այն ատեն Ձեզ համար մութ մնացած կէտը կը պարզուի:

Սրբազան Պատրիարքէն այս տարի բան մի սպասէք: Ինք 15 օրէ ի վեր Յոպպէ կը գտնուի օդափոխութեամբ ու քանի մը

[97] Ծնած է 1884ին, Կ. Պոլիս: 1907ին կը հասնի Երուսաղէմ, ուր 1918ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, Մկրտիչ արք. Աղաւնունիի ձեռամբ: 1922-26՝ տեսուչ Պէյրութի, 1926-29՝ տեսուչ Դամասկոսի: Վերադառնալով Երուսաղէմ, կը ստանձնէ պատասխանատու պաշտօններ: 1951ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, Գէորգ Զ. կաթողիկոսի ձեռամբ:



Երուսաղէմ, 17 Հոկտեմբեր 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ընդունած եմ Օգոստոս 24 քուակիր յարձակում եւ Սեպտեմբեր 20 թուակիր նամակդ յարիզէն:

Ուրախ են ինձ հետ նաեւ միւս Ձեր քարեկամները նկատի առնելով հասարակական ոստանը յարիզ, ուր տարակոյս չկայ թէ լիուլի գոհունակութեան պիտի կրնաք գտնել Ձեր գրական հետաքրքրութեանց համար: Ցաւով կը տեսնենք յառաջիկայի տպագրելի Ձեր ստեղծագործութեանց ցանկին մէջ ներառուած գործերուն մէկ քանիին անհետացումը, որոնց մասին կը խօսիք նամակիդ մէջ: Սրտագին կը մաղթենք Ձեզ յիշեալ գործերուն ալ յաջող հրատարակութիւն, որպէսզի ամէնքը կարենան ծանօթանալ անոնց բովանդակութեան հետ: Ձեր գրական ներկայ ստեղծագործութեանց ալ անհամբեր կը սպասենք ընթերցելու, որոնց մասին մեր կարծիքը յայտնելու համար:

Ձեզ նամակիդ էական խնդրոյն՝ հետեւելու, որ անոնց ստեղծագործութեանց մէջ հայ գրականութեան ոճին եւ լեզուին մասին ալ ակնարկ մը ընէք, ուրախ եմ հաստատելու, որ մեր

ԻԵ.

[այցեքարտ]

Նիկոսիա, 25-8-27

ԹԷՈԴԻԿ Հաստատելով իր երէկի բացիկը, կը խնդրէ որ նորոգ հանգ. Սիմոն ծ. վ.ի[99] (Թելեան) լուսանկարը Մեսր. Եպսկ. Նշանեանը բարի ըլլայ ուղարկելու իսկոյն Փարիզ (208, bis, Rue Lafayette):

ԻԶ.

Théotig
Impr. “Massis”
208 bis. Rue Lafayette
Paris (10)

Փարիզ, 20-9-27

Սիրելի Սրբազան Հայր,

Հինգ օրէ ի վեր Փարիզ կը գտնուիմ արդէն, լքած ճգնաւորի կեանքս՝ որ ծանօթ էր Ձեզի: Չգիտնա՞ք թէ հոս տարբեր կենցաղ ունիմ. իմ խեփորիս մէջ ապաստանած եւ շնչելով Տպարանիս սեւ մելանին անուշ հոտը՝ կը տքնիմ կոր նորէն, կերպարանելու համար 28ի հատորս: Իցի՛ւ թէ կլիման ինծի յարմարէր ու չբաժնուէի այս «լոյսի քաղաք»էն: Չեմ հաշտուած դեռ շրջասփիւռիս. ցնցումը շատ զօրաւոր եղած է. հինին ու նորին տարբերութիւնը վիթխարի է:

*Հրաչեաս զոր 1903էն ի վեր կը ճանչնամ իր բարի սրտին ու իրեն հետ ունեցած մտերմութեամբս ու գործառնութեամբս, պատճառ եղաւ որ հրաժարիմ կիպրական կեանքէս ու նետուիմ հոս՝ կուտեմպէրկեան արուեստին ունեցած սիրոյս գոհացում տալու համար, սէ՛ր որ տարիներէ ի վեր ակամայ ընդհատուած էր: Խենդութիւն էր, գուցէ, իմ ըրածս. բայց յառաջացած տարիք ունեցողներու խենդութիւնը կ'ունենայ լրջութեան կողմ մը անշուշտ: Հրաչեաս զՁեզ կը ճանչնայ հանգուցեալ Օրմանեան Ս.ի միջոցաւ, որ յաճախ Ձեր խօսքը կ'ընէ եղեր իրեն, իբրեւ մին միաբանութեանդ արժէքաւոր անդամներէն: Այնպէս որ երբ Ձեր խօսքը բացուեցաւ, մօտէն ծանօթի մը պէս արտայայտուեցաւ Ձեր մասին:

[99] Ծնած էր 1870ին, Կ. Պոլիս: Կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի 1898ին, Երուսաղէմ: Տեսչական պաշտօններ կը վարէ Ս. Աթոռէն ներս: Մահագրականը հրատարակուած է 1928ի տարեցոյցին մէջ, էջ 651-52, առանց լուսանկարի:

Հրաչեայ Տէր Ներսէսեան[100], ինչպէս յայտնի է Ձեզի, ի Պոլիս թէ՛ տպարանատէր էր եւ թէ արտօնատէր, տնօրէն «Վերջին լուր»ի[101]՝ որ այժմ եւս կը շարունակուի «Նոր լուր»[102] նոր անուան տակ,- նոյն ատեն մօտիկ ազգականը[103] Օրմանեան Ս.ի՝ որուն քեռորդիներուն (Պօղոսի եւ մանաւանդ Արաքսիի ու Սիրարփի Տէր Ներսէսեաններու[104]) շահերուն պաշտպանութիւնը ստանձնած է: Այս առթիւ ինծի շատ շահեկան խնդիր մը հաղորդեց. ատոր կարեւորութիւնը նկատի առնելով, ես ալ կը փութամ Ձեզի պարզել զայն եւ խնդրել որ Ձեր կարելին ի գործ դնել՝ այդ խնդրոյն լաւագոյն վերջ մը տալու համար:

Խնդիրը այս է.- Օրմանեան Ս. Երուսաղէմէն մեկնելու պահուն[105], բաց ի իր ձեռագիրներէն, Ձեզի ձգած է կարգ մը գոյքեր եւ արժէքաւոր առարկաներ: Այս մասին Դուք, Գայըգճեան[106] եւ Տէրտէրեան[107] Եպս.ներ ստորագրած եւ Օրմանեան Ս.ի քեռորդիներուն ղրկած էք երկու նամակ, ըսելով թէ յիշեալ գոյքերը Ձեր քով աւանդ կը գտնուին եւ զայնս պիտի հասցնէք իրաւատէրերուն առաջին պատեհութեամբ: Այս նամակներուն թուականներն են 24 յնվր. 1917 եւ 15 դեկտ. 1918:

---

[100] Ծնած էր 1881ին, Կ. Պոլիս, ուր յաճախած է Բերայի աւստրիական ու գերմանական վարժարանները: Տպագրական գործին հմտանալու համար քանիցս ուղեւորուած է Եւրոպա: Երէց եղբօր՝ Վահրամի հետ հիմնած են Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան տպարանը, ուր հրատարակած են կարեւոր գիրքեր:

[101] Հրատարակուած է Կ. Պոլիս, 1914-24ի միջեւ: Խմբագիրներու շարքին եղած են Երուանդ Օտեան, Յակոբ Տէր Յակոբեան, Յովհաննէս Ասպետ, Վահան Թոշիկեան եւն.:

[102] Հրատարակուած է Կ. Պոլիս, 1924-54 շրջանին: Արտօնատէրը եղած է Վարդան Թովմասեան, խմբագիրը՝ Վահան Թոշիկեան, Զարեհ Նեմցէ, Աբիկ Մուպահեաճեան եւն.:

[103] Հրաչեայ Տէր Ներսէսեան Մաղաքիա արք. Օրմանեանի քրոջ՝ Ագապիի կեսրարթոռն էր:

[104] Մաղաքիա արք. Օրմանեանի քոյրը՝ Ագապի (1861-1905), ամուսնացած էր Միհրան Տէր Ներսէսեանի (1857-1914) հետ: Զոյգին անդրանիկ զաւակը՝ Պօղոս-Վահան ծնած էր 1892ին, Արաքսիա-Իսկուհի՝ 1894ին եւ անուանի արուեստաբան, բիւզանդագէտ ու հայագէտ Սիրարփի-Վերոնիկէ՝ 1896ին:

[105] Օրմանեան, որ Երուսաղէմ կը գտնուէր Ազգային վարչութեան կողմէ որպէս լիազօր պատուիրակ, հոնկէ կը հեռանայ պետական հրամանով, Նոյեմբեր 1917ին:

[106] Ծնած է 1861ին, Կ. Պոլիս, աւազանի անունը՝ Պետրոս: 1886ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Երուսաղէմ: Պատասխանատու պաշտօններ կը վարէ Ս. Յակոբեանց վանքէն ներս, տարբեր թուականներու ստանձնելով նաեւ կալուածոց եւ ելեւմտից տեսուչի պաշտօնները: Եպիսկոպոս կ'օծուի 1924ին:

[107] Դաւիթ վրդ. Չնքուշցի, ծնած է 1872ին, ձեռնադրուած՝ 1898ին, 1907-21՝ եղած է աւագ լուսարար: 1 Սեպտեմբեր 1921ին իր յարկաբաժնին մէջ դաշունահարուած է մարաշցի Սարգիս Յարութիւնեան երիտասարդին կողմէ ու մեռած՝ 4 Սեպտեմբերին:

Այդ թուականներէն ի վեր զարմանալի է որ ո՛չ Դուք միջոցը գտած էք այդ աւանդը յանձնելու իր տէրերուն, եւ ոչ ալ զանազան անձերու միջոցաւ զանազան ատեններ, երբ Ձենէ պահանջուած է, յանձնած էք:

Այդ գոյքերուն մէջ կը գտնուէին, բաց ի զգեստեղեններէ, գորգէ, Սրբազանին ականակուռ պատուանշանները եւ խաչը: Երբ այս վերջիններուն մասին Հրաչեայի եղբօր՝ Տիրան Տ. Ներսէսեանի կողմէ (Պէյրութ գտնուած միջոցին) դիմում եղաւ Միաբանութեանդ, պատասխանուած է անիմանալի կերպով, թէ այդ պատուանշանները պէտք է թուրք կառավարութեան վերադարձուին!... Այս կէտերը երբ իմացայ Փարիզ հասնելուս, խորհեցայ իւրովի «Երբէ՞ն ի վեր Երուսաղէմի Հայ Վանքը թուրք կառավարութեան շահերուն պաշտպան հանդիսացած է, մինչդեռ Ձեր եւ Ձեր կարգակիցներէն երկուքին ստորագրութեամբ նամակներ կան՝ թէ անոնք <u>աւանդներ</u> են Ձեր քով եւ որքան իմ խելքս կը հասնի, աւանդը միայն իրաւատէրերուն կը յանձնուի, աւա՛նդ որուն վրայ հանգուցեալ Սրբազանը իր իսկ ձեռքով գրած է թէ ի դէպ մահու անոնք պիտի յանձնուին իր քեռորդիներուն»: Պարագա՛յ՝ զոր դուք կը հաստատէք արդէն ձեր վերոգրեալ 2 նամակներով:- Վերջապէս, սիրելի Սրբազան Հայր, այս մասին Հրաչեայ Տ. Ներսէսեան 9 յնս. 1927 թուականաւ թէ՛ Տնօրէն Խորհուրդիդ եւ թէ Ս. Պատրիարք Հօր զատ զատ նամակներ գրած է, եւ զարմանալի է որ ատոնց պատասխանները չէ ստացած դեռ, ինչ որ տարրական քաղաքավարութեան պահանջն էր գոնէ...:

Սիրելի Սրբազան Հայր, այս տողերը Ձեզի գրելով, նպատակս շատ պարզ է: Չեմ ուզեր որ Ձեր սիրելի անունը խնդրոյ նիւթ դառնայ. եւ ես վըստահ եմ որ եթէ այս խնդիրը միմիայն Ձեր անձէն կախեալ ըլլար, մինչեւ հիմա վաղուց կարգադրուած կ'ըլլար: Ո՞վ է արդեօք այս խնդրոյն մէջ խոչնդոտ հանդիսացող եւ դուք չէք կրնար հարթել զայն: Հրաչեան նեղսրտած այսքան ատեն իր դիմումներուն ապարդիւն մնալէն, առաջադրած էր հրապարակային եւ օրինական միջոցներու դիմելու, բան մը զոր առկախեցի՝ մինչեւ Ձենէ ստանալիք պատասխանս:

Անձկագին սպասմամբ Ձեր պատասխանին, կը մնամ Ձերդ մշտանոյն սիրով՝

Թէոդիկ

ԻԷ.

Imprimerie MASSIS
Tous Travaux en Typographie
Éditions
208 bis. Rue Lafayette, Paris (10)

Paris, le 14 հոկտ. 1927

Սիրելի Սրբազան Հայր,

Կը հաստատեմ նախորդ նամակս՝ զոր հոսկէ էի գրեր:- Կեանքս հոս զարմանալի դարձաւ: Ունիմ գրաշարատան կից «լուցկիի տուփ» խցիկ մը

անպատուհան, ուր ելեկտր. լոյսով կ'աշխատիմ միայն, հոն կը ննջեմ ու հո՛ն կը ճաշեմ: Ած. ինծի համբերութիւն տայ սա *սին* տարօքս…:

*Գրաշարս հոս ունի առժամեայ օգնական մը, *Յարութիւն Թաշճեան* անուամբ: Այս երիտասարդը եղբօրորդին է եղեր Միաբանութեանդ անդամներէն Տ. Յակոբ վրդ. Թաշճեանի[108]: Ինքը գրեթէ անգործ կը սեպուի տիրող քրիզին հետեւանօք, եւ շատ գէշ կ'ապրուի, մանաւանդ որ իր մայրը Ամերիկա ղրկելուն առթիւ ծախսեր ըրած ըլլալով՝ դեռ կը հեծէ պարտքերու տակ, ինծի աղաչեց որ ուղղակի գրեմ իր հօրեղբօր՝ Թաշճեան Հայր Սուրբին, բայց զինք յանուանէ միայն կը ճանչնամ: Ուստի արգահատելով իր կացութեան՝ ներկայս կը գրեմ Ձեզ, խնդրելով որ դուք բարեխօս ըլլաք յիշեալ Հայր Սուրբին մօտ, եւ իր եղբօր թշուառ վիճակը պարզելով՝ յաջողիք ղրկել տալ իրեն կարեւոր գումար մը՝ որուն իսկապէս անհրաժեշտ պէտք ունի այս երիտասարդը: Ինքը բնաւ ծոյլ մէկը չէ, բայց գործերը սակաւ ու կայուն ըլլալուն՝ շատ կը նեղուի եւ հիմա *առժամապէս* կ'աշխատի հոս, գրեթէ կէս թոշակով: Իցի՛ւ թէ պանդխտութեան մէջ գտնուող այս տղուն համար կարենայինք օգնութիւն մը փութացնել շուտով, ես՝ իմ գրովս, դուք՝ Ձեր լեզուովը որուն ազդեցիկ ըլլալուն վստահ եմ:

Գիրքս գալ շաբթու կ'աւարտի, ես ալ հետը…

Ձերդ միշտ անկեղծ
Թէոդիկ

ԻԸ.

Երուսաղէմ, 17 Հոկտեմբեր 1927

Սիրելի Պարոն Թէոդիկ,

Ընդունած եմ Օգոստոս 24 թուակիր քարթերնիդ Կիպրոսէն եւ Սեպտեմբեր 20 թուակիր նամակնիդ Փարիզէն:

Ուրախ են ինձ հետ նաեւ տեղիս Ձեր բարեկամները Նիկոսիայի անձուկ շրջանակէն ու ամայութենէն ազատելով փոխադրուելնուդ համար համաշխարհային ոստանը Փարիզ, ուր տարակոյս չկայ թէ լիուլի գոհացում պիտի կրնաք գտնել Ձեր գրական հակումներուն, մօտէն հսկելով մանաւանդ յառաջիկային տպագրելի Ձեր ՏԱՐԵՑՈՅՑ-ներուն: Կ'ըսեն թէ Փարիզի մթնոլորտը ծերերն իսկ երիտասարդացնելու հրաշագործ զօրութիւնն ունի: Սըրտագինս կը մաղթեմ Ձեզ լիակատար առողջութիւն ու երիտասարդական ուժ ու կորով, եռանդ ու ոգի, որպէսզի ամէն տարի ՏԱՐԵՑՈՅՑ-ներուդ միջոցաւ Ամանորի սեղաններ պատրաստէք յաւելեալ եւ ճոխացեալ համադամներով: Ձեր բարեկամներն ու համակիրներն ալ անշուշտ մօտէն կամ հեռուէն կը ղրկեն սեղանիդ աղպղպեղն ու համեմները:

Գանք նամակիդ էական խնդրոյն: «Հանգուցեալ Օրմանեան Սրբազան ճիշդ է որ ինձ եւ Մատթէոս եպիսկոպոսի ու Հանգուցեալ Դաւիթ Ծայրա-

[108] Ծնած է 1878ին, Կ. Պոլիս: Ձեռնադրուած էր 1913ին: 1927ին կը վարէր Յոպպէի տեսչութիւնը:

գոյն վարդապետի յանձնած էր գոյքերը քեռորդիներուն (Պօղոս, Արաքսի եւ Սիրարփի) ձեռքն հասցնելու պաշտօնը, եւ մենք ժամանակին այս պարագան նամակներով տեղեկացուցինք յիշեալներուն: Բայց անոնք այդ մասին մեզի հետ որեւէ յարաբերութիւն չունեցան ու մէկէ աւելի անգամներ գրեցին Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին, այն ալ ոչ ուղղակի իրենք, այլ Հրաչեայ ու Տիրան Տէր-Ներսէսեաններու եւ այլոց միջոցաւ: Ես ու Մատթէոս Սրբազան (Դաւիթ վարդապետ վախճանած էր) տեսնելով որ այդ մասին Սրբազան պատրիարք Հօր հետ բանակցութիւններ կ'ըլլան, ամենայն ինչ յանձնեցինք Նորին Ամենապատուութեան, զգեստեղէնները, ըստ իրենց հրահանգին, աղքատներու բաժնելէ ետք: Հիմայ խնդիրը կը մնայ միմիայն Հանգուցեալի Խաչ նշանին ու պետական պատուանշաններուն վրայ, որովհետեւ ձեռք քաշած են եղեր նաեւ գիրքերէն ու գրութիւններէն, որոնք նաեւ յանձնուած են Սրբազան Պատրիարքի: Պատուանշաններն են հետեւեալները.- Պարսկական Շիրի Խուրշիտ[109], Մեճիտիյէ Ա[110], Օսմանիյէ Ա[111], Նոյնին ականակուռը ու Իմթիյազի[112] ոսկի եւ արծաթ մէտայլներ: Ունի նաեւ լանջախաչ մը, որ հազիւ 4-5 ոսկիի արժէք ունի, որովհետեւ քարերը ամբողջութեամբ կեղծ են: Սակայն ըստ օրինի հոգեւորականի մը խաչը անպայման կը պատկանի եկեղեցիին: Հանգուցեալ Սրբազանն իւր խաչը ժամանակին ստացած է Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, եւ, ինչպէս կը հաւաս-

[109] Իրանի խորհրդանիշը համարուող արեւի ու առիւծի այս շքանշանը հաստատած էր Ֆեթհ Ալի Շահ (1772-1834) եւ կը տրուէր բարձրաստիճան պաշտօնեաներու, օտարերկրեայ դեսպաններու ու զինուորականներու:

[110] Օրմանեան առաջին կարգի Մեճիտիէ շքանշանը ստացած էր պատրիարք ընտրութենէն (6/18 Նոյ. 1896) ու վաւերացումէն (17/29 Նոյ. 1896) կարճ ժամանակ ետք՝ 29 Դեկտ. 1896/10 Յունր. 1897ին, Սուլթան Ապտիւլհամիտէն: Շքանշանը հաստատուած էր 1852ին, Սուլթան Ապտիւլմեճիտի օրօք: Այս շքանշանը սովորաբար կը յանձնուէր նաեւ նորընտիր պատրիարքներուն, իրենց գահակալութեան առթիւ:

[111] Օրմանեան այս շքանշանը ստացած էր Սուլթան Ապտիւլհամիտէն, վերջինիս գահակալութեան տարեդարձին առթիւ, 19/31 Օգոստոս 1897ին: Շքանշանը հաստատած էր Սուլթան Ապտիւլազիզ, 1861ին (Մաղաքիա արք. Օրմանեան, *Խոհք եւ խօսք*, Երուսաղէմ, 1929, էջ 179):

[112] Շքանշանը հաստատած էր Ապտիւլհամիտ Ա., 1780ականներուն: 1878ին շքանշանը վերստին սկսաւ շնորհուիլ Ապտիւլհամիտ Բ. սուլթանի կողմէ:

տեն Արմաշական միաբանները[113], իրենը Միքայէլ Սալլանթեան[114] եւ Գաբրիէլ Այվազովսքի[115] եպիսկոպոսներուն (երկուքն ալ նախկին հռոմէականներ) յառաջագոյն գործածածներն են եղեր: Հետեւապէս այդ լանջախաչը կամ հոս կը մնայ կամ կը վերադառնայ Մայր-Աթոռ: Իսկ եթէ Սրբազան Պատրիարք հաւանի պատուանշանները ուղարկել, այդ պարագային հարկ անհրաժեշտ է որ երեք ժառանգորդներու (Պօղոսի, Արաքսիի ու Սիրարփիի) կողմէ ստորագրեալ եւ օրինական Մարմինէ մը վաւերացեալ փոխանորդագիր մը տրուի այն անձին, որուն կը յանձնուի ստանալ թողօնները: Բնական է որ հնարաւոր չէ գոհացում տալ այս կամ այն մէկու դիմումին երբ ինքնամատոյց կ'ըլլայ մէկ կամ միւս ժառանգորդի անունով: Ասիկա կը գրեմ ոչ-պաշտօնապէս, այլ ուղղակի իմ կողմէ: Եթէ յիշածս օրինական պայմանները լրացուին, ես ալ կարելիս կ'ընեմ պետական պատուանշանները Հանգուցեալ Օրմանեան Սրբազանի քեռորդիներուն հասցնելու համար: Թէեւ այդ պատուանշաններն ալ այնքան արժէք մը չեն ներկայացներ: Արծաթի գինն են միայն, բացի Իմթիյազի ոսկի մետայլէն եւ ականակուռ Օսմանիյէի գնդասեղի գլխու մեծութեամբ մաս մը ակունքներէ»:

Սիրոյ եւ յարգանաց ողջոյններ Ձեզ եւ Մեծ. Պ. Հրաչեայի:

Աղօթանուէր

ԻԹ.

Imprimerie MASSIS
Tous Travaux en Typographie
Éditions

---

[113] Արմաշու դպրեվանքը հիմնադրուած է 1889ին, Կ. Պոլսոյ մօտակայ Նիկոմիդիոյ գաւառի Արմաշ գիւղի Չարխափան Ս. Աստուածածին վանքին մէջ, Կ. Պոլսոյ Խորէն Աշըքեան պատրիարքի շրջանին, Մաղաքիա արք. Օրմանեանի տեսչութեամբ: Դպրեվանքի յայտնի շրջանաւարտներէն էին Կիլիկիոյ Բաբկէն Կիւլեսէրեան աթոռակից-կաթողիկոսը, Զաւէն Տէր Եղիայեան, Թորգոմ Գուշակեան, Մեսրոպ Նարոյեան, Գարեգին Խաչատուրեան եւն. պատրիարքները: Դպրեվանքը գոյութիւն ունենալէ կը դադրի 1915ը յաջորդած շրջանին:

[114] 1782ին ծնած է Կ. Պոլիս: Ուսում ստացած է նախ Լիբանանի Ս. Անտոնի վանքէն, ապա Մխիթարեաններու Ս. Ղազարէն: 1822ին վերադարձած է Հայց. Առաքելական եկեղեցւոյ գիրկը: Ուսուցչագործած է Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ, որու տեսուչն ալ եղած է: Հեղինակ է լեզուական, կրօնական եւն. հրատարակութիւններու: Վախճանած է 1851ին, Մոսկուա:

[115] Ծնած է 1812ին, Թէոդոսիա: 1826ին կը ղրկուի Ս. Ղազարու վանքը, ուր կը ստանայ իր կրթութիւնը եւ կուսակրօն քահանայ ձեռնադրուելով (1834) կը միանայ Մխիթարեան միաբանութեան: 1843ին կը դառնայ *Բազմավէպի* հիմնադիր-խմբագիրը: 1856ին կը վերադառնայ Մայր եկեղեցւոյ գիրկը: 1867ին եպիսկոպոս կը ձեռնարուի Մայր աթոռի մէջ: Հեղինակ է պատմական, բանասիրական, կրօնական ուսումնասիրութիւններու: Վախճանած է 1880ին, Թիֆլիս, ուր առաջնորդական պաշտօն կը վարէր: Յայտնի նկարիչ Յովհաննէս Այվազովսքիի եղբայրը:

208 bis. Rue Lafayette, Paris (10)

Paris, le 24 Նոյեմբեր 1927

Սիրելի Սրբազան Հայր,

Ա՛խ, ո՛րքան ամօթով մնացի քովերնիդ, գալէս ի վեր 2 նամակ գրեցի, երկուքին ալ իսկոյն գոհացում տուիք, ու դեռ ես պիտի պատասխանեմ:

Ըսեմ իսկոյն թէ ա. նամակիս նիւթն էր Տէր-Ներսէսեանի ժառանգականը՝ զոր համարձակած էի գրել, պարզապէս խնդրանքի մը բաւարարութիւն տուած ըլլալու համար: Պատասխաննիդ Պրն. Հրաչեայ ստացաւ շնորհակալութեամբ, իբր իրեն սեպհական նամակ, ու պիտի պատասխանէ ի մօտոյ: Բ. նամակս նոյնպէս ձանձրոյթ մըն էր, ձեր միջոցաւը Թաշճեան Հայր Սուրբի հաղորդելիք: Նոյնպէս «խաթր պէլասը»[116]. իր երբօրորդիէն դեռ առջի օր իմացայ թէ Հայր Սուրբը հաճեր է իրեն հանել 2 անգլ., իր նեղ օրին համար: Ո՛րչափ ուրախ եմ որ ցարդ անգործ՝ տպարանէ տպարան դեգերող այդ Հայորդին ի վիճակի եղաւ այդ գումարով սենեակի եւ այլ վարձուց պարտքերը տալու եւ մասամբ խեղճ չմնալու: Ես ալ իմովսեանն իրեն օգնեցի: Իցի՛ թէ ի մօտոյ տպարան մը մտնէր եւ ինքզինքը ազատէր:

Այսօր շնորհակալութեամբ ստացայ նոր տարւոյ ձեր արմաղանը, ներփակ քարտիկով, եւ սիրտս ալ հանգստացաւ որ 28ի -30- հատորներս անկորուստ եկեր գտեր են Ձեր Սրբազնութիւնը: Ըստ սովորականին, բարի եղէք Ձեր արդար իրաւունքը վար դնել, եւ մէյմէկ օրինակ նուէր տալ իմ կողմէս Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր եւ Բաբգէն Ս.ի, իսկ մնացեալ -27- օրինակը տեղաւորել Ձեր ծանօթներու լայն շրջանակին մէջ: Ձեր առողջութեան համար իմ աղօթքովս կը բաւականանաք անշուշտ, ցորչափ կը ճանչնաք սիրտս:

«Մէկ աչքերնիդ լայ՝ միւսն ալ խնդայ»- ինչպէս կ'ըսուի Պոլսի հայեվարով,- ի՛նչ պիտի ընէք չընէք, աշխատակցութիւննիդ պիտի շնորհէք կրկին, մինչեւ յառաջիկայ Մարտ ինձ փութացնելով որեւէ պատմական եւն. նիւթի շուրջ ձեր շահեկան յօդուածը, նաեւ թանկագին ձեռագրի մը որոնումն ու ընդօրինակութիւնը (որ վար չմնայ Խրիմեան Հայրիկէն): Լ. Բաշալեան[117] «ո՛ւր տեղերէն ալ կը գտնես ասանկ թանկագին ձեռագիրներ» ըսաւ ինձ, եւ ես իմ հպարտութեամբս չգոհացայ միայն, այլ եւ զայն Ձեզի պարտական ըլլալս եւ Ձեզի պէս եկեղեցականի մը լայն համակրութիւնը վայելելս խոստովանեցայ: Գիտեմ թէ -առանց տեսած ըլլալու- ձեր դիւանը շատ ճոխ է. խնդիրը մէջը մտնելուն եւ ճաշակաւոր քաղ մը ընելուն մէջ կը կայանայ: - Ասկէ զատ, 28ի հատորս *մահրում*[118] մնաց Ամենապատիւ Ս. Պատրիարք

[116] Նեղութիւն մը, որ յանձն առնուած է յարգելի անձի մը փափաքին ընդառաջելով (թրք. ասոյթ):

[117] Արեւմտահայ արձակագիր, հրապարակագիր, հանրային գործիչ, ծնած Կ. Պոլիս 1868ին եւ մեռած Փարիզ, 1943ին:

[118] Ձրկուած (թրք.):

Հօր մէկ գրուածքէն՝ իր հիւանդութեանը հետեւանօք: Հիմա որ Ն. Ամենապատուութիւնը շատերնուս աղօթքովը կազդուրուած է բոլորովին, Ձեր ճիտին պարտքը կ'իյնայ առնել իրմէ յօդուած ու քերթուած, հին տարուան աճին ալ հանելով[119]: Ես վստահ եմ որ Եղիշէ Արքեպիսկ.ի դարակը լի է պատրաստ ձեռագիրներով: Աչքս ետեւ չէք թողուր անշուշտ:

-Տեսաք անշուշտ որ 28ի հատորիս սկիզբը կար Վեհ.ին կենդանագիրը: 29իս սկիզբը պիտի զետեղեմ Եղիշէ Ս. Պատրիարք Հօր կենդանագիրը, նոյն posenով, վեղարաւոր եւ գաւազան ի ձեռին: Ա. Խաչատուր[120] սիրով կը լուսանկարէ հոդ ուզածս, իրեն ալ գրեցի արդէն: Այս խնդրանքս ալ չէք ուշացներ: -Ներփակ է Բաբգէն Ս.ի ուղղեալ մէկ քարտս: Դուք ալ վրայ տայիք, եւ մինչեւ Փետրվար մէկ Ն. Սրբազնութիւնը բարեհաճէր ձեռագիրը խաւրել:

*Իմ կեանքս հոս կ'անցնի խաղաղ, հակառակ մայրաքաղաքիս խառնակ կեանքին: Տպարանին վերեւ՝ խեղճուկ խցիկի մը մէջ եմ քաշուած եւ առտուընէ մինչեւ իրիկուն գրիչ կը շարժեմ նորէն: Ո՛չ մէկ տեղ կրցած եմ այցելել դեռ, ո՛չ մէկ մուսէոն, ո՛չ մէկ թատրոն, քանզի վերի ու վարի ճամբաները լաբիւրինթոս են կաղասրուն անձիս համար: Միակ հաճոյքը զոր ունիմ՝ *ժամանակ*ին՝ իմս ըլլալն է, եւ հիմա մէ՛կ տիրոջ միայն կը ծառայեմ, Տիկին Գրականութեան: Իցի՛ւ թէ ան ապերախտ չգտնուէր սիրոյս հանդէպ ու զիս չմեռնելու մը չափ ապրեցնէր:

Ձերդ մշտանոյն սիրով եւ … ամանորի բարեմաղթութեամբ
Թէոդիկ

L.

Երուսաղէմ, 7 Դեկտեմբեր 1927

Սիրելի Պ. Թէոդիկ,

Մեծագոյն հաճոյքով ընդունեցայ 24 Նոյեմբեր ամսաթիւ Ձեր նամակը ու ներփակ քառթը յանձնեցի Բաբգէն Սրբազանի:

Պատրիարք Սրբազանի վերաբերեալ տողերը անձամբ կարդացի իրեն, պատասխանը եղաւ նուրբ ու անուշիկ ժպիտ մը, ինչոր ես բարեացակամ արտայայտութիւն համարեցի եւ կը յուսամ թէ ճիտիկդ ծուռ չի ձգեր: Նորին Ամենապատուութիւնը թելադրեց ինձ գրել Ձեզ թէ ՏԱՐԵՑՈՅՑ-իդ հատորները շատցան, ու կարեւոր գրութիւն մը փնտռելու համար մեծ դժուարութիւն կը քաշուի: Ինչ լաւ պիտի ըլլար, կ'ըսէ, եթէ գլխաւոր յօդուածներու ընդհանուր մէկ Ցանկը հրատարակուէր հեղինակներու անուններով, ինչոր

[119] «Վրէժը լուծել» (թրք. առած):

[120] Արամ Խաչատուրեան, ծնած է 1868, Կ. Պոլիս, Գատըգիւղ: 1906ին հաստատուած է Երուսաղէմ, ուր շարունակած է գեղանկարիչի իր ասպարէզը: Ուսուցչագործած է տեղւոյն Ժառանգաւորաց ու Ս. Թարգմանչաց վարժարաններէն ներս: Մահացած է 1936ին:

մեծ դիւրութիւն պիտի ընծայէր որոնումներ ընողներուն: Սրբազանի այս թելադրութիւնը ահա կը հաղորդեմ Ձեզ[121]:

Ներփակ պիտի գտնէք երեք պատճէններ իմ կողմէ օրինակուած իմ տրամադրութեանս տակ եղած գրութիւններէն: Երեքն ալ մաս կը կազմեն Հայրիկեան նամականիի: Առաջինն է ՄՇԱԿ-ի[122] խմբագիր Գրիգոր Արծրունիի[123] գրուած նամակ մը ի պատասխան իր ծննդեան եօթանասնամեակի առիթով յղած շնորհաւորական հեռագրին: Երկրորդը նամակ մը Վիեննայի Պարսկական դեսպան Նարիման Խանի[124] եւ երրորդը Կոնդակ մը Մանչեսթրի Հովիւ Սուքիաս վարդապետ Պարոնեանի[125] եւ տեղւոյն Հայ համայնքին ուղղեալ: Վերջին երկուքը կը պատկանին Հայկական խնդրին, որ հրատապ կերպարանք մը առած էր 1894-ի Սասունի կոտորածներէն[126] ետք: Կը յուսամ թէ գոհ պիտի մնաք այս պատճէններէն երկու տեսակէտով, նախ որ մեծանուն Հայրապետին անտիպ նամակները լոյս աշխարհ կ'ելլեն եւ երկրորդ նոր լոյսեր կը սփռեն մեր ժամանակակից պատմութեան վրայ: Այսպէսով ՏԱՐԵՑՈՅՑ-ներդ կամաց կամաց կոկիկ *փօսիէ* մը կը դառնան կոր Հայրիկեան նամակներու: Գալ տարուան համար ալ Քէնթրպըրիի արքե-

---

[121] Դժբախտաբար Թէոդիկի *Ամէնուն տարեցոյցը*ի հատորներուն համար կազմուած ընդհանուր մատենագիտութիւն մը գոյութիւն չունի ցարդ: Սակայն 2006էն սկըսեալ, յաջորդական տարիներուն, Հալէպի մէջ հրատարակուած *Ամէնուն տարեցոյցը*ները օժտուեցան անձանուններու, տեղանուններու ու բովանդակութեան ցանկերով, հալէպահայ մտաւորական Լեւոն Շառոյեանի աշխատասիրութեամբ:

[122] Հասարակական-քաղաքական, գրական թերթ, որ 1872-1921՝ հրատարակուած է Թիֆլիս:

[123] *Մշակ* թերթի հիմնադիրն ու առաջին խմբագիրը, ծնած է 1845ին Մոսկուա, ազնուական ընտանիքի մը մէջ: Բարձրագոյն ուսումը ստացած է Հայտելպերկի համալսարանին մէջ: 1872ին հիմնադրած է *Մշակը*: Մեռած է 1892ին:

[124] Պարսկահայ դիւանագէտ, որ Աւստրօ-Հունգարական կայսրութեան մէջ եղած է Իրանի դեսպանը, 1879-1903ին:

[125] Ծնած է 1831ին, Կ. Պոլիս: Կրթութիւնը ստացած է Վենետիկի Մխիթարեանց քով: 1854ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի: Մաղաքիա Օրմանեանի եւ այլոց հետ կը վերադառնայ Ազգային եկեղեցւոյ գիրկը: Կատարած է նաեւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ: Վախճանած է 1903ին ու թաղուած՝ Մանչեսթրի մէջ, ուր երկար տարիներ վարած էր հովուական պաշտօն:

[126] Օսմանեան զօրաբաժին մը, Ձեքի փաշայի գլխաւորութեամբ, կը պաշարէ Սասունը: Սասունցիները Մեծն Մուրատի գլխաւորութեամբ ինքնապաշտպանութեան կը դիմեն: Հակամարտութեան ընթացքին պետական զօրքերը կ'աւերեն աւելի քան քառասուն գիւղ ու կը կոտորեն աւելի քան տասը հազար հայ: Սասունի դէպքերը կ'արժանանան միջազգային ուշադրութեան: Բրիտանիա, Ֆրանսա ու Ռուսաստան Օսմանեան կառավարութեան կը ներկայացնեն Պերլինի դաշնագրէն բխող բարեփոխումներու կատարման ծրագիր մը, որ պատմութեան յայտնի է Մայիսեան բարենորոգումներ անունով (1895):

պիսկոպոսին[127] ուղղեալ Կոնդակը պիտի ղրկեմ, ինչպէս ծանօթագրած եմ ընդօրինակութեանս ներքեւ:

Ղրկածս ծոցի Օրացոյցին[128] մէջ զետեղած քառթովս տեղեկացուցած էի 1928-ի ՏԱՐԵՑՈՅՑ-ներէդ 30 օրինակներ ստանալս: Ձեր յանձնարարութեան համեմատ մէկը անձամբ ներկայացուցի Սրբազան Պատրիարք Հօր իբրեւ Ձեր Ամանորի արմաղանը եւ մէկը յանձնեցի Բաբգէն եպիսկոպոսի: Ինծի նուիրուած հատորին համար խորին շնորհակալութիւն: Կը մաղթեմ որ եռանդ ու աւիւնդ անսպառ ըլլայ, արեւդ շատ ըլլայ եւ Դուն բախտն ունենաս տեսնելու եւ տօնելու Յիսնամեակը ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ-իդ: Մի թերահաւատիր, Աստուած, որ տէրն է կեանքի եւ ժամանակներու, կարող է 25 տարի ալ պարգեւել եւ պճնել վաստակաւոր ճակատդ Ոսկի Յոբելեանի պսակով, որուն վրայ, իբրեւ թանկագին ակունքներ, ընդելուզուած ըլլան ՏԱՐԵՑՈՅՑ-ներուդ 50 տարուան հատորները:

Մնացեալ 27 հատորներէն 20-ը տեղաւորեցի, 7-ը վրաս կը մնան տակաւին: Որու որ կը ներկայացնեմ, կը մերժեն, գինը շատ թանկ գտնելով: Պիտի աշխատիմ անշուշտ ատոնք ալ ձեռքէ հանել:

Մաղթելով լիակատար յաջողութիւն եւ սիրալիր ողջոյններով,

Աղօթանուէր

ԼԱ.

THÉOTIG
(Impr. MASSIS)
208 bis., Rue Lafayette,
Paris (10). FRANCE

Փարիզ, 20 դեկտ. 1927

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպսկ. Նշանեան
Երուսաղէմ

Սիրելի Սրբազան Հա՛յր,

Անհուն հաճոյքով ստացայ իրարու ետեւէ դեկտ. 7 թուակիր նամակնիդ եւ ուրիշ մըն ալ, լի՝ 29ի հատորիս գրական բաժնի զարդ Խրիմեան Հայրիկի պատմական թղթակցութեանց պատճէններով[129], որոնց համար ի՛նչքան շնորհակալ ըլլամ Ձեզ՝ նորէն քիչ է: Շա՛տ ապրիք եւ Ած հեռի պահէ զՁեզ երբեմն զՁեզ տանջող գլխու ցաւէն: Պիտի օգտուիմ նաեւ

[127] Անկլիքան Եկեղեցւոյ հոգեւոր պետը:

[128] Նկատի ունի Երուսաղէմի եկեղեցական օրացոյցը, զոր կը պատրաստէր ինք՝ Մեսրոպ սրբազան:

[129] 1929ի տարեցոյցին մէջ հրատարակուած են Խրիմեան Հայրիկի նամակները տոքթ. Յ. Թիրեաքեանի (գրուած Երուսաղէմէն) եւ Կլատսթոնի (էջ 431-39): Դըժբախտաբար հրատարակուած չեն Գրիգոր Արծրունիի, Նարիման խանի ու Սուքիաս վրդ. Պարոնեանի ուղղեալ Հայրիկի նամակները, որոնց պատճէնները ղըրկուած էին Մեսրոպ սրբազանի կողմէ, 7 Դեկտեմբեր 1927 թուակիրով:

պատկերներէն: Բայց ո՛րքան որ աշխատակիցներուս շարքին՝ դուք ամէնէն *համարաթը*[130] կը փրթիք ամէն տարի, չգիտնա՜ք որ օձիքնիդ ազատած կ'ըլլաք այսչափով: *Ձեր սիրուած սփորագրութիւնը կրող յօդուածի մըն ալ* ակնդէտ պիտի մնամ մինչեւ գարուն: Նիւթին ընտրութիւնը Ձեր կիրթ ճաշակին կը թողում, բաւ է որ Ծնունդի ծիսական Ձեր յոգնութիւններէն անմիջապէս վերջ՝ մուտ գործէք Ձեր վանուց ձեռագիրներու հարուստ դիւանէն ներս, դեռ եւս լոյս աշխարհ չեկած յիշատակարան մը եւն. երեւան հանելով եւ անոր կցելով պատմ[ական] ծանօթութիւններ մը, ինչպէս եւ այդ յիշատակարանէն էջի մը լուսանկարումը: Այսչափը կը համարձակիմ թելադրելու, ա՛յն պարագային համար միայն, երբ դժուար ըլլայ Ձեզ՝ երկարաշունչ նիւթի մը պրպտումը:

*Ս. Պատրիարք Հօր «նուրբ եւ անուշիկ ժպիտ»էն ցոլք մը իմ վրաս ալ ցաթածի պէս եղաւ, երբ կարդացի Ձեր տողերը: Այդ *ժպիտ*էն «բարեացակամ արտայայտութիւն» իմաստը հանել միայն չի բաւեր, ցորչափ արդիւնք մը չկայ մէջտեղ: Վստահ եղէք, Սրբազան Հա՛յր, որ մահո՛ւ չափ պիտի տրտմիմ, եթէ *ժամանակին* չստանամ Ն. Ամենապատուութենէն քերթուած մը եւ Հայկական բաժնիս յատուկ բանասիրական մը: Ասոնց տիրացումո՛վս է միայն, որ «ճիտիկս ծուռ» մնալէ պիտի դադրի: Ինք աղէ՛կ գիտէ այս պարագան, ու 29ի հատորս իր սիրելի ստորագրութեան երեւումո՛վ միայն կրնայ պարծիլ մանաւանդ, երբ ամայութիւն է չորս դիս: Ուղղակի չեմ գրեր իրեն, վախով որ՝ բազմազբաղ՝ չի պատասխաներ, մանաւանդ որ «լեռան պէս» Մեսրոպ Սրբազան մը ունիմ հոդ՝ իբր բարեխօս ու միջնորդ առ Ս. Պատր.:

*27 օրինակներէն 20 հատին իսկոյն տեղաւորումն ալ՝ ուրիշ աւետիս մը ինծի: Ականջ կախելու չէ «գինը թանկ է» առարկողներուն, այլ Ձեր «շուք»ին ծանրութիւնով ամչցնելու է զանոնք: Մնաց որ թեւերնիդ երկայն է, կրնայ տարածուիլ մինչեւ Բեթլեհէմ, Յոպպէ եւ այլուր՝ մնացեալին «կնքում»ին ի նպաստ, եթէ արդէն կնքուած իսկ չէ այդ մնացեալը: Հիմա գիտէք, Սրբազան Հայր, թէ հոս ուրիշ ո՛չ մէկ զբաղում ունիմ՝ սակաւապէտ մարդու ապրուստս ապահովող, բաց ի գրչիս արդիւնքէն: Բնաւ չեմ յուսահատիր, թէ այդ արդիւնքը բաւարար չըլլար ինծի, ցորչափ գործս գնահատող եւ զայն տարածող անձեր ունիմ հոս ու հոն: Ի՜նչ ամօթ բան՝ սա ազգին համար, որ քիչ շատ արժէք եւ օգուտ ներկայացնող հեղինակի մը երկասիրութեան չ'ուզեր ընծայել բաղձացուած ընդունելութիւնը, եւ ազդեցիկ անձնաւորութեանց դրդումո՛վը միայն կը բարեհաճի գնել զայն…: Եւ այս՝ -իմ մասիս խօսելով- 22 տարիէ ի վեր:

*Հոդ լուսանկարիչ-գեղագիր Հայ մը կայ՝ որ ինծի նամակ էր գրեր ասկէ ամիսներ առաջ, Ձեր յանձնարարական-քարտով: Բարի եղէք իրեն ըսելու, թէ պատասխան-քարտովս իրմէ ուզած պատկերներս չուշացնէ, ի մասնա-

[130] Ժրաջան, գործունեայ (թրք.):

ւորի Ս. Պատրիարք Հօր լուսանկարը, վեղարը գլխուն, ասա ի ձեռին եւ աթոռի վրայ բազմած, վասն զի պիտի դնեմ զայն 29ի հատորիս սկիզբը, hors texte[131], ինչպէս ըրած էի 28իս մէջ Վեհափառինը: Շատ գոհ պիտի մնայի, եթէ այդ պատրաստելիք պատկերին *ֆօնը բեռպիւ*[132] ըլլար. ան կը հասկնայ: Իսկ եթէ յիշեալը չկարենայ պատրաստել, Ձենէ կ'ուզեմ զայն անպայման:

*Սրբազան Հայր, յառաջիկայ 1928 տարւոյ նախամիսէն սկսեալ՝ մէկ կողմէ շարել պիտի սկսինք 29ի հատորս, քչիկ քչիկ գործը յառաջ տանելու համար: Գիտէք թէ նախամասը կը կազմէ «Հայկ[ական] Օրացոյց»ը՝ նոր տոմարաւ, զոր Բաբգէն Ս.է խնդրած էի կրկին: Ներփակ է Ն. Սրբազնութեան ուղղեալ Բ. խնդրագիրս: Դո՛ւք ալ կրկնէիք իրեն, որ չուշացնէր ձեռագիրը: Եթէ ուշացնէ, խաղքին դուռը կը հասնիմ իրաւ որ...:

*Բաւ համարելով այսքան տարապարհակներ ու թուումս, կը փոխադարձեմ սրտագին բարեմաղթութիւններս՝ ամանորի եւ Ս. Ծննդեան առթիւ, ու կը մնամ Ձերդ մշտանոյն սիրով՝

Թէոդիկ

ԼԲ.

THÉOTIG
(Impr. MASSIS)
208[bis]. RUE LAFAYETTE
PARIS (10[E]). FRANCE

Փարիզ, 26-12-27

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան

Երուսաղէմ

Կը հաստատեմ ամսոյս 20 թուակիր վերջին նամակս: -Քանի մը օր վերջ էր որ ստացայ Բաբգէն Ս.ի *օրացոյցի* ձեռագիրն ու նամակը, եւ սիրտս հանգստացաւ: Ն. Սրբազնութիւնը խոստացած էր նաեւ աշխատակցիլ 29ի հատորիս՝ բոլորովին «նորութիւն» եղող յօդուածով մը[133]: Տարոսը Մեսրոպ Սրբազանիս, որ ասանկ հաճոյալի խոստում մը գլտորցնէ ինձ համար:

* Ասկէ ամիսներ առաջ խնդրած էի Ձենէ՝ ունենալ նորոգ հանգուցեալ Սիմոն ծ. վրդ. Թելեանի լուսանկարը: Արդեօք կարելի՞ է զայն հայթայթել ինձ համար:

---

131 Բնագրէ դուրս (լուսանկար, ֆր.):

132 Perdu (ֆր.): Կը խնդրէ, որ խորապատկերը չերեւի, ըլլայ աներեւոյթ:

133 Բացի օրացոյցի պատրաստութենէն Բաբկէն եպս. Կիւլեսէրեան 1929ի տարեցոյցին աշխատակցած է «Մեկնութիւն տոմարական բառերու» խորագրով գրութեամբ (էջ 22-24):

* Սրբազան Հայր, Ս. Տեղեաց մէջ եթէ յիշատակութեան արժանի մահեր պատահին մերիններէն (իցի՛ թէ բնաւ չպատահին), բարի ըլլայիք ինձ հաղորդելու 1928ի ընթացքին:

* Խցիկիս կից է «Յառաջ»ի[134] խմբագրատունը՝ որուն հասցէին եկած բոլոր հայ թերթերէն կ'օգտուիմ գիշերները, իբրեւ բարի ժամանց: Ատոնցմէ մէկուն մէջ (ամերիկահայ) հետեւեալը կարդացի.-

«Գիւտ Ս. Գրային Նշխարաց.- Պաղեստինի Պէյսան քաղաքին մէջ գըտնուած են նորանոր նշխարներ՝ որոնք լոյս կը սփռեն Հին Կտակարանի մէջ յիշուած դէպքերու վրայ: Ատոնց մէջ կայ զոհաբերութեան սեղանին պատկանող աղիւս մը՝ որ կը յիշեցնէ Սամուէլի գրքին մէջ նկարագրուած պատարագի արարողութիւնները: Գտնուած են նաեւ հարիւրէ աւելի ցեխէ շինուած սիկարի ձեւով առարկաներ՝ որոնք կը նմանին Ողբ Երեմիայի 7րդ գլխուն մէջ ակնարկուած կարկանդակի ու հացի փոքր կտորներուն: Պեղումներու ատեն գտնուած են ոսկի գոհարեղէններ եւ պրոնզէ արձանի մը վերնամասը որ Հաթօրի (?) գլխուն կը նմանի, եւ որ կարծել կու տայ թէ եգիպտ. բանակ մը եղած է Պէյսանի մէջ 1400ին Ն.Ք.: Գտնուած են նաեւ մէկ քանի քարէ կշիռներ, նկարազարդ հողամաններ եւն.: Ատոնցմէ մասնաւոր հետաքրքրութեան արժանացած է կուժ մը՝ վրան օձի պատկերով, ինչ որ կը հաստատէ այն իրողութիւնը թէ Ամէնոֆիս Գ.ի, Ռամսէս Բ.ի թագաւորութեանց օրով օձապաշտութիւնն ընդհանրացած էր ամէնուրեք: Այս բոլոր առարկաները գտնուած են 1500ին Ն.Ք. իշխող Թոթմէս Գ.ի նորագիւտ 2 մեհեանները պեղելու ատեն»:

Եթէ այս մասին նորութիւններ մը կցէք, ճարելով նաեւ այդ առարկաներէն (պեղօն) ոմանց լուսանկարները, շնորհապարտ թողուցած կ'ըլլաք զիս, վասն զի շատ թանկագին են տարեցոյցիս գեղարո[ւեստական] բաժնին համար, ինչպէս, զոր օրինակ վերջերս *Ուր*ի մէջ (Քաղդէաստան) -արդեօք Ուրհա՞ կամ Ուռհա՞, կամ Ուրֆա՞- երեւան հանուածները՝ որոնց պատկերները ճարեցի «Թայմզ»էն[135]:

Մի՛, Սրբազան Հայր, պռստէք յօնքերնիդ, «էյ էրկա՛ն ըրիր, Թէոդիկ» ըսելով: Արդէն չե՛մ ալ յուսար որ այսպէս մենախոհէք, քաջ գիտելով գործիս հանդէպ Ձեր բարեացակամ վերաբերմունքը:

Ձերդ խ.ծ.
Թէոդիկ

Յ. Գ.- Պաղեստինի դրոշմակները փոխուեր են: Արդեօք կրնա՞մ ունենալ ատոնց *սէռի*ն: Զաւակիս համար է: Ձեզ համար այս բանն ալ դիւրի՞ն է արդեօք:

---

[134] Փարիզի մէջ, 1925-2009ի միջեւ հրատարակուած օրաթերթ: Հիմնադիր-խմբագիրն էր Շաւարշ Միսաքեան, որմէ ետք խմբագրի պաշտօնը ստանձնած է իր դուստրը՝ Արփիկ Միսաքեան:

[135] Այս մասին տե՛ս՝ 1929ի տարեցոյցը, էջ 268-84:

ԼԳ.

Երուսաղէմ, 10 Փետրուար 1928

Սիրելի Պր. Թէոդիկ,

Ծիսական ու դպրոցական, վարչական ու տպարանական բազմաթիւ ու բազմապիսի զբաղումներուս[136] մէջէն հազիւ այսօր ժամանակ կը գտնեմ Ձեր անցեալ Դեկտեմբեր 20 եւ 26 թուակիր նամակներուն պատասխանելու: Ուզեցի մանաւանդ ՏԱՐԵՑՈՅՑ-ներուդ վաճառումը աւարտելէ ետք գրել Ձեզ:

ՏԱՐԵՑՈՅՑ-ներու 25 հատը միայն կրցայ տեղաւորել, մնացած 2-ը ես գնեցի ու նուիրեցի բարեկամներու: Հետեւապէս կը պահանջէք 27 օրինակներու արժէքը. ամէն մէկը 8-ական Շիլինէն, ընդամէնը 216 Շիլին: Այս գումարին փոխարէն կը ներփակեմ չէք մը Ձեր հրամանին, Լոնտոնի Պանք Օթոմանին վրայ, այսօրուան թուականով, թիւ 327045 / 50582: Հաճեցէք գանձել ու մեր հաշիւը փակել:

Նամակիս հետ կը ստանաք նաեւ մեր պատուական ու պաշտելի Սրբազանին նորագոյն լուսանկարը. քանի մը օր առաջ քաշուած յատկապէս Ձեզի համար: Ես Նորին Ամենապատուութեան գլխուն վերեւ կեցայ ու ստիպեցի նկարուիլ, դիրքն ու ամենայն ինչ ճշդելով: Շատ ուրախ եմ որ Սրբազանը բարեհաճեցաւ հաւանիլ, միմիայն սրտիկդ չկոտրելու ու ճիտիկդ ծուռ չձգելու գերազնիւ հոգածութեամբ: Լուսանկարը կը կարծեմ թէ յաջող ելաւ ու ճիշդ Ձեր թելադրածին ու փափաքածին համաձայն: Դիրքը վայելուչ է ու արտայայտութիւնը բնական ու անուշիկ: Դէմքին վրայ շեշտուած է իրեն յատուկ խորունկ ու աղու նայուածքը: Նկարողն է մեր բարեկամ Տիար Արամ Խաչատուրեան գեղարուեստագէտը: Սրբազան Հայրը Ձեզ հանդէպ այսչափ բարեացակամութիւն ցուցնելէն ետք չեմ տարակուսիր թէ Ձեր կողմէ ակնկալուած գրութիւն մըն ալ պիտի հաճի ղրկել: Կը թելադրեմ որ անգամ մըն ալ Դուք յիշեցնէք ուղղակի:

Իսկ այս տարի կարծեմ թէ պիտի չկրնամ իմ աշխատակցութիւնս բերել: Սրբազան Պատրիարքը անանկ գործ մը փաթթեց գլխուս որ աչքը վերցնելու ժամանակ չեմ ունենար կոր: Իմացած էք անշուշտ թէ մեր քով կայ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ մը, ձեռագիր, պատրաստուած Տիգրան Սաւալանեանի[137] կողմէ, գրաբար լեզուաւ: Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար այդ ձեռագ-

[136] Մեսրոպ սրբազան 1911էն սկսեալ ստանձնած էր Երուսաղէմի դպրոցներու տեսչութիւնը, 1913ին դարձած էր տպարանի տեսուչ, 1922ին ընտրուած էր լուսարարապետ, իսկ 1925ին՝ Տնօրէն ժողովի ատենապետ:

[137] Պատմաբան, բանասէր ու թարգմանիչ, ծնած 1821ին, Իզմիր: Կրթութիւնը ծնընդավայրին մէջ ստանալէ եւ հոն միջոց մը ուսուցչութիւն ընելէ ետք, Կիրակոս պատրիարքը 1849ին զինք որպէս ուսուցիչ կը հրաւիրէ Երուսաղէմ, ուր իրեն կը յանձնուի տպարանի տեսչութիւնը, միջոց մը ետք ալ պատրիարքարանի քարտուղարութիւնը: *Սիոն*ի խմբագիր ալ կ'ըլլայ: 1878ին վերջնականապէս կը վերադառնայ

րի տպագրութեան ծախքը վրան առած է: Որպէսզի գիրքը ամէնուն մատչելի ըլլայ, Պատրիարք Սրբազանը որոշեց որ աշխարհաբար հրատարակուի, ու ինծի հրամայեց որ թարգմանութիւնը կատարեմ[138]: Ես ալ հնազանդութեան պարտուց դէմ չմեղանչելու համար յանձն առի այդ աշխատութիւնը, որ տարիէն աւելի պիտի տեւէ ու ամբողջ տրամադրելի ժամանակս պիտի խլէ: Ձեռագիրը 1500 ընդարձակ էջերէ կը բաղկանայ: Արդէն սկսած եմ թարգմանութեան ու այսօր երրորդ ֆօրման մամուլը կը ձգուի: Հիմա չորս գրաշար ունինք: Ձեռագիրը մէջերնին կը բաժնեն ու անմիջապէս կը հալեցնեն կոր: Պէտք է ետեւէն ձեռագիր հասցնել: Ատոր համար գիշերը ցորեկին խառնած կ'աշխատիմ: Ուստի կալ զիս հրաժարեալ: Աստուած Ձեզ ալ, ինձ ալ կեանք պարգեւէ, յառաջիկային առիթ կ'ունենանք աշխատակցելու: Այս բանաւոր պատճառաւ պիտի չկրնամ դարձեալ Ձեր յիշած Պաղեստինեան հնութիւններով հետաքրքրուելու: Ներողամիտ եղէք:- Հանգուցեալ Սիմէոն վարդապետի նկարը եթէ ձեռք անցնելու ըլլամ, կը փութամ ղրկել:

Սիրոյ ողջունիւ եւ յաջողութեան մաղթանքներով, մնամ միշտ

Բարեացակամ ու Աղօթանուէր

ԼԴ.

THÉOTIG
(Impr. MASSIS)
208bis., RUE LAFAYETTE,
PARIS (10E). FRANCE

Փարիզ, 2 Մարտ 1928

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան

Երուսաղէմ

Ի ձեռին ունիմ Փետր. 10 թուակիր նամակնիդ՝ ներփակ £10.16-նոց չէքով, իբր փոխարժէք 28ի 27 հատորներուս: Անհուն շնորհակալութիւն Ձեր բարեացակամ վերաբերմունքին համար՝ որ աւանդական դարձած է այլ եւս: Շա՜տ ապրիք՝ առանց գլխու ցաւի, որպէս զի իմինիս պէս… «գլխացաւեր» կարենաք տանիլ:

Մեր «պատուական ու պաշտելի Սրբազան»ին նորագոյն լուսանկարն ալ ստացայ: Կը գրէք. «Դիրքը վայելուչ է, եւ արտայայտութիւնը՝ բնական ու անուշիկ» եւ դեռ կարգ մը շատ յատկանշական ու ճիշդ տողեր՝ զորս ճոխացուց արդէն, իր կարգին, իմ կարօտագին ակնարկս: Ա[ստուա]ծ չար աչքէ

Իզմիր, ուր կը վարէ *Արշալոյս Արարատեան*ի խմբագրութիւնը: Կը մեռնի Իզմիր, 1901ին: Իր կարեւոր աշխատութիւններն են *Պատմութիւն Երուսաղէմի*, Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռագրաց ցուցակը եւն.:

[138] Սաւալանեանի *Պատմութիւն Երուսաղէմի* աշխատութիւնը, որ Մեսրոպ եպս. Նշանեանի կողմէ գրաբարէ աշխարհաբարի վերածուած էր, երկու հատորով ու ճոխ յաւելուածով պիտի հրատարակուէր 1931ին, հանգուցեալ Պօղոս փաշա Նուպարի մեկենասութեամբ:

պահէ Ն. Ամենապատուութիւնը, զի մի՛ գուցէ մղեղ իյնայ գուրգուրացեալ աչքին մէջ:- Ն. Ամենապատուութիւնը ո՛չ միայն տարեցոյցիս սիրուն բազմած եղաւ իր Աթոռին վրայ, այլ եւ բարեհաճեցաւ գրիչ շարժել ու ինձ ուղարկել ուզածներս[139]: Աղօթքս անպակաս է Իրեն համար. եւ ի՛նչ աղօթք, անբարբառ ու երկնապիշ «հի՛ւ» տէրվիշեան:

Ն. Ամենապատուութեան կողմէ Ձեր «գլխուն փաթթուած գործը» արժա՛ն է որ տանիք, որպէս զի ճոխանայ Հայ Պատմութիւնը: Ա[ստուա]ծ կարողութիւն եւ առողջութիւն պարգեւէ Ձեզի ու Ձեր ժիրաժիր կարգակիցներուն՝ որոնք մտաւորական վառ հնոց մը դարձնելու վրայ են Ս. Աթոռդ:

Ձերդ անայլայլ սիրով ու կարօտով՝
Թէոդիկ

34 LETTERS EXCHANGED BETWEEN ARCHBISHOP MESROB NESHANIAN AND THEOTIG
(1925-1928)

DEACON SEVAN DEYİRMENJİAN (haygazian@gmail.com)

Archbishop Mesrob Neshanian (1872-1944) assumed many important duties, including the directorship of the Manuscript Library in the Armenian Patriarchate of Jerusalem, and eventually became the Patriarch of the Armenian Patriarchate of Jerusalem. Known to literary and historical circles for publishing the chronicles of Eremya Chelebi Kömürjian (1637-1695) and Grigor Daranaghtsi (1576-1643) and the correspondence of important figures from the 17th and 18th centuries, Neshanian also draws attention with the materials he provided from the patriarchate archives to intellectuals of the period like Theotig (1873-1928), the publisher of the renowned *Amenun Daretsuytse* yearbook.

The letters published in the article for the first time, offer important insights on the period, including the dream Theotig had to go to Jerusalem, live in the St. James Armenian Monastery, and do research in its rich archive and library.

Furthermore, these letters complement an initial set of letters published in the *Haigazian Armenological Review*, back in 2006 by Dr. Vatche Ghazarian (pp. 263-96). In these letters Theotig diligently and persistently asks Fr. Neshanian in a very modest and courteous way to provide him with both resaerch as well as literary materials of his, alongside archival materials from the rich collection of the Patriarchates archive. The letters give insight on the efforts that Theotig writingsmade to offer interesting and up-to-date materials to the readers of his yearly publication, *Amenun Daretsuytse*.

[139] 1929ի տարեցոյցին մէջ Եղիշէ արք. Դուրեան պատրիարքէն հրատարակուած է անստորագիր քերթուած մը՝ «Ուխտաւորութիւն մը դէպի Երազմոյն» խորագրով, էջ 458-63 (Սեւան Տէյիրմենճեան, «ԹԷոդիկի նամակները Եղիշէ արք. Դուրեանին», *Սիոն*, 1-2-3:2025, մամուլի տակ):

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ԷՐԶՐՈՒՄԷՆ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԸ. ՇՈՒՇԱՆԻԿ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Աննա Կազարեան
kazaryananna15@gmail.com

Էրզրումի գաւառակի քարտէզ (ՀԱԱ, ֆոնդ 420 (Օննիկ Ճգնաւորեան), ցուցակ 16, գործ 9)։ Աղբիւր՝ *Յուշամատեան* կայքէջ (www.houshamadyan.org)

Վերջին տարիներին հետզհետէ աւելի է աճում հայ ժողովրդին ճակատագրուած Մեծ Եղեռնի իրադարձութիւնների նկատմամբ հետաքրքրութիւնը, քանի որ թուրք եւ թուրքամէտ պատմաբանները փորձում են խեղաթիւրել պատմական ճշմարտութիւնները։ Այդ խնդրի ճշգրիտ ըմբռնմանը նպաստել են պատմագիտական մի շարք աշխատութիւններ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրութիւններ եւ Հայոց Ցեղասպանութեանը նուիրուած բազմաթիւ այլ գիտական աշխատութիւններ։ Քաջ գիտակցելով Հայոց Ցեղասպանութեան իրադարձութիւնների բացայայտման գործում նաեւ ականատես-վերապրողների հաղորդած վկայութիւնների պատմագիտական դերն ու նշանակութիւնը, ստորեւ հրապարակում ենք Էրզրումի նահանգի, Էրզրում քաղաքի բնակիչ եւ Էրզրումից տեղահանուած հայութեան առաջին կարաւանի վերապրած Շուշանիկ Տիգրանեանի վկայութիւնները։ Այն կը գայ լրացնելու այն սակաւ տեղեկութիւնները, որոնք մինչ

այժմ առկայ են Էրզրումի առաջին կարաւանի աքսորեալների վերաբերեալ: Վկայութիւնը ցարդ գիտական շրջանառութեան մէջ չի դրուել:

Էրզրումի (Կարնոյ) նահանգը Արեւմտեան Հայաստանի հայաշատ եւ տարածական մեծ ընդգրկում ունեցող նահանգներից էր: Ա. աշխարհամարտի նախօրեակին հայ բնակչութեան թիւը կազմում էր 250-260,000[1]:

Նահանգում ընդհանուր քաղաքական իրավիճակը պատերազմի սկզբից եւեթ լարուած էր: Եոհաննէս Լեփսիուսի փոխանցած տեղեկութեան համաձայն՝ պատերազմը սկսուելու հետ մէկտեղ նահանգում սկսուեցին հայութիւնից ռազմական կարիքների համար բռնագանձումները: Հայերից կատարուած բռնագանձումները կազմում էին թուրքերից բռնագրաւուածի առնուազն կրկնապատիկը: Նահանգի հայերի խանութները վերջնականապէս կողոպտելուց յետոյ հերթը հասաւ նրանց տներին: Զէնք որոնելու պատրուակով խուզարկուեցին հայերի տները: Խուզարկութիւնները ուղեկցւում էին ձեռբակալութիւններով եւ անմարդկային չարչարանքներով[2]:

Կարնոյ դաշտի հայութեան զանգուածային տեղահանութիւնները սկսուեցին Մայիսի սկզբներին, իսկ Կարին քաղաքինը՝ Յունիսի սկզբներին, երբ գաւառի գիւղացիութեան տեղահանութեան ու ոչնչացման գործը իր աւարտին էր հասել: Առաջին երկու կարաւաններ ընդգրկուեցին հարուստ վաճառականները: Անյայտ վերապրողի վկայութեան համաձայն կառավարութիւնը որոշել էր առաջին կարաւանին տանել Երզնկայի ուղղութեամբ, սակայն առաջին կարաւանում ընդգրկուած վաճառականների կամքին չհակառակուելու համար ընտրուեց Քղի-Խարբերդ գիծը, քանի որ այնտեղ էլ կային հայերին ոչնչացնելու յարմար համապատասխան վայրեր[3]: Հենց այս առաջին կարաւանի մէջ էլ ընգրկուել է Շուշանիկ Տիգրանեանի ընտանիքը: Վերջինիս վկայութիւնը մէջբերում ենք ամբողջութեամբ առանց կրճատելու, անփոփոխ թողնելով շարադրանքի ոճը եւ ձեւը. աւելացրել ենք կէտադրական նշաններ եւ [] փակագծերով բառեր՝ աւելի դիւրամատչելի դարձնելու համար բնագիրը:

---

[1] Գեղամ Բադալեան, «Արեւմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրէին, մաս երրորդ. Էրզրումի նահանգի կենտրոնական ու արեւմտեան գաւառները եւ Էրզրում (Կարին) ու Երզնկա քաղաքները», *ՎԷՄ համահայկական հանդէս*, 4:2015, «Յաւելուած», էջ 2. նաեւ՝ Ռ. Թաթոյեան, «Էրզրումի նահանգի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին (աղբիւրների համեմատական վերլուծութեան փորձ)», *Ցեղասպանագիտական հանդէս*, 2(1):2014, Երեւան, էջ 54:

[2] Ե. Լեփսիուս, *Հայ ժողովրդի ջարդերը*, Անաիիտ հրատ., Երեւան, 2003, էջ 35-37:

[3] *Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. Վերապրածների վկայութիւններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգները, Պարսկահայք*, գլխ. խմբ.՝ Ա. Վիրաբեան, Հայաստանի ազգային արխիւ, Երեւան, 2012, էջ 22:

Վկայութիւնն առկայ է ՀԲԸ Միութեան Փարիզի Նուպարեան Մատենադարանի Արամ Անտոնեանի ֆոնդի Էրզրումի թղթապանակում[4]: Ձեռագիրը բաւականաչափ ընթեռնելի է, թէեւ առկայ պարբերութիւնները սակաւ են: Տիգրանեանը հետաքրքիր եւ կարեւոր տեղեկութիւններ է յայտնում Ա. կարաւանի մասին, մասնաւորապէս՝ յիշատակելով կարաւանին ուղեկցող պաշտօնեաներին, կարաւանի տեղահանման հիմնական ուղղութիւնները, կայանատեղիները, կոտորածի վայրերը, ինչպէս նաեւ քրտական խմբերի կողմից հայերի դէմ կատարած ոճրագործութիւնները: Հետաքրքիր եւ ուշագրաւ տեղեկութիւններ կան նաեւ մինչեւ Խարբերդ հասած առաջին կարաւանում վերապրած այլ կանանց, Խարբերդում նրանց իսլամացման, նրանց ճակատագրի, ինչպէս եւ հենց Շուշանիկի փրկուելու պատմութեան մասին:

[Վկայութիւն]

Յունիս 3ին[5], կառավարութիւնը 25 տուն զատելով Բալուցի ջորեպաններով Էրզրումէն ճամփայ հանեց մեզ, բայց չէինք գիտեր թէ ուր կ'երթանք: Առաջի[ն] օրը, որ պիտի էլլայինք, վալին լուր ղրկած էր թէ, մինչ քաղաքին դուռը ոտքով թող երթան: Ամէն մարդ իր ընտանիքով, լալով, ողբալով, իր տունը տեղը ձգած կը մեկնէր: Հասանք քաղաքին դուռը 3 հատ վրան կար զարնուած մէջը անբարոյական տաճիկ կիներ, որոնք գէշ խօսքեր ընելով մէկիկ, մէկիկ սկսան մեզ խուզարկել, բացի այր մարդոցմէ: Բնաւ բան մը չգտան, սկսանք ձիերը նստիլ եւ մեկնիլ, մեզ հետ տուած էին պաշտպանութեան համար 50 հատ ժանտարմաներ եւ մէկ զապիթ[6], որուն անունն էր Նիւսրէթ: Առաջին օրը Թեքէ Տերէսի[7] ըսուած տեղը իջանք, վրաններ զարկինք, ամէն տուն զինուորները սկսան բաժնել որ կերակրեն, չէինք գիտեր ինչ մտքի: Զապիթը ըսաւ՝ «ես Տիգրանեաններուն հետ միայն պիտի ճաշեմ, ամէն օր մեծ պատրաստութիւններ կար ասոնց համար»: Գիշեր եղաւ, ժամը 4ին ամէն մարդ պառկած էր, հրացանի ձայն լսուեցաւ, սկսան այր մարդիկ հարցնել թէ ի՛նչ է: Զօրքերը պատասխանեցին՝ այստեսակ տեղերը միշտ զէնքեր կը պարպուին:

---

[4] BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 59, Erzerum, թթ. 9-17, բնագիր, ձեռագիր:

[5] Նոյն կարաւանում գտնուող Ատելինա Մազմանեանը եւս վկայում է թէ Էրզրումից առաջին կարաւանը շարժուել է Յունիսի 3ին (ՀԱԱ, Ֆ. 227, ց. 1, գ. 482, թթ 1):

[6] Ոստիկանապետ, սպայ:

[7] Գիւղ Արեւմտեան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գաւառում, Էրզրում քաղաքից հարաւ-արեւմուտք: 1888ին ունէր 138 բնակիչ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 2,* Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 1988, էջ 427):

Առտու դարձեալ ճամփայ ելանք, տեղ-տեղ, քիւրտեր կը հանդիպէին, եւ իրենց [ժանտարմաներուն] հետ գաղտնի կը խօսէին: Այր մարդիկ զգացին, որ մեր գլխուն փորձանք կայ, միշտ մէկ վրանի մէջ ժողով կ'ընէին: Երրորդ օրը մեր զապիթը գիշերուան մինչ ժամը 5 կորսուեցաւ, այր մարդիկ հաւաքուեցան, սկսան խորհիլ թէ ուր կ'երթայ, մի գուցէ քիւրտերուն պիտի բերէ որ ջարդել տայ, իսկ կիներս սարսափելի լաց մը ձգած էինք, իսկ Թեֆիկ [ըսաւ] մեր թագաւորին հրամանը պիտի կատարուի: Յանկարծ մէկը պոռաց՝ Նիւսրէթ պէյը եկաւ: [Ան] ուղղակի մեր վրանը իջաւ: Բարի եկար ըսին՝ նստեցաւ, օղի ուզեց, անմիջապէս երիտասարդները բերին, սկսաւ խմել: «Գիտէ՞ք,- ըսաւ,- գացի քիւրտերուն գիւղը գառ ուտելու, ինչեր անցաւ գլուխէս: Այսօր ձեզ պիտի սպանէին, հարսներ եւ աղջիկներ պիտի տանէին, բայց խրատեցի, ձեր պաշտպանութեան համար հետերնիս շատ զէնքեր առած ենք, բնաւ մի՛ վախնաք: Հիմա 600 լիրա հաւաքեցէք որ մեր ժանտարմաներուն մեծին Թեֆիկ չաուշին տանք միւսներուն բաժնէ»: Դրամը հաւաքեցին տուին: Հասանք Ճեհեննէմ Տերէսի[8], երկու քիւրտ - ձեռքերնին խեղչել - տեսնուեցան: Մեր զապիթը բռնել տուաւ, ձեռքերնին կապելով սարսափելի ծեծեցին, ըսելով [թէ]՝ եկած են որ Տերսիմի քիւրտերուն լուր տան՝ գան ձեզ սպանեն: [Բայց] ամբողջ սուտ. զօրքերուն մէկը որ լազ էր, այր մարդոց գաղտուկ լուր տուաւ թէ, եկած էին որ ձեզ ըսէին, թէ առաջ մի՛ երթաք, լեռանը ետեւը Տերսիմն է, քիւրտերը գիշերով պիտի գան տանին ազատեն [ձեզ] անպիտանին ձեռքէն:

Գաթրճիները[9] կը պոռան՝ «մեր անասունները, այս մարդիքը մեռան անօթի, պէտք է իջնենք»: [Զապիթը] առանց պատասխան տալու շարունակել կու տար ճամփան: Տեղ մը եկանք որ հրաման ըրաւ կենալու: Հազիւ ձիերէն իջանք՝ «հոս դիրք չեմ կրնար բռնել» [ըսաւ], գաթրճիներուն հետ կռուելէն վերջ նորէն շարունակել տուաւ ճամփաներս: Ինչ տեսանք՝ պոռալու ձայն մը՝ «չեթէները եկան»: Թեֆիկ եւ Հապիպ ոճրագործները ձիերուն հեծած սկսան երթալ, քիչ վերջ եկան ըսելով՝ «սուտ է»: Տափարակ տեղ մ'եկանք «իջէք,- պոռաց Նիւսրէթը,- բայց վրան մի զարնէք»: Տեսանք որ մեր մէջէն ծերունի կին մը վիրաւորուած է: Հազիւ իրար լուր կու տայինք՝ հազարաւոր քիւրտեր մեր վրան յարձակեցան, ամբողջ ունեցածներս թալնեցին. ալ մեր գաթրճիներն ալ գացին, մաս մ[ը] բաներ տանելով, բայց սպանութիւն չըրին: Բոլորս կը պոռայինք «Աստուած օգնէ մեզ»: Սարսափելի տեսարան. որը կը մարի, որ մէկը խենթի պէս կը վազէ: Նիւսրէթը պոռաց՝ «զինուորներ, շրջապատեցէք ժողովուրդը եւ կեցէք»: Ամէն ոք մեռնելու պատրաստ, իր ընտանիքը առած կը սպասէր վերջին հրամանին: ½ ժամէն [զապիթը] ահռելի քիւրտ մը առած եկաւ, կանչեց այր մարդոց՝ «պէյը պիտի ձեզ իր

[8]Թրքերէն՝ դժոխքի ձոր, ենթադրաբար տարածք Էրզրումից դէպի Քղի տանող ճանապարհին:

[9] Ջորեպաններ:

գիւղը տանի, միայն 200 լիրա տուէք եւ թրքացէք»: «Մենք չենք թրքանար, եւ պատրաստ ենք մեռնելու» [ըսինք], ինչ դրամ որ ունէին[ք] հոտ ալ հաւաքեցին[ք] տուին[ք]: Տարաւ իւր գիւղը որ շատ մօտ էր, Շող քէօյ[10] էր անունը: Լալով տղայոց ձեռքերէն բռնած կը վազէինք, տանիքները քիւրտեր հաւաքուած նաճախները[11] ձեռքերնին կը սպասէին: Պէյը կը պոռար՝ «իմ հողիս մէջ չեմ ուզեր արիւն թափել»: Ցած մարագ մը լեցուցին մեզ, կովերուն աղտոտութիւններուն վրայ. դուռը գոցուեցաւ, մութ, անօթի, ծարաւ, պզտիկներուն ձայնը երկինք կ'ելլար: Մեր մէջ 3 մարդ զէնքերնին պահած էին՝ Անդրանիկ Տիգրանեան, Գառնիկ Տիգրանեան, Յարութիւն Սարաֆեան, կամաց մը իրար ըսին՝ «եկէք թաղենք, եթէ ասկէ ելլանք նորէն հանենք»: Գիշեր էր, քիւրտերը սկսան մարագին վրան թակել, եւ կը պոռային: Մեր ծառային հարցուցինք ի՞նչ կ'ըսեն: Ինքն ալ տղան մշեցի էր այսպէս կ'ըսեն ըսաւ՝ «հարսներ, աղջիկներ մեզ տուէք, այր մարդիկ, ձեր կիներ, տղայք պիտի մեռցունենք, մեր թագաւորին հրամանը աս է»: 2 ժամ միօրինակ պոռացին, միայն խրատող մը կար որ չէինք գիտեր ինչ կ'ըսէր, ժանտարմաներուն մէկն էր: Վերջապէս հեռացուցին, մենք արդէն կիսամեռ եղանք: Արշալոյսը կամաց-կամաց, կը բացուէր, երբ բոլորովին լուսացաւ, Նիւսրէթը մարագին դուռը բացաւ, քիչ մը ջուր եւ հաց [տուաւ՝] քիւրտ կիներուն տուածը]. ոչ տղայք եւ ոչ մենք կերանք: «Գիտէ՞ք,- ըսաւ,- ինչ խորհած ենք, վերջին վայրկեաններդ է, ամէն մարդ իր կինը եւ զաւակնիրը առած պէտք է մարագին 2 կողմը կենաք, մեր զինուորները ներս գան, քիւրտերը դուրսէն մերինները ներսէն պատերազմին, որ կողմը որ յաղթող ելլայ այն կողմը ջարդ պիտի ըլլայ»: Ըսաւ եւ արագ դուրս ելաւ: Անմիջապէս այր մարդիկ զէնքերը հանեցին եւ ըսին՝ «կիներ, ձեզ ամէնուդ չափ փամփուշտ ունինք մեռցունելու, տղայոցդ եւ ձեզ մեռցունենք՝ մի՛ անցնիք անոնց ձեռքը»: Հոս երեւակայել անկարելի է. կարծես թէ երազի մէջ էինք: Նոր [հազիւ թէ] վեր առին զէնքերը, 12 չեթէ ձիերով կանգնեցան, մուշանպա[12] զգեստներ հագուած, կարծես մէյ-մէկ հրէշ, վախ, վախ, ինչ եղած են, ալ Նիւսրէթը սկսաւ պատմել. տես որ 5 օր է որ լեռները իրարու հետ խորհուրդ կ'ընէին: Կերչէ Օղլու Ատիլ ըսուածը Մարտիրոս Տիգրանեանին Էրզրումէն ճանչցած ըլլալով քովը կանչեց եւ ըսաւ, ուսին զարնելով՝ «կիներուն խօսք հասկցուր, կ'երդնում Ղուրանին վրայ, որ բան մը չընենք ձեզ, եթէ ասկէ դուրս ելլաք, թէեւ ձեր յեղափոխականները մեր վանեցիները ջարդած, կիներուն փորերէն տղայքը հանած, կիներ եւ աղջիկներ անպատուած են. մենք հայ չենք որ անօրէն գործեր տեսնենք»: Մարտիրոսը պատասխանեց՝ «մենք արդէն

---

[10] Նոյն կարաւանում գտնուող մի շարք կանանց վկայութեան համաձայն գիւղի անունը Շէյխ էր. այն գտնւում էր Դերսիմի լեռան ստորոտին (*Հայոց Ցեղասպանութիւնը, հտր. III*, էջ 46): Մազմանեանը եւս յիշատակում է այդ վայրի մասին՝ նշելով հենց Շող (ՀԱԱ, Ֆ. 227, ց. 1, գ. 482, թթ 1-4):

[11] Մի կողմը սուր բերանով, միւսը տափակ՝ կացնանման գործիք:

[12] Կերպընկալ:

մեռած կը համարուինք, ամէն բան տեսանք Ատիլ պէյ, Էրզրումէն կառավարութիւնը շատ խօսքեր ըսաւ մեզ, վալի պէյը 50 ժանտարմաներով հանեց մեզ, այսօր 5 օր է, 5000 տեսակ փորձանքի եկանք, եւ պիտի մեռնինք հայ անունով»:

[Ատիլը] առաւ զինքը 7 հոգի ալ ուրիշներ տարաւ, ըսելով «գառ ուտենք միասին վերջը ճամփայ ելլանք, մինչեւ Խարբերդ ապահով պիտի տանինք»: 1 ժամ չտեւեց, եկան «ելէք,- ըսին,- մենք պզտիկները կ'առնենք»: Այս ըսելով սկսանք երթալ՝ 12 չեթէները, ձիաւորները, զօրք հազարաւոր քիւրտեր ետեւներս իննկած, նմանապէս զապիթը, սկսանք լէռնէ մը վեր ելլալ, հասանք անտառ մը: Յանկարծ սուլելու ձայն մը լսուեցաւ, սկսաւ սպանութիւնը ամէնուս. մէկ-մէկ սկսան լաթերս հանել, մազերնէս քաշել, ծեծել, գետինները ամբողջ դիակներով լեցուեցաւ: Նոյնիսկ կիները սուրերնին առած կը պոռային «փարա, փարա[13]» եւ պզտիկ տղայք կը սպանէին: Ինծի որ բոլորովին մերկացուցած էին, դիակներուն մէջտեղ, ապշած նստած էի, եւ կամաց մը կ'ըսէի «այս ինչ եղանք տղայքս, ամուսինս, գտնամ, դիակները առնեմ»: Չորս կողմս նայեցայ, ոտքի ելայ, չկրցայ երթալ անչափ որ ծեծ կերած էի: Յանկարծ, ետեւս դարձայ որ մեր Նիւսրէթը ապշած կը նայի: Ձեռքէս բռնեց, վեր հանեց, դիակները կոխելով այդ վիճակով գացի ետեւէն. ձոր մը տարաւ ինձ որ 2 կին կայ մեզմէ, զօրք մ'ալ քովերը: Կեցանք: Գնաց ինքը այս անգամ 5-6 վիրաւոր կիներ բերաւ, 2 պզտիկ աղջիներ, մին իմ աղջիկս, իսկ միւսը՝ վիրաւոր քանի մը տեղէ: Նստած, առանց իրարու հետ բան մը խօսելու իրարու կը նայէինք եւ կը սպասէինք մեր սիրելիներուն: Մէյ մըն ալ ի՞նչ տեսնանք, չեթէ Ատիլը արիւնոտ սուրը բռնած, ճակատին արիւն քսած [ըսաւ]՝ «նեզեքէթլի[14] խանումներ, հիմա կառքերը պիտի գան որ երթաք», ինչ, ինչ, խօսքեր [ըրաւ]՝ «տղայքսդ կտոր-կտոր ըրինք, ամուսիններդ, ծերերը...» եւ միշտ Վանը կը կրկնէր ըսելով՝ «ձերինները շատ բաներ ըրեր են, քանի մը հատ ալ թողած ենք, ուրիշ տեսակ պիտի մեռցունենք», ըսաւ եւ հեռացաւ: Գարակիւլեան Արմիկը երեւաց, մերկ՝ կուրծքերէն, վիրաւոր՝ թեւերէն, նստաւ քովերս, երկինքը, գետինը, մէկ սկսաւ ձեռքը երեսին դնել եւ երգել «վախ եաւրուլարըմ տաշլարա պրաքտըմ[15]»: Սարսափելի լացինք: Նայինք հեռուէն մերկ այր մարդ մը կու գայ, Վահան Տիգրանեան, սաստիկ վիրաւոր, կինը, վեց ամսու տղան արիւններու մէջ թաթխուած: Ասոնք – ինչպէս եղած է - միասին կը վիրաւորեն, կինը ամուսինին վրան կ'իյնայ, նայելով որ ողջ է, տղան ալ կը սկսի արիւններուն մէջ տապալիլ: Ալ կը տեսնան որ չորս կողմը լռութիւն տիրեց, իրարու բռնած, տղան առած եկան մեզ գտան: Նիւսրէթը երեւաց, տեսաւ որ մերկ ենք՝ «չտեսնայի ձեզ այս վիճակին մէջ» [ըսաւ]: Մենք ըսինք՝ «ալ մեզ ալ սպաննէ, եւ կամ՝ թո՛ղ որ երթանք

[13] Թրք.՝ փող:
[14] Թրք.՝ քաղաքավարի:
[15] Թրք.՝ վախ, երեխաներիս քարերին թողեցի:

մեր սիրելիներուն դիակներուն քով»: «Ոչ,- ըսաւ,- անկարելի բան է որ ձգեմ, քանի որ ձերինները 17 քիւրտ սպանած են, բոլորը դիակներուն մէջէն հանեցինք եւ հաշուեցինք, սպանողները ասոնք էին՝ Անդրանիկ Տիգրանեան, Գառնիկ Տիգրանեան, Յարութիւն Սարաֆեան շատ գէշ ըրին գիտցած ըլլաք, անոր համար ձեզ այսպէս ըրին»: Մենք ալ ըսինք՝ «շատ լաւ ըրին, լաւ որ ըսիր, իմացանք ականջներովս, չմեռած ատեն 3ին քով զէնք կար»: Սկսաւ պոռալ՝ «հիմա պէտք է որ երթանք»: «Ու՞ր,- ըսինք,- ասպէս մերկ, վիրաւոր, ամօթ է գոնէ [բան մը հագուինք]»: Ըսաւ՝ «հիմա մօտ տեղ մը կայ հոս, ժանտարմա մը ղրկած եմ որ ձեզ լաթեր բերէ»: Եւ իրօք [ժանտարման] եկաւ, մօտ գիւղերը մեռցուցած հայերուն արիւնոտ լաթերը բերին, անչափ որ ծածկուելու չափ առինք, վիրաւորները կապեցինք, Վահան Տիգրանեանին: Ինքը [Նիւսրէթը] կեցաւ եւ ըսաւ՝ «պատուիս վրայ երդում [կ']ընեմ որ մինչեւ Խարբերդ քեզ ողջ տանիմ, քանի որ ձեր ընտանիքին մարդկութիւնը տեսայ: Առ սա կնոջ էնթերին[16], հագուէ, սա լեչէկն ալ երեսդ ծածկէ, կիներուն քովէն գնայ: Ճամփայ պիտի ելլայինք ձայն մը կու գայ հեռուէն՝ «մայրիկ, մայրիկ»: Ախ արդեօք որու՞ն տղան է: Մարդիկ պառկեցուցին որ մորթեն ինձ, 3 անգամ գետին զարկին, շատ աղաչեցի, մէջերնէն ծերունի քիւրտ մը ըսաւ՝ «մեղք է, ինձ տուէք»: «Ինչու՞ չսպանենք, կը մեծնայ (*կեաւուր ուշաղին*[17]) ինչեր կ'ընէ»: Վերջապէս այդ մարդը կ'առնէ տղան, կը սկսի երթալ: Տղան [տեսնելով դիակը], կ'ըսէ՝ հայրիկին դիակը, կը կենայ դիտելու, մարդուն սիրտը գութ կ'իյնայ, տղուն կ'ըսէ՝ «հոս ձորին մէջ կիներ կան վազէ, կարելի է մայրդ գտնաս»… այսպէս բոլորովին մերկ եկաւ: Սկսանք կամաց-կամաց հեռանալ սիրելիներէ: Տեսանք ձիու վրայ նստած ահռելի քիւրտ պէյ մը սկսաւ Նիւսրէթին բարկանալ՝ «Աստուծմէ վախցի՛ր, ինչու՞ ասանկ ըրիր աս ընտանիքները, եթէ մեր կիները ըլլային ասոնց տեղ, ի՞նչ պիտի ընէին: Գիտցած ըլլաք որ մենք աւելի գէշ պիտի ըլլանք»: [Ան] առաջ ինկաւ, ըսաւ՝ [«]հոս եայլա[18] մը կայ հոն տանինք[»]: ½ ժամէն գացինք, ալ մեռնելու աստիճան [յոգնած]՝ հասանք: Պզտիկ խրճիթ մը կար, մեզ նստեցուց, 3 քիւրտ կիներ թան կ'ընէին, որ մեզ բերեն, տեսանք՝ եկան կաթը եւ թանը բերին, լալով-ողբալով բերաններս կը լեցունէին: Գիշերը հոս անցուցինք, առտու ելաւ նորէն նոյն պէյը վիրաւորներուն վէրքերը լուալ տուաւ, հաց բերաւ, ամէնուն չարուխ տուաւ հագուեցանք, 10 հատ էշ բերաւ, վիրաւորները վրան կապեցինք, սկսանք - առաջուան դիրքով - ժանտարմաները եւ զապիթը հետերնիս երթալ: Քիւրտերը լեռներէն կը պոռային, կեցուցէք որ սպանենք: Ասոնք կը պատասխանէին՝ «ասոնց բոլորը սպանեցինք, դիտմամբ կը տանինք Բալու, սպասեցէք երկրորդ քերէնին: Հասանք գիւղ

[16] Երկար՝ մինչեւ ոտքերը հասնող, լայն արեւելեան վերնազգեստ, որը հագնում են թէ՛ կանայք, թէ՛ տղամարդիկ:

[17] Թրք.՝ անհաւատի զաւակ:

[18] Թրք.՝ սարահարթ:

մը, նստեցուցին մեզ, քիւրտ մը եւ իւր տղան եկան, ըսին՝ աղջիկ մը տուէք մեզ: Նիւսրէթը պատասխանեց՝ «3 աղջիկ չեթէները առին»: Եւ իրաւ է՝ Նուարդ Խարանկիւլեան, Մայրանուշ Օհանեան, Վարդանուշ Մազմանեան [տարուեր էին]: Մայրանուշ Օհանեան որ հիմա Տիարպեքիրի գիւղերն է չեթէ Զհային քով, իսկ միւսները չեմ գիտեր: Նիւսրէթը դարձեալ կրկնեց պոռալով՝ «դուն քու աղջիկդ բեր ինձ, ես ալ տամ»: Հայրը ըսաւ տղուն՝ վիրաւորներուն վէրքերուն նայիմ: Սկսաւ լուալ եւ կապել: Գիշերը անցաւ հողերուն վրայ, առտու մեզ ճամփայ հանեցին, կէս ճամփայ [հազիւ գացած՝] 3 վիրաւորներ թողուցինք եւ հեռացանք: Հողաս[19] անունով հայու գիւղ մը հասանք, հայ կիներ դուրս ելան եւ կ'ըսէին [թէ] ասոնց բոլորովին սպանած են: Կեցուցին մեզ շէնքի մ'առաջ, այր մարդ բնաւ չկար: Ծեր կին մը մօտեցաւ՝ «հարսներս ինչ էք եղած»: Կամաց մը ըսինք «սպանեցին մեզ»: «Ըսել է երէկ որ մեր այր մարդիկ տարին թէ ճամփաները պիտի շինեն՝ սպանելու տարին», լալով հեռացաւ: ½ ժամէն 3 հատ կին առած հաց, մածուն, հաւ եկան՝ շատ աղաչեցին [եւ] զապիթը թողուց: Ատոնք մեզ բերին, ալ սկան պատմել տալ: Լացինք շատ, իրենց թաշկինակները տուին որ վիրաւորները կապենք:

Առաւօտ նորէն սկսանք երթալ, մօտեցանք Բալուի գիւղ մը, եկանք որ մարդ չկայ բնաւ, դուռերը բաց, դիակները՝ լեցուն: Հոտ զգացինք որ միայն մեզ չէ որ սպանած են, [այլ՝] ամբողջ հայութեան է:

Մեզ մեծ թութի պարտէզ մը կար [հոն] նստեցուցին: Զապիթը կանչեց Հապիպը, ըսաւ՝ [«]առաջ կ'անցնիս, Բալու կ'երթաս, ասոնց մէկուն առանց բան մը ընելու, կու գաք», ըսաւ եւ հեռացաւ: Նստած իրարու հետ կամաց մը խօսելով կու լայինք, ծառին վրայ տեսանք 25 տարեկան երիտասարդ մը, խիտ տեղ մը նստած է: Դիտելէն չորս կողմը վար իջաւ, [պատմեց թէ «]երէկ ամբողջ գիւղը, մեծով-պզտիկով սպանեցին, աս մօտ տունը մերն է, եւ այս դիակները մերիններն են, ես ալ փախայ ծառը ելայ, հոս [մեր] մէջ տաճիկ բնակիչ չկայ, ամբողջս հայ էինք»: Մեզ տանող զօրքերէն մէկը եկաւ, փանթալոն[20] մը ձեռքը եւ տուաւ ինձ թէ կարէ՝ պատռած է, թէլ եւ ասեղ ալ տուաւ, ամբողջը արիւն էր, դիակներէն առած էր: Աստուած իմ, ինչպէս կարեմ, ինչ ընեմ, լալով հազիւ լմնցայ: Եկաւ [զինուորը տաբատը] առնելու, տեսաւ երիտասարդը, գնաց մեր էշերուն տէրերուն, որ 6 հատ էին, ղրկեց եկան քաշեցին տղան, մենք ալ սկսանք մազերս քաշել եւ պոռալ, լալ: [Տղան] զարկին գետին, մորթեցին զինքը, սկսաւ տապալիլ, արիւնոտ

[19] Գիւղ Արեւմտեան Հայաստանում, Էրզրումի նահանգի Քղի գաւառակում, Քղի գիւղաքաղաքից մօտ 10 կմ. հր.-արմ., տափարակ գեղահովտի ծայրամասում: 20րդ դարի սկզբին ունէր 150 տուն՝ 995 հայ բնակչով եւ թուրքական 15 տուն՝ 70 բնակչով (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, հտր. 3*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 1991, էջ 427):

[20] Տաբատ:

սուրերնին առած պար բռնեցին, ըսելով՝ «կզլար, կելինլէր, հազր օլունուզ[21]»: Մենք ոտքի ելանք եւ պոռացինք: Հապիպ չաուշը քնացեր էր, արթնցաւ եւ հեռուէն պոռաց՝ [«]ինչ կայ[»], եկաւ տեսաւ դիակ մը, ան գիտցաւ թէ Վահանն է, ըսաւ՝ [«]ես զապիթին ի՞նչ պիտի պատասխանեմ,- մեզ կամաց մը ըսաւ,- ասոնք ձեր մէջ այր մարդ ողջ ըլլալը չգիտեն, աս ո՞վ է»: Պատմե-



Էրզրում. համայնապատկեր (*Գեղունի*, 1-10:1903, Բ. Տարի՝ *Յուշամատեան* կայքէջ, www.houshamadyan.org)

ցինք: Այս դիակը վերցուցին, շուները եկան տարին: Այր մարդը [«]ելէք[»] ըսաւ, սկսանք լալով հեռանալ ատկէ: 10ին Բալու եկանք: Մէկը եկաւ ըսաւ՝ [«]ասոնք ջուրին եզերքը կեցուցէք, որ քայմաքամ պէյը ինչ որ հրամայէ ան ըլլայ[»]: Մուրատ[22] գետը անչափ տխուր տեսարան ունէր որ, ամբողջ դիակով լեցուն, կարծես լեռները կու լային, 1000[ւոր] դիակներ ալ ջուրէն դուրս ելած էին, իսկ մենք կը դողայինք, մէկ կողմէն ալ կ'ուրախանայինք, թէ ջուրը նետուինք պիտի: Նորէն մէկը եկաւ, պոռաց՝ [«]քեֆիրներուն ինչու՞ սպասել կու տաք, ջուրը նետեցէք»: Հապիպը պոռաց՝ «մինչեւ որ մեր զապիթը չգայ չենք ըներ»: Մեր վիրաւորները եւ մենք գետին ինկանք հողերուն վրայ: Զապիթը եկաւ եւ ըսաւ, [«]քայմաքամին հրամանը աս է որ ջուրը նետուիք, բայց ինծմէ լսեց թէ ինչ ընտանիքներ էք, նաեւ Անդրանիկ Տիգրանեան[ը] Պոլիս տեսած էր եւ զինքն ալ շատ լաւ կը ճանչնար, [հետեւաբար] Բալու պիտի մնաք, 3 օր հանգստանաք: Քալեցէք»: Տարաւ [մեզ] քաղաքին մէջ տան մը քով կեցուց, [ըսաւ՝] «սա տունէն ներս մտէք»: Մեծ դիակ մը

[21] Աղջիկներ, հարսներ պատրաստ եղէք:
[22] Արեւելեան Եփրատ, Արածանի:

կոխելով ներս մտանք, ատիկա տանը տէրն է եղեր, իրենք շատ հարուստ են եղեր, սենեակներ կար նստեցանք: Ժամը 1 կար, ըսին՝ քայմաքամը ե-կաւ, տեսան[ք] որ մեր զապիթին հետ ահռելի գազան մը եկաւ, չորսկողմը դիտեց, դարձաւ՝ «Տիգրանեանները ոտքի թող ելլան»: Վահանը երեսի վրայ պառկած մնաց, մենք 3 կիներ եւ 2 պզտիկ աղջիկներ, [եւ] Պետրոսը՝ կեցանք, բնաւ չըսինք թէ այր մարդ ունինք: [«]Գիտէք,- ըսաւ,- ես Անդրա-նիկ էֆ.ին Պոլսէն կը ճանչնամ եւ պատիւն ալ շատ տեսած եմ, մեղք որ ա-սանկ եղաք, ես ձեզ չեմ սպանել տար, նաեւ միւս կիներուն[»]: Եղաւ երկ-րորդ օրը, աս մարդը եկաւ, բերելով հետը մեզ կերակուր եւ հաց, քիչ մը վերջը երկու իմամներ ղրկած էր, թէ իրենց աղջիկ պէտք է տանք, ես գացի եւ պատասխանեցի՝ «մենք մեռած ենք արդէն աղջիկ չունինք տալու, ինչ կ'ուզէք ըսէք»: Մտածեցին եւ հեռացան:

Նորէն ճամփայ հանեցին մեզ դէպի Խարբերդ, շատ նեղութիւն տալով ճա-նապարհները, հասանք Հիւսէյնիկ[23] ըսուած գիւղաքաղաքը, տեսանք որ պատուհաններէն այր մարդիկ, կիներ, գլուխներնին կը զարնէին եւ կ'ըսէին՝ «վախ, ուրկէ կու գաք». մենք ալ 1, 2 անգամներ ըսինք մի երեւաք, սկսան մեզ զարնել թէ ինչ կ'ըսէք, եւ արդէն շուկաներուն մէջ իրենց գոյքերը սկսած էին ծախել: Բաւական այդ գիւղէն հեռացանք, Խարբերդը տեսնուեցաւ, հա-զիւ մօտեցած էինք հիւանդանոց մը տեսանք որ[ուն] պատուհաններէն հայ երիտասարդներ սկսած էին մեզ դիտել: Ատոնց մէջ էրզրումցի երիտասարդ մը կայ եղեր, երբ մեզ տեսաւ, միւսներուն կ'ըսէ [«]ասոնք բարձր տուներու ընտանիքներ էին, աս ինչ են եղած, մենք ալ ուրեմն պիտի մեռնինք, բան մը կայ[»]: Տանելով մեզ դարձեալ կեցուցին մէջտեղ մը: 2 ամերիկացի աղ-ջիկներ կեցած կ'ըսէին, հաւատքներդ չուրանաք՝ եւ կը զարմանային մեր վրաները դիտելով: Տարի Մուալիմ[24] ըսուած շէնք մը լեցուցին մեզ, Մեզրէէն քիչ մ'հեռու: Հոտ մեր [պահակորդ] զինուորները ալ գացին, զապիթը բնաւ չտեսանք, ուրիշ զօրքեր զէնքերնին բաց կեցան, հոտ բանտարկուեցանք: Գիշերուան ժամը 3ին մեր սենեկին դուռը զարնուեցաւ՝ բացինք, Նիւսրէթը եւ զապիթ մը: Մեր զապիթը այդ մարդուն ըսած էր թէ այր մարդ մը կայ ա-սոնց մէջ, բայց դուն բնաւ գիտցած մ'ըլլար: Այս մարդը միւսներուն նայելով (բաղդատմամբ – Ա.Կ.) բաւական լաւ մարդ մըն էր, ըսաւ՝ [«]ասկէ վերջ դուք ինծի յանձնուեցաք, եկայ պէյին հետ որ վիրաւորները զատեմ: Հիմա կառ-քերը կու գան, բայց ես կ'ուզեմ որ ձեր մէջի աղջիկներն ալ տանիմ եւ հարս-ները: 2-3 հատ ալ կին, որպէսզի ձեզ որ ասկէ ղրկեն, ըսեմ թէ 25 օր տուէք գոնէ, վիրաւորները եւ հիւանդները առողջանան[»]: Անմիջապէս ամէնը

[23] Գիւղ Արեւմտեան Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդ գաւառում, Խարբերդ քաղաքի մօտ: Խարբերդի նահանգի երկրորդ հայաշատ բնակավայրն էր: 1914ին ունէր 4500 հայ բնակիչ (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 3*, էջ 421):

[24] Արաբ.՝ ուսուցչանոց (մանկավարժական համալսարան):

տարաւ: Առտու եղաւ, կառավարութեան կողմէ հաց բերուաւ մեզ: Նորէն այդ մարդը դեղագործ մը առած եկաւ, իրեն հետ բերած էր կարգ մը դեղեր, նայեցաւ, տուաւ, քիչ վերջը ամերիկացի 2 օրիորդներ զգեստներ եւ ուտելիքներ առած եկան, բայց չթողուցին [իրենց, ըսելով] թէ արգիլուած է, անոնք [պահակները] շատ խօսքերով եկան մեզ բաժնեցին, ուտելիքներն ալ իրենք առին:



Հատուած ձեռագրից

3[րդ] օրը սկսան Խարբերդի հայերու ճամփայ հանելները, բայց, Պսակ վարդապետը եւ քանի մը հոգիներ առաջուընէ ղրկած են եղեր: Պատու-

հաններէն կը դիտէինք, կու լայինք թէ պիտի ասոնք ալ մեռնին, բայց առանց գիտնալու կը մեկնին: 1 օր, նայինք՝ դաշտը հարիւրաւոր մարդիկ կ'երեւին, մէկը չկայ որ լսենք: Վերջը դռնապան զինուորներուն հարցուցինք, ի՞նչ են: Պատասխանեց սվազցիներ են: Մէջերնին այր մարդ բնաւ չկար, սպանած էին: Եկրորդ օրը ատոնք բնաւ չկային. ղրկեցին: Ալ ամէն օր զինուորականներ կու գային եւ կը պոռային՝ աղջիկ եւ հարս տուէք: Մեծ կիները կը պատասխանէին՝ չկայ: Տեսան[ք] որ այս ա՛լ չի քաշուիր, ելան[ք] այդ մեզ որ իրեն յանձնած էին՝ այդ զինուորականին լուր տուին[ք], անմիջապէս արգիլել տուաւ, թէ՝ ասոնք կառավարութեան հրամանաւ բանտարկուած են, մեզ առաջարկեց թէ՝ [«]դուք պէտք է տաճիկ ըլլաք, նաեւ Վահանը որ կարենամ ձեզ պաշտպանել, եթէ ոչ՝ ձեր աղջիկներն ալ, հարսներն ալ կ'առնեն[»]: Ալ խորհեցանք ի՛նչ ընենք, ըսինք մեզ Մեզրէէ[25] իջ[եց]ուր, տուն բռնէ, անկէ, վերջ: [«]Կ'ըլլայ,- ըսաւ,- միայն Վահանին ողջ ըլլալը չպիտի իմանան, եթէ ոչ՝ կը մեռցնեն»: Եկրորդ օրը մնացած կիները եւ մենք գացինք Մեզրէէ: Ամէն օր տաճիկ կիներ սկսան մեր տունը գալ տղայ, աղջիկ, կին ուզել, բայց կ'ըսէինք, մենք չենք գիտեր, Մեմէտ էֆ. գիտէ, եւ իր քով կ'երթային: 40 օր մնալէ վերջ, օր մը դուռը զարնուեցաւ [«]ո՞վ է ըսինք[»]: Տաճկերէն պատասխանեցին՝ փոլիսներ էին, [«]բացէք, չէնէ դուռը կը կոտրենք[»]:
Բացինք դուռը, ներս մտան, Վահան Տիգրանեան[ը], որ տոլապին[26] մէջ պահեցինք, խուզարկեցին գտան, տարին բանտարկեցին: Այն ժամանակն է որ Խարբերդի մէջ 900 հայ օրուան մէջ կը բանտարկեն, գիշերը լեռը կը հանեն կը սպանեն: Կու լայինք, կ'ողբայինք, ճար չկար: Գիշեր մ'ալ, բանտը [որ] մեզ մօտ էր սկսաւ վառիլ, իրենց մէջ մեծ իրարանցում մը եղաւ, կը պոռային՝ [«]ֆետէիները բանտը վառեցին, ելէք եւ հայերը սպանեցէք[»]: Ինչ սարսափելի վայրկեան: Առտու եղաւ, Մեմէտ էֆ. եկաւ եւ ըսաւ [«]պատրաստուեցէք որովհետեւ կ'ուզեն ձեզ ճամփել, ես պիտի աշխատիմ որ չձգեմ[»]: [«]Ի՞նչ եղաւ Վահանը,- ըսինք,- ի՞նչու բանտարկեցին[»]: [Պատասխանեց՝ [«]որովհետեւ այր մարդ է[»]: [Մենք ալ ըսինք՝] «հատէ միասին երթանք մեռնինք»: Առանց պատասխան տալու մեկնեցաւ: Անմիջապէս ելանք բանտ գացինք բոպիկ ոտքերով, գլուխներս բաց, գացինք որ, ամբողջ դիակներ, 20 հատի չափ վառած, բանտին ալ՝ մէկ կողմը: Ասոնք հայ յեղափոխականներ են եղած, տեղացի, [«]լաւ է,- ըսեր են,- ասոնց ձեռքով չմեռնիլ, կրակ ձգենք եւ վառինք[»]: Տեսանք որ Վահանը կարծես կիսամեռ եղած էր, մեզ տեսնելուն պէս սկսաւ երեսներս նայիլ, մենք ալ դռնապանին կ'աղաչենք՝ [«]դուն գիտես, թող ներս երթանք, 2 վայրկեան խօսինք[»]: Վերջապէս թողուց ալ: Վահանը բոլորովին ինքզինքը կորսնցուցած, յուսա-

[25] Քաղաք (աւան, գիւղ) Արմ. Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդի դաշտում, Խարբերդ քաղաքից 5 կմ. հր.-արեւմուտք: Այժմ թուրքերն անուանում են Էլազըգ (Յակոբեան, Մելիք- Բախշեան, Բարսեղեան, *հտր. 3*, էջ 754):
[26] Թրք.՝ պահարան:

հատած էր, ըսալ՝ «]մեզ եւ մեկնածներուն այս երեկոյ պիտի տանին մեռցնելու, դուք ալ կրնաք, թոյն առէք եւ կերէք, ասոնց ձեռքը մի մնաք, երթաք բարով, վերջի տեսութիւններս է[»]:
Համբուրեցինք զինք եւ հեռացանք, լալով տուն գացինք, ուր հիւանդանոցէն տաճիկ մ'եկած է[ր] թէ, տեղւոյս միրալայ[27] Մեմէտ Ալի պէյ, հիւանդանոց այցելած է, [եւ հարցուցած՝ «]այս ընտանիքներէն Տէր Ազատեաններու աղջիկը կայ եղեր Կարապետ էֆ.[ի ու՞ր է]: Մերիններն ալ ըսած են որ տունն է: [«]Գացէք եւ հիմա բերէք[» ըսած է]: [«]Ես եմ» ըսի, առին տարին [զիս]: Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլայ: Գացի տեսնուեցայ. «աղջիկս,- հարցուց,- ձեր ընտանիքը, հայրդ ի՞նչ եղաւ»: Պատմեցի իրեն թէ, անոնք, եկրորդ պարխանա[28] պիտի ելլային, մինչ հանեցին՝ սպանեցին, ահաւասիկ, մեր քաղաքացիք եւ մեր ընտանիքը հոս են վիրաւոր, միայն ամուսինիս քրոջը տղան, վիրաւոր բանտն է, եկան տուն[էն] տարին զինքը: Անունը որ տուի՝ [«]կը ճանչնամ զինքը[,-ըսաւ-:] Քանի որ հայրդ իմ ամենասիրելի բարեկամս է, եւ ես այս տեղի հրամանատարն եմ, խօսք կու տամ, որ ձեր, այսինքն՝ Տիգրանեան ընտանիքը եւ միւսները հոս թողում, քանի ողջ եմ»]: «Պէյ,- ըսի,- բանտարկեալներն ի՞նչ պիտի ըլլան»: Հիմակուհիմա խօսք չեմ տար հանելու, միայն կ'ապսպրեմ, բանտին միւտիւրին, որ զինքը չսպանեն, մինչեւ ինծմէ տեղեկութիւն չառնեն»: Եւ ճիշտ ատանկ ըրաւ: Եկրորդ օրը գիշերուան ժամը 1ին, զինուոր մը եկաւ, ինձ եւ իմ ներոջս տարաւ: Գացինք, որ Սուլէյման Ֆայըք փաշան, որ հիմա Պոլիս կը գտնուի, [եւ] ինքը նստած են: Հոտ նստեցանք: Ֆայըք փաշան ըսաւ. «մատամներ, պէյը ինծի խօսած է ձեր ընտանիքին մասին, ամէն ինչ ձեզ չպիտի խնայենք»: Մենք ըսինք՝ «մեր ընտանիքէն բանտարկուած մէկը ունինք»: [«]Հիմա բան մը չենք կրնար ընել,[- ըսաւ,-] մինակ կը պահենք զինքը եւ չենք թողուր որ սպանեն, անանկ հրաման մը ունինք ձեռքերնիս Պոլսէն որ, մէկ հայ աշխարհի մէջ չպիտի թողունք»: Մենք ալ ըսինք՝ «ուրեմն մեզ ինչու՞ թողուցիք»: [Պատասխանեց թէ՝ «]ատ ալ խորհուած է, որովհետեւ մեր կիները բնաւ բան մը չեն գիտեր, պէտք է հայ կիներ առնենք, որպէսզի մեր ընտանեկան կեանքերնիս փոխուի[»]: «Փաշա,- ըսինք,- եթէ հայը գէշ է, ի՞նչպէս կ'ըլլայ»: Չպատասխանեց, ելանք գացինք: Երկրորդ օրը ժամը 11ին, նորէն մեզ կանչեցին: Մենք հասկցանք թէ մեր գլխուն գալիք կայ, գացինք: Սկսան ըսել՝ «ձեզմէ աղջիկ մը մեր պզտիկ մանչերուն կու տաք, նիքահ[29] կ'ընենք, պանքաներէն դրամներդ կը հանենք, ձեր այր մարդն ալ կը հանենք, եթէ ոչ՝ մեռած էք ամէնքդ ալ»: Մտածեցինք, իրարու երես նայեցանք, ըսինք՝ «վաղը լուր կու տանք[»]: [«]Լաւ[»] ըսին: Ելանք տուն գացինք, եղածը սկսանք պատմել: Կատարեալ մեզ համար մահ էր, երբ ըսինք՝ աղջիկներս որ 12

[27] Գնդապետ:
[28] Պարսկ.՝ կարաւան:
[29] Թրք.՝ պսակ, ամուսնութիւն:

տարեկան էին, սկսան լալ եւ ըսել[՝ «]թունաւորեցէք մեզ, աս ինչ խօսքեր են, մեր հայրիկները մեռցուցին, մեզ իրենց կու տաք»: Լուսցաւ լացով [եւ] մտածելով: Խորհեցանք թէ, անպատճառ բանտը երթանք եւ Վահանին ը-սենք: Գացինք խօսեցանք, պարոն Շահպազն ալ Պոլսէն ղրկած էին, որ հոտ սպանեն, տեսաւ որ այդ տեսակ բան մը կը խօսինք, լացաւ եւ ըսաւ. «տիկիններ հայերուա այս օրը չտեսնէի»: Սկսաւ լալ, Վահանը սկսաւ խորհիլ եւ ըսել՝ «պարոն Շահպազ, ի՞նչ ընեն, քանի որ, մանչերնին, 11 տարեկան են, աղջիկներն ալ նոյնպէս թող ըսեն կու տանք. երկու ճամփայ՝ կամ մեռնիլ եւ կամ տանելու է այս ցաւերը մինչեւ վերջ: Եթէ ասոնցմէ մէկը ողջ մնան, ապագային [թող] պատմեն մեր հայ ազգին տառապանքները»: Լալով, լա-լով հեռացանք: Ճիշտ նոյն ժամուն դարձեալ կանչեցին մեզ, եւ՝ «ի՞նչ ըրիք, ի՞նչ պատասխան [տուիք]» [հարցուցին]: «Ի՞նչ ընենք դուք ինչպէս կը հրա-մայէք թող ըլլայ» [ըսինք]: «Գացէք դուք ամէնքդ ալ պատրաստուեցէք վաղը ամէնքդ միասին քանոն [ոստիկան] մը կը ղրկենք թրքանալու եկէք» [ըսին]: Երկրորդ օրը նստած [էինք] ամէնքս, յանկարծ դուռը զարնուեցաւ եւ ահա երեւեցան 2 սարսափելի քանոններ: «Ելէք, որպէսզի բուն օրէնքը ընդունիք, որ ասկէ վերջ մարդու պէս ապրիք[»], առան լալով տարին մեզ հոտ որպէս թէ տաճկացուցին: Հոտ կանգնած կային 200ի չափ աղջիկներ, կիներ եւ տաճիկ այր մարդիկ, ամէնը կը զատէին մէկ հատ կ'առնէին, ներս կ'երթա-յին մէկ-մէկ թուղթ ձեռքերնին, կին ըրած նիքաի կտրած կը տանէին: Ինչ սարսափելի տեսարան: Մեզ հետեւող զինուորը [մեր մասին] ըսաւ՝ «ասոնք փաշաներուն խնամիներն են»: Առաջ անցուցին, ահռելի կրօնական մը նստած, իրեն արբանեակներով, շիւքիւր բառը միշտ կրկնելով, ըսաւ եր-կար-բարակ խօսքեր, իսկ մենք ապշած իրարու կը նայէինք: Որպէս թէ թրքացուցին, ելանք տուն գացինք: Իրիկուն եղաւ, իրենք եկան սկսան տաճկերէն անուններ տալ մեզ եւ ըսել՝ «հայերէն մէկ բառ չպիտի խօսիք, ձեր աղջիկներուն նիքահը վաղը պիտի կտրուի, Սուլէյման Ֆայըք փաշային տղան արդէն Պոլիս վարժարանն է, իսկ միրալայ Մեմէտ Ալիին տղան 10 տարեկան, քովերնիս է: Ատոնք բոլորը իրենց խելքով կարգադրելէն վերջ դարձաւ՝ «ես դրամ չունիմ, 50 ոսկի տուէք, որ ձեր փեսան Պոլիս վարժա-րան ղրկեմ» [ըսաւ]: «Պէյ,- ըսինք,- հիմա մենք մերկ ենք թալնուած»: «Օհ, ես պանքան հարցուցած եմ դուք դրամ ունիք, եւ 2 օր միջոց ձեզ, գացէք գանձեցէք եւ բերէք»: Աստուած իմ ուր դիմենք, ի՞նչ ընենք: Գացինք պան-քան: Տիրեքթորը հայ կաթոլիկ էր: Երբ մեր վիճակը տեսաւ զարմացաւ եւ ըսաւ. «երէկ եկաւ միրալայ մը, նայիլ տուաւ որ դրամ ունի՞ք, եւ ես հասկնա-լով խնդիրը՝ մենք մինչեւ Պոլսոյ պանքայէն տեղեկութիւն չառնենք, այս դրամները բնաւ չեն վճարուիր [ըսինք]: Ըսէք՝ ի՞նչ կ'ուզեն»: Պատմեցինք մեր գլխէն անցածը, եւ յանկարծ չար մարդու մը ձեռք իյնալը: «Օհ,- ըսաւ,- ամբողջ քաղաքը իր եւ այդ փաշային ձեռքն է, ամբողջ հայերուն Խարբեր-դի բանտը լցնելով սպանել տուին եւ 1000[աւոր] լիրաներու տէր եղան, մենք ալ իբր պաշտօնեայ հոս ենք, կարելի է մեռցնելու տանին մեզ վաղը կամ

քանի մը օրէն»: Իսկ երկրորդ տիրեքթորը, որ եահուտի էր, դարձաւ մեր արտասուքները սրբելով [ըսաւ]՝ «դուք միք հոգ ըներ, դրամը կու տանք որ չըլլայ ձեզ սպանեն, գացէք եւ ըսէք իրեն, սպասէ պէյ 15 օր, Պոլսէն պանքայի միջոցով բերել տանք»: Գացինք [ըսինք]՝ «լաւ, դուք գիտէք», ըսաւ սերթ[30] խօսելով: 15 օր վերջ 2 ներերս պանքան գացինք, 50 ոսկի վճարեցին, տարինք մեր որբերը մերկ, անօթի թողլով, անիծելով տուինք: [Պէյը] ինչ ուրախութիւն ունեցաւ, տղան կանչեց՝ «տես,- ըսաւ,- քեզի համար է»: Ընտանիքով ուրախացան, հոտ ըսաւ՝ «վաղուանէ սկսեալ ամբողջ էրզրումցիներուդ օրական հաց կապել տամ կառավարութեան կողմէ»..., գիտէ թէ անօթի կը մեռնինք: Սկսան տալ. 50 լիրայի փոխարէնն է:

Այս անցաւ 1 ամիս, Խարբերդը արդէն պարպուեցաւ. տանելով բոլորը մեռցուցին: Օր մըն ալ փախանք գացինք ամերիկեան քոնսիլա: Մարդը շատ լաւ ընդունելութիւն ըրաւ, շատ խօսելէն վերջ «միւսի քոնսիլ ի՞նչ պիտի ընենք, ճամփայ մը ցոյց տուր» [ըսինք]: [Ըսաւ՝ «]քալած օրերնէդ իվեր կը խորհինք, թէ այս կիները ազատենք: Անչափ ատենը գէշ է որ նոյնիսկ մենք վտանգի տակ ենք, աւելի լաւ է, Մեմէտ Ալին, միրայլայ[ը] եւ փաշան երկրին Աստուած է, ձեզմէ կ'աղաչեմ որ լաւ վարուիք, քանի որ Վահանն ալ բանտն է»: Շատ խօսելնէս վերջ ըսաւ. «ես [կը] գանգատիմ, հակառակ պարագային՝ փախէք հոս»: Ելանք տուն գացինք: Տէրը եկաւ, սկսաւ խօսիլ եւ ըսաւ՝ «թէեւ ցաւալի բայց ինչ ընենք, Պոլսէն հեռագիր առինք, որ Էնվէր եւ Թալաթ փաշաները հրաման կ'ընեն, 1 հայ պահողը կախաղան պիտի ելլայ: Ինչ ընելիքներս չենք գիտեր, տուէք ինծ 175 լիրա չէնէ, մեր հարսնացուները ետ կ'առնենք եւ ձեզ կը ղրկենք մեռցնելու», ըսաւ եւ մեկնեցաւ, ետ դարձաւ կրկնեց՝ «լացը օգուտ չունի, Վահանն ալ բանտէն կը ղկրեն[ք], մեկնեցէք»: Շունչերնիս կտրած քոնսիլա գացինք, մարդը ըսաւ. «դրամի համար է, մի՛ վախնաք, քանի որ պանքայէն լսած է ձեր դրամին քանակութիւնը, պիտի առնեն որ հանգստանան, ես պանքան կ'երթամ կը կարգադրեմ, դուք վերջը գացէք առէք, թէեւ չէք չունիք, բայց տարած են ինչ ընէք, միայն դրամը որ տաք աղաչեցէք, որ կարելի է Վահանը հանէ»: Դարձեալ գացինք պանքան, 175 օսմանեան լիրա առինք, բոպիկ ոտքերով իր տունը գացինք, համրեցինք դրամները, երբ լալով ըսինք՝ «պէյ գոնէ Վահանը բանտէն հանէ»՝ «այո,- ըսաւ,- պիտի հանեմ 3 եւ կամ 5 օրէն»: Տրտում, տխուր գացինք եւ Վահանին մօր պատմեցինք եղածը: Եւ իրաւ, 5 օրէն Վահանը տուն եկաւ, եղածը պատմեցինք: «Լա՛ւ ըրիք, ինչ ըսեմ» [ըսաւ]: Երեկոյին Վահանը առինք իրեն [միրալայ Մեհմէտ Ալիին] տարինք, ձեռքը պագաւ եւ ըսաւ. «իմ ընտանիքս 2 օրէն Պոլիս կը ղրկեմ, ձեզ ալ իմ տունս պիտի բերեմ որ բնաւ չվախնաք, հօր պէս կը նայիմ ձեզ, միւս էրզրումցիներուն ալ հոս կը թողում իմ խնամիներուս խաթէրը»: Վահանն ալ պատասխանեց «շատ լաւ»: [Ան] 6 օրէն [իր] ընտանիքը ղրկեց, մենք ուրախ ենք որ տղան հեռացաւ: Փարա-

[30] Թրք.՝ կոշտ:

զիտ[31] է: Աւազակի նման կը խորհին, իրիկունը տուն կու գայ կը սկսի պատմել: Մէկ օր մըն ալ ըսաւ «Վահան, դուն եւ պզտիկ Պետրոսը [պիտի] թլփատուիք, հիմա կ'երթամ կառք մը ուտելիք կը ղրկեմ, թող կերակուր շինեն, վաղը թլփատուիք»: Ախ Աստուած իմ, «երանի մեռնողներուն,- կ'ըսենք,- այս ի՞նչ է»: Պետրոսը, որ 6 տարեկան էր կը հարցունէ՝ «եղածը ի՞նչ է»: «Բան չկայ» [կ'ըսենք]: Երկրորդ օրը տունը անկողիններ եկան՝ պատրաստութիւն. զինուորական մը 2 տոքթորներ առած եկաւ, անպիտան մարդն ալ եկաւ, Պետրոսին իր անունը դրած էր, պոռաց՝ «Մեմէտ Ալի եկուր» տղան [Պետրոսը] վազեց: Ես դուրսն [էի]. սկսաւ լացը, տղուն ձայնը առի, որ մայրիկ կը պոռար, գացի, շունը չթողուց [ներս մտնեմ], ըսելով՝ «մուտերէմ էք»[32]: Լմնցան [թլփատումը], Վահանին ալ ըրին: Երկրորդ օրը սկսան նուագներ զարնել, պարել, տղան հիւանդացաւ կարծելով թէ դարձեալ պիտի սպանեն... եւ... մեր ընտանիքը 3 ու ½ տարի տան մէջ անտանելիին ձեռքին տակ չարչարուեցանք: [Օր մըն ալ] զինքը Պոլիս կանչեցին, մեր ամբողջ տաճկութեան եւ [այլ] թուղթերը պատռեց հեռացաւ: Ես տաճիկի տարազով նիքէհ էի, 2 որբերովս միասին ջորեպաններուն հետ Հալէպ փախայ, միւսները կը մնան Խարբերդ մինչեւ հիմա:

THE EYE WITNESS ACCOUNT OF SHUSHANIK DIKRANIAN ON THE FIRST ARMENIAN CARAVAN EXILED FROM HER NATIVE CITY OF ERZERUM (SUMMARY)

ANNA KAZARYAN (kazaryananna15@gmail.com)

The article is the first-hand account of Shushanik Tigranyan, a native of Erzurum and the daughter of a renowned family of the city. Tigranyan was among the first caravan of Armenians deported from Erzurum.

Tigranyan survived the uprooting and exile and put into writing her horrible memories of the killings, massacres, lootings and kidnappings she witnessed during the tribulations of her caravan.

It should be noted that this testimony is among the relatively very few eye witness accounts that highlight the deportation of the indigenous Armenians of the city of Erzurum and their tragic exodus.

[31] Մակաբոյծ:
[32] Արաբ.՝ արգիլուած էք:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ՇԱՏԱԽԻ ՇՐՋԱՆ. ՍԵՐՈԲ ՔՈՍԵԱՆԻ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԷԼԻՆԱ Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
elina-mirzoyan@ysu.am

ՄՈՒՏՔ



Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած Սերոբ Քոսեանը ծնուել է 1899ին, Շատախ գաւառակի շրջկենտրոնում՝ Թաղում: Նա իր ծննդավայրի մասին գրի է առել արժէքաւոր երկհատոր[1] յուշագրութիւն, իսկ իր կենսագրական դրուագների մասին առաւել մանրամասն գրել, ի մի է բերել եւ աւարտել 70 տարեկան հասակում, 1969 Հոկտեմբերի 5ին, հուսկ՝ ծերութեան գրուած բանաստեղծութիւնները՝ 1971ին[2]: Հայոց Ցեղասպանութեան ականատեսը, պատանի տարիքում շատ բան էր տեսել, հասկացել: Սակայն նա իր վերապրումը յաղթահարել է իր առաջադրած մեթոդով. հնարաւոր կորստից փրկել ոչ թէ ընտանիքի, գերդաստանի, այլ մի ամբողջ գիւղի պատմութիւնը՝ հայ ժողովրդի այդ շրջանի պատմութիւնը, իր առանձնայատուկ նկարագրով:

---

[1] Սերոբ Քոսեանը ընթեռնելի ձեռագրով գրի է առել երկպրակ յուշագրութիւն՝ «Շատախի գըլին (հովիտ)» (գիրք առաջին) եւ «Շատախի ծոեր» (գիրք երկրորդ): Երկու գրքերն էլ նա գրել է 1968ին: Առաջին գիրքը բաղկացած է 370 էջից (շուրջ 10-20 էջը վնասուած է, սակայն հնարաւոր է եղել բոլորը վերականգնել), երկրորդը՝ 76: Երկու գրքերն էլ գրուած են խնամքով, գրքային կառուցուածքով, տրամաբանական, դասակարգուած, բովանդակային համակարգուած ուղեգծով: Յուշագրութիւնների ձեռագիր բնօրինակը պահպանւում է Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ հիմնադրամում (ՀՑԹԻ): Այն ՀՑԹԻին է նուիրել յուշագրողի որդին՝ Սուրէն Կասեանը, 2008 Ապրիլի 26ին (ՀՑԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժ. 8, ֆի. 119, 120): Երկհատոր յուշագրութիւններին ուղեկցող մէկ լուսանկար կայ՝ հեղինակին դպրոցական տարիքի, եւ Քոսեանի ձեռանկար քարտէզ–յատակագիծը ծննդավայր շրջկենտրոն Թաղի:
Յուշագիրն առաջին գրքի թէ՛ խորագրում, թէ՛ բովանդակութեան մէջ պահպանել է Շատախի հովտի ժողովրդախօսակցական անուանաձեւը՝ «Շատախի գըլին (հովիտ)»: Մենք յուշագրութեան խորագիրը պահպանում ենք «Շատախի հովիտը» տարբերակով: Յուշագրութիւնը տպագրական ընթացքի մէջ է՝ մեր գիտական խմբագրութեամբ:

[2] Յղումները՝ համապատասխան էջերով բերուել են Քոսեանի երկու յուշագրութիւնների բնօրինակներից:

Սերոբ Քոսեանի յուշագրութիւնն անհատի պատմութիւն չէ, այլ ժողովրդի, այս դէպքում շատախցիների՝ գլխաւորապէս Վանի նահանգի Վանի գաւառի Շատախի գաւառակի շրջկենտրոն Թաղում բնակուող: Նա Հայոց Ցեղասպանութեան զոհ դարձած իր ընտանիքից միակ փրկուածն է: Յուշագրութեան սկզբնաղբիւրը, որի գիտակցումն ընդգծուած է յուշագրի մօտ, ժողովուրդն է՝ իր էթնոառանձնայատկութիւններով, էթնոմշակութային բնութագրմամբ:

Սերոբ Քոսեանի երկհատոր յուշագրութիւնը եւ ձեռագրած քարտէզը



Հեղինակը, որպէս ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան վկայագրող, բացայայտում եւ նորովի է ներկայացնում Շատախի անյայտ կողմերը՝ «նորայայտ» Շատախը:

Ջուլհակագործների ընտանիքում ծնուած Սերոբը Շատախի ծխական դպրոցում եօթնամեայ կրթութիւն ստանալուց յետոյ որոշել է գնալ հօր՝ Յովհաննէսի ճանապարհով՝ ջուլհակութեամբ զբաղուելու: Լինելով 7ամեայ կրթութեամբ արհեստագործ-արհեստաւոր եւ ճանաչելով իր ժողովրդին՝ իր յուշագրութեամբ փոխանցել այն ժողովրդական արժէքները, որոնք գիտական բազմոլորտ ուղղութիւնների համար կարող են սկզբնաղբիւրային անփոխարինելի արժէք լինել: Իդէպ, Շատախի վերաբերեալ անտիպ յուշագրութիւնները մեծաթիւ չեն:

Հազարաւոր բռնագաղթեալ շատախցիների նման Սերոբն էլ 16 տարեկանում «*բռնի կերպով հեռացուել է իր աննման, քաղցր դրախտ ծննդավայրից... 1915 թ. Յուլիսի 22-ին ինչպէս միլիոնների նման, մենք էլ թողինք մեր տուն ու տեղը, մի կտոր հաց վերցնելով՝ դէպի ու՞ր եւ ո՞ր մեղքի համար՝ մեզ յայտնի չէր, ճանապարհ ընկանք ոտքով, անտէր, դէպի շատ հեռուներ*»[3]:

Հայ-քրդական յարաբերութիւնների մանրավէպերի, մանրապատումների շրջանակում, յուշագիրը նաեւ նկարագրում-բացայայտում է թուրքերին՝ առանձին կերպարների միջոցով. նա իրեն բնորոշ դիտողականութեամբ եւ նկարագրողականութեամբ է անդրադարձել կերպարներին. «*Գրածներիս մէջ կայ նաեւ մարդկանց անուններ, որ յիշուած են երկրորդական անուններով*»[4]: Հեղինակը բովանդակային առումով իրողութիւնների ճշգրտութիւնն է պահպանում՝ սակայն մերթընդմերթ կիրառելով նաեւ անուանական փոխակերպումներ, այլաբանական միջոցներ/հնարներ:

ՍԵՐՈԲ ՔՈՍԵԱՆ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ, ՇԱՏԱԽԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԿՐՈՂ-ՓՈԽԱՆՑՈՂ

Քոսեանը նշում է, որ որոշապէս, բռնագաղթի ընթացքում զարհուրելի տեսարանները նկարագրելն իր թեման չէ, քանի որ դրան անդրադարձողներ շատ ու շատերը կը լինեն: Իր նպատակը, որպէս Շատախից բռնի դուրս եկած վերջին սերնդի ներկայացուցիչ, Շատախի էթնոմշակութային ժառանգութիւնը փոխանցելը եւ հնարաւոր կորստից փրկելն է: Այդուհանդերձ, հեղինակն անդրադարձել է ցեղասպանութեան տարբեր դրուագներին: Շարադրման իւրայատուկ ոճը չի խանգարի ընթերցողին բացայայտելու Հայոց Ցեղասպանութեան տասնեակ դրուագներ, որոնք կարող են այլ դիտակէտից լուսաբանել ցեղասպանութեան բազմաշերտ ծրագիրը: Միջէթնիկ եւ ներէթնիկ յարաբերութիւնները ներկայացնող դրուագներով ուրուագծում է նաեւ հայ-քուրդ-թուրք փոխառնչութիւնների պատկերը: «*Ինչ-*

[3] Քոսեան, «Շատախի գըլին», էջ 321:

[4] Նոյն, էջ 3:

պէս յայտնի է, թիւրք պետութիւնը, փոխանակ իր սուրը պարզելու իր թշնամի պետութիւնների դէմ, ... այս անգամ նորից սկսեց իր կատաղած սուրը պարզել անպաշտպան հայերի դէմ, օրը ցերեկով ամբողջ աշխարհի աչքի առաջ սրի քաշեց 2½ միլիոն անմեղ հայերին եւ Հայաստան թողեց առանց հայերի»[5]:

Բռնագաղթից ողջ մնացած հայերը, այդ թւում՝ իր ընտանիքի բոլոր անդամները, յուշագրի յիշատակմամբ, թափառող գաղթականութեան մեծաթիւ մասի նման զոհ են գնացել Բենդիմայա[6] գետում:

Կենդանի մնացած հայերը, որպէսզի կարողանային փրկուել կոտորածից, փախնում էին զօրուգիշեր իրանց տներից: Փախնում էինք սոված, ծարաւ, կեղտոտ, անքուն, վախը մեր սրտերում, թշնամին հետապնդում էր մեզ, կարող էր փախուստի ճանապարհը փակել եւ կոտորել նաեւ մնացածներին, այդպէս էլ եղաւ, Վանից Բերկրի հասնելուց՝ արդէն քիւրդ եւ թիւրք խուժանները փակել էին Բերկրի[ի] հովիտը եւ սկսեցին իրենց անխիղճ կոտորածը նորից: Ժողովուրդը անպաշտպան փախչում էր այս ու այն կողմը՝ թողնելով ճանապարհին մէջքին կապած կտոր հացը, ծնողներ իրանց փոքր երեխաներին, գոռում-գոչում էին վիրաւորները, մի դժոխային տեսարան էր բացուել: Պակասը լրացրեց ճանապարհի մօտով անցնող արագաւազ Բենդիմայա գետը, նա էլ քշում, սրբում, տանում էր դէպի ծով թափառող գաղթականութեանը: Նոյն գետին զոհ գնաց նաեւ իմ քոյր Արշալոյսը՝ 12 տարեկան[7]:

Ողջ մնացածների հետ Քոսեանը 15-18 օրից հասնում է Էջմիածին.

... մերկ, սոված, կմախք դարձած, եւ այդ տեղն էլ չկար մի հոգատար ձեռք, որ մնացած հայ ժողովրդի անտէր մնացածներին փրկէր խոլերա[8] հիւանդութիւնից: Ամբողջ մնացած ժողովուրդը թափուեց լճի ափին՝ արեւի տակին, սկսուեց համաճարակը, մեռնում էին հազարներով, սայլեր, վուրգոններ[9] չէին կարող հասցնել՝ մեռածներին փոսերի մէջ լեցնելու, շատ ընտանիքներից եւ ոչ մէկը չազատուեց մահից: Նրանք, ովքեր ժամանակին հասկացան եւ միջոցներ ունէին, ուրիշ շրջաններ ցրուեցին, վերջապէս այդ հիւանդութիւն[ը] եւս լրացրեց թիւրք կառավարութեան պակաս թողած ջարդերը:

Մեր տանից մէնակ ես ազատուեցի, չունէի մի սրտացաւ տէր կամ բարեկամ, գիշերները լուսացնում էի օտարների պատերի տակ, յետոյ ինձ յաջողուեց աշխատել օրական 20 կոպէկ Նորագաւիթի եւ բամբակի արտերում՝ քաղհան կատարելու պարսիկների համար առաւօտեանից մինչեւ ա-

---

[5] Նոյն, էջ 321-22:

[6] Բենդիմայա, Բանդիմահու.- գետ Վանայ լճի աւազանում:

[7] Քոսեան, «Շատախի գըլին», էջ 323-24:

[8] Խոլերա.- հնդկախտ, սուր, վարակային հիւանդութիւն:

[9] Վուրգոն, ֆուրգոն.- բեռնասայլ:

րեւը մայր մտնելը: Յետոյ Զանգու գետափին՝ դաբախանայում[10], նորից օրական 20 կոպէկով աշխատեցի Նազարովսկի փողոցում՝ Մարտիկ եւ Արտիոմ եղբայրների մօտ, որոնք կաշուի խանութ ունէին ռուսական եկեղեցու դէմին, Լուսաւորիչ եկեղեցու դիմաց Յովսէփ Խըզէինի[11] մօտ՝ «Արաքս» գինի խանութ ունէր եւ ուրիշ տեղեր[12]:

...1916ին, շատ վանեցիների նման, իր ծննդավայր հասնելու յոյսով, Սերոբը բռնում է Վանի ճանապարհը, սակայն մէկ ամիս յետոյ վերադառնում Երեւան. «*... չյաջողուեց Շատախ գնալու. Ոստանը*[13] *սահման էր հայ եւ թիւրքերի համար*»[14]:

Յաջորդ տարիներին Քոսեանը եղել է ե՛ւ Թուրքիայում, ե՛ւ նախախորհրդային ու խորհրդային Հայաստանում.

....Իմ կենսագրութիւնս.... շատ ցաւալի է եղել, սովի, նեղութեան շատ տարիներ ենք անցկացրել նաեւ շատերը ինձ նման նախասովետական Հայաստանում[15]:

Միայն սովետական իշխանութեան օրօք հնարաւորութիւն ստացայ բարելաւել նաեւ իմ դրութիւնը. 1924թ. ամուսնացել եմ եւ հիմա ունեմ հինգ երեխաներ, որոնք ստացել են բարձրագոյն կրթութիւն եւ աշխատում են իրենց մասնագիտութեամբ: 1958 թ. ստացել եմ նոր բնակարան՝ իր յարմարութիւններով, հիմա էլ վայելում եմ երջանիկ ծերութիւն[16]:

Յուշագրութիւնը թէեւ գրուել է մեծ տարիքում, սակայն այդ փաստը չի նուազեցնում դրա արժէքը, քանի որ նախ՝ ծերունական հասակում աւելի ես «մօտենում մանկութեանը» քո յիշողութիւններով, որն անմիջական է, չմիջնորդաւորուած, եւ պատահական չէ, որ մանկապատանեկան տարիների դրուագներին մեծ անդրադարձ կայ յուշագրութեան մէջ: Քոսեանը ներկայացրել է Հայոց Ցեղասպանութիւնը վերապրածի կեանքի տարբեր փուլային դրուագները, որով ընթերցողը ծանօթանում է վերապրողի յետցեղասպանական հոգեբանութեանը, ապրած հոգեցնցումներով լի կեանքին:

Քոսեանը մահացել է 1982ին: Իր որդու՝ Սուրէն Կասեանի վկայմամբ, *Էրգրի*ն առնչուող ցանկացած թեմա Սերոբ Քոսեանի հետ հաղորդակցուելու ամենազգայական ուղին էր:

---

[10] Դաբախանա.- թրք.՝ խաղախորդարան, մորթը՝ կաշին մշակելու գործատեղ:
[11] Խազէին.- տէր, սեփականատէր:
[12] Քոսեան, «Շատախի գըլին», էջ 324-25:
[13] Ոստան.- գետ Տիգրիսի աւազանում:
[14] Քոսեան, «Շատախի գըլին», էջ 325:
[15] Նոյն, էջ 326:
[16] Նոյն, էջ 324:

Արժէքաւոր է յուշագրի կազմած հեղինակային քարտէզը[17]՝ Շատախի յատակագիծը[18], որի մասին մանրամասն գրել է «Շատախի գըլխին» գրքում: Յուշագրութիւնը հարուստ է Թաղի վիճակագրական տուեալներով, անուանացանկերով, որոնք հարուստ եւ նոր սկզբնաղբիւր են, քանի որ հիմնուած չեն այլ հեղինակների արդէն շրջանառուող տուեալների վրայ: Միայն ընդհանուր Շատախը նկարագրելիս Քոսեանը որոշ տեղերում յիշատակում է ազգագրագէտ, բանահաւաք Երուանդ Լալայեանին:

ՇԱՏԱԽԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայկական Տաւրոսի լեռնաշղթան ձգւում է Վանայ լճի հարաւային ափերի երկարութեամբ: Նրա վրայ իշխող Վարագի, Արտոսի, Առնոսի, Կոռոպաշի, Եղերովի, Նեմրութի գագաթները դարեր շարունակ դիւցազներգութեան, խորհրդաւոր աւանդութիւնների անսպառ աղբիւր են եղել հայ ժողովրդի համար: Այդ լեռնաշխարհում է տեղաւորուած Շատախը՝ Վանի նահանգի Վանի գաւառի գաւառակը[19]:

Ջրառատ է Շատախը: Նրա լեռներից ու ձորերից սկիզբ է առնում Արեւելեան Տիգրիսը՝ բազմաթիւ վտակներով: Շատախը հարուստ է փարթամ բուսականութեամբ, լեռնային բանջարեղէնով, ծաղկաշատ է, հարուստ՝ արօտատեղերով, խոտհարքներով ու խիտ անտառներով[20]. «*Շատախը նշանաւոր է իր կազմուածքով, սա գերազանցօրէն լեռնային գաւառ է, հարուստ է արօտներով, բայց աղքատ հացով. երկու փոքրիկ դաշտեր-Փեսանդաշտն եւ Խորզանքը միայն տալիս են առատ հաց: Ժողովրդի գլխաւոր զբաղմունքն է ոչխարաբուծութիւնը եւ շալագործութիւնը: Կատարներով հարուստ գաւառը ակօսուած է միքանի խոշոր ձորերով, այդ ձորերի միջով հոսում են Սիվտկին գետը եւ Արեւելեան-Տիգրիսի վերին հոսանքը, որոնք գալիս միանում են երեք ձորերի մի հանգոյցի մէջ՝ կազմելով մի բանաստեղծական վայր: Այստեղ ընկած է գաւառի կենտրոնավայրը-Թաղը, զուտ հայաբնակ մի սիրուն աւան: Շատախի ժողովուրդը աչքի է ընկնում իր քաջութեամբ եւ փոկունութեամբ*»[21]:

---

[17] Յուշագրի ձեռանկար յատակագիծ-քարտէզը ՀՑԹԻին է յանձնել Սուրէն Կասեանը 2008 Ապրիլի 26ին (ՀՑԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժին 13, *Քարտէզ-յատակագիծ, Շատախի շրջկենտրոն Թաղ, 1915)*:

[18] Ըստ Քոսեանի կրտսեր որդի Սուրէնի հաղորդման՝ «Իտալացի լուսանկարիչ Եակոբօ Սանտինիի Հայոց Ցեղասպանութեան յիշողութեան թեմայով 2019ին Վենետիկում կազմակերպած ֆոտոցուցադրութեան բացող լուսանկարը Քոսեանի ձեռանկար քարտէզի ֆոտոարտատպումն է»:

[19] Մարլենա Մուրադեան, *Շատախի բարբառը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1962, էջ 5:

[20] Նոյն, էջ 5-6:

[21] Ա-ԴՕ, *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին*, Լոյս հրատ., Երեւան, 1917, էջ 10:

Զարգացած ոչխարաբուծութիւնը հնարաւորութիւն էր ստեղծել ջուլհակութեան լայն տարածման: Բազմաթիւ շինականների տներում դրուած էր ջուլհակի դազգահը: Թաղում ամէն տղամարդ ջուլհակ էր: Կանայք լուանում, գզում ու մանում էին բուրդը, ներկում բոյսերից իրենց իսկ պատրաստած մշտակայուն, բնական ներկերով, տղամարդիկ գործում էին գոյնզգոյն, նուրբ շալէ կտորներ եւ չնչին գներով վաճառում վաշխառուներին[22]. «*…Այս գիւղը, չափազանց ժայռոտ եւ վարելահողից զուրկ լինելով, չէր կարողանում ո՛չ երկաթագործութեամբ եւ ո՛չ էլ խաշնարածութեամբ պահել իւր բնակիչներին, կամայ-ակամայ պիտի զարգանար մի արհեստ, եւ որովհետեւ մօտակայ Նորդուզ գաւառի սքանչելի արօտատեղիները մեծ զարկ են տալիս խաշնարածութեան, հետեւապէս ե՛ւ այս գիւղացիները մեծ յարմարութիւն ունին հեշտութեամբ ձեռք բերել մեծ քանակութեամբ բուրդ, որից շալ գործել եւ ծախել ոչ միայն Նորդուզի, այլեւ ամբողջ Վասպուրականի բնակիչների վրայ*»[23]:

Թաղը շալագործութեամբ յայտնի շրջանի սիրտն էր[24]: Այն բաժանուած էր երեք թաղամասերի՝ Վերին, Ներքին եւ Ջրաղացի[25]:

Թաղի մասին լրացուցիչ, կարեւոր, վիճակագրական, մանրակրկիտ տուեալներ է հաղորդում Քոսեանն իր «Շատախի գըլին» առաջին գրքում: Նրա յուշագրութեան մէջ այս ամէնի ոչ թէ ստեղծագործական վերարտադրութիւնն է, այլ Շատախի կեանքի նկարագրական պատճէնը, որը հարուստ սկզբնաղբիւրային նիւթ է:

Շատախը Հայոց Ցեղասպանութեան ենթախորքում յիշատակւում է որպէս «40 օր անհաւասար կռիւներում հերոսական դիմադրութիւն ցուցաբերած»[26] գաւառակ: Շատախցի բանահաւաք, ազգագրագէտ Հայրիկ Մուրադեանի ձեւակերպմամբ. «*Շատախը դառնում է հայ ազգային շարժման նշանաւոր օջախներից մէկը Արեւմտեան Հայաստանում եւ հայապահպա-*

---

[22] Մուրադեան, էջ 6:

[23] Երուանդ Լալայեան, «Տնայնագործութիւնը Վասպուրականում. Շատախի շալագործութիւնը», *Ազգագրական հանդէս,* 25(2):1913, էջ 189-215:

[24] Ա-ԴՕ, էջ 375:

[25] Նոյն, էջ 375:

[26] Նոյն, էջ 365: Վասպուրականի հերոսամարտի 25ամեակին նուիրուած տարբեր յօդուածներ տե՛ս՝ *Հայրենիք* 7:1940 (https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayreniq%20Boston/1940(7)_ocr.pdf , մատչում՝ 13 Մարտ 2025): Շատախի մասին տե՛ս նաեւ՝ Մարուսիա Յակոբեանի յուշերը, ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժ. 8, ֆի. 378 եւ՝ Բագիկ Բագիկեան, *Շատախի հերոսամարտը, ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր,* բաժ. 8, ֆի. 32: Որոշ աղբիւրներում նշւում է նաեւ 45 օր, այդ թւում՝ յուշագրութեան մէջ. սա պայմանաւորուած է այն հանգամանքով, որ հեղինակների մի մասը հաշուարկել է մարտական գործողութիւնների սկսման օրից, մի մասն էլ՝ ռազմական դիրքաւորման եւ դրանց մասին լուրերի ու ոչ զանգուածային բնոյթ ունեցող դրուագներից:

նական անառիկ պատուար՝ Վասպուրականի հարաւ–արեւմտեան լեռնաշխարհում»[27]: Այն ոչ միայն իր ժողովրդական էթնոյատկանիշերի, այլեւ իր լեռնային դիրքի բերմամբ հերոսական նկարագիր ունի: Շատախի լեռների շնորհիւ է նաեւ, որ Վանի կուսակալութիւնը խիստ սեւեռուած էր իր ցեղասպանական գործողութիւններով այս ուղղութեամբ. «*Մարտի 29ին, կրկնազարկի[28] Կիւրակի օրը Շատախի կենդրոնավայր Թաղի մեջ բոլորովին անսպասելի կերպով ձերբակալուեցին ուսուցիչ, միեւնոյն ժամանակ դաշնակցական գործիչ Յովսէփ Չոլոյեանը եւ հինգ այլ երիտասարդներ: Այս դէպքը, որ հանդիսացաւ Շատախի հերոսական կռիւների ազդակը… իրարանցում բերեց ժողովրդի մէջ*»[29]: Վանի կուսակալ Ջեւդէթը[30], ով գործում էր խիստ գաղտնապահ, Մարտի 19ին սահմանագլխից Վան վերադառնալով եւ ձեռնարկելով իր ծրագիրը, իր առաջին գաղտնի հրահանգը նշեալ օրն ուղարկել է Շատախի կայմակամին[31]. հայերի բնաջնջման այս ծրագիրը թելադրուած էր Կոստանդնուպոլսից, բայց «*Պոլսին էլ թելադրել էին Ջեւդէթը եւ Վանում գործող իթթիհատական կուսակցութեան պատկանող անհատները*»[32]:

Թաղում էին գտնւում երկու կողմերի գլխաւոր ուժերը[33], այստեղ է քննուել գաւառի ինքնապաշտպանութեան նախապաշտպանական ծրագիրը, ընտրուել զինուորական ղեկավար մարմինը[34]: Այն դառնում է գաւառի հերոսական ինքնապաշտպանութեան գլխաւոր յենակէտը՝ լինելով հայկական գիւղերը միացնող կարեւոր ճանապարհների նախադուռը:

---

[27] Հայրիկ Մուրադեան, «Շատախի հերոսական անցեալից», *Էջմիածին,* Ե:1968, էջ 39. նաեւ՝ Հայկ Աճէմեան, *Վասպուրական: Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ 1915-1930,* Վենետիկ, Ս. Ղազար, 1930, էջ 367. նաեւ՝ Արմենակ Եկարեան, *Յուշեր*, Նոր աստղ, Գահիրէ, 1947, էջ 186:

[28] Ա-Դօ, էջ 381:

[29] Նոյն, էջ 151-53, 372:

[30] Թահիր Ջեւդէթ բէյը, ով յաջորդել է Թահսին բէյին, 1914 Սեպտեմբերին նշանակուել է Վանի նահանգապետ. «*Վանի կուսակալ Թահսին բէյը, որը համարւում էր կրթուած եւ շատ դէպքերում արդարամիտ մարդ, ռուս-գաճկական պատերազմի նախօրեակին նշանակուեց Էրզրումի կուսակալ, իսկ նրա տեղ նշանակուեց Բաշկալէի մութեսերիֆ Ջեւդէտ բէյը, որը Էնվէր բէյի փեսան էր: Ջեւդէտը նոր դէմք չէր, նա Վանի երբեմնի կուսակալ Թահար փաշայի որդին էր, մի սրիկայ դէմք*» (Ա-Դօ, էջ 76). նաեւ՝ Հմայեակ Մանուկեան, «Դէպքերը Վասպուրականում», *Վէմ*, 1:1937, էջ 51-63: Թահսին բէյի մասին տե՛ս՝ Մատթէոս Մ. Էպլիղաթեան, *Կեանք մը ազգիս կեանքին մէջ*, տպ. Կաթողիկոսութեան հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1987:

[31] Ա-Դօ, էջ 372:

[32] Նոյն, էջ 161-62:

[33] Նոյն, էջ 375:

[34] Մուրադեան, «Շատախի հերոսական անցեալից», էջ 41:

Ապրիլի 1-3ը Թաղում դրութիւնն անփոփոխ էր[35]. գործում էր «ջեւդէթական մեթոդը»՝ ծածուկ դիրքաւորում, խիստ գաղտնապահական կարգավիճակ, «սպանիչ»[36] գործելաոճ: Միայն Ապրիլի 4-22ը ամբողջ գաւառում ընթացել են թէժ մարտեր[37]:

Շատախի մարտախմբերի ղեկավարները, «*թող թքեն մեր դիակին վրայ բայց ոչ երեսին*»[38] հերոսութեան բանաձեւումով առաջնորդուելով, հերոսամարտն աւարտում են յաղթանակով. հայ բնակչութիւնը փրկւում է կոտորածից: «*Մայիսի 23ին սկսւում է թշնամու խուճապային փախուստը ռազմաճակատի բոլոր հատուածներից: Դրանից մի օր յետոյ Շատախ է հասնում հայկական կամաւորական գունդը...Շատախի հայութեան ուրախութիւնը մի ամիս էլ չի փեւում: Նրան սպասում էր իր համար անհասկանալի գաղթը հայրենի բնօրրանից*»[39]:

Այս մասին տարբեր հեղինակներ են գիտականօրէն անդրադարձել, սակայն յուշագրութեան մէջ դիմադրող եւ հերոսական Շատախի այդ օրերի վերաբերեալ դրուագների փաստագրումը նոյնինքն ականտեսի կողմից, սկզբնաղբիւրային արժէք է, իսկ Քոսեանի՝ շատախցիների հերոսական ձեռնարկումների մասին յուշագրելն էլ աւելի է արժեւորում յուշագրութիւնը:

ՅՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

Յուշագրութիւնը բաղկացած է երկու գրքից՝ «Շատախի գըլին (հովիտ)» եւ «Շատախի ծռեր»: Յուշագիրն առաջին գրքով ներկայացնում է ծննդավայր Շատախը, Շատախի շրջկենտրոն Թաղը՝ իր մանկութեան եւ ծերութեան ուղեգծերով, որի շրջանակում բացւում են փոքրից մեծ շատախցի սերունդների կերպարները:

> Ամէն անգամ երբ յիշում ես մանկութեանդ անցկացրած երջանիկ եւ անհոգ օրերդ որ անց ես կացրել քու գեղեցիկ, աննման ծննդավայրում, երբ մանաւանդ քեզի բռնի կերպով հեռացրել են այդ քաղցր դրախտից, որ ամէն անգամ յիշում ես եւ քու աչքի, մտքի առաջ բացւում է նորից քու Շատախի լեռնային, անտառային, գետային, աղբիւրային, կանաչաշէն, զմրուխտի ցոլքերով պատած, արեւի պայծառ ճառագայթներով լուսաւորուած քու սիրելի ծննդավայր Շատախին. չես կարող կարօտալի ա՞խ չքաշել, իսկ հիմա արդէն, երբ ծերութեան դուռն ես բացել, որտեղ այլեւս պարզ տեսնում ես եւ զգում խաւարի ու մահուան շունչը, քեզ մնում է յուսահատուիլ եւ գործի դնել քու բոլոր ուժերը եւ փնտռել օրուայ սփոփանք, նրանցից մէկն է վերադառնալ հին յուշերին, որի մէջ տեսնել նոր կեանք

[35] Ա-Դօ, էջ 385:
[36] Նոյն, էջ 390:
[37] Նոյն, էջ 391:
[38] Շահէն Աբրիկեան, «Շատախի կռիւները», *Վան–Տոսպ,* 26:1916, Թիֆլիս, էջ 10:
[39] Մուրադեան, «Շատախի հերոսական անցեալից», էջ 48:

եւ զգալ նորից ջահելութեան շունչ: Որպէս կարեւոր մի յուշ՝ գրեցի մեծ ցանկութեամբ իմ կարօտալի ծննդավայր Շատախի Թաղի երկսեռ աշակերտներով գրած մեր շարադրութիւնների կապակցութեամբ, որին հիմք ընդունելով՝ գրեցի այս փոքրիկ յիշողութիւններ՝ իմ լսած եւ տեսածներով: Գրեցի, որ մօտաւորապէս իմացուի մեր Շատախի կեանքից՝ կենցաղից, բնութիւնից, մեր բարբառից-սովորութիւններից, մի-մի փոքր նմուշներից՝ իր թերութիւններով հանդերձ:

Գրեցի նաեւ՝ հաշուի առնելով, որ Շատախում ծնուածներից հիմա արդէն քչեր են մնացել եւ աստիճանաբար ծերանում ու մահանում են. շուտով կը վերջանայ Շատախում ծնուածների սերունդը, նրա համար էլ ես կ'ուզէի, որ թող չմահանան մեր անցեալի եւ ծննդավայրի յուշերը: Գրեցի մեր երեխաների եւ թոռների համար, որ կարդան, շատէն քիչ գաղափար կազմեն իրենց պապերի երկրից ու կեանքի մասին[40]:

«Շատախի գըլին» գրքում հեղինակը ներկայացնում է բովանդակութիւն՝

1. Հեղինակի կողմից	21. Մոկաց աղան
2. Նախերգանք	22. Կառավարական շէնքերի մօտ
3. Հերկէն Միրզիկը չէր հաւատում	23. Այվազի սրամտութիւն
4. Պարոն Սահակի միջոցառումը	24. Բզօ Անուշենց տուն
5. Թաղականի մարդիկ անձամբ ստուգում են դպրոցի վիճակը	25. Գիշերուայ շրջագայութիւն Թաղի մէջ
6. Շատխու սարեր, բետ-բետ քարեր	26. Սալթի մօտ
7. Ձմեռը Շատախի Թաղում. շարադրութիւն	27. Թաղի երեխաների երեկոյեան խաղերից
8. Ծաղկավանք	28. Խուլ Յուսէփի արած պատմութիւնից
9. Շատախի գըլին (հովիտ)	29. Հեռագիր՝ առանց ստորագրութեան
10. Թոնէր[41]	30. Քիւրդ հերոսուհու պատմածից
11. Շատախի աղբիւրներ	31. Թաղի հարբածներից
12. Մեղնիքար	32. Մրգերի գիշերուայ գողերից
13. Չորսի գրած շարադրութիւնից	33. Ո՞վ էր Շատախի գիտոսիկը
14. Թաղի քէֆ արողներից	34. Ժամհարը կոչնակ կը խփէր
15. Թէ Շատախի լեզուով գրեմ, տառերը պակասում են	35. Այդ ժամին ի՞նչ էր մտածում Սոլթօ Սերոբը
16. Թաղի վաճառականներից	36. Լոյսը բացուել էր
17. Աշխատանքի եւ առեւտուրի աղմուկը շուկայի մէջ	37. Շատախի բառերի բացատրութիւն

[40] Քոսեան, Շատախի գըլին, էջ 1-3:

[41] Թոնէր.- թոնիր:

18. Պիրէի[42] հեքըթներից	38. Շատախի Թաղի տների հերթականութիւն
19. Հայր Մերն օգուտ չի տար. փողե՛րը հանէք	39. Քարտէզիս առաջ
20. Բոյտանից աղան	40. Իմ կենսագրութիւն

Այս գրքով Քոսեանը, թէեւ նախաբանում նշում է, որ գրող չէ կամ «*գրածս գիրք պիտի դառնայ, օ՜հ, ո՛չ, կամ նրա համար, որ ինձ փառք ստեղծեմ, նորից, ո՛չ*», այդուհանդերձ, մեր դիտարկմամբ, առաջին գրքով ընթերցողը ճանաչում է շատախցի «նորայայտ ազգագրագէտի», ով թողել է էթնոմշակութային հարուստ ազգագրական ժառանգութիւն, իսկ «Շատախի ծռեր» երկրորդ գրքով՝ հարուստ ժողովրդական սկզբնաղբիւրային աւանդ թողած «նորայայտ բանահաւաքի»:

«Շատախի ծռեր» գրքում զետեղուած են մանրավէպեր, երգիծազրոյցներ, մանրապատումներ, որոնցում ուրուագծւում են դէմքեր, դէպքեր, իրողութիւններ՝ լոյս սփռելով Շատախի ծռերի վրայ, նրանց վարուելակերպի, նիստուկացի, ցանկութիւնների, անձնական եւ երբեմն նոյնիսկ ոչ-անձնական կարիքների, հոգսերի վրայ: Յուշագիրն արձանագրում է «տեսարանը», որտեղ ճակատագրի, զգացմունքների, գործողութիւնների պատկերման միջոցով ուրուագծւում են որոշակի դարաշրջանի եւ միջավայրի բնորոշ գծերը՝ վերարտադրելով մարդկանց անձնական եւ հասարակական կեանքի համակողմանի պատկերը: Պատկերւում է այն իրական միջավայրը, որտեղ երեւում է միջավայրին հարազատ կամ տիպական կերպարը՝ կաճէթաճուռը[43]՝ իր տարբեր իրադրութիւններում դրսեւորուող հոգեվիճակներով: Քոսեանը կարողանում է իր ոճային փայլուն լուծումներով, կաճէթաճռերի արարքների պատճառ-ները մեկնաբանել, որոնք բացայայտւում են տուեալ շրջանի կերպարների հոգեբանութեան ենթախորքում՝ կարողանալով պատկերել շատախցիների էթնոհոգոբանական նկարագիրը:

«Շատախի ծռեր» գիրքը բաղկացած է հետեւեալ մասերից.-

1. Առաջաբան	9. Ջուր պնդացնողը
2. Թթուի գոլը[44]	10. Փշերով կամուրջը
3. Կարմիր սոլեր[45]	11. Պրյա սվըկ[46]

[42] Պիրէ.- յուշագրի ծանօթագրմամբ՝ պառաւ (Քոսեան, «Շատախի գըլին», էջ 92):

[43] Կաճէթաճուռ.- կաճէթցի, Կաճէթ (նաեւ Կաճէտ) գիւղի բնակիչ, այն Վանի նահանգի Վանի գաւառի Շատախի գաւառակի գիւղերից է:

[44] Գոլ.- գիոլ, լիճ:

[45] Սոլեր.- որեւէ ձեւի ոտնաման, մաշիկ:

[46] Յուշագրի ծանօթագրմամբ՝ «պըյա սվըկ բառը քիւրդերէն է, որ բառացի նշանակում է, ոտքից թեթեւ (նկատի ունի արագաւազ նապաստակը)», Քոսեան, «Շատախի ծռեր», 49:

4. Օշօ բոզօն	12. Փողեր կապին ռմի[47] ծայրին
5. Պատարագ առնողներ	13. Թստան բոլոճ ուտողներ
6. Էշի ձու առնողը	14. Կայմակամի[48] խնդրանք սուլթանին
7. Գըմին[49] տեսե՞լ ես	15. Ոտանաւորներ
8. Սհաթ ջարդողը[50]	

«Շատախի ծոեր» գրքով յուշագիրն անդրադառնում է կաճէթցիներին: Հեղինակը յաջողել է բազմագիտակարգային միքանի ոլորտում մեծ աւանդ թողնելու՝ կորստից փրկելով Շատախի բանահիւսութիւնը:

Մանրապատումների, զաւեշտների, զրոյցների, երգիծազրոյցների, մանրավէպերի, ժողովրդական զրոյց-նովէլների, փոքրիկ հեքիաթների, առակների, խրատապատումների, անեկդոտների, աւանդութիւնների, նախնեաց թեմաներով պատմուածքների, երգիծապատումների շարքը բնութագրական է ժողովրդական կենսափիլիսոփայութեան, պատկերաւոր մտածողութեամբ, երգիծանք, հումորի յագեցուածութեամբ: Այս բոլորը ներկայացուած է կա՛մ Շատախի հին բարբառով, կա՛մ խառնալեզուով՝ բարբառ-ժողովրդախօսակցական-ժամանակակից հայերէն:

Քոսեանը շնորհակալ ու արժէքաւոր գործ է կատարել. նա, ի մի բերելով շատախցի եւ կաճէթցի ասացողների զրոյցները, փաստօրէն, կատարել է ե՛ւ բանահաւաքի, ե՛ւ բանափոխանցի աշխատանք՝ լինելով կրողն այդ միջավայրի մշակոյթի: Այս հատորը հեղինակին ներկայացնում է որպէս - մեր ձեւակերպմամբ - անյայտ շատախցի բանահաւաք. «*Շատախի ծոերի պատմութիւնից շատերին ես ծանօթ էի որպէս շատախցի եւ միքանի հատ էլ լսել եմ ուրիշ պատմողներից եւ գրեցի այս գրքոյկի մէջ որպէս յիշատակ պատմութիւնից*»[51]:

Յուշագրութիւնն արժէքաւոր է, քանի որ ներկայացուած գրական նմուշները չեն կրկնում Կաճէթ գիւղի[52] եւ նրա բնակիչների վերաբերեալ երգիծական արդէն հրատարակուած որոշ փաստերն ու զրոյցները[53]:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

---

[47] Ռմի ծայրին.- ձողի ծայրին:

[48] Կայմակամ.- գաւառապետ:

[49] Գըմի.- գեմի, թուրք՝ gemi/նաւ, նաւակ:

[50] Սհաթ ջարդող.- անհարկի ժամանակ վատնող, ժամավաճառ:

[51] Քոսեան, «Շատախի ծոեր», էջ 2:

[52] Անուշաւան Դեւկանց, *Կաճէթայ ծոեր,* Հայաստան հրատ., Երեւան, 1974:

[53] Иосиф Орбели, *Фольклор и быт Мокса* (Յովսէփ Օրբելի, Մոկսի բանահիւսութիւնը եւ կենցաղը), Մոսկուա, Նաուկա, 1982. նաեւ՝ Орбели, *Избранные трудыы, том 2* (Ընտիր երկեր, հտր. 2, Երեւան, 2002). նաեւ՝ Սերգէյ Վարդանեան, *Բանահիւսական պատումի միջավայրը (Կրօնափոխ համշէնահայերի մի զուարճապատումի տարբերակները),* հեղ. հրատ., Երեւան, 2022, էջ 165-74:

Յուշագրութեան կիրառութեան նշանակութիւնը եւ ազդեցութեան տիրոյթները՝ բազմոլորտ են, իսկ կիրառական ոլորտները՝ բազմագիտակարգային: Այն կարող է սկզբնաղբիւրային արժէք ունենալ լեզուագիտութեան/լեզուաբանութեան, ցեղասպանագիտութեան, պատմագիտութեան, ազգագրութեան, արեւելագիտութեան, էթնոմշակոյթի, քաղաքագիտութեան ոլորտների մասնագէտների համար՝ ներկայացնելով աղբիւրագիտական հարուստ նիւթ: Յուշագրութիւնը նաեւ ցեղասպանութիւններ, էթնոյարաբերութիւններ, միջէթնիկ եւ ներէթնիկ փոխառնչութիւններ ուսումնասիրող էթնոհոգեբանների համար հետազօտութիւնների ասպարէզ է բացում եւ լայն անդրադարձ է արւում ազգային, ապամարդկային թիրախաւորուած պիտակաւորումների, ստորնացումների, էթնոտարբերակիչ պիտակաւորումներին եւ այլ ածանցեալ ենթաթեմաներին: Այն հարուստ է ազգային, ժողովրդական երգերով, խաղիկներով՝ հայերէն եւ քրդերէն, որոնք կարող են երգարուեստի ոլորտի ներկայացուցիչների, երգահանների համար ուսումնասիրութեան հարուստ եւ սկզբնաղբիւրային նիւթ լինել:

Յուշագրութեան կիրառման ոլորտ կարող է լինել կրթական ոլորտը՝ ուսումնական, հանրակրթական, բուհական եւն.: Այս յուշագրութեան ազդեցութեան ոլորտը կարող է նաեւ անձի, անհատի առումով լինել:

ԼԵԶՈՒԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՒ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Շատախի բարբառը պատկանում է բարբառների **կը** ճիւղին. ձեւաբանութեամբ ամէնից աւելի մօտ է Մոկաց, իսկ հնչիւնաբանութեամբ ու բառապաշարով՝ Վանի բարբառներին[54]:

Հրաչեայ Աճառեանը Վանի ենթաբարբառների շարքին[55] է դասում Մոկաց, Ոզմիի[56], Դիադինի[57], Շատախի բարբառները:

Յուշագրութեան լեզուական պատկերը հարուստ է: Քոսեանը, լինելով բարբառակիր-բարբառախօս, գրել է Շատախի հին բարբառով. «*Ես գրեցի իմ յուշերը Շատախի հին բարբառով, որպէսզի մի յուշ մնար եւ յիշուէր, բայց որ նորերի համար դժուար էր կարդալ եւ հասկանալ, ստիպուած եղայ նորից գրել նոյնը՝ մեր գրական եւ խօսակցական լեզուով խառնելով, երբեմն Շատախի հին լեզուով խօսակցութիւններ*»[58]: Որոշ հատուածներում խառնալեզուով է գրուած՝ քերականական կառոյցներում եւ բառաձեւերում գրական եւ բարբառային դրսեւորումներով. «*Շատախի Թաղը վերջին տարինե-*

[54] Մուրադեան, *Շատախի բարբառը*, էջ 3:

[55] Հրաչեայ Աճառեան, *Հայ բարբառագիտութիւն*, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 150-55:

[56] Ոզմի.- գիւղ Արեւմտեան Հայաստանում, Վանի նահանգի Վանի գաւառում:

[57] Դիադին.- գիւղ Արեւմտեան Հայաստանի Բիթլիսի (Բաղէշ) նահանգի Մուշ գաւառում:

[58] Քոսեան, «Շատախի գըլին», էջ 2-3:

րին խօսում էր գրական լեզուով՝ բացի փարիքաւորներից, որ դեռ խօսում էին հին եւ նոր հայերէնով»[59]:

Յուշագրութիւնը հարուստ աղբիւր է լեզուաբանների համար: Արեւելեան (պարսկերէն, թիւրքական լեզուներ, քրդերէն) լեզուների եւ բարբառագէտների ուսումնասիրութեան նոր եւ առատ աղբիւր է յուշագրութիւնը. այն լի է քրդերէն եւ թուրքերէն բառերով, արտայայտութիւններով, ասացուածքներով, խաղիկներով, երգերով եւն. «*Չնայած Շատախի Թաղում ապրում էին միայն հայերը՝ նոյն եւ մեր գաւառի մեծամասնութեան 70 տոկոս հայեր էին, բայց յուշերիս մէջ կան որոշ բառեր, որոնք թիւրքական եւ քրդական ծագում ունեն, որ դեռ գործածում էին հայերը Շատախի շրջանում*»[60]:

Յուշագրութեան անպարագծելի արժէքը հաստատւում է նաեւ յուշագրի հեղինակային բառարանով, որը ներկայացնում է շուրջ 280 բառ՝ Շատախի Թաղի խօսակցական լեզուի:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Քոսեանն իր յուշագրութեան շրջանակում անդրադարձել է հետեւեալ ժամանակագրական դրուագներին եւ ենթանիւթերին.- մանկապատանեկան կեանքը հայրենի բնօրրանում (տունն ու նրա շրջակայքը, կենցաղավարական սովորութիւններ, աւանդութիւններ, դպրոց, դասընկերներ, բանահիւսութիւն եւն.), համիդեան կոտորածների հակիրճ դրուագներ մանրապատումների միջոցով, Հայոց Ցեղասպանութեան դրուագներ՝ կոտորածների ու տեղահանութեան, հայաստանեան կեանքի դրուագներ:

Յուշագրութեան ժամանակագրական պատկերը ներառում է յուշագրի մանկապատանեկան տարիները, դպրոցական տարիները՝ 1914ի կտրուածքով, երբ ինքը 15 տարեկան էր, ապա հասնում է 1915ին, որն ուրուագծում է քուրդ եւ թուրք վերադաս կազմի կերպարների միջոցով: Հեղինակը նաեւ մանրապատումների շրջանակում տարբեր կերպարների միջոցով անդրադառնում է 1890-1900՝ շատախցիների հերոսական ինքնապաշտպանական դրուագներին, Շատախի Թաղի 1896ի համիդեան կոտորածներին:

Յուշագրութեան վերջին ժամանակագրական հատուածն ուրուագծում է Քոսեանի ծերունական տարիներով՝ նրա ստեղծագործութիւնների համապատկերում:

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Յուշագիրն իր թողած ժառանգութեամբ «սահմանել» է Հայոց Ցեղասպանութեան մասին վաւերագրման իր գնահատականը, ըստ որի՝ «*ցեղասպանութիւնը միայն արիւնը, բռնի տեղահանութիւնը, կոտորածը, սպանու-*

[59] Նոյն, էջ 3:
[60] Նոյն:

թիւնը չէ», այլ այն անտեսանելի եւ հիւծող ցաւը, որով ականատես վերապրողները շարունակում են ապրել՝ ունենալով, սակայն, վերապրման սեփական մեթոդը, այն է՝ թողնել վերապրողների շառափիղների եւ հայրենի կորուսեալ բնօրրանի միջեւ կամրջող ժառանգութիւն: Քոսեանի այս մօտեցումն արտացոլւում է նաեւ իր ձեռանկար քարտէզի վերաբերեալ «Քարտէզիս առաջ» հատուածում. «*Իսկ, ի՛մ քարտէզ՝ թանկագին, դու դեռ կը մնաս եւ միլիոնների հետ, ինչպէս մի վկայ՝ դատաստանի օրը կ'երեւի, դու էլ պէտք կը գաս*»:

Ցեղասպանութիւնները չեն վաւերագրւում միայն արիւնալի դրուագներով: Սերոբ Քոսեանի յուշագրութիւնը արժեւորւում է որոշապէս 1896ի համիդեան կոտորածների մէկ-երկու դրուագների հակիրճ վերապատմամբ, որի շրջանակում ներկայացւում են դիմադրող շատախցիների հերոսական դրուագներ, ոճրագործների, քուրդ դերակատարների անուններ, բողոքագրեր, հեռագիր-հրամանագրեր: Հեղինակը անդրադառնում է Վանի այդօրեայ կուսակալ Ջեւդէթին, ապա հայ-քրդական յարաբերութիւնների ենթախորքին վրայ՝ նաեւ թուրքերին:

ՄՏԱԽՈՐ ԱՐԺԷՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Յուշագրութիւնների միջոցով պահպանւում է հայ ժողովրդի մտաւոր սեփականութեան մի հատուածը. պատմութեան ամրագրում-փոխանցմամբ շատախցին՝ այս պարագայում Քոսեանը՝ Շատախի էթնոմշակութային ժառանգութեան կրող է, իսկ նրա կողմից այդ արժէքների փոխանցումը՝ կորստից փրկելու ամրագրում:

Քոսեանի յուշագրութեան արժէքը գնահատւում/ընկալւում է նաեւ մշակութային ցեղասպանութեան[61] պարունակով. յուշագիրը, գրի առնելով Շատախի էթնոմշակութային ժառանգութեան հարուստ պատկերը, հնարաւոր ոչնչացումից փրկել է դիտաւորեալ բնաջնջման նպատակով կորստի վըտանգի առջեւ գտնուող Շատախի մշակութային մտաւոր ազգային արժէքը, երբ վերացւում կամ անհետացւում են ցեղասպանութեան հետեւանքները:

Կրողի կողմից նմանատիպ յուշագրութեան ժառանգումը նաեւ *մշակութային իրաւախախտման* կանխարգելման եւ էթնոմշակութային պատմութեան պահպանման հնարաւորութիւն է:

---

[61] Մշակութային ցեղասպանութեան մասին տե՛ս՝ Raphael Lemkin, *Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences against the Law of Nations*, Additional explications to the Special Report presented to the 5th Conference for the Unification of Penal Law in Madrid (14-20 October 1933), http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm (մատչում՝ 13.03.2025». տե՛ս նաեւ՝ *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, Yale University Press, New Haven, 2013. նաեւ՝ Սեդա Պարսամեան, «Մշակութային ցեղասպանութիւնը ցեղասպանագիտութեան տիրոյթում», *Վէմ համահայկական հանդէս* 68(4):2019, էջ 227-44:

Սերոբ Քոսեանի թողած աւանդը ցեղասպանութեան հետեւանքների անհետացման առումով կենդանի վկայագրումն է անմիջապէս կրողից եւ ցեղասպանութիւնը վերապրողից:

Սերոբ Քոսեանի թողած ժառանգութիւնը ոչ միայն հայ, այլեւ Հայոց Ցեղասպանութեամբ հետաքրքրուող օտարազգիների ուշադրութեան կենտրոնում է: Յուշագրի պատմութիւնը իտալացի լուսանկարիչ Եակոբօ Սանտինին[62] ներկայացրել է նաեւ յետագայում Ֆլորենցիայում գործող կրթական հաստատութիւններում կազմակերպուած համաժողովների ընթացքում[63]: Մասնաւորապէս՝

- 2023 Նոյեմբերի 9ին Կալիֆորնիայի նահանգային համալսարանի միջազգային ծրագրի շրջանակում (The California State University International Programs, Florence).
- 2024 Ապրիլի 2ին Նիւ Եորքի համալսարանի՝ Ֆլորենցիայի մասնաճիւղում.
- 2024 Ապրիլի 3ին Cea Capa միջազգային կրթական հաստատութեան՝ Ֆլորենցիայի մասնաճիւղում:

Լուսանկարչի նախագիծն ամփոփուելու է գրքի տեսքով, որտեղ տեղ է գտնելու նաեւ Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած Սերոբ Քոսեանի պատմութիւնը:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բանգրային մէջբերումներ՝ Շատախի հին բարբառով[64]

Այս տեսարանից մյուս խանութպանները շվարել, կանգնել էին եւ զարմանում՝ եղածը տեսնելով, իսկապես մուր տասնհինգ ոսկիի չափով վնաս էր կատարվել: Նրանցից մեկը. «Նշա՛ն աղա, էտոր[65] կուռո՛ւշ[66] տուր, թող ջիընդըմի գնա, թե չէ նորից հըլը քեզի շատ զիան[67] կիլնի»: Նոր Նշան աղան դողդողացող ձեռքերով քիսակից հանեց մեկ կուռուշ, տվեց շատախցուն, որ նոր դուրս եկան մեր շատախցին խանութից: Դուրս գալով խանութից՝ նա դարձավ խանութի դռան հավաքվածներին, ասաց. «Հիմա դուք խղճով ասեք մեր մեջ ո՞րն է գիժը, ե՞ս, թե՝ Նշան աղան»:

Արդեն հասել էինք Բաբաթի այգուն, ճանապարհին Բաբաթին տեսանք, թե ինչպես շապիկի լայն եւ երկար թեւերը կապած իրարու իր ուսին էր գցել եւ փնթփընթալով անցնում էր այգու կողմը: Բարեւեցինք՝ նրան «բարի լույս» ասելով, իսկ նա

---

[62] «Հայաստանն իմ մի մասն է դարձել. իտալացի լուսանկարչի նախագիծը նոր լոյսի ներքոյ կը ներկայացնի Հայոց Ցեղասպանութիւնն ու դրա հետեւանքները, *հարցազրոյցը՝ Սերոբ Քոսեանի թոռնուհի Արաքս Կասեանի*» https://armenpress.am/hy/article/1096875 (մատչում՝ 11.07.2024):

[63] Jacopo Santini, “301: Armenia" SACI Gallery Exhibition”, https://www.flickr.com/photos/saci-florence/49579219037/in/photostream/ (մատչում՝ 11 Յուլիս 2024):

[64] Պահպանել ենք բնագրային ուղղագրութիւնը:

[65] Ըդոր.- դրան:

[66] Կուռուշ.- ղուրուշ կամ գրոշ, օսմանեան դրամական միաւոր:

[67] Զիան.- վնաս:

պատասխանեց իր սովորական բարեւով. «Կըդա բըլա բդոտը» (փորձանքից, բըլա-յից հեռու):

***

Ահա՜ թե ինչ ասաց վերջում Հերկեն Միրզիկը. «….Տղա՛, նը շարադրություն որ կարդացիք, հիմա արդյոք մեր դպրոցի փղանե՞րն էին գրել, փո՜, ո՜լը եմ՝ բավար չի գալիս, ես դեռ իմ աչքերիս եւ ականջներիս չեմ հավատում, ըպը, ո՜լը, պակաս բաներ շատ կային, բայց համեմատած ձեր փարիքին՝ շատ լավ էր գրված, մեզ բոլորիս էլ զարմացրեց: Պարո՛ն Սահակ, ես իմանայի, թե որ մեր փղաների այսօրվա կրթության մասին, բաբո՛, ես խալթ[68] կանեի եւ քու վրա անփեղի չէի չարանա, ես ոջը կանեմ[69]՝ այս անգամ ինձի ներես, հիմա ես հավատացի, որ ձեր չարչարանքը իզուր չի անցել եւ հանգիստ խղճով կը հեռանամ այս մեր դպրոցից»:

***

- Տո՜ փղա, Հկո՛, հո՜, հո՜…[լսում եմ],
Տո՜ փղա, դու կալ արիրի՞ս,
- Խա՜, խա՜, կալ արիրիմ,
- Տո՜ փղա, քընիմ ցուրեն ելըվ,
Յոթ քոլոզ[70], պոլոզ, պոլոզ
Բաբե մն[71], դու չխում[72] կռալիս, կռալ:

***

Մխոն հարցնում է Հըկոյին. «Տո՜ փղա, որ քեզ անեն խայոց թագավոր, դու ի՞նչ կուզիս»:
- Ըս կուզիմ կուրկե խաց, սոխե ծիլ:
Մկա էլ Հըկոն հարցնում է Մխոյից.
«Ըպը, աղա՛ Մխո, որ քեզ անեն խայոց թագավոր, ըպը դու ի՞նչ կուզես»,
- Տո՜ փղա, ըպը աշխրի վերեն էլ աղեկ բը՞ն մնաց, որ ես էլ ուզեմ:

***

Մոտեցավ նա վաճառողին. «Նը ջոջ կլոր զըտ իշկի[73], ասա ինձ հասկացրու»:
Պատասխանեց վաճառողը, թե ձմերուկ է:
- Ձմերուկ իշկի:
- Ձմերուկ ձմերուկ ի, ո՜նց թե ձմերուկն իշկի:
Չբավարարվեց, անցավ առաջ մի ուրիշի հարցրեց.
- Տո՜ փղա, նը իշկի:
- Ձմերուկ է, - պատասխանեց վաճառողը:
- Ա՜խր, ձմերուկ իշկի:
«Ինչպե՜ս թե ձմերուկ իշկի, դու չգիտե՞ս, փո՜ փնավեր, էդ դու որտեղի՞ց ես ընկել ներքեւ, չլինի՞ թե լուսնակիս ես փախել, եկեր այստեղ, ա՜յ քեզ փարօրինակ մարդ, հայդե՜, անցի՛, գնա՛. դու ձմերուկ առնողը չես»:
Նորից առաջ անցավ այդ շարքի հեփ, նորից մի ուրիշին հարցում արավ. «Տո՜ փղա, արի դու, ճի՛շտն ասա, մկա նը կընդըր[74] ջոջի անուն իշկի»:

---

[68] Խալթ.- ղալաթ, սխալ:
[69] Ոըջը.- Թաղի խօսուածքով՝ աղաչանք:
[70] Քոլոզ, քոլո, քրդական գլխարկ՝ ուղտաբրդից պատրաստուած:
[71] Բաբե մն, յուշագրի ծանօթագրմամբ՝ հերս:
[72] Չխում, ապա, արդեն, հենց:
[73] Իշկի.- ի՞նչ է:
[74] Կընդըր.- Թաղի խօսուածքով՝ ահագին:

«Ա՛յ ախբեր ջան, դու առնողը չես, դու էն ծայրից մինչեւ այստեղ հարցնելով եկար ինձ մոտ, կասե՞ս նը իշկի, չլինի՞ թե դու էլ շափախցի ես, թե որ շափախցի ես, նրա իսկական անունը ասեմ ձեր լեզվով սա «բըշը» (ձմերուկ) է. հիմա խո՛մ իմացար, ինչքա՞ն հաշվեմ՝ տամ քեզի առնես-տանես»:

«Բըշլեն իշկի. չեմ հասկանում անո՛ւնն ասեք»:

Վաճառականը. «Անցի՛, գնա՛ խելքից պակաս, ջեբումդ[75] էլ փող չկա, դե՛ շուտ գնա. գլուխս տարար»:

***

Մեր շափախցիներից մեկը, որ Վան էր գնացել եւ ծովի վրա գըմմի էր տեսել, շատ էր զարմացել, երբ իրենց գյուղը կը վերադառնա, իր հարեւանին պարծենալու համար ասում է.

«- Տո՛ տղա, դու Վանա քաղաք գըցի՞ր իս,
- Խա՛, ես Վանա քաղաք գըցիր իմ,
- Տո՛ տղա, դու գըմմի տիսի՞ր իս,
- Խա՛, ըս գըմմի տիսիրմ էլ, կիերիրեմ էլ,
- Տո՛ տղա, գըմմին դըփա, դըփ (փայտ),
- Տո՛, ըս գիտիմ դըփըխուտ կը գեր»:

THE ARMENIAN GENOCIDE, SHADAKH REGION. THE MEMOIR OF SEROP KOSIAN (SUMMARY)

ELINA MIRZOYAN (elina-mirzoyan@ysu.am)

The article details and assesses the content of a two-volume memoir written by Serop Kosian, a 16-year-old Armenian Genocide survivor, who completed writing it in 1968. Kosian, was a native of Tagh, the central town of Shadakh district in the province of Van.

Alongside the narrative of the uprooting, deportation and massacres of the Shadakh Armenians, Kosian's memoir is an important, untapped resource for the rich ethnographic, traditional, linguistic, folkloric, topographic features and heritage of the area, its crafts and culture, the lifestyle, mindset and psychology of the indigenous Armenians, their relations with the neighboring Kurdish tribes and the Turkish authorities.

The author notes that while writing his memoirs Kosian had the intention to register, preserve, safeguard and transmit the legacy of his town and its environs to future generations. In fact, Kosian was well aware of what he was doing by writing down his memories and his life experience. This made him a self-educated ethnographer, who was not satisfied with highlighting only the Armenian features of the area but included some aspects of the neighboring Kurds as well. For instance, while writing about the Shadakh dialect, Kosian lists some 280 words and mentions a set of Kurdish and Turkish words that were used in his own dialect.

Interestingly enough, Kosian's memoir goes far beyond being a virtual reality of the past. The author has accompanied his memoir with a self-drawn map of his native town and the Shadakh district.

[75] Ջեբ.- գրպան:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԷՋԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԱՍ Բ.- ՌՈՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՆԷ ԽԱՌԱՏԵԱՆ
art.phil.maneh@gmail.com

ՄՈՒՏՔ

*Հայկազեան հայագիտական հանդէս*ի նախորդ համարում[1] լոյս տեսաւ այս յօդուածաշարի առաջին մասը, որում ներկայացուել էին աշխարհում գործող ռոք խմբերի հայ երաժիշտների, երգիչների մասին տեղեկութիւններ, եւ փորձ էր արուել վերլուծել սփիւռքեան համապատկերում հայ երաժիշտների՝ պատմական յիշողութեան եւ էթնիկ ինքնութեան պահպանմանն ուղղուած գործունէութիւնը:

Սոյն երկրորդ յօդուածը նուիրուած է Հայաստանի ներսում ռոքի ձեւաւորմանն ու զարգացմանը, դրա պատմական եւ հասարակական նախադրեալներին եւ ներկայ վիճակին:

Քանի որ խմբերից ոչ բոլորն ունեն պաշտօնական կայքէջ (թերեւս շատ քչերն ունեն), կամ ընկերային ցանցերում էջ, ստիպուած ենք բաւարարուել այլ համացանցային աղբիւրներից՝ օգտուելով մեծ մասամբ հարցազրոյցներից կամ լրագրական յօդուածներից: Անգամ այդ դէպքում միշտ չէ, որ յաջողուեց նոյն տեղեկոյթը գտնել բոլորի մասին, ինչպէս օրինակ խմբի հիմնադրման տարեթիւը, ինչի հետեւանքով յստակ հայեցակարգ պահպանել չի յաջողուել: Անգամ խմբերի ներկայիս գործունէութիւնը միշտ չէ, որ հասկանալի կարգավիճակում է, քանի որ Հայաստանում երաժշտական խմբերը առհասարակ աշխատում են դանդաղ եւ տարուայ ընթացքում կարող են ունենալ քիչ նոր աշխատանք: Սրա պատճառներից է նաեւ ֆինանսական եւ ժամանակային խնդիրը, քանի որ խմբերի անդամները որպէս կանոն այլ աշխատանքներ են ունենում: Հենց այդ պատճառներով այս յօդուածաշարի նպատակներից է ոչ միայն թեմայի ուսումնասիրութիւնը, այլեւ հաւաքուած նիւթի՝ գիտական ոլորտ ներառումը յետագայ ուսումնասիրողների համար:

Հայաստանում ռոքն անցել է նոյն ուղին ինչ՝ խորհրդային միւս երկրներում: Տարբերութիւնը թերեւս այն է, որ հայկական ռոքի հիմքում ի սկզբանէ ընկած էին հայոց հարուստ երաժշտական ժառանգութիւնը եւ աւանդոյթները: Հենց այդ ժառանգութիւնը հնարաւորութիւն տուեց հայկական ռոքին

---

1 https://arar.sci.am/dlibra/publication/412180/edition/380963/content?fbclid=IwY2xjawIJXoVIeHRuA2FIbQIxMQABHXete4oNr5chj8IDI43FOLsVQsw2tbkdgn7oDakMQnhDgp16XNzYCktn8g_aem_xcyRa0TvxitRgY4U-FMcjQ :

դառնալ կոթողային եւ որոշ դէպքերում կրել նաեւ հայ հոգեւոր երաժշտութեանը յատուկ տարրեր:

Յօդուածի նպատակներից են ուսումնասիրել եւ հասկանալ՝ ինչպէս է այլ մշակոյթի տարրը յարմարուել եւ ձուլուել տեղային մշակոյթին, վերլուծել դրան վերաբերող պատճառները եւ նախադրեալները:

Ռոքը, որպէս այլէթնիկ մշակութային դրսեւորում եւ նրա ներառումը հայկական իրականութիւն, դիտարկուել է յարմարուողականութեան տեսանկիւնից համեմատուելով մարդկանց յարմարուողականութեան գործընթացի հետ: Այդ ընթացքն ուղեկցուել է նոյն ազդեցութիւններով եւ հակազդեցութիւններով, ինչով ուղեկցւում են յարմարուելու ընթացքում բոլոր միւս երեւոյթները:

Յարմարուողականութեան մասին առաջին տեսութիւնները գիտական ոլորտում շրջանառուել են դեռ ԺԹ. դարում, կենսաբանութեան մէջ: Փիլիսոփայական բառարանում այն ներկայացւում է որպէս «*...յարմարեցում, այսինքն՝ համապատասխանութիւն գտնելը (ինչպէս նաեւ գործընթացը, որը յանգեցնում է նման համապատասխանութեան) կենդանի համակարգի (կամ դրա մի մասի) եւ դրա հետ կապուած արտաքին պայմանների հետ*»[2]: Յարմարուողականութիւնը մշակութային ոլորտում գրեթէ չի տարբերւում նոյն երեւոյթի կենսաբանութեան, ազգային, մասնագիտական եւ այլ ոլորտների դրսեւորումներից: Ըստ էութեան՝ երաժշտութեան յարմարուողականութիւնը նոր միջավայրում մի գործընթաց է, որի ընթացքում.-

Ա) այլ երաժշտական տարրեր ներառւում են տեղային երաժշտութեան,

Բ) տեղային երաժշտութիւնը ձեւափոխւում է՝ համապատասխանեցուելով ոչ-տեղային միտումներին,

Գ) ոչ-տեղային երաժշտութիւնը մասնակի կամ ամբողջութեամբ ներդրւում է տեղայինի մէջ, նմանեցումներ գտնելով տեղային երաժշտական մշակոյթի հետ,

Դ) տեղային մշակոյթը լիովին կրկնօրինակում է այլ գործիքային, լեզուական եւ այլ միջոցներ:

Այս տարբերակները կարող են գործել թէ՛ առանձինն, թէ՛ էլ երկուսից աւելին միաժամանակ: Ամենատարածուած տարբերակը տեղային մշակոյթի որոշակի փոփոխութիւնների ենթարկուելն է. սա պահպանում է հիմնական կառուցուածքային սկզբունքները, յաւելումների տեսքով ներմուծելով նոր տարրերը: Ամենաանվտանգ տարբերակը գործիքային փոփոխութիւնն է, որի ընթացքում երաժշտական կառուցուածքը լիովին պահպանւում է, փոխւում են միայն գործիքները՝ ազգայինից ներմուծուածի: Սա տեղային մշակոյթին նաեւ նոր շունչ է հաղորդում, միաժամանակ բացայայտելով հայկական երաժշտութեան ճկուն եւ համամարդկային լինելը:

---

[2] *Философский словарь,* И. Т. Фролова (ред.), (Փիլիսոփայական բառարան, խմբ.՝ Ի. Ֆրոլովա), Ե. տիպ., տպ. Պոլիզդատ, Մոսկուա, 1986, էջ 590:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մշակութային տարրերի ներառումը մէկ այլ մշակոյթ՝ կատարւում է աստիճանաբար: Գտնելով նմանութեան կամ ընդհանրութեան կէտեր, այդ կէտերի միջոցով փոխազդելով եւ կրելով նաեւ գերիշխող մշակոյթի ազդեցութիւնը, այդ տարրերն իրենք ենթարկւում են որոշ ձեւային փոփոխութիւնների եւ յարմարւում նոր միջավայրին: Այնպէս՝ ինչպէս ներգաղթեալ մարդկանց դէպքում, ովքեր ստիպուած են լինում ընդունել հիւրընկալ երկրի օրէնքներն ու աւանդոյթները եւ իրենց ինքնութեան հնարաւորութեան սահմաններում յարմարուել նոր միջավայրին: Դրանով տեղի է ունենում որոշակի ներմշակութայնացում: Ներմշակութայնացում[3] (enculturation) եզրը ամերիկացի մշակութաբան Մ. Ջ. Հերսկովիցէմի կողմից 1948ին շրջանառուել է որպէս մշակութային յարմարուողականութիւն, որոշակի տարածքի իւրացման եւ հասարակական յարաբերութիւնների կազմակերպման գործընթաց, դրա պատմական բնորոշիչ, որն արտայայտուած է ազգային մշակոյթում: Ներմշակութայնացումը՝ ոռք մշակոյթի համար այն յարմարուողականացման գործընթացն է, որի արդիւնքում այլէթնիկ երաժշտական դրսեւորումը օժտուելով տեղային աւանդոյթներով, ստանում է այլ կերպար եւ յարմարեցւում տուեալ տարածքի ընկալումներին: Ըստ էութեան դա մի երեւոյթի (կամ մարդկանց) յարմարուողականեցման ընթացքն է նոր միջավայրին եւ մշակոյթին:

Ինչպէս ներգաղթեալ մարդիկ այնպէս էլ երաժշտութիւնը, տեղայնացուելու ընթացքում անցնում է յարմարուողականութեան որոշ փուլերից[4]: Կ. Օբերգը մանրամասն նկարագրել է նոր մշակութային միջավայրին յարմարեցման չորս փուլերը.-

Առաջին փուլը կոչւում է «Մեղրամիս»: Այն բնութագրւում է ուրախութեան, հիացմունքի դրական յուզական զգացմունքներով, ներգաղթեալի ոգեւորութեամբ ու հրճուանքով: Յարաբերութիւններ՝ այլ մշակոյթի ներկայացուցիչների հետ բարեսիրտ, քաղաքավարի, բայց մակերեսային:

Երկրորդ փուլը Օբերգը անուանել է «ճգնաժամ»: Կենցաղային պայմանների տարբերութիւնները, լեզուն, արժէքները յանգեցնում են հիասթափութեան, անհանգստութեան եւ զայրոյթի առաջացմանն ու աճին: Այս փուլին բնորոշ են դժուարութիւններ՝ դպրոցում, համալսարանում կամ աշխատա-

---

[3] Մինչեւ վերջերս «ներմշակութայնացում» եզրը լայն տարածում չունէր: Այն օգտագործուել է գրեթէ բացառապէս ամերիկեան մշակութաբանական աւանդոյթի մէջ: Աւելին, այն քննադատութեան ենթարկուեց իր նշանակութեան անորոշութեան պատճառով, եւ այսօր նրա փոխարէն գործածւում է «հասարակայնացում, ընկերայնացում» (socialization) եզրը: Բայց մեր կարծիքով երաժշտութեան առնչութեամբ առաջին եզրն աւելի յարմար է:

[4] K. Oberg, "Cultural Shock: Adjustment to New Cultural Environments," *Practical Anthropology*, 7:1960, էջ 177-82:

վայրում, խնդիրներ՝ գնումներ կատարելիս, փոխադրուելիս: Այս փուլում յատկապէս տարածուած է հայրենակիցների հետ շփուելու ցանկութիւնը:
Երրորդ փուլ՝ «վերականգնում»: Մարդը աստիճանաբար տիրապետում է լեզուական հմտութիւններին, յարմարւում մշակոյթին, նորմերին, սովորոյթներին եւ աւանդոյթներին: Ճգնաժամն աւարտւում է:
Չորրորդ փուլը՝ «յարմարուողականութիւն». ժամանակաւոր բնակիչը ընտելանալ է սկսում նոր մշակոյթին, եւ ուրախութիւն եւ բաւարարութիւն է զգում, երբեմն էլ կարող է առաջանալ անհանգստութիւն եւ լարուածութիւն:

Այս փուլերը լաւագոյնս ցոյց են տալիս **U**աձեւ կորի հայեցակարգը: Սակայն, ըստ հոգեբաններ Ջ. Տ. Գուլլահորնին ու Ջ. Ե. Գուլլահորնին, նոր միջավայրին յարմարուելը չի աւարտւում. երկարաժամկէտ յարմարուողականութիւնն ունի հինգերորդ փուլ՝ **վերադարձ հայրենիք**: Վերադարձողները յաճախ անցնում են նմանատիպ հակառակ գործընթաց կրկին **U**աձեւ կորի տեսքով[5]: Այսպիսով, նրանք անցնում են երկու անգամ **U**աձեւ կորով: Հեղինակներն առաջարկել են *վերայարմարուողականութեան* հայեցակարգը եւ ներկայացրել են **W**աձեւ կորի տարբերակը:

Միջմշակութային յարմարուողականութեան գործընթացին սկզբունքորէն նոր մօտեցում առաջարկել է ամերիկացի հոգեբան Ե. Ե. Կիմը: **U**աձեւ կորի փոխարէն նա առաջարկել է նոր մշակոյթին յարմարուելու գործընթացը դիտարկել որպէս փուլային, որը կարելի է բնութագրել որպէս «երկու քայլ առաջ-մէկ քայլ յետ»: Կիմի առաջարկած **«Սթրէս-յարմարուողականութիւն-աճ»**[6] կորի էութիւնն այն է, որ մշակութային ցնցումը չի դիտւում որպէս բացասական երեւոյթ, այլ որպէս անձնական աճի անհրաժեշտ գործընթաց, որը տանում է դէպի դրական փոփոխութիւններ նորեկի մօտ: Ըստ Կիմի յարմարուողականութիւնը՝ որպէս երեւոյթ, հիմնուած է հաղորդակցութեան վրայ: Մարդը սկսում է յարմարուել միայն այն ժամանակ, երբ շփւում է իր նոր միջավայրի այլ մարդկանց հետ: Ներգրաւումը կախուած է հասարակութեան հետ փոխազդեցութիւնից, իսկ անհատի յարմարուողականութեան աստիճանը կախուած է հասարակութեան անդամների հետ հաղորդակցութեան քանակից եւ բնոյթից:

Եթէ այս տեսութիւններին նայենք ռոքի ներմուծման ելակէտից, կարող ենք նկատել, ինչպէս նախնական հրճուանքին յաջորդեցին արգելքները, ապա վերապահումները եւ աստիճանաբար ռոքն ընդունուեց խորհրդային երկրների քաղաքական համակարգի կողմից: Ըստ էութեան յարմարուո-

[5] J. T. Gullahorn, J. E. Gullahorn, "An Extension of the U-curve hypothesis," *Journal of Social Issues*, 19(3):1963, էջ 33-47:

[6] Y. Y. Kim, "Cross-Cultural Adaptation: An Integrative Theory," *Readings in Cultural Contexts*, J. M. Martin, T. K. Nakayama, & L. A. Flores (eds.), Mountain View, CA, Mayfield, 2002, էջ 237-45:

ղականութիւնը երկկողմանի գործընթաց է, որն ուղեկցւում է վերոյիշեալ փուլերով թէ՛ տեղական՝ ընդունող կողմի համար, թէ՛ այլէթնիկ մշակոյթի:

Ռոքը Խորհրդային Հայաստանում (առհասարակ Խորհրդային միութիւնում), ըստ էութեան ձեռքից ձեռք փոխանցուող սկաւառակների եւ իրար հետ հաղորդակցուող երիտասարդների միջոցով էր տարածւում: Այն բառացիօրէն կենդանի շփման հետեւանք էր: Ինչպէս նշում է լրագրող Յ. Յակոբեանը, «*Հայաստանը, որը մտնում էր ԽՍՀՄի կազմի մէջ, ենթարկւում էր Կենտրոնի հրահանգներին: Մեղմացման կարճաժամկէտ ժամանակահատուածները փոխարինուեցին կոշտ արգելքներով, օրինակ՝ 1984ին ՎԳԱի (վոկալ-գործիքային անսամբլների) արգելքը: Այս բոլոր հրահանգներն այսպէս թէ այնպէս անդրադարձել են հայ ռոքերների վիճակի վրայ, թէկուզ եւ փոքր-ինչ մեղմացուած ձեւով: Ռոքերի խոստովանութեամբ՝ ռոքի նկատմամբ վերաբերմունքը Հայաստանում ընդհանուր առմամբ աւելի մեղմ էր, քան Ռուսաստանում: Սակայն հեռարձակման գործող արգելքը եւ այլ սահմանափակումները արգելակում էին ռոքի տարածումը*»[7]: Այնուամենայնիւ 1980ականների կէսերից սկսեալ փառատօներ եւ համերգներ աւելի յաճախ են կազմակերպուել ինչպէս Երեւանում, այնպէս էլ հանրապետութեան այլ քաղաքներում՝ Վանաձորում, Գիւմրիում, Սիսիանում եւն.: Ի յայտ են գալիս բազմաթիւ խմբեր:

Ըստ Կիմի՝ ընդունող հասարակութեան միջանձնային եւ զանգուածային հաղորդակցութիւններին մասնակցելը կարեւոր նշանակութիւն ունի: Տեղի բնակչութեան հետ միջանձնային հաղորդակցութիւնն օգնում է անծանօթներին՝ ձեռք բերել կենսական տեղեկութիւն եւ ըմբռնում՝ տեղի բնակչութեան մտածելակերպի եւ վարքի մասին, դրանով իսկ անծանօթներին յղում տալով իրենց սեփական վարքի համար, մինչդեռ տեղացիների հետ զանգուածային հաղորդակցութիւնը հիմնուած է հասարակութեան հետ անհատի համարկման վրայ: Հասարակութիւնը լրատուամիջոցների, ձայնասփիւռի, հեռուստատեսութեան եւն.ի միջոցով ծառայում է որպէս մշակութային եւ լեզուական ուսուցման կարեւոր աղբիւր՝ մեծապէս չհիմնուելով անհատական մասնակցութեան եւ ազդեցութեան վրայ[8]: Այսինքն նորամուծութիւնը (այս դէպքում երաժշտութիւնը) աւելի հեշտ յարմարուելու համար անհրաժեշտ է մարդկանց հետ շփում եւ այդ շփման միջոցով՝ տարածում: Գրաւելով աւելի մեծ քանակի մարդկանց, այն դառնում է զանգուածային եւ զանգուածայնեցման արդիւնքում՝ նաեւ պահանջուած:

---

[7] https://ge.boell.org/en/2006/09/24/nekotorye-harakteristiki-razvitiya-rok-dvizheniya-v-armenii :

[8] Young Yun Kim, "Adapting to A New Culture," *Theorizing about Intercultural Communication*, W. Gudykunst (ed.), Sage Publications, Thousand Oaks, California, 2005:

Հրաչ Բայադեանի՝ *Երեւակայելով անցեալը. խորհրդահայ արդիականութեան պատումներ* գիրքը, վերլուծելով խորհրդային Հայաստանում երաժշտական նոր միտումների առաջացման նախադրեալները[9], հետաքրքիր նկարագրութիւն է փոխանցում Խորհրդային Հայաստանի սկզբնական շրջանի հասարակական-մշակութային վիճակի մասին: Ինչպէս նշում է՝ ժողովրդական երաժշտութեան եւ քաղաքային ֆոլկլորի համար 1930ականները կարելի է բնորոշել «ազգային» աւանդութեան վերադարձով՝ սոցիալիստական արդիականութիւն: Աճեց ուշադրութիւնը ժողովրդականի նկատմամբ: Հրապարակւում էին տարբեր ազգերի անցեալից վերցուած աւանդական պատմութիւններ, կազմակերպւում մշակութային տասնօրեակներ ու ցուցադրութիւններ: Բայց սրանք ոչ թէ վերագտնուած հարազատ աւանդոյթներ էին, այլ աւանդոյթներ, որոնք յօրինւում էին պետութեան նախաձեռնութեամբ եւ ազգային աւագանիների խանդավառ մասնակցութեամբ[10]: Սա թոյլ էր տալիս ստեղծել հաւաքականութեան արդիական ձեւեր՝ վերակառուցելով եւ յօրինելով աւանդոյթներ, որտեղ ազգը իրաւականութիւն էր ստանում որպէս ընկերաբանական շինարարութեան մաս կազմող ազգային պատումի կրողը:

Այդ շրջանում ազգերի ընկերվարական զարգացման խօսոյթում ի յայտ եկած աւանդոյթի օրինակ են ժողգործիքների համոյթները եւ ժողովրդական ու աշուղական երգերի կատարման՝ 1930ականներից իվեր հաստատուած, տիրապետող ոճը: Արեւմտեան նուագախմբի նմանութեամբ կառուցուած արեւելեան (ժողովրդական) գործիքների միջոցով այս երաժշտութիւնը ասես «բարձրացւում էր» դէպի երաժշտութեան արեւմտեան մոդէլը:

Ժողգործիքների առաջին համոյթը Հայաստանում ստեղծուել է 1926ին: Այն երկար տարիներ ղեկավարել է Արամ Մերանգուլեանը, որի մահից յետոյ (1967) այն կրում է իր անունը[11]:

---

[9] Տե՛ս՝ https://hetq.am/hy/article/116755 :

[10] Terry Martin, "Modernization or Neotraditionalism? Ascribed Nationalism and Soviet Primordialism," David L. Hoffman, Yanni Kotsonis, *Russian Modernity: Politics, Knowledge, Practices*, Macmillan Press, Houndmills, 2000, էջ 161-82. նաեւ՝ Ж. Кадио, *Лаборатория империи: Россия/СССР, 1860-1940*, Новое литературное обозрение, (Ժ. Գադիօ, Կայսրութեան տարրալուծարան. Ռուսաստան-ԽՍՀՄ, 1860-1940), Մոսկուա, 2010, էջ 227:

[11] Խորհրդային միութիւնում այդ տարիներին ժողովրդական պարը նոյնպէս «պարի պետական համոյթներ»ի ստեղծմամբ ենթարկուել է նման փոխակերպումների: Յառաջամարտիկը Իգոր Մոյիսէեւն էր, որը 1937ին հիմնեց «ԽՍՀՄ ժողովրդական պարի անսամբլ»ը: Գաղափարը նոյնն էր՝ ժողովրդական մշակոյթի արդիականացումը, այս դէպքում՝ գեղջկական պարի «կատարելագործումը», «ազնուացումը» դասական բալէտի տարրերի միջոցով: Այս կատարողական ոճը ոչ միայն շուտով դարձաւ պաշտօնական մոդէլ խորհրդային հանրապետութիւնների համար, այլեւ աստիճանաբար տարածուեց եւ մեծ ժողովրդականութիւն էր վայելում աշխարհի շատ երկրներում (Anthony Shay, *Choreographic Politics: State Folk Dance*

1930ականների խորհրդային հանրամատչելի երաժշտութիւնն աչքի էր ընկնում բազմազանութեամբ, բայց ի տարբերութիւն 1920ականների, «*դա մանրակրկիտ ձեւով վերահսկուող բազմազանութիւն էր եւ չէր նշանակում ոճի եւ ձեւի ազատութիւն*»[12]: Այս բազմազանութեան կենտրոնում ստալինեան «զանգուածային» երգն էր, որ լայնօրէն տարածւում էր նաեւ ֆիլմերի միջոցով («Վոլգա-Վոլգա», «Կրկես» եւն.): Այն «*ձգտում էր հաստատել սոցիալիստական շինարարութեան նոր դարաշրջանի երջանկութիւնն ու ոգեւորութիւնը լաւատեսական, մարդկային եւ դրական խօսքերով ու մատչելի երաժշտութեամբ*»[13]: Մշակութային յեղափոխութիւնն այլեւս անցեալում էր, ջազն արդէն բարեյաջող ձեւով խորհրդայնացուել եւ «վնասազերծուել» էր, ժողովրդական երաժշտութիւնը նորից յարգանք էր վայելում: Բոլոր հանրապետութիւններում կային ժողովրդական երաժշտութեան համոյթներ, մի-քանիսում՝ նաեւ էստրադային նուագախմբեր:

Այս պայմաններում, 1960ականներին ռոքը սկսեց թափանցել նաեւ հայկական միջավայր եւ տեղայնացուեց՝ հնարաւոր միջոցներով, որոնց հիմքում ժամանակակից միտումներով քաղաքին նոր շունչ հաղորդած երիտասարդական խմբերն էին, ովքեր խորհրդային փակ սահմաններից դուրս փնտռում էին նոր երաժշտութիւն: Մինչդեռ աւագ սերնդի համար այս միտումները անհասկանալի եւ օտար էին: «*60ականների կէսերին միայն մենք հնարաւորութիւն ունեցանք առաջին անգամ լսել Բիթլսների երգերը, չէ՞ որ «երկաթեայ վարագոյրը» մեզնից թաքցնում էր դրանք: Այդ ժամանակներն էին, երբ մեզ փրկութեան հասան սփիւռքահայերը...: Նրանք իրենց հետ այնպիսի երաժշտական սկաւառակներ բերեցին, որոնց մասին երազել անգամ չէինք կարող: Վաճառում էին այն ժամանակների համար աստղաբաշխական գներով: Մենք սպիսպուած էինք շատ հաճոյքներից մեզ զրկել, փող հաւաքել, որպէսզի կարողանայինք գնել: Բայց դա արդէն էական չէր, որովհետեւ այդ երաժշտութիւնն ամէն ինչ փոխեց մեր կեանքում: Դա մեր կեանքի լաւագոյն շրջանն էր: Մենք կարողացանք յեղափոխութիւն անել*»՝ պատմում է Լիւդմիլան[14], ով առաջինն էր Գիւմրիում կազմակերպել դիսկոտէկներ, հեղինակային հաղորդումներ էր նախաձեռնել Գիւմրիի ռադիոկայաններում 15 տարի շարունակ[15]:

Companies, Representation, and Power, Wesleyan University Press, Middletown, Connecticut, 2002, էջ 57-81):

[12] Տես՝ https://hetq.am/hy/article/116755 :

[13] Richard Stites, "The Ways of Russian Popular Music to 1953," Neil Edmunds (ed.), *Soviet Music and Society Under Lenin and Stalin*, Routledge, London, 2004, էջ 26:

[14] Տես՝ https://cultural.am/hy/norutyunner/lurer/3461-hayastani-jazzn-u-rocky-skzbnavorogh-chanaparhy :

[15] Նա հեղինակել է նաեւ *Ջազ-ռոք Լենինական* գիրքը (https://www.youtube.com/watch?v=Zpdps7tLLlw):

ԵՐԱԶՈՂՆԵՐԸ



«1960ականներին, երբ Սովետական Միութիւնն ի տես աշխարհի դէպի երկինք էր ուղարկում իր առաջին փիեզերանաւը, երբ «Կուբայական հրթիռային ճգնաժամը» շարունակում էր միջուկային պատերազմի լարուած մթնոլորտ պահել երկու հսկաների միջեւ, … ոտքի էր կանգնել երիտասարդական մի մեծ շարժում, որն իր ուժը հաստատում էր մշակոյթի, յատկապէս, երաժշտութեան միջոցով: Երաժշտութիւն, որը դարձել էր գաղափարական ու քաղաքական հայեացքների դէմ ուղղուած յեղափոխութիւն»[16]: Սկսելով նմանակել Բիթլզ խմբին՝ հայ երաժիշտները եւ զանգուածայնեցնում էին նոր երաժշտութիւնը եւ փնտռում իրենց սեփական ձեռագիրը: Ամերիկեան եւ եւրոպական երաժշտութիւնը «աննկատ» թափանցում էր խորհրդային իրականութիւն, իսկ «Երազողները» հայկական ռոք-խումբն առաջիններից էր, որ 1960ականներին ելոյթ էր ունենում արտասովոր հագուստներով՝ առաջացնելով նաեւ դժգոհութիւններ: Նրանց այնքան էր գրաւել Բիթլզի ոճը, որ նոյնիսկ վերջիններիս «Help» ֆիլմի օրինակով իրենց խմբի մասին ֆիլմ նկարելու փորձ արեցին[17]: Չնայած խոչընդոտներին՝ «Երազողները» բաւականին հետեւորդներ ունէին, ովքեր նմանակում էին նաեւ նրանց հագնելու ոճը: Խորհրդային տարիներին ջինս ունենալն ու կրելը ոչ միայն բարդ էր, այլեւ խնդրաշատ: Կրողներին կարող էին նկատողութիւն տալ թէ՛ աշխատավայրում, թէ՛ կրթական հաստատութիւնում: Սակայն, դա չէր խանգարում, որ խմբի անդամներն ու նրանց հետեւորդները ցանկացած գնով փորձեն ձեռք բերել ցանկալի հագուստն ու ցանկալի երաժշտութեան ձայնասկաւառակները: Խնդիրներ առաջանում էին նաեւ երգացանկի առնչութեամբ: Առհասարակ նման գործունէութիւնը բաւական մեծ քաջութիւն էր պահանջում, քանի որ ամէն քայլը պիտի համաձայնեցուած լինէր եւ հաստատուէր քաղաքական իշխանութիւնների կողմից[18]: Առաւել եւս այն պարագայում, երբ երգերի մի մասը Բիթլզ խմբի երգերն էին, որոնք տղաները կատարում էին լեզուն կրկնօրինակելով՝ առանց անգլերէնի իմացութեան, իսկ իրենց սեփական երգերը սկսեցին գրել հայերէնով:

---

[16] Ն. Հայրապետեան, «Ովքե՞ր էին նրանք. մաշուած ջինսերով եւ ծաղկաւոր վերնաշապիկներով երազողները», *Հետք*, 14:08, 27 Օգոստոս 2017:

[17] Ֆիլմն արգելուեց ցուցադրել հեռուստատեսութեամբ, ապա այն անհետացաւ եւ գտնուեց մօտ 50 տարի անց (https://www.youtube.com/watch?v=inWSxtiP3IQ&t=527s):

[18] Տես՝ https://mediamax.am/am/news/special-report/24330/ :

Խմբի անդամներն էին Հրայր Կոտոյեանը, Զաւէն Սարգսեանը, Յակոբ Պետրոսեանը, Երուանդ Երզնկեանը, Սլաւա Բունիաթեանը, ում այնուհետեւ փոխարինեց Արմէն Զաքարեանը: «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ՝ նախկին «Երազողները» ռոք խմբի անդամները կարողացա՞ն իրականութիւն դարձնել իրենց երազանքները եւ արդեօ՞ք երազողներ են մնացել ֆիլմի նկարահանումից 50 տարի անց, խմբի անդամ Երզնկեանը պատասխանել է. «*Մենք երազողներ ենք, որոնք իրենց երազների մէջ ֆիասկո չեն ապրել: Մենք մեր երազների հետեւից գնում ենք ու էլի դեռ կը գնանք*»: Իսկ խմբի միւս անդամ Սարգսեանը յաւելում է *«...Ես ինչ որ երազել եմ, հասել եմ կեանքում: Ես երազում էի Արեւմտեան Հայաստան գնալ, 18 անգամ գնացել եմ, նկարել եմ: Երազում էի աշխարհը ման գամ, ամբողջ աշխարհը գրեթէ ման եմ եկել, նկարել եմ*»[19]:

Խումբը դադարել է գործունէութիւնը 1970ականներին, բայց իր հետքը թողել է հայկական ռոքի պատմութեան մէջ:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐ/APOSTLES

Խումբը ստեղծուել է 1967ին, սակայն սկզբնական շրջանում չունէր անուանում եւ հանդէս էր գալիս որպէս ճարտարապետական ֆակուլտէտի խումբ: Խմբում ընդգրկուած էին՝ Արթուր Մեսչեանը՝ հեղինակ, վոկալ, կիթառ, ստեղնաշարային, ջութակ, Լեւոն Մելիքեանը՝ բաս կիթառ, Գրիգոր Նալբանդեանը՝ հարուածային գործիքներ: Խմբի առաջին համերգերը տեղի են ունենում Պոլիտեխնիկական ինստիտուտում եւ հանդիպում կոմերիտականների դիմադրութեանը, ովքեր խմբի անդամներին բնորոշում էին որպէս «նորընծայ առաքեալներ», ինչն էլ հիմք է հանդիսանում, որպէսզի խումբը կոչուի «Առաքեալներ»)[20]:



Միաձուլելով հայ հոգեւոր երաժշտութիւնը այդ տարիներին ծաղկում ապրող ռոքի հետ - ինչը խորհրդային ժամանակաշրջանում համարձակ քայլ էր - խումբը մեծ տպաւորութիւն է թողնում ունկնդիրների վրայ եւ դառնում իսկական յայտնութիւն:

[19] Գայիանէ Դանիէլեան, «'Երազողներ' ռոք խմբի մասին պատմող ֆիլմը ցուցադրուեց ստեղծումից գրեթէ յիսուն տարի անց», https://www.azatutyun.am/a/28637370.html :

[20] Տե՛ս՝ https://arthurmeschian. com/biography :

1971ին խումբը հրաւիրւում է մասնակցելու Լեհաստանում տեղի ունեցող խորհրդային պետութիւնների երիտասարդական երաժշտական փառատօնին, բայց Լեհաստան մեկնելու թոյլտուութիւն տալիս են միայն Մեսչեանին՝ կոմերիտականների ուղեկցութեան պայմանով եւ Մեսչեանն այնտեղ մեծ յաջողութեամբ ելոյթ է ունենում: Խումբը երգում էր հայերէն եւ բարձրացնում էր հայկականութեանը առնչուող հարցեր:

1980ականների սկզբին խումբն անսպասելիօրէն անհետացաւ, 1984ին Մեսչեանը սկսեց իր սեփական ուղին: Նա 1990ին, ԱՄՆում ստեղծում է «Առաքեալներ 90» խումբը, որի կազմում ընդգրկուած էին նոր անդամներ:

ԷԼԻՊՍ

Էլիպս[21], հարդ ռոք խումբը հիմնուել է 1986ին, Երեւանում, առաջին համերգը տուել է 1986 Մարտին: Խումբը ունի շուրջ 70 երգ, որոնք գրուել են հիմնականում 1986-99ին:

Խմբի անդամներն էին՝ Ռոման Մխիթարեանը (ձայնային), Ստեփան Բերուջանեանը (կիթառ), Հրաչեայ Գրիգորեանը (բաս կիթառ), Ռադիոն Վանեանը (ստեղնաշար) եւ Վարդան Մամիկոնեանը (հարուածային): Շուտով Վարդանը լքում է խումբը, եւ փոխարինւում Արամ Պետրոսեանով (Բատիա), դառնալով խմբի նոր թմբկահարը: 1986ի ամռանը խումբը մեկնեց Լատվիա, ուր ելոյթ ունեցաւ լատվիական «Պիլիգրիմ» խմբի հետ: Կարճ ժամանակահատուածում խումբը մեծ ճանաչում ձեռք բերեց Հայաստանում եւ բազում ելոյթներ ունեցաւ: Ճանաչման հետ մէկտեղ խմբին պատճառուեց նաեւ մեծ տհաճութիւն՝ սովետական իշխանութիւնների կողմից. արդէն 1986ի վերջին Էլիպսն արգելուեց, յայտարարուելով «հակախորհրդային»: Չնայած այդ փաստին, խումբը ընդյատակեայ շարունակեց իր գործունէութիւնը, դառնալով էլ աւելի յայտնի: Արգելքի հիմնական պատճառն էին այն թուականներին ղեկավարութեան կողմից «լկտի» համարուող «Գորբաչով…» եւ «Պոլիտբիւրո…» երգերը, որտեղ խորհրդային իշխանութիւնները ենթարկւում էին խիստ քննադատութեան:

1980ականների կէսերի ռոք խմբերի համար ստեղծուեցին նպաստաւոր պայմաններ ընդյատակից դուրս գալու համար: Այդ պայմանների հիմքում Միխայիլ Գորբաչովի «վերակառուցման» քաղաքականութիւնն էր, որը

21 https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%AC%D5%AB%D5%BA%D5%BD_(%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%A2) :

ԽՍՀՄ փակ համակարգի համար մասնակի ազատութիւն էր ապահովում: Սրա շնորհիւ 1987ին, բազում ռոք-փառատօնների յայտնուելու հետ մէկտեղ, Էլիպսը մասնակցեց գրեթէ բոլոր փառատօններին Հայաստանում, համերգերով հանդէս գալով Հայաստանի տարբեր շրջաններում: Խումբն իր երգերը գրում էր հայերէն, ինչը հմտօրէն համադրում էին ծանր ռոքի գործիքաւորման հետ:

Էլիպսի ստեղծագործական աշխուժ գործունէութիւնը շարունակուեց մինչեւ 1992, երբ խմբի անդամները որպէս կամաւորներ մեկնեցին Արցախեան պատերազմին մասնակցելու: 1992-94՝ մարտական գործողութիւնների ընթացքում, խմբին միքանի անգամ յաջողուեց ելոյթներ ունենալ համերգերին եւ փառատօններին: Պատերազմից յետոյ խումբը ձայնագրեց նոր երգեր, համերգերով հանդէս եկաւ Հայաստանի եւ Արցախի գրեթէ բոլոր քաղաքներում, նաեւ ելոյթներ ունեցաւ Ռուսաստանում եւ Բալթեան երկրներում: 2011 Մայիսի 20ին թողարկուեց խմբի յոբելեանական «Էլիպս հարդ ռոք» ալբոմը: Ներկայումս խմբի անդամները զբաղուած են տարբեր աշխատանքներով, այդ թւում եւ քաղաքականութեամբ[22], սակայն խումբը ժամանակ առ ժամանակ ելոյթներ է ունենում:

ԱՍՊԱՐԷԶ

Առաջին հեւի-մետալ (heavy metal) նուագող խումբը Հայաստանում: Միակ հայկական ռոք-խումբը, որը սկաւառակ է թողարկել Սովետական Միութեան խոշորագոյն - «Մելոդիա» - ձայնագրման ստուդիայում: Հայաստանում ծանր երաժշտութեան ձեւաւորման գործում խմբի մեծ աւանդը ընդունւում է բոլոր սերունդների հայկական ռոք-խմբերի կողմից:

Խմբի կիթառահար Արմէն Թորոյեանը հարցազրոյցներից մէկի ժամանակ պատմում է, որ «Ասպարէզ» անունը նա է առաջարկել. Մուրացանի *Գէորգ Մարզպետունի* վէպից էր վերցուած: Ասպարէզը նաեւ գրաբարով երկարութիւնը չափելու միաւոր է, ինչպէս մղոնը կամ կիլոմետրը: Թորոյեանին կիթառ նուագել սովորեցրել էր նրա կրտսեր եղբայր՝ Գագիկը, որը յետագայում դարձաւ խմբի բաս-կիթառահարը: Գագիկի դպրոցական ընկերը՝ Դաւիթ Օհանջանեանը, սկսեց թմբուկ նուագել սովորել՝ գրքերի վրայ: Վարժուելով հենց գրքերի վրայ, ոչ թէ գրքերում էր ուսումնասիրում նուագելու վարպետութիւնը: Նա հաստ գրքեր էր դնում կողք-կողքի, հարուածային սարքի նման մի բան էր կառուցում եւ սովորում կշռոյթ պահել:

[22] Մեներգիչ Մխիթարեանը «Հանրապետութիւն» կուսակցութեան անդամ է:

Արմէնը պատմում է, որ նա ոգեշնչւում էր Led Zeppelin խմբի եւ Սայեաթ-Նովայի երգերից: Նրանց երաժշտութիւնն իվերջոյ հենց այդպիսին էլ ստացուեց. ծանր մետալ՝ էթնիկ տարրերով: Խումբն «Ասպարէզ» անունով սկսեց հանդէս գալ 1982ից: 80ականների կէսերին նրանք ծանօթացան էստոնացի ռոքերաժիշտ Գունար Գրափսի հետ եւ խնդրեցին նրան լսել իրենց երաժշտութիւնը: Հակառակ «կովկասեան» ռոքի հանդէպ հետաքրքրութիւն չունենալուն, Գրափսը լսեց տղաների կատարումները: Նրան շատ դուր եկան էթնիկ տարրերը եւ նա առաջարկեց նրանց յաջորդ տարի մասնակցել Էստոնիայում ռոք-փառատօնին եւ հարցրեց՝ ուր ուղարկի հրաւէրը: Տղաները խառնուեցին իրար, շփոթուեցին եւ պատասխանեցին՝ կոմսոմոլ: 1987ին կոմսոմոլը «Ասպարէզ» խմբի համար հրաւէր ստացաւ Տալլինում «Ծանր ամառ» ռոք-փառատօնին մասնակցելու համար: Այնուհետեւ 1987ին «Ասպարէզը» ելոյթ ունեցաւ Մոսկուայի «Ռոք-համայնապատկեր» փառատօնին: Միքանի ամիս անց Հայաստանում հանրահաւաքներ սկսուեցին Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու համար: 1989 Ապրիլին Ստեփանակերտի մարզադաշտում «Ասպարէզ»ի նախաձեռնութեամբ մեծ համերգ անցկացուեց, որին մասնակցեցին ատենի յայտնի հայ կատարողները[23]: Խմբի անդամներն էին Արմէն Թորոյեանը (կիթառ), Եուրի Մայիլեանը (Մէյ Լիան, սոլօ կիթառ), Վիտալի Դեմուրչեանը (սոլօ կիթառ), Գագիկ Թորոյեանը (բաս կիթառ), Դաւիթ Օհանջանեանը (Դաւիթ Օհան, հարուածային), Գարիկ Մարտիրոսեանը (ձայնային), Արթուր Միտինեանը (ստեղնային), Ժան Դիլբարեանը (ձայնային), Կարէն Ծատուրեանը (ստեղնային):

«Սեւ այգի», «Խելայեղ դար», «Պատմիր ինձ», «Դրուագ 5րդ դարի հայոց պատմութիւնից» եւ այլ երգերը «Ասպարէզ» խմբի տղաները 1990ին հաւաքեցին իրենց առաջին եւ միակ ալբոմում՝ «Անաֆեմա»: ԽՍՀՄի փլուզումից յետոյ խումբը ցրուեց: Ինչպէս եւ Խորհրդային Հայաստանի այդ տարիների խմբերը «Ասպարէզ»ը եւս իր երգերը կատարում էր հայերէնով:

ԷՄՓԻՌԷՅ/EMPYRAY

Էմփիռէյը[24] հարդ ռոք, հայկական (արեւելեան) ռոք ոճերում ստեղծագործող հայկական ռոք խումբ է, որն առանձնանում է թաւ ազդեցիկ վոկալով, մեղեդիներում կիթառի անսպասելի անցումներով, ներդաշնակ եւ աւարտուն երաժշտական պատկերով: Խումբը ձեւաւորուել է 1994ին Սարգիս

---

23 https://www.facebook.com/rockseroond/photos/a.430920616998293/3033751580048504/?locale=hi_IN&paipv=0&eav=AfZ_Bx4FVP0dwoF_yghBPjc7B-9sxTOiinq2NkZ27dgmi94HFTFa4XKh_uQ4w9RSvNk&_rdr :

24 Տես՝ https://armrock.am/artist/empyray-hy/ :

Մանուկեանի եւ Կարէն Արզումանեանի նախաձեռնութեամբ եւ այդ ընթացքում ունեցել է մօտ 50 համերգ:

2006ին խումբը թողարկեց առաջինեկ ալբոմը՝ սեփական ստուդիայում ձայնագրուած 13 երգերով, ունեցաւ իր խոշոր մենահամերգը եւ Ազգային երաժշտական մրցանակաբաշխութեամբ ճանաչուեց տարուայ լաւագոյն ռոք խումբ:

Խմբի անունը յունարէն empuros (լատ. empyreus, անգլ. empyrean) բառի, ռուսերէն արտասանութեամբ տարբերակն է, որը հին յոյների եւ վաղ քրիստոնեաների համոզմամբ երկնքի բարձրագոյն շերտն է՝ լի հրով եւ լոյսով, որտեղ ապրում են սրբերը:

Խմբի անդամներն էին.- Սարգիս Մանուկեանը (ձայնային, խմբի հիմնադիր եւ ղեկավար), Կարէն Արզումանեանը (կիթառ, երաժշտութիւնների հեղինակ), Գիսանէ Պալեանը (դաշնակահարուհի, երգերի բառերի հեղինակ), Դաւիթ Խուրշուդեանը (բաս կիթառ):

2013ին Մանուկեանը մեկնում է ԱՄՆ եւ խումբը երկար որոնումներից յետոյ գտնում նոր մեներգիչ՝ Էմիլ Խոսրովեանին[25]:

Երգերի թեմաները ներանձնական, փիլիսոփայական, գոյաբանական հարցերն են: Անկախութեան տարիներին՝ 1990ականներից յետոյ ստեղծուած խմբերը արդէն տիրապետելով թէ՛ օտար լեզուների, թէ՛ օգտուելով քաղաքական ազատութիւններից երգում էին եւ՛ հայերէն եւ՛ անգլերէն: Էմփիռէյ խումբը եւս մինչ օրս ստեղծագործում է երկլեզու:

ԴՈՐԻԱՆՍ/DORIANS[26]

Հիմնադրուել է 2008 Յունիսին՝ Վահագն Գէորգեանի կողմից, ով մինչ 2012 հանդիսացել է խմբի ղեկավարը: 2009ին խումբը մասնակցել է «Եւրատեսիլ» միջազգային մրցոյթի նախընտրական փուլին եւ անմիջապէս ձեռք բերել ճանաչում: 2009ին, Մոսկուայի «Տաշիր» ամէնամեայ մրցանակաբաշխութեան ժամանակ արժանացել է «Տարուայ յայտնութիւն» մրցանակին: Յունիսին ունեցել է առաջին համերգը Երեւանում: Առասպելական երաժիշտներ Եան Գիլանի

[25] Տես՝ https://armlur.am/934513/ :

[26] Տես՝ https://web.archive.org/web/20200607194558/https://avproduction.am/?ln=am&page=person&id=401 :

(Deep Purple) եւ Տոնի Այոմիի (Black Sabbath) հետ Գիւմրիում հանդիպելուց յետոյ[27] խումբը «Rock Aid Armenia» նախագծի շրջանակներում ունեցել է համերգ, որի հասոյթը տրամադրել է Գիւմրիի երաժշտական դպրոցին: 2010ին համերգերով հանդէս է եկել Մոսկուայում: 2010ին Հայաստանի Ազգային երաժշտական մրցանակաբաշխութեան ժամանակ արժանացել է «Տարուայ լաւագոյն ռոք խումբ», իսկ 2011ին՝ «Տարուայ լաւագոյն ռոք խումբ» եւ «Տարուայ լաւագոյն տեսահոլովակ» մրցանակներին: Նոյն թուականին ձայնագրել է առաջին ձայնասկաւառակը, որից որոշ աշխատանքներ կատարուել են Բրիւսէլում, իսկ մշակումն արուել է Փարիզում: 2011ին Երեւանում խումբը ելոյթ է ունեցել ռոք երաժիշտ, երգիչ Սերժ Թանկեանի համերգի բացմանը, իսկ 2012ին՝ դաշնակահար, երաժիշտ Դերէկ Շիրինեանի հետ համատեղ: 2011ին թողարկել է «Fly» ձայնասկաւառակը, որն 2012ին Հայաստանի Ազգային երաժշտական մրցանակաբաշխութեան արժանացել է «Տարուայ լաւագոյն ալբոմ» մրցանակին: 2012ից խմբի ղեկավարն է Արա Թադեւոսեանը: 2013ին «Lonely Planet» երգով խումբը մասնակցել է «Եւրատեսիլ» երգի միջազգային մրցոյթին եւ հասել եզրափակիչ փուլ: Խումբը երգում էր արեւելահայերէն, արեւմտահայերէն եւ անգլերէն:

Խմբի անդամներն են.- Գոռ Սուջեանը (ձայնային), Գագիկ Խոդավիրդին (կիթառ), Արման Փահլեւանեանը (ստեղնաշարային գործիքներ), Էդգար Սահակեանը (բաս կիթառ), Արման Ջալալեանը (հարուածային գործիքներ): Ներկայումս Սուջեանը ծաւալում է անհատական գործունէութիւն:

ԱԼՔ



Այս հեւի մետալ խումբը կազմաւորուել էր 1995ին Վանաձոր քաղաքում: Խմբի ակունքներում կանգնած է առաջին հերթին կիթառահար Արթուր Բարսեղեանը, ով 1990ականներից հանդէս է եկել մի շարք վանաձորեան ռոք-խմբերում: Խումբն այլ անուանումով սկսեց փորձերը Վանաձորի «Սպայի տան» տարածքում[28], հետեւեալ կազմով.- Բարսեղեան (կիթառ), Դաւիթ Գրիգորեան (հարուածայիններ) եւ Վահէ Տէրտէրեան (բաս): 1995ի ամռանը խմբին մեներգչի դերում միացաւ Անդրէյ Ափոյեանը եւ այն ստացաւ իր «Ալք» անուանումը (ալք՝ ալեր, դեւեր): Ո-

[27] 2011ին Գիլլանը հաւաքեց Who Cares խումբը եւ ձայնագրեց Out of My Mind սինգլը՝ ի նպաստ Գիւմրու երաժշտական դպրոցի շինարարութեան: 2012 Յուլիսին Թոնի Այոմիի հետ թողարկեց "Who Cares" ալբոմը՝ յօգուտ Գիւմրու դպրոցի, 2013 Սեպտեմբերի 20ին մասնակցեց դպրոցի հանդիսաւոր բացմանը:

[28] Ապա խումբը տեղափոխուեց Վանաձորի «Ինտերկապ» հեռուստաընկերութեան տարածք, որտեղ շարունակեց փորձերն ու նոր նիւթի պատրաստումն ու մշակումը: Ներկայումս, խումբը շարունակում է փորձերը իր վարձած տարածքում:

ճային առումով խումբն ընտրեց իր համար միակ ընդունելի տարբերակը՝ Black Sabbath խմբի կողմից ոգեշնչուած սկիզբ դրեց դանդաղ եւ մռայլ heavy metalը, որն աւելի դիպուկ կը լինէր դասել որպէս doom metal[29]: 1995ի աշնանը իր իւրօրինակ երաժշտական նիւթով առաջին անգամ ելոյթ ունեցաւ քաղաքի զօրամասերից մէկում: Ապա կայացան ելոյթներ քաղաքային հրապարակում եւ համերգեր՝ տիկնիկային թատրոնի դահլիճում: 1996 Յուլիսին խումբն սկսեց ձայնագրուել Էդուարդ Բաբաջանեանի «Ունիվերսալ» ստուդիայում: Երկու շաբաթուայ աշխատանքի արդիւնքն էր[30] 7 գործերից բաղկացած ալբոմը: 1996ի աշնանը Տէրտէրեանը միացաւ ՀՀ ՋՈՒ շարքերին եւ խումբը, փաստօրէն, կազմալուծուեց: 1998ի ամռանը Երեւանում սկսուեց ռոքի հերթական վերածնունդը՝ «Rock'N'PAK» փառատօնի տեսքով: Փառատօնին նախապատրաստուելու առիթով Ափոյեանը որոշեց իր երեւանցի ընկերների օգնութեամբ վերականգնել խումբը, որն արդէն պիտի հանդէս գար փոքր-ինչ փոփոխուած ոճով՝ death-doom metal: Խմբում բացի Անդրէյից ընդգրկուեցին հին երեւանեան մեթալիստներ Էդուարդ Այվազեանը (ռիթմ-կիթառ), Էդ Թոփչեանը (սոլօ-կիթառ), Արշակ Լեպեանը եւ Կարէն Գրիգորեանը: Հետաքրքիր եւ սկանդալային ելոյթին յաջորդեց ելոյթը նոյն թուականի աշնանը «Նայիրի» կինոթատրոնի տարածքում կազմակերպուած «Helloween» փառատօնին: Դրան յաջորդեց շուրջ 15 տարի տեւած լռութիւն: Սակայն, 2013 Ափոյեանը կրկին որոշեց վերականգնել խումբը՝ ստանձնելով նաեւ ռիթմ-կիթառահարի դերը: Խումբն ստացաւ հետեւեալ պատկերը՝ Ափոյեան (ձայնային, ռիթմ-կիթառ), Յովհաննէս Կուլօղլեան (սոլօ-կիթառ), Արսէն «Pinhead» Յակոբեան (բաս-կիթառ), Յարութիւն Քեշիշեան (հարուածայիններ) եւ Արմէն Միրզաբէկեան (ստեղնայիններ): 3 ամիս փորձերից յետոյ 2013 Մայիսին խումբն իր ելոյթով բացեց Արսէն Յակոբեանի կողմից կազմակերպուած Metal Attack փառատօնը: Ամռանը խմբին միացաւ հին հարուածային Էդգար Պետրոսեանը[31]:

OՔՍԵՆՀԵՄ/OAKSENHAM

Խումբը ներկայացնում է սիմֆօ-յառաջդիմական ռոք՝ համատեղելով ակադեմիական սիմֆոնիզմի յօրինողական սկզբունքները աւանդական ռոք հնչողութեան:

Ստեղծուել է 2001ին, 90ականների առաջին կէսում գործող «Dumbarton Oaks» խմբի անդամներ Վահագն Պապայեանի, Աշոտ Կորգանեանի եւ Վալերի Տոլստովի (ֆլէյտա, ստեղնաշար) կողմից: Երկացանկը կազմուած

[29] Մետալի ծայրայեղ ենթաժանր՝ դանդաղ տեմպերի գերակշռութեամբ: Այս ժանրի եւ երաժշտութիւնը, եւ բառերը կոչուած են արտայայտելու յուսահատութեան, վախի եւ կործանման զգացողութիւններ:

[30] Իդէպ, ձայնագրութեան արժէքը կազմեց 100 ԱՄՆ դոլար:

[31] Տես՝ https://www.last.fm/music/Alq/+wiki :

է հիմնականում խմբի անդամների ստեղծագործութիւններից եւ ակադեմիական ու ռոք երաժշտութեան դասական նմուշների հեղինակային մշակումներից: Ձեռագրին բնորոշ են բարդ բազմակշռոյթ հիւսուածքները, բազմաձայն ձայնատարութիւնը, խառը չափերը, միաժամանակ՝ հարուստ մեղեդայնութիւնն ու յագեցած ներդաշնակ լեզուն: 2002ին ձայնագրուեց «Woden's Eve Live» համերգային ձայնասկաւառակը, որը 2004ին բարձր գնահատականի արժանացաւ յառաջդիմական ռոքի ոլորտում մասնագիտացող հեղինակաւոր միջազգային ամսագրերի կողմից, ինչպիսիք են *Classic Rock Society*, *Expose, Gibraltar Encyclopedia of Progressive Rock*: 2004ին Հայաստանում, British Councilի աջակցութեամբ, խումբը նախաձեռնել է ռոք-խմբի եւ փայտեայ փողային հնգեակի համար գրուած «Բիթլզ-ֆանտազիա» հնգամաս սուիտի առաջին բեմելը: 2007ին թողարկել է «The Conquest of the Pacific» ալբոմը ֆրանսական «Musea» լէյբլի կողմից: Խմբի անդամներից բացի ձայնագրութեանը մասնակցել են մի շարք հնչական գործիքներ (հոբոյ, ֆագոտ, տաւիղ, թաւջութակ, կլառնէտ, գալարափող) ներկայացնող հրաւիրեալ երաժիշտներ, ինչի շնորհիւ խմբի հնչողութիւնը սենեկային փոքր-նուագախմբի որակ է ստացել: Խմբի նախկին անդամներից են եղել Աննա Ադամեանը (ստեղնաշար) եւ Կորիւն Բոբիկեանը (ջութակ)[32]:

ARTSRUNI PROGRESSIVE MUSIC ACT



Վահան Արծրունին ծնուել է 1965 Դեկտեմբերի 5ին Երեւանում: Ունի բժշկական կրթութիւն: 1986-92՝ եղել է «Նարեկ» արական երգչախմբի մեներգիչ, 1993-94՝ «Յայսմաւուրք» երգչախմբի անդամ: 1989-94՝ սովորել է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի ակադեմիական երգեցողութեան բաժնում՝ պրոֆեսոր Գոհար Գասպարեանի մասնագիտական դասարանում:

Վահան Արծրունին հայկական երաժշտական մշակոյթի կարեւոր դէմքերից է: Նրա նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ իրականացուել եւ իրականացւում են մի շարք միջոցառումներ եւ նախագծեր, ինչպիսիք են "GAUDEAMUS" 4 երաժշտական փառատօնները (1994-96), "ART PROMO"

[32] Տե՛ս՝ https://www.progarchives.com/artist.asp?id=3258 :

(1995, 1997-2002, A1+), “VOX MUNDI” (1998-99, FM107), «Սաբոտաժ» (2000-2, FM107, A1+), “Meloman Club” (2019, Ազատութիւն ՀԸ) եւ «Երաժշտական եռանկիւնի» (2017ից առ այսօր, Հայաստանի Հանրային Ռադիո) հաղորդաշարերը:

Արծրունին առաջադէմ հայ ստեղծագործող է[33], դեռ 1980ականների վերջից, հաւատարիմ մնալով հայ երաժշտութեան աւանդոյթներին, համադրելով ազգային, ակադեմիական եւ ժամանակակից երաժշտութեան արտայայտչամիջոցները, իր արուեստով հաստատում է ուրոյն մշակութային տեսակ եւ արժէքային համակարգ: Ստեղծագործում է երաժշտութեան բազմաթիւ ոլորտներում՝ սենեկային երաժշտութիւնից մինչեւ ռոք եւ ֆիւժըն, էլեկտրոնայինից՝ սիմֆոնիկ եւ հոգեւոր երաժշտութիւն: Որպէս կատարող-երաժիշտ գործակցել է երգիչներ Մեսչեանի, Աննա Մայիլեանի, Յասմիկ Բաղդասարեանի, նաեւ՝ Հայաստանի Պետական կամերային նուագախմբի, Ազգային Ֆիլհարմոնիկ նուագախմբի, Օպերային Թատրոնի սիմֆոնիկ նուագախմբերի եւ «Շողակաթ» մանկական երգչախմբի հետ:

«Կոմիտաս. տասը յայտնութիւն» ալբոմը 2003ին ճանաչուել է Հայաստանեան Ազգային երաժշտական մրցանակաբաշխութեան «Լաւագոյն Ալբոմ 2003» մրցանակին, իսկ 2004ին Ամերիկայի Հայկական երաժշտական մրցանակաբաշխութեան ՝ «Լաւագոյն այլընտրանքային ազգային ալբոմ» եւ «Ալբոմի լաւագոյն ձեւաւորում» մրցանակներին[34]:

«CRUZAID» ալբոմը 2002ին հրատարակուելով Ֆրանսայում «MUSEA RECORDS»ի կողմից՝ 2003ին ընդգրկուել է առաջադէմ երաժշտութեան եւրոպական լաւագոյն տասնեակում: Ասորական հոգեւոր երաժշտութեան մշակումների համար 2008ին Վահան Արծրունին արժանացել է Ասորական Արեւելքի Եկեղեցու Մար Դինխա IV կաթողիկոս-պատրիարքի հովուապետական օրհնութեանը: 2012ից «Մաշտոց. սրբազան մարգարիտներ» մաշտոցեան շարականների Վահան Արծրունու մշակումների շարքը ընդգրկուած է Սբ. Էջմիածնի քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի հանրակրթական ուսումնական ծրագրում:

2014ին պարգեւատրուել է Երեւանի քաղաքապետի «Երեւան քաղաքի մշակոյթի պատուաւոր գործիչ» յուշամեդալով: 2016ին արժանացել է Ազգային ամէնամեայ թատերական մրցանակաբաշխութեան «Արտաւազդ» մրցանակի՝ «Ներկայացման համար գրուած լաւագոյն երաժշտութիւն» անուանակարգում՝ Անուշ Ասլիբէկեանի «Մերսեդէս» պիէսի երաժշտութեան

---

[33] Որպէս յօրինող նա յայտնի է նաեւ թատրոնի, կինոյի, *անիմացիոն* ֆիլմերի եւ կերպարուեստի բնագաւառներում: Հեղինակ է հինգ թատերական ներկայացումների, տասնեօթ վաւերագրական եւ երկու խաղարկային ֆիլմերի, վեց *անիմացիոն* ֆիլմերի, մնջախաղային ներկայացման, բալէտի եւ ժամանակակից արուեստի բազմաթիւ արարքների եւ ցուցադրութիւնների համար գրուած երաժշտութեամբ:

[34] 2007ից այն ներառուել է հանրակրթական դպրոցի «Երաժշտութիւն» առարկայի չափորոշիչ պետական ծրագրում եւ դասագրքերում:

համար: Ներկայումս շարունակում է ստեղծագործել եւ գործակցել նաեւ այլ երաժիշտների հետ՝ հայերէն եւ անգլերէն երգերով:

LOUSNELIUS

Հայկական ալտերնատիւ ռոք խումբ, կազմաւորուել է 2006ին Վանաձոր քաղաքում, մասնակցել բազմաթիւ համերգերի եւ փառատօնների Երեւանում, Վանաձորում:

Այն կազմաւորուել է Արմէն Պապեանի եւ Միքայէլ Մխիթարեանի կողմից: Վերջինս սկզբում խմբում հարուածային գործիքներ էր նուագում:

Այնուհետեւ խումբ եկաւ Պայքար Չախոյեանը, ով խմբի մեներգիչն էր: Խումբը այդ կազմով գործեց միքանի ամիս: Երբ Միքայէլը գնաց ծառայութեան հայկական բանակ (2006-8), Պայքարը ստանձնեց նաեւ հարուածային գործիքները, որը յետագայում դարձաւ իր մասնագիտութիւնը: Այնուհետեւ խումբ ներգրաւուեց Միշէլ Ալեքեանը՝ որպէս բաս կիթառահար: Այս կազմով խումբը ստեղծագործեց մօտ 3,5 տարի, որից երկուսը (2008-10) Միշէլը ծառայում էր հայկական բանակում:

Միշէլի վերադարձից յետոյ խումբը ստեղծագործեց նոյն կազմով եւս 1,5 տարի, որից յետոյ Պայքարը տեղափոխուեց վանաձորեան մէկ այլ ռոք խումբ: Խումբը մատնուեց անգործութեան մօտ 5 ամիս, որից յետոյ խումբ ներգրաւուեց Հայկ Գալստեանը (2012), ով ստանձնեց հարուածային գործիքները: Պայքարի հեռանալուց յետոյ առաջացաւ մեներգիչի խնդիր: Խումբը չկարողանալով գտնել համապատասխան երգիչ Վանաձոր քաղաքում՝ այդ դերը ժամանակաւորապէս ստանձնեց խմբի սոլօ կիթառահար՝ Արմէն Պապեանը: Հայկ Գալստեանի ներգրաւումից յետոյ խումբն առաջին անգամ բեմ դուրս եկաւ 2012 Յունիսին:

Ներկայումս խումբը չի գործում, խմբի անդամ Պայքարը «Որդան կարմիր» խմբի կազմում է: Վերջին ձայնագրութիւնը եղել է վեց տարի առաջ:

ՌՈԶԵՆ ԹԱԼ

Ձեւաւորուել է 2015ին Երեւանում՝ Արմէն Եդիգարեանի, Յարութին Ասրեանի եւ Նարեկ Թովմասեանի կողմից:

Խմբի երգերի հեղինակ Եդիգարեանն ու բաս-կիթառահար Ասրեանը 2015ի գարնանը սկսեցին նոր նախագծի համար գործեր պատրաստել ու զուգահեռ փնտռել հարուածայիններ նուագող գաղափա-

րակից: Նարեկի հետ հանդիպումը իրեն չուշացրեց, եւ եռեակը պատրաստ էր ճամփայ ընկնելու:

Ռոզեն Թալն առաջին անգամ բեմ բարձրացաւ նոյն թուականին Գետամէջում կայացած River Festի ընթացքում, որտեղ տղաները նուագեցին ընդամէնը 3 երգ, բայց հասցրեցին գրաւել շատերի սրտերը: Ուղիղ մէկ տարի անց նոյն փառատօնին Ռոզեն Թալն արդէն փակում էր համերգը:

2016ին խմբին միացաւ Արսէն Օհանջանեանը՝ ստանձնելով խմբավարի դերը: Գործարարական ոլորտում իր ունեցած փորձի եւ Ռոզեն Թալի հանդէպ մեծ հաւատի շնորհիւ նա շարունակում է թիմային աշխատանքը եւ ապահովում խմբի առաջխաղացումն ու նոր ձեռքբերումները:

Խմբի առաջին ալբոմը լոյս տեսաւ 2018ին կրկնակի EP ֆորմատով: Այն արտացոլում էր խմբի վաղ եւ միջին շրջանի մտածողութիւնը՝ ազդուած 70ականների առաջադիմական ռոքից եւ ժամանակակից հարդ ռոքից:

Մօտ մէկ տարի տեւած դադարից յետոյ 2020-21ին խումբը վերադարձաւ բեմ՝ առաջին անգամ ներկայացնելով հայերէն գրուած երգեր: Այս շրջանում Ռոզեն Թալը սկսեց նոր ոճեր եւ մօտեցումներ փորձարկել. Ստեղծուեցին ձայնային բալադներ («Ժամանակն է», «Բիւր հազար») եւ առաջադիմական մետալին յարող գործեր («Մեղայ ողորմեայ»): Վերջինս յետագայում հրապարակուեց որպէս live single:

2022ի վերջին, խումբը թուային հարթակներում թողարկեց իր վաղ շրջանի սինգլների հաւաքածուն եւ Civilnet հեռուստաընկերութեան նկարահանած «Live for Independence» համերգը, որտեղ յստակ երեւում է խմբի նոր ուղղութիւնը: Համերգը հրապարակուեց նաեւ որպէս live album, իսկ խումբն այժմ աշխատում է առաջին լիաֆորմատ ձայնասկաւառակի վրայ[35]:

ELEVEN GREEN

2018ին Խորէն Միքայէլեանն ու Նարէ Նիկոյեանը որոշեցին ստեղծել Eleven Green[36] խումբը: Առաջին ելոյթը՝ որպէս Eleven Green, խումբը համարում է 2019ին կայացած «Armenia In Rock» փառատօնի համերգը (չնայած՝ այդ ժամանակ խումբը հանդէս էր գալիս Mik Aelian անուանմամբ):

Ամէն ինչ սկսուեց խմբի առաջին «Fadein» եւ «Timeline» սինգլներից, որոնք շատ տարբեր էին իրենց նախորդ ստեղծագործութիւններից ու շատ լաւ արձագանգ գտան հանդիսատեսի կողմից: Նրանք մշակեցին Indie Rockից[37] ներշնչուած իրենց սեփական ինչողութիւնը՝ փափուկ, մեղեդային

---

[35] Համերգը՝ https://www.youtube.com/watch?v=h8NN-hVRoFc&t=2s :

[36] https://armrock.am/artist/eleven-green/ :

[37] Այն առաջացել է Միացեալ թագաւորութիւնում եւ ԱՄՆում 1980ականներին: Այս եզրը յաճախ օգտագործւում է անկախ ընդյատակեայ երաժշտութեան թողարկման ու տարածման տեսակը, ինչպէս նաեւ նման կերպ թողարկուող երաժշտութեան ոճը բնութագրելու համար: Ինդի ռոք արտիստները իրենք են տնօրինում սեփական երաժշտութիւնն ու ասպարէզը՝ թողարկելով ալբոմներ եւ ճանաչում

վոկալի եւ կոշտ էլեկտրոնային ձայների համադրութեամբ: Բազմաթիւ երգեր թողարկելուց եւ Հայաստանում տասնեակ համերգերից յետոյ խումբը լծուեց իր առաջին շրջագայութեանը՝ Եւրոպայում:

2019ի աշնանը խումբը բազմաթիւ համերգներ ունեցաւ եւրոպական տարբեր քաղաքներում: Նոյնիսկ համաշխարհային համավարակի ժամանակ խումբը չդադարեց նոր երգեր գրել իր ունկնդիրների համար եւ ամէն ամիս նոր երգ էր թողարկում ամսի 11ին:

2022 Մարտի 11ին խումբը թողարկեց «Տականք» ստեղծագործութիւնը, որը շատ սիրուեց հանդիսատեսի կողմից եւ խմբին աւելի մեծ ճանաչում բերեց: Նոյն տարուայ Ապրիլին Eleven Greenը յաղթեց «Phoenix» կովկասեան երաժշտական մրցանակաբաշխութեան «Տարուայ դեբիւտ» անուանակարգում:

Խմբի առաջին՝ «Against the Odds» ալբոմը թողարկուել է 2023 Ապրիլ 11ին: Խումբը շարունակում է ստեղծագործել մինչ օրս:

FAIRWIND

FairWind[38] հայկական ալտերնատիւ ռոք խումբը հիմնադրուել է 2007 Սեպտեմբերի 1ին Երեւանում, մի խումբ ընկերների կողմից, որոնք տարիների ընթացքում հմտանալով ռոք երաժշտութեան տարբեր ուղղութիւններում՝ մշտապէս մարդաշատ համերգներ են ունեցել Հայաստանի մայրաքաղաքում եւ տարբեր շրջաններում:

Խումբը հանդէս է գալիս հեղինակային հայերէն երգերով, նաեւ՝ արդէն իսկ սիրուած եւ ժողովրդականութիւն վայելող երգերի սեփական մեկնաբանութիւններով, թերեւս դա վերաբերում է լեզուական առանձնայատկութեանը, քանի որ խումբը ստեղծագործում է հայերէն, բայց խօսակցական բառապաշարով (ի տարբերութիւն միւս խմբերի գրական հայերէնին), ինչը

ստանալով շրջագայելու, սովորական մարդկանց միջոցով գովազդուելու, անկախ ռադիոների եթերում պտտուելու եւ վերջին տարիներին նաեւ համացանցային *պրոմօ*-արշաւների միջոցով:

[38] Տես՝ https://armrock.am/artist/fairwind-hy/ :

հասարակ լսողի կողմից աւելի հեշտ է ընկալւում: Խմբի անփոփոխ անդամներն են Վարդգէս Յովէեանը, Տիգրան Խաչատրեանը եւ Մկրտիչ Քալաջեանը: Տարբեր ժամանակներում խմբի անդամներ են եղել՝ բաս կիթառահարներ Ալեքսան Արշամեանը (2007-8), Վաչագան (Կաւիճ) Ղարիբեանը (2009-14) եւ կիթառահար Հրանտ Սահակեանը (2009-11): 2014ին խմբին է միացել բաս կիթառահար Արտաւազդ Բաղդասարեանը, իսկ 2015ից խմբի կիթառահար եւ մեներգիչ է նաեւ Բենիամին Ֆրունջեանը:

Տարիների ընթացքում խումբը աշխուժ գործունէութիւն է ծաւալել՝ համերգերով հանդէս գալով Հայաստանի տարբեր մարզերում եւ քաղաքներում: 2016ին խումբը թողարկել է «Եասաման» ճանաչուած երգի սեփական մեկնաբանութիւնը՝ որոշ չափով շեղուելով «ալտերնատիւ-ռոք» ուղղութիւնից դէպի աւելի աւանդական քաղաքային երգի ոճ:

2020-22՝ FairWindը թողարկեց մի շարք հեղինակային ստեղծագործութիւններ, ինչպէս՝ «Կարմիր» եւ «Մնացածը» երգերը, ինչպէս նաեւ մի շարք հանրաճանաչ երգերի սեփական մեկնաբանութիւններ՝ «Ամէն բացուող առաւօտ», «Սիրոյ հասակ», «Զեփիւռ» եւն.:

2022ին խմբի կիթառահար Քալաջեանը մեկնեց Հայաստանից եւ նրան փոխարինեց Ռոբերտ Խուդաւերդեանը: Խմբի անդամներն են.- Յովէեանը (ձայնային, կիթառ), Ֆրունջեանը (կիթառ, ձայնային), Խուդաւերդեանը (կիթառ), Բաղդասարեանը (բաս կիթառ), Խաչատրեանը (հարուածային):

Խումբը շարունակում է ստեղծագործել եւ պարբերաբար համերգերով հանդէս է գալիս տարբեր միջոցառումների եւ ակումբներում:

NEW GRAY

The Beautified Project խմբի նախկին կիթառահար Արմէն Շահւերդեանը 2015ին հանդէս եկաւ միանձնեայ նախագծով: Սկզբնական շրջանում՝ մինչեւ 2018, նա աշխատեց միայնակ եւ ներկայացրեց իր ստեղծագործութիւնները՝ գործակցելով տարբեր երաժիշտների հետ:

2018ին հանդիպելով իր ներկայումս բաս կիթառահարին՝ Արամէ Բանդարիին, իր կատարումները վերածուեցին զուգակատարումների, իսկ որոշ ժամանակ անց նրանց միացաւ խմբի թմբկահար Մանանա Աւետիսեանը: Ներկայումս խմբի կազմը հետեւեալն է.- Շահւերդեան, Էրիկ Սէյրանեան, Դաւիթ Խուրշուդեան, Աշոտ Կորգանեան: Մինչ այդ Շահւերդեանն արդէն ձայնագրել էր իր կատարումները, սակայն հաշուի առնելով նոր խմբի անդամների առկայութիւնը՝ որոշեցին կրկին ձայնագրել: Այդ տարի նաեւ երգ են կատարել թաւշեայ յեղափոխութեանը նուիրուած:

Երգերի թեման համամարդկային է: «...*Օրինակ՝ մեր վերջին գործը՝ «Circling the Sun»ը, խօսում է այն մասին, որ մարդիկ չպէտք է մտածեն միայն իրենց ներքին ցանկութիւնների, ձգտումների ու հաճոյքների մասին, քանի որ կեանքում կան աւելի իրական ու կարեւոր արժէքներ: Այսինքն՝ գլոբալ աշխարհին մտահոգող խնդիրների մասին են մեր ստեղծագործութիւնները*»՝ ասել է Շահւերդեանը Bravo.amի հետ զրոյցում[39]: Խումբը թողարկել է 2 սինգլ «To You» եւ «Circling the Sun»: 2023 Ապրիլին խումբը ներկայացրեց իր առաջին ալբոմը՝ «Gray Matters» անուանումով[40]:

UNAESTHETIC

«Unaesthetic» մետալ խումբը «Daeron» սիմֆոնիկ բլէք մետալ խմբի[41] յարակից նախագիծն է: Յօրինուածքային առումով նրանք որդեգրել են աւելի կինեմատոգրաֆիկ մօտեցում՝ զուգակցելով մռայլ տրամադրութիւնը կշռութաւոր ռիֆերի (guitar riff) եւ գրաւիչ (կպչուն) կրկներգերի հետ, ստանալով խաւարի եւ գեղեցկութեան, կործանման եւ սոփեստութեան խառնուրդ: Երգերը սկսւում են ծանր, յետոյ դառնում քնարական, ապա վերածւում տարաբնոյթ ինչ-որ բանի: Այդ կերպ կոտրում են երաժշտական կառուցուածքի շրջանակը[42]:

Խումբը կազմաւորուել է 2012ին, Երեւանում, հանդէս է գալիս Ինդաստրիըլ մետալ եւ Գոթիկ մետալ ոճերում: Խումբը ունի չորս մասնակից՝ Վլադիմիր (ձայնային, կիթառ, երաժշտութիւն, խօսք), Ռուբէն (կիթառ), Վարդան (բաս կիթառ) եւ Յարութ (հարուածային):

ՎԱՉԷ ՂԱՐԻԲԵԱՆ

Վաչէ Ղարիբեանը մարդ-ռոք խումբ է. երիտասարդ երաժիշտը իր գրած երաժշտութեամբ եւ բառերով երգերը ձայնագրում է միայնակ՝ իր սենեակում համակարգչի օգնութեամբ: Ասում է՝ դժուար է իր խառը ճաշակը կի-

39 https://bravo.am/news/New_Gray__%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6_%D5%87%D5%A1%D5%B0%D5%BE%D5%A5%D6%80%D5%A4%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%B6%D5%B8%D6%80_%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6%D5%A8_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BC%D5%B8%D6%84%D5%B8%D6%82%D5%B4_56147

40 Տես՝ https://armrock.am/artist/new-gray-hy/ :

41 Խմբի ալիքը եութուբեան կայքում՝ https://www.youtube.com/user/UnaestheticMusic

42 Տես՝ https://armrock.am/artist/unaesthetic-hy/ :

սող երաժիշտների գտնելը: Բացի այդ, միայնակ կարող է անել այն, ինչ ուզում է: Նա ստեղծել է իրարից տարբեր 4 նախագծեր[43].-

ա) Vat Che նախագիծ (2012). «*Vatcheի համար մէկ է ամէն ինչ, ինքը ոնց կայ, այդպիսինն է: …Սրանդարտ ես եմ, կոմֆորտի մէջ: Էդ պրոյեկտը ստեղծուել է ռամկաներ (սահմաններ - Մ.Խ.) չունենալու համար, հնարաւոր է՝ իրեն չհասկանան, բայց բաւական դժուար մարսելի է, Vatcheն չի սպասում, որ իրեն հասկանան, ասում է, ինչ ուզում է*»՝ ասում է Վաչէն ու աւելացնում թէ՝ գուցէ, ամենաինքը լինելու պատճառով է նախագիծը կոչել է իր անուամբ:

բ) Կաւիճ նախագիծ (2015). այն ինդի եւ էլեկտրօ ռոքի ու փոփի խառնուրդ է: Իր թեթեւութեան շնորհիւ՝ «Կաւիճը» շատ է սիրուել: Ունկնդիրների կողմից դրական արձագանգը խօսում է այն մասին, որ յաջողուել է «Կաւիճ» նախագիծը եկամտաբեր դարձնել: «Կաւիճ»ն արդէն ունի 7 ալբոմ, 75 երգ: Վաչէն նշում է՝ այս նախագծում ցոյց է տուել մարդկային վախն ու թուլութիւնները, արտայայտել է բոլոր զգացմունքները: Ու իսկապէս, Կաւիճի երգերում ամէն մէկս կարող ենք մի մասնիկ գտնել մեզնից[44]:

My Darkest Secret (2015). փանկ ռոք եւ *ինդաստրիըլ* ռոք ոճի այս նախագծում Վաչէն չարի ու ծանրի մէջ է, ասում է՝ խմած ես եմ: Այս նախագծի միջոցով Վաչէն դուրս է հանում իր մէջ ժամանակ առ ժամանակ կուտակուող բացասականը:

«Սաւարշաւանա» (2015). երաժիշտ Վարդգէս Յովէեանի հետ այս նախագծում Վաչէն արդէն բարի է ու ժպտուն, ասում է՝ «*այստեղ ընկերներիս հետ ես եմ, ոռքնռոլ ենք լսում, արդէն 8 երգով ասում-խօսում-խնդում եւ սէր քարոզում*»:

HIGH

High[45] խումբը կազմաւորուել է 2014ի աշնանը Երեւանում՝ դառնալով Second Moon[46] խմբի իրաւայաջորդը: Հիմնադիրներն են Մարտին Շահաբազեանը (դաշնամուր, ստեղներ, մելոդիկա, ձայնային), Գոռ Աւետիսեանը (հարուածային գործիքներ) եւ Արմէն Հաջեանը (բաս կիթառ): Իրենց երգե-

[43] Տես՝ https://news.am/arm/news/303991.html :
[44] Տես՝ https://journalist.am/archives/5900 :
[45] Տես՝ https://armrock.am/artist/high-hy/ :
[46] Հայկական ռոք խումբ, https://arevatsaghik.wordpress.com/2011/12/24/tosh/ :

րում խումբը համատեղում է յառաջադէմ ռոքը դասական երաժշտութեան, ջազի եւ հայկական երաժշտութեան տարրերի հետ՝ յենուելով ֆոլկի ու պռոգ ռոքի վրայ:

Խումբն իր վրայ կրել է ամերիկեան Muse, Radiohead, Porcupine Tree, King Crimson խմբերի, Տիգրան Համասեանի, Սերգէյ Ռախմանինովի եւն. ազդեցութիւնը: 2015ին խումբը երաժշտութիւն է գրել Նարինէ Գրիգորեանի «Յովնան» ներկայացման համար: Յետագայում պաշտօնապէս թողարկել է երկու սինգլ՝ «Ապակի» (2019) եւ «Օրը՝ տարի» (2021): 2021ին խումբը թողարկել է առաջին ալբոմը: Higիը գործակցել է «Կաթիլ»[47] խմբից Ռոբերտ Սիմոնեանի (բաս կիթառ), «Leprous»[48] խմբից Ռաֆայէլ Վէյնռոթ Բրաունի (թաւջութակ) եւ այլ երաժիշտների հետ: 2015ին մասնակցել է Fête de la Music, իսկ 2019ին՝ Armenia in Rock փառատօներին: 2020ի Ապրիլին խումբը մասնակցել է նաեւ Ծիծեռնակաբերդում կայացած Հայոց Ցեղասպանութեան զոհերի ոգեկոչման երեկոյին: 2025 Յունուարին ունկնդիրներին ներկայացրել է «Տիեզերքում» երգը:

ՆԵՄՐԱ/NEMRA

Նեմրան[49] կազմաւորուել է 2012ին, Երեւանում: Հանդէս է գալիս հեղինակային անգլերէն երգերով՝ ալտերնատիւ ռոք ժանրում եւ հայկական ժողովրդական երգերի սեփական մեկնաբանութիւններով:

Խմբի անդամներն են Վան Եղիազարեանը (ձայնային/կիթառ), Վասպուր Եղիազարեանը (բաս կիթառ/ձայնային), Մարիաննա Կարակէեանը (ստեղնաշարային գործիքներ/ձայնային), Մարէկ Զաբորսկին (հարուածային գործիքներ):

«Նեմրա» անունն ընտրուել է խմբի հայկական ծագումն ընդգծելու նպատակով (Արմէնիա, Արմէն՝ հակառակ ընթերցմամբ):

[47] Ֆոլկ-ռոք խումբ, որն արդիականացնում է աւանդական ազգային երաժշտութիւնը:

[48] Նորուեգական մետալ ռոք խումբ:

[49] Տես՝ https://nemraband.com/ :

Խումբն ունի 40ից աւելի հեղինակային երգեր, եւ բազմաթիւ տեսահոլովակներ: Խումբը հանդէս է եկել մենահամերգերով Հայաստանի բազմաթիւ քաղաքներում, ելոյթ է ունեցել միջազգային փառատօններին (ԱՄՆ, Վրաստան, Ռուսաստան, Լեհաստան, Ուկրայնա, վերջերս՝ Պէյրութ...): Խումբը թողարկել է 2 ալբոմ՝ «Mubla», «Hmm», ինչպէս նաեւ հայկական ժողովրդական երգերի սինգլներ:

Նեմրային իրենց աջակցութիւնն են յայտնել բազմաթիւ նշանաւոր երաժիշտներ Սերժ Թանկեանը (SOAD), Բրայըն Մէյը (The Queen) եւ Ջէյմս Ուոլշը (Starsailors) եւն.: 2022ին Սթարմուս փառատօնում Նեմրայի ելոյթից յետոյ առասպելական կիթառահար Բրայըն Մէյը խմբի անդամ Վանին նուիրեց իր վեցպենսանոց մեդիատորը[50]՝ որպէս յաջողութեան նշան: Թանկեանը նոյնպէս բարձր է գնահատել խմբի աշխատանքը՝ ֆէյսբուքեան իր էջում կիսուելով «She is Beautiful» եւ «Daisy» տեսահոլովակներով:

2018 տարին բեկումնային էր խմբի համար: «Դէպի եւրատեսիլ» ազգային նախընտրական մրցոյթում խումբը գրաւեց 2րդ հորիզոնականը եւ արժանացաւ հայ եւ արտասահմանեան լսարանի մեծ համակրանքին: Նոյն թուականին, մասնակցելով «Ծիծեռնակ 2018» Ազգային Երաժշտական մրցանակաբաշխութեանը, արժանացաւ «2017 թուականի լաւագոյն ռոք խումբ» մրցանակին: Մրցանակներից մէկն էր նաեւ Թբիլիսիում անցկացուող Caucasian Music Awardsի «Phoenix» մրցանակը՝ Վրաստանի հանրային ռադիոյի կողմից:

THE DEENJES

The Deenjesը սկիզբ է առել 2010ի ձմռանը, Երեւանում: Հիմնադիրներն են բեմադրիչ Միկա Վատինեանն ու սիրիացի օպերատոր Թամամ Համզան: Բեմադրիչն ու օպերատորը, փաստօրէն, կարող են գործակցել ոչ միայն ֆիլմի, այլեւ երաժշտական նախագծի շուրջ: «*Սկսեցինք, իրականում, շատ պատահական: Միասին ֆիլմ էինք նկարում, մոնտաժի պրոցեսն էր, երկար էր տեւում: Պարբերաբար այդ ընթացքում նուագում էինք, մի օր էլ որոշեցինք ձայնագրել: Ամէն ինչ հենց հայ բանաստեղծների գործերից սկսեց, երբ փորձեցինք դրանք երգերի վերածել ու տեսանք, որ ստացւում է... Հիմնականում Չարենցի, Տէրեանի բանաստեղծութիւններն են, դրանք մի տեսակ երգւում են, երաժշտական են: Ուրիշներ էլ ենք փորձել, բայց չի ստացւում:*

[50] Մեդիատորը (կսմիթ) կիթառի վրայ նուագելու յարմարանք է, այս դէպքում այն արժեցել է վեց պենս:

Երբեմն մեր տեքստերն էլ են լինում, բայց քանի որ այդ կոնցեպտը կայ, պահում ենք»՝ ասում է Միկան[51]:

THE CLOCKER

Խմբի տղաները Վանաձորից են: Խումբը 2014ին հաւաքուեց. նրանց հիմնական նպատակն էր ստեղծագործել հենց indie եւ britpop ժանրերում, սակայն 2015ին արդէն ներկայացան իրենց իսկ ոճով՝ հայ երաժշտասէրներին ներկայացնելով նորն ու թարմը: Նրանք աւելի քան 25 համերգեր են ունեցել ամբողջ Հայաստանում ու Թբիլիսիում ու հասցրել են գրաւել հայ ու վրացի երաժշտասէրներին:

2017ին ձայնագրել են «Գլխով՝ փափուկ ասֆալտին» ձայնասկաւառակը, որտեղ էլ տեղ են գտել արդէն շատերի կողմից սիրուած երգերը: Խմբի երգիչը՝ Ալբերտ Իսահակեանը, ունի իւրայատուկ ու տարբերուող ձայն, որը դժուար թէ շփոթես այլ ձայնի հետ, իսկ խումբը չի դադարում ամէն անգամ զարմացնել ու աւելի ամուր կապով կապել երկրպագուներին իրեն[52]:

«*The clocker անունը գալիս է այն մտքից, թէ ինչ է ժամանակը, ինչքանով են մարդիկ կախուած ժամանակից: Այդ մտքերի բախումից ծնուեց խմբի անունը: Խումբն underground է, բայց այնպէս չէ, որ չենք ուզում PRով զբաղուել: Մենք ուղղակի չգիտենք՝ ինչպէս է դա արւում եւ ռեսուրսներ չունենք: Հայաստանում երաժշտական ինդուստրիան մի քիչ այլ կերպ է զարգացած, այսպիսի խումբ չկայ, իրականում բարդ է այս ոճի մէջ առաջ գնալը*»՝ ասում է խմբի մենակատար Իսահակեանը[53]: Հիմնադիր եւ մենակատար Իսահակեանից բացի խմբի անդամներն են բաս կիթառահար Սեւադա Յովհաննիսեանը, կիթառահարներ Տիրայր Մխիթարեանը ու Էրիկ Խանոյեանը, թմբկահար Հրանտ Վարդումեանը: Խումբը շարունակում է ստեղծագործել, վերջին երգը ներկայացրել է 2024 Հոկտեմբերին:

EXCEPT A FEW

Հեւի-մեւտալ այս խումբը կազմաւորուել է 2001ին Երեւանի Սլաւոնական համալսարանի ուսանողների կողմից: Թողարկել է երեք ալբոմ՝ «Except a Few», «Above», «The World Goes Insane»: Խմբի չորրորդ, եւ առաջին հայալեզու ալբոմը՝ «Հայրենիք», թողարկուել է 2013ի ամռանը: Իր գործունէութեան շուրջ 12 տարուայ ընթացքում խմբի կազմը շատ է փոխուել: Խմբի

[51] Տես՝ https://mediamax.am/am/news/special-report/17373/ :
[52] Տես՝ https://journalist.am/archives/5900 :
[53] Տես՝ https://mediamax.am/am/news/special-report/17373/ :

հիմնումից մինչ այսօր անդամներն են կիթառահար Արտիոմ Յարութիւնեանը եւ թմբկահար Դաւիթ Օլիզարենկօն[54]: Ներկայիս խմբի անդամներն են.- Յարութիւնեանը (կիթառ), Օլիզարենկօն (հարուածային), Ռուբէն Առաքելեանը (կիթառ, ձայնային), Վահէ Սիմոնեանը (բաս):

LELOCITY

Indie-rock[55] խումբ է, որի արմատները 2000ականների սկզբներում են: Երգիչն ու կիթառահարն արդէն միասին էին, իսկ 2012ին ռոք-խումբ կազմաւորելու համար նրանք միաւորուեցին այլ երաժիշտների հետ:

Խումբը գրում է իր երաժշտութիւնը եւ պարբերաբար ելոյթներ է ունենում տեղական համերգասրահներում: Lelocityն հանդէս է եկել նաեւ որոշ փառատօններում ինչպէս Հայաստանում, այնպէս էլ արտերկրում: (Armenia in Rock, Tbilisi Open Air, One Caucasus եւն.):

Խումբը թողարկել է երկու ալբոմ՝ «Lelocity» (2016) եւ «Let Go» (2017), միքանի սինգլ եւ վեց տեսահոլովակ: Ունեցել է տարբեր կազմեր: Խմբի ներկայ անդամներն են.- Էրիկ Սէյրանեանը (կիթառ), Արեգ Սուքիասեանը (բաս կիթառ), Հայկ Գալստեանը (հարուածայիններ), Լեւօ Բալեանը (ձայնային):

MAD NATION

«*Առաջին անգամ փասը փարեկանում եմ կիթառը ձեռքս վերցրել, երբ մեր հարեւանը տեղափոխւում էր ու իր հին կիթառն ինձ թողեց: Ոչ մի նոտա չիմանալով՝ հիմա էլ դրանք չգիտեմ (ժպտում է), սկսեցի նուագել: Շուտով, երբ ծնողներս տեսան, որ օրերով հին կիթառ եմ նուագում, ինձ նորը նուիրեցին: Այդպէս էլ սկսուեցին առաջին համերգերն ու գիշերները փանից բացակայելը: Երեւի հիմա նրանք զղջում են իրենց նուէրի համար*»՝ պատմել է խմբի հիմնադիր եւ մենակատար Արման Մելքոնեանը[56]:

---

[54] Տես՝ https://www.spirit-of-metal.com/en/band/Except_A_Few :

[55] Տես՝ https://armrock.am/artist/lelocity-hy/ :

[56] Տես՝ https://arm.sputniknews.ru/20180313/eritasard-gorcarraner-erevan-biznes-10879939.html :

2017ի Յուլիսին նրան յաջողուեց Սեւանայ լճի ափին կազմակերպել ռոք փառատօն, որին մասնակցել են Հայաստանի տարբեր ռոք-խմբեր[57]:

2015ին խումբը ստեղծելիս Արմանը երազում էր սեփական «խենթ» խաղնութների ու բարերի շարքի ստեղծման մասին: Նա արդէն ունի սրճարան եւ չէր կարող ենթադրել, որ սեփական բարը ունենալու գաղափարն այսքան արագ կ'իրականանայ, այն էլ զուտ պատահականութեամբ[58]:

Թէեւ ընդհանուր առմամբ մտայղացումն իրականացաւ, սրճարանը սկսեց արդիւնաւէտ աշխատել միայն զբօսաշրջիկների շնորհիւ, որոնք կէսգիշերից յետոյ ցանկանում էին բարձր երաժշտութիւն լսել, իսկ սրճարանը, ի տարբերութիւն այլ երեւանեան հաստատութիւնների, ոչ-բնակելի շէնքում է, ու կարելի է աղմկել թէկուզ մինչեւ առաւօտ:

Mad Nationը յաջողութեամբ համադրեց երաժշտութիւնն ու բարը, որտեղ պարբերաբար ելոյթ են ունենում ռոք երաժիշտներ, խմբեր, ինչպէս նաեւ Meluses համշէնահայ ռոք խումբը 2024:

Իր կշռոյթներով խումբը համատեղում է 80ականների ռոք երաժշտութիւնը ծայրայեղ «ծանր» հնչիւնների հետ՝ ստեղծելով իւրայատուկ հնչողութիւն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ԱՄՆին եւ Եւրոպային զուգահեռ, չնայած երկաթեայ վարագոյրին, Խորհրդային Հայաստանում եւս ռոքն իր ծնունդն ունեցաւ: Եթէ ռոքի ըմբոստութիւնը արեւմուտքում բազմազգութեան դրսեւորումն էր, ապա Խորհրդային Հայաստանում ընդհակառակը՝ ազգային երաժշտութեան տարրերն էին դիտւում ըմբոստութիւն: Քանի որ դա հակադրւում էր Խորհրդային զանգուածային երաժշտութեանը եւ ազգային եզրոյթն առհասարակ չէր դիտւում որպէս առաւելութիւն: Ռոք խմբերը առաջանում էին ի հեճուկս քաղաքական թելադրանքի եւ սկզբնական շրջանում քննադատւում էին թէ՛ երգերի, թէ՛ հագուստների, թէ՛ առհասարակ գոյութեան համար: Երիտասարդները, ովքեր աւելի ընկալունակ են նոր միտումների՝ հեշտութեամբ կրկնօրինակում եւ զարգացնում էին նոր երաժշտութիւնը: Նրանք նուագում էին տանը, աւտոտնակներում, խնջոյքների ժամանակ: Եթէ յաջողւում էր որեւէ ուսանողական միջոցառման մասնակցել, արդէն իսկ յաջողութիւն էր: Կրկնօրինակումից սկսելով, շուտով իրենց երգացանկն էին ձեռք բերում եւ դա էլ արդէն ազգային մշակոյթի հիմքի վրայ, ինքնին ըմբոստութիւն էր: Սփիւռքահայերի բերած եւ դժուարութեամբ ձեռք բերուած ձայնասկաւառակների շնորհիւ նրանք կարողանում էին ռոքի բոլոր տե-

[57] Տես՝ https://armenpress.am/hy/article/900156 :

[58] Տես՝ https://arm.sputniknews.ru/20180313/eritasard-gorcarraner-erevan-biznes-10879939.html :

սակներին ծանօթանալ եւ այդպիսով բազմազան դարձնել նաեւ իրենց երգացանկը:

Հայոց ռոքը մինչ օրս չի լռում եւ յատկապէս աշխուժ քաղաքական իրադարձութիւններին արձագանգում է իր ձեւով: Երբ սկսուեց Արցախեան շարժումը, ռոքըրներն անմասն չմնացին պատահածից: Այսպէս, ատենի հայկական հարդ ռոքի առաջատարներից «Ոստան հայոց» խումբը 1991ին ձայնագրեց «Զարթի՛ր, որդեակ» ալբոմը, որի երգերից մէկը՝ «Արցախ, լսի՛ր»ը, դարձաւ խմբի ամենասիրելի ստեղծագործութիւններից մէկը: 2008ի Մարտի 1ի ողբերգական դէպքերից յետոյ, երբ ողջ հանրութիւնը՝ ցնցուած էր եւ տարակուսած, համացանցում սկսեցին յայտնուել երգեր, որոնք փորձում էին հասկանալ տեղի ունեցածը եւ կոչ անում չյուսահատուել: 2016ին, Սասնայ Ծռերի հետ կապուած դէպքերից յետոյ, «Որդան կարմիր» խումբը գրեց «Քայլ արա» երգը, որում տողեր կային նաեւ «Հաց բերողի»[59] մասին: Իսկ 2018ի թաւշեայ յեղափոխութեան օրերին այդ երգը վերաիմաստաւորուեց, քանի որ «քայլ արա» արտայայտութիւնը այդ յեղափոխութեան կարգախօսն էր: Իսկ նոյն օրերին Դինջիզ խմբի «Ողջոյն»ը՝ Չարենցի «Ամբոխները խելագարուած»ի իւրայատուկ արդիականացումն էր:

Այսօր արդէն աւագ սերունդ դարձած խորհրդային երիտասարդները շարունակում են սիրել իրենց ճանաչած ռոքը: Ներկայիս երիտասարդ սերունդը շատ հետաքրքիր կերպով շարունակում է ռոքի ընդունուած աւանդոյթները եւ նոյնիսկ յաջողել է ձեւաւորել ֆոլկ-ռոքը՝ հիմնուելով աւելի մաքուր էթնիկ երաժշտութեան եւ ռոքի համադրութեան վրայ: Այդ մասին կը խօսուի յօդուածաշարի յաջորդ՝ երրորդ մասում:

---

[59] Սասնայ ծռերը զինուած խմբաւորում էր, որի նպատակը քաղաքական յեղաշրջումն էր, ինչ համար նրանք 2016 Յուլիսի 17ին բեռնատար մեքենայով կոտրելով Երեւանի Էրեբունի թաղամասում գտնուող ՀՀ ոստիկանութեան պարեկապահակային ծառայութեան (ՊՊԾ) գնդի զօրամասի դարպասները, ներս են մտել եւ գրաւել այն: Քաղաքացի Արթուր Սարգսեանը սեփական մեքենայով ճեղքելով շրջափակումը սնունդ հասցրեց պատանդներին՝ ինքն էլ պատանդ մնալով ՊՊԾ գնդում: Նա մահացաւ այդ դէպքերից յետոյ, եւ ի պատիւ նրա ամէն տարի ոչ պաշտօնապես նշւում է Հաց բերողի կամ Հացբերաց տօնը՝ հաց եւ սնունդ բաժանելով անցորդներին:

ARMENIAN ROCK MUSIC
PART B- ROCK MUSIC IN ARMENIA
(SUMMARY)

MANE KHARATIAN (art.phil.maneh@gmail.com)

This is the second part of the series "Pages of Armenian Rock Music History", dedicated to the localization of rock music in Soviet Armenia and its manifestations in modern Armenia. Some rock bands started their activities from the very beginning, imitating the Beatles and other bands whose records they managed to purchase. Soon after, new bands emerged creating their own playlists, based on songs both in the style of western rock and in a strictly individual style.

The author notes that the rich Armenian national heritage provided an opportunity and a basis for the manifestation of new music. The path of these groups was quite rocky. They were criticized by political forces, but the attention and demand from the public helped them to cope, survive and prove themselves. Some of these groups are still active today, although their members have changed. Other bands were created based on older generation bands, while many new bands continued rock traditions, enriching it in their own way. The process of musical adaptation took place in the same way as the adaptation of people of other nationalities. It is a natural process, with stages of enthusiasm, overcoming difficulties and final adaptation.

The third and the last part of the series will be devoted to folk-rock as a bearer of national identity.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ Գ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2024)

ՍԵԴԱ ԳԱԼՍՏԵԱՆ (sedagalstyan@yahoo.com)

Նախկին արական *գիմնազիայի* շէնքին միացուած նոր կամարաշար-յարկաբաժինը՝ Հայաստանի պատմութեան թանգարանի գլխաւոր մուտքը 1954ին

2024ին Հայաստանի պատմութեան մայր թանգարանը (ՀՊԹ) բոլորեց իր գոյութեան 105 տարին: Դեռեւս 1919 Սեպտեմբերի 9ին ՀՀ խորհրդարանը միաձայն օրինագիծ է ընդունել «*Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքում Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան հիմնելու մասին*»[1]: Գործի անմիջական նախաձեռնողներն էին վարչապետ Ալեքսանդր Խատիսեանը, հանրային կրթութեան եւ արուեստի նախարար Նիկոլ Աղբալեանը: Նոյն նիստում քննութեան է առնւում նաեւ թանգարանի վարկաւորման հարցը եւ վճռւում է «*թանգարանը պահպանելու համար 30 հազար ռուբլի վարկ բանալ*»: Ապա լուծւում է թանգարանի վարչութեան կազմի հարցը, վարիչ է նշանակւում Երուանդ Լալայեանը (1864-1931): Նորաստեղծ թանգարանի համար կառավարութիւնը հիմք է դիտել Թիֆլիսի Հայոց ազգագրական թանգարանը, եւ պատահական չէր Լալայեանին վարիչ նշանակելը: Թանգարանի հիմնադրման եւ առաջին ժողովածուների հաւաքման գործում անուրանալի է գիտութեան եւ մշակոյթի անուանի գործիչներ Լալայեանի, Երուանդ Շահազիզի, Գարեգին եպս. Յովսէփեանցի

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 66, թ. 19:

(յետագայում Կիլիկիոյ հայոց կաթողիկոս), Ստեփան Լիսիցեանի, Ռուբէն Դրամբեանի, Վրթանէս Ախիկեանի եւ ուրիշների աւանդը: Հայաստան տեղափոխուեցին թանգարանային արժէքներ Վրաստանից, Մոսկուայից, Նոր Նախիջեւանից, Անիից, Ղրիմից, Օդեսայից, Աստրախանից, Բաթումից եւ հայաբնակ այլ վայրերից:

Թանգարանն ի սկզբանէ ունէր չորս բաժին եւ մէկ տասնեակից պակաս աշխատողներ: Թանգարանի պաշտօնական ճանաչումը տեղի ունեցաւ 1922 Նոյեմբերի 7ին, երբ բացուեց առաջին ցուցադրութիւնը՝ նուիրուած Հոկտեմբերի 5րդ տարեդարձին: Նոյն օրն էլ թանգարանը ստացաւ «Հայաստանի պետական կենտրոնական թանգարան» անուանումը: 1931ից այն վերանուանուեց «Հայաստանի կուլտուր-պատմական թանգարան», իսկ 1935ից՝ «Հայաստանի պատմութեան պետական թանգարան» 1940-64՝ «Հայաստանի պատմութեան պետական թանգարան», ՀՍՍՀ ԳԱ համակարգում, 1965-2003՝ «Հայաստանի պատմութեան պետական թանգարան» ՀՀ Մշակոյթի նախարարութեան ենթակայութիւնում, 2003ին՝ «Հայաստանի պատմութեան թանգարան» պետական ոչ-առեւտրային կազմակերպութիւն (ՊՈԱԿ):

Թանգարանի շէնքը նախկին Արական գիմնազիայի շէնքն է: Այն խորհրդային տարիներին վերածուել է «կուլտուրայի տան», որի մի հատուածում հիմնուել է ՀՊԹն եւ դրա հիմնական հատուածներից մէկում էլ գործում է մինչեւ այժմ: Շէնքի ճարտարապետը՝ Էդուարդ Սարապեանն է, որն այդ տարիներին հրապարակի որոշ կառոյցների նախագծային աշխատանքները համահեղինակել է ճարտարապետ Մարկ Գրիգորեանի հետ:

Թանգարանն ունի մասնաճիւղեր Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում եւ Սիսիանում (երկրագիտական թանգարանը):

ՀՊԹում պահպանւում է շուրջ 400,000 առարկայից բաղկացած ազգային հաւաքածու: Թանգարանի հաւաքածուները համալրւում են հիմնականում արշաւախմբերի տարբեր հնավայրերից յայտնաբերած գտածոներով, գնումներով, նուիրատուութիւններով: ՀՊԹն ներկայացնում է Հայաստանի մշակոյթի եւ պատմութեան ամբողջական պատկերը նախապատմական ժամանակներից՝ մէկ միլիոն տարի առաջ, մինչեւ մեր օրերը: Ցուցադրում է Հայկական Լեռնաշխարհում Հին Արեւելքի երկրների (Եգիպտոս, Միտանի, Խեթական թագաւորութիւն, Ասորեստան, Իրան, Սելեւկեան պետութիւն, Հռոմ, Բիւզանդիա) մշակութային փոխառնչութիւնների հազուագիւտ հետքերը:

Թանգարանում են պահւում.-

- Ք.ա. 3-2րդ հազարամեակների բրոնզէ նմուշների մեծաքանակ եւ բացառիկ հաւաքածու, որ մտնում է համաշխարհային գլուխգործոցների գանձարանը,

- Հին Արեւելքի հայկական հզօր պետութեան՝ Ուրարտուի պատմամշակութային շքեղ ժառանգութեան բացառիկ սեպագիր արձանագրութիւններ, բրոնզէ արձանիկներ, որմնանկարներ, գունազարդ խեցեղէն, քանդակազարդ սպառազէն, ոսկեայ, արծաթեայ, ոսկրէ եզակի նմուշներ՝ պեղուած Կարմիր Բլուրից, Արին Բերդից, Արգիշտիխինիլիից,

- Ուրարտուի Արգիշտի Ա. արքայի՝ Երեւան քաղաքի հիմնադրման մասին թողած սեպագիր արձանագրութիւն՝ Ք.ա. 782ին,

- Փոխադրամիջոցների պատմութեան հնագոյն վկայութիւնների՝ Լճաշէնից պեղուած փայտեայ կառքեր եւ նրանց բրոնզէ մանրակերտեր՝ Ք.ա. 15-14րդ դդ.,

- Հայկական դրամների հարուստ հաւաքածու՝ բաղկացած Ծոփքի, Արտաշէսեան, Կիւրիկեան եւ Կիլիկիայի հայկական թագաւորութիւնների, ինչպէս նաեւ տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանում գործող դրամահատարանների (Դուին, Անի, Երեւան եւն.) օտար թողարկումներից,

- Հայաստանում հելլենիստական մշակոյթի ինքնատիպ փոխակերպման բարձրարժէք նմուշներ՝ քանդակ, ճարտարապետական մանրամասներ, ոսկերչական իրեր, խեցեղէն՝ պեղուած Գառնի, Արտաշատ, Օշական հնավայրերից, հոգեւոր հարուստ ժառանգութիւն,

- Նոր եւ նորագոյն շրջանին վերաբերող բացառիկ փաստաթղթեր բնօրինակ նկարներ եւն.:

Թանգարանային նիւթերը դառնում են յաճախ ուսումնասիրութեան թեմաներ, գրւում են յօդուածներ, հրատարակւում Թանգարանի աշխատութիւնների ժողովածուում, կամ այլ հրատարակութիւններում: 1948ից ՀՊԹն հրատարակել է՝ հայկական ճարտարապետութեանը, հնագիտութեանը, ազգագրութեանը, հայոց պատմութեանը նուիրուած աշխատութիւններ, մատենաշարեր, հնագիտական պեղումների զեկոյցներ:

Թանգարանը մասնակցել է միջազգային ցուցահանդէսների՝ Բուդապեշտ (1968), Փարիզ (1970), Լենինգրադ (1974, 1985), Սպոկան (1975), Լոս Անջելըս (1977), Տարտու (1979), Կիեւ (1980), Եուկուբա (1984), Վենետիկ (1987), Նիւ Եորք (2008-9), Թեսաղոնիկէ (2009), Պրինստոն (2010), Վենետիկ (2011): Ունեցել է ցուցահանդեսներ՝ Բոխում (1995), Նանտ (1996), Փարիզ (1996), Լիոն (1997), Գահիրէ (1997), Բոնն, Հալլէ Վիտտենբերգ (1998), Աթենք (1998), Վատիկան (1999), Փարիզ (2001), Լոնդոն (2001), Էյդէն (2002), Բուդապեշտ (2002), Վանդիա (2006), Սէն Ռաֆայէլ (2007), Ռուան (2007), Փարիզ (2007), Լիոն (2007), Առլ (2007), Մարսէյ (2007), Կլունի (2007), Նիւ Եորք (2008, 2014-15), Սանկտ-Պետերբուրգ (2009), Լիւբլիանա (2010), Հռոմ (2011, 2015):

2022 Սեպտեմբերին «Արարատի հմայքի ներքոյ. Հին Հայաստանի գանձերը» ցուցահանդէսը Նիդերլանդներում ճանաչուել է տարուայ լաւագոյն ցուցահանդէսը:

Մայր թանգարանին Սփիւռքից կատարուած են մեծարժէք նուիրաբերումներ. ազգային արժէքների այդ նիւթերն ընդունելիս կազմւում են համապատասխան ակտեր, նուիրատուներին յանձնւում են շնորհակալագրեր:

Թանգարանի 105ամեակի առիթով փորձենք յատկապէս մանրամասնել վերջին շրջանում՝ Հայաստանի երրորդ Հանրապետութեան տարիներին թանգարանի նոր եւ նորագոյն շրջանի ձեռքբերումները:

ԽՍՀՄում տեղի ունեցած քաղաքական զարգացումների արդիւնքում՝ 1980ականների վերջ-1990ականների սկզբին կազմալուծուեց երկիրը, եւ «*Հայաստանը, ի թիւս նախկին խորհրդային միւս հանրապետութիւնների անկախացաւ: 1990 Օգոստոսի 23ին Հայաստանը հռչակուեց անկախ պետութիւն եւ սկսուեց անկախութեան գործընթացը, որի իրաւական ձեւակերպումը տրուեց 1991թ. Սեպտեմբերի 21ի համաժողովրդական հանրաքուէի արդիւնքներով*»[2]: 1988ին յաջորդած վերակառուցումից թանգարանն անմասն չմնաց: Խնդիրն այն է, որ դեռեւս 1960ին ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումեանը միջնորդել էր հանրապետութեան կառավարութեան՝ ՀՊԹն յեղափոխութեան պատմութեան թանգարանին միացնելու խնդրանքով, պատճառաբանելով, որ այդ կերպ կը խուսափեն խորհրդային հասարակութեան պատմութեան ցուցադրման կրկնութիւնից: Ինչպէս եւ սպասւում էր՝ կառավարութիւնը մերժեց այն: Մեր օրերում, երբ վերանայւում, վերագնահատւում են շատ արժէքներ ու երեւոյթներ, վերանայուեց նաեւ դեռեւս 1960ին փակուած այս հարցը եւ նպատակայարմար գտնուեց յեղափոխութեան թանգարանը միաւորել մայր թանգարանի հետ, որը կայացաւ 1991 Մարտին[3]: Նախկին յեղափոխութեան թանգարանը համալրեց եւ դարձաւ Հայաստանի պատմութեան պետական թանգարանի նորագոյն պատմութեան բաժինը, յետագայում միացուեց նաեւ նոր պատմութեան բաժինը[4]:

ՀՊԹի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի ֆոնդերը ՀՀ անկախութեան 33 տարիներին հարստացել են թանգարանային արժէք ներկայացնող շատ հաւաքածուներով, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների արխիւներով, Բ. համաշխարհայինի, խորհրդային շրջանի, Արցախեան Ա. եւ Բ. պատերազմների զինուորների, հրամանատարների, հերոսների, մասին պատմող նիւթերով, նկարագրքերով, տեսաժապաւէններով:

---

[2] Էդիկ Մինասեան, *Հայաստանի երրորդ հանրապետութեան պատմութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2013, էջ 8:

[3] Հրամանագիրք Հայաստանի պատմութեան պետական թանգարանի, հրաման 12, Մարտ 1991, էջ 37:

[4] ՀՊԹ հրամանագիրք, հրաման թիւ 47, ֆ1, ց.3,գ.210, Սեպտեմբեր 2002:

Այս յօդուածի մէջ նախընտրում ենք խօսել այն հաւաքածուների, ձեռքբերումների մասին, որոնք փոփոխութիւններ մտցրեցին թանգարանի մշտական ցուցադրութեան եւ գործունէութեան մէջ: Ձեռք բերուած այդ արժէքաւոր նիւթերի շնորհիւ, նաեւ յետագայում կատարուող հաւաքչական աշխատանքի շնորհիւ կարող ենք յաւուր պատշաճի ներկայացնել հայոց պատմութեան համապատասխան ժամանակահատուածները ականատեսների վկայութեամբ, բնօրինակ նիւթերով, քարտէզներով եւն.:

Հայաստանի 3րդ Հանրապետութեան շրջանի կարեւորագոյն փաստաթղթերից էր Անկախութեան Հռչակագրի[5] բնօրինակի ձեռքբերումը: Հայաստանի Անկախութեան հռչակագիրը աննախադէպ փաստաթուղթ էր իրաւական, քաղաքական առումով: Այն ազդարարեց Հայաստանի անկախութեան գործընթացի սկիզբը: Ազգային ժողովի արխիւից ձեռք բերուեց Անկախութեան հռչակագիրը եւ այն գրիչը, որով ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը ստորագրել էր այն: Ապա հռչակագիրն ընթերցած Արամ Մանուկեանի կողմից ֆոնդը հարստացուեց այդ օրերին արուած լուսանկարներով՝ գերագոյն խորհրդի (ԳԽ) շէնքում եռագոյն դրօշի բարձրացումը, թատերական հրապարակում հանրահաւաքները եւն.: Հաւաքչական աշխատանքի շնորհիւ ձեռք բերուեց նաեւ արցախեան շարժման, ԼՂՀ ԳԽի նախագահ Արթուր Մկրտչեանի անձնական արխիւը: Լուսանկարներ՝ Գետաշէնի, Շահումեանի շրջանի գաղթականները Ստեփանակերտում, նստացոյցեր, Քելբաջարի, Մարտակերտի քարտէզները (բնօրինակ): Շուշիի ազատագրման գաղտնի քարտէզները, սումգայիթեան իրադարձութիւններին (1988 Փետրուարի 27-29) նուիրուած նիւթերը, արցախեան առաջին պատերազմի վերաբերեալ նիւթեր, որը թանգարանին նուիրեց աւագ-զօրավար Արկադի Տէր Թադեւոսեանը: Նա 2020ի վերջին նուիրեց նաեւ իր սուրը, ինչը հարստացրեց թանգարանի զէնքի ֆոնդը: Կարեւորում ենք նաեւ դիւանագիտական պատմութեանը նուիրուած լուսանկարները՝ առաջին դեսպանատների՝ ԱՄՆ, Իրան բացումը Երեւանում եւն.: Այդ ժամանակահատուածը լրացուեց նաեւ Սպիտակի աւերիչ երկրաշարժին նուիրուած նիւթերով՝ լուսանկարներ, իրեր, աշխարհի տարբեր կողմերից օգնութեան հասած երկրների, կազմակերպութիւնների կրծքանշաններ, կազմակերպութեան դրօշներ, բժշկական սարքաւորումներ, նամակներ եւն.:

Քանի որ խորհրդային շրջանում հասկանալի պատճառներով չէր ներկայացուել Հայաստանի Ա. Հանրապետութեան շրջանը, կարեւոր էր համապատասխան նիւթերի ձեռքբերումը 1918-20՝ անկախ Հայաստանի վերաբերեալ: 1996ին թանգարանի դրամագիտութեան բաժնի վարիչ Հենրիկ Սարգսեանի ջանքերով թանգարանը Հայաստանի առաջին

[5] ՀՊԹ, նգպֆ, նո 42/1:

Հանրապետութեան առաջին վարչապետ Յովհաննէս Քաջազնունու դստեր՝ Մարգօ Քաջազնունու եւ թոռնուհու՝ Լիլիա Քաջազնունու միջոցով ձեռք բերեց վարչապետի թանգարանային արժէք ներկայացնող արխիւը[6]: Այն հարուստ նիւթ է պարունակում Հայաստանի Ա. Հանրապետութեան քաղաքական պատմութեան, տնտեսութեան, կարեւոր դէմքերի՝ յանձին առաջին վարչապետի, իրադարձութիւնների մասին: Այստեղ տեղ են գտել Յովհաննէս Քաջազնունու կենսագրականը (մօտ 42 էջ՝ հայերէն, ռուսերէն լեզուներով), նամակները կնոջը՝ Սաթենիկ Միրիմանեանին (անձնական բնոյթի), ընտանեկան տարբեր լուսանկարներ, Քաջազնունին քաղաքացիական երկրաչափների ինստիտուտի ուսանող, աւագ որդին՝ Արամը, ով զոհուեց Զանգիբասարի կռիւներին, Աշոտ Քաջազնունին՝ Ղարաքիլիսայի ճակատամարտում, Քաջազնունու որդիները՝ պապի հետ, Քաջազնունին Վանում՝ 1913-14ին, ԱՄՆում՝ 1919ին, Աղեքսանդրիայում՝ 1921ին, բժիշկ Սաղեանի հետ, ընտանիքի անդամներին վերաբերող փաստաթղթեր եւ խմբանկարներ, քաղուածք՝ Ախալքալաքի հայկական Սբ. Խաչ եկեղեցու ծննդեան գրքից Ռուբէն Քաջազնունու ծննդեան վերաբերեալ, տարբեր իրադարձութիւնների վերաբերեալ յուշեր: Լինելով քաղաքացիական երկրաչափ, պահպանուել է Քաջազնունու ձեռքով իսկ պատրաստուած աշխատասեղանը, ինչն օտագագործել է վարչապետութեան տարիներին, պահպանուել են տարբեր բնակելի եւ վարչական շէնքերի նախագծեր՝ Բաքւում, Լենինականում, Ապարանում եւ այլուր: Փաստաթղթեր կնոջ՝ Սաթենիկ Քաջազնունու դիմումը ՀՍՍՀ գլխաւոր դատաւոր Մեղաւորեանին իր ամուսնու գործը վերանայելու մասին, դուստր Մարգօ Քաջազնունու դիմումը ՍՍՀՄ գլխաւոր դատախազ Ռուդենկոյին՝ իր հօր անունը վերականգնելու վերաբերեալ, նոյնի դիմումը՝ բնակարանի սեփականութեան իրաւունքի հարցով, Քաջազնունու յուշերը Յովհաննէս Թումանեանի մասին, մէջբերումներ նամակներից, վկայական, որ Քաջազնունին ՀՅԴ նո. 4 ցուցակով համարւում է Անդրկովկասեան Սահմանադիր ժողովի անդամ, 1917ին, փաստաթղթեր Բաքուի Սբ. Թադեւոս, Բարթուղիմէոս առաքեալների հայկական մայր եկեղեցու շինարարութեան՝ Քաջազնունու մրցութային նախագծի վերաբերեալ, վկայականներ՝ Հայբամբակ շին բաժնի վարիչ աշխատելու մասին, 1920ի ծոցատետրը՝ նշումներով բնակչութեան թուի եւ գիւղատնտեսական ապրանքների վերաբերեալ, Քաջազնունու բրոշիւրը «Ռուսաստան թէ Թուրքիա», անձնական իրերից՝ կաշուէ դրամապանակները, ակնոցի պատեանը, փայտէ ծխամորճը, սրճեփը, սկուտեղը, թանաքամանի սարքը, գրիչները, մատիտները, Պետական համալսարանից տրուած տեղեկանքը նրան պրոֆեսորի կոչում շնորհելու մասին, ամուսնութեան վկայականը, տան բազկաթոռներ,

[6] ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/1-191:

գրապահարանները, սեղանիկը ճկուած ոտքերով, տարբեր ձայնասկաւառակներով, գծագրական գործիքները, թուղթ կտրելու փղոսկրէ դանակը, վարչապետի աշխատասենեակի առաջին եռագոյն դրօշի ծոպերը եւ դրօշի փայտի վերեւի մետաղէ ծայրը...: Ընդհանուր առմամբ մօտ 1029 միաւոր նիւթ: Կարծում ենք այս ամէնը հարուստ եւ կարեւոր հիմք է Ա. Հանրապետութեան համապատասխան սրահների ցուցադրութեան, եւ հանրութեանը ծանօթացնելու այդ շրջանի կարեւոր անցքերին ու իրադարձութիւններին:

Հետաքրքիր հանդիպում եղաւ 1995ին, Ա. Հանրապետութեան Երեւանի նահանգի նահանգապետ, հայոց խորհրդարանի անդամ, զինուորական յանձնակատար, ՀՀ խնամատարութեան, ապա պարէնաւորման նախարար, մայիսեան ապստամբութեան օրերին ներքին գործերի նախարար Սահակ Թորոսեանի որդու՝ Արգիստ Թորոսեանի հետ, ով թանգարանին նուիրեց հօր անձնական արխիւը[7]՝ իրեր, փաստաթղթեր, լուսանկարներ, ցուցակներ, յուշեր, ինչպէս նաեւ Թորոսեանի կողմից 1920ին կազմուած «Հայոց պատմութիւն» դասագիրքը: Ամբողջական արխիւը նպաստեց, ոչ միայն թանգարանի ցուցադրութեան համապատասխան սրահի ներկայացմանը, այլեւ այդ հիմքի վրայ հրատարակուեց նշանաւոր գործչի կեանքի եւ գործունէութեան մասին հատոր[8], որը նորովի մեկնաբանեց Ա. Հանրապետութեան որոշ իրադարձութիւններ:

ՀՊԹն առաջին անգամ՝ 1996ին ձեռք բերեց հայ պետական, ռազմական գործիչ Գարեգին Նժդեհի արխիւը իր եղբօր՝ Լեւոնի թոռ՝ Վազգէն Տէր Յարութիւնեանի միջոցով, Նժդեհի՝ Վլադիմիրի բանտում թողած վերջին մասունքները[9]: Այսօրուայ պէս յիշում եմ Նժդեհի զարմիկի՝ Վազգէնի խօսքերը, երբ այս մասունքները բերում էինք թանգարան: Նա ասաց. «*Մեր տանը ընդունուած չէր Նժդեհի մասին բարձրաձայն խօսելը, որովհետեւ մեր հարազատները շատ զրկանքներ են կրել, պապիս ընտանիքը աքսորուել է Սիբիր՝ Կրասնոյարսկի երկրամաս...*»[10]: Այս մեծանուն հայորդու անուան հետ կապուած են հերոսական եւ ողբերգական էջեր, միահիւսուած իրար հետ, որի արդար գնահատականը դեռ կը տայ պատմութիւնը իր արժանի տեղը յատկացնելով համամարդկային մեծերի շարքում: ՀՊԹում պահուող Նժդեհի

[7] ՀՊԹ, նգպֆ նո. 17536/1-22:

[8] Ս. Գալստեան, *Սահակ Թորոսեան՝ Հայաստանի առաջին հանրապետութեան Երեւանի նահանգապետը*, Նահապետ հրատ., Երեւան, 2007:

[9] Վազգէն Տէր Յարութիւնեանը այդ հաւաքածուն ի պահ է տուել ՀՊԹին:

[10] Գ. Նժդեհի եղբօր՝ Լեւոնի թոռ՝ Վազգէն Տէր Յարութիւնեան, հասցէ՝ Թումանեան 16:

հաւաքածուն[11] իր մէջ որոշ չափով պարունակում է հենց այս էջերի լուսաբանումը: Այս հաւաքածուի մէջ տեղ են գտել մեծ զօրավարի անձնական իրերը, որը կրել է Վլադիմիրի բանտում՝ կոստիումը, վերարկուն, անձրեւանոցը, Բուլղարիայում՝ բալկանեան պատերազմում ստացած կրծքանշանները, այստեղ են սասունցիների նուէրը՝ մետաքսէ թէլերով գործած ելակը, ձիու թամբի ծածկոցը՝ ասեղնագործուած գունաւոր մետաքս թէլերով, գրպանի ժամացոյցը, նամակներ՝ հարազատներին, եղբօրը՝ իր գրական ժառանգութիւնը փրկելու կապակցութեամբ, եղբօր աղջիկներին՝ Ամալիային, Օլիային եւն., ՀՀ գլխաւոր դատախազի 1992ի որոշումը՝ Գ. Նժդեհի անուան վերականգնման մասին: Կարեւոր մի փաստաթուղթ՝ մահուան վկայականը 1955 Դեկտեմբերի 21, ինչն օգնեց



Սասունցիների նուէրը Գարեգին Նժդեհին՝ մետաքսէ թէլերով գործած ելակը

ուղղումներ անել մի շարք հրատարակութիւններում՝ ընդհուպ *Հայկական Հարց* հանրագիտարանում՝ զօրավարի մահուան փաստի կապակցութեամբ, մինչ այդ շատ տեղերում արձանագրուած էր «01 Յունուար 1956թ.»: Հաւաքածուի մէջ է պարգեւաթերթ-փաստաթուղթը՝ կապիտան Նժդեհին գնդապետի կոչում տալու մասին (14 Փետրուար 1920), ստորագրուած աւագ զօրավար Ղազարովի կողմից: Բազմաթիւ նամակներ, որոնց բովանդակութիւնը լոյս է սփռում հերոսի կեանքի վերջին շրջանի իրադարձութիւնների վրայ: Կարեւորում ենք յատկապէս մի ձեռագիր, որը վերնագրուած է «Հրանդիս ալբոմում», այն Նժդեհն իր եղբօրը՝ Լեւոնին յանձնել է Տաշքենդում տեսակցութեան ժամանակ: «Ձեռագրի մասին իմացել են միայն հօր եւ պապի մահից յետոյ, այն հայրենանուէր կոչ է ողջ ժողովրդին, յատկապէս երիտասարդութեանը:

[11] Ս. Գալստեան, «ՀՊԹում պահուող Գ. Նժդեհի հաւաքածուն», *Աշխատութիւններ Հայաստանի պատմութեան թանգարանի,* 2(10):2022, Երեւան, էջ 168:

Ճամպրուկը մասունքներով միշտ թաքցրել են երեխաներից՝ Գ. Նժդեհի անձնական իրերը, նամակներ, լուսանկարներ, նաեւ դաշնակցական այլ գործիչներին վերաբերող նիւթերը»: 2009 Սեպտեմբերին ՀՊԹն ՀՀ կառավարութիւնից ստացել է մէկ այլ փաթէթ՝ Բուլղարիայում ՀՀ դեսպանատան հիւպատոս՝ Արթուր Մադոյեանից. այն իր մէջ ամփոփում է 16 միաւոր նիւթ[12], որոնց մէջ 73՝ փաստաթղթեր, լուսանկարներ: Այդ փաստաթղթերը հիմնականում ներառում են Նժդեհի կենսագրականի ոչ-շատ յայտնի էջերը, լոյս սփռում հերոսի կեանքի որոշ դրուագների վրայ: Յատկապէս կարեւորում ենք Բուլղարիայի ճանաչուած բանաստեղծների, գրողների, հասարակական եւ քաղաքական գործիչների ու Նժդեհի միջեւ նամակագրական կապը, Նժդեհի նամակները, գրութիւնները, յիշողութիւններ, լուսանկարներ, *Ռազմիկ* ցեղակրօն թերթի համարները: Այս ամէնը 2001ին Սոֆիայի համալսարանի բանասիրական գիտութիւնների դոկտոր Վիդկա Նիկոլովան, ով 1993ին հեղինակել է *Ոգու բանաստեղծը, սրի ասպետը*[13] գիրքը, յանձնել է Սոֆիայում ՀՀ դեսպանատան հիւպատոս Մադոյեանին: Գրքի առաջին օրինակի վրայ Նիկոլովան գրել է «Աստուած պահէ լաւ մարդոց»: Թանգարանային արժէք ներկայացնող այս հաւաքածուն նոյնպէս օգնեց լուսաբանելու զօրավարի կեանքի անծանօթ էջերը, հայ-բուլղար ժողովրդների բարեկամական կապի, սփիւռքահայ եղբայրների գործունէութեան կարեւոր դրուագներ:

ՀՊԹն 1999 Սեպտեմբերին - նիւեորքաբնակ Ս. Պալեանի եւ Սամուէլ Սողոյեանի ջանքերով - նուէր ստացաւ զօրավար Անդրանիկի մինչ այդ չհրապարակուած լուսանկարների ալբոմ՝ Ձայնիկ Գարաճեանից (նկարագիրքը պատկանել է Անդրանիկի համարզ՝ Ալ. Թոփուզեանին եւ անցել Գարաճեանին): Հայ օգնութեան ֆոնդի (ՀՕՖ)ի նախաձեռնութեամբ Անդրանիկ Օզանեանին եւ այլ յայտնի գործիչների վերաբերող նկարագրքի 33 բնօրինակ լուսանկարներով եւ 62 առանձին լուսանկարներ զօրավար Անդրանիկի տարբեր տարիների գործունէութեան եւ ամուսնութեան վերաբերեալ հանգրուանեց թանգարանում: Յովհաննէս եւ Մադլէն Գույումջեանների միջոցով Անդրանիկի արխիւը հարստացաւ զօրավարի ձեռագիրը՝ «Իրական յուշեր, 1907» լուսանկարներ, որտեղ բուլղարահայերն են, ովքեր հայրենադարձների առաջին կարաւանով գալիս են Հայաստան, խմբանկարներ՝ Անդրանիկ Օզանեանը Ֆրեզնոյում կնոջ, բարեկամների, ընկերների հետ (1925) եւ այլ նիւթերով:

ՀՊԹի վերջին 30 տարուայ ձեռքբերումների մէջ շատ արժէքաւոր արխիւների կողքին կարեւորում ենք 2005ին ՀԿԿ կենտկոմի առաջին

---

[12] ՀՊԹ, նգպֆ, բ/մ 9040/1-16:

[13] Видка Николова, *Поет Духа, рыцарь меча* (Ոգու բանաստեղծը, սրի ասպետը), Սոֆիա, 1993:

քարտուղար (1966-1974) «Անտոն Քոչինեանի անձնական արխիւի»[14] ձեռք բերումը եւ ուսումնասիրութիւնը[15]: Քարտուղարի մահուանից յետոյ արխիւի ուսումնասիրութիւնը տուեց շատ հարցերի պատասխաններ. Լեռնային Ղարաբաղի, Նախիջեւանի, «Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ կառուցուեց ատոմակայանը», 1949ի բռնաքսոր, 1965ի Ազգային զարթօնք, մտաւորականութեան նամակները ԽՄԿԿ բարձրաստիճան ղեկավարներին եւ այլ փաստաթղթեր կարմիր թէլով հասնում են մինչեւ մեր օրերը: Նրանց ուսումնասիրութիւնը սահմանազատում եւ սահմանագծում է այլ հետաքրքիր մանրամասներ:

Ա. Հանրապետութեան շրջանի նիւթերը եկաւ համալրելու Հանրապետութեան 3րդ վարչապետ, բժիշկ Համօ Օհանջանեանի թոռնուհու՝ Լիզա Մեհրաբեանի նուիրատուութիւնը թանգարանին՝ իր պապի գործունէութեան, թողած մասունքների եւն.ի մասին: Այստեղ տեղ են գտել նաեւ նրա բժշկական սարքաւորումներից որոշ առարկաներ, լուսանկարներ, ալբոմներ:

Կարեւոր ձեռքբերումներից են հայ ազգային երեք կուսակցութիւնների մասին պատմող նիւթերը կուսակցական գրասենեակներից՝ ՌԱԿի զինանշանը, ՍԴՀԿի զինանշանը, դրօշը, ՀՅԴի անդամատետրը, կրծքանշանը, ծրագրեր, կանոնադրութիւն եւն.:

ՀՊԹի Սփիւռքի բաժինը հարստացաւ սիրիական բանակի հրետանային զօրքերի հրամանատար, պատուոյ լեգէոն շքանշանի ասպետ զօրավար Արամ Գարամանուկեանի[16] կեանքին եւ գործունէութեանը վերաբերող թանգարանային արժէք ներկայացնող նիւթերով, այն թանգարանին է նուիրել զօրավարի կինը՝ Յասմիկ Գարամանուկեանը: Հաւաքածուի մէջ են սպայական խաչով պարգեւատրելու մասին գրութիւնը, պատուոյ լեգէոնի շքանշանը, իրաւաբանական գիտութիւնների դոկտորի կոչումը (1976, Փարիզ), լուսանկարներ, զօրավարի գունաւոր դիմանկարը: Վազգէն Ա. կաթողիկոսի կոնդակը զօրավար Գարամանուկեանի 80ամեակի առթիւ «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը յանձնելու կապակցութեամբ, մեծի տան Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի կողմից կոնդակ՝ Գարամանուկեանին Կիլիկեան իշխանի շքանշանը յանձնելու կապակցութեամբ, մեծի տան Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ.ի հայրապետական կոնդակը՝ Գարամանուկեանին 75ամեակի առթիւ, Կիլիկեան ասպետի շքանշանը շնորհելու կապակցութեամբ, աղօթագիրքը, զօրավարի համազգեստը բաղկացած 4 մասից, համրիչը, տափաշիշը, ակնոցը, զինուորական համազգեստի զօրավարական ուսադիրները,

[14] ՀՊԹ, նորագոյն պատմութեան ֆոնդ (նպֆ), մմ 18816, բ/մ 3402-3764:

[15] Տես՝ Սեդա Գալստեան, «Էջեր Անտոն Քոչինեանի արխիւից (1966-74)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 43(1):2023, էջ 367-86:

[16] ՀՊԹ, նգպֆ, նո. 17738/1-34:

խաչուած սրերով, 4 արծիւներով ուսադիրների ամրակները, գրիչը, ժամացոյցները՝ ընդամէնը 45 առարկայ:

Թանգարանի խորհրդային շրջանը հարստացել է Բ. համաշխարհայինի օրերին Ֆրանսայի դիմադրութեան շարժման մասնակիցների՝ խորհրդահայ պարտիզանական գնդին վերաբերող հարիւրաւոր լուսանկարներով, Նիմ եւ Գարի դեպարտամենտների ազատագրման մասին պատմող նիւթերով: Մասնակիցների Մարտական խաչով պարգեւատրելու շքանշանները, պարտիզանական դիպլոմները, Փարիզում լոյս տեսնող *L'Humanité* թերթի համարները՝ հայերի մասին յօդուածներով՝ Մանուշեան, ԼԱՍ, Արփիարեան եւն.:

Վերջին տարիներին խորհրդային շրջանի զետեղարանները համալրուեցին ՀԿԿ առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանի եւ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ՝ (1977-1989) Ֆադէյ Տաճատի Սարգսեանի կեանքին ու գործունէութեանը նուիրուած, ՀՀ արդիւնաբերութեան, գիտութեանը եւ տնտեսական կեանքին վերաբերող լուսանկարներով, նկարագրքերով: Սարգսեանը դարձաւ ՀԽՍՀում մաթեմատիկական դպրոցի հիմնադիրներից մէկը: Որոշում կայացուեց ստեղծել Գիտութիւնների Ակադեմիայի եւ ԵՊՀ հաշուողական կենտրոն, գիտաշխատանոցներ, կառավարման համակարգեր: Գիտութեան եւ արտադրութեան համաչափ ու ներդաշնակ զարգացումը տուեց իր փայլուն արդիւնքները: Ամէն պայման ստեղծուած էր ՀԽՍՀում բարձր արհեսատգիտութեան զարգացման համար, ինչին նպաստում էին հանրապետութեան առաջին դէմքերը՝ Քոչինեանը, Եակով Զարոբեանը, Դեմիրճեանը: Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազօտական ինստիտուտի (ԵրՄՄԳՀԻ) առաջին տնօրէնը տաղանդաւոր գիտնական, ակադեմիկոս Սերգէյ Մերգէլեանն էր, ում նկատմամբ մեծ յարգանք է տածել Սարգսեանը: 1963 Օգոստոսի 3ին Սարգսեանը նշանակուել է ԵրՄՄԳՀԻի տնօրէն: «Նայիրի» շարքի առաջին էլեկտրոնային հաշուիչ մեքենաները մեծ ճանաչում եւ փառք բերեցին մեր հանրապետութեանը: 1993-2006՝ Սարգսեանը ՀՀ Գիտութիւնների Ակադեմիայի նախագահն էր: Սարգսեանի արխիւը թանգարանին նուիրեց ակադեմիկոսի դուստրը՝ Թամարա Սարգսեանը (853 միաւոր նիւթ):

2022ին ՀՊԹն հիւրընկալեց Նոբէլեան մրցանակի հայազգի առաջին դափնեկիր, բժշկագիտութեան ոլորտի անուանի ներկայացուցիչ, մոլեկուլային կենսաբան, նեարդաբան Արտեմ Փաթափութեանին, ով իր մրցանակը նուիրաբերեց ՀՊԹին: Նոբէլեան կոմիտէն բժշկութեան 2021ի Նոբելեան մրցանակը գիտնականին շնորհել է ջերմաստիճանի եւ հպման զգայարանների յայտնաբերման համար: Սեպտեմբեր 2022ին ՀՊԹն հարստացաւ մէկ այլ՝ տիեզերագիտութեան մէջ առաջին հայի՝ Ջէյմս Բաղեանի նուէրով՝ տարբերանշաններ STS-29 Դիսքաւըրի տիեզերանաւի անձնակազմի անդամների տարբերանշանը՝ Քոուտս, Բլահա, Բաղեան,

Սփռինգըր, Բաքլի, նաեւ՝ STS-40 Կոլումբիա տիեզերանաւի անձնակազմի անդամների տարբերանշանը, որով իրագործել է թռիչք լուսնի վրայ, 1989ին՝ ՕՔանըր, Ջերնիգըն, Գուտիերրէս, Սեդդըն, Գեֆֆնի, Հիւզ, Ֆուլֆորտ, Բաղեան, ԱՄՆ, 1991:

Կարող ենք շարունակել ցանկն այս անգնահատելի ձեռքբերումների, որոնք վկայութիւնն են հայ ինքնութեան, հայ ծինի շարունակութեան, եւ լուսաւորում են պատմութեան մութ դրուագներ, իրադարձութիւններ, որոնք առողջ հիմք են դառնում հայ ժողովրդի պատմական ուղու, անցեալի նոր մօտեցումների համար:

Ցաւօք, պէտք է նկատել, որ այսօր, իր յոբելեանի օրերին անգամ, թանգարանն ապրում եւ գործում է ոչ անհոգ կեանքով. այն տեղաւորուած է յարմարեցուած շէնքում, որտեղ զգացւում է ֆոնդային եւ ցուցադրական տարածքի պակասը, ապահովուած չէ անհրաժեշտ գումարով՝ պեղումներ կատարելու, թանգարանային արժէքներ գնելու եւն.ի համար: Ցածր է թանգարանային աշխատողների աշխատավարձը:

Այսօր, երբ ՀՀն կանգնած է քաղաքական, տնտեսական բազմաթիւ դժուարութիւնների, այլեւայլ մարտահրաւէրների առջեւ, ըմբռնումով ենք մօտենում թանգարանին յաւուր պատշաճի ուշադրութիւն չդարձնելը: Սակայն առաջին իսկ հնարաւորութեան դէպքում առաւելագոյն ուշադրութիւն պէտք է դարձնել այս առաջատար հաստատութեանը, որովհետեւ այստեղ պահուող մասունքները հայ ժողովրդի ծննդեան վկայականն են, նրա դարաւոր կենսագործունէութեան առհաւատչեան:

Թանգարանի հայրենասէր աշխատակիցները գիտակցում են, որ առկայ բոլոր դժուարութիւնները ժամանակաւոր են եւ շարունակում են իրենց շնորհակալ աշխատանքը՝ վաղուայ լաւ օրուայ յոյսով:

THE ACQUISITIONS OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA DURING THE THIRD REPUBLIC (1991-2024) (SUMMARY)

SEDA GALSTYAN (sedagalstyan@yahoo.com)

The paper sheds light on the history of the museum and its past and notes that it was initiated by the then PM Alexander Khadisian and minister of Education and Arts, Nigol Aghpalian, with a decree from the parliament on September 9, 1919. Its first items were brought from Ani, Tbilisi, Moscow, Nor Nakhichevan, Crimea, Odessa, Astrakhan, Batumi, etc., and its first director was the renowned ethnographer Yervant Lalayan.

The author briefly describes the acquisitions of the museum during the last 30 years, which have further enriched the over 400,000 item collection of the museum. Among the new acquisitions are the archives of Soviet Armenian political figures Anton Kochinian and Fadey Sarksian, materials related to the self-determination wars of Artsakh, Generals Antranig and Karekin Nejteh, Syrian army general Aram Karamanougian, Nobel prize co-winner Ardem Patapoutian and US astronomer James Bagian.



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԼՊՈՄ-ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԻ ՄԸ ՉԻՐԱԿԱՆԱՑԱԾ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ԵՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՆ

Զաւէն Մսըրլեան

Գաղտնիք մը չեմ բացայայտած ըլլար, երբ յայտնեմ թէ 1969ին Գերսամ Ահարոնեանին[1] հետ ծրագրած էինք Հայոց Ցեղասպանութեան ալպոմ յուշամատեան մը հրատարակել: Հոս պիտի մանրամասնեմ[2]:

---

[1] Գերսամ Ահարոնեան (1916-91).- ՌԱԿի ղեկավարներէն, *Զարթօնք*ի խմբագրապետ (1948-81), հեղինակ՝ *Մեծ երազի ճամբուն վրայ, Խոհեր յիսնամեակի աւարտին* եւ այլ գիրքերու, խմբագիր *Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965* գիրքին:

[2] *Զարթօնք*ի 20 Յունուար 1991ի թիւին մէջ «Վերյիշումներ. Գերսամ Ահարոնեան (1916-1981)» գրութեանս մէջ, առաջին յստակ բացայայտումը ըրի՝ «*1967ին, օր մը զիս քովը կանչելով ըսաւ, "զբաղումներուդ պատճառաւ 'Յուշամատեան Մեծ Եղեռնի' գործիս քեզի վստահելիք պատասխանատուութեան բաժինը չընդունեցիր վերցնել, սակայն վստահ եմ սրտիդ պիտի խօսի առաջարկելիքս*»: Առաջարկեց որ միատեղ, նկարազարդ ալպոմ-յուշամատեան մը հրապարակենք, նուիրուած հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան: Խանդավառութեամբ ընդունեցի: Ապրիլ 24ի առիթով մը, *Զարթօնք*ին մէջ գրեցի «Ճափոնցի ձկնորսը, Հայկական Դատը եւ հայ կրեսոսները...» խորագիրով յօդուած մը, որուն մէջ նշեցի այս ծրագիրը: Գտնուեցաւ ազնիւ բարերարը: Լծուեցանք աշխատանքի: Իր պատկերացումով՝ գործը նկարազարդ ալպոմ մը պիտի ըլլար եւ Եղեռնի պատմութիւնն ալ պիտի գրուէր, նաեւ՝ մեր ակնկալութիւնը մարդկութենէն: Հաւաքեցինք մօտ 300 տարբեր եւ անտիպ կամ քիչ տարածում ունեցած նկարներ: Նկարներէն ոմանք արդիւնք էին *Զարթօնք*ի մէջ իր տուած «Կարեւոր խնդրանք»ին: Սակայն գործը չիրականացաւ, արդիւնք՝ իր գերզբաղութեան, անհանգստութեան եւ Լիբանանի անկայուն վիճակին ու պատերազմին:

Երկրորդ անգամ հրապարակային կերպով արտայայտում կատարեցի Գերսամ Ահարոնեանի նուիրուած յուշահանդէսի մը, որուն խօսողներէն մէկն էի: 2017ի *Զարթօնք*ի ամանորի բացառիկին մէջ տպուեցաւ խօսքս: Անկէ կը մէջբերեմ առնչուած հատուածը. «*1969ի Սեպտեմբերին* Զարթօնք*ի մէջ [Գերսամ Ահարոնեան]*

23 Ապրիլ 1967ին «Ապրիլ 24ի առթիւ՝ Հայկական Դատը, Ճափոնցի Ձկնորսը եւ Հայ Կրեսոսները»[3] յօդուածիս վերջաւորութեան նշած էի. «*անհրաժեշտ է օր առաջ առաջին իսկ հերթին լոյս ընծայել պատկերազարդ ալպոմ մը՝ նուիրուած մեր Մեծ Եղեռնին եւ Դափին, որ ըլլայ բազմալեզու եւ տպուի մաքուր, լաւորակ թուղթի վրայ բազմահազար օրինակներով եւ ձրիօրէն տրուի միջազգային հանրային կարծիք պատրաստող անհատներու ըլլան անոնք պետական մարդիկ, լրագրողներ թէ մտաւորականներ: Հայկական Դափի Հետապնդման Առժամեայ Կեդրոնական Մարմինը ունի նման ծրագիր, սակայն կը պակսին հայ "ճափոնցի ձկնորսներ"*»[4]:

1969ի Օգոստոսին, Ահարոնեան ինձի յայտնեց որ ալպոմ- յուշամատեանին բարերարը գտնուած է յանձին Մարտիրոս Տարաքճեանի (Եթովպիա բնակող գործարար) եւ պէտք է լծուէինք աշխատանքի: Համահեղինակներ պիտի ըլլայինք, տողերս գրողը պէտք էր անհրաժեշտ թղթակցութիւններ ու պրպտումներ կատարէի լուսանկարներ եւ վաւերաթուղթեր գտնելու, դիմելու առ որ անկ է: Ինք պիտի գրէր վերջաբանը («Մեր պահանջները»), իսկ ես՝ նախաբանը («Հայոց եւ Հայոց Ցեղասպանութեան մասին»): Նիւթական յատկացումները պիտի տրամադրուէին իր կողմէ:

Առաջին առիթով հետեւեալ ծանուցումը դրուեցաւ իր անունով, իր խմբագրած *Զարթօնք* օրաթերթի մէջ, Սեպտեմբեր 1969ին[5]:

Կարեւոր Խնդրանք

Հայ ժողովուրդին վրայ գործադրուած Ցեղասպանութեան մասին կարեւոր հրապարակութեան համար պէտք կայ մեծ թիւով վաւերական լուսանկարներու:

Կը խնդրուի մեր հայրենակիցներէն, ի սփիւռս աշխարհի, սփորեւ տրուած հասցէին փութացնել լուսանկարներ Մեծ Եղեռնէն (ներառեալ քեմալական ջարդերը մինչեւ 1921)՝ բռնագաղթի, կեդրոնացման կայաններու, ջարդերու, սովահարներու եւն.:

Լուսանկարները կրնան առնուիլ ընտանեկան ալպոմներէ, կրնան ըլլալ վերարտադրութիւններ զանազան հատորներէ կամ թերթերէ: Որքան կա-

---

լոյս ընծայեց «Կարեւոր խնդրանք» կոչը, խնդրելով Ցեղասպանութեան շրջանին վերաբերեալ լուսանկարներ: Կը ծրագրէր հինգ լեզուով Յուշամատեան Ալպոմ մը հրապարակել: Այլազան պատճառներով, յատկապէս՝ Լիբանանի պատերազմին հետեւանքով, ծրագիրը չամբողջացաւ եւ նկարներու ալպոմը չհրապարակուեցաւ»:

[3] Յօդուածս լոյս տեսաւ *Զարթօնք*ի 23 Ապրիլ 1967ի թիւին 2րդ էջին վրայ:

[4] Գրութեանս խորագրին մէջ նշուած ճափոնցի ձկնորսը Մորիհիրօ Մացուտօն էր, որ 11184 տոլար վճարած էր *Նիւ Եորք թայմզ*ին մէջ լրիւ էջի մը վրայ ներկայացնելու Վիեթնամի պատերազմին վերջ տալու խաղաղութեան իր ծրագիրը:

[5] *Զարթօնք*, Սեպտեմբեր 1969ի թիւեր:

րելի է՝ լուսանկարներուն պէտք է ընկերացնել ճշգրիտ եւ շատ ամփոփ ծանօթագրութիւններ կամ բացատրութիւններ:
Կը խնդրուի լուսանկարները հասցնել մինչեւ 1969 Դեկտեմբեր 31:
Կանխայայտ շնորհակալութիւններ՝ բոլոր մասնակցութիւն բերող հայրենակիցներուն:
Գերսամ Ահարոնեան
Փոստարկղ 617
Պէյրութ, Լիբանան
Յ.Գ. Հայ մամուլէն կը խնդրուի արտատպել:

1 Սեպտեմբեր 1969էն 30 Յունուար 1971 60 նամակներ գրեցի: Առաջին նամակը հայր Գրիգոր Կէրկէրեանին[6] (ԱՄՆ) ուղղեցի եւ վերջինը՝ հայր Ռաֆայէլ Քօսեանին (Վիեննա): Դիմեցի Library of Congressի հայկական բաժանմունքի պատասխանատու եղած Ա. Օ. Սարգիսեանին, Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան ու ՀԲԸՄի Փարիզի Նուպարեան մատենադարաններուն, հոգեւորականներու, միութիւններու եւ ազգային հասարակական գործիչներու, անհատներու՝ իր եւ իմ անունով: 40 նամակներ ստացանք, ի պատասխան նամակներուս եւ կամ՝ «Կարեւոր խնդրանք»ին:

Լիբանանի մէջ օգտուեցայ Հայկազեան Գոլէճի (այժմ Համալսարան), Պէյրութի Ամերիկեան Համալսարանի (ՊԱՀ) եւ Վահէ Սեթեանի գրադարաններէն: Զմմառի վանքին մատենադարանին ալ դիմեցի: Պատասխանեցին թէ իրենց ունեցած արխիւային նիւթերը՝ գիրք, լուսանկար եւն. հայր Գրիգոր Կէրկէրեանը կ'օգտագործէ, աւելցնելով՝ «*կը հասկնաք թէ կարելի չէ զանոնք ձեր տրամադրութեան տակ դնել*»: Տիկ. Զեփիւռ Շանթին այցելելով, խնդրեցի որ իր հօր՝ արուեստագէտ լուսանկարիչ Միհրան Տատիքոզեանի (Ֆոթօ Ապէլ)[7] Մեծ Եղեռնի շրջանին նկարած նկարներէն ինչ որ տրամադրելի ունի, մեզի հայթայթէ: Ազնուօրէն ընդառաջեց, ըսելով որ այդ՝ ի

[6] Հայր Գրիգոր վրդ. Կէրկէրեան, Գրիկէր գրչանունով, Զմմառի Արծիւեան միաբանութեան անդամ, հեղինակ՝ *Եոզղաթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը* (Նիւ Եորք, 1980) արժէքաւոր գիրքին:

[7] Միհրան Տատիքոզեան (Ֆոթօ Ապէլ).- ծնած է Ռոտոսթօ, ուրկէ տեղահանուած էր ընտանեօք եւ Տէր Զօր ղրկուած: Արուեստագէտ լուսանկարիչ էր: Մեծ Եղեռնէն կ'ազատի Ճեմալ փաշայի լուսանկարիչը ըլլալուն: Մեծ Եղեռնի շրջանին կ'ապրի Դամասկոս: Զինադադարէն ետք կը վերադառնայ ծննդավայրը, ապա քեմալական շարժումին իտես, կ'ապաստանի Յունաստան եւ 1922ի վերջերուն՝ Պէյրութ, ուր կ'ունենայ իր սեփական սթիւտիոն: Կը մեկնի Փարիզ եւ իր արուեստը կը զարգացնէ Ֆոթօ Ապէլի մօտ: Վերադարձին, իր սթիւտիոն կը կոչէ Ֆոթօ Ապէլ, որ կը նոյնանայ իր անունին հետ, այն աստիճան որ իր կենսագիրը զինք կոչած է Միհրան Ապէլ Տատիքոզեան (Սիսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի մէջ, հտր. Գ.*, Սեւան հրատ., Պէյրութ, 1981, էջ 367-68):

յարգանս հօրս՝ Մկրտիչ Մսըրլեանի[8] է: Մեր ծրագրած ալպոմին մէջ մեզի թելադրուեցաւ այդ լուսանկարներուն տակ որպէս պատկերահանող նշել Միհրան Տատիքոզեան: Ըստ ունեցած ցանկիս, իրմէ 10 լուսանկարներ պիտի տպուէին գիրքին մէջ: Կրտսեր եղբայրս՝ Հայկը, որ Լոնտոն կ'աշխատէր այդ ժամանակ, օգնեց 1915էն 1918ի շրջանի անգլիական թերթերէն, յատկապէս *Illustrated London News*էն պատկերներու յստակ լուսապատճէններ ղրկելով:

«Կարեւոր խնդրանք»ին ընդառաջելով քանի մը նկար մամլոյ կտրօներ եւ գրութիւններ ստացանք[9]:

ՊԱՀի հին ամսագրերու հաւաքածոներէն քանի մը լուսանկար գտայ: Անոնցմէ յիշատակելի է *Illustration* ամսագրին մէջ տպուած Տրապիզոնի հայերու տեղահանման նկարը: Այս նկարը գտած էի 1965ին եւ լոյս տեսած էր *Յուշամատեան Մեծ Եղեռնի* երկին մէջ[10]:

Մեզի շատ օգտակար եղան Նուպարեան եւ Վիեննայի Մխիթարեան մատենադարանները: Բազմաթիւ գիրքեր թղթատեցի, Վահէ Սէթեանի գրադարանին մէջ դանիական գիրք մը՝ *Armenien* (հեղինակ՝ Age Meyer Benedictsen, Քոփենհակըն, 1925) նախապէս չտեսնուած նկարներ յայտնաբերեցի: Վեր. Վարդան Յարութիւնեանի Neither to Laugh Nor to Weep գիրքին մէջ յատկանշական, քիչ տեսնուած շատ յստակ, մաքուր տպագրութեամբ, աղբիւրները նշուած լուսանկարներ կային: Օսմանեան կայսրութեան մօտ 1913էն 1916 ԱՄՆի դեսպան Հենրի Մորկընթաուի յուշագիրքին մէջ ալ կային ծանօթ նկարներու մաքուր, յստակ տպագրութիւններ: Հայոց Ցեղասպանութեան ականատես գերման կարմիր խաչի աշխատակից Արմին Վեկնէրի[11] լուսանկարներէն (որոնք 1970ականներուն դեռ տարածում չէին գտած) օգտուեցանք: Վերարտադրեցինք նաեւ Օսմանեան բանակի

---

[8] Մկրտիչ Մսըրլեան (1899-1979).- Հանրածանօթ էր իբրեւ ՌԱԿԻ ղեկավարներէն, *Հարթօնք* օրաթերթի հիմնադիրներէն, Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան անդամ (1941-44) եւ բարերար: Տիկ. Զեփիւռ Շանթ շեշտեց Մ. Մսըրլեանի՝ Բարսեղ Կանաչեանին նուիրած դաշնամուրը (աւելի մանրամասն տե՛ս՝ Զ. Մսըրլեան, *Մկրտիչ Մսըրլեանի ազգ.-քաղաքական գործունէութիւնը*, Պէյրութ, 1981 եւ բարեփոխեալ Բ. հրատ. 2016):

[9] Այս գրութիւններուն հիմնականը եւ կարեւոր նկատածներս *Հարթօնք*ի 24 Ապրիլ 2006ի բացառիկին մէջ լոյս ընծայեցի «Հայոց Ցեղասպանութեան անտիպ վկայութիւններ» խորագրին տակ: Նոյնը կարելի է տեսնել *Մամուլէն փրցուած էջեր* (2013) գիրքիս մէջ, էջ 87-96:

[10] Գերսամ Ահարոնեան խմբ., *1915-1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի*, տպ. Ատլաս, Պէյրութ, 1965, էջ 407:

[11] Արմին Վեկնէր (1886-1978).- Գերմանացի գրող եւ բանաստեղծ, 1915-16ին գերման առողջապահական սպասարկութեան սպայ եղած է Միջագետքի մէջ եւ բազմաթիւ լուսանկարներ առած հոն Մեծ Եղեռնի ընթացքին: Յայտնի է իր «Բաց նամակ ԱՄՆի նախագահ Ուուտրօ Ուիլսընին»ը:

մէջ ծառայած վենեզուելացի Ռաֆայէլ Տը Նոկալէսի[12], Մարիա Եաքոպսոնի[13], Ֆրիտիոֆ Նանսէնի[14] եւ Եաքոպ Քիւնցլէրի[15] դուստր Իտա Ալամէտտինի հրատարակած *Papa Kuenzler and the Armenians* գիրքէն, ֆրանսացի սպայ Փոլ Տը Վէույի *Passion de Cilicie* գիրքէն լուսանկարներ, ինչպէս նաեւ Near East Relief֊ի ընդհանրապէս ծանօթ նկարներէն, Armenian Historical Research Associationէն ու այլ աղբիւրներէ որոնց թուումը երկար պիտի ըլլայ:

Ահարոնեան Խ. Հայաստանէն, փրոֆ. Մօրուս Հասրաթեանի միջոցով գաղտնաբար ձեռք բերաւ մինչ այդ բնաւ չտեսնուած ու չհրատարակուած լուսանկարներ՝ թուրքերու Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնումին շրջանին եւ 1920ին Արեւելեան Հայաստանի մէջ կատարած ջարդերէն ահաւոր լուսանկարներ: Բնականաբար, նկատի առած խորհրդային իշխանութեան պարագան, գաղտնի պահուեցաւ այս իրողութիւնը եւ աղբիւրը պիտի չնշուէր՝ եթէ ալպոմ-յուշամատեանը հրատարակուէր այս լուսանկարներն ալ օգտագործելով:

19 Սեպտեմբեր 1969 թուակիր մակագրութեամբ, Ահարոնեան James Nazerէն ստացաւ մաքուր քուշէ թուղթի վրայ տպուած 160 A-4 չափի էջերով 1968ին ԱՄՆի մէջ նոյն անձին կողմէ պատրաստուած *The First Genocide of the 20th Century. The Story of the Armenian Massacres in Text and Pictures* գիրքը: Գիրքը որ պատկերազարդ էր, կը պարունակէր Հայոց Ցեղասպանութեան 18 ընդհանրապէս ծանօթ լուսանկարներ բացի երկուքէն, որոնք քիչ տեսնուած, կամ նորութիւն էին: Գիրքը որոշ նմանութիւններ ունէր մեր մտքին մէջ ունեցած ծրագրին, սակայն շատ տեղ տուած էր գրութիւններու. մերը աւելի ալպոմ-յուշամատեան մը պիտի ըլլար:

---

[12] Ռաֆայէլ Նոկալէս (1879-՞).- Վենեզուելացի ռազմական գործիչ, ճանապարհորդական գրող, ծառայած է գերման բանակին եւ Թուրքիա ղրկուած է թուրք բանակին կից գերման շտապին մէջ 1915ին: 1924ին գրած է «Չորս տարի կիսալուսնի ներքեւ» գիրքը, գերմաներէն, որ յաջորդ տարին անգլերէն ալ հրատարակուած է:

[13] Մարիա Եաքոպսոն (1882-1960).- Դանիացի միսիոնարուհի, Մեծ Եղեռնի շրջանին Խարբերդի մէջ եղած է, եւ որբախնամ աշխատանք կատարած է: 1919ին վերադարձած է Դանիա, ապա 1922ին հիմնած է Թռչնոց Բոյնը Լիբանանի մէջ: 1970ին հրատարակուած է իր *Օրագրութիւն* յուշագրութիւնը՝ 1907 Սեպտեմբեր 7էն 1919 Օգոստոս 6: Իր արխիւէն 80 լուսանկար տպուած է այս ծաւալուն գիրքին մէջ:

[14] Ֆրիտիոֆ Նանսէն (1861-1930).- Նորուեկիացի գիտնական, բեւեռախոյզ, մարդասիրական եւ հասարակական գործիչ: Համաշխարհային Ա. պատերազմէն ետք Ազգերու Լիկայի գերագոյն կոմիսար, զբաղած է հայ գաղթականներու հարցով, անոնց տուած «Նանսէնեան անձնագիր», այցելած է Խորհրդային Հայաստան 1925ին: Գրած է *Betrogenes Volk* (Լայփցիկ, 1928) եւ *Armenia and the Near East* գիրքերը, որոնք լուսանկարներ ալ կը պարունակեն:

[15] Եագուպ Քիւնցլէր (1871-1949).- Զուիցաերիացի բժիշկ, 1895-1922՝ ընդմիջումներով Ուրֆայի մէջ աշխատած է Լեփսիուսի հիմնած «Արեւելեան առաքելութեան» մէջ: Մեծ Եղեռնին օգնած է հայ փախստականներու: Նկարած է լուսանկարներ:

Ահարոնեան ինծի յանձնեց նաեւ 1959ին Վարշաւիա տպուած զուտ պատկերազարդ գիրք մը՝ *We Have Not Forgotten 1939-1945*, անգլերէն-ռուսերէն-ֆրանսերէն մեծածաւալ յուշամատեան-ալպոմը՝ լեհ եւ լեհ-հրեայ ողջակիզումին մասին: Ալպոմը հրապարակուած էր League of Fighters for Freedom and Democracy կազմակերպութեան կողմէ: Ալպոմը պատրաստուած էր Stanislaw Wrzas-Glinkայի, Tadeusz Mazarի եւ Jerzy Tmoaszewskiի եւ լոյս ընծայուած Փալոնիա հրատարակչատան կողմէ: Այս գիրքը մեզի իբրեւ հիմնական օրինակ պիտի ծառայէր:

Պատրաստեցի ալպոմ-յուշամատեանին ծրագիրը, որուն իր հաւանութիւնը տուաւ Ահարոնեան: Ճարտարապետ Նորայր Խրլոբեան ստանձնեց նկարներուն էջադրումը: Այդ կը կատարուէր մեր բնակարանին մէջ իմ ներկայութեամբս, եւ նկատի առած թելադրանքներս: Ալպոմ-յուշամատեանը մեծադիր պիտի ըլլար, նկատի առնուած էր 31x21.5 սմ. չափը: Էջադրումը 224 մեծադիր էջեր գրաւեց, նախաբանէն եւ վերջաբանէն զատ, միայն լուսանկարները:

Ստորեւ՝ բովանդակութիւնը.-

Ա.- Նախաբան՝ հայոց եւ Հայոց Ցեղասպանութեան մասին.

Բ.- 1894-96ի ջարդերը (լուսանկարներ եւ վիճակագրական տուեալներ).

Գ.- 1909ի Ատանայի եւ շրջակայքի Եղեռնը (լուսանկարներ եւ ամփոփ տեղեկագրութիւն).

Դ.- 1915-18 Հայոց Ցեղասպանութիւնը՝

1) Վաւերաթուղթերու նկարներ.

2) Զոհուած մտաւորականներու, հոգեւորականներու, կրթական մշակներու նկարներ.

3) Օսմանեան բանակի հայ զինուորներու սպանդը եւ *Ամալէ թաբուրին* (աշխատանքային ջոկատ).

4) Քարտէս ջարդերու եւ տարագրութեան ընթացքի.

5) Տարագրութեան, ջարդի, գաղթականներու նկարներ.

6) Որբերու նկարներ.

7) Հայկական գիւղերու, հայաբնակ քաղաքներու եկեղեցիներու նկարներ, Ցեղասպանութենէն առաջ եւ քանդում-հրկիզումներէ ետք բաղդատականներով տրուած.

8) Միջազգային մամուլի արձագանգը, մամուլի կտրօններով.

9) Եղեռնագործ-ոճրագործները լուսանկարներով եւ անհրաժեշտ նշումներ (յատկապէս մահապատիժի իբր դատական վճիռ եւ ահաբեկում).

Ե.- Հայոց Ցեղասպանութեան ականատեսներու կամ մեծ անձնաւորութեանց հակիրճ վկայութիւններ, իրենց լուսանկարներով.

Զ.- Քեմալական ջարդերը (Հայոց Ցեղասպանութեան 1919-23 հատուածը) եւ քեմալականներու հասցուցած քանդումներու լուսանկարները.

Է.- Քարտէսներ – Օսմանեան կայսրութեան մէջ հայ բնակչութեան Ցեղասպանութենէն առաջ եւ ետք (Հայկական ՍՍՌ-1961 քարտէսներու գիրքէն առնելով): Նաեւ՝ Ցեղասպանութեան եւ տեղահանութեան քարտէսը.

Ը.- Հայոց մարդկային եւ նիւթական կորուստը վիճակագրական աղիւսակներով.

Թ.- Հայկական Հարցը բացատրող քարտէսներ, օսմանեան քարտէս Հայաստանի (Էրմէնիստան) նշումով, նախքան 1878ը.

Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրեր.

Սեւրի դաշնագրի եւ ԱՄՆի նախագահ Ուուտրօ Ուիլսընի սահմանագծումի քարտէս.

Ժ.- Արդի Հայաստան եւ հայ սփիւռք, յատկանշական նկարներով եւ նշանաւոր համաշխարհային ճանաչում ունեցող 20րդ դարու հայերու լուսանկարներ շատ հակիրճ ծանօթագրութեամբ.

ԺԱ.- Հայոց պահանջը (գրութիւն եւ քարտէս):

Ալպոմ-յուշամատեանը պիտի ըլլար հինգ լեզուներով՝ հայերէն, ֆրանսերէն, անգլերէն, ռուսերէն եւ արաբերէն: Հիմնականին մէջ նկարազարդ հրատարակութիւն մը պիտի ըլլար, կարելի եղածին չափ քիչ գրութեամբ:



Երկու նմուշ՝ աղբիւրներուն նշման սեւագիրէն

Յստակ ջանք թափած էի, որ իւրաքանչիւր լուսանկարի տակ, յատկապէս ցեղասպանութիւն պատկերող լուսանկարներուն տակ նշուի նկարողին կամ լուսանկարին աղբիւրը՝ ինչպէս գտած էինք գիրքերու մէջ: Անշուշտ յետոյ հինգ լեզուով պիտի տրուէր այդ բոլորը: Այդ գրաւած էր ձեռագիր 39 էջ:

Խ. Հայաստանէն եկած երկու տասնեակ նկարներով 297 լուսանկար հաւաքած էինք, որոնցմէ 228ին աղբիւրները կամ նկարողը նշուած էր, իսկ 69ին աղբիւրները անյայտ էին: Աղբիւրներուն նշումը կատարած էի 9 մեծադիր էջերու վրայ (տեսնել՝ տրուած երկու նմուշները):

Մանրամասնեմ. ընդգրկուած էր.-

25 լուսանկար՝ 1894-96ի ջարդերէն, 11 լուսանկար 1894-96ի որբերու եւ գաղթականներու,

30 լուսանկարներ Ատանայի եւ շրջակայքի 1909ի ջարդերէն, հրկիզուած շէնքերէն եւն.,

8 լուսանկար՝ միջազգային մամուլէն (1915-18), 4 լուսանկար Մեծ Եղեռնի հայ զինուորներու սպանդի եւ *Ամալէ թապուրի*,

25 լուսանկար տարագրութեան եւ տեղահանութեան,

21 վաւերաթուղթ Հայոց Ցեղասպանութիւնը ապացուցող,

41 լուսանկար 1915-18 տեղահանուածներու, 59 լուսանկար սպանդի-ջարդի, 36 լուսանկար որբերու խումբերու, 15 լուսանկար քանդուած դպրոցներու, եկեղեցիներու եւ վանքերու,

25 լուսանկար քեմալական ջարդերու՝ 1919-22, 6 լուսանկար գաղթականութեան հետեւանքները պարզող,

7 քարտէսներ, նոյնիսկ 1923-69 ժամանակաշրջանի 7 լուսանկար կամ վաւերաթուղթ:

24 լուսանկարներ անհատական կամ խմբային եղեռնագործներու, 3 յատկանշական գծանկար, 3 վիճակագրական ցանկեր եւն.: Այս ամէնը յստակօրէն գրուած եւ պահպանուած են:

Բազմալեզու աշխատանքի չձեռնարկուեցաւ:

Ահարոնեան եգիպտահայ արուեստագէտ Օննիկ Աւետիսեանին պատրաստել տուաւ կողքը: Ան 1965ին Ահարոնեանի խմբագրութեամբ հրատարակուած *Յուշամատեան Մեծ Եղեռնի* կոթողական գիրքին կողքի յուշան-

կարը պատրաստած էր: Գիրքը կը կրէր *The Armenian Genocide* եւ *Հայոց Յեղասպանութիւն* խորագրերը:

Գիրքին կողքը կը կրէ 1971 թուականը: Այդ թուականին լուսանկարները, վաւերաթուղթերը, քարտէսները եւն. էջադրուած էին, սակայն հինգ լեզուներով ենթագրութիւնները, նախաբանն ու վերջաբանը տակաւին պատրաստ չէին: Ահարոնեան միշտ կը յետաձգէր լրացուցիչ աշխատանքը: Այսպէս, գործը դանդաղ ընթացաւ. երկուքս ալ ծանրաբեռնուած անձեր էինք մեր գործերով: Ահարոնեան պատասխանատու պարտականութիւններ ունէր իր կուսակցութեան եւ ՀԲԸՄի կրթական յանձնախումբին մէջ եւ *Զարթօնք* օրաթերթի խմբագրապետն էր: Տողերս գրողը տնօրէնն էր Հայ Աւետարանական Գէլճին, որ այդ շրջանին 700է աւելի աշակերտ ունէր:

Ահարոնեան, աւելի ուշ - 1973ին - Լիբանանի ներքին կացութեան վատթարացման, թերեւս Լիբանանի պատերազմի (1975-90) սկզբնական շրջանին, պնդումներուս վրայ՝ որ սկսուած աշխատանքը ամբողջացնելու ջանք թափենք, օր մը ըսաւ, թէ «*ներկայ պայմաններուն տակ կարելի չէ այս ալպոմ-յուշամատեանը հրատարակել*»: Առանց մանրամասնելու հասկցուց թէ Սուրիոյ ճամփով թրքական սպառնալիք եղած էր ոչ միայն իրեն այլ հայութեան: Լիբանանեան ներքին անկայուն քաղաքական պայմաններն ալ թոյլատու չէին նման հրատարակութեան: Պատերազմի սկիզբին, խաղաղ օրերէն մէկուն ալպոմ-յուշամատեանին համար հաւաքուած նկարները տարի եւ իրեն յանձնեցի Թէքէեան Կեդրոնի իր խմբագրատան գրասենեակը: Պնդումիս վրայ վերցուց, իր գրասեղանի կղպուած դարակին մէջ դրաւ: 1981ին իր վաղահաս մահէն ետք, լուսանկարները փոխադրուած էին Թէքէեան Մշակութային Միութեան գրասենեակի պահարանը, ուրկէ եւ անյայտացան ցարդ անորոշ ձեւով, լիբանանեան պատերազմի վերջին շրջանին: Ահարոնեանին զաւակը՝ Շահէն փնտռտուք կատարեց, սակայն ապարդիւն:

Քանի մը անհրաժեշտ նշումներ կ'ուզեմ ընել Յուշամատեան-Ալպոմին լուսանկարներու փնտռտուքի սկզբնաւորութեան մասին:

Գործին երբ ձեռնարկեցի առաջին հերթին պրպտեցի Ա. Սալմասլեանի *Հայկական մատենագիտութիւն* գիրքը, տպուած Երեւան, 1969ին: Հոն հանդիպեցայ հետեւեալ 3 սակաւաթիւ էջերով գիրքերու նշումին.-

Ա) Հայկական Կոմիտէ, *Գաղութահայ ալպոմ*, տպուած 1917-18ին, Ի Մոսկուա, Պօղոսեան տպարանին մէջ:

Բ) Berron (Le P.), *Souvenirs des journées sombres 29 illustartions*, Strasbourg, Action Chretienne en Orient, 1930, 79 p.

Գ) Mayewski (Gen.) *Les Massacres d'Armenie soigneusement transcript de son rapport portant le titre de statistique des provinces de Van et de Bitlis. Fragement photographiques et traduction en francais (S.I.)*, 1916, 96 p.

Առաջին գիրքը իվերջոյ գտնուեցաւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան վանքի մատենադարանին մէջ, հայր Քօսեան, 16 Նոյեմբեր 1970ին բացիկով մը տեղեկացուց թէ ունին զայն, սակայն կարելի չէր մատենադա-

րանէն դուրս հանել: Ուստի նիւթականը հոգալով նկարահանել տուինք նկարները, որոնք Արեւմտեան Հայաստանի մէջ տեղի ունեցած կոտորածի հետեւանքներուն նկարներն էին: Աննոնք, 1970ի ժամանակաշրջանին ընդհանրապէս քիչ տեսնուած լուսանկարներ էին, որոնք աւելի ետք ընդհանրացան:

Երկրորդ եւ երրորդ գիրքերը անգտանելի եղան: Դիմած էինք Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան եւ Փարիզի Նուպարեան մատենադարաններուն, Լիբանանի այլազան մատենադարաններուն, բայց հնարաւոր չեղաւ գտնել: 7 Մարտ 2024ին ստուգեցինք, որ Շիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտն ալ չունի, սակայն տողերուս գրողին տեղեկացուցին թէ գիրքերը կարելի է գտնել կայքէջի վրայ, քանի թուայնացած են ու նշեցին կայքէջին հասցէները:

ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1969-71 տարիներէն քանի մը տասնամեակ ետք, ժամանակներն ու պայմանները փոխուեցան: Համացանցի ստեղծումն ու անոր տարածումը բոլորովին փոխեցին փնտռտուքի ձեւը, նկարներու եւ վաւերաթուղթերու վերարտադրութիւնը:

Ներկայ դարուս պայմաններուն մէջ, համացանցով կարելի է հարիւրաւոր սպառած կամ հազուագիւտ գիրքեր, լուսանկարներ եւ վաւերաթուղթեր պրպտել եւ անոնցմէ քաղել անհրաժեշտը, աղբիւրներու ստուգումէն ետք:

Մեր ծրագրած Հայոց Ցեղասպանութեան ալպոմ-յուշամատեանի ծրագրէն ետք, որոշ թիւով նոր հրատարակութիւններ լոյս տեսան որոնք լուսանկարներ կը պարունակէին կամ՝ վաւերաթուղթերու պատճէններ:

Ռիչըրտ Քլոյեան 1980ին հրատարակեց *The Armenian Genocide News Accounts from the American Press, 1915-1922* ծաւալուն մամլոյ կտրօններու լուսապատճէններով գիրքը, որ արժանացաւ քանի մը տպագրութիւններու՝ 1981, 1985 եւ 1989: Նմանատիպ այլ գիրքեր եւս լոյս տեսան այլ երկիրներու մամլոյ գրութիւններու լուսապատճէններով:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան Պոնի մէջ կեդրոնացած արխիւներուն մէջ յայտնաբերուեցան լուսանկարներ, որոնք Հալէպի եւ Էրզրումի գերման հիւպատոսարանները ղրկած են Պերլին[16]:

[16] Գերման սպաներու եւ զինուորականներու կողմէ լուսանկարներ եւ ֆիլմեր նկարահանուած են Հայոց Ցեղասպանութեան ընթացքին: Գերմանացի Վոլֆկանկ Կուսթ, գերմաներէնով հրատարակեց Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան քաղաքական արխիւի փաստաթուղթեր. գիրքը Երեւանի մէջ 2005ին լոյս տեսաւ հայերէն թարգմանութեամբ՝ *Հայերի Ցեղասպանութիւնը 1915-1916ին*: Հոն շատ յստակ արտայայտութիւններ կան լուսանկարներու մասին: Հալէպի գերման հիւպատոս Ռոսլէր, Հալէպէն 27 Յուլիս 1915 թուակիր տեղեկագիր մը կը ղրկէ վարչապետ Պեթման Հոլվիկին: Այդ տեղեկագրին մէջ իմիջիայլոց գրուած է Թէլ Էրմէնի ջարդերուն մասին եւ հոն նշուած «*պարոն մայոր Ֆոն Միկուշը լուսանկա-*

Թեսա Հոֆման եւ Ժիրայր Քոչարեան Հայ Տեղեկագրական կեդրոն մը հիմնեցին Պերլինի մէջ 1985ին, որպէսզի հաստատեն աղբիւրային հաւաստում եւ ճշտումներ նշեն: Լուսանկարներուն լաւագոյն նմուշները վերարտադրուած են 1877էն 1939ի Ալեքսանտրէթի պարպում ժամանակաշրջանէն: 200 լուսանկարներ կը վերաբերին 1895ի, 1909ի եւ 1915ի ջարդերուն: Սոյն 200էն միայն 32ը ուղղակի կը վերաբերին 1915ի Ցեղասպանական Եղեռնին եւ լուսանկարուած են Միջագետքի մէջ[17]:

1967-68ին, Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Յուշահամալիրը հիմնուեցաւ: Հայաստանի վերանկախութենէն ետք, 1995ին յուշահամալիրի տարածքին մէջ հաստատուեցաւ ստորգետնեայ թանգարանը: Բնականօրէն հոն հաւաքուեցան եւ ցուցադրուեցան անհրաժեշտ վաւերաթուղթեր, լուսանկարներ, գիրքեր եւն.: Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի (ՀՑՊԹԻ) նախկին տնօրէն Հայկ Դեմոյեան 2014ին հրատարակեց *Հայոց Ցեղասպանութեան լուսաբանումը համաշխարհային մամուլի առա-ջին էջերում* ալպոմ-գիրքը հայերէն եւ անգլերէն, 298 մեծադիր էջերով, մի-ակ հրատարկութիւն մը: 1989ին Սիւզըն Պլէրի կողմէ հրատարկուեցաւ Մեծ Եղեռնի շրջանին Խարբերդի մէջ գործող ամերիկեան հիւպատոս Լեզլի Տէյվիսի տեղեկագիրը՝ *The Slaughterhouse Province* խորագրով: Հոն Պլէր կը պատմէ թէ ինչպէս գտած է Տէյվիսի կողմէ նկարահանուած լուսանկարները: Գիրքին վերջաւորութեան տպուած են 11 լուսանկարներ, որոնք առաջին անգամ կը հրապարակուէին:

Իդէպ, նշենք որ Ամերիկայի Քոնկրէսի գրադարանը եւս ունի բազմաթիւ լուսանկարներ եւ այլ նիւթեր՝ Հայոց Ցեղասպանութեան շրջանին որոնք գրադարանին յանձնուած են 1922ին[18]:

Դոկտոր Արտեմ Օհանջանեան հրատարակեց աւստրիական փաստաթուղթեր՝ Հայոց Ցեղասպանութեան մասին, նախ գերմաներէն՝ Վիեննայի

րել է այս փաստերը եւ ի վիճակի է ներկայացնել» (էջ 121): Գերման պաշտօնատար Մորտման, Կ. Պոլսոյ գերման դեսպանութեան խորհրդական Նոյսաթին Գոնիայէն 16 Օգոստոս 1915ին ղրկուած տեղեկագրի մը մէջ կը նշէ թէ Ռուտոլֆ Զապէլը *Tagl. Rundschau* թերթէն, «*թողնում է զգաստ ու անկողմնակալ դիտորդի տպաւորութիւն: Նա շատ նիւթ է հաւաքել, որոնց մէջ կան նաեւ մի շարք լուսանկարներ ու ֆիլմեր*» (էջ 170): Հալէպէն հիւպատոս Ռոսլէր իր 3 Յունուար 1916ի տեղեկագրին մէջ գրած է գերմանական դպրոցի տնօրէն Էտուարտ Կրեթիրի տեղեկագիրը եւ 5րդ յաւելուածին մէջ դրած է լուսանկարներ գերմանական դպրոցի մերձակայքը գտնուող ճամբարէն, ուր հայ գաղթականներ կային, «որոնք ահաւոր վիճակի մէջ էին ու մահացողները շատ» (էջ 325):

[17] «Նոր հրատարակութիւններ Հայոց Ցեղասպանութեան մասին. սարսափ եւ մեղադրանք յարուցող պատկերներ (Տեսողական վաւերագրութիւն հայերու հալածանքի ու բնաջնջումի մասին), Թեսա Հոֆման եւ Ժիրայր Քոչարեան», թարգմանաբար ամփոփեց տոքթ. Ռ. Ճեպէճեան, *Ազգային մշակոյթ շաբաթաթերթ*, 23 Ապրիլ 1994, էջ 6:

[18] «Դաւիթ Սարգսեանի այցը Ուաշինկթըն», *Ազդակ*, 18 Օգոստոս 2010, էջ 6:

մէջ, 1989ին, որուն անգլերէն թարգմանութիւնը հրատարակուեցաւ Երեւանի մէջ, 2004ին՝ 1915 *Irrefutable Evidence, the Austrian Documents of the Armenian Genocide*: Ան յայտնաբերեց աւստրիացի զինուորական Վիքթոր Փիչմանի պատկերահանած լուսանկարները, որ Թուրքիա եղած էր համաշխարհային Ա. պատերազմի տեւողութեան եւ ականատես եղած Էրզրումի հայերուն տեղահանութեան: Այդ լուսանկարները Օհանջանեան ՀՑՊԹԻին նուիրեց[19]:

Ֆրանսահայ պատմաբան Արթիւր Պէյլէրեան (1925-2005), 1983ին հրատարակեց ֆրանսական արխիւներու մէջ գտնուող փաստաթուղթերը, գիրքին հայերէն հրատարակութիւնը՝ *Մեծ փէրութիւնները, Օսմանեան կայսրութիւնը եւ հայերը ֆրանսական արխիւներուն մէջ 1914-1918*, Երեւան լոյս տեսաւ 2005ին:

Ակադեմիկոս Վարդգէս Միքայէլեան 2005ին հրատարակեց ռուսերէն եւ գերմաներէն *Կայսերական Գերմանիայի արխիւների վաւերագրերը Հայոց Ցեղասպանութեան մասին 1913-1919 թուականներին* գիրքը: Մամուլով յայտարարուած էր թէ կը ծրագրուէր նաեւ տեսերիզ մը պատրաստել, որ պիտի պարունակէր փաստաթուղթեր, լուսանկարներ եւ շարժանկարային ֆիլմ[20]:

ԱՄՆի Հայկական Համագումարը (AAA) եւ Հայ Ազգային Հիմնարկը (ANI) եւ ԱՄՆի Ցեղասպանութեան թանգարանը պատրաստեցին գերմանացի եւ աւստրիացի նկարահանողներու նկարած լուսանկարներու թուայնացուած տարբերակները հիմնականօրէն Տէր Զօրի, Տիգրանակերտի, Երզնկայի եւ Էրզրումի շրջանին: Հեղինակն էր դոկտ. Ռուբէն Ատալեան[21]:

ITE ընկերութեան «բազմավէպ» սթիւտիօն մամուլի հաղորդագրութեամբ մը 2006ին կը նշէր թէ «Հայոոց Մեծ Եղեռնի 1915-1923 միլթիմիտիա սկաւառակը ելած է եւ 2005ին արժանացած աշխարհի լաւագոյն մշակութային CD/DVD-ROMի»: Հոն կային վաւերագրեր, համաշխարհային մամուլի արձագանգները, հայ եւ օտարազգի ականատեսի վկայութիւններ, ժամանակագրութիւն, 1876էն սկսեալ մինչեւ Մեծ Եղեռնի համաշխարհային ճանաչման գործընթացի սկիզբը: Հոն տրուած են 500 լուսանկարներ, թրքական խոստովանութիւններ եւ ժամանակագրութիւն, մշակութային Եղեռն եւն.:

2024ին լոյս տեսաւ *Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան արխիւի փեղեկագիր մատեան. Երուսաղէմի հայոց պատրիարքարան, հտր. Ա.* 2500էջանոց գիրքը, աշխատասիրուած Լուսինէ Սահակեանի, Անի Ոսկանեանի եւ Անի Սարգսեանի կողմէ: Վաւերաթուղթերու այս հատորը իմի-

[19] «Հայոց Ցեղասպանութեան մասին նոր վկայութիւններ յայտնաբերուած», *Նոր օր*, 26 Ապրիլ 2008:

[20] «Նոր փաստաթղթեր գերմանական արխիւներից», *Երկիր*, 4 Մարտ 2005, էջ 11:

[21] «Ամերիկահայ կազմակերպութիւններ պատրաստած են Ցեղասպանութեան ելեկտրոնային շտեմարաններ», *Զարթօնք*, 3 Մայիս 2013:

ջիայլոց կը պարունակէ օսմանեան իշխանութիւններու հայերու բնաջնջման հրահանգներ եւ քեմալականներու իրագործած ոճրագործութիւնները:

2024ին նաեւ լոյս տեսաւ Թեսա Հոֆմանի *Քրիստոնեայ բնիկ ժողովուրդներու ցեղասպանութիւնը օսմանեան սուլթանութեան մէջ. հայեր, յոյներ, ասորաարամէացիներ/ասորիներ-քաղդէացիներ* 3 մասերէ եւ 8 միաւորներէ բաղկացած ուսուցման վաւերագրական հրատարակութիւն մը, որ կը պարունակէ 110 սեւ ու ճերմակ պատկերներ:

Մեր նպատակը այս գրութեամբ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած բազմաթիւ գիրքերու մատենագիտութիւնը տալ չէ, կը բաւականանանք վերեւի նշումներով, որնք յատկապէս առնչութիւն ունին վաւերաթուղթերու եւ լուսանկարներու:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Լուսանկարներու ստուգումը շատ կարեւոր է: Երբեմն թուրքերու կողմէ սերպերու սպանդէն կամ Լիբանանի 1914-18ի սովամահութեան կամ սովահարներու լուսանկարներ սպրդած են Հայոց Ցեղասպանութեան լուսանկարներու շարքին:

Միւս կողմէ, կարգ մը լուսանկարներու մէջ վերապրողներ կամ իրենց հարազատներ, մատնանշած են իրենց կամ իրենց հարազատին լուսանկարը: Որպէս օրինակ կը նշեմ երկու բաւականին ծանօթ եւ յաճախ օգտագործուած լուսանկարներ: Մին 1916ին Սուրիոյ Հորանի շրջանին մէջ աւանակի մը դիակին շուրջ հաւաքուած կիներու եւ փոքրիկներու լուսանկար մըն է: Լուսանկարին աջ կողմը վտիտ մանուկ մը կայ: Ատիկա Հայկ Կէօրէքճեանն է, որ ինքզինք ճանչցած է լուսանկարին մէջ: Լուսանկարը կը գտնուի Ծիծեռնակաբերդի Ցեղասպանութեան թանգարանին մէջ[22]: Լուսանկարը նկարահանողն է - ըստ այլ վկայութեան մը - Հասան Ամճան, որ Ճեմալ փաշայի կողմէ նշանակուած էր հայ բռնագաղթեալներու տեսուչ՝ ըստ հայթայթուած տեղեկութեան: Յետագային ան լուսանակարը յանձնած է Նեմրութ Մուսթաֆա փաշայի գլխաւորած արտակարգ զինուորական դատարանին[23]:

Երկրորդ լուսանկարը գերման կարմիր խաչին մէջ գործող Արմին Վեկնէրի կողմէ պատկերահանուած է: Հոն, կեդրոնը քալող կնոջ մասին անձամբ լսած եմ վկայութիւնը վեր. Յովհաննէս Գարճեանի զաւկին՝ Տաթեւին, թէ այդ կինը իր մօրենական մեծմայր՝ տիկ. Զարուհի Վարդանեանն է:

---

[22] «Վաւերագրական. Եղեռնի ճամփաներուն վրայ առնուած լուսանկարի մը պատմութիւնը», թրգմ. Յ.Թ., *Հարթօնք*, 28 Յունուար, 1983:

[23] «'Հայ գաղթական կանայք աւանակի դիակին շուրջ', լուսանկարի պատմութիւն», *Ազդակ*, 3 Ապրիլ 2015:

1916ին Սուրիոյ Հորանի շրջանին մէջ աւանակի մը դիակին շուրջ հաւաքուած հայ կիներու եւ փոքրիկներու լուսանկարը

Կեդրոնը քալող կինը վեր. Յովհաննէս Գարճեանի զաւկին՝ Տաթեւին, մօրենական մեծմայր՝ Զարուհի Վարդանեանն է

ՀՅՊԹԻՆ առայդ շատ զգուշ է եւ ամէն ջանք կը թափէ ստուգումերու համար: Օրինակ, ՀՅՊԹԻՆ այս գրութեան մէջ նշուած *Գաղթականաց Ալպոմի* լուսանկարներէն մէկուն բնական նկարը յայտնաբերած էր 2008ին: Նկարին ետեւը, թերեւս լուսանկարողին կողմէ ռուսերէն գրուած էր «Հայեր ողջ ողջ այրուած Շէյխալանի մէջ, թուրք զինուորներու կողմէ»: Նկարը թիւ 74 թիւը կը կրէր, որ ցուցանիշ մըն է, որ շատ աւելի լուսանկարներ կային ռուս զինուորներու կողմէ նկարահանուած, որոնցմէ ոմանք տպուած են վերոյիշեալ ալպոմին մէջ եւ վաւերական նկարներ են[24]:

[24] "Newly Revealed Original Photo of Armenian Genocide", *Նոր սերունդի ձայն*, Լոնտոն, Սեպտեմբեր-Դեկտեմբեր 2008, թիւ 117-20, էջ 48:

Լոս Անճելըս հրատարակուող *Նոր կեանք* շաբաթաթերթի 29 Յուլիս 2010ի թիւին մէջ (էջ 15) տեղեկութիւն մը կար թէ յայտնաբերուած էին Հայոց Ցեղասպանութեան լուսանկարներ, որոնք կ'արտացոլացնէին Վանի, Երզնկայի եւ Խնուսի մէջ կատարուած ջարդերն ու անոնց հետեւանքները եւ կը հրապարակէր ցարդ նախապէս չտեսնուած վեց լուսանկարներ, որոնք զետեղուած էին Ցեղասպանութենէն վերապրողի մը ձեռագիր յուշագրութեան մէջ: Նկարները պատկերահանուած էին 1915-16ին ռուսական զօրքերու յառաջխաղացքին ընթացքին ռուս զինուորականներու կամ հայերու կողմէ:

Անուանի լրագրող Րոպըրթ Ֆիսք անոնցմէ մին հրատարակելով *The Independent* թերթի 21 Հոկտեմբեր 2012ի թիւով, կը գրէր "photograph links Germany to 1915 Armenian Genocide" յօդուածը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՒ ՆՇՈՒՄ

Վերի իրողութիւնները նշելէ ետք կ'անցնինք թուումին մեր ունեցած տուեալներուն:

Ա) Թուրքիոյ դաշնակից Գերմանիոյ եւ Աւստրօ-Հունգարիոյ զինուորականներու կողմէ լուսանկարուած պատկերներէն զատ համաշխարհային Ա. պատերազմին չէզոք երկիրներու (Զուիցերիա, Դանիա, Շուէտ, ԱՄՆ մինչեւ 1917 եւն.) քաղաքացիներ Հայոց Ցեղասպանութեան ընթացքին լուսանկարներ պատկերահանած են[25]: Որպէս օրինակ նշենք Եաքոպսոնը, ամերիկացի Տէյվիսը, Սթենլի Քըրը, Քեթլին Քուքը եւ ուրիշներ: Վաւերագրական լուսանկարներ ունեցող ընկերութիւններ, ինչպէս Broom Bros, Wide World Photos, Radio Times, Hulton, Picture Alliance եւն. նկարներու վաւերականութիւնը հաստատելով անոնց տակ նշած են իրենց ընկերութիւններու անունները:

Վերեւ նշուած, 1914-18ին չէզոք պետութեանց արխիւները եթէ ցարդ չեն պրպտուած լրիւ, այդ կատարուելու է: Օրինակ՝ Ահարոնեանէն լսած եմ որ Շուէտի Ուփսալա քաղաքի համալսարանի նկուղներուն մէջ կային Հայոց Ցեղասպանութեան յատուկ արխիւներ (վաւերաթուղթեր, լուսանկարներ եւն.):

Բ) Հայաստանի Հանրապետութեան ֆիլմադարանի երբեմնի փոխտնօրէն Գարեգին (Գարիկ) Զագոյեան տողերս գրողին յայտնած էր թէ 1915-16ին երբ ռուսական բանակը մտած է Օսմանեան Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած Արեւմտեան Հայաստան, հոն զինուորականներ լուսանկարած,

[25] Գերմաններու կողմէ վերահսկուած Պերլին-Պաղտատ երկաթուղագիծի պաշտօնեայ Կարապետ Ապաճեանէն (1889-1970), որ յստակ *վեսիքա* (արտօնագիր) ունէր ազատօրէն շրջելու 1914-18ին Օսմանեան կայսրութեան մէջ, լսած եմ թէ զուիցերիացի գործակից մը Պոնտի մականունով Հայոց Ցեղասպանութեան նկարներ լուսանկարած է: Սոյն *վեսիքան* Ցեղասպանութեան թանգարանին յանձնած եմ:

նաեւ ժապաւէնի առած են Մեծ Եղեռնի հետքերը: Ան պնդեց թէ ատոնք կը գտնուէին Քրասնակորսք քաղաքի ռուսական կինօ-արխիւ: Սակայն իր տրամարութեան տակ պիւտճէ չկար որ կրկնօրինակներ պատրաստէր: Այդ հարցին մասին արտայայտուեցայ Ցեղասպանութեան թանգարանի ատենի տնօրէն Լաւրենտի Բարսեղեանին, որ հերքեց այդ: Ապա տեղեկացայ որ անձնական հարցերով Զագոյեան եւ Բարսեղեան իրարու հակադրուած եւ գժտուած էին:

Գաղթականաց ալպոմի լուսանկարներէն անկախ, ռուս զինուորականներու կողմէ նկարահանումներ ըլլալու վկայութիւններ կան: Նշենք անոնցմէ մէկը: *Քաւքազսքոյէ Սլովօ* ամսագրի 22 Յունուար 1917ի թիւին մէջ տպուած են կովկասեան սակրաւոր գումարտակի հրամանատարներէն գնդապետ Զ.ի վկայութիւնները Մուշ քաղաքի շրջանի գիւղերէն մէկուն մէջ եղած սպանդի մասին: Անոնք սարսափելի բեկորներ կը գտնեն՝ կանանց եւ երեխաներու գանկեր եւ կմախքներ, եւ հոն նշուած է թէ սպան լուսանկարած է այդ ահաւոր տեսարանը[26]:

Ռուսական մամուլի 1915-16ի հրատարկութեանց մէջ պէտք է ըլլան ջարդի հետեւանքներու լուսանկարներ: Պէտք է պրպտել՝ եթէ արդէն իսկ կատարուած չէ:

Գ) Զմմառի հայ կաթողիկէ վանքի արխիւատունը ունի Հայոց Ցեղասպանութեան անտիպ նկարներ: Այս իրողութեան տեղեակ էինք 1969ին: 2016ին Զմմառեան միաբանութեան ատենի մեծաւոր Միքայէլ Թ.Վ. Մուրատեան *Թելէ լիմիէր* պատկերասփիւռի կայանէն ունեցած իր հարցազրոյցին մէջ կը նշէր. «ունինք Հայոց Ցեղասպանութեան անտիպ լուսանկարներ»[27]:

Դ) Հայ մարզիկ մը՝ Վահրամ Ս. Փափազեան[28] իր *Սէր, սէր, սէր* ինքնակենսագրական գիրքին մէջ, լոյս տեսած 1962ին, Պէյրութ, գրած է թէ «*ինչպէս ձեռք անցուցինք 1915ի հայկական ջարդերու ժապաւէնները*»: Ան կը

---

[26] Սուրէն Մանուկեան, «Հայոց Ցեղասպանութիւնը ռուս զինուորի աչքերով», *Ազդակ, Հայկական Ցեղասպանութեան 97ամեակի բացառիկ*, 24 Ապրիլ 2012, էջ 170-71:

[27] Սօսէ Փիլաւճեան, «Զմմառեան միաբանութեան մեծաւոր Միքայէլ Թ.Ծ. վրդ. Մուրատեանի հարցազրոյցը *Թելէ լիմիէր* պատկերասփիւռի կայանէն», *Ազդակ*, 5 Փետրուար 2010, էջ 6:

[28] Վահրամ Ս. Փափազեան.- պոլսահայ մարզիկ, հրապարակագիր, գիրքի հեղինակ: Անդամ պոլսահայ Արտաւազդ ակումբին: Մասնակցած է Պոլսոյ հայկական ողիմպիական խաղերուն 1911-14 եւ 1912ի Սթոքհոլմի ողիմպիականին, ուրիշ հայու մը հետ, ներկայացնելով Օսմանեան կայսրութիւնը: Ապրած է Յունաստան, Լիբանան, Սուրիա եւ ԱՄՆ: Գրած է Պոլսոյ *Ազատամարտ* եւ *Ճակատամարտ*, ապա՝ Աթէնքի *Նոր օր*, Լիբանանի *Ազդակ*, (1934-37), Գահիրէի *Յուսաբեր*, Լիբանանի *Առաւօտ* (1938-40) թերթերուն մէջ: 1946ին եղած է *Արարատի* խմբագիր, 20 օր, ԱՄՆի մէջ աշխատակցած է *Պայքարին* (1952-58):

նշէ թէ Կ. Պոլիս ապրող ամերիկացի լրագրող Հերթիէն պատահմամբ լսած է թէ գերմանացիները հայկական կոտորածներու, այսինքն ցեղասպանութեան, բազմաթիւ տեսարաններ նկարահանած են, որոնց ժապաւէնները կը գտնուէին Պայազէտի ռազմական մթերանոցին մէջ: Գերմանացիք զանոնք հոն լքած էին համաշխարհային Ա. պատերազմէն ետք: Հերթի ռազմական մթերանոցի թուրք սպային մօտեցած եւ ըսած էր, թէ կ'ուզէր թուրքերու օգտակար ըլլալ «*անոնցմէ ստանալով փաստաթուղթեր հայերու կողմէ թուրքերու դէմ կատարուած հալածանքներուն եւ ջարդերուն շուրջ*»: Ասոր վրայ, «*թուրք սպան խոստացած էր տալ կարգ մը ժապաւէններ*»: Թուրք սպան արտօնագիր մը կու տար 24 ժամուան համար եւ նշուած օրը Հերթի երկու ընկերակիցներով (որոնցմէ մին՝ Փափազեանը), Պայազէտի մթերանոցը երթալով ձեռք ձգած էր ֆիլմերը: Բերայի հայ ծանօթ լուսանկարիչ մը 2000 մեթրէ աւելի եղող շարժապատկերին մէկ օրինակը յաջորդ օր կը յանձնէր Հերթիի, որ յունական փոքր նաւով մը կը հեռանար:

Ինչի մասին էր ֆիլմը: Փափազեան կը պարզէ: «*Տեսարանը հազիւ երկու տարու մօրը ձեռքէն խլուած 2 տարեկան աղջիկ երեխայի մը բռնաբարումը կը ներկայացնէր, միաժամանակ երկու ոճրագործ թուրքերու կողմէ, հրացանը ուսերնին կախուած պատառոտուն ցնցոտիներով*»:

Հերթի Աթէնքի վրայով Լոնտոն կ'երթայ եւ ժապաւէնը կը յանձնէ Ճէյմս Պրայսին: Յետոյ Ամերիկա երթալով այդ մասին կը գրէ ամերիկեան թերթերու մէջ 1919-20ին: Իր գրածները Փափազեան թարգմանաբար կը հրատարակէ Պոլսոյ *Ճակատամարտ*ին մէջ: Լոնտոնի *Թայմզ* եւ *Տէյլի Թելեկրաֆ* թերթերը մէկէ աւելի յօդուածներ կը գրեն: Ֆիլմը կը ցուցադրուի շարժանկարի ցուցասրահներու մէջ, բայց տեղի կու տայ հանրային դժգոհութեան թէ նախազգուշացում չէ եղած ազդարարելու որ «*զանոնք դիտելը արգիլուած է հիւանդներու, դիւրազգածներու եւ երիտասարդ տարրին*»: Ֆիլմը ցոյց տրուած է արքայական պալատին, Համայնքներու եւ Լորտերու տան մէջ, 1927ին ցուցադրուած է հանրութեան՝ Պրիւքսէլի մէջ: Թուրքերը բողոքած են որ «շինծու» էին ատոնք: Ֆիլմը ապա անյայտացած է: Փափազեան 1962ին կը խորհէր թէ ֆիլմը «*տակաւին կը գտնուի Հոլիվուտի դարակներուն մէջ*»[29]: Ցարդ այդ ժապաւէնը չէ գտնուած եւ որքան գիտենք՝ հետապնդող չկայ: Անհրաժեշտ է յամառօրէն հետապնդել:

Առաջին համաշխարհային պատերազմի շրջանին վաւերագրական կարճամեթրաժ ժապաւէններ նկարահանուած են եւրոպական լրագրական գործակալութիւններու կողմէ: Պէտք է լրջօրէն պրպտել եթէ անոնց մէջ կան Հայոց Ցեղասպանութեան առնչուած ժապաւէններ, յայտնապէս Մուսա Տաղէն փրկուածներու փոխադրութեան, տեղաւորումին եւ վրանաքաղա-

[29] Վահրամ Ս. Փափազեան, «Ի՞նչպէս ձեռք անցուցինք 1915ի հայկական ջարդերու ժապաւէնները», *Ազդակ*, 13 Մայիս 2015:

քին մասին, կամ՝ բերանացի վկայութիւններ՝ փախստականներէ եւ վերապրողներէ[30]:

Հոլիվուտեան արտադրութիւն Օրորա Մարտիկանեանի *Ravished Armenia* ժապաւէնէն փրկուած 19 վայրկեաննոց ֆիլմը մեծ ազդեցութիւն կը գործէ այսօր ժապաւէնով պարզելու կատարուած եղեռնին ահաւորութիւնը: Որքան աւելի պիտի ըլլայ ազդեցութիւնը իսկական վաւերագրական - հոգ չէ թէ կարճամեթրաժ - ժապաւէններու, եթէ անոնք կան, տակաւին փնտռուին ու գտնուին: Ատենին շարժանկարի սրահներու մէջ, կը ցուցադրուէին քաղաքական, ընկերային եւն. անցնող շաբաթի կարճամեթրաժ ֆիլմերը. Actualité Francaises, Pathe, ամերիկեան եւ բրիտանական նման ֆիլմեր: Պէտք է անոնց արխիւները պրպտել:

Ե) Միսաք Քելէշեան (ԱՄՆ), որուն ես ալ օժանդակած եմ իր չունեցած լուսանկարներէն իրեն տալով, մեծ հաւաքածոյ մը ունի: Քելէշեանի հաւաքածոյէն լուսանկար մը կու տամ այս գրութեանս հետ: Լուսանկարը շատ յստակ չէ, բայց ցոյց կու տայ ոճրագործները եւ զոհերը:

ՀՅՊԹԻի վերջին տարիներու, (2018էն օրս) հրատարակութիւնները տեսած չեմ եւ նաեւ տեղեկութիւններ չունիմ իրենց ծրագրերուն առնչութեամբ:

---

[30] 24 Ապրիլ 2015ին, You tubeի վրայ արաբերէնով կարճամեթրաժ ֆիլմ մը տեսայ՝ Րանտա Սալամ Նաիմի կողմէ պատրաստուած, ընկերակցութեամբ Րոժէ Պաաքլինիի եւ *մոնթաժիստ* Մարիա Հուսարիի: Հոն անդրադարձ կար Իտալիոյ Պոլոնիա քաղաքի 2023ի ֆիլմի փառատօնին: Ժապաւէնին մէջ կ'ըսուէր թէ Միրիամ Լաւինսքի Ամերիկայի Քոնկրէսի գրադարանէն գտած էր Հայոց Ցեղասպանութեան ժամանակաշրջանին վերաբերող 5 վայրկեաննոց ժապաւէն մը՝ «Armenia the Cradle of Humanity Under the Shadow of Mount Ararat» խորագրեալ, առաւելաբար տեղահանուածներ ցոյց տուող, նաեւ՝ ֆրասնական բանակին կողմէ Եգիպտոսի մէջ հայ տեղահանուածներու (շատ հաւանաբար ճեպէլմուսացիներու) մասին 5 վայրկեան տեւող ժապաւէնի մը, ուր նոյնպէս անդրադարձ կար 4 վայրկեան տեւող Armenia ֆիլմէն հատուածի մը:

Արդ, եթէ Հայոց Ցեղասպանութեան 1894-1923 ժամանակաշրջանը ընդգրկող ալպոմ-յուշամատեան մը լոյս չէ ընծայուած կամ ծրագիրի ընթացքին մէջ չէ, շատ անհրաժեշտ կը գտնեմ նման գործի մը հրատարակութիւնը: Իմ տրամադրութեան տակ գտնուող նիւթեր (լուսանկար, վաւերաթուղթ, օտար եւ հայ մամուլ եւն.) աւելի քան 15 քիլօ կշռող նուիրած եմ այս կեդրոնին եւ տակաւին ունիմ տրամադրելիք նիւթեր:

THE UNREALIZED PLAN OF A MEMORIAL ALBUM DEDICATED TO THE ARMENIAN GENOCIDE AND THE CASE OF DOCUMENTARY FILMS AND PICTURES OF THE GENOCIDE (SUMMARY)

ZAVEN MESSERLIAN

The author of the article reveals that the editor-in-chief of *Zartonk* daily of Beirut, Kersam Aharonian (1916-1991) proposed to him in 1969 to co-author a memorial album dedicated to the Armenian Genocide. The author wrote 60 letters and received 40, and collected pictures from published magazines, books, photographs taken by Armin Wegner and others. Aharonian secretly got pictures from Soviet Armenia. All in all, 297 pictures were collected. The layout and cover of the proposed album were ready in 1971. But the final work was not accomplished, not for lack of funds, but due to the unstable political situation in Lebanon in May 1973 and, later on, the Civil War. The author of the article provides the plan of the memorial album and other relevant information.

The author then writes about the authenticity of the pictures from the time of the Genocide and mentions that German and Russian forces in Turkey took pictures of and filmed the massacres and the consequences of the massacres and that these were found in the German archives as well as Russian publications of the period. He then relates how the Armenian athlete Vahram S. Papazian, along with American journalist Herty, secured German documentary films of the Genocide, which were shown to the public in the UK and Belgium.

20ՐԴ ԴԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԷՍԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԷՆ ՄՈՒՍԹԱՖԱ ՖԱՐՐՈՒԽ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb



ՄՈՒՏՔ

1920-90ականներուն, Լիբանանը կը հանդիսանար Սփիւռքի ամենախիտ հայութիւնը ունեցող տարածքը: Երկրին համայնքապետական դրութիւնը, լիբանահայերու աշխուժ գործունէութիւնը, համարկումը՝ երկրին առեւտրաարդիւնաբերական, գիտատնտեսական եւ մշակութային կեանքին պատճառ դարձած է որ հայութիւնը առհասարակ մեծ ճանաչողութիւն ունենայ Լիբանանի ոչ-հայ բնակչութեան կողմէ, որոնցմէ շատեր առնչուած են լիբանահայերու հետ՝ իրենց կեանքի զանազան հանգրուաններուն:

Այս առումով բացառութիւն չէ 20րդ դարու առաջին կէսի Լիբանանի մեծագոյն գեղանկարիչներէն Մուսթաֆա Ֆարրուխը: Յօդուածը կը ներկայացնէ մեծանուն այս գեղանկարիչին շփումները՝ լիբանահայ տարբեր անձնաւորութիւններու հետ: Շատ հաւանական է որ Ֆարրուխ շփուած ըլլայ նաեւ այլ լիբանահայերու հետ՝ պարագաներու բերմամբ, կամ դիպուածաբար: Այստեղ մենք կ'արձանագրենք գեղանկարիչին հաւաստի շփումները լիբանահայերու հետ:

Մուսթաֆա Ֆարրուխ ծնած է 1901ին, Պէյրութի աղքատիկ թաղամասերէն Պասթայի մէջ: Հայրը՝ պղնձագործ, կը մահանայ 1906ին: Գեղանկարչութեան հանդէպ Ֆարրուխի սէրը կը դրսեւորուի մանուկ հասակէն. անոր դպրոցական ուսուցիչը 1912ին զայն կը հրաւիրէ գծանկարներով աշխատակցելու իր հիմնած *ԱլՄուսաուիր* թերթին: Ֆարրուխ կը շարունակէ դպրոցական կրթութիւնը (որ կը սահմանափակուէր արաբերէն գրել-կարդալու եւ Քուրանի համարներ անգիր ընելու մէջ) մինչեւ Ա. աշխարհամարտ, երբ պէյրութաբնակ գերման լուսանկարիչ Կոլ Լենտըի աղջիկը՝ Կերթրուտ կը համակրի պատանիին գործերուն եւ կ'առաջարկէ գծագրութիւն դասաւանդել: Շատ արագ կը տարածուի պատանի գեղանկարիչին հռչակը. Պէյրութի մեծազդեցիկ պէյեր կը փափաքին որ գեղանկարէ զիրենք: Իսկ երբ

Ճեմալ եւ Էնվէր Պէյրութ կ'այցելեն, Ֆարրուխ կը գծանկարէ զիրենք ու կը ներկայացնէ անոնց:

1916-24՝ Ֆարրուխ կ'աշակերտէ լիբանանցի յայտնի գեղանկարիչ Հապիպ Սրուրին (1860-1938): Վերջինս կը հովանաւորէ զինք ու կը քաջալերէ որ ուսումը շարունակէ Հռոմի մէջ: Ֆարրուխ, 1921ին առաջին անգամ կը մասնակցի հաւաքական ցուցահանդէսի՝ Պէյրութի Նահատակաց հրապարակի պարտէզին մէջ: 1924ին կ'իրականանայ Իտալիա գեղանկարչութիւն ուսանելու իր երազը. գծանկարելով խնայած դրամով ան կը մեկնի Իտալիա: Նախ կը մտնէ Scuola Libera, ապա 1925ին յաջողելով մուտքի քննութեանց, կ'անցնի Reggio Accademia di Belle Arti, ուր ուսուցիչ կ'ունենայ Անթոնիօ Քալքանիատորան: 1926ին վկայուելէ ետք, կը մասնակցի տեղական *պիէնալէ*ներուն, նոյն տարուան ամռան կ'անցնի Փարիզ, կ'ըմբոշխնէ արուեստի թանգարաններն ու ցուցասրահները, եւ տարեվերջէն առաջ կը վերադառնայ Պէյրութ, ուր առեւտրական շուկաներէն Սուք Այասի մէջ կը հաստատէ իր փոքրիկ խանութ-ցուցադրատեղը: Նոյն տարին, Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ կու տայ անհատական ցուցահանդէս, ներկայացնելով դիմանկարներ, գիւղանկարներ, գիւղացիներու նկարներ եւ բնանկարներ՝ աւելի քան 80 գործ: 1929ին կը մեկնի Փարիզ, կը մասնակցի 1930ի գեղանկարչական սալոնին, ապա ամառը կ'անցնի արաբական Սպանիա՝ Անտալուզիա եւն.:

1931ին դարձեալ կը մասնակցի Փարիզի սալոնի տարեկան ցուցահանդէսին, ապա Իտալիոյ վրայով տարեվերջին կը վերադառնայ Լիբանան, իր արուեստանոցը կը փոխադրէ Պասթայի իր ծնողական տունը, ուր եւ կը ստեղծագործէ մինչեւ 1956: 1932ին կու տայ նոր ցուցահանդէս մը, իսկ 1935ին կ'ամուսնանայ ու կը վերսկսի դասաւանդել Ամերիկեան համալսարանին եւ այլ կրթարաններու մէջ, կը մասնակցի Եունեսքոյի 1948ի Պէյրութի աշնանային ցուցահանդէսին:

1952ին Ֆարրուխ կը հիւանդանայ արեան քաղցկեղով, սակայն կը շարունակէ ստեղծագործել: 1956ին կը պարգեւատրուի Լիբանանի արժանեաց շքանշանով՝ նախագահ Քամիլ Շամունի ձեռամբ. կը մահանայ 16 Փետրուար 1957ին:

2002ին, Պէյրութի Սորսոք թանգարանը կը կազմակերպէ Ֆարրուխի յետմահու մեծագոյն ցուցահանդէսը եւ այդ առթիւ կը հրատարակէ իր գեղանկարներէն կարեւոր փունջ մը՝ առանձին հատորով[1]:

Ֆարրուխի երանգապնակը կ'ընդգրկէ Լիբանանի բնութեան, մարդկային, էթնիք, համայնքային, ընկերային, դասակարգային, այրերու եւ կանանց, կրօնաւորներու, շինութիւններու, Պէյրութի, Պեքաայի, Լեռնալիբանանի պատմական վայրերու (Պաալպէք, Պէյթէտտին, Ճիպէյլ եւն.), գիւղե-

[1] Ցուցահանդէսը կազմակերպած էր Սիլվիա Աճէմեան, իսկ գիրքին աւելի քան 165 լուսանկարներուն մեծամասնութիւնը նկարած էր Յակոբ Գալնըճեան:

րու, գիւղացիներու, ժողովրդային շուկաներու, ծովափնեայ տեսարաններու, կառապաններու, հողագործներու, արհեստաւորներու, լիբանանեան պտղատեսակներու (նաթիւր մորթ նկարներով), դիմանկարներու, պատմանկարներու (թէ՛ խալիֆայական եւ թէ՛ Լեռնալիբանանի էմիրութեան շրջանէն), անտալուզեան հոյակերտերու, Փարիզի, Իտալիոյ, Պոլսոյ, Դամասկոսի վերաբերող լայնապարփակ ծիր մը՝ աւելի քան 1000 ստեղծագործութիւն: Կարծէք՝ ան ճիգ չէ խնայած ընկալելու ամբողջ Լիբանանը եւ զայն վերարտադրելու իր վրձինին միջոցով, թերեւս՝ վերարտադրած ըլլալու համար իր Լիբանանը, նոյնիսկ՝ իր Աստուածածինն ու միջինարեւելքցի իր Յիսուսը...: Կը թուի՝ իր սուր նկատողութենէն մարդկային ոչինչ վրիպած ըլլալ:

Ֆարրուխ ունի նաեւ երգիծանկարներ, որոնցմէ շատեր քաղաքական բնոյթ կը կրեն եւ թիրախ ունին մասնաւորաբար՝ խաբեբայութիւնը, կաշառակերութիւնը, անարդարութիւնը, իշխանութեանց խտրականութիւնը, կողմնակալութիւնը, անտարբերութիւնը, ընկերութեան յետամնաց պահպանողականութիւնը, տգիտութիւնը: Ֆարրուխ հեղինակն է նաեւ լիբանանեան շարք մը դրոշմաթուղթերու: Պատանութեան տարիներուն ան օգտագործած է մատիտը, կարմիր կաւիճը, ապա ջրաներկն ու իւղաներկը:

Ֆարրուխի գեղանկարները շեշտուած ու ընդգծուած էութիւն կը բովանդակեն. հոն յստակօրէն կ'երեւին իր պատգամները: Արդարութեան, ճշմարտութեան, լուսաւորութեան գաղափարները մնայուն նիւթերն են Ֆարրուխի գեղանկարներուն: Մանկութեան ու պատանութեան օրերու իր միջավայրին կաշկանդումներուն դէմ ըմբոստացած Ֆարրուխ, այդ տարիներուն իսկ կը գոյացնէ իր աշխարհընկալումը՝ ընդդէմ խաւարամտութեան, նախապաշարումներու, կեղծ առաջնորդներու, բռնութեանց, եւ կը լծուի պատկերել լուսաւորական, յառաջդիմական, ազատական գաղափարներ ու ապրումներ յառաջացնող նկարներ: Այսպիսի մտայնութեան եւ արեւելումի տէր արուեստագէտին համար զարմանալի եւ անընդունելի պիտի չթուէին մերկանկարները, որոնց թիւը քիչ չէ իր ստեղծագործական երկերուն մէջ, ընդհանրապէս իր ստեղծագործական ողջ երթին ընթացքին: Պէյրութեան յետամնաց մտայնութեան դէմ ծառացած այս երիտասարդը Իտալիոյ եւ Ֆրանսայի իրականութիւնները տեսնելով, աւելի՛ եւս կ'արմատաւորէ իր մէջ պէյրութեան ընկերութիւնը լուսաւորելու, ազատականացնելու առաքելութիւնը՝ գեղանկարչութեան ճամփով: Ի՛նք է որ կը գեղանկարէ Պէյրութի մէջ շղարշը նետող առաջին իսլամ կինը, ցուցահանդէսներուն կը ներկայացնէ մերկանկարներ, առանց խտրութեան կը նկարէ իսլամ ու քրիստոնեայ կրօնաւորը, աղօթողն ու ազատականացած կինը, կը պատգամէ որ մարդ արարածին կեանքը չի նշանակեր լոկ ուտել-աշխատիլ-ամուսնանալ-զաւակ բերել եւ թէ կեանքը շա՜տ աւելի ընդգրկուն է քան այն ինչ մեզի կը պարտադրուի ընկերութեան ու միջավայրին կողմէ...:



L'Arménien Errant (ارمني متشرد), 1933, ջրանկար, 35x25 սմ[2]

ՄՈՒՍԹԱՖԱ ՖԱՐՐՈՒԽ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ֆարրուխի կատարած դիմանկարներու երկար շարքին մէջ յատկանշական է իր հոգեբանական մօտեցումը: Ան յաջողած է բնորդին արհեստին-աշխատանքային ասպարէզին ազդեցութիւնը դրոշմել ենթակայի դէմքին վրայ. մսավաճառը՝ դարձած է մսագործ, կառապանը՝ ունեցած է կարաւանի կենդանիին աչքերուն նմանակը եւն.: Այս առումով ուշագրաւ է իր ջրան-

[2] *Moustafa Farroukh 1901-1957 (Exposition organisée par le Musée Nicolas Sursock, Janvier-Février 2003*, տպ. Շեմալի եւ Շեմալի, Պէյրութ, 2002, էջ 105, նկար 79:

կարած հայու դիմանկարը, զոր կատարած է 1933ին: Ան թափանցելով հայուն ներքինին, լուսարձակի տակ առած է անոր ամուր, տոկուն, բայց նաեւ ցաւոտ խորքը, գաղթականի անցեալը: Անոր մէջ տեսնելով տոկունութիւն եւ իւրայատուկ վեհութիւն, ջրանկարը չէ կոչած "գաղթական", այլ՝ «թափառական հայը», ընդգծելով հայուն պատմական (եղեռնեան) ճակատագիրը: Ան 1930ականներուն Լիբանանի մէջ հայը ներկայացուցած է իբրեւ արժանապատուութեան տէր, ազնիւ, ցաւոտ անցեալ ունեցող անհատ:

Յիրաւի, փոքր համեմատութիւն մը հայու դիմանկարին ու խեղճուկրակ մուրացիկի գեղանկարին միջեւ, կը բացայայտէ Ֆարրուխի վերաբերումը երկուքին հանդէպ: Մուրացիկին խեղճութիւնը, յուսաբեկութիւնը, տապալած ըլլալը, հայեացքին ուղղութենէն ակնկալուող օգնութիւնը կը հակադրուին հայու դիմանկարին, ուր կա՛ն կսկիծը, ցաւը, կորուստը, վիշտը, հարուածներուն ծանրութիւնը, բայց չկան ընկրկումը, բեկումը: Կայ վճռակամութիւնը իր կեանքը վերակերտումի ընթացքին դրած պինդ հայուն...:

Յուսալով որ կարելի է աւելին իմանալ այս նկարին մասին, դիմեցինք Ֆարրուխի պէյրութաբնակ ութսունութամեայ զաւկին[3]: Ան՝ Հանի Ֆարրուխը, պատմեց իր հօր՝ լիբանահայերու հետ ունեցած յարաբերութեանց մասին: Ստորեւ հատուածներ՝ անոր հաղորդածէն:

Մայրս ինծի պատմած է որ երբ 1924ին Ֆարրուխ Իտալիա ճամփորդեց նաւով - որ ուղղուեցաւ Աղեքսանդրիայէն Իսթանպուլ, ապա Նափոլի – իրեն հետ ունէր միջնորդագիրը բարեկամի մը, որուն եղբայրը Պքերքէի[4] դեսպանն էր Հռոմի մէջ: Այս ձեւով ան բարեկամացաւ Հռոմ բնակող Շտիտ սրբազանին: Վերջինիս կատարած իր այցելութեանց ատեն Ֆարրուխ ծանօթացաւ ապագայ կարտինալ Աղաճանեանին[5], եւ դարձան

[3] Շնորհակալութիւն՝ դոկտ. Աճէմեանին, որ կարելի դարձուց այս հանդիպումը: Հարցազրոյցը կատարեցինք 7 Մայիս 2025ին, Պէյրութի իր բնակարանին մէջ:

[4] Մարոնիթ Եկեղեցիի կրօնական կեդրոնավայրը Լիբանանի մէջ:

[5] Գրիգոր Պետրոս Աղաճանեան.- (Ղազարոս Աղաճանեան, 18 Սեպտեմբեր 1895, Ախալցխա, 16 Մայիս 1971, Հռոմ, Իտալիա), Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ կաթողիկոս պատրիարք (1937-1962), 1946ին՝ կարտինալ: 1934ին, իբրեւ պապական նուիրակ, առաջին անգամ Լիբանան կ'այցելէ: Աւետիս Պետրոս ԺԴ. Արփիարեան պատրիարքի վախճանումէն ետք, 1937ին, կ'ընտրուի պատրիարք, ստանալով

եռեակ բարեկամներ: Կեանքի վերջին չորս-հինգ տարիներուն Ֆարրուխ հիւանդացաւ արեան քաղցկեղով: Զինք բուժող բժիշկներուն շարքին էին հայ բժիշկներ: Հիւանդութեան օրերուն, անգամ մը Ֆարրուխ կը հանդիպի կարտինալ Աղաճանեանին, որ նկատելով անոր առողջական վիճակը կը հարցնէ իր որպիսութիւնը: Ֆարրուխ կը յայտնէ իր հիւանդութեան մասին: Կարտինալը զինք շաբաթով մը կը հրաւիրէ Զմմառու վանք՝ հանգստանալու: Ֆարրուխ կը մեկնի Զմմառ ուր կը մնայ շաբաթ մը եւ կը գեղանկարէ «Զմմառու Աստուածամայրը» գեղանկարը:



Ֆարրուխի գեղանկարած միջինարեւելքցի եւ Զմմառու վանքի Աստուածածինները

1935ին, երբ Ֆարրուխ կը վերսկսի դասաւանդել Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ, իր աշակերտներէն մին բժշկութեան ուսանող էր, Ճեպէճեան՝ Հալէպէն[6], որ շատ կը սիրէր գեղանկարչութիւն, անոր շատ օգտակար եղաւ: Երկուքը մնայուն կապի մէջ էին մինչեւ Ֆարրուխի մահը: Ճեպէճեան յետոյ Հալէպի մէջ հիւանդանոց բացաւ[7]:

Համալսարանին մէջ փայլուն հայ բժիշկներ կային: Զինք բժշկողներուն շարքին երկու հայեր կային՝ տոքթ. [Յովսէփ] Ենիգոմշեան[8] եւ տոքթ. Եր-

Գրիգոր Պետրոս ԺԵ. անունը: 1962ին կը հրաժարի պատրիարքութենէն եւ կը մնայ Հռոմ, Լեւոնեան վարժարանին մէջ:

[6] Ծնած է Հալէպ, 1909ին: Իբրեւ բժիշկ վկայուած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն, 1934ին: Մահացած է Հալէպ 2001ին:

[7] Պէտք է ըլլայ 1934, որովհետեւ Ճեպէճեան 1934ին կ'աւարտէ ուսումը:

[8] Ծնած է Քիլիս, 1895ին: Իբրեւ բժիշկ վկայուած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն, 1918ին: Մահացած է Ուաշինկթըն, 1994ին:

ուանդ Ճիտէճեան[9]: Տոքթ. Ճիտէճեանի խնդրանքին վրայ, Ֆարրուխ գծած էր անոր մօր դիմանկարը: Դժբախտաբար չունիմ այս գեղանկարին լուսանկարը:

1954ին, տոքթ. Խալիտիի տան մէջ, ընդունելութեան պահուն, Ֆարրուխ արագօրէն կը գծանկարէ տոքթ. Երուանդ Ճիտէճեանը

Ֆարրուխ 1950ի ամառը Ալէյ, Խան Ըլ-Շէյխ կոչուած վայրը ելաւ հանգստանալու: Հոն իր դրացին էր թուրք գեղանկարիչ Սատի Սինեւին, որուն կինը հայ էր՝ Արաքսի Թոփուզխանեան: Թոփուզխանեանները գորգի մեծ վաճառականներ էին: Ֆարրուխի միւս դրացին, ճարատարապետ եւ գեղանկարիչ Մարտիրոս Ալթունեանն էր[10], որ Խան Ըլ-Շէյխի մէջ երկյարկանի սեփական տուն ունէր: Ի՛նք յատակագծած է Պէյրութի խորհրդարանը, Տեպպաս հրապարակի Ս. Եղիա եկեղեցին, Պքերքէի մէջ յոյն կաթոլիկներու եկեղեցին եւն.: Ալթունեան վարպետ էր ծովանկարներու մէջ: Երկուքով կ'երթային գեղանկարելու: Յետոյ Ֆարրուխ նկարեց Ալթունեանը: Կը տեսնես նկարին մէջ արտայայտչապաշտութիւն կայ: ...Հայերը արուեստագէտ ու երաժիշտ են, կը սիրեն մշակոյթը, լուրջ ժողովուրդ են եւ հաւատարիմ, ուղղամիտ են, եթէ հետերնին լաւ ըլլաս՝ հետդ լաւ կ'ըլլան... իսկ եթէ հետը լաւ չըլլաս՝ կը հեռանայ քեզմէ...»: .

[9] Ծնած է Հալէպ, 1905ին: Իբրեւ բժիշկ վկայուած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն, 1928ին: Մահացած է 1989ին:

[10] Մարտիրոս Ալթունեան (Պրուսա 1889-Պէյրութ, 1958).- Հայ ճարտարապետ, աւարտած է Փարիզի Գեղարուեստից ազգային բարձրագոյն դպրոցը, 1919ին հաստատուած է Պէյրութ:

..Ֆարրուխի «Թափառական հայը» սքանչելի գործ մըն է: Ֆարրուխ կը գեղանկարէր արտայայտութիւն ունեցող անհատներն ու անձերը, անոնք որոնք մարդկային իրավիճակ մը կը ներկայացնեն: Մարդուն դէմքը երբեմն կը ներկայացնէ քաղաքակրթութեան պատմութիւնը»:



Ճարտարապետ Մարտիրոս Ալթունեանին դիմանկարը, ֆրանսերէն մակագրուած՝ Ֆարրուխի կողմէ՝ «A mon ami Altounian», 1946, իւղանկար, 47.5x32.5 սմ[11] եւ՝ տոքթ. Ենիգոմշեանի գծանկարը, արաբերէն մակագրուած՝ Ֆարրուխի կողմէ՝ «Տոքթ. Ենիգոմշեան. նուէր հիւանդանոցին մէջ, 1954»

MUSTAFA FARROUKH, ONE OF THE MOST RENOWNED LEBANESE PAINTERS OF THE FIRST HALF OF THE 20TH CENTURY, AND THE ARMENIANS

(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

The paper revolves around Mustafa Farroukh (1901-1957), one of the most renowned Lebanese painters of the first half of the 20th century, and his relations with the Armenians.

Basing the article on interviews with the painter's son, the memoirs of Farroukh and his paintings, the author notes that one of Farroukh's students at the American University of Beirut (AUB) was the renowned doctor Robert Djebedjian, who was the first to found an eye clinic in Aleppo. Farroukh had been on good terms with the Catholic Armenian bishop Aghadjanian (later Cardinal), who hosted him in the Catholic Armenian

[11] *Moustafa Farroukh*, նկար 34, էջ 163: Նկարին իբրեւ բացատրագիր նշուած է. «Ալէյի մէջ ամառանոցային դրացիներ՝ Մարտիրոս Ալթունեան եւ Մուսթաֆա Ֆարրուխ, Սաատի Սինեւիի հետ մտքի բարեկամներ էին երկար տարիներ» (նոյն, էջ 163):

Monastery of Bzemmar, where Farroukh painted the Virgin Mary. Farroukh had befriended the renowned Lebanese architect Mardiros Altounian, who was his neighbor in Aley. During the 1950s Farroukh fell ill with pneumonia and became the patient of two AUB Armenian doctors, Yenikomshian and Yervant Djidedjian.

However, the most interesting of Farroukh's encounters with Armenians was in 1933, when he painted "L'Arménien Errant", The Armenian Refugee.

In analysing this watercolor, the author notes that unlike in some other paintings, Farroukh does not depict the Armenian in a wretched outfit, nor in a pitiful or a begging condition. Rather, the painter portrays the Armenian as a victim who has not lost faith in himself, is confident and determined notwithstanding the agonies and pain he has faced.

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Սեդա Գալստեան **sedagalstyan@yahoo.com**

Ծնած է Երեւան, 1957ին: 1980ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը: 1992էն ցայսօր Հայաստանի Պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի վարիչն է: Հրատարակութեան պատրաստած է Ա-Դոյի, *Հայութեան երկունքը* (2014) հատորը, համահեղինակն է (Սահակ Թորոսեանի հետ) *Հայաստանի առաջին հանրապետութեան Երեւանի նահանգապետը* մենագրութեան (2007) եւ *Կոչեմ ապրողաց* գիրք-ալպոմին (2015), հեղինակն է *Սարդարապատի հերոսը, մահապարտների հոգին, Կարսի դաւաճանութեան զոհը* (2019), *Վերածնուած Հայաստան՝ Տէր Զօրից Սարդարապատ* (2020) հատորներուն, ինչպէս նաեւ *Հայոց պետականութեան վերածննդի 100 էջերը* լուսանկարային-ալպոմ դասագիրքին (2018): 2022ին արժանացած է «Հայաստանի նոր եւ նորագոյն պատմութիւնը ճանաչելի դարձնելու» պատուոգրին:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը, Խորհրդային շրջանը: 2023էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վաչագան Գրիգորեան **vachik_grigoryan@mail.ru**

Ծնած է 1959ին, ՀՀ Կոտայքի Քաղսի գիւղը: 1988ին պաշտպանած է թեկնածուական, 2003ին դոկտորականը՝ «Լեւոն Շանթի Դրամատուրգիան» նիւթով: 2010ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1989էն դասախօս է, իսկ 2003էն վարիչը՝ Գաւառի Պետական Համալսարանի հայոց լեզու եւ գրականութիւն ամբիոնին, 1991-95՝ Հրազդանի շրջանային ժողկրթբաժնի վարիչ, 1995-99՝ Կոտայքի մարզի կրթութեան վարչութեան պետի տեղակալ: 2013ին արժանացած է «Հրանտ Մաթեւոսեան» մրցանակին: Հեղինակ է Հրանտ Մաթեւոսեանի եւ Լեւոն Շանթի մասին մենագրութիւններու, դասագիրքերու, օժանդակ ձեռնարկներու: Իր վերջին հատորը՝ *Լեւոն Խեչոյեանի ստեղծագործութիւնը* (2019):

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը դասական եւ արդի հայ գրականութիւնն է:2001էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ռոպերթ Թաթոյեան **r.tatoyan@gmail.com**

Ծնած է Երեւան, 1976ին: 2015ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտահայութեան թուաքանակի վերաբերեալ օսմանեան կառավարութեան եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրական տուեալները Հայկական Հարցի համատեքստում (1878-1914 թթ.)» նիւթով: Ներկայիս աւագ գիտաշխատող է Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի աղբիւրագիտական ուսումնասիրութիւններու բաժնին, անդամ է նոյն հիմնարկի գիտական խորհուրդին (2015), եւ *Ցեղասպանագիտական հանդէս*ի

խմբագրական կազմին (2014): Հեղինակ է արեւմտահայութեան ժողովրդագրութեան վերաբերեալ զանազան հատորներու, որոնց վերջինը՝ *Արեւմտեան Հայաստանի Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թիւը Մեծ Եղեռնի նախօրեակին* (2022) հատորը: Իր վերջին գիտական ուսումնասիրութիւնը վերնագրուած է «Աքսորեալ զէյթունցիների զինուած դիմադրութեան փորձը Դէր Զորի անապատում»:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայկական Հարցը, Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը, Հայոց Ցեղասպանութեան նախօրեակին Արեւմտեան Հայաստանի եւ արեւմտահայութեան ժողովրդագրութիւնը, արեւմտահայութեան հասարակական-քաղաքական, կրթական եւ կրօնական կեանքը:

Յասմիկ Իրիցեան **hiritsyan@gmail.com**

Ծնած է 1985ին, Վրաստանի Բորժոմի շրջանի Տաբածղուրի գիւղը: Աւարտած է ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտէտը: Ներկայիս կ'աշխատի «Գաբրիէլ Այվազեանի (Այվազովսկի) լեզուագիտական ժառանգութիւնը» թեմայով թեկնածուականին վրայ: 2010էն կ'աշխատի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի «Ձեռագրագիտութեան» բաժինը: Մասնակցած է *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* հատորաշարքին պատրաստման: Պատրաստած է «Տեառն Ներսէսի՝ հայոց կաթողիկոսի ասացեալ ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի» խորագրով բնագիրը (*Մատենագիրք հայոց, ԻԲ. հատոր, ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Բ.*, Երեւան, 2022): 2019էն հայագիտական նիւթեր կը դասաւանդէ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթութեան քոլէճին մէջ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայերէնի տարբեր փուլերու քննութիւնը, հայերէնի զարգացման պատմութիւնը, ձեռագրագիտութիւնը, լեզուաբանութիւնը, բառարանագրութիւնը:

Մանէ Խառատեան **art.phil.maneh@gmail.com**

Ծնած է 1985ին, Ալավերդի: Աւարտած է ԵՊՀ փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ֆակուլտէտի մագիստրականը՝ «Ժամանակակից արուեստը՝ որպէս տեխնածին քաղաքակրթութեան երեւոյթ» նիւթով: 2010-18՝ պաշտօնավարած է Կամերային երաժշտական թատրոնին մէջ, 2020-21՝ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանին մէջ: Յունուար 2021էն Հայաստանի Պատմութեան թանգարանի տնօրէնի օգնական է:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ փիլիսոփայութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, հոգեվերլուծութիւնը, բժշկագիտութիւնը, կենսաբանութիւնը, էթնոհոգեբանութիւնը: 2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անահիտ Խեչոյեան **khechoyan.anahit@mail.ru**

Ծնած է 1999ին, Վրաստանի Բարալէթ գիւղը: 2023ին ԵՊՀի մէջ պաշտպանած է մագիստրականը՝ «Մազէ կամուրջ վէպի գեղարուեստական համա-

կարգը» նիւթով: 2022էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻի մէջ: Հեղինակ է բանահիւսական-ազգագրական յօդուածներու:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ժամանակակից բանահիւսութիւնը, համացանցը եւ բանահիւսութիւնը, նոր եւ նորագոյն գրականութիւնը, գրականութեան եւ բանահիւսութեան փոխազդեցութիւնները:

Աննա Կազարեան **kazaryananna15@mail.com**

Ծնած է 1996ին, Վրաստանի Ախալքալաքի շրջանի Բաւրա գիւղը: 2021ին պաշտպանած է մագիստրականը՝ ԵՊՀ Հայագիտական հետազօտութիւնների ինստիտուտին մէջ, «Էրզրումի նահանգի հայութեան տեղահանումը եւ բնաջնջումը (Քղի գաւառակի օրինակով), 1914-15» նիւթով: 2024էն կ'աշխատի թեկնածուականին վրայ, ՀՅԹԻի մէջ՝ «Էրզրումի նահանգի սոցիալ-տնտեսական դրութիւնը 19րդ դարի երկրորդ կէսին եւ 20րդ դարի սկզբին» նիւթով, միաժամանակ ՀՅԹԻի աղբիւրագիտական ուսումնասիրութիւններու բաժնի կրտսեր գիտաշխատող է:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայկական Հարցը, Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը, Էրզրումի նահանգի հայութեան ճակատագիրը, մշակութային ցեղասպանութիւնը:

Վաչէ Ղազարեան **vatcheg@gmail.com**

Ծնած է 1954ին, Հալէպ: 1983ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վահան Թէքէեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը» նիւթով: 2002-19՝ պաշտօնավարած է իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, Մոնթերէյ, Քալիֆորնիա, օտար լեզուներու հիմնարկին մէջ: Խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յուշեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջիններն են *Ազգային պատուիրակութեան գործունէութիւնը 1915-1916* (2017) եւ *Համահաւաք ատենագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական ժողովի, համագումար ազգային ժողովի եւ համազգային խորհուրդի (1919-1922)* (առցանց հրատ.- https://mayreni.net/):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ազգային պատմութիւնը եւ գրականութիւնը, ի մասնաւորի Վահան Թէքէեանը, Արմենական կուսակցութիւնը, Պօղոս Նուպարի գործունէութիւնը, արեւմտահայութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Գայիանէ Մախմուրեան **ggmakhm@gmail.com**

Ծնած է Երեւան, 1955ին: 1978ին աւարտած է Մաքսիմ Գորկիի անուան Քիեւի պետական մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտէտը: 2009ին պաշտպանած է դոկտորական ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութիւնը Մեծ Բրիտանիայի քաղաքականութեան մէջ» նիւթով: Ներկայիս նոյն ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: Շրջան մը եղած է անդամ՝ ՀՀ պաշտպանութեան նախարարին կից գործող հասարակական խորհրուրդին:

Հեղինակ է բազմաթիւ հատորներու, որոնց վերջիններն են՝ *Օսմանեան կառավարութեան՝ 1918թ. Բաթումի պայմանագրից հրաժարուելու մասին* (2022), *The French Policy in the Republic of Armenia and Transcaucasia in 1919* (2023), *On the Historical and Political Assessment of the Treaty of Moscow, Dated March 16 (18), 1921* (2024), կազմած եւ ռուսերէն (2011), ապա անգլերէն (2020) թարգմանած է՝ *Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917-1920թթ. փաստաթղթերում* հատորը, անգլերէնէ թարգմանած է Ռիչըրտ Յովհաննիսեանի *1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութեան միջազգային յարաբերութիւնները* հատորը (2007): Հեղինակ է աւելի քան 75 գիտական յօդուածներու, որոնց նորագոյնը՝ «ԽՍՀՄ փլուզման պատճառների լուսաբանումը ԱՄՆ, Միացեալ Թագաւորութեան եւ Ֆրանսայի XXI դարի պատմաբանների աշխատութիւններում» (2024): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԱՄՆի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսայի քաղաքականութիւնը 1918-20ի Հայաստանի Հանրապետութեան հանդէպ, ԱՄՆի վերաբերմունքը Հայկական Հարցին՝ 1916-23, Մեծ Եղեռնի պատմութիւնը 1915-23: 2015էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմինէ Մելքոնեան **armine.melkonyan@yahoo.com**

Ծնած է 1983ին, Երեւան: 2006-7՝ ուսանած է Ժնեւի համալսարանին մէջ: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Դաւիթ Անյաղթի 'ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ' երկը եւ դրա մեկնութիւնները (պատմագիտական եւ աստուածաբանական վերլուծութիւն)» նիւթով: 2008էն Մատենադարանի ձեռագրագիտութեան եւ 5-14րդ դարերու հայերէն բնագրերու ուսումնասիրման բաժիններու աւագ գիտաշխատող է: 2014էն կը դասաւանդէ Հայաստանի Գեղարուեստի պետական ակադեմիային մէջ: 2021էն յետդոկտորական հետազօտութիւն կը կատարէ Ֆլորենցիայի համալսարանին մէջ՝ «Հայաստանը որպէս հանգոյց. կապեր եւ մշակութային փոխյարաբերութիւններ միջնադարեան Եւրասիայում. IX-XIV դդ.» նիւթով: Հեղինակ է յօդուածներու, հրատարակած է հայ միջնադարեան քննական բնագրեր:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան աստուածաբանական եւ փիլիսոփայական երկերը, մեկնութիւնները, ծիսամատեանները, հայ ձեռագրագիտութեան հարցերը:

Էլինա Միրզոյեան **elina-mirzoyan@ysu.am**

Ծնած է Երեւան, 1988ին: 2015ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայկական թեմատիկան *Ակօս*ի հրապարակախօսութիւնում (1996-2007)» նիւթով: 2024էն դոցենտ է ԵՊՀ թրքագիտութեան ամբիոնին, 2015էն գիտաշխատող է ՀՑԹԻին մէջ: Հեղինակ է շուրջ 25 գիտական յօդուածի, համահեղինակ է *Հայ երեխաների թուրքացումը Հայոց Ցեղասպանութեան տարիներին* գիրքին (2022): Կատարած է թարգմանութիւններ հայերէնէ թրքերէն:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայոց Ցեղասպանութիւնը, ազգային ինքնութիւնը, հայ-թրքական յարաբերութիւնները, պոլսահայ եւ արեւմտահայ մամուլի պատմութիւնը, Հայոց Ցեղասպանութեան

թրքական ժխտողականութիւնը, ադրբեջանագիտութիւնը, սփիւռքագիտութիւնը, թրքագիտութիւնը եւ էթնոհոգեբանութիւնը:

Րոպերթ Մկրտիչեան **rma@cadcafmservices.com**

Ծնած է Մեսեչուսէց, Մ. Նահանգներ, 1953ին: 1974ին աւարտած է Թաֆց համալսարանի քաղաքային ճարտարապետութեան, 1975ին՝ նոյն համալսարանի գեղարուեստից բաժինը, իսկ 2022ին՝ ոչ-շահութաբեր կառավարման մասնագիտութիւնը՝ Ուորսեսթըր համալսարանէն: Անցնող տասնամեակին սատարած է իր հօր Աբրահամ Մկրտիչեանի մետաղի գեղարուեստական մշակումներու ցուահանդէսներու կազմակերպման: Նշանակալից էին իր 2022ին՝ Քէյմպրիճի գրադարանին, ինչպէս նաեւ Արիզոնայի մանրակերտից թանգարանին մէջ կազմակերպած ցուցահանդէսները: Ստորագրած է խոհագրութիւններ արուեստի մասին:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ամերիկահայ արուեստը: 2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Զաւէն Մսըրլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ: Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի Հայ աւետ. գոլէճի տնօրէնը, իսկ այնուհետեւ՝ պատուակալ տնօրէն: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *For the Armenian Cause* (2023): 1971էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմէն Պետրոսեան **alpehit@gmail.com**

Ծնած է 1948ին, Երեւան: 1977ին աւարտած է ԵՊՀ կենսաբանութեան ֆակուլտէը: 1996ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ ՀԱԻին մէջ՝ «Արամի առասպելը հայ աւանդութեան մէջ» նիւթով: 2000ին պաշտպանած է դոկտորականը: Ներկայիս գլխաւոր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻի բանահիւսութեան տեսութեան եւ պատմութեան բաժինին մէջ: Աշխատակցած է *Հայ սովետական* եւ *Ի՞նչ է, ո՞վ է. մանկական* հանրագիտարաններուն: 1984էն կը զբաղի հայոց ազգածագման հարցերով ու կը պաշտպանէ հայ ազգածագման էթիւնեան վարկածը: Հեղինակ է մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայկական էպոսի հնագոյն ակունքները 2* (2020):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ եւ հնդեւրոպական առասպելաբանութիւնը, հայ-հնդկական, հայ-յունական, հայ-հռոմէական եւ հայ-կովկասեան առասպելաբանական առնչութիւնները, հայ հեթանոսական եւ ուրատական դիցարանը, հայ ժողովուրդի նախապատմութիւնն ու նախալեզուն, վիշապ քարակոթողները: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Եաքոպ Պրէօ **jakob.breu.nfg@leibniz-gwzo.de**

Ծնած է Վիեննա, 1996ին: 2024ին պաշտպանած է մագիստրականը Վիեննայի համալսարանին մէջ՝ «Հայերու մասնակցութիւնն ու կարեւորութիւնը

1683-90ի թրքական մեծ պատերազմին» նիւթով: Ներկայիս կ'աշխատի դոկտորականին վրայ:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Արեւելեան Եւրոպայի եւ Հապսպուրկի կայսրութեան հայերը, ուշ միջ-նադարու հայ առեւտրական ցանցերը, Հայոց Ցեղասպանութեան հետեւանքները:

Կարինէ Ռաֆայէլեան **karine.rafaelyan@mail.ru**

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական մանկավարժական հիմնարկի (այժմ համալսարան) հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: 1994էն Գրականութեան եւ արուեստի թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:
Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ գրականագիտութիւնը, թանգարանագիտութիւնը, մշակութաբանութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վերա Սահակեան **verasahakyan@gmail.com**

Ծնած է 1982ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշէն գիւղը: 2017ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Յատուկ Կազմակերպութեան՝ Թեշքիլաթը Մախսուսայի գործունէութիւնը Օսմանեան կայսրութիւնում» նիւթով: Ներկայիս կրտսեր գիտաշխատող է Մաշտոցի Անուան Մատենադարանի արաբագիտութեան բաժնին մէջ: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Նուարդ Վարդանեան **vardanyan.nvard@ysu.am**

Ծնած է Երեւան, 1980ին: 2006ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայոց իրապատում հեքիաթը. ժանրային-տիպաբանական քննութիւն» նիւթով: 2005էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻի բանահիւսութեան բաժնին մէջ, ներկայիս բանագիտութեան բաժնի աւագ գիտաշխատող է: 2006էն օգնական է ԵՊՀ Հրանտ Թամրազեանի անուան հայ գրականութեան պատմութեան եւ գրականութեան տեսութեան ամբիոնի: 2017էն դոցենտ է: 2022ին հիմնած է ու ցարդ կը նախագահէ «ՅԵՆՔ» գիտամշակութային հասարակական կազմակերպութիւնը: 2009էն *Ոսկէ դիւան* հեքիաթագիտական հանդէսի խմբագրակազմի անդամ է, 2023էն՝ պատասխանատու խմբագիրը *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ* պարբերականին: 2013ի «Երիտասարդ գիտնականներ» մրցոյթին արժանացած է «Լեզուաբանութիւն եւ գրականութիւն» բնագաւառի Հ. Աճառեանի անուան երկրորդ մրցանակին:
Հեղինակ է *Հայոց իրապատում հեքիաթը, ժանրային-տիպաբանական քննութիւն*, գիրքին (2009): Համահեղինակ է, նաեւ համախմբագիր՝ շարք մը բանահիւսական գիրքերու, կազմած եւ խմբագրած է ժողովածուներ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ ժողովրդական բանահիւսութիւնը, հեքիաթները, ծիսերգերը, միջժանրային փոխառնչութիւնները, բանահիւսութիւն-գրականութիւն կապերը, ժամանակակից բանահիւսութիւնը:

Անդրանիկ Տագէսեան **adakessian@haigazian.edu.lb**

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ "Democracy and Integration in Multicommunal Polities: The Armenians and the Kurds in Lebanon" նիւթով: 1993-2017՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէս*ին: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Ցեղասպանագիտական հանդէս* (2018), *Բանբեր Հայաստանի արխիւների* (2023) պարբերականներու խմբագրակազմերուն: Անդամ է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի գիտական խորհուրդին (2020) եւ Ուաշինկթընի Armenian National Institutehին (2024): 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Այդ հանգամանքով կազմակերպած է ամէնամեայ գիտաժողովներ: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Հայերը Արաբական Ծոցի երկիրներուն մէջ գիտաժողովի նիւթեր* (2024), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւններուը ծիրը կ'ընդգրկէ ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Սեւան Տէյիրմենճեան **haygazian@gmail.com**

Ծնած է Պոլիս, 1976ին: 2005ին ԵՊՀի մէջ պաշտպանած է թեկնածուական՝ «Անդրանիկ Ծառուկեան. կեանքն ու գործը» նիւթով: 2019-23՝ Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարօ Փայլանի խորհրդական, ներկայիս հայոց լեզու, գրականութիւն եւ հայոց պատմութիւն կը դասաւանդէ Երուսաղէմի Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ: 2017էն անդամ է *Բագինի* խմբագրական խորհուրդին: Կազմած, խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է աւելի քան տասնեակ մը հայ հեղինակներու երկեր, որոնց վերջինը 2022ին՝ Զապէլ Եսայեանի *Ժողովուրդի մը հոգեվարքը*, ունի նաեւ թրքերէնէ հայերէն եւ հայերէնէ թրքերէն բազմաթիւ թարգմանութիւններ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ.-Ի. դարերու հայ գրականութիւնը, Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, հին ու միջնադարեան մատենագրութիւնը: 2003էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Մուշեղ Տոնոյեան **mushotonoyan0440@gmail.com**
Ծնած է 2003ին, Երեւան: 2024ին կաւարտած է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտէտը: Մանկութենէն առնչուած է ռէփին. առաջին ռէփ երգերը հրապարակած է 2020ին, կը գրէ նաեւ բանաստեղծութիւններ:
2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Զաքար Քեշիշեան **kamilazakar@yahoo.com**
Ծնած է 1968ին, Այնճար: Ուսանած է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը, խորանալով ժողովրդական նուագարաններու եւ խմբավարական բաժիններուն մէջ: 1999ին պաշտպանած է թեկնածուական: Դասաւանդած է Լիբանանի Պետական բարձրագոյն երաժշտանոցի, Հայկազեան համալսարանի, Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճին մէջ: Վարած է խմբավարութիւնը *Պէյրութ չենց – Էլսիսթեմա*, Արցախի Վարանդա մանկական, պատանեկան եւ երիտասարդական պետական երգախումբերուն: 2022էն ատենապետն է Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան կեդրոնական վարչութեան, 2022էն Լիբանանի հայոց թեմի ազգային երեսփոխան է: Պարգեւատրուած է «Վաչագան Բարեպաշտ» նախագահական շքանշանով (2002), Շուշիի պատուաւոր քաղաքացի է (2004), արժանացած է «Եղիշէ» համահայկական մշակութային մրցանակին (2005), 2016ին ստացած է «Արցախի Հանրապետութեան մշակոյթի վաստակաւոր գործիչ»ի յուշամետալը: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Աշխատակիցներու Ուշադրութեան

Հայկազեան հայագիտական հանդէս (ՀՀՀ) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն իվեր, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ: 2022էն սկսեալ ան լոյս կը տեսնէ վեցամսեայ դրութեամբ:

ՀՀՀն կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան ազգագրական, աշխարհագրական, բանասիրական, գրական, իմաստասիրական, իրաւագիտական, լեզուագիտական, կրօնական, հնագիտական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի եւն.), պատմական, տնտեսագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

ՀՀՀն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու ՀՀՀի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւս:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 8000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 4000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 3000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ հետեւեալ կառոյցը.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով շաղկապուած), եզրակացութիւն:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր, տպարան եւ տպագրութեան թուական, էջաթիւ:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները, հարցազրոյցին վայրն ու թուականը:

Կայքէջի պարագային՝ լրիւ հասցէն եւ մատչումի թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն ամփոփում, շուրջ 250 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուական-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը, նկար մը եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լաւորակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակներուն տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀ խմբագրութեան յղել հատորէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքերուն վրայ.-

http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .

http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .

https://www.flib.sci.am/ .

Notes to Contributors

Haigazian Armenological Review (*HAR*) has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University. Since 2022 it is being published twice a year.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with archaeology, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, ethnography, geography, history, linguistics, literature, philology, philosophy, politics, religion, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *HAR* should preferably be not more than 8,000 words (including the footnotes), for investigative articles not more than 4000 words, for briefings not more than 3000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Footnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a 250-word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the

books published, the titles of the last two books published – with date and publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the *HAR*'s style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *HAR* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *HAR*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:
http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .
http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .
https://www.flib.sci.am/ .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ/TABLE OF CONTENTS

Խմբագրական **Կիրառական հայագիտութիւն**
Editorial **Applied Armenology**

ՅՕԴՈՒԱԾ/ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ARTICLES

Արուեստ/Arts and Crafts

Robert Megerdichian — Armenian Museums in the United States and Notable Armenian Sculptors — 9

Րոպերթ Մկրտիչեան — Միացեալ Նահանգներու հայկական թանգարանները եւ նշանաւոր հայ քանդակագործներ ու գեղանկարիչներ

Զաքար Քեշիշեան — Ժիրայր Շահրիմանեան եւ Մամիկոն Անդրէասեան. հայ մանկապատանեկան խմբերերու երկու երիտասարդ երաժշտահաններ — 33

Zakar Keshishian — Jirayr Shahrimanian and Mamigon Antreassian: Two Young Armenian Composers of Children's Choir Songs

Nvard Vardanyan, Anahit Khechoyan — Reflections of the 2020 Artsakh War in Certain Manifestations of Internet Folklore — 45

Նուարդ Վարդանեան, Անահիտ Չախոյեան — 2020ի արցախեան պատերազմի արտացոլումը համացանցային բանահիւսութեան որոշ դրսեւորումներում

Մուշեղ Տօնոյեան — Հայկական սերիալների ազդեցութիւնը երիտասարդութեան վրայ — 59

Mushegh Tonoyan — The Impact of Armenian Soap Operas on the Young

Գրականութիւն/Literature

Կարինէ Ռաֆայէլեան — Պատերազմով երկփեղկուած գրականութիւն (Անդրադարձ Նանէի [Նելլի Նազարեանի] գեղարուեստական չափածոյին) — 77

Karine Rafaelyan — Literature, Bisected by War (An Overview of the Poetry of Nané [Nelly Nazarian])

Վաչագան Գրիգորեան — Թադեւոս Տոնոյեան. աշխարհ, որ ընդլայնում է գոյութեան սահմանները Բ. — 101

Vachagan Grigoryan — Thadevos Donoyan: A World that Enlarges the Limits of Existence (II)

Լեզու/Linguistics

Արմինէ Մելքոնեան Յասմիկ Իրիցեան	Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանի նորայայտ գաւառական բառարանը (1874-1888)	127
Armine Melkonyan Hasmik Iritsyan	A Recently Discovered Dictionary of Provincial Words (1874-1888) by Ghevond Vardapet P'irghamemian	

Պատմութիւն-Հնագիտութիւն History-Archeology

Գայիանէ Մախմուրեան	1918–1920ի Հայաստանի անկախութիւնը Ֆրանսայի, Մեծ Բրիտանիայի, եւ ԱՄՆի քաղաքական գործիչների գնահատմամբ	147
Gayane Makhmourian	Assessing an Independent Republic of Armenia at the End of WWI by French, British and American Politicians	
Ռոբերտ Թաթոյեան	Բրիտանական դիւանագիտութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի ազգաբնակչութեան էթնիկական կազմի հարցերը 1878-1882ին, Հայկական Հարցի քննարկումների ենթախորքում	169
Robert Tatoyan	British Diplomacy and Issues Related to the Number of the Ethnic Composition of Western Armenia between 1878 and 1882, in the Context of the Armenian Question	
Վերա Սահակեան	Ժամանակագրութիւն Մշոյ Բուլանըք գաւառակի Աբրի գիւղի՝ ըստ օսմանեան տեղեկագրերի եւ հայկական աղբիւրների	213
Vera Sahakian	Chronology of Abri Village in the Bulanik District of Mush (Based on Ottoman Reports Ottoman Reports and Armenian Sources)	
Jakob Breu	Vienna Armenians in the War of the Holy League (1683–1699)	233
Եաքոպ Պրէօ	Վիեննաբնակ հայեր՝ Սուրբ Դաշնութեան պատերազմին ընթացքին (1683–1699)	
Արմէն Պետրոսեան	Արարատեան դաշտի եւ շրջակայ լեռների անուանումները	259
Armen Bedrossian	The Toponyms of the Plain of Ararat and the Surrounding Mountains	

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ/UNPUBLISHED DOCUMENTS

Վաչէ Ղազարեան	Փարիզի 1920 Թուականի Ազգային Համագումարի Դ. Նիստին Ատենագրութիւնը	269
Vatche Ghazarian	Minutes of the Fourth Session of the Armenian National Conference in Paris, in 1920	

Սեւան Տէյիրմենճեան Deacon Sevan Deyirmenjian	Մեսրոպ եպս. Նշանեանի եւ Թէոդիկի նամակները (1925-1928) 34 Letters Exchanged between Archbishop Mesrob Neshanian and Theotig (1925-1928)	319
Աննա Ղազարեան Anna Kazaryan	Շուշանիկ Տիգրանեան, Էրզրումէն մեկնող առաջին գաղթականները The Eye Witness Account of Shushanik Dikranian on the First Armenian Caravan Exiled from Her Native City of Erzerum	363
Էլինա Զ. Միրզոյեան Elina Mirzoyan	Հայոց Ցեղասպանութիւն, Շատախի շրջան Սերոբ Քոսեանի յուշագրութիւնը The Armenian Genocide, Shadakh Region. The Memoir of Serop Kosian	379

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ/BRIEFINGS

Մանէ Խառատեան Mane Kharatian	Էջեր հայկական ռոքի պատմութիւնից, մաս Բ.- Ռոքը Հայաստանում Armenian Rock Music, Part B- Rock Music in Armenia	397
Սեդա Գալստեան Seda Galstyan	Հայաստանի Պատմութեան Թանգարանի ձեռքբերումները Հայաստանի Գ. Հանրապետութեան տարիներին (1991-2024) The Acquisitions of the History Museum of Armenia During the Third Republic (1991-2024)	427
Զաւէն Մսըրլեան Zaven Messerlian	Հայոց Ցեղասպանութեան ալպոմ-յուշամատեանի մը չիրականացած ծրագիրն ու Ցեղասպանութեան վաւերագրական ֆիլմերու եւ լուսանկարներու պարագան The Unrealized Plan of a Memorial Album Dedicated to the Armenian Genocide and the Case of Documentary Films and Pictures of the Genocide	439
Անդրանիկ Տագէսեան Antranik Dakessian	20րդ Դարու առաջին կէսի Լիբանանի մեծագոյն գեղանկարիչներէն Մուսթաֆա Ֆարրուխ եւ հայերը Mustafa Farroukh, One of the Most Renowned Lebanese Painters of the First Half of the 20th Century, and the Armenians	459
Համառօտ կենսագրութիւն հատորին աշխատակիցներուն		469
Աշխատակիցներու ուշադրութեան		477

Հայկազեան հայագիտական հանդէս, հտր. 45/1
տպաքանակ՝ 125
Գին՝ Լիբանան 100,000Լ. ոսկի, արտասահման 30 տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
Haigazian Armenological Review, Vol. 45/1
P.O.Box 11-1748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@haigazian.edu.lb